Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Մ. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1912-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ուսումնական ձեռնարկ բուհերի համար

ԵՐԵՎԱՆ — 2003

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության
կողմից որպես բուհական ուսումնական ձեռնարկ

Հրատարակության է երաշխավորել Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհուրդը

ՀՏԴ 941(479.25)(07)
ԳՄԴ 63.3(2Հ)գ73
Կ 294

Հեղինակը երախտագիտությամբ խորին շնորհակալություն է հայտնում «ՏԱԹԵՎ ԳԿՀ»-ի տնօրեն, կրթական գործի անշահախնդիր հովանավոր ***Սոկրատ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ*** *այն ձեռնարկի հրատարակությունը սեփական միջոցներով իրականացնելու համար:*

Խմբագիր՝ պրոֆ. **Վ. Ա. Դիլոյան**

Կարապետյան, Մ.Ս.
Կ 294 **Հայաստանը 1912–1920 թվականներին:**/Ուսումնական ձեռնարկ բուհերի համար,– Եր., «Զանգակ–97», 2003.– 400 էջ:

Կ $\frac{0503020913}{0003(01)-2003}$ **2003** **ԳՄԴ 63.3(2Հ)գ73**

ISBN 99930–2–455–4

© Կարապետյան Մ. Ս., 2003 թ.
© «ՏԱԹԵՎ ԳԿՀ», 2003

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց նորագույն պատմության 1914–1920 թվականների ժամանակահատվածը լի է բարդ ու խճճված իրադարձություններով, պատմագրության մեջ երկար ժամանակ գրեթե մոռացության մատնված, պարզապես չլուսաբանված կամ թերի մեկնաբանված շատ հիմնահարցերով, իրարամերժ, հակասական ու վիճահարույց գնահատականներով:

Ներկա ուսումնական ձեռնարկի շարադրմանը ձեռնամուխ ենք եղել՝ նշված հիմնահարցերը հնարավորինս համակարգելու, տրամաբանական հաջորդականությամբ միմյանց փոխկապակցելու, անհրաժեշտ պարզաբանումներ կատարելու և ուսանողության կողմից նյութի յուրացումն առավել մատչելի դարձնելու մտահոգությամբ:

Շարադրանքի ընթացքում ձեռքի տակ ունեցել ենք կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ հրատարակված փաստաթղթերը, դեպքերին ժամանակակից քաղաքական, պետական, կուսակցական գործիչների աշխատությունները, ականատեսների հուշագրությունները, փաստավավերագրական բնույթի այլ նյութեր:

Լայնորեն օգտագործել ենք Հայաստանի Առաջին հանրապետության պետական գործիչների և սփյուռքահայ մի շարք այլ հեղինակների աշխատությունները:

Շարադրանքի ընթացքում ուղեցույց ենք ունեցել և ըստ ամենայնի հենվել ենք հայ պատմաբանների հիմնարար աշխատությունների վրա՝ առաջին պլան մղելով հատկապես վերջին շրջանում հրատարակված մի շարք հետազոտություններ, որոնք այս կամ այն չափով զերծ են գաղափարական–քաղաքական սահմանափակումներից:

Հույս ունենք, որ ներկա ձեռնարկը օգտակար կարող է լինել ոչ միայն բուհերի ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, հանրակրթական դպրոցի պատմության ուսուցիչների համար, այլև կհետաքրքրի ընթերցող լայն շրջաններին:

Պատրաստ ենք սիրով ու շնորհակալությամբ ընդունել բոլոր դիտողություններն ու ցանկությունները, որպիսիք անպայման հաշվի կառնվեն ձեռնարկը վերահրատարակելիս:

Հեղինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

Թեմա առաջին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Պատերազմի նախօրյակը. Հայկական հարցի վերաբացումը: 1914 թ. հունվարի 26–ի ռուս–թուրքական համաձայնագիրը 8
Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը 18
Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում 1914–1916 թթ. 21
Սարիղամիշի օպերացիան 21
Ալաշկերտի օպերացիան 25
Էրզրումի օպերացիան 31
Տրապիզոնի օպերացիան 34
Օղնուտի օպերացիան 36
Հայկական կամավորական դրուժինաները և կանոնավոր զորամասերը Կովկասյան ռազմաճակատում 37

Թեմա երկրորդ
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Արևմտահայության բռնագաղթն ու կոտորածները և հայ զինվորականության ոչնչացումը 61
Արևմտահայ մտավորականության ոչնչացումը 64
Ջարդերը նահանգներում 66
Հայերի բնաջնջումը աքսորավայրերում 78
Եղեռնի հանցավորները: Տերությունների դիրքորոշումը 81
Աշխարհի ականավոր մարդիկ դատապարտում են հայոց ցեղասպանությունը 86
Երիտթուրքերի դատապարտումը: Հայ վրիժառուների արդար դատաստանը 92

Թեմա երրորդ
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Վասպուրական և Շատախ 103
Վանի հերոսամարտը 105
Շատախ 112
Մուշի և Սասունի հերոսամարտը 120
Մուշ քաղաքի հնգօրյա դիմադրությունը 129
Մշո դաշտի դիմադրական կռիվները 132
Սասունի հերոսամարտը 135
Շապին–Գարահիսարի ինքնապաշտպանությունը 141
Սուսա լեռան հերոսամարտը 147
Ուրֆայի հերոսամարտը 156

Թեմա չորրորդ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Օգակոմի ստեղծումը 166
Ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 26–ի կարգադրությունը Արևմտյան Հայաստանի մասին 172
Արևմտահայերի 1–ին համագումարը 174
Հայկական ազգային զորամասերի ստեղծումը 175
Հայ եկեղեցական համագումարը 178
Հայոց ազգային համախորհրդակցությունը: Հայոց Ազգային խորհրդի ստեղծումը 179

Թեմա հինգերորդ
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը 183
Իրադրությունը Անդրկովկասում հեղափոխությունից հետո 185
Անդրկովկասյան Սեյմի և Կոմիսարիատի ստեղծումը 187
Ռազմաճակատի քայքայումը 190
Հայկական կորպուսի կազմավորումը 191
«Թուրքահայաստանի մասին» դեկրետը 195
Իրադրությունը Կովկասյան ռազմաճակատում 1918 թ. գարնանը 197
Տրապիզոնի բանակցությունները 199
Դրությունը ռազմաճակատում 203
ԱԴՖՀ ստեղծումը 204
Իրադարձությունները Բաքվում 207

Թեմա վեցերորդ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Թուրքական զորքերի առաջխաղացումը, Կարսի և Ալեքսանդրապոլի անկումը 214
Սարդարապատի հերոսամարտը 217
Բաշ–Ապարանի ճակատամարտը 224
Ղարաքիլիսայի հերոսամարտը 226

Թեմա յոթերորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության հռչակումը 232
Բաքուի հաշտության պայմանագիրը 236
Հայերի մասնակցությունը Բաքվի պաշտպանությանը 241
Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը:
Իշխանության մարմինների ստեղծումը 246
Առաջին միջոցառումները 253
ՀՀ սահմանների ընդարձակումը 254
Հայ–վրացական պատերազմը 256
Մարդասիրական օգնություն ՀՀ–ին 259
Արևմտահայերի երկրորդ համագումարը 260
ՀՀ խորհրդարանի ընտրությունները 261
Ղարաբաղի հարցը 1918–1920 թթ. 262
Զանգեզուրը 1918–1920 թթ. 268
ՀՀ ներքին կյանքի ամրապնդումը 270
Կրթական–մշակութային ձեռնարկումները 280
ՀՀ զինված ուժերի կազմակերպումը 281
1920 թ. Մայիսյան ապստամբությունը 284
Թուրք–ադրբեջանական խռովությունների ճնշումը 292

Թեմա ութերորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի հարցը Փարիզի կոնֆերանսում 299
Հարբորդի առաքելությունը Հայաստանում 305
Սան Ռեմոյի կոնֆերանսը 307
Սևրի պայմանագիրը և Հայաստանը 314
ՀՀ հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ 321
Իրադարձությունները Զանգեզուրում, Նախիջևանում և
Ղարաբաղում Ադրբեջանի խորհրդայնացումից հետո 329
1920 թ. օգոստոսի 10–ի համաձայնագիրը 343
1920 թ. օգոստոսի 24–ի ռուս–թուրքական պայմանագրի
նախագիծը և Հայաստանը 348

Թեմա իններորդ

1920 Թ. ՀԱՅ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Պատերազմի դիվանագիտական նախապատրաստությունը 355
Պատերազմի սկիզբը և ընթացքը 358
Պատերազմի երկրորդ շրջանը 364
Հայ–ռուսական բանակցությունները Երևանում: Հաշտության
պայմանագրի հոկտեմբերի 28–ի նախագիծը 371
Պատերազմի ավարտական փուլը: Հայաստանի
պարտությունը 377
Պարտության պատճառները 382
Կառավարության փոփոխությունը 383

Թեմա տասներորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ: 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2–Ի ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ: ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Հայաստանի խորհրդայնացումը 385
1920 թ. դեկտեմբերի 2–ի Երևանի համաձայնագիրը 388
Ալեքսանդրապոլի պայմանագիրը 390

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 397
Հապավումների ցանկ 399

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ: 1914 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26–Ի ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1908 թվականի երիտթուրքական հեղափոխությունից հետո հայ ազատագրական շարժումը ժամանակավորապես վայրէջք ապրեց. հավատալով երիտթուրքերի կեղծ խոստումներին և թուրքական սահմանադրության հռչակած ազատության, հավասարության սկզբունքներին՝ հայ ֆիդայիների մեծագույն մասը իջավ լեռներից, զենքը հանձնեց իշխանություններին ու լծվեց խաղաղ աշխատանքի, որի հնարավորությունը, ի դեպ, նրանց տրվեց: Շատ քչերն էին միայն, այդ թվում և Անդրանիկը, չհավատացին թուրքական խոստումներին և խնամքով յուղելով զենքը՝ թաքցրեցին՝ գալիք ժամանակներում վերստին կռվի նետվելու համար:

1909 թվականի Ադանայի ապրիլյան կոտորածը, որին զոհ գնացին շուրջ 30 հազար հայեր, պետք է որոշ չափով սթափեցներ հայ ազատագրական շարժման գործիչներին և առիթ տար խորհելու հետագա գործելակերպի շուրջ:

Պատերազմի նախօրյակի ամենախոշոր իրադարձությունը թերևս Հայկական հարցի վերաբացումն էր՝ կապված Բալկանյան առաջին պատերազմում սլավոնական ժողովուրդների ձեռք բերած հաղթանակների հետ:

Պատերազմը մղվում էր մի կողմից Բալկանյան միության երկրների՝ Բուլղարիա, Սերբիա, Հունաստան, Չեռնոգորիա, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև: Բալկանյան թերակղզու ժողովուրդների առջև պատմական խնդիր էր կանգնած ազատագրվել թուրքական ստրկացնողների ազգային և ֆեոդալական ճնշումից և ստեղծել ազգային պետություններ: Պատերազմի առիթ ծառայեց Թուրքիայի հրաժարվելը եվրոպական տիրույթներում ռեֆորմներ անցկացնելուց, որոնք պետք է ուղղված լինեին Մակեդոնիային և Թրակիային ինքնավարություն տալուն:

Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ սկսեց Չեռնոգորիան՝ 1912 թվականի հոկտեմբերի 9–ին, իսկ հոկտեմբերի 18–ին պատերազմի մեջ մտան Բուլղարիան, Սերբիան և Հունաստանը: Դաշնակիցները Թուրքիայի դեմ դուրս բերեցին 603 հազար մարդ, որի 2/3–ը՝ 230 հազարը բուլղարներ էին: Թուրքիան կարողացավ դուրս բերել 412 հազար զինվոր: Պատերազմի առաջին իսկ օրերին ի հայտ եկավ դաշնակիցների զորքերի բացահայտ առավելությունը թուրքականի նկատմամբ: Բալկանյան պետությունների բանակների զինվորներին ոգևորում էին պատերազմի ազգային–ազատագրական նպատակները: Նրանց օգնում էր տեղական բնակչությունը: Բացի այդ, դաշնակիցների զորքերն ավելի լավ էին կազմակերպված: Պատերազմի հիմնական ծանրությունն ընկավ բուլղարական բանակի վրա, որը Թրակիայում գամեց դեպի Ստամբուլ ճանապարհը փակող թուրքական ուժերի մեծ մասը: Առաջին խոշոր ճակատամարտը տեղի ունեցավ Ղարաքիլիսայի մոտ հոկտեմբերի 22–24–ին, որն ավարտվեց թուրքերի պարտությամբ: Բուլղարները պաշարեցին Ադրիանապոլիսը: Լյուլեբուրգազի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (հոկտեմբերի 29 — նոյեմբերի 3) թուրքական զորքերը ջախջախվեցին և դիմեցին խուճապահար փախուստի: Նրանց դժվարությամբ հաջողվեց ամրանալ Չաթալջինի դիրքերում՝ Ստամբուլից մոտ 40 կմ հեռավորության վրա:

Դաշնակիցների կրկնակի առավելություն ունեցող զորքերը մեծ հաջողությունների հասան նաև Մակեդոնիայում, Ալբանիայում և Էպիրոսում: Սերբական զորքերը հոկտեմբերի 26–ին մտան Սկոպլե: Դուրս գալով Ադրիատիկի ափ՝ նրանք չեռնոգորական զորքերի հետ միասին պաշարեցին Շկոդերը (Սկյութար): Հունական զորքերը թուրքերից մաքրեցին Էպիրոսը, իսկ հարավային Մակեդոնիայում հունական և բուլղարական զորքերը նոյեմբերի 7–ին գրավեցին Սալոնիկը: Եգեյան ծովում հունական նավատորմը շրջափակել էր Դարդանելի ելքը: Հունական դեսանտայինները գրավեցին նաև Խիոսը, Լեսբոսը և այլ կղզիներ:

Սակայն նոյեմբերի 17–18–ին թուրքերին հաջողվեց Չաթալջինի դիրքերի վրա բուլղարների գրոհը հետ մղել, որով և Ստամբուլի վրա կախված անմիջական սպառնալիքը վերացավ: Դա հնարավորություն տվեց 1912 թվականի դեկտեմբերի 3–ին Թուրքիայի և դաշնակիցների միջև կնքել զինադադար: Սակայն հաշտության պայմանագրի կնքումը

չկայացավ՝ 1913–ի հունվարի 23–ին Ստամբուլում էնվեր փաշայի գլխավորած երիտթուրքերի պետական հեղաշրջման հետևանքով: Միայն թուրքերի նոր պարտություններից և Ադրիանապոլսի հանձնումից հետո 1913 թվականի ապրիլին ստորագրվեց զինադադար: 1913 թվականի մայիսի 30–ին Լոնդոնի հաշտության պայմանագրով Թուրքիան կորցրեց իր եվրոպական տիրույթները՝ բացի Ստամբուլից և Արևելյան Թրակիայի մի փոքր մասից:

Բալկանյան առաջին պատերազմի արդյունքը եղավ այն, որ մակեդոնական ժողովուրդն ազատագրվեց թուրքական ֆեոդալական ճնշումից, իսկ 1912–ի նոյեմբերի 28–ին հռչակվեց Ալբանիայի անկախությունը:

Պատերազմի հենց սկզբում Բուլղարիայում ծայր առավ կամավորական շարժում, որի մեջ ընդգրկվեցին նաև բուլղարահայերը: Մակեդոնացի և թրակիացի կամավորներից կազմվեց Մակեդոնա–Օդրինյան 16 հազարանոց աշխարհազորը: Առանձին կամավորական ստորաբաժանում կազմավորելու խնդրանքով հայերը դիմեցին բուլղարական կառավարությանը: Հայկական կամավորական վաշտը վերջնականապես կազմավորվեց 1912 թվականի հոկտեմբերի 8–ին, որում ընդգրկվեց 273 մարդ: Վաշտը մտցվեց Մակեդոնա–Օդրինյան աշխարհազորի 3–րդ բրիգադի Լոզենգրադյան 12–րդ դրուժինայի կազմի մեջ: Հայկական վաշտի հրամանատար նշանակվեց բուլղարական բանակի պահեստի սպա Գարեգին Նժդեհը, որը զինվորական կրթություն էր ստացել Բուլղարիայում, իսկ նրա տեղակալ նշանակվեց Անդրանիկ Օզանյանը, որը 1904 թվականի Սասունի ապստամբության պարտությունից հետո 1905–ի մարտից հաստատվել էր Բուլղարիայում: Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ հայկական այդ վաշտի ու մասնավորապես Անդրանիկի մասին հոդված է հրապարակել Լև Տրոցկին, որն այն ժամանակ զինվորական թղթակից էր:

Որոշ զինավարժությունից հետո հայկական վաշտը մեկնեց ռազմաճակատ, որտեղ մասնակցեց գրեթե բոլոր կռիվներին ու աչքի ընկավ իր բազում քաջագործություններով: Անդրանիկը պարգևատրվեց 4–րդ և 3–րդ աստիճանի «Քրիստի խրապրուզ» արծաթե խաչերով և 2–րդ աստիճանի «Քաջության խաչով»:

Հետագայում Բուլղարիայի Ֆերդինանդ թագավորի 1913 թ. հունվարի 16–ի հրամանագրով Անդրանիկը ստացավ բուլղարական քաղաքացիություն և բուլղարական սպայի աստիճան, նրան նշանակվեց ամ-

սական 600 ֆրանկ թոշակ: Լոնդոնի հաշտության պայմանագրի կնքումից հետո հայկական վաշտը կազմացրվեց:

Բալկանյան պատերազմների շրջանում Հայկական հարցը, որն, իբրև միջազգային դիվանագիտության հարց, ձևավորվել էր 1877–1878 թվականների ռուս–թուրքական պատերազմից հետո, կրկին դարձավ այդ մթին ու խութաշատ ոլորտի արծարծման առարկա:

Հայկական հարցը Արևմտյան Հայաստանի ճակատագրի հարցն էր, հայ կյանքի ամենասուր, ամենացավոտ հարցը, որն արդյունք էր թուրքական հրեշավոր բռնակալության, և որը հայ ժողովրդին կանգնեցրել էր ֆիզիկական բնաջնջման ռեալ վտանգի առաջ:

1878 թվականի փետրվարի 19–ին կնքված Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի 16–րդ հոդվածը նախատեսում էր հետևյալը. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

Հոդված 25–ը սահմանում էր, որ ռուսական զորքերի դուրսբերումը Ասիական Թուրքիայից կկատարվի վեց ամսվա ընթացքում՝ հաշված վերջնական հաշտություն կնքելու օրից: Իսկ հոդված 27–ը պարտավորեցնում էր Բարձր Դռանը՝ չհալածել և թույլ չտալ հալածել այն թուրքահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կապեր են ունեցել ռուսական բանակի հետ, ինչպես նաև արգելք չլինել այն անձանց, ովքեր իրենց ընտանիքներով կցանկանան հեռանալ ռուսական զորքերի հետ (Սան Ստեֆանոյի պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 83–98):

Սակայն Բեռլինի կոնգրեսում (1878 թ. հուլիսի 1) գլխավորապես Անգլիայի և Ավստրո–Հունգարիայի ճնշմամբ 16–րդ հոդվածը փոխարինվեց 61–րդ հոդվածով, որտեղ անգլիական ձևակերպմամբ ասվում էր. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բա-

ռելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը» (տես նույն տեղում, էջ 128): Հայկական հարցը որոշակիությունից անորոշության բավիղները նետող այս հոդվածը, ճիշտ է, ապահովեց հարցի միջազգայնացումը, բայց և վերջին հաշվով աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար: Իսկ Բեռլինի դաշնագիրն ամբողջությամբ վերցրած ուժի մեջ մնաց մինչև 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները և Առաջին համաշխարհային պատերազմը կանխորոշող փաստաթղթերից մեկը եղավ:

Հայկական հարցի վերաբացումը 1912–1914 թվականներին. Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի պարտությունը Հայկական հարցի լուծման նոր հույսեր արթնացրեց: 1912–ի հոկտեմբերի վերջերին Թիֆլիսում գումարվեց խորհրդակցական մի ժողով, որին մասնակցում էին զանազան հասարակական, քաղաքական և մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ներկա էին նաև պատգամավորներ Բաքվից, Երևանից, Ախալցխայից, Նոր Նախիջևանից, Արմավիրից, Բաթումից և այլ վայրերից: Որոշվեց մոտ ապագայում հրավիրել նոր ժողով և ընտրել ներկայացուցչական մարմին՝ Հայկական հարցի ուղղությամբ աշխատելու համար, ինչպես և խնդրել Ամենայն Հայոց կաթողիկոսին, որ նա հայության անունից դիմի Նորին Մեծություն Ռուսաց Կայսրին՝ օգնության հասնելու արևմտահայ ժողովրդին: Մշակված բանաձևը ներկայացվեց կաթողիկոսին: Ընտրվեց յոթ հոգուց բաղկացած ժամանակավոր բյուրո՝ Ալ. Խատիսյան, Ս. Հարությունյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հովհ. Թումանյան, Ն. Աղբալյան:

Կաթողիկոսին հասցեագրված դիմումի մեջ ասված էր, որ Թիֆլիսի հայ հասարակության պատկանող անձանց մի խումբ, որ բաղկացած էր Թիֆլիսի հայ կրթական և բարեգործական հիմնարկությունների, մամուլի և հասարակականը այլևայլ խավերի ներկայացուցիչներից, քննության առնելով թրքահայերի դրությունը, որ անտանելի է դարձել նրանց կյանքի, պաշարի և գույքի վրա գործադրվող անընդհատ բռնությունների հետևանքով, խոնարհաբար խնդրում է դիմում անել թագավոր կայսրին՝ հաստատապես հավատալով, որ ռուսական պետությունը առանց ուշադրության չի թողնի հայերի խնդրանքները և իր ուժեղ հովանավորությամբ և միջամտությամբ վերջ կդնի արևմտահայության

տանջանքներին (Լազյան Գաբրիել, Հայաստան և Հայ Դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1991, էջ 154–155): Նոյեմբերի 25–ին Թիֆլիսում գումարվեց երկրորդ համագումարը, որը վերընտրեց նախորդ Բյուրոյի կազմը՝ ավելացնելով Կ. Ստեփանյանին, Ա. Ջամալյանին, Լեոյին, Կ. Արղությանին, Խ. Աֆրիկյանին, Ա. Սահակյանին և այլոց:

Մինչ այդ, 1912 թ. սեպտեմբերի 19–ին Թիֆլիսում տեղի ունեցավ հայ հասարակական գործիչների ժողով, որը որոշեց դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին՝ ցարի առջև արևմտահայության հարց բարձրացնելու խնդրանքով: Երկու օր անց՝ սեպտեմբերի 21–ին, Ս. Հարությունյանը և Հ. Առաքելյանը էջմիածնում հիշյալ դիմումը հանձնեցին կաթողիկոսին:

Կաթողիկոս Գևորգ 5–րդ Սուրենյանը դեռևս 1912 թ. հոկտեմբերի 2–ին Թիֆլիսի Բյուրոյի դիմումի հիման վրա փոխարքա Վորոնցով–Դաշկովի միջոցով խնդրագիր ուղարկեց Նիկոլայ 2–րդ ցարին՝ խնդրելով, որ Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ պետք է մշակվեին Բալկանյան պատերազմի հաշտության պայմանները, նկատի առնվեր նաև Հայկական հարցը:

1912–ի դեկտեմբերի 22–ին փոխարքա Վորոնցով–Դաշկովը կաթողիկոսի դիմումին պատասխանեց, որ ռուսական կառավարությունը հայերի շահերին բոլորովին անհամապատասխան է համարում, որ Թուրքիայի հայերի հարցը քննարկվի Բալկանյան ճգնաժամին նվիրված առաջիկա կոնֆերանսում, որովհետև լիակատար հիմքով կասկածում է Հայկական հարցում եվրոպական պետությունների միակամությունը: Փոխարքան խորհուրդ է տալիս կաթողիկոսին՝ իր ծերունազարդ հեղինակությամբ հայերին հեռու պահել անժամանակ հավաքական դիմումներից, որոնք սոսկ բարդացնում են կայսերական կառավարության համար արևմտահայերի վիճակի բարելավման խնդիրը (նշվ. աշխ., էջ 157):

Հիշյալ պատասխանը դեռ չստացած՝ Կաթողիկոսը 1912–ի դեկտեմբերի 27–ին ցարի անունով նոր խնդրագիր է ուղարկում փոխարքային, որը և խոստանում է այն ուղարկել Պետերբուրգ, ավելացնելով, որ այդ խնդրում ռուս–հայկական շահերը համատեղվում են:

Միաժամանակ կաթողիկոս Գևորգ 5–րդը 1912 թ. նոյեմբերի 10–ին հատուկ կոնդակով Փարիզում գտնվող եգիպտահայ մեծահարուստ, հասարակական–քաղաքական նշանավոր գործիչ Պողոս Նուբար Փաշային նշանակեց իր լիազորը՝ Բեռլինի դաշնագիրն ստորագրած պետությունների հետ բանակցություններ վարելու համար: Կազմ-

վեց հայոց ազգային պատվիրակություն՝ Պողոս Նուբարի նախագահությամբ, անդամներն էին Եվրոպայի հայոց հոգևոր առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Ութուճյանը, Յաղուբ Արթին փաշան, Մինաս Չերազը և Լոնդոնում գտնվող Հարություն Մոստիճյանը:

Միջազգային շիկացած մթնոլորտում Հայկական հարցը դարձավ մեծ պետությունների՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրո–Հունգարիայի և Իտալիայի բանակցությունների առարկա:

Դեռևս 1912 թվականի դեկտեմբերի 21–ին Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը որոշում ընդունեց Հայկական հարցը բարձրացնել Բալկանյան առաջին պատերազմի արդյունքներին նվիրված Լոնդոնի հաշտության կոնֆերանսում: Այդ նպատակով ընտրվեց Ապահովության հանձնաժողով, որի մեջ մտան Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Լ. Տեմիրճիպաշյանը և Մ. Ոսկանյանը:

Պետությունների միջամտությունը կանխելու նպատակով թուրքական կառավարությունը շտապեց հրապարակ նետել հայկական բարենորոգումների սեփական նախագիծ, որը ներառում էր սոսկ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Տրապիզոնի նահանգները, դուրս էր թողնում Սեբաստիայի ու Էրզրումի նահանգները և, ընդհանուր առմամբ, աչքակապություն էր:

1913 թվականի ապրիլի սկզբին արևմտահայերը Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսին ներկայացրին բարենորոգումների իրենց նախագիծը: Այն նախատեսում էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներից կազմել մի երկրամաս՝ օտարերկրացի գերագույն կոմիսարի կառավարմամբ: Կոմիսարի թեկնածությունը հաստատելու էր սուլթանը՝ պետությունների առաջադրմամբ: Երկրամասի բարձրագույն ժողովի անդամների կեսը պետք է լիներին մահմեդականներ, մյուս կեսը՝ քրիստոնյաներ: Գերագույն կոմիսարին առընթեր ստեղծվելու էր վարչական խորհուրդ, որի կազմի մեջ մտնելու էին օտարերկրացիներ՝ որպես բաժինների պետեր և խորհրդականներ: Ոստիկանական և ժանդարմական պաշտոնները պետք է հավասարապես բաժանվեին քրիստոնյաների և մահմեդականների միջև, իսկ բարձր հրամանատարությունը տրվում էր եվրոպացի սպաներին: Հայերից բռնագրավված հողերը պետք է վերադարձվեին իրենց տերերին: Պետք է պաշտոնապես ճանաչվեին հայերի եկեղեցական, ազգային և կրթական իրավունքները: Հայերենը պետք է գործածվեր թուրքերենին հավասար:

Բարենորոգումների գործը պետք է դրվեր բոլոր պետությունների վերահսկողության տակ՝ իրագործման ընթացքի ռուսական հսկողությամբ:

1912–ի դեկտեմբերին Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը հրահանգեց Լոնդոնի և Փարիզի ռուսական դեսպաններին՝ Հայկական հարցի շուրջ պաշտոնական բանակցություններ սկսել ֆրանսիական և անգլիական կառավարությունների հետ: Առաջարկվում էր հանձնարարել Կ. Պոլսի երեք երկրների դեսպաններին՝ համատեղ մշակելու հայկական բարենորոգումների կոնկրետ նախագիծ: 1913 թվականի սկզբներին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները հայտնեցին, որ իրենք պաշտպանում են Ռուսաստանի դիրքորոշումը Հայկական հարցում և այդ առթիվ համապատասխան հրահանգ են տվել Կ. Պոլսի իրենց դեսպաններին:

Բայց ահա առաջացավ բոլորովին անկանխատեսելի մի լուրջ խոչընդոտ. 1913–ի հունվարի 10–ին Թուրքիայում կատարված պետական հեղաշրջման հետևանքով վերստին իշխանության գլուխ անցան երիտթուրքերը, որոնք դեն նետեցին իթթիլաֆականների նախագիծը և հրապարակ հանեցին ամբողջ կայսրության մեջ բարենորոգումներ մտցնելու սեփական նախագիծ:

1913 թ. հունիսի 8–ին ցարական կառավարությունը վեց պետությունների դեսպանների քննարկմանը ներկայացրեց հայկական նահանգներում բարենորոգումների ռուսական նախագիծը, որը Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսի հանձնարարությամբ կազմել էր դեսպանատան առաջին դրագման (թարգման) և խորհրդական Անդրեյ Մանդելշտամը՝ հիմք ունենալով 1895–ի մայիսյան ծրագիրը: Նախատեսվում էր Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի վիլայեթներից կազմել մեկ Հայկական մարզ կամ նահանգ, որը պետք է բաժանվեր սանջակների, կազաների և նահիեների: Մարզը պետք է կառավարեր թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի գեներալ–նահանգապետը, որը հինգ տարի ժամկետով պետք է նշանակվեր սուլթանի կողմից՝ տերությունների համաձայնությամբ: Գեներալ–նահանգապետը պիտի մարմնավորեր մարզի գործադիր իշխանությունը, նրան էր վերապահվում բոլոր պաշտոնյաներին ու դատավորներին նշանակելու կամ հեռացնելու իրավունքը, նրան անմիջականորեն ենթակա էին ոստիկանությունը, ժանդարմերիան և զինված ուժերը:

Հայկական մարզի օրենսդիր մարմինը լինելու էր մարզային ժողովը, որն ընտրվելու էր 5 տարով, գաղտնի քվեարկությամբ և պիտի ունենար հավասար թվով քրիստոնյա և մահմեդական անդամներ: Ժողովի ընդունած օրենքները վավերացնելու էր սուլթանը: Սահմանվում էր թուրքերենի, հայերենի և քրդերենի իրավահավասարություն, մայրենի լեզվով դպրոցական կրթության ազատություն՝ թուրքերենի պարտադիր ուսուցմամբ: Համիդիե գնդերը վերացվում էին, զինծառայությունն անցնելու էր մարզում: Արգելվելու էր մուհաջիրների բնակեցումը մարզում, իսկ հայերից բռնագրաված հողերը պետք է վերադարձվեին:

Բարենորոգումների իրականացման հսկողությունը դրվում էր տերությունների վրա:

Չնայած ռուսական նախագիծը արմատականորեն չէր լուծում Հայկական հարցը, այնուամենայնիվ, այն հանդիպեց ուժեղ դիմադրության:

Նախագիծը քննարկվեց 1913 թվականի հուլիսին՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչների՝ Կ. Պոլսում հրավիրված խորհրդակցությունում: Գերմանիայի անմիջական աջակցությամբ Թուրքիան կտրականապես մերժեց ռուսական նախագիծը և ներկայացրեց իր նախագիծը, որը փաստորեն ի չիք էր դարձնում հայկական բարենորոգումները: Այդ նախագծով ամբողջ կայսրությունը բաժանվում էր վեց սեկտորների, որոնք պիտի գլխավորեին սուլթանի կողմից նշանակված օտարերկրացի գլխավոր տեսուչները և որոնք ոչինչ չպետք է փոխեին, այլ սոսկ պետք է վերահսկեին թուրք պաշտոնյաների գործունեությունը: Թուրքիային անվերապահորեն պաշտպանում էին Գերմանիան, Ավստրո–Հունգարիան և Իտալիան, իսկ Անգլիան և Ֆրանսիան միայն ձևականորեն էին պաշտպանում ռուսական նախագիծը՝ փաստորեն Ռուսաստանին դնելով մեկուսացած վիճակում: Նրան մնում էր մեկ ճանապարհ՝ բանակցություններ վարել անմիջականորեն Թուրքիայի հետ: Դիվանագիտական համառ պայքարից հետո վերջապես 1914 թվականի հունվարի 26–ին ստորագրվեց ռուս–թուրքական համաձայնագիր՝ հայկական բարենորոգումների մասին: Ռուսաստանի կողմից այն ստորագրեց դիվանագիտական հավատարմատար Կ. Գուլկևիչը, որը փոխարինում էր Պետերբուրգ մեկնած դեսպան Գիրսին, իսկ Թուրքիայի կողմից՝ օսմանյան կառավարության մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան: Համաձայնագրում Հայկական մարզ չէր հիշատակվում, այլ խոսվում էր Արևելյան Անատոլիայի մասին, որը պետք է բաժանվեր երկու սեկտորի: Դրանցից

մեկի մեջ մտնում էին Էրզրումի, Տրապիզոնի ու Սվազի վիլայեթները՝ Էրզրում կենտրոնով, իսկ մյուսի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները՝ Վան կենտրոնով: Սեկտորները պետք է կառավարեին Բ. Դռան նշանակած օտարահպատակ գլխավոր տեսուչները: Թուրքական կառավարությունն իրավունք ուներ ցանկացած ժամանակ պաշտոնանկ անել վերատեսուչներին:

Համաձայնագրում ոչ մի խոսք չկար եվրոպական որևէ պետության վերահսկողության, ընդհանուր օրենսդրական օրգանի՝ Մարզային ժողովի մասին: Յուրաքանչյուր սեկտորում պետք է լիներ գլխավոր խորհուրդ՝ թուրք նահանգապետի գլխավորությամբ: Խորհրդի իրավասություններն էլ սահմանափակվում էին հասարակական աշխատանքների շրջանակներում: Համաձայնագրում չէր արտացոլված նաև դատական բարեկարգության հարցը, այսինքն պահպանվելու էր հին թուրքական դատակարգը:

Սահմանափակված էին նաև գլխավոր տեսուչների իրավունքները. նրանք սոսկ հսկելու էին գործող վարչական, դատական ու ոստիկանական ապարատի վրա: Նրանք կարող էին ազատել միայն ստորին պաշտոնյաներին, իսկ բարձրաստիճան մարդկանց փոփոխելու համար պետք է ստանային թուրքական կառավարության համաձայնությունը:

Համաձայնագրում ոչ թե խոսվում էր հայերից ապօրինաբար բռնագրաված հողերի վերադարձի, այլ հողային վեճերը գլխավոր տեսուչների հսկողությամբ կարգավորելու մասին:

Համիդիե գնդերը ոչ թե ցրվում էին, այլ վերածվում էին պահեստային հեծելազորի:

Ընդհանուր առմամբ ռուս–թուրքական համաձայնագիրը չէր բավարարում հայերի պահանջները և չէր արդարացնում նրանց սպասելիքները: Այնուամենայնիվ, իր պակասություններով հանդերձ, այն մի դրական քայլ էր Հայկական հարցի հետագա լուծման ճանապարհին և նույնիսկ բուռն ոգևորություն առաջացրեց արևմտահայության որոշակի շրջանակներում: Սակայն, դժբախտաբար, այդ խիստ չափավոր ծրագրին վիճակված չէր իրականանալ: Երկար որոնումներից հետո, ի վերջո, գտնվեցին եվրոպացի երկու գլխավոր տեսուչները՝ հոլանդացի Վեստենենկը, որը Կոնգոյի նախկին փոխարքան էր և նորվեգացի գնդապետ Հոֆը, որոնք ժամանեցին Կ. Պոլիս և 1914 թվականի մայիսի 10–ին ստորագրեցին իրենց կոնտրակտները Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթի հետ: Սակայն Հոֆը հազիվ էր հասել Վան, իսկ Վեստե-

ենենկը դեռ չէր մեկնել Կարին, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքիան անմիջապես չեղյալ հայտարարեց իր ստորագրած համաձայնագիրն ու երկրից հեռացրեց եվրոպացի գլխավոր տեսուչներին:

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի հեռապատկերում բարձրանում էր Մեծ եղեռնի չարագուշակ ուրվապատկերը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց 1914 թվականի հուլիսի 19–ին (օգոստոսի 1–ին), իմպերիալիստական պետությունների երկու խոշոր խմբավորումների՝ Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո–Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) և Անտանտի (Եռյակ համաձայնություն՝ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, որին հետագայում միացան Ճապոնիան, Իտալիան, ԱՄՆ–ը, Ռումինիան, Բելգիան, Սերբիան, Չեռնոգորիան, Պորտուգալիան, Էստոնիան և այլ երկրներ):

Պատերազմը տևեց չորս տարուց ավելի և ընդգրկեց 33 պետություն՝ 1,5 միլիարդ բնակչությամբ: Զորակոչվեց 74 միլիոն մարդ, որից մոտ 10 միլիոնը սպանվեց: Պատերազմի բուն պատճառը իմպերիալիստական պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններն էին՝ կապված գլխավորապես աշխարհի վերաբաժանման հետ: Սակայն պատերազմի անմիջական առիթ ծառայեց սերբերի կողմից Ավստրո–Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը Սարաևոյում 1914 թվականի հունիսի 15–ին: Սերբիային անընդունելի վերջնագիր ներկայացնելուց հետո Ավստրո–Հունգարիան հուլիսի 15–ին պատերազմ սկսեց նրա դեմ, իսկ հուլիսի 19–ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Հոկտեմբերի 14–ին պատերազմի մեջ մտավ Թուրքիան: Պատերազմն ընդգրկել էր Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ավելի քան 4 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք:

Պատերազմին մասնակցող իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուրն ուներ նվաճողական իր պլանները: Թուրքիայի գլխավոր նպատակն էր երիտթուրքերի պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացումը: Ծրագրված էր գրավել Անդրկովկասը, շարժվել դեպի Դաղստան և Հյուսիսային Կովկաս, ապա հասնել Վոլգայի ափերը, այնուհետև թափանցել Միջին Ասիա: Թուրքական ապագա մեծ

կայսրությունը պիտի տարածվեր Բալկաններից մինչև Ալթայ և Հեռավոր Արևելք, Ղրիմից մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու գլխավոր պատճառներից մեկն էլ Հայկական հարցի «լուծումն» էր:

Գերմանիան նպատակ ուներ տիրանալ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութներին, Բեռլին–Բաղդադ–Բասրա երկաթուղու կառուցմամբ տիրանալ Հնդկաստանին, փակել Ռուսաստանի առաջխաղացումը դեպի թուրքական տարածքներ:

Ֆրանսիան հույսեր էր փայփայում տիրանալ Թուրքիային պատկանող Միջագետքի արաբական տարածքներին:

Անգլիայի գլխավոր մտահոգությունը հսկայական գաղութային տարածքների պահպանումն էր:

Ցարական Ռուսաստանը նպատակադրվել էր Թուրքիայից զավթել սևծովյան նեղուցները, ապա Արևմտյան Հայաստանի վրայով դուրս գալ Միջերկրական ծով:

Պատերազմն ընթանում էր բազմաթիվ ռազմաճակատներում, որոնցից գլխավորները Եվրոպայի Արևմտյան և Արևելյան ռազմաճակատներն էին, իսկ Բալկանյան, Իտալական, Հյուսիսաֆրիկյան, Հեռավորարևելյան, Կովկասյան և Գալիպոլյան ռազմաճակատները համարվում էին երկրորդական:

1914 թվականի հուլիսին, երբ դեռ պատերազմը չէր սկսվել, Էրզրումում հրավիրվեց Դաշնակցության 8–րդ ընդհանուր ժողովը: Օրակարգի հարցերը, որոնք վերաբերում էին երկրի ներքին կյանքին, հողային խնդրին, արտագաղթին, կառավարության վարած հակահայ քաղաքականությանը, ինքնապաշտպանությանը, բարեկորգումներին, դեռ չէին սպառվել, երբ ստացվեց պատերազմի սկսման լուրը: Ժողովը կարծեց *իր օրակարգը և քննության առավ Թուրքիայի՝* պատերազմի մեջ մտնելու դեպքում ունենալիք դիրքորոշման հարցը: Որոշվեց հրահանգել կուսակցության մարմիններին՝ օրինապահ մնալ իրենց ապրած երկրների վերաբերմամբ և կատարել իրենց քաղաքացիական պարտականությունները:

Ժողովը փակված էր արդեն, երբ Էրզրում հասան Իթթիհատի լիազորներ Բեհաէդդին Շաքիրը, Նաջի և Խալիլ բեյերը՝ բանակցելու Դաշնակցության հետ: Նրանք առաջարկեցին միանալ իրենց և ռուսների դեմ ապստամբեցնել կովկասահայերին, վկայակոչելով, որ վրացիներն ու կովկասյան թաթարներն արդեն տվել են իրենց համաձայնությունը: Փո-

խարենը նրանք հայերին խոստանում էին ստեղծել հայկական ինքնավար մի իշխանություն ռուսահայ և թուրքահայ որոշ հողամասերից: Նրանք դաշնակցության ներկայացուցիչներ Ռոստոմին, Խ. Մալումյանին (Ակնունի) և Վռամյանին ցույց տվեցին մի քարտեզ, որով Կարսի շրջանը, Երևանի նահանգը, Գանձակի նահանգի մի մասը, ինչպես նաև Վանի, Բիթլիսի վիլայեթներն ու Էրզրումի վիլայեթի մի մասը տրվում էին ինքնավար Հայաստանին:

Դաշնակցության ներկայացուցիչները թուրքերին հայտնեցին, որ իրենք չեն կարող ընդունել ռուսների թիկունքում ապստամբելու առաջարկը և շեշտեցին, որ հայ ժողովուրդը թե՛ Թուրքիայում, թե՛ Ռուսաստանում պարտավոր է իր քաղաքացիական պարտականությունները կատարել բարեխղճորեն: Նրանք հայտնեցին նաև, որ իրենք կտրականապես դեմ են Թուրքիայի պատերազմելուն, որովհետև համոզված են, որ վերջնական հաղթանակը դաշնակիցներին է պատկանելու, պատերազմին մասնակցել՝ նշանակում է երկիրը նետել աննեելի արկածախնդրության գիրկը, որը կործանարար կլինի ոչ միայն հայ ժողովրդի, այլև օսմանյան պետության համար: Թուրք ներկայացուցիչները հեռացան խիստ դժգոհ՝ հայերի պատասխանը համարելով դավաճանություն: Ինչպես իրավացիորեն գրում է Ս. Վրացյանը, հայերը չէին կարող խոստանալ ավելին. ոչ միայն կովկասահայերին ապստամբեցնել, այլև թուրքահայերին էլ դժվար էր ոգևորել «օսմանյան հայրենասիրությամբ», այնքան վարկաբեկված էր թուրքական ռեժիմը հայ ժողովրդի աչքին:

Ընդհակառակը, պատերազմի դեպքում ավելի հավանական ու տրամաբանական էր հակաթուրքական զգացմունքների պոռթկումը, ինչը և տեղի ունեցավ:

Միանգամայն տեղին է նկատել ակադեմիկոս Հ. Ռ. Սիմոնյանը, որ եթե Դաշնակցության ղեկավարությունն այն ժամանակ կարողանար կռահել ոխերիմ թշնամու գազանային մտադրությունը, ապա գուցե ընդուներ միակ ճիշտ վճիռը՝ զորահավաքի ենթարկել ազգի բոլոր ուժերը և կենաց ու մահու կռվի դուրս գալ անարգ թշնամու դեմ: Դա էր, հավանաբար, ժողովրդի փրկության միակ ելքը (Հ. Ռ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Երևան, 1995, էջ 372):

Այնուհետև խոսելով նույն ժամանակ Պոլսում կնքված թուրք–վրացական պայմանագրի մասին՝ որով թուրքերը վրացիներին խոստանում էին անկախություն, իսկ վրացիները պարտավորվում էին պատերազմի ժամանակ աջակցել թուրքերին, հարգարժան ակադեմի-

կոսը գրում է, թե այդպիսով թուրքերը հայերի հետ երզրումում չկարողացան լեզու գտնել, բայց Պոլսում վրացիների հետ կարողացան (նույն տեղում, էջ 373): Այո՛, ճիշտ է, բայց պետք է նկատի ունենալ, որ թուրքերը վրացիների հանդեպ նույն «զգացումները» չէին տածում, ինչ հայերի, ուրեմն և զուգահեռը կարող է թյուրըմբռնում առաջացնել:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռուսաստանը Թուրքիային պաշտոնապես պատերազմ հայտարարեց 1914 թվականի հոկտեմբերի 31–ին: Կովկասյան ճակատում ռուսների դիմաց կանգնած էր թուրքական 3–րդ բանակը՝ բաղկացած 9–րդ, 10–րդ և 11–րդ կորպուսներից, հեծյալ դիվիզիայից, 4,5 քրդական հեծյալ դիվիզիաներից, Միջագետքից ժամանած երկու առանձին հետևակային դիվիզիաներից: Յուրաքանչյուր կորպուս բաղկացած էր 3 դիվիզիայից և մեկ հեծյալ բրիգադից:

Սարիղամիշի օպերացիան: Կովկասյան ճակատում 1914–1917 թվականներին ռուսական բանակը իրականացրեց մի շարք փայլուն օպերացիաներ՝ Սարիղամիշի, Ալաշկերտի, Համադանի և այլն, որոնցից ամենադժվարինն ու ամենափայլունը Սարիղամիշինն էր: Հետաքրքիր է, որ ռուսական հրամանատարությունը նախօրոք այդպիսի օպերացիա չէր պլանավորել, այն պարտադրվեց թուրքական հրամանատարության կողմից: Այդ օպերացիան ընթացավ 1914 թ. դեկտեմբերի 9–ից մինչև 1915 թվականի հունվարի 5–ը, սակայն գլխավոր իրադարձությունները ծավալվեցին դեկտեմբերի 10–23–ին:

Օպերացիայի առաջին երկու օրերին թուրքական 9–րդ և 10–րդ կորպուսները ռազմարշավ կատարեցին և դուրս եկան թևային հարվածի համար նախանշված բնագծերը: Սակայն շուտով սկսվեց ուժեղ սառնամանիք, երևացին առաջին ցրտահարվածները: Տեսնելով այդ ամենը՝ էնվեր փաշան տվեց հետևյալ դեմագոգիկ հրամանը. «Զինվորներ, ես այցելեցի ձեզ բոլորիդ: Տեսա, որ ձեր ոտքերը մերկ են և ձեր ուսերին շինելներ չկան: Սակայն ձեր առջև կանգնած թշնամին վախենում է ձեզանից: Շուտով դուք կհարձակվեք և կմտնեք Կովկաս: Այնտեղ դուք կգտնեք ամեն տեսակի պարեն և հարստություններ: Ամբողջ մուսուլմանական աշխարհը հուսով սպասում է ձեր վերջին ջանքերին»: Այս հրամա-

նի համար գերմանական գեներալ Ֆոն դեր Հոլցը էնվերին ծաղրանքով անվանեց արևելյան նորահայտ Նապոլեոնիկ (Ա. Հ. էջ 142): 1812 թ. Բորոդինոյի ճակատամարտից առաջ Նապոլեոնը նույնպես, դիմելով իր զինվորներին, կոչ էր արել գրավել Մոսկվան, որտեղ նրանք կգտնեն տաք բնակարաններ և պարեն, գուշակելով նրանց շուտափույթ վերադարձը հայրենիք:

Այդ տագնապալի օրերին Վորոնցով–Դաշկովի հիվանդության պատճառով գլխավոր հրամանատարի պարտականությունը դրվեց նրա օգնական գեներալ Միշլաևսկու վրա, որն իր վրա վերցրեց զորքերի Սարիղամիշի խմբավորման հրամանատարությունը: Սակայն, ինչպես ցույց տվեցին նրա հետագա կարգադրությունները, Միշլաևսկին նույնպես լիովին չէր պատկերացնում իրադրությունը, տատանվում էր և տալիս հակասական հրամաններ:

Դեկտեմբերի 14–ին ռուս հետախույզները գերի վերցրին թուրքական 29–րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետին, որի մոտ հայտնաբերվեց հրաման՝ խորը թևային հարվածով Սարիղամիշը գրավելու մասին: Դա խուճապի մեջ գցեց Միշլաևսկուն, որը սկսեց մտածել, թե ամբողջ Կովկասյան բանակին կատարյալ աղետ է սպառնում: Դեկտեմբերի 15–ին կազակային հարյուրյակի ուղեկցությամբ նա թողեց Սարիղամիշը՝ այդ մասին ոչինչ չասելով շտաբի պետ Յուդենիչին և ցուցումներ չթողնելով զորամասերի հրամանատարներին: Դեկտեմբերի 16–ին Կաղզվանից նա 4–րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկուն ուղարկեց հետևյալ կարգադրությունը. «Անհապաղ, առանց Սարիղամիշի տակ մարտերի արդյունքներին սպասելու, նահանջել դեպի սահմանային Աղրի–դաղ լեռնաշղթան, իսկ թուրքերի ճնշման դեպքում այնուհետև նահանջել Երևան–Աղստաֆա ուղղությամբ»: *Ի պատիվ գեներալ Օգանովսկու, որն, ի դեպ, ազգությամբ հայ էր, պիտի* ասել, որ նա քաջություն ունեցավ լռության մատնել գլխավոր հրամանատարի պաշտոնակատարի հրամանը և չկատարել այն: Գեներալ Միշլաևսկին, առանց որևէ պատճառի, ռազմաճակատի գիծը կրճատելու անվան տակ հրամայեց գեներալ Չեռնոզուբովի ադրբեջանական ջոկատին՝ նահանջել Թավրիզից, Ուրմիայից, Դիլմանից և դիրքեր գրավել Ջուլֆա–Խոյ բնագծում: Գեներալ–լեյտենանտ Չեռնոզուբովը կատարեց այդ բացահայտ սխալ հրամանը, իսկ 1915–ին հարկադրված էր վերստին գրավել այդ բնագծերը, սակայն այս անգամ արդեն մեծ դժվարությամբ և զոհերով: Այդ նահանջից առաջին հերթին տուժեց տեղական հայ ազգաբնակչությունը:

Աստիճանաբար Սարիղամիշ բերվեցին ռեզերվներ՝ հետևակային, հեծելազորային և հրետանային զորամասեր: Դեկտեմբերի 14–ից հետո նրանք արդեն ի վիճակի էին հետ մղել թուրքերի գրոհները: Թուրքերն իրենք ծանր դրության մեջ էին: Երբ ելման դիրքերից նրանք ուղարկեցին 10–րդ կորպուսի 30–րդ և 31–րդ դիվիզիաները, նրանց շարքերում հաշվվում էր 20.000 զինվոր, իսկ դեկտեմբերի 14–ի դրությամբ Սարիղամիշի մատույցներում մնացել էր ընդամենը 3200 զինվոր:

Դեկտեմբերի 15–ին իր հիանալի պլաստունյան բրիգադով (կազակային հետևակ) Սարիղամիշ հասավ գեներալ Պրժևալսկին, որի վրա դրված էր Սարիղամիշի պաշտպանությունը և որին տրված էր գործողությունների ազատություն:

Սարիղամիշի տակ ծանր մարտերի օրերին ռուսական հրամանատարությունը պահպանեց ջոկատների կամ խմբերի համակարգը: Դեկտեմբերի 15–22–ը գործում էին հետևյալ ջոկատները՝ սկսած աջ թևից. Ֆեսենկոյի հեծելազորը, Գաբաևի, Վորոնովի, Բարաթովի, Բարկովսկու, Կրավչենկոյի, Պոպովի, Բուկրետովի, Մասլենիկովի և այլոց ջոկատները: Դժվար է ասել, թե այդ ջոկատներից հատկապես որը կատարեց առավել վճռական դեր, որովհետև բոլորն էլ մարտնչում էին կլիմայական դժվարին պայմաններում և նրանցից ամեն մեկն էլ աչքի ընկավ բացառիկ տոկունությամբ ու համառությամբ: Հատկապես դեկտեմբերի 15–ից հետո եղան պահեր, երբ թուրքերը գրավեցին Սարիղամիշի կայարանը, ամրացան Կարս–Սարիղամիշ երկաթուղում, գրավեցին Սարիղամիշի մատույցները, «Արծվաբույն» տիրապետող բարձունքը, և էնվերը համարեց, որ հասել է հաղթանակի: Սակայն ռուս զինվորների դիմացկունության և հերոսության շնորհիվ, որոնք բազմիցս սվինամարտի նետվեցին, քաղաքի պաշտպանությունը չերերաց: Դեկտեմբերի 20–ից հետո թուրքական բաժան–բաժան զորամասերի շուրջ օղակը գնալով սեղմվեց: Աջ թևից Գաբաևի, Բարաթովի ջոկատները և Ֆեսենկոյի հեծելազորը, ձախից՝ Բուկրետովի, Պոպովի, Բարկովսկու ջոկատները քայլ առ քայլ, մեծ կորուստների գնով, կտրեցին թշնամու նահանջի բոլոր ճանապարհները, հատկապես Բարդուսի լեռնանցքի շրջանում, և նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը:

Դեկտեմբերի 22–ին ռուսական զորքերն ընդհանուր հարձակում սկսեցին: Թուրքերն սկսեցին անկազմակերպ նահանջել: Ժամը 16–ին

Պրժևալսկու զինվորները Կըզլ–Քիլիսայի շրջանում գերի վերցրին թուրքական բանակի 9–րդ կորպուսի հրամանատար Իսհան փաշային և նրա ողջ շտաբը: Սարիղամիշի անտառներում Պրժևալսկու ջոկատը գերեց նաև 17–րդ, 28–րդ և 29–րդ դիվիզիաների հրամանատարներին, 106 սպաների, գրավեց 30 թնդանոթ և 20 գնդացիր: Ռուսական զորքերն սկսեցին թուրքական 10–րդ կորպուսի մնացորդների հետապնդումը, և համառ մարտերը շարունակվեցին ընդհուպ մինչև դեկտեմբերի 30–ը, իսկ էնվեր փաշան փախավ Էրզրում: Բարդուսի մոտ ռուսներին գերի հանձնվեց թուրքական 92–րդ գունդը, իսկ Չաթախի շրջանում գերի հանձնվեց 5000 թուրք զինվոր: Թուրքերը դուրս մղվեցին նաև Օլթիի և Արդահանի շրջաններից: 1915 թ. հունվարի 5–ին ռուսական զորքերի կատարյալ հաղթանակով ավարտվեց Սարիղամիշի օպերացիան:

Թուրքիայում գերմանական ռազմական միսիայի ղեկավար գեներալ Լիման Ֆոն Սանդերսի տվյալներով թուրքական 90.000–անոց 3–րդ բանակից փրկվեցին ընդամենը 12.000–ը, մնացածները սպանվեցին կամ գերի ընկան: Ռուսների կորուստները կազմում էին 29.000 մարդ, որից 6.000–ը՝ ցրտահարվածներ: Գերմանական գեներալը խիստ բացասաբար է գնահատում էնվեր փաշայի գործողությունները Սարիղամիշի օպերացիայի ընթացքում և ավելացնում, որ այդ ծանրագույն պարտության պատմությունը գաղտնի պահվեց, որովհետև արգելվեց խոսել այդ մասին, իսկ չենթարկվողներին ծերբակալում և պատժում էին: Այդ մասին քիչ գիտեին նաև Գերմանիայում (А. Арутюнян. Кавказский фронт 1914—1917, Ереван, 1971, с. 153):

Սարիղամիշի տակ ռուսական բանակի հաղթանակով ավարտվեց ռազմական գործողությունների առաջին փուլը ռուս–թուրքական ռազմաճակատում 1914–1917 թվականներին: Թուրքական երեք բանակներից մեկն ընդամենը երկու ամսվա ընթացքում դադարեց գոյություն ունենալուց:

Գնահատելով Սարիղամիշի օպերացիայի ռազմաքաղաքական ընդհանուր նշանակությունը՝ պրոֆ. Ա. Հարությունյանն իրավամբ առաջին պլան է մղում Կովկասի վրա թուրքական արշավանքի կանխումը: Նա գտնում է, որ տվյալ պահին Երևանում, Ալեքսանդրապոլում և նույնիսկ Թիֆլիսում ռեզերվային զորամասեր չկային, և հաղթանակի դեպքում թուրքական բանակն առանց լուրջ խոչընդոտների կարող էր հայտնվել Անդրկովկասի կենտրոնում, որը կնշանակեր բնակչության ֆիզիկական բնաջնջում, թալան և ավերածություն: Այնուհետև նա եզրակացնում է, որ այն բանակը, որն անլուր զրկանքների ու զոհերի գնով կանխեց թուրքական հորդաների մուտքը Կովկաս, պատմության դատաստանի առջև օբյեկտիվորեն արժանի է ամենայն դրական գնահատականի (Ա. Հ. էջ 186):

Ալաշկերտի օպերացիան (1915 թ. ապրիլի 24-հուլիսի 26): Կովկասյան ռազմաճակատում հաջորդ խոշոր իրադարձությունը Ալաշկերտի օպերացիան էր: Սարիղամիշի օպերացիայից հետո 1915 թ. սկզբին գործող բանակի շտաբը Թիֆլիսից տեղափոխվեց Կարս, և ձեռնարկվեցին մի շարք կազմակերպական ու մոբիլիզացիոն միջոցառումներ: Թիկունքի և ռազմաճակատի միջև հաստատվեց կայուն հեռագրական կապ, թիկունքում՝ Սարիղամիշում, Արդահանում, Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում և Բաքվում, կազմակերպվեցին լավ ամրացված ու քողարկված շրջաններ, նախապատրաստվեցին երկաթուղային և խճուղային ճանապարհները: 1915 թ. ապրիլի 1–ի դրությամբ Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակն ուներ 120 գումարտակ, 212 հարյուրյակ, 364 թնդանոթ: Թուրքերն ունեին շուրջ 100.000 զինվոր:

1915 թվականին Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողություններն ընթանում էին հիմնականում ձախ թևում, այսինքն՝ Ալաշկերտի հովտում և բուն Իրանի տարածքում: Մարտերն առավել ակտիվ բնույթ էին կրում Կովկասյան 4–րդ բանակային կորպուսի հատվածում, որն գրաղեցնում էր 400 կմ ճակատամաս՝ Մերգեմիրի լեռնանցքից մինչև Թավրիզ: Կորպուսի հրամանատարն էր հայազգի գեներալ Պյոտր Իվանովիչ Օգանովսկին: Կորպուսը բաղկացած էր գեներալներ Աբացիևի, Նիկոլաևի, Տրուխինի և Չեռնոզուբովի ջոկատներից: 1915 թ. հունիսին 4–րդ կորպուսն իր կազմում ուներ 29 գումարտակ, 121 հարյուրյակ, 93 հրանոթ:

Չորրորդ կորպուսի դիմաց թուրքերն ունեին՝ Դուբաղում 37–րդ հետևակային դիվիզիան, Մանազկերտում՝ Սիրիայից բերված 12.000–անոց մեկ դիվիզիա, Վանա լճից հյուսիս՝ 4 պահեստային գումարտակ և բազմաքանակ քրդական ջոկատներ, Վանի, Ուրմիայի և Սարայի շրջանում՝ 2 դիվիզիա, Իրանում՝ 15.000 քուրդ:

1915 թ. ապրիլին թուրքական 3–րդ և 5–րդ հավաքական և 36–րդ հետևակային դիվիզիաները Խալիլ բեյի հրամանատարությամբ անցան հարձակման և գրավեցին Ուրմիա քաղաքը՝ լճից արևմուտք: Կովկասյան բանակի հրամանատարությունը հրամայեց 4–րդ կորպուսի հրամանատարին՝ Վանա լճի շրջանում անցնել հարձակման: Ապրիլի 24–ին

գեներալ Աբացիևի երևանյան ջոկատն անցավ հարձակման և ապրիլի 27–ին գրավեց Մանազկերտը: Միաժամանակ հարձակում սկսեց նաև գեներալ Նիկոլաևի ջոկատը, որի կազմում կային հայկական կամավորական երեք դրուժինաներ՝ Վարդանի հրամանատարությամբ: Ռուսական զորքերը, հաղթահարելով Թավրիզի 2800 մետր բարձրությամբ դժվարամատչելի լեռնանցքը, մայիսի 5–ին գրավեցին Վան քաղաքը, որի հայ բնակչությունը գտնվում էր պաշարման մեջ և մեկ ամիս հերոսաբար պաշտպանում էր հարազատ քաղաքը: Վանը պաշարած Զևդեթ բեյի զորքերը նահանջեցին Բիթլիսի ուղղությամբ: Առաջինը Վան մտավ դաշնակցական Խեչոյի կամավորական հեծյալ ջոկատը, հետո քաղաք մտան Վարդանը և գեներալ Նիկոլաևը:

Ապրիլի 27–ին հարձակման անցավ գեներալ Տրուխինի գլխավորած Մակուի ջոկատը, որը մայիսի 7–ին գրավեց Սարայ գյուղը և այստեղ հանդիպեց գեներալ–լեյտենանտ Չեռնոզուբովի ջոկատին: Այդ երկու ջոկատները, միավորվելով, առաջացան ևս մոտ 100 կմ և գրավեցին Արճեշն ու Կոփը: Դա ռուսական բանակի լուրջ հաջողությունն էր:

Դիլմանի շրջանում գեներալ Չեռնոզուբովի զորքերը գլխովին ջախջախեցին Խալիլ բեյի հավաքական կորպուսի հարվածային խմբավորումը: Այդ ճակատամարտը հսկայական նշանակություն ունեցավ: Թուրքերը տվեցին 3500 սպանված:

Դիլմանի ճակատամարտում հատկապես աչքի ընկավ գեներալ Թ. Նազարբեկովի գլխավորած Կովկասյան 2–րդ հրաձգային դիվիզիան և ժողովրդական հերոս Անդրանիկի գլխավորած հայկական կամավորական 1–ին դրուժինան:

Հետապնդելով Խալիլ բեյին՝ գեներալ Չեռնոզուբովի ջոկատը և հատկապես Կովկասյան 2–րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը ստիպված էին հաղթահարել բացառիկ դժվարություններ: Կլիմայական պայմանները և տեղանքը անբարենպաստ էին: Նահանջող թուրքերը ոչնչացրել էին բոլոր անցումները, կամուրջները, բնակարանները, պարենը: Ռուս զինվորները անասելի զրկանքներ էին կրում:

Վանա լճի շրջանում ռազմական գործողությունները մայիս–հունիս ամիսներին առավել ակտիվացան: Թուրքական հրամանատարությունը ձգտում էր ամեն գնով պահպանել Իրանի և Թուրքիայի միջև այդ յուրօրինակ գոտին, որը Ռուսաստանի և Իրանի դեմ միաժամանակյա գործողություններ ծավալելու կարևոր պլացդարմ էր:

Ռուսական հրամանատարությունը նույնպես լուրջ նշանակություն էր տալիս Ալաշկերտի հովտին՝ Կոփ հանգուցակետով, ինչպես նաև Մուշին և Բիթլիսին, որտեղից ուղիներ էին բացվում դեպի Միջագետք:

Գլխավոր հարվածի համար Կովկասյան 4–րդ կորպուսի հրամանատարությունը կենտրոնացրեց 17 գումարտակ, 32 հրանոթ, 35 հարյուրյակ և էսկադրոն՝ գեներալներ Վորոպանովի, Մուդրիի, Նազարբեկովի, Իսրալովի, Շարպանտյեի գլխավորությամբ: Հուլիսի 3–ին բոլոր ջոկատները ձեռնամուխ եղան հրամանի կատարմանը: Չնայած թշնամու կատաղի դիմադրությանը և ռուսների մեծ կորուստներին՝ 200 սպանված և 2000 վիրավոր, թուրքերը տեղի տվեցին և սկսեցին նահանջել Կոփի ուղղությամբ: Հուլիսի 5–ին գեներալ Օգանովսկին ճշգրտեց ջոկատների մարտական խնդիրները՝ պահանջելով հետապնդել թշնամու Կոփի խմբավորմանը, պահպանել Եփրատի բնագիծը և շարունակել հարձակումը դեպի Փրխուս: Սակայն ուժերի ցրվածության, վատ մատակարարման և ոչ ճկուն ղեկավարման հետևանքով թշնամու հետապնդումը սպասված արդյունքը չտվեց: Ընդհակառակը՝ կենտրոնացնելով նոր ուժեր, հուլիսի 9–ին թուրքերն անսպասելիորեն անցան հարձակման: Գեներալ Շարպանտյեի և Նազարբեկովի անվճռական գործողությունների հետևանքով, որոնք, կորպուսի հրամանատարի հրամանին հակառակ, քաշվեցին Վանա լճից հյուսիս, ռուսական ճակատը ճեղքվեց: Ռուսները թողեցին Կոփի բնագծերը և քաշվեցին Մանազկերտ: Թուրքերի հարձակումը շարունակվեց մինչև հուլիսի 22–ը: Աբդուլ Քերիմ փաշան գլխավոր հարվածը հասցրեց Կոփ–Մանազկերտ–Դուքաղ–Ղարաքիլիսա–Ալաշկերտ ուղղությամբ, և հուլիսի 22–ին նրա առաջապահ զորամասերը բնագծեր գրավեցին Արարատ լեռից հարավ Մոլլա–Սուլեյման (Ալաշկերտից հարավ)–Դիադին–Արնիս (Վանա լճից հյուսիս–արևելք) գծով: Ռուսական զորքերի նահանջն անկազմակերպ էր ընթանում: Ընդամենը 12–13 օրվա ընթացքում Աբդուլ Քերիմ փաշայի հարվածային խմբավորումը դեպի հյուսիս՝ Արարատ լեռան ուղղությամբ առաջացավ 100 կմ, իսկ արևմուտքից դեպի արևելք՝ 70 կմ: Թուրքերի այդ հաջողությունների հետագա զարգացումը կարող էր հանգեցնել Իգդիրի և Երևանի գրավմանը: Սակայն թուրքերի հաջողությունները ժամանակավոր էին, որովհետև դրանք ապահովված չէին թևերից, ամրապնդված չէին նյութապես ու տեխնիկապես, վատ էր կազմակերպված դրանց ղեկավարումը:

Հուլիսի 22–ին Դահար գյուղի շրջանից գեներալ Բարաթովի ջոկատը, որի կազմում կար 30 գումարտակ, 24 հարյուրյակ և հրետանի, երեք զորասյուներով վճռական հարձակում սկսեց Աբդուլ Քերիմ փաշայի հարվածային խմբավորման ձախ թևի վրա: Այդ հանկարծակի և նպատակասլաց հարձակումն անսպասելի էր թուրքերի համար, որոնք անմիջապես ընկան աննպաստ դրության մեջ: Ձախից հարձակվում էին Բարաթովի երեք զորասյուները, կենտրոնից՝ 4–րդ կորպուսի հիմնական ուժերը, աջից՝ Շարպանտյեի և Նազարբեկովի ջոկատները: Թուրքական զորքերն ստիպված էին հապճեպորեն նահանջել: Հատկապես թեժ մարտեր ծավալվեցին Մերգեմիրի լեռնանցքի շրջանում: Բարաթովի զորքերը ջախջախեցին թուրքերին և գրավեցին Մերգեմիր, Կլիչ–գյադուկ լեռնանցքերն ու Դուքաղ գյուղը: Հուլիսի 26–ին մարտերն ընթանում էին արդեն Փալանթեքեի դիրքերում: Մարտադաշտում թուրքերը թողեցին հազարավոր սպանվածներ ու վիրավորներ: Ճիշտ է, թուրքերը կարողացան խուսափել շրջապատման մեջ ընկնելուց, բայց հետ քշվեցին մինչև հուլիսի 9–ի ելման դիրքերը:

Պատմագրության մեջ տեղ է գտել այն խորապես սխալ, հակագիտական ու անընդունելի կարծիքը, թե իբր ռուսական հրամանատարությունը գիտակցաբար է կատարել ռուսական զորքերի նահանջը՝ հայ ազգաբնակչության կոտորածը թույլ տալու և արդյունքում «Հայաստանն առանց հայերի» ունենալու համար:

1915 թ. հուլիսի 17–ին Վանա լճի շրջանում հայկական կամավորական 1–ին դրուժինայի հրամանատար Անդրանիկ Օզանյանը, տեղեկանալով 8.000 զինվորների անկազմակերպ նահանջի և 4–րդ կորպուսի հրամանատարի՝ նահանջի վերաբերյալ հրամանի մասին, զայրագին վիճել է ջոկատի հրամանատար գեներալ Տրուխինի հետ ու հայտարարել. «Այդ նահանջը կատարյալ կեղծիք է: Դուք ցանկանում եք, որ Հայաստանը մնա առանց հայերի, ահա ձեր նպատակները»: Այնուհետև Անդրանիկն ավելացնում է. «24.000 թուրք ասկյարների դեմ 4–րդ կորպուսն ունի 64.000 զինվոր՝ 8 գեներալներով (Աբացիև, Վորոպանով, Օտուսյանով, Նազարբեկով, Տրուխին, Շարպանտյե, Նիկոլան, Օգանովսկի): Թող թշնամին գա, չափվենք ուժերով, և եթե ուժեղ կլինի, նոր նահանջենք»:

Կովկասյան 2–րդ կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկովն իր հուշերում վկայում է, որ այդ նույն օրն Անդրանիկն իր ներկայությամբ կրծքից պոկեց և հատակին շպրտեց Գեորգիևյան խաչը: Նազարբեկովը վկայում է նաև, որ բժիշկ Հակոբ Ջավրիևը լաց եղավ, երբ

տեղեկացավ Վանի շրջանից ռուսական զորքերի նահանջի մասին և բացականչեց, թե իր բոլոր հույսերն ու երազները օճառի պղպջակի նման պայթեցին:

Սիմոն Վրացյանն այդ առթիվ գրում է. «Թուրքահայկական խնդիրը լուծվում էր թուրքերի ձեռքով: Թուրքահայաստանն առանց հայերի՝ այս համապատասխանում էր և ռուսների հաշիվներին: Մինչ թուրքերը կլանված էին հայկական տեղահանություններով ու ջարդերով, այստեղ ռուս զորավարները կադրիլ էին խաղում թուրքական ռազմաբեմում: Մեկ քայլ առաջ, երկու քայլ հետ՝ ռուս բանակն անվերջ առաջխաղացում և նահանջ էր անում, որոնց ընթացքում իսպառ քարուքանդ եղան և իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը:

Դիտում կա՞ր այդ նահանջների մեջ, թե՞ նրանք իսկապես ռազմագիտական անհրաժեշտություն էին՝ միևնույնը չէ՞ր հայ ժողովրդի համար: Նա գաղթում, տնաքանդ էր լինում և ամեն գաղթի հետ կորցնում էր իր տնտեսական ու բարոյական կորովը, և մարդկային հավաքական կերպարանքը» (Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 13):

Համանման կարծիք է հայտնում նաև մեծահամբավ պատմաբան Լեոն՝ գրելով. «Գրեթե միաժամանակ սկսվեց անհասկանալի և խուճապային նահանջը Վանից ու Մանազկերտից մինչև ռուսական սահմանը» (Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925):

Պրոֆ. Ա. Հ. Հարությունյանը գրում է. «Պահպանվել են նաև մեծաքանակ արխիվային փաստաթղթեր և նյութեր, որոնցում հայ հասարակայնության ներկայացուցիչներն առ այսօր շարունակում են մեղադրել ռուսական Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ ռազմաբեմում միտումնավոր կամ չարդարացված տեղաշարժերի համար, որոնք աղետալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար» (Ա. Հարությունյան, Կովկասյան ճակատը 1914–1917 թթ., Երևան, 1971, էջ 186): Այնուհետև, անդրադառնալով հարցի պարզաբանմանը, խորագիտակ պատմաբանը շարունակում է, թե ռուս–հայկական բարեկամության թշնամիները բազմիցս օգտագործել են հիշյալ իրադարձությունները՝ հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի թշնամանքն ապացուցելու համար, ուստի ռազմաստրատեգիական և ընդհանուր քաղաքական իրադրության վերլուծությունը և առաջադրված հարցի օբյեկտիվ պատասխանն ունի գիտա–պատմական և քաղաքական այժմեական խոշոր նշանակություն:

Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ Նիկոլայ 2–րդը, ռազմական մինիստր գեներալ Սուխոմլինովը, գլխավոր շտաբի պետ, գեներալ Յանուշկևիչը, արտգործմինիստր Սազոնովը, գերագույն գլխավոր հրամանատարը, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը և կայսրության առաջատար այլ անձինք, ամբողջովին կլանված լինելով Արևմտյան ռազմաճակատի հոգսերով, շատ քիչ էին զբաղվում Կովկասյան ռազմաճակատի հիմնահարցերով և այն փաստորեն թողել էին Կովկասի փոխարքա Վորոնցով–Դաշկովի ու նրա օգնականների հայեցողությանը: Պատերազմի հենց սկզբից փոխարքա Վորոնցով–Դաշկովը հիվանդացավ և գամվեց անկողնուն: Սարիղամիշի օպերացիայից հետո գեներալ Միշլաևսկու պաշտոնազրկումից հետո ռազմական օպերացիաները ղեկավարում էր շտաբի պետը, իսկ երբ 1915 թ. կազմավորվեց Կովկասյան բանակը, նրա հրամանատար նշանակվեց Նիկոլայ Նիկոլաևիչ Յուդենիչը:

Հեղինակը գալիս է այն ճիշտ եզրակացության, որ դեմ լինելով Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը, ցարական կառավարությունը, սակայն, չէր կարող միտումնավոր կերպով կազմակերպել իրեն հավատարիմ քրիստոնեական տարրի ոչնչացումը: Անհեթեթ կլիներ մտածել, որ ցարական կառավարությունը, 1913–1914 թթ. պայքարելով Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու, հայկական կամավորական դրուժինաներ կազմավորելու և զինելու, հարյուր հազարավոր փախստականներին օգնություն կազմակերպելու համար, միաժամանակ իրականացներ հայ ազգաբնակչությանը ոչնչացնելու քաղաքականություն: Դա համոզեցուցիչ չէ և փաստորեն չի համապատասխանում իրականությանը: Օգանովսկու կորպուսը 1915 թվականի ամռանը նահանջեց Աբդուլ Քերիմ փաշայի խմբավորման գերազանց ուժերի հարվածների տակ: Սակայն պաշտպանության լավագույնս կազմակերպման և զորքերի հմուտ ղեկավարման դեպքում կարելի էր խուսափել դրանից: Համադրելով փաստերը, պրոֆ. Ա. Հարությունյանը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ 1915 թ. ամռանը Ալաշկերտի հովտից Կովկասյան 4–րդ կորպուսի նահանջը, որի հետևանքով թողնվեցին Վանը և հայկական այլ քաղաքներ ու գյուղեր, պայմանավորված էր հետևյալ պատճառներով. կորպուսի ճակատի ձգվածությունը (400 կմ), կառավարման վատ կազմակերպումը, զորքերի մարտական և նյութական մատակարարման անբավարար վիճակը, հետախուզության թույլ դրվածքը, հրամանատարների անխելահասությունը:

Կովկասյան բանակի հրամանատարությունը ուշացումով սկսեց ուղղակիորեն ու անմիջականորեն միջամտել 4–րդ կորպուսի գործերին և ձեռնարկեց արմատական միջոցառումներ, որոնց շնորհիվ, և հատկապես գեներալ Բարաթովի ուժեղ ջոկատի ուղարկումով թուրքերի սկզբնական շրջանի հաջողությունները լիովին լիկվիդացվեցին, և Ալաշկերտի հովիտը կրկին հայտնվեց ռուսների ձեռքում:

Էրզրումի օպերացիան (1915 թ. դեկտեմբերի 28-1916 թ. փետրվարի 18): Կովկասյան ռազմաճակատում 1916 թվականի ամենակարևոր իրադարձությունը Մերձավոր Արևելքի և Օսմանյան կայսրության ամենախոշոր ամրոցի՝ Էրզրումի գրավումն էր: Էրզրումի ռազմաստրատեգիական և քաղաքական նշանակությունը շատ մեծ էր: Քաղաքն ուներ 52.000 բնակիչ, որից 15.500–ը հայեր էին: Այն Անդրկովկասի վրա թուրքերի հարձակումների գլխավոր բազան էր:

Էրզրումի օպերացիայի սկզբում Կովկասյան բանակը (գլխավոր հրամանատար՝ գեներալ Ն. Ն. Յուդենիչ) իր կազմում ուներ 126 գումարտակ, 208 հարյուրյակ, 372 հրանոթ, 20 ինժեներական դասակ, 20 աշխարհազորային դրուժինա՝ մոտավորապես 103 հազար մարդ: Թուրքական 3–րդ բանակն ուներ 123 գումարտակ, 40 էսկադրոն, 10.000 քրդեր, 122 հրանոթ, մոտ 60.000 մարդ: 1915 թ. վերջին Կովկասյան ճակատը ձգվում էր Սև ծովի հարավային ափերից՝ Ճորոխ գետից մինչև Ուստա՝ Վանա լճի հարավային ափը:

Էնվերը խստաշունչ ձմռանը ռուսական հարձակում չէր նախատեսում և նախապատրաստվում էր գարնանային հարձակման, մինչդեռ ռուսները մանրակրկիտ մշակում էին Էրզրումի օպերացիայի պլանը, որն իրավամբ համարվում է ռուսական ռազմական արվեստի փայլուն նմուշներից մեկը: Պլանի էությունն էր հարված հասցնել թուրքական հիմնական ուժերի կենտրոնին՝ հուսալիորեն ապահովելով սեփական թևերը:

Էրզրումի օպերացիայի պլանի իրագործումն սկսվեց 1915 թ. դեկտեմբերի 28–ին: Այդ օրն սկսվեց հարձակումը Օլթիի ուղղությամբ: Ընդորում, Թուրքեստանյան 2–րդ կորպուսը (հրամանատար՝ գեներալ Պրժևալսկի) վերցրեց խրամատների առաջին գիծը, իսկ երկրորդ և երրորդ օրերին վանելով թուրքերի հարձակումները՝ մոտեցավ լարափակոցներին: Դեկտեմբերի 30–ին և 31–ին Կովկասյան 1–ին և Թուրքեստանյան 2–րդ կորպուսները միաժամանակյա հարձակմամբ տիրացան մինչև Խորասան գյուղն ընկած բնագծերին: Հունվարի 5–ին երկու կորպուսները գրավեցին Քյոփրիքյոյի բնագծերը: Հետապնդելով հակառա-

կորդին՝ հունվարի 6–ին Սիբիրյան կազակական բրիգադը գրավեց Հասան–Կալան, և թուրքերը խուճապահար փախան դեպի Էրզրում: Ստեղծվեց Էրզրումի ամրոցը գրավելու ռեալ հնարավորություն:

Էրզրումի ամրոցն անմիջականորեն գրավելու համար Կովկասյան բանակի հրամանատարն առանձնացրեց 88 գումարտակ՝ 60.000 զինվոր, 9 դրուժինա, 166 հրանոթ, 29 դաշտային հաուբից, 16 պաշարողական հրանոթ, 70 հարյուրյակ, սակրավորների 4 դասակ: Գրոհի նախապատրաստումը տևեց 21 օր: Ռուսական շարասյուների առջև կանգնած էին թուրքական 9–րդ, 10–րդ և 11–րդ համալրված կորպուսները, որոնք հին ծանոթներ էին դեռ Սարիղամիշից:

Էրզրումի գրոհն սկսվեց ոչ թե արշալույսին, ինչպես դա սովորաբար արվում էր, այլ 1916 թ. հունվարի 29–ի ցերեկվա ժամը 14–ին՝ հրետանային նախապատրաստությամբ, իսկ հետևակի գրոհն սկսվեց ժամը 23–ին՝ 30 աստիճան սառնամանիքի պայմաններում:

Հունվարի 30–ի կեսօրին Թուրքեստանյան կորպուսի զորամասերը գրավեցին Կարագյուբեկի ամրությունները, գեներալ Ռյաբինինը գրավեց Դոլանգյոզի բերդամասը, իսկ գեներալ Չիկովանին հարավից մոտեցավ Փալաթեքեի ամրություններին: Հունվարի 31–ին շարունակվեցին թեժ մարտերը բերդամասերում, խրամատներում և բերդի մատույցներում: Թուրքերը ֆանատիկորեն դիմադրում էին: Գեներալներ Վոլոշինի և Վորոբյովի շարասյուները բացառիկ դժվարություններով ու կորուստներով խոր ձյան միջով շարժվում էին առաջ և փետրվարի 1–ին վճռական գրոհով գրավեցին Տաֆտա բերդամասը, որն ամենաուժեղ բնագիծն էր և ամրացված էր ռեդուտներով, օղակաձև խրամատներով, բազմազան լարափակոցներով: Այդ հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ Էրզրումի ամրոցի ու քաղաքի գրոհի համար:

Փետրվարի 2–ին Կովկասյան 1–ին կորպուսը վճռականորեն գրոհեց առաջին գծի բոլոր բերդամասերը: Արշալույսին գրավեց Չոբան–դեդե ամրությունը, իսկ ժամը 14–ին սկսվեց Ուզուն–Ահմեդ, Կաբուրգա, Օրթայունով, Սիվիշիկ և այլ բերդամասերի գրոհը: Փետրվարի 3–ի առավոտյան ժամը 5–ին Էրզրումի ամրոցը ռուսների ձեռքում էր: Ռուսները գերի վերցրին 235 սպա, 13.000 զինվոր, 9 դրոշ, 323 հրանոթ: Նշանակալի էին նաև ռուսների կորուստները՝ 64 սպա, 2275 զինվոր, 14.460 վիրավոր և ցրտահարված:

Թուրքական 3–րդ բանակի ջախջախումը և Էրզրումի գրավումը խիստ բացասաբար ազդեց թուրքերի վրա:

Էրզրումի գրավումից հետո Կովկասյան բանակի շտաբը վերաբազավորվեց այստեղ: Էրզրումը դարձավ բոլոր ստրատեգիական ճանապարհների առաջավոր հանգույց: Սարիղամիշից մինչև Էրզրում կառուցվեց նեղգիծ երկաթուղի և լավ խճուղի:

Հատկանշական է, որ Եվրոպայի և Ռուսաստանի հասարակական շրջանները նշում էին ոչ միայն Էրզրումի գրավման ռազմական նշանակությունը, այլև այդ հաղթանակի հետ էին կապում հայ ժողովրդի վիճակի բարելավման և Հայկական հարցի լուծման հույսերը: Եվ պատահական չէ, որ Էրզրումի գրավման գործում հայ ազգաբնակչությունը ակտիվ դեր կատարեց:

Քանի որ Ռուսաստանի պաշտոնական մամուլը անընդհատ շեշտում էր, թե իբր պատերազմը Մերձավոր Արևելքում հետապնդում է Հայաստանն ազատագրելու նպատակ, ուրեմն Սարիղամիշի, Ալաշկերտի և Էրզրումի հաղթական ճակատամարտերին պիտի հետևեին ինչ–որ գործնական քայլեր: Էրզրումի առումից հետո Հայոց կենտրոնական ազգային բյուրոյի պատվավոր նախագահ Մեսրոպ եպիսկոպոսը Արևմտյան Հայաստանի ազատագրման կապակցությամբ հեռագիր ուղարկեց Կովկասի փոխարքային և ստացավ հետևյալ պատասխանը. «Թող աստված օգնի համընդհանուր բարօրության համար մեկընդմիշտ ամրացնել Էրզրումը իբրև միասնական Ռուսական պետության մաս և դրանով վերջ դնել թուրքական ճնշման տակ գտնվող քրիստոնյաների տառապանքներին» (Ա. Հ. էջ 237):

Էրզրումի օպերացիայի օրերին Կովկասյան բանակի հրամանատարը խնդիր դրեց Կովկասյան 4–րդ կորպուսի առջև, որի հրամանատարն այդ ժամանակ գեներալ դե Վիտտեն էր, հարձակվել և գրավել Մուշն ու Բիթլիսը: Փետրվարի 3–ին Նազարբեկովը գրավեց Մուշը, իսկ *փետրվարի 17–ին Աբացինի զորքերը ձեռնամարտով գրավեցին Բիթլիսը:* Նրանց զորքերի կազմում հերոսաբար մարտնչում էին հայկական կամավորական դրուժինաները:

Մուշի և Բիթլիսի գրավումից հետո ռուսական հրամանատարությունը կանգնեցրեց հետագա հարձակումը, ինչը լիովին բխում էր ռազմաքաղաքական իրադրությունից: Զորամասերն ու ստորաբաժանումները կարգի էին բերվում, ամրանում էին գրավված բնագծերում, նախապատրաստվում դիմագրավելու թուրքերի հնարավոր հակահարձակումներին:

Տրապիզոնի օպերացիան: Էրզրումի օպերացիայից հետո Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները շարունակեցին զարգանալ աջ և հատկապես ձախ թևերում: Դարդանելի օպերացիայից հետո (1915 թ. փետրվարի 19–1916 թ. հունվարի 9), որի ընթացքում անգլո–ֆրանսիական զորքերը անգլիական գեներալ Համիլտոնի և ֆրանսիական գեներալ դը Ամադի գլխավորությամբ փաստորեն պարտություն կրեցին թուրքերից (թուրքական զորքերի գործողությունները ղեկավարում էր գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսը) և իրենց զորքերը Հալիպոլի թերակղզուց էվակուացրին Սալոնիկ, թուրքական հրամանատարությունը հնարավորություն ստացավ նեղուցների շրջանից 12 դիվիզիա փոխադրել Կովկասյան ճակատ: Այդ հանգամանքը ժամանակավորապես նպաստավոր պայմաններ ստեղծեց թուրքերի համար: Սակայն 1916 թվականի մարտին ռուսական զորքերի փայլուն հարձակումը հարավարևմտյան ռազմաճակատում՝ ռուս տաղանդավոր գեներալ Բրուսիլովի հրամանատարությամբ, հնարավորություն տվեց Կովկասյան բանակին 1916 թվականի ընթացքում իրականացնել մի քանի խոշոր և հաջող օպերացիաներ: Դրանցից ամենափայլուններից մեկը Տրապիզոնի օպերացիան էր, որը նախապատրաստվեց և անցկացվեց 1916 թվականի մարտի 13–մայիսի 17–ին: Տրապիզոն քաղաքը և նավահանգիստը կարևորագույն կետ է սևծովյան ծովեզրին, որից դեպի հարավ են ձգվում բարեկարգ ճանապարհներ: Տրապիզոնի գրավումը Ռուսաստանի համար ուներ հսկայական ռազմավարական նշանակություն: Թուրքական հրամանատարությունը ևս լուրջ նշանակություն էր տալիս Տրապիզոնին: Թուրքերը հենց Տրապիզոնի վրայով էին իրենց զորքերին համալրում և սպառազինություն հասցնում: Ռուսական հրամանատարությունը Նովոռոսիյսկից 10.000–անոց դեսանտ հանեց Տրապիզոնից արևելք՝ Կարադերեի շրջան, որի շնորհիվ ռուսական Մերձծովյան ջոկատը որոշակի գերակշռություն ստացավ: Սկսելով հարձակումը և կռվանցելով Կարադերե գետը, ռուսական զորքերը ապրիլի 5–ին գրավեցին Տրապիզոնը: Մինչև մայիսի 26–ը նոր կազմավորված Կովկասյան 5–րդ կորպուսի զորքերը գրավեցին նաև Տրապիզոնի շրջակա բնակավայրերը և դուրս եկան նրանից 20–25 կմ արևմուտք: Տրապիզոնի և նրա շրջակայքի գրավումը ռուսական բանակի խոշորագույն հաջողություններից մեկն էր:

Ռուսական բանակի մարտական հաջողությունները Էրզրումից և Տրապիզոնից հետո փաստ դարձան և գրավեցին համաշխարհային հասարակայնության ուշադրությունը: Ասիական Թուրքիայի հարցը, ըստ էության, լուծվում էր միայն ռուսական բանակի ուժերով: Գերագույն գլխավոր հրամանատարությունը փոխեց իր վերաբերմունքը Կովկասյան ճակատի նկատմամբ և այժմ նույնիսկ այստեղ միավորումներ էր նետում Արևմտյան ռազմաճակատից: Մայիսին արդեն այստեղ ռուսական զորքերի թիվն անցնում էր 230.000–ից: Թուրքերը 3–րդ բանակից զատ ռուսների դեմ շարժեցին նաև 2–րդ բանակը, որի առջև խնդիր դրվեց Օղնուտի շրջանից հարձակվել Քյոփրիքյոյի ուղղությամբ և դուրս գալ ռուսների թիկունքը, միանալ 3–րդ բանակին, գրավել Էրզրումը և ապա ներխուժել Անդրկովկաս: Թուրքական երկու բանակներն ունեին 282 գումարտակ՝ ռուսների 183–ի դիմաց:

1916 թ. հունիսի 9–ին թուրքական 3–րդ բանակը հարձակման անցավ ռուսների աջ թևում, ճեղքեց ճակատը և սկսեց նեղել Կովկասյան 5–րդ և Թուրքեստանյան 2–րդ կորպուսների զորքերին: Թուրքերը ձգտում էին հնարավորին չափ արագ անցնել Մերձծովյան կորպուսի և ռուսական ճակատի կենտրոնի թիկունքը: Գլխավոր հարվածը հասցվեց 5–րդ կորպուսին: Ռուսական հրամանատարությունը գիտեր, որ թուրքական զորքերը Բայբուրդի շրջանում քիչ են, ուստի Թուրքեստանյան 2–րդ կորպուսի առջև խնդիր դրվեց հարձակվել և գրավել Բայբուրդը: Հարձակման խելացի կազմակերպման շնորհիվ կորպուսը հուլիսի 3–ին գրավեց Բայբուրդը և զարգացնելով հարձակումը, դուրս եկավ նրանից 25–30 կմ արևմուտք, իսկ հուլիսի 7–ին գրավեց Գյումուշխանեն: Կորպուսի զորքերը դրսևորեցին բացառիկ կազմակերպվածություն և ռազմական խորամանկություն: Բրիգադներից մեկը Երզնկայի շրջանում դուրս եկավ թուրքերի թիկունքը և խուճապ ու վախ առաջացրեց: Հուլիսի 12–ին ռուսները գրավեցին տնտեսական խոշոր կենտրոն Երզնկան: Թուրքերի պարտությունն ապշեցուցիչ էր՝ ռուսները վերցրին 17.000 գերի: Բարոյալքված թուրքական զորքերը խուճապահար նահանջեցին դեպի արևմուտք և հարավ: Երզնկայի գրավմամբ ռուսներն ավարտեցին Արևմտյան Հայաստանի մաքրումը թուրքերից: Դրանով ձախողվեց 3–րդ և 2–րդ բանակների համատեղ հարձակմամբ Էրզրումը վերադարձնելու թուրքական պլանը, քանի որ 2–րդ բանակի հարձակման պահին ջախջախված 3–րդ բանակը ստիպված էր միայն պասիվ կերպով պաշտպանվել:

Թուրքական 2–րդ բանակը՝ 74.000 սվին, 98 հրանոթ, 7.000 քուրդ, առաջադրանք ստացավ կենտրոնացնել իր հիմնական ուժերը Դիարբե-

քիրի, Օղնուտի, Քղիի, Խարբերդի շրջաններում և հարձակվել Քյոփրի-քյոյի ուղղությամբ, այսինքն՝ դուրս գալ ռուսների էրզրումյան խմբավորման թիկունքը: Գերմանական հրամանատարությունը հունիսի սկզբներից մեծացրեց զենքի և հանդերձանքի մատակարարումը, թուրքերին տրամադրեցին նշանակալի թվով զինվորներ ու սպաներ, որովհետև Արևմտյան Հայաստանի տարածքի գրավումը խիստ անհանգստություն էր առաջացրել Բեռլինում: Թուրքերը երազում էին ռևանշի մասին:

Օղնուտի օպերացիան (1916 թ. հուլիսի 29—սեպտեմբերի 7): Հուլիսի 23–ին սկսվեց թուրքական բանակի գլխավոր ուժերի հարձակումը Օղնուտի և Քյոփրիքյոյի ուղղություններով: Ռուսական 4–րդ կորպուսի զորամասերը, չդիմանալով թուրքերի ճնշմանը, նահանջեցին: Թուրքերը դուրս եկան Մեղրագետի ափերը: Ըստ էության հարավից ճանապարհը դեպի Էրզրում բաց էր: Դրությունը վտանգավոր էր դառնում: Կովկասյան բանակի հրամանատարը թնային հարվածներ հասցնելու համար բանակային ռեզերվից ստեղծեց երկու ջոկատ՝ գեներալներ Դուբինսկու և Նիկոլաևի հրամանատարությամբ:

Օգոստոսի 11–ին Դուբինսկու ջոկատն անցավ հարձակման, սակայն հանդիպեց թուրքերի համառ դիմադրությանը, որոնք հետ մղեցին ռուսների առաջապահ զորամասերը և իրենք անցան հարձակման: Նիկոլաևը դժվարությամբ պահում էր նրա աջ թևը:

Օգոստոսի 15–18–ին ռուսների երկրորդ հարձակումը շոշափելի արդյունքներ չտվեց: Օգոստոսի 19–ին թուրքական բանակը վերստին՝ երրորդ անգամ, անցավ հարձակման և ճեղքելով ռուսական ճակատը՝ գրավեց հարմար բնագծեր: Դրությունը կրիտիկական էր: Ռուսներն օգտագործեցին իրենց ռեզերվները: Դաժան մարտեր էին ընթանում Մուշի շրջանում: Սակայն հմտորեն կիրառելով թնային հարվածների և նրբին *տեղաշարժերի մարտավարությունը՝ ռուսական զորքերն անցան հար*ձակման, դուրս մղեցին թուրքերին գրավված շրջաններից, ջախջախեցին նրանց առաջապահ զորամասերը և վերականգնեցին իրենց դիրքերը: Օգոստոսի 29–ին դաժան մարտերի թեժ պահին Կըզըլ–Չուբուկ և Բինգյոլ–դաղ լեռներում անսպասելիորեն ձյուն տեղաց և սառնամանիք սկսվեց: Զորքերը նախապատրաստված չէին ձմռանը, ուստի ռազմական գործողությունները լեռնային շրջաններում գրեթե դադարեցին:

Հուլիսի 29–ին սկսած Մուշ–Բիթլիս և Քղի–Վանա լիճ հատվածներում ռուսներն աստիճանաբար նեղեցին թուրքերին և օգոստոսի 11–ին գրավեցին Մուշը:

Դաժան մարտերը շարունակվեցին մինչև սեպտեմբերի 7–ը, որից հետո լեռնային շրջաններում խիստ սառնամանիքի սկսման և թուրքերի խոշոր պարտության պատճառով Կովկասյան 2–րդ բանակի ճակատում սկսվեց հարաբերական դադար: Այդպիսով թուրքական 2–րդ բանակի հարձակումը (հրամանատար՝ Մուստաֆա Քեմալ փաշա) ավարտվեց պարտությամբ: Օղնուտի օպերացիայի ընթացքում 39 օրում թուրքերը կորցրին 60.000, ռուսները՝ 21.000 մարդ: Դրանից հետո ռազմաճակատը Արևմտյան Հայաստանի տարածքում կայունացավ: 1914–1916 թթ. ընթացքում ռուսական զորքերի գրաված տարածքը շատ ավելին էր ներկայիս երեք Անդրկովկասյան հանրապետությունների տարածքից: 1916 թվականի վերջին ռուս–թուրքական ռազմաճակատի գիծն անցնում էր Տիրեբոլու (Սև ծովի ափ, Տրապիզոնից 70 կմ արևմուտք), Խարշիդ–Դարասի, Շիխլի, Ադիսա, Կարագյոլ, Ջենջիկե, Սաթար, Բելումեր (Մամախաթունից 250 կմ հարավ–արևմուտք), Քղի, Չաթան, Օղնուտից հարավ, Գոլբան, Գենջ, Մուշից, Բիթլիսից և Վանա լճից հարավ գծով՝ Էրզրումից 70–100 կմ արևմուտք:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

Հայ բոլշևիկները, ելնելով Առաջին համաշխարհային պատերազմի բնույթի մասին լենինյան գնահատականից, բացասաբար են վերաբերվել ռուսական բանակի կազմում հայկական կամավորական դրուժինաների կազմակերպմանը: Նրանք այդ միջոցառումը դիտել են իբրև օժանդակություն ցարական կառավարության զավթողական քաղաքականությանը: Նրանք նկատի են ունեցել նաև, որ ռուսական բանակի կազմում հայկական կամավորական դրուժինաների առկայությունը կարող է առիթ դառնալ արևմտահայության նկատմամբ առավել դաժան վերաբերմունքի համար: Սակայն ցարական կառավարության ձգտումը՝ օգտագործել կամավորական շարժումը իր իմպերիալիստական նպատակների համար, լիակատար հակասության մեջ էր գտնվում շարքային կամավորների բնական, ազնիվ ցանկության հետ՝ օգնել իրենց արևմտահայ եղբայրներին թուրքական բռնապետության դեմ նրանց մղած դժվարին պայքարում: Հետագայում երիտթուրքական կառավարությունը, կենսագործելով արևմտահայերի ցեղասպանության քաղաքականությունը, ե-

բեսպաշտորեն առիթ էր ծառայեցնում հայկական մի քանի կամավորական դրուժինաների առկայությունը ռուսական բանակում: Դեռևս Էնվեր փաշան, Սարիղամիշի տակ թուրքական 3–րդ բանակի ջախջախումից հետո, որը տեղի ունեցավ ռուսական բանակի կործանիչ հարվածների տակ և որտեղ կամավորական դրուժինաները չէին կարող որևէ կարևոր դեր խաղալ, ճգնում էր թուրքերի պարտությունը վերագրել հայերին:

Կովկասի փոխարքայությունը հետևյալ երեսպաշտական կոչն ուղղեց արևմտահայությանը. «Հայեր: Դուք երկար եք տանջվել թուրքական անտանելի լծի տակ, սակայն այժմ ռուսական քաջարի զորքերի հաղթարշավը աստծո օգնությամբ ձեզ բերում է ազատության դարավոր ճնշումից:

Ռուսական երկրի Միապետ առաջնորդը երաշխավորում է հայ ժողովրդին Ինքնավար Հայաստանի ստեղծում՝ հայկական վեց վիլայեթների և նրանց հետ անխզելիորեն կապված Կիլիկիայի սահմաններում՝ Ռուսաստանի հզոր հովանավորության տակ:

Հարևան ժողովուրդների հետ ազատ համակեցությամբ, նրանց իրավունքների պահպանմամբ՝ հայ ժողովուրդը կմտնի ազգային վերածնության նոր դարաշրջան:

Հայեր: Երկար եք դուք տանջվել, սակայն մոտ է ժամը, երբ ձեզ կողողեն խաղաղության և ազատության ճառագայթները:

Թող Տեր Աստված ձեզ օրհնի արդար գործի հաղթանակի համար» (Ա. Հ., էջ 295): Կոչի տեքստը երկար քննարկվեց և բազմիցս փոփոխվեց:

Ռուսական Գերագույն հրամանատարության պաշտոնական տվյալներով պատերազմի հենց սկզբից Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում ռուսական բանակներում զենք էին կրում շուրջ 200 հազար հայ զինծառայողներ:

Հայկական կամավորական դրուժինաների քանակի և նրանց թվակազմի մասին հրապարակված և արխիվային աղբյուրներում տրվում են հակասական ու թերի տեղեկություններ: Հրապարակախոս Գաբրիել Լազյանը «Հայաստան և Հայ Դատը» գրքում (Կահիրե, 1946, էջ 186–193) պնդում է, թե մինչև 1915 թ. փետրվարը կամավորական ջոկատներ են ուղարկվել 4500 մարդ, իսկ մինչև նույն թվականի հոկտեմբեր կազմվել է 6 ջոկատ՝ 5000 մարդ ընդհանուր թվաքանակով:

Ռուսական բանակի գեներալ–մայոր, Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից Գ. Կորգանովը (Ղորղանյան) «Հայերի մասնակցությունն առաջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատում (1914–1918)» գրքում (ֆրանսերենը՝ Փարիզ, 1927, իսկ հայերենը՝ «Հայրենիք» ամսագրի 1926–1927 թթ. համարներում) հաստատում է, որ սկզբնական շրջանում հայ կամավորների շարքերում հաշվվում էին 2500 մարդ և միայն հետագայում նրանց թիվը հասավ 6000–ի: Առանձին հեղինակներ այդ թիվը հասցնում են մինչև 9.000–ի:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ պատերազմի առաջին օրերին կամավորական ջոկատների մեջ մտնել ցանկացողների թիվը չափազանց շատ էր ոչ միայն Հայաստանում և Անդրկովկասում, այլև ամբողջ Ռուսաստանում և արտասահմանյան երկրներում: Սակայն Կովկասյան ճակատի հրամանատարությունը, կառավարության ցուցումով, գիտակցաբար չգնաց կամավորների թվի չափազանց մեծացման: Աշխարհի տարբեր ծայրերից՝ Եգիպտոսից, Ֆրանսիայից, ԱՄՆ–ից, Կիպրոսից և շատ ուրիշ երկրներից բազմաթիվ դիմումներ էին ստացվում ինչպես դրուժինա մտնելու, այնպես էլ կարգադրիչ մարմնի ընթացիկ հաշվին գումարներ փոխանցելու մասին: Այսպես՝ 1915 թ. նոյեմբերի 10–ին Ռուսաստանի ճանապարհային հաղորդակցության մինիստրը խնդրում էր արտգործնախարար Սազոնովի թույլտվությունը՝ Բուլղարիայից հայ կամավորներին Կովկաս փոխադրելու մասին: Նույնպիսի խնդրանքներով արտգործնախարարին էին դիմում Կիպրոսի և Եգիպտոսի ռուսական ներկայացուցիչները՝ 1000–ական հայ կամավորների Կովկաս փոխադրվելը կազմակերպելու մասին: ԱՄՆ–ից Կովկաս գալու թույլտվության էին սպասում 15.000 կամավորներ: Հնչակյանների ղեկավարությամբ ԱՄՆ–ից կամավորների առաջին խումբը 1915–ի մարտին Արխանգելսկի վրայով հասավ Կովկաս: Խումբը գլխավորում էր Մշեցի Պանդուխտը: Երկրորդ խումբը նույն ճանապարհով Կովկաս եկավ 1915–ի մայիսին՝ Ալեքսանդր Մնացականյանի գլխավորությամբ, երրորդը՝ նոյեմբերին, Շահենի ղեկավարությամբ: Կամավորների այս ձգտումը միայն և միայն հայրենասիրական էր:

Կամավորական շարժման գործում որոշակի դեր ստանձնեց Կովկասի փոխարքա (1905–1915), գեներալ–լեյտենանտ, կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով–Դաշկովը (1837–1916), որը կառավարության անունից հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին առատ խոստումներ տվեց: Սակայն բուն շարժումը գլխավորում էր հայ հասարակական–քաղաքական նշանավոր գործիչներից կազմված Հայկական Ազգային

Բյուրոն, որը ստեղծվել էր Թիֆլիսում, դեռևս 1912–ի վերջերին և կոչված էր օգնելու Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Հայկական հարցի շուրջ բանակցություններ վարելու մեծ պետությունների հետ: Բյուրոյի պատվավոր նախագահն էր Վրաստանի հայկական թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, անդամներն էին Ա. Բաբախանյանը (Լեոն), Ս. Հարությունյանը, Հովհ. Թումանյանը, Հ. Զավրիևը, Կ. Ստեփանյանը, Ա. Սահակյանը, Հ. Ամիրխանյանը, Հ. Սպենդիարյանը, Խ. Աֆրիկյանը, Հ. Արղությանը, Հ. Մելիքյանը, Ս. Կյուլպենկյանը, Ավ. Պողոսյանը, Գ. Խատիսյանը (Ալ. Խատիսյանի եղբայրը), Ստ. Լիսիցյանը, Ա. Պապովյանը, Ա. Աբեղյանը, Հ. Քոչարյանը: Ռուսաստանից և արտասահմանից այնքան հայեր եկան Թիֆլիս, որ հարկ եղավ հատուկ հայտարարությամբ դադարեցնել նրանց հոսքը: Հայ կամավորները զինվորագրվում էին Անտանտի պետություններին այն հույսով ու հավատով, որ նրանց օգնությամբ կկարողանան ազատագրել Արևմտյան Հայաստանը:

Ջոկատներ կազմելու և նրանց զենքով ապահովելու նպատակով ստեղծվեց Ռազմական խորհուրդ, որն իր ներկայացուցիչներն ուներ Ռուսական կայսրության բոլոր հայաբնակ վայրերում: Շոշափելի աշխատանք կատարեցին հատկապես Մոսկվայի, Պետրոգրադի, Բաքվի, Նյու Յորքի, Փարիզի և Լոնդոնի կոմիտեները: Ճիշտ է, կամավորական ջոկատների կազմավորման ծախսերը հիմնականում հոգում էր ցարական կառավարությունը, սակայն հայերն էլ հանգանակում էին շոշափելի գումարներ: Միայն 1915–ին նրանք տրամադրեցին 1.444.000 ռուբլի:

Սկզբնական շրջանում կազմակերպվեցին կամավորական չորս ջոկատներ: Առաջին ջոկատի հրամանատար նշանակվեց ժողովրդական հերոս Անդրանիկը: Ջոկատն ամենամեծն էր և ուներ 1200 կամավոր: Երկրորդ ջոկատը՝ բաղկացած 500 հոգուց, գլխավորելու էր Դրոն (Դրաստամատ Կանայան), երրորդը՝ 500 հոգի, Համազասպ Սրվանձտյանը, չորրորդը՝ 500 հոգի, փառաբանված ֆիդայի Քեռին (Արշակ Գավաֆյան): Հետագայում կազմվեց 5–րդ գունդը՝ Խանասորա Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) գլխավորությամբ: Վեցերորդ հնչակյան գնդի հրամանատարն էր սկզբում Ա. Ջանփոլադյանը, որին փոխարինեց Գ. Ավշարյանը, իսկ նրա զոհվելուց հետո՝ Հայկ Բժշկյանը (Գայ): Այս ջոկատին հետագայում միացավ Պանդուխտի (Միքայել Սեֆերյան) 350 հոգուց բաղկացած խումբը: Յոթերորդ գնդի հրամանատարն էր Հովսեփ Արղությանը (Իշխան): 1915 թ. վերջերին հայ կամավորների ընդհանուր թիվը հասավ 10.000–ի: 1915 թ. ապրիլին Ազգային բյուրոյի որոշմամբ

2–րդ, 3–րդ և 4–րդ ջոկատները միավորվեցին 5–րդ ջոկատի հետ՝ Արարատյան ջոկատ ընդհանուր անվամբ, որի հրամանատարությունը հանձնվեց Խանասորա Վարդանին:

Ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, հայկական կամավորական ջոկատներին ժողովուրդը մկրտեց «գնդեր» անունով, որոնք իրենց թվակազմով չորս անգամ փոքր էին ռուսական գնդերից: Ռուսական գունդը բաղկացած էր չորս գումարտակից, որոնցից յուրաքանչյուրը՝ չորս վաշտից, յուրաքանչյուրը՝ 250 զինվորով, ուստի հայկական կամավորական ջոկատներն իրենց չափերով, ըստ էության, գումարտակներ էին: Հ. Սիմոնյանն այն կարծիքն է հայտնում, որ հայկական այդ զորամասերը մի շատ կարևոր տարբերիչ առանձնահատկություն ունեին. այդ այն էր, որ ռուսական գումարտակներն ինքնուրույն միավորներ չէին, նրանք գնդի բաղկացուցիչներ էին, մինչդեռ հայկական ջոկատները զինվորական անկախ միավորներ էին, ուստի կարելի է դրանց նաև գունդ անվանել (Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Երևան, 1995, հ. 1, էջ 387):

Հրամանատարության որոշմամբ հայկական կամավորական գնդերի համար որոշվեցին հետևյալ չորս ուղղությունները.

Առաջին գունդ (հրամ.՝ Անդրանիկ) — Իրան–Բաշկալե–Վան:

Երկրորդ գունդ (հրամ.՝ Դրո) — Իգդիր–Բայազետ–Բերկրի–Վան:

Երրորդ գունդ (հրամ.՝ Համազասպ) — Կաղզվան–Ալաշկերտ–Մանազկերտ–Բիթլիս:

Չորրորդ գունդ (հրամ.՝ Քեռի) — Սարիղամիշ–Բյոփրիքյոյ–Էրզրում:

Դրան համապատասխան՝ Կովկասյան բանակի ջոկատների հրամանատարները ցուցումներ ստացան հայկական կամավորական գնդերի օգտագործման ձևերի ու մեթոդների մասին: 1914–ի վերջին բոլոր չորս գնդերը պատրաստ էին ճակատ մեկնելու համար:

Առաջինը ռազմաճակատ մեկնեց Դրոյի (Դրաստամատ Կանայան, 1884–1956) երկրորդ գունդը՝ 1914 թվականի հոկտեմբերի 24–ին: Դուրս գալով Թիֆլիսից՝ գունդը շարժվեց դեպի Իգդիր, որը Դրոյի ծննդավայրն էր: Այստեղից գունդը խորանալու էր դեպի Արևմտյան Հայաստան՝ Իգդիր–Բայազետ–Բերկրի–Վան ուղղությամբ:

Երկրորդը ռազմաճակատ մեկնեց Համազասպի (Համազասպ Սրվանձտյան, 1873–1921) գլխավորած երրորդ գունդը՝ Կաղզվան–Ալաշկերտ–Բիթլիս ուղղությամբ, 1914–ի նոյեմբերի 1–ին:

Երրորդը Սարիղամիշ–Էրզրում գծով շարժվեց Չորրորդ գունդը՝ նոյեմբերի 6–ին, Քեռիի (Արշակ Գավաֆյան, 1858–1916) հրամանատարությամբ:

Առաջին գունդը, որը թվակազմով ամենամեծն էր լինելու, կազմավորվելու էր Պարսկաստանի Սալմաստ գավառում, որին ձեռնամուխ էր լինելու Անդրանիկը (Անդրանիկ Օզանյան, 1865–1927)՝ բժիշկ Հակոբ Զավրիևի և Սամսոն Հարությունյանի հետ միասին:

Ըստ Դրոյի կյանքն ու գործն ուսումնասիրած պատմաբան Համլետ Գնորգյանի՝ երկրորդ գունդը կազմավորվել է հենց Իգդիրում (Հ. Գնորգյան, Դրո, Երևան, 1991, էջ 29): Մեր կարծիքով Իգդիրում հավանաբար տեղի է ունեցել գնդի սոսկ համալրում: Գնդի կազմում էին Յապոնի (Հովհ. Պարոնյան) և Գանձակեցի Զեմլյակի (Հարություն Նանումյան) հեծյալ 50–յակները, Կարբեցի Օնեի (Հովհ. Մելքոնյան), Խոսրով Եղիազարյանի, Բաշգյառնեցի Մարտիրոսի (Մարտիրոս Աբրահամյան), Գանձակեցի Դալի Ղազարի, թիֆլիսեցի Ռիժա Տիգրանի հետևակային հարյուրյակները: Դրոյի օգնականներն էին Գարեգին Նժդեհը, Արմեն Գարոն, Դաշնակցական Խեչոն:

Դրոյի գունդը, որը գործելու էր գեներալ Նիկոլանի զորախմբի կազմում, հրամանատարությունից առաջադրանք ստացավ անցնել Հայկական պար լեռնաշղթան և կոտրելով Թափառես լեռան բարձունքներում ամրացած թշնամու դիմադրությունը՝ հարձակվել Վանի ուղղությամբ: Փայլուն կերպով կատարելով այդ առաջադրանքը, Դրոն ամրանում է Կավրե–Շամե գյուղում: Այստեղ նրան հասնում է գեներալ Նիկոլանի հրամանը՝ անհապաղ նահանջելու մասին: Բանն այն է, որ ապաշնորհ գեներալ Աբացիևի զորախմբի նահանջի հետևանքով վտանգվել էր գեներալ Նիկոլանի զորախումբը, որի առաջապահը Դրոյի գունդն էր: Դրոն վճռում է չկատարել Նիկոլանի հրամանը և ճակատամարտ տալ տասնապատիկ գերազանցող հակառակորդին: Սկսվում է անհավասար մարտը: Ականատեսների վկայությամբ՝ Դրոն, գլուխը ձիու ականջների մեջ դրած, գնդակների տարափի տակ նետվում է դիրքից դիրք, քաջալերում մարտիկներին: Հայ կամավորների անօրինակ հերոսության շնորհիվ Կավրե–Շամեի ճակատամարտն ավարտվեց թուրք–քրդական հրոսակների անկանոն փախուստով: Ճակատամարտի ավարտին, սակայն, Դրոն ծանր վիրավորվեց և փոխադրվեց Թիֆլիսի Արամյան հիվանդանոց: Կամավորական երկրորդ գնդի հրամանատարությունը ժամանակավորապես ստանձնեց Արմեն Գարոն: Հիվանդանոցում Թիֆլիսի

քաղաքագլուխ Ալ. Խատիսյանի ուղեկցությամբ Դրոյին այցի եկավ Նիկոլայ 2–րդ ցարը և նրան շնորհեց Գեորգիևյան զինվորական խաչ՝ քաջության համար:

Սարիղամիշի ճակատամարտից հետո հայ կամավորական խմբերը կազմալրելու նպատակով տեղափոխվեցին թիկունք և նրանցից յուրաքանչյուրի թվակազմը հասցվեց 1000–ի: Պահի հրատապ խնդիրը տեղ–տեղ զենքի դիմած արնմտահայությանը և մորթոտվող անպաշտպան ժողովրդին օր առաջ օգնության հասնելն էր, որը կարելի էր իրականացնել կամավորական խմբերը միավորելու և առավել կարևոր Վան–Մուշ, Վան–Բիթլիս ուղղություններում կենտրոնացնելու միջոցով: Հայ Ազգային Բյուրոյի պահանջով կամավորական Երկրորդ, Երրորդ և Չորրորդ խմբերը միավորվեցին Հինգերորդ խմբին և Խանասորա Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ կազմվեց «Արարատյան ջոկատ» զորախումբը, որն իբրև գեներալ Նիկոլանի զորամասի առաջապահ՝ պիտի գործեր Իգդիր–Բերկրի–Վան ուղղությամբ:

Երկամսյա բաժանումից հետո Դրոն 1915–ի փետրվարի վերջերին վերստանձնեց Երկրորդ կամավորական գնդի հրամանատարությունը, իսկ նրա օգնական է նշանակվում Գարեգին Նժդեհը: 2–րդ վաշտի հրամանատարությունը հանձնվեց Ղազար Քոչարյանին (Քաչալ Ղազո): Ապրիլի 15–ին գունդը Երևանից մեկնում է Էջմիածին, ստանում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5–րդի օրհնությունը և ապա շարժվում Իգդիր: Այստեղ Վանից ստացվում է Արամի նամակը՝ անհապաղ օգնություն հասնելու խնդրանքով, որից հետո Արարատյան գունդը, որի կազմում էր Դրոյի զորախումբը, անմիջապես ուղղություն է վերցնում դեպի Վան: Ապրիլի 26–ին Դրոյի զորախումբը մոտենում է թշնամու կողմից ամրացված Բերկրի քաղաքին: Տեղացող առատ ձյունը և քանդված կամուրջը չեն արգելակում Դրոյի քաջերին՝ ձիերով անցնել սառցակալած գետը, ջախջախել թշնամուն և գրավել Բերկրին: Չսպասելով գեներալ Նիկոլանի հիմնական ուժերին՝ Դրոյի զորախումբն արշավում է Վան տանող ճանապարհի հաջորդ արգելապատնեշի՝ Շեխկալե գյուղի վրա: Նրա զորախմբին զուգահեռ դեպի Վան էին արշավում նաև Համազասպի և Քեռու գլխավորած զորախմբերը: Գրավելով Շեխակալե և Ջանիկ գյուղերը՝ Դրոն արագորեն մոտենում է Վանին: Թուրքերն ստիպված վերացնում են քաղաքի պաշարումը և նահանջում, իսկ քաղաքի պաշտպանները հրդեհում են թուրքական թաղամասերը:

Մայիսի 2–ի առավոտյան Դրոյի զորախմբի առաջապահ ջոկատը Դաշնակցական Խեչոյի և Դալի Ղազարի գլխավորությամբ սրարշավ մտնում է Վան: Մի քանի ժամ անց քաղաք են մտնում նաև կամավորական երկրորդ գնդի մյուս վաշտերը և արժանանում վանեցիների ցնծագին ընդունելությանը: Ինքը՝ Դրոն, հանդես եկավ կարճ և ազդու ճառով և հրամայեց հրացանային հինգ համազարկով ազդարարել Վանի ազատագրումը:

Երկու օր անց Վան մտան Համազասպի և Քեռու 3–րդ և 4–րդ գնդերը ու գեներալ Նիկոլանի զորագնդերը, իսկ ավելի ուշ Վան հասավ նաև Անդրանիկի գունդը:

Վանում Դրոն այցելում է իր վաղեմի ընկերոջ՝ Լեռնապարի մարտական ուժերի կազմակերպիչ ու առաջնորդ, թուրքերի կողմից դավադրաբար սպանված Վանա Իշխանի այրուն: Նրա հանձնարարությամբ հայ զինվորները Հիրճ գյուղում հայտնաբերում են Իշխանի ու նրա զինակիցների դիակները և ամփոփում Վանի գերեզմանատանը:

Վան մտնելուց մի քանի օր անց Դրոյի գունդը օգնության շտապեց ինքնապաշտպանության դիմած Շատախի և Մոկսի հայությանը: Դա կապված էր լուրջ դժվարությունների հետ, որովհետև Շատախ տանող ուղին անցնում էր քրդերով խիտ բնակեցված Գորանի դաշտավայրով, որտեղ կարելի էր մուտք գործել կիրճերով անցնող միակ ճանապարհով: Այնժամ Դրոն կարգադրում է Ղազար Քոչարյանի վաշտին՝ շրջանցել ամրություններն ու հարվածել թշնամու թիկունքին: Թուրք–քրդական ուժերը, ընկնելով երկկողմանի կրակի տակ, դիմում են փախուստի: Թափանցելով Գորանի դաշտ՝ Դրոյի քաջերը արագորեն գրավում են քրդական բոլոր գյուղերը և մոտենում ամենաուժեղ ամրությանը՝ Աղվուտ գյուղին, որի գրավման համար հարկավոր է լինում մի քանի ժամ միայն: Այնուհետև հայ կամավորները մտնում են հայկական Սնտիկին գյուղը: Դրանից հետո թուրքերը դադարեցնում են Շատախի 45–օրյա պաշարումը և դիմում փախուստի: Մայիսի 12–ին, կամավորական երկրորդ գնդի գլուխ անցած, Դրոն հաղթականորեն մուտք է գործում Շատախ գավառի ինքնապաշտպանության կենտրոն Թաղ գյուղը: Դրոյի նախաձեռնությամբ Շատախի ինքնապաշտպանության հրամանատարներ Սամվել Պետրոսյանի և Տիգրան Բաղդասարյանի գլխավորությամբ կազմվում է գավառի կառավարություն և ոստիկանություն, որոնք անմիջականորեն պիտի ենթարկվեին Արամ Մանուկյանի նահանգապետությանը:

Մեկ շաբաթ անց Դրոյի զորամասերը շարժվում են դեպի Մոկս, ուր տեղի հայությունը, կենտրոնանալով մի քանի կետերում, օրհասական կռիվ էր մղում թուրքերի ու քրդերի դեմ: Հայ կամավորները միաժամանակյա հարձակմամբ գրավում են Մոկսը, Սոքան և Սպարկերտ գյուղերը: Զուգահեռաբար Քեռին և Համազասպը միացյալ ուժերով գրավում են Ոստանը:

Ազատագրելով Վանա լճի հարավային շրջանները, հայ կամավորական գնդերը մոտենում են Ռշտունյաց գավառի Սուրբ և Դատվան քաղաքներին, որոնց գրավումով բացվելու էին Տարոն, Մասուն և Բիթլիս տանող ուղիները: Հայկական կամավորական չորս գնդերը մտցվեցին գեներալ Տրուխինի զորախմբի կազմում:

Հունիսի վերջերին հայկական չորս գնդերը միահամուռ գրոհում էին լավ ամրացված Սուրբը: Հաջորդ օրը՝ հուլիսի 1–ին, հայ կամավորները գրավում են քաղաքը, իսկ թշնամին նահանջում է Դատվան: Ցավոք, գեներալ Տրուխինը միայն երեք օր անց՝ հուլիսի 4–ին, հրաման տվեց Դատվանը գրոհելու մասին, որը հնարավորություն ընձեռեց հակառակորդին՝ ամրանալ դիրքերում: Այդ էր պատճառը, որ թշնամուն նահանջի հարկադրել հաջողվեց երկօրյա համառ կռիվներից հետո միայն: Կանոնավոր մարտաշարքերով նահանջող թշնամուն հետապնդելիս Գրգուռ լեռան մերձակայքում զոհվեց Հայոց Ազատամարտի նշանավոր դեմքերից մեկը՝ Դաշնակցական Խեչոն: Այնուհետև Դրոն գրավեց Դատվանի նավահանգիստը, իսկ Անդրանիկի մարտիկները ներխուժեցին քաղաք: Դրոյի զորքերը հասնում են Աղբյուր Սերոբի ծննդավայր Սոխորդ, իսկ Անդրանիկի, Քեռու և Համազասպի գնդերը շարժվում են Նեմրութ լեռան և Բիթլիսի ուղղություններով:

Դրոն պահանջում էր թեկուզև միայն հայկական զորագնդերով արշավել Տարոն ու Մասուն, ուր ժողովուրդը օգնության սպասումներով դեռևս շարունակում էր դիմադրությունը, սակայն Տրուխինին փոխարինած գեներալ Թ. Նազարբեկովը հրավիրում է խորհրդակցություն և Մանազկերտում հայտնված թուրքական մեծաքանակ ուժերի հայտնվելու պատճառաբանությամբ հրամայում է թողնել գրաված տարածքները և նահանջել:

1915 թ. հուլիսի 15–ին երկու ուղղություններով սկսվեց ռուսական զորքերի զանգվածային նահանջը: Նահանջի առաջին թևը ծգվում էր Դատվան–Սուրբ–Ոստան–Վան–Արճակ–Սարայ–Իրան ուղղությամբ: Երկրորդ թևը նահանջում էր Ախլաթ–Արճեշ–Բերկրի–Աբաղայի

դաշտ–Կովկաս գծով: Դրոն և Անդրանիկը պիտի նահանջեին այս ուղղությամբ:

Եթե հարձակման ժամանակաշրջանում հայ կամավորական գնդերը գտնվում էին առաջապահների շարքերում, ապա այժմ նրանք գտնվում էին վերջնամասում և ապահովում էին մյուս զորամասերի ու գաղթականության նահանջը:

Հայ գաղթականների հսկայական բազմությունը հուլիսի 23–ին հասավ Բերկրի: Նրանց հետապնդում էին թուրքական զորքերն ու քրդական հրոսակները: Գաղթականության նկատմամբ անտարբեր վերաբերմունքի հետևանքով ռուսական զորքերն ու Անդրանիկի գունդը բավականին առաջ էին անցել, իսկ Վարդանի անփույթ ղեկավարման հետևանքով Համազասպի և Քեռու զորագնդերը Արարատյան ջոկատի կազմում անցել էին Պարսկաստան: Բերկրին կարող էր վերածվել բազմահազարանոց գերեզմանոցի, եթե թշնամու հետ օրհասական մարտի բռնված Վասպուրականի, Մոկսի և Շատախի մարտիկներին օգնության չհասներ Դրոյի զորագունդը: Հուլիսի 23–ին հասնելով մարտադաշտ՝ Դրոն, որի հետ էին նաև Նժդեհն ու Մեսրոպը, հրամայում է Մարտիրոսի, Ղազարի և Յապոնի վաշտերին՝ անհապաղ գրավել Բերկրիի կիրճն ու իշխող բարձունքները: Մղելով երկօրյա կենաց և մահու կռիվ՝ Դրոն հնարավորություն է ընձեռում տասնյակ հազարավոր գաղթականների մեծ մասին Բերկրիի կիրճով դուրս գալ Աբաղայի դաշտ ու փրկվել ստույգ կործանումից: Դժբախտաբար, Բերկրիի շրջակայքում թուրքերի և քրդերի հարձակումներին զոհ գնացին մեծ թվով գաղթականներ: Հուլիսի վերջին Դրոն գաղթականության հետ միասին հասնում է Իգդիր: Նա համառորեն պահանջում էր հրամանատարությունից՝ թույլ տալ անհապաղ արշավել Տարոնի և Սասունի վրա, որտեղ ժողովուրդը դեռ մաքառում էր և օգնության դեպքում կարող էր փրկվել: Սակայն, ցավոք, նա այդպիսի թույլտվություն ստացավ միայն շաբաթներ անց, երբ ռազմական հասած Ռուբեն Տեր–Մինասյանը և Վահան Փափազյանը գուժեցին Տարոնի և Սասունի հայության ինքնապաշտպանության դադարեցման մասին:

1916 թվականի սկզբներին Կովկասյան բանակի հրամանատարությունը մարտական խոշոր գործողություններ է նախապատրաստում Էրզրում–Մուշ–Բիթլիս ուղղություններում: Այստեղ են կենտրոնացվում նաև հայ կամավորական գնդերը, որը նրանց 3–րդ արշավանքն էր դեպի Արևմտյան Հայաստան:

1916 թվականի հունվարի 6–ին Դրոյի գլխավորած երկրորդ գունդը Մանազկերտի մոտ գետանցում է Եփրատը և ուղղություն վերցնում Դեպի Խնուս, ուր մտնում է հունվարի 12–ին: Փետրվարի 5–ին Դրոյի գունդը առաջինն է մարտերով մտնում Մուշ, իսկ երկու օր անց Դրոն բարձրանում է Սասուն, լինում Առաքելոց վանքում: Դրոյի մարտիկները հավաքում էին լեռների ծերպերում թաքնված ու հրաշքով փրկված հայերի բեկորներին:

Մուշի գրավումից հետո երկրորդ կամավորական գնդի հրամանատարությունը հանձնվում է գնդապետ Եգոր Տեր–Ավետիքյանին, իսկ Դրոն հիվանդության պատճառով տեղափոխվում է թիկունք: Նրա բացակայության ժամանակ գունդը տեղափոխվում է Բիթլիսի ճակատ, համգործակցում Անդրանիկի գլխավորած 1–ին գնդին, և մարտի 3–ին Բիթլիսը գրավվում է, որից հետո գունդը կրկին վերադառնում է Մուշ:

Ապրիլի 3–ին գունդ է վերադառնում ապաքինված Դրոն և հաջորդ օրը գրոհի է տանում իր վաշտերին: Վերջին անգամ Դրոյի գունդը Արևմտյան Հայաստանի տարածքում կռիվ է մղում Կազմագյադուկ բնակավայրի մոտ կուտակված թշնամու դեմ:

Նույն 1916–ին հայկական կամավորական գնդերի կազմացրումից հետո, որոնք վերակազմավորվեցին ռուսական բանակի հրաձգային գումարտակների, Դրոն, կտրականապես մերժելով ռուսական բանակային ծառայությունը, գալիս է Կովկաս: Փետրվարյան հեղափոխությունից հետո Դրոն շտապում է Թիֆլիս և հայտնվում ծավալվող իրադարձությունների կենտրոնում:

Անդրանիկի գլխավորած Առաջին գունդը պետք է գործեր Կովկասյան բանակային կորպուսի կազմում, որի հրամանատարն էր ազգությամբ հայ գեներալ Պյոտր Իվանովիչ Օգանովսկին:

Անդրանիկն իր զինակիցների հետ միասին 1914 թ. հոկտեմբերի 19–ի ուշ երեկոյան Թիֆլիսից գնացքով մեկնեց դեպի Պարսկաստան: Նրա մեկնման արարողությունը վերածվեց խանդավառ ցույցի: Առասպելական հերոսին ողջերթ մաղթելու էին եկել հազարավոր հայեր: Հոկտեմբերի 21–ին Անդրանիկը հասավ Ջուլֆա (հին հայկական Ջուղա գյուղից երեք կիլոմետր հեռու): Հոկտեմբերի 22–ին կամավորներն ստացան հրացաններ, իսկ հոկտեմբերի 23–ին ուղևորվեցին դեպի Պարսկաստան: Հոկտեմբերի 25–ին նրանք հասան Խոյ, ապա՝ Սալմաստ գավառը: Բաֆֆու ծննդավայր Փայաջուկ գյուղում Անդրանիկին ցույց տրվեց փառահեղ ընդունելություն: Անդրանիկը Ուրմիա լճի հյու-

սիս–արևմուտքում գտնվող Դալասար գյուղը ժամանեց հոկտեմբերի 29–ին, որտեղ անմիջապես սկսվեցին գնդի ձևավորման ու վերջնական կազմավորման աշխատանքները: Հաղթահարելով մեծագույն դժվարություններ՝ կադրային զինվորական հրահանգիչների բացակայություն, երթային և խոհանոցային պարագաների պակաս և այլն, նոյեմբերի 2–ին Առաջին կամավորական գնդի ձևավորումը հիմնականում ավարտվեց: Գնդի կազմում կար 1200 հոգի: Այն բաղկացած էր չորս վաշտից՝ յուրաքանչյուրում 250 կամավոր: Վաշտերի հրամանատարներն էին սասունցի Սմբատ Բորոյանը (Մախլուտո), բաբերդցի Սեպուհը (Արշակ Ներսիսյան), ախալցխեցիներ Արտաշես Սուճյանը և Նիկոլ Տեր–Հակոբյանը: Գունդն ուներ նաև 100 հոգուց բաղկացած հեծյալ առաջապահ խումբ՝ գյումուշխանեցի Ավոյի հրամանատարությամբ: Գնդի բժշկական բաժինը ղեկավարում էր բժիշկ Հակոբ Զավրինը, սանիտարական կազմը՝ բժ. Տեր–Թումասովը, պարենավորման բաժինը՝ Պարույր Լևոնյանը: Կար բեռնակիր գումակ: Անդրանիկի անմիջական օգնականներն էին եվրոպական կրթություն ստացած ուրֆացի Մ. Նալբանդյանը, օրդուցի Նիկողոսյանը, տրապիզոնցի Վարդանը, երվանդ Խաչանասյանը:

Անդրանիկի գունդը մտցվեց գեներալ–լեյտենանտ Ֆյոդոր Գրիգորևիչ Չեռնոզուբովի ջոկատի մեջ, որը կոչվում էր Ատրպատականյան կամ Ադրբեջանական ջոկատ (նկատի էր առնված Պարսկական Ադրբեջանը) և որի դիվիզիաներից մեկի հրամանատարը Թովմաս (Ֆոմա) Հովհաննեսի Նազարբեկյանն էր:

1914 թ. նոյեմբերի 3–ին Անդրանիկի գունդը գեներալ Չեռնոզուբովի հրամանով շարժվեց դեպի Դիլման: Առաջին մարտական մկրտությունը գունդն ստացավ Աշնակ գյուղի մոտակայքում՝ նոյեմբերի 7–ին սրընթաց հարձակմամբ գրավելով թշնամու դիրքերը և ապա՝ Պուրուշղուրան գյուղն ու լեռնանցքը: Գեներալ Չեռնոզուբովը այդ առթիվ հեռագիր ուղարկեց Ամենայն Հայոց կաթողիկոսին, որտեղ հիացմունքով էր խոսում Անդրանիկի կամավորների քաջագործությունների մասին: Հետաքրքրական է, որ այդ մարտերը տեղի էին ունենում պատմական Արաուլ լեռան փեշերին, ուր 451 թվականին տեղի էին ունեցել հայ–պարսկական վճռորոշ կռիվները (Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 398): Նոյեմբերի 8–ին Խանիկ գյուղը գրավելուց հետո Անդրանիկի գունդը մտցվեց գեներալ Թ. Նազարբեկյանի դիվիզիայի կազմի մեջ: Նոյեմբերի 15–ին գունդը առաջադրանք ստացավ գրավել թուրք–պարսկական սահմանագծի վրա գտնվող Կոթուրի լեռնանցքը, որը Խոյից դեպի Վան

տանող միակ անցուղին էր: Այդ առաջադրանքը նույնպես պատվով կատարվեց, որից հետո Անդրանիկի զորամասը մտավ Թուրքիայի տարածքը: Դեկտեմբերի 4–ին հայ կամավորները գրավեցին քրդական Պելեճուկ և Բելեգյանուկ գյուղերը, որի համար Անդրանիկը պարգևատրվեց ոսկե թրով:

1914–ի դեկտեմբերի 24–ին գեներալ Չեռնոզուբովը նույնպես նահանջի հրաման ստացավ, որը մեծ դժգոհությամբ ընդունեցին Անդրանիկն ու նրա կամավորները: Նրանք նահանջեցին մինչև Կոթուր, իսկ հետո հրամայվեց նահանջել մինչև Զուլֆա: Կանգ առնելով Խոյից ոչ հեռու հայկական Սեիդվար գյուղում՝ Անդրանիկը գնդի ստորաբաժանումների առջև հանդես եկավ մի սրտառուչ ճառով՝ կոչ անելով նահանջից չընկճվել ու չհուսահատվել, քանի իրենց հետ են մեծ Ռուսաստանի քաջարի բանակները: Ճառի բովանդակությունը վերարտադրված է «Արմյանսկի վեստնիկում» (Հ. Ս. էջ 417): Ուրեմն Անդրանիկի իրական ու մնայուն վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ ահա այդպիսին էր, իսկ նրա զայրույթը ռուսական ապաշնորհ հրամանատարների դեմ՝ սոսկ բոպեական պոռթկում պետք է համարել:

Տասնօրյա հանգստից հետո 1915–ի հունվարի 9–ին Անդրանիկի գունդը նորից կռվի դաշտ մեկնելու հրաման ստացավ Թավրիզի ուղղությամբ: Հունվարի 13–ին գունդը մտավ Մարանդ քաղաքը, իսկ հաջորդ օրը շարժվեց դեպի Սոֆիա՝ մասնակցելու այստեղ սկսված կռվին: Ինքը՝ Անդրանիկը, այդ ժամանակ Թիֆլիսում էր և փետրվարի 23–ին միայն հասավ Խոյ: Ապրիլին նա հրաժարական ներկայացրեց՝ Խանասորի Վարդանին Արարատյան գնդի հրամանատար նշանակելու կապակցությամբ: Վեճը հարթեց այստեղ ժամանած Ռոստոմ Զորյանը:

Անդրանիկի մղած բոլոր մարտերից ամենափայլունը Դիլմանի ճակատամարտն էր, որտեղ հայ կամավորները դրսևորեցին աննախադեպ խիզախություն:

1915 թ. ապրիլի սկզբին թուրքերը շրջապատեցին Դիլմանում գտնվող գնդապետ Նազիևի 6–րդ գունդը: Նազիևը հեռագրով օգնություն խնդրեց Չեռնոզուբովից, իսկ վերջինս հրամայեց Անդրանիկին՝ անհապաղ օգնության հասնել Դիլմանում պաշարված ռուսական զորամասերին: Ապրիլի լույս 16–ի գիշերը Ավոյի ու Սմբատի վաշտերը շտապեցին Դիլման: Եթե չհաջողվեր կանգնեցնել թուրքերին, ապա նրանք կարող էին արագ հասնել Արաքսի ափը: Ապրիլի 15–ին այստեղ եկավ հրաձգային բրիգադի հրամանատար, գեներալ–մայոր Թ. Նազարբեկո-

վը: Չեռնոզուբովի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում որոշվեց Դիլմանի ճակատում թշնամու առաջխաղացումը կանգնեցնելու խնդիրը դնել Նազարբեկովի վրա: Նրա տրամադրության տակ դրվեց Սալմաստի դիվիզիան՝ բաղկացած 8.000 հոգուց: Ապրիլի 16–ին նրան միացան նաև Անդրանիկի 1000 կամավորները: Ապրիլի 18–ին ճակատամարտն սկսվեց: Ռուս զինվորները և հայ կամավորները դիրքեր էին գրավել Դիլմանից հյուսիս ձգվող Մուհանջիկի լեռնաշղթայի ցածրադիր բարձունքների վրա: Անդրանիկի ցուցումով հիսունապետ Կարոն ամրացավ Սալմաստի ողջ դաշտի վրա իշխող մի մեծ ժայռի կատարին, որը հին ֆիդայու ճշգրիտ գնահատմամբ վճռորոշ էր լինելու: Երբ տասնապատիկ ավելի թուրքերի դեմ Նազարբեկովը օգնություն խնդրեց Օգանովսկուց, վերջինս պատասխանեց. «Ունենալով Անդրանիկին՝ ձեր ուժերը տասնապատկվում են» (Հ. Ս. էջ 439): Անդրանիկը դիրքից դիրք էր սլանում ձիու վրա, քամուց ինչպես արծվի թևեր շինելի փեշերը բացված: Նա իջնում էր ձիուց, վիրավոր զինվորից վերցնում հրացանը, պառկում նրա կողքին, անվրեպ կրակում, ապա նորից սլանում էր ուրիշ դիրքեր, ոգեշնչում նրանց: Սկսվեց թուրքական առանձին զորամասերի նահանջը, որը շուտով ընդգրկեց Խալիլի ամբողջ բանակը, որն էլ ի վերջո վերածվեց անկանոն փախուստի: Մի քանի ժամ անց ռուսական զորքը առանց դիմադրության հանդիպելու մտավ Դիլման: Հաղթանակը լիակատար էր: Թուրքերը տվեցին 3000 սպանված և 1500 վիրավոր: Միայն հայ կամավորները ոչնչացրել էին 700 ասկյար, իսկ իրենք տվել էին 30 սպանված և 50 վիրավոր: «Դիլմանի ճակատամարտը հայոց զենքի փառահեղ ստեղծագործություններից մեկն է,— գրում է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը:— Այն մեկ անգամ ևս ցույց տվեց, որ զինված հայ մարդը կարող է անկարելին կարելի դարձնել» (էջ 446): Դիլմանի ճակատամարտը Սարիղամիշի նման խափանեց թուրքերի արշավանքը դեպի Կովկաս և ի չիք դարձրեց երիտթուրքերի հերթական պանթուրքական պլանը:

Գեներալ Նազարբեկովը հենց ապրիլի 18–ի ուշ երեկոյան, երբ դեռ նոր էր վերջացել ճակատամարտը, միջնորդագիր ուղարկեց կորպուսի շտաբին՝ Անդրանիկին Գեորգիևյան զենքով պարգևատրելու մասին: Երկու օր հետո ստացվեց Չեռնոզուբովի հեռագիրը, որով շնորհակալություն էր հայտնում Անդրանիկին ու նրա զորամասին՝ մարտական սխրագործության համար:

Դիլմանի ճակատամարտից հետո Խալիլ փաշան շարժվեց դեպի Վան, սակայն Անդրանիկը, առանց Նազարբեկովի թույլտվության, սեփական նախաձեռնությամբ գրավեց Բաշկալեի բարձունքները և փակեց թուրքերի ճանապարհը դեպի Վան:

Ապրիլի 23–ին Անդրանիկին ներկայացավ Վանից պաշարման օղակից հրաշքով դուրս եկած մի սուրհանդակ և նրան հանձնեց կտորի վրա գրված երկու նամակ, որոնցով խնդրվում էր անհապաղ օգնության հասնել օրհասական դրության մեջ գտնվող Վանի պաշտպաններին: Ռուսական զորամասերի հետ համատեղ կռիվներ մղելով Վանի շրջակայքում՝ Բաշկալեում, Չուխկետուկում, Առակում, Սուֆլյանում, Օմարխոլանում, Մերվանայում (այստեղ մի գնդակ մտավ Անդրանիկի ձախ կոշիկի մեջ), Հայկական Առաջին գունդը հետապնդեց Խալիլին մինչև Ջուլամերիկ՝ Ասորեստանի կենտրոնը, որտեղից էլ շրջվեց հյուսիս և ուղղություն վերցրեց դեպի Վան:

Հունիսի 3–ին Անդրանիկի կամավորական գունդը մտավ Վան, որին դիմավորեց Վանի նահանգապետ Արամ Մանուկյանը և ողջ ազգաբնակչությունը: Ստացվեց գեներալ Տրուխինի շնորհավորական հեռագիրը՝ մարտական փայլուն գործողությունների համար:

Տասն օր Արտամետ գյուղում հանգստանալուց հետո Անդրանիկի զորամասը հունիսի 12–ին հասավ Ոստան և հունիսի 14–ին միացավ Տրուխինի ջոկատին: Դրոյի և Քեռու կամավորների հետ համագործակցված մարտեր մղելով՝ հուլիսի 6–ին Անդրանիկը մտավ Դատվան գյուղը: Այնուհետև դարձյալ մարտերով հայ կամավորները հասան մինչև Ախլաթ և Ադիլջևազ:

Նահանջ: Կամավորական գնդերի այդ փայլուն հաջողությունների օրերին գեներալ Նազարբեկովը Անդրանիկին ու Դրոյին հայտնեց, որ գեներալ Օգանովսկին հրամայել է նահանջել, պատճառաբանելով, թե թուրքական 11 դիվիզիա է գալիս ընդառաջ, որոնց դիմադրելն անհնար է: Անդրանիկն այդ հրամանը համարեց դավաճանություն և հայության համար կործանարար: Ակադեմիկոս Հ. Սիմոնյանը գտնում է, որ ռուսական զորքի նահանջի մեջ պատասխանատվության իր բաժինն ուներ Կովկասյան բանակի շտաբին կից հետախուզության աշխատող, պրապորշչիկ Տիգրան Տնոյանցը: Չափազանցված զգուշություն դրսևորելով՝ նա հրամանատարությանը տագնապալի ու խուճապահար գաղտնի տեղեկագիր ներկայացրեց թշնամու տասնմեկ դիվիզիաների իբր սկսած հարձակման մասին: Միաժամանակ նա իրավամբ ավելացնում է, որ խուճապահար հետախույզի տեղեկագիրը չէր կարող վճռորոշ դեր խաղալ: Այս առիթով էր, որ Անդրանիկը բացականչել էր. «Այս նահանջը

կատարյալ կեղծիք մըն է: Դուք կուզեք, որ Հայաստան առանց հայու մնա»: Անդրանիկի այս ոգեպական պոռթկումն արդարացնելու համար մեծարգո ակադեմիկոսը գրում է, թե ցարի հորեղբորորդի, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը բացմիցս արտահայտվել էր առանց հայերի Հայաստանի մասին, և դա միայն նրա կարծիքը չէր, այլ արքունիքի և կառավարության որոշ շրջանների մտայնությունը: Իբրև հիմնավորում՝ նա մատնանշում է այն փաստը, որ դեռևս 1915 թ. ապրիլին գեներալ Յուդենիչը Վորոնցով–Դաշկովին գրել էր, որ Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո *անհրաժեշտ է այնտեղ ստեղծել ռուսական բնակավայրերի* մի շղթա, որն ընկած լինի ռուս–թուրքական սահմանի երկայնքով: Նա առաջարկում էր այդ նպատակով Դոնից ու Կուբանից այստեղ տեղափոխել մեծ թվով կազակների ընտանիքներ (էջ 465): Համաձայն ենք՝ իրոք այդպիսի ծրագրեր մշակվել են և նույնիսկ անհաջող փորձեր են արվել դրանք իրականացնելու: Բայց արդյո՞ք դա նշանակում էր, որ կազակները պետք է բնակեցվեին հենց հայերի բնակավայրերում և անպայման հայերին այնտեղից տեղահանելու պայմանով: Մեր համոզմամբ՝ ամենևին ոչ: Հայաստանը հայ տարրից դատարկելը ակնհայտ անմտություն կլիներ հենց Ռուսաստանի շահերի տեսանկյունից: Պարզապես սահմանային այն ծառայությունը, որ կարող էին իրականացնել կազակները, չէին կարող իրենց վրա վերցնել հայերը, բայց նրանք հիանալիորեն կարող էին բնակվել կողք կողքի:

Ինչպես վերևում ասվեց, նահանջն իրականացվելու էր երկու ուղղություններով, որոնցից մեկը ձգվելու էր Վանա լճի հարավային ափերով՝ Ոստան–Վան–Արճակ–Սարայ–Իրան գծով: Անդրանիկի զորամասը նահանջելու էր մյուս՝ Ախլաթ–Ադլջավազ–Արճեշ–Բերկրի–Աբաղայի դաշտ ուղղությամբ դեպի Կովկաս: Հուլիսի 14–ին զորամասը հասավ Արճեշ, որտեղ կուտակված էին մշեցի, բուլանուխցի, ախլաթցի 2000 գաղթականներ: Նրանց առաջնորդում էր Անդրանիկի հին զինվոր Ֆիդայի Հասրեթը: Հուլիսի 18–ին Անդրանիկը գաղթականների հետ միասին հասավ Բերկրի: Նույն օրը Վասպուրականի հայկական կառավարությունը ժողովրդի հետ միասին ռուսական հրամանատարության խորհրդով թողեց Վանը: Սկսվեց Վասպուրականի հայության առաջին մեծ ու աղետալի գաղթը: Գաղթականների թիվը հասնում էր 150 հազարի: Վանի, Արճեշի, Շատախի և Մոկսի հայության գաղթը նույնպես կատարվում էր վերը նշված երկու ուղղություններով՝ դեպի Կովկաս և Իրան: Դեպի Կովկաս գաղթող հայության պաշտպանությունը հանձնարարվեց Անդրանիկի և Դրոյի, իսկ դեպի Իրան գնացողներինը՝ Համազասպի և Քեռու գնդերին:

Հուլիսի 22–ին հայ կամավորները և գաղթականները դուրս եկան Բերկրիից և հաջորդ օրը երեկոյան հասան Աբաղայի դաշտը: Հուլիսի 25–ին նրանք հասան Օրգով, իսկ 26–ին՝ Իգդիր: Գաղթը տեղի էր ունենում անտանելի շոգի, փոշու, ամպերի, քաղց ու ծարավի, դարանակալ թուրք ու քուրդ ավազակախմբերի մշտական հարձակումների անասելի ծանր պայմաններում: Ճանապարհներին թողնելով մոտ 50 հազար երեխաների, կանանց ու ծերերի դիակներ՝ գաղթականների տանջահար շարասյունները ի վերջո հասան Արարատյան դաշտ՝ լրացնելով այլ շրջաններից այնտեղ կուտակված հազարավոր բոկոտն ու սովահար գաղթականների շարքերը: Ամեն օր էջմիածնի ու Երևանի փողոցներից հարյուրավոր դիակներ էին հավաքում: Տխուր մտորումների առիթ են տալիս Հ. Սիմոնյանի հետևյալ տողերը. «Դժբախտ փախստականներին օգնության ձեռք էին մեկնում ռուսական իշխանությունները: Մեծածավալ օգնություն էր գալիս նաև դրսից, հատկապես Ամերիկայից: Բայց Կովկասի հայ ուսնորները քար անտարբերություն էին ցուցաբերում և առանց սպառնալիքներ կամ նախատինքներ ստանալու չէին բացում իրենց փողի քսակները» (էջ 468): Հեղինակը կատարում է նաև, մեր կարծիքով, մի շատ կարևոր նշում, գրելով, որ ռուսական զորքերի գլխավոր հրամանատարը զորքին հրամայել էր նահանջել միայն ժողովրդի գաղթելուց հետո: Այդ հրամանը կատարվեց, և բանակը Վանը թողեց վանեցիների գաղթից 10 օր հետո՝ հուլիսի 28–ին, ապա փոքր–ինչ նահանջելուց հետո կանգ առավ, և երբ վտանգը համարվեց անցած, վերադարձվեց քաղաքը (էջ 469): Ստացվում է, որ հերյուրանք են բոլոր այն պնդումները, թե ռուսական զորքերը բախտի քմահաճույքին են թողել վասպուրականցի գաղթականներին:

Իգդիրում Անդրանիկը արձակեց իր գունդը, ձիերը և գույքը հանձնեց տեղի պարետին և հայկական բոլոր կամավորական զորամասերի պետ, գեներալ–մայոր Յուրկևիչից փաստաթուղթ ստանալով մինչև սեպտեմբերի 15–ը արձակուրդում լինելու մասին, օգոստոսի 8–ին իր թիկնապահ Երվանդ Փափազյանի հետ մեկնեց Երևան, այնտեղից էլ օգոստոսի 12–ին հասավ Թիֆլիս: Այստեղ նա Կովկասյան Ազգային Բյուրոյի և Կարգադրիչ մարմնի հորդորներով կոչ արեց հայ երիտասարդությանը՝ նոր զորամաս կազմակերպելու համար հավաքվել Երևանում:

Այն շուտով կազմավորվեց և կոչվեց Առաջին Հայկական զորամաս՝ Անդրանիկի հրամանատարությամբ:

1915 թվականի նոյեմբերի 7–ին Առաջին Հայկական զորամասը ռուսական բանակի հետ միասին հասավ Վան: Նրանց հետ երկիր վերադարձան հազարավոր գաղթականներ: Մի քանի օր անց հայ կամավորներն ուղարկվեցին Արճեշ, որի մատույցներում դեկտեմբերի 27–31–ը հաղթական կռիվներ մղեցին թուրք–քրդական ուժերի դեմ:

1915–ի նոյեմբերի 5–ին Անդրանիկը Կովկասյան բանակի հրամանատարին հրաժարական ներկայացրեց՝ պատճառաբանելով իր զինվորների քաջագործությունները բարձրագույն հրամանատարության կողմից արժանվույնս չգնահատելը և նրանցից ոչ մեկին մարտական պարգևների չներկայացնելը:

1916 թվականի հունվարին Անդրանիկը և հայկական մյուս զորամասերի հրամանատարներն ստացան կամավորական գնդերը ցրելու և դրանք բանակի հրաձգային գումարտակների վերածելու մասին Կովկասյան բանակի հրամանատարության 1916 թ. հունվարի 16–ի հրամանը:

1916 թ. փետրվարի 8–ին Հայկական Առաջին զորամասը հրաման ստացավ դուրս գալ Դատվանից և շարժվել դեպի Ռահվի–Դուրան՝ Բիթլիսի կիրճի մուտքը փակելու առաջադրանքով: Ճակատամարտը Բիթլիսի համար սկսվեց փետրվարի 16–ի առավոտյան: Անդրանիկի երկու վաշտերն ընթանում էին ռուսական զորքի առջևից: Խոր ձյան միջով, թշնամու տեղատարափ կրակի տակ նրանք սկսեցին մագլցել այն լեռների կատարները, որոնք նույնիսկ ամռանը դժվարամատչելի էին: Այդ օրը կամավորները տվեցին 15 սպանված և 55 վիրավոր, բայց թշնամու դիրքերը գրավել չկարողացան: Հետ քաշվելով՝ կամավորները երկու օր հանգստացան Ծվար գյուղում: Ապա հրաման ստացվեց՝ սվինամարտով գրավել Բիթլիսը: Անդրանիկի զորամասը պիտի գործեր աջ թևի ծայրում՝ գնդապետ Ֆիլիպովի հրամանատարության ներքո: Ֆիլիպովի խնդրանքով Անդրանիկը մանրամասն խորհուրդներ տվեց նրան, թե ինչպես հարձակվել: Հարձակումն սկսվեց գիշերվա ժամը 4.30–ին: Դիրքերից դուրս շպրտելով թուրքերին, ռուս–հայկական զորասյունը մտավ քաղաք: Թուրքերը կարճ ու անկանոն դիմադրությունից հետո անձնատուր եղան՝ շատերը շապիկ–վարտիքով: Փետրվարի 19–ի լուսաբացին Բիթլիսը գրավված էր: Բիթլիսը Անդրանիկի երկրորդ մեծ հաղթանակն էր՝ Դիլմանից հետո, որի համար նա պարգևատրվեց Սուրբ Վլադիմիրի 4–րդ աստիճանի շքանշանով՝ սրով ու ժապավենով: Շատ կամավորներ

պարգևատրվեցին հուշամեդալով, որի վրա հայերեն և ռուսերեն փորագրված էր. «Տէր կեցոյ զհայս (Թող Տերը պահպանի հայերին)»:

Բիթլիսի գրավումից հետո դեռ չէին չորացել հայ կամավորների շորերը, երբ ստացվեց խմբավորման հրամանատար, մահմեդական գեներալ Աբացիևի հրամանը՝ փետրվարի 20–ին Մշո դաշտ դուրս գալու մասին: Անդրանիկը գրավոր ձևով մերժեց կատարել այդ հրամանը՝ մատնանշելով կամավորների հոգնածությունը: Անդրանիկի խնդրանքով նրա զորամասը հանվեց Աբացիևի ենթակայությունից և հանձնվեց Նազարբեկովին: Անդրանիկը դեպի Մուշ շարժվեց փետրվարի վերջերին, իսկ մարտի սկզբներին համարյա առանց դիմադրության գրավեց Մուշը: Հոգնած և հիվանդ Անդրանիկը, 1916 թ. մարտի 18–ին զորամասի հրամանատարությունը հանձնելով Սմբատին և հրաժեշտ տալով զորամասին, հանգստանալու նպատակով մեկնեց Կովկաս:

Հայկական կամավորական գնդերը ցրելու մասին հրամանը Նիկոլայ 2–րդ ցարը ստորագրել էր դեռևս 1915 թ. դեկտեմբերին: Դրա համար պաշտոնապես վկայակոչվում էր կամավորների ցածր կարգապահությունը: Իրականում իշխանությունները վախենում էին, որ դրանք կարող են ինքնուրույն բանակի վերածվել: Ի վերջո որոշվեց, որ հայկական կամավորական գնդերը ոչ թե ցրվում են, այլ վերակազմվում են ռուսական բանակի հրացանակիր գնդերի, որոնց հրամանատարությունը հանձնվում էր ռուսական բանակի հայազգի զինվորականներին:

1916 թ. սեպտեմբերին, երբ հայկական կամավորական զորամասերը հիմնականում արդեն ցրված էին, Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը պաշտոնական հրաման առնակեց դրանց լուծարման մասին:

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովուրդը ենթարկվեց մարդկության պատմության մեջ մինչ այդ չլսված ու չտեսնված ցեղասպանության. երիտթուրքական կառավարողների հանցապարտ ղեկավարությամբ ամենավայրագ ձևերով ու մեթոդներով բնաջնջվեցին մոտ 1,5 միլիոն արևմտահայեր, իսկ նրանց բնօրրան Արևմտյան Հայաստանը լիովին դատարկվեց, վերածվեց ավերակույտի:

Հայ ժողովրդի բնաջնջման անմարդկային պլանը մշակվել էր նախօրոք, իսկ պատերազմի ժամանակ այն կոնկրետացվեց ու իրականացվեց: Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը հետևանք էր ոչ թե հայերի ոչ լոյալ վարքագծի, ինչպես ճգնում են ներկայացնել պատմության հին ու նոր կեղծարարները, այլ բռնակալական Թուրքիայի մշտապես իրականացվող հայասպանության անմիջական շարունակությունն էր՝ իր ավարտուն տեսքով: Ուստի ամենևին էլ պատահական չի հնչում Թալեաթի խոստովանությունը՝ «Հայկական խնդիրը լուծելու տեսակետով՝ երեք ամսվա մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդը երեսուն տարվա մեջ» (Հ. Մ. էջ 384):

Եղեռնի շարժառիթները: Հայերի բնաջնջման պետական քաղաքականության աստիճանի բարձրացրած ծրագրի հիմքում ընկած էին տնտեսական և քաղաքական նկատառումներ: Հայերը, ըստ թուրքերի պատկերացման, սեպի նման խրվել էին մուսուլմանական աշխարհում, ունեին ռուսական կողմնորոշում և խանգարում էին իրենց պանիսլամական ու պանթուրքական պլանների իրականացմանը: Իրականում՝ իրենք թուրքերն էին Փոքր Ասիայի նվաճմամբ սեպ խրել քրիստոնեական միջավայրում: Կարևոր դեր էր խաղում նաև Հայկական հարցի միջազգայնացումը, որը հնարավորություն էր ընձեռում մեծ տերություններին՝ պատեհ առիթով միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Թուրք բռնակալներին կատաղության էր հասցնում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը, որը նրա բնական իրավունքն էր:

Դեռևս 1907 թ. դեկտեմբերի 27–29–ը Փարիզում տեղի ունեցած ժողովում Հայ հեղափոխական դաշնակցությունը և Իթթիհատը համաձայնություն կայացրին հետևյալի շուրջ. սուլթան Համիդի գահազրկում, արմատական փոփոխություն վարչաձևի մեջ, խորհրդարանի հաստատում:

1908 թ. հուլիսի 10–ին սուլթանը վերահաստատեց 1876 թվականի Սահմանադրությունը:

1908 թ. սեպտեմբերին Սալոնիկում գումարված Իթթիհատի ընդհանուր ժողովը հռչակեց մի շարք սկզբունքներ՝ թույլատրել քաղաքական կուսակցություններ, ընդարձակել նահանգային վարչական իրավունքները, բոլոր քաղաքացիների իրավունքների և պարտականությունների հավասարություն, ոչ մահմեդականների զինվորագրում, ազատ կրթություն, կրոնական հաստատությունների ազատություն, ազատ ընտրություններ և այլն, որոնք, սակայն, շատ չանցած դրժվեցին: Սկսվեցին ոտնձգություններ կուսակցությունների, լեզուների դեմ, սպառնալիքով արգելվեցին ընդդիմադիր թերթերը: 1909 թ. ապրիլի սկզբի Ադանայի ջարդերից հետո ՀՅԴ–ն խզեց իր կապերը Իթթիհատի հետ: Սակայն, նկատի ունենալով տիրող ծանր կացությունը, հայությանն սպառնացող ընդհանուր ջարդի վտանգը չարագործներին զսպելու և ինքնապաշտպանության նպատակով ժամանակ շահելու համար 1909 թ. օգոստոսի 24–ին ՀՅԴ–ն նոր համաձայնության եկավ Իթթիհատի հետ՝ հետևյալ իմաստով. Սահմանադրության կիրարկման, Օսմանյան հայրենիքը անջատումից և բաժանումից զերծ պահելու համար պայքար միացյալ ուժերով և փարատել այն կարծիքը, թե հայերը անկախության են ձգտում (Հ. Ղ. էջ 16):

Սակայն դրանից հետո Իթթիհատը թույլ տվեց ամենամեծ սրիկայությունը: Ստորագրված համաձայնագրի մելանը դեռ չէր չորացել, երբ Իթթիհատը 1910 թ. հոկտեմբերի 31–ին Սալոնիկում ընդհանուր ժողով գումարեց, որը տևեց 13 օր: Ժողովն ընդունեց կանխամտածված կտրուկ ծրագիր, որը հիմք դարձավ թուրքական կառավարության հետագա ցեղասպանության քաղաքականության, զինվորական բռնի ուժով ոչ թուրք տարրը բնաջնջելու, թուրքական միացյալ պետություն ստեղծելու համար: Այն ուղենիշ եղավ հետագայում քեմալականների ու «դեմոկրատ» թուրքերի համար: Ժողովում բանաձևվեց «Թուրքիան միայն թուրքերի համար» սկզբունքը: Ժողովին մասնակցում էին պանթուրքիզմի ջատագովներ Ահմեդ Աղաևը, որն իր սև գործերով հայտնի էր Անդրկովկասում, դոկտոր Ռուսուխին, Զիա Գյոք Ալփը, Բեհաեդդին Շաքիրը,

Զահիդը, Թալեաթը, Հաջի Ադիլը և նման այլ չարաշուք անձինք: Ընտրվեց 14 հոգուց բաղկացած գաղտնի Կենտրոնական Կոմիտե, որի անդամները բնաջնջումի արյունարբու զինվորական կամ քաղաքական պետեր էին: Բոլոր ժողովականներն ընդունեցին հետևյալ երդումը. չպատկանել այլ կուսակցության, պահել որոշումների գաղտնիքը, գործել Կոմիտեի որոշումների համաձայն, սպանել Կոմիտեին կամ նրա ծրագրերին դավաճանողներին, երդմնազանցության դեպքում ընդունել Կոմիտեի սահմանած մահապատիժը (Հ. Ղ. էջ 17):

1914–1918 թվականներին արյունահեղ թուրքական ներքին քաղաքականությունը 1910 թվականի նոյեմբերյան գաղտնի ժողովի որոշումների շարունակությունն էր:

Եթե 1908 թվականի Սահմանադրության օրերին Իթթիհատի անդամների թիվը հազիվ 400 էր, ապա 1914–ին այդ թիվը հասավ 350.000–ի, որովհետև այդ կուսակցությանը չպատկանողը որևէ պաշտոն չէր ստանում:

Բալկանյան երկրներից բերվեցին քրիստոնյաների դեմ բուռն ատելությամբ լցված 5.000 թուրք ոստիկաններ և աստիճանակիր զանազան զինվորականներ ու տեղափոխվեցին հայկական նահանգների կենտրոններում, որոնք հետո դարձան ցեղասպանության պետական հսկայական ծրագրի գործիքներն ու գործակալները (Հ. Ղ. էջ 18):

Օսմանյան կայսրությունում թուրքերը մեծամասնություն չէին կազմում, բայց բանակը իրենց ձեռքում էր: Իթթիհատի շարքերն էին ընդունվում ամեն տեսակ խայտաբղետ անձինք՝ աննկարագիր, ստորին դասակարգի տարրեր՝ թիվ, ազդեցություն և ժողովրդականություն ձեռք բերելու համար:

Հայաբնակ վայրերին մոտիկ զետեղվեցին մուհաջիրներ, որոնք նույնպես հետագայում ցեղասպանության գործիք ծառայեցին:

1912 թ. նոյեմբերին Իթթիհատի որոշմամբ գերմանական «Լորելայ» պահականավով Աբդուլ Համիդը իր չորս կանանցով Սալոնիկից փոխադրվեց Կ. Պոլիս և արգելափակվեց Բոսֆորի ափին գտնվող Պեյլեր Պեյ պալատում: Նա մահացավ պատերազմի ժամանակ՝ 1918–ին, ու Թալեաթը լաց եղավ նրա վրա՝ կորցնելով ջարդարարության իր վարպետին:

Իթթիհատական կուսակցության ուղղությունը մշակողները քառասուն հոգի էին, գրեթե հավասար հեղինակությամբ: Նախապես լայնամտություն կեղծող այդ շեֆերը դարձել էին նեղմիտ, բռնակալ, իրենց ստորագրություններն ուրացող, հակառակորդներին մահվան սպառնալիքով լռեցնող: Հակառակ նրան, որ օսմանյան կայսրության մեջ թուրքերի թիվը 25 տոկոս էր. նրանք փոխանակ «միություն և առաջադիմություն» քարոզելու, միակերպություն և ծուլում ջատագովեցին՝ դառնալով ամբողջատիրական:

1914 թ. օգոստոսի 2–ին կնքվեց 8 կետից բաղկացած թուրք–գերմանական զինակցության գաղտնի պայմանագիր՝ ստորագրված Գերմանիայի դեսպան Ֆոն Վանգենհայմի և Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմի կողմից: Այդ պայմանագիրը հայերի ցեղասպանության իրականացման կարևորագույն գործոններից մեկը դարձավ:

Զարդարարական մեքենայի կազմակերպումը: Սարիղամիշի ճակատամարտում կրած պարտությունից հետո 1915 թ. փետրվարի առաջին կեսին գումարվեց Իթթիհատի Կենտրոնական կոմիտեի արտակարգ գաղտնի նիստ, որին մասնակցում էին երիտթուրքական բոլոր հայտնի գործիչները՝ Թալեաթը, Էնվերը, Զիա Գեոքալփը, Միդհատ Շուքրին, Բեհաէդդին Շաքիրը, Նազիմը, Հյուսեին Զահիդը, Կարա Քեմալը, Խալիլը, Հասան Ֆեհմին, Աղա օղլու Ահմեդը, Զավիդը, Մելան Զադե Ռիֆաթը: Բացակայում էին միայն Զեմալը, որն այդ պահին գտնվում էր եգիպտական ճակատում և Կոմիտեի միակ հայ անդամ Պետրոս Հալաջյանը, որից զգուշացել ու չէին հրավիրել: Խորհրդակցությունը բացառապես զբաղվեց հայերի բնաջնջման հարցով: Նիստի սղագրությունը ներկայացված է Մելանզադե Ռիֆաթի «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագիրները» գրքում (Երևան, 1990): Իթթիհատի Կենտկոմի պատասխանատու քարտուղար դոկտոր Նազիմը իր ելույթում առաջ քաշեց կայսրության ողջ տարածքը ոչ թուրք տարրերից մաքրագործելու և, մասնավորապես, ողջ հայությանը բնաջնջելու խնդիրը, այն հաշվով, որ ոչ մի հայ չմնա ու այդ անունը մոռացվի: Դրա համար պատերազմն ստեղծել է ամենահարմար պահը, որովհետև թոհուբոհի մեջ պետությունների բողոքի ձայնը չի լսվի, իսկ եթե լսվի էլ, շուտով մոռացության կտրվի: Նույն ոգով Նազիմին ձայնակցեցին Շաքիրը, Ֆեհմին, Թալեաթը և երիտթուրքական մյուս բորենիները: Երիտթուրքերի գաղտնի խորհրդակցությունը միաձայն որոշում ընդունեց ամբողջ հայության ոչնչացման մասին: Այդ ծրագրի իրականացման կոնկրետ միջոցառումներ մշակելու համար ստեղծվեց երեքի գործադիր մարմին, որի անդամներն էին դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, դոկտոր Նազիմը և կրթական նախարար Միդհատ Շյուքրին: Երիտթուրքերի պահանջով սուլթան Մեհմեդ Ռեշադը կայսերական հրամանով 1915 թ. մար-

տի 1–ից մինչև հոկտեմբերի 1–ը արձակեց օսմանյան պառլամենտը, որտեղ կային նաև հայ պատգամավորներ:

Բեհաէդդին Շաքիրի առաջարկությամբ եռյակ կոմիտեն ստեղծեց հայերի բնաջնջման հատուկ կազմակերպություն՝ Թեշքիլաթը մախսուսսե, որի գլուխ կանգնած էր Թալեաթը, տեղակալն էր Տիգրանակերտի կուսակալ Ռեշիդ բեյը: Հատուկ կազմակերպությունն ուներ վարչական մարմին, որի մեջ մտնում էին Նազըմը, Շաքիրը, Աքըֆը, Ռիզան, Էնվերի հորեղբայր Խալիլը, Ազիզը, Պոլսի իթթիհատական կենտրոնի ղեկավար Զևադ բեյը: Հատուկ կազմակերպության անմիջական ներկայացուցիչն էր Էնվերի մերձավոր Էշրեֆ բեյը: Հայերի բնաջնջման համար պետք է օգտագործվեին ինչպես զորքն ու ժանդարմերիան, այնպես էլ բանտերից ազատված արյունարբու մարդասպաններից կազմված հրոսակախմբերը, քրդական ավազակախմբերը, չեթեները, մահմեդական ֆանատիկ խուժանը, որոնց թիվը հասավ 10.000–ի: Կազմակերպությունը իր ճյուղերն ստեղծեց Թուրքիայի ողջ տարածքում:

Ինչպես նշում է Հայկազն Ղազարյանը «Ցեղասպան թուրքը» գրքում (Բեյրութ, 1968, էջ 37) Թեշքիլաթը մախսուսսեն կառավարության և օրենքների միջամտությունից զերծ, իր քայլերի մեջ անկախ և բացառապես երեքի գործադիր մարմնի հրամաններով գործող, իթթիհատական արյունարբու մարդասպաններից ու կողոպտիչներից բաղկացած մի խումբ էր: Դա կառավարություն էր կառավարության մեջ, կուսակցություն էր կուսակցության մեջ:

Հատուկ կազմակերպության վարչական մարմինը մշակեց հայերի բնաջնջման հետևյալ հիմնական ծրագիրը. 1. թուրքական բանակ զորակոչված հայ զինվորների ոչնչացում, 2. թիկունքի ողջ հայ բնակչության զինաթափում, 3. հայ մտավորականության ձերբակալում, աքսոր և ոչնչացում, 4. բոլոր հայերի բռնագաղթ դեպի Միջագետքի անապատները և նրանց անխնա բնաջնջում:

Որոշվեցին նաև հայերի տեղահանման ու ոչնչացման ժամկետներն ըստ վիլայեթների, սանջակների, քաղաքների ու գյուղերի:

1915 թվականի ապրիլի 15–ին Թալեաթի, Էնվերի ու Նազըմի ստորագրությամբ հատուկ հրահանգ ուղարկվեց Օսմանյան կայսրության տեղական իշխանություններին՝ նահանգապետից մինչև գյուղապետեր: Հրահանգով տեղեկացվում էր, որ «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն, առաջնորդվելով պատերազմում անպայման հաղթանակի հասնելու մղումով և նպատակ ունենալով կանխել հայկական

հարցի հետագա առաջադրումը, որոշեց վերջ դնել այդ հարցին, հայերին քշել արաբական անապատները և բնաջնջել այդ խորթ տարրը: Կառավարությունը և Իթթիհատի Կենտրոնական կոմիտեն հրամայում են տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցել Իթթիհատի տեղական օրգաններին, որոնք ապրիլի 24–ի արևածագին գաղտնի հրահանգի համաձայն ձեռնարկելու են այդ հրամանի կատարմանը: Խստորեն նախազգուշացվում էր, որ ամեն մի պաշտոնական կամ մասնավոր անձնավորություն, որը կընդդիմանա այս «սրբազան ու հայրենասիրական գործին» ու չի կատարի իր վրա դրված պարտականությունները, կամ որևէ ձևով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի իբրև հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի (Մ. Ա. էջ 311):

Հայերի բնաջնջման հատուկ լիազորներ կարգվեցին բոլոր հայաբնակ վայրերում: Բեհաէդդին Շաքիրն ուղարկվեց արևելյան նահանգներ և հաստատվեց Կարինում, Ռիզա բեյը մեկնեց Տրապիզոն, իսկ Պոլսում հատուկ հանձնարարականներ ստացավ Զևադ բեյը, որը համապատասխան զինվորական ուժերով վիլայեթներ էր ուղարկում եռանդուն իթթիհատական գործիչների, սերտ կապեր պահպանում նրանց հետ ու հսկում գործողությունների ընթացքին: Մահվան մեքենան պատրաստ էր, և մնում էր այն գործի դնել:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՌՆԱԳԱՂԹՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ: ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Արևմտահայության կոտորածներն սկսվեցին թուրքական սեֆերբերլիք կոչվող զորահավաքից: Նախկինում քրիստոնյաները, այդ թվում նաև հայերը, բանակ չէին զորակոչվում և դրա դիմաց վճարում էին զինվորական հարկ՝ բեդելի ասկերի, որը կազմում էր 20–40 դուրուշ: 1908 թվականի հեղափոխությունից հետո հայերը ևս ենթակա դարձան զինակոչի, բայց կարող էին նաև ազատվել՝ զինվորական տուրք վճարելով: Զորահավաքի ենթակա էին 20–45 տարեկան տղամարդիկ, բայց երբ Թուրքիան 1914 թվականի օգոստոսի 2–ին զորահավաք հայտարարեց, այն տարածվեց բոլոր հայ տղամարդկանց վրա: Հայերից սկզբում հավաքեցին 50–ական ոսկի՝ իբրև բեդելի, սակայն հետո բռնությամբ բոլորին զինակոչեցին, իսկ խուսափողներին գնդակահարում էին: Զարդա-

ռարները դասալիքներ որոնելու պատրվակով ներխուժում էին հայերի տները, խուզարկում, կողոպտում էին, գանակոծում ու սպանում անմեղ մարդկանց: Հայ բնակչության գլխին կատարյալ չարիք դարձավ զենքի հանձնման կամ բռնագրավման գործողությունը, որն անցկացվում էր զորահավաքին զուգահեռ: Դրա պատրվակ ծառայեց այն, որ 1908 թվականի հեղափոխությունից հետո իթթիհատականները որոշ վայրերում հայերին նույնպես զենք էին բաժանել՝ սուլթանի կողմնակիցների դեմ պայքարելու համար: Հայերը վաղուց վերադարձրել էին այդ զենքը, *բայց իշխանություններն ամենուրեք հայերից պահանջում էին զենք* հանձնել: Այդ անվան տակ նույնպես ջարդարարները տակնուվրա էին անում հայերի տները, հաճախ «հայտնաբերում» իրենց իսկ զենքերը, գործադրում անլուր բռնություններ: Բանը հասավ այնտեղ, որ շատ դեպքերում, տեղեկանալով զենք որոնող ջոկատի մոտենալու մասին, հայերը չափազանց թանկ գներով մահմեդականներից զենք էին գնում և հանձնում իշխանություններին:

Արևմտահայության համար մեծագույն պատուհաս դարձավ պատերազմական տուրքը՝ թեքյալիֆի–հարպիեն: Պատերազմական ծախսերը հոգալու համար կառավարությունը բնակչությունից վերցնում էր պարեն, հագուստ, քաշող ուժ՝ ունեցվածքի 1/10–ի չափով և փոխարենը տալիս ոչինչ չարժեցող թղթի կտոր՝ ստացական: Մոբիլիզացվեցին բոլոր փոխադրական միջոցները՝ սայլերը, եզները, գոմեշները, ձիերը, ջորիներն ու էշերը: Բայց քանի որ դա էլ չբավարարեց, սկսեցին հայերին օգտագործել իբրև բեռնակիր–շալակատարներ: Պարզապես տաժանակրություն էր տարվա բոլոր եղանակներին՝ կիզիչ արևի տակ կամ ծմռան բքին ծանր բեռները շալակին քայլել անվերջանալի կիլոմետրեր: Պատերազմի սկզբում զորակոչվեցին շուրջ 50 հազար հայեր, որոնք գտնվում էին դժոխային պայմաններում: Նրանք սնվում և հագնվում էին շատ վատ, ենթարկվում թուրք զինվորների ծաղրուծանակին ու կամայականություններին: Նրանք մեծ մասամբ ծառայում էին պաշտպանական ջոկատներում, այն էլ Միջագետքի և Սիրիական ճակատներում, որովհետև թուրքական հրամանատարությունը դիտավորյալ նրանց հեռու էր պահում Կովկասյան ռազմաճակատից: Չնայած այդ ամենին՝ արևմտահայ զինվորներն ու սպաները բարեխղճորեն կատարում էին իրենց քաղաքացիական պարտքը և ամեն կերպ աշխատում էին խուսափել անցանկալի միջադեպերից: Սակայն դա չխանգարեց ռազմական մինիստր Էնվեր փաշային՝ Սարիղամիշի ճակատամարտի պարտության

ողջ մեղքը բարդել հայերի վրա և 1915 թ. փետրվարի 27–ին հրաման տալ զորամասերի հրամանատարներին՝ 1. կայսերական բանակում ծառայող բոլոր հայերին առանձնացնել իրենց զորաբաժիններից և աչքից հեռու վայրերում գնդակահարել, 2. հայ սպաներին իրենց զորախմբերի բնակատեղերում բանտարկել և սպասել նոր ցուցումի: 3. կատարման մասին զեկույց ներկայացնել 48 ժամվա ընթացքում (Ա. Անտոնյան, էջ 232): Այդ հրամանի հիման վրա 1915 թվականի գարնանը թուրքական բանակի հայ զինվորականները զինաթափվեցին ու առանձնացվեցին բացառապես բանվորական, աշխատանքային գումարտակների՝ ամելեթաբուրիների և զրաաթ–թաբուրիների մեջ: Նրանց ուղարկում էին ամենածանր աշխատանքների, օգտագործում ճանապարհաշինարարության, երկաթուղագծերի և թունելաշինության մեջ: Համալ–թաբուրիներում ընդգրկվածներին հարկադրում էին գրաստների փոխարեն ծանր բեռներ փոխադրել: Ընդհանուր առմամբ կազմվեցին 120 այդպիսի գումարտակներ (Հ. Ղ. էջ 22): Այդ տաժանակիր աշխատանքները կատարելուց հետո հայ զինվորները դավադրաբար սպանվեցին զանազան գաղտնի վայրերում: Այդ առթիվ անգլիացի հեղինակ Առնոլդ Թոյնբին գրել է, որ հայ զինվորների տմարդի ջարդը թուրք զինվորական և քաղաքացիական իշխանությունների գործակցությամբ ու միջոցներով՝ աշխարհի ոճիրներից ամենանշանականը, ամենաստորինը և ամենավատթարագույնն է (Հ. Ղ. էջ 22):

Այսպիսով՝ արևմտահայության բնաջնջման առաջին մեծ գործողությունը թուրքական բանակի հայ զինվորների ոչնչացումն էր: Բացահայտ կեղծիք է այդ տմարդի արարքը հայերի դասալքությամբ հիմնավորելու թուրքական վարկածը, քանի որ թուրք և քուրդ դասալիքների թիվը մի քանի անգամ գերազանցում էր հայ դասալիքների թվից, իսկ վերջիններս էլ, եթե դասալքում էին, ապա այդ քայլին դիմում էին բանակում նրանց համար ստեղծված անտանելի պայմաններից դրդված: Հատկանշական է, որ Լիման ֆոն Սանդերսի տվյալներով Կարինի շրջանում մասսայականորեն դասալքում էին հենց թուրք զինվորները, որոնց թիվը 1916–ին արդեն հասնում էր 30 հազարի, իսկ 1918–ին թուրքական բանակի զինվորների թիվը զիջում էր դասալիքների թվին (Ջ. Կ. էջ 224): Ուրեմն գլխավոր պատճառը հայերին ռազմունակ ուժից զրկելն էր:

Փաստերը անառարկելիորեն հաստատում են, որ հայերի կոտորածն սկսվել էր ավելի վաղ, քան նրանք տեղ–տեղ դիմեցին ինքնա-

պաշտպանության, որն էլ թուրքերը հետին թվով համարեցին ապստամբություն և այն պատրվակ դարձրին ցեղասպանության համար:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Մեծ եղեռնի երկրորդ խոշոր գործողությունը արևմտահայ մտավորականության ձերբակալությունը, աքսորն ու գազանաբարո ոչնչացումն էր: Դրա նպատակը արևմտահայության գլխատումը, նրան ուղղություն տվող, ղեկավարող ուժից զրկելն էր: Ամենածանր հարվածը հասցվեց Պոլսին, ուր կենտրոնացած էր հայ մտավորականության ընտրանին՝ գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, բժիշկներ, մանկավարժներ, լրագրողներ, հասարակական–քաղաքական գործիչներ: Պատերազմի նախօրյակին Կ. Պոլիսն ուներ 600.000 բնակիչ, որից 150.000–ը հայեր էին: Այստեղ բնակվող հայ մտավորականության ոչնչացումը երիտթուրքական կառավարության համար առաջնահերթ խնդիր էր: Այդ գործողությունը ղեկավարում էին Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյը, նրա քաղաքական գծով օգնական Ռեշադը և ընդհանուր ապահովության պետ Զանփոլադը: Նախօրոք կազմված սև ցուցակների համաձայն, որին իրենց մասնակցությունն էին բերել ոստիկանատան հայ ուրացող ծառայողներ Արթին Մկրտչյանը, Հմայակ Արամյանցը և Գամեր Շիրինյանը, 1915 թվականի ապրիլի 24–ին միաժամանակ ձերբակալվեցին և Պոլսի Մետերիանե կենտրոնական բանտ բերվեցին հայ մտավորականների առաջին խումբը՝ շուրջ 230 հոգի: Այդ արյունոտ կիրակին հայ ժողովրդի պատմության մեջ մտավ որպես ամենասև տարեթիվ, համազգային սգի օր: Ապրիլի 25–ին ձերբակալվածներին տեղափոխեցին Հայդար–փաշայի նավամատույցը և այնտեղից հատուկ գնացքով Նիկոմիդիա–Անկարա գծով ժանդարմների ու ոստիկանների խիստ հսկողությամբ, որոնց ղեկավարում էր Պոլսի բանտապետ Չեթեջի Իբրահիմ բեյը, ուղարկվեցին Անատոլիայի խորքերը: Ապրիլի 28–ին գնացքը Անկարա չհասած կանգ առավ Սենճան–քեոյ կայարանում, որտեղ ձերբակալվածներից իջեցնում են 75 հոգու և տանում Այաշ: Հուլիսին բանտարկյալների մեկ այլ խմբի երկաթուղով ուղարկում են դեպի Ուրֆա–Հալեպ, սակայն Ուրֆա–Տիգրանակերտ ճանապարհին նրանց վրա են հարձակվում չեթեները ու տանջամահ անում նրանց: Այստեղ զոհվեցին գրող–հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը, անվանի գիտնական, կենսաբան Նազարեթ Տաղավարյանը, դաշնակցական և հնչակյան գործիչներ է. Ակնունին (Խաչատուր Մալումյան), Գ. Խաժակը (Գարեգին Չաքալյան), Հարություն Ճանկուլյանը և ուրիշներ: Այաշի մնացած բանտարկյալներին օգոստոսի կեսերին տարան մի լեռան մոտ ու տանջամահ արեցին: Դրանց թվում էին դոկտոր Փաշայանը, մեծ բանաստեղծ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան), հրապարակախոս Սմբատ Բյուրատը (Տեր–Ղազարյան), դերասան Ենովք Շահենը և ուրիշներ:

Մահապարտների գնացքը ապրիլի 27–ին հասավ Անկարա, որտեղից նրանց կառքերով տարան Գասթեմունիի ուղղությամբ: Նրանց մեջ էր նաև Կոմիտասը: Ապրիլի 28–ին թվով 150 բանտարկյալների հասցրին Չանկրը քաղաքը և փակեցին զորանոցի ներքնահարկում: Դրվել էր արդեն Կոմիտասի խելագարության սկիզբը: Մի քանի օր անց Չանկրրի բանտարկյալներին թույլատրվում է ապրել քաղաքում: Նրանցից առանձնացնում են 56 հոգու՝ իբր Դեր–Զոր ուղարկելու համար: Սակայն Անկարայի բանտում մեկ ամիս պահելուց հետո օգոստոսի կեսերին նրանց տանում են քաղաքից դուրս և կոտորում: Մի քանի օր անց հոշոտվեցին Չանկրրի բանտարկյալներից ևս 26 հոգի: Աքսորյալներից 5 հոգու, այդ թվում բանաստեղծներ Դանիել Վարուժանին և Սևակին (դոկտոր Ռուբեն Չիլինկիրյան) հրամայում են Անկարայի ճանապարհով մեկնել Այաշ, սակայն Թունեյ գյուղի ձորակում նրանց վրա են հարձակվում ավազակ Հալոյի քրդերը, մերկացնում բոլորին ու տանջամահ անում անձնապաշտպանության դիմած մտավորականներին: Իսկ մինչ այդ Սևակը փրկել էր քուրդ Հալոյի աղջկան:

Կ. Պոլսում շարունակվում էին ձերբակալությունները: Օգոստոսին պետական դավաճանության մեղադրանքով ձերբակալվում են մեծանուն գրող, իրավաբան, պառլամենտի անդամ Գրիգոր Զոհրապը և Վարդգեսը (Հովհ. Սերենկյուլյան), որոնք տարվեցին Ուրֆա և բանտ նետվեցին: Այլ բանտարկյալների հետ նրանց տարան Ուրֆայից քիչ հեռու Կարաքեոփրու վայրը և չերքեզ Ահմադի ու էնվերի հորեղբայր Խալիլի անմիջական մասնակցությամբ տանջամահ արեցին:

Հետագայում Չանկրիի բանտարկյալներից սպանվեցին ռամկավարների առաջնորդ Տիրան Քելեկյանը, որը Թուրքիայի պատմություն էր դասավանդել համալսարանում, կազմել ֆրանս–թուրքերեն բառարան, Տիգրան Չեոկյուրյանը, Մելքոն Կյուրճյանը (Հրանտ), Գեղամ Բարսեղյանը, Լևոն Լարենցը (Քիրիշճյան), Հարություն Շահրիկյանը (Ատոմ) և ուրիշներ:

Գավառներում ձերբակալվեցին ու մորթոտվեցին գրողներ Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), Թլկատինցին (Հովհ. Հարությունյան), պրոֆեսորներ Կարապետ Սողիկյանը, Մկրտիչ Որբերյանը, Հովհ. Պուճիկանյանը, Հովհ. Հակոբյանը և շատ ուրիշներ:

Ապրիլյան եղեռնի օրերին Կ. Պոլսում սկսվեց 20 հնչակյանների դատավարությունը՝ Փարամազ (Մաքնոս Սարգսյան), Համբարձում Գրիգոր, դոկտոր Պեննե Թորոսյան (Պետրոս Մանուկյան), Արամ Աչըգբաշյան, Երվանդ Թոփուզյան, Սմբատ Գլճյան և ուրիշներ, որոնց կախաղան բարձրացրին:

Ծանր հարված հասցվեց նաև հայոց եկեղեցուն ու հայ հոգևորականությանը: Ըստ հայոց եկեղեցու մեծահռչակ պատմաբան Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի տվյալների՝ Թուրքիայում հայկական եկեղեցիների ու վանքերի թիվը պատերազմից առաջ հասնում էր 2200-ի (Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Երևան, էջ 259-264): Եղեռնի ժամանակաշրջանում թուրքական վանդալները ավերեցին, հրկիզեցին ու կողոպտեցին դրանցից 2150-ը, կոտորեցին շուրջ 4000 հոգևորականների: Ավերակների վերածվեցին Աղթամարը, Մշո Սուրբ Կարապետը և այլն: Թուրքական կառավարությունը 1916 թվականի հունիսի 26-ին ընդունեց «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության կանոնագիր», որով 1863 թվականի Ազգային սահմանադրությունը վերացվում էր, իսկ Սսի ու Աղթամարի կաթողիկոսությունները միավորվում էին Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքի անձի մեջ: Այդպիսին դարձավ Կիլիկիայի նախկին կաթողիկոս Սահակ Խապայանը: Պոլսի պատրիարքությունը փակվեց, իսկ պատրիարք Զավեն Արքեպիսկոպոսը աքսորվեց Մոսուլ, ապա՝ Բաղդադ: Արգելվեց ամեն կարգի կապ և հարաբերությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

ՋԱՐԴԵՐԸ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Մեծ եղեռնի երրորդ և ամենաարյունոտ գործողությունը նահանգներում հայերի բռնի տեղահանությունն ու կոտորածն էր: Սոսկ այն փաստը, որ տեղահանությունը տարածվեց ամբողջ Թուրքիայի, այդ թվում նաև այնպիսի շրջանների հայության վրա, որոնք հարյուրավոր կիլոմետրերով հեռու էին ռազմական գործողությունների թատերաբեմից, լիովին մերկացնում է թուրքական այն կեղծիքը, թե իբր տեղահանությունը կատարվել է ռազմա-ստրատեգիական անհրաժեշտությունից ելնելով: Հայերի տեղահանության վերաբերյալ թուրքական կառավարության հատուկ հրահանգում որոշակիորեն ասված էր. «Ծանոթ ազգի (հայերի — Մ. Կ.) տարագրությունը նպատակ ունի ապագայի համար մեր հայրենիքի փրկությունը, քանի որ նրանք ուր որ ապրելու լինեն, երբեք իրենց խռովարար գաղափարներից չպիտի հրաժարվեն: Ուրեմն պիտի փորձենք, որքան որ կարելի է, նրանց թիվը նվազեցնենք» (Հուշամատյան Մեծ եղեռնի, էջ 526): Ուրեմն փաստորեն դա ոչ թե տարագրության, այլ բնաջնջման հրահանգ էր: Հրահանգում տրվում էր կործանարար տեղահանության կազմակերպման մանրամասները. 1. բոլոր հայերը պիտի մեկնեին գյուղ առ գյուղ կամ թաղամաս առ թաղամաս՝ ոստիկան-զինվորների հսկողության տակ, 2. նրանց արգելվում էր հողերը և գույքը վաճառել կամ ուրիշի մոտ թողնել, այլ պիտի հանձնեին պետությանը, որովհետև հայերը տեղահանվում էին իբր ժամանակավորապես, և պատերազմից հետո վերադառնալով՝ հետ էին ստանալու իրենց ունեցվածքը, 3. կապահովվի հայերի կյանքը, 4. ճանապարհին նրանց կտրվի անհրաժեշտ օգնություն, 5. չենթարկվողների և ոստիկան-զինվորների վրա զենք բարձրացողների դեմ զենք կգործադրվի, իսկ փախուստի փորձ կատարողներն ու նրանց պատսպարողները կդատվեն պատերազմական ատյանով ու կգնդակահարվեն:

Արևմտահայության բռնի տեղահանությունն ու ջարդը Արևմտյան Հայաստանի ոչ ճակատամերձ շրջաններում, կենտրոնական և Արևմտյան Անատոլիայում և Եվրոպական Թուրքիայում հիմնականում տեղի ունեցավ 1915 թվականի մարտ-հոկտեմբեր ամիսներին:

Վասպուրական: Պատերազմի նախօրյակին Վանի վիլայեթն ուներ 542.000 բնակչություն, որից հայեր՝ 192.000, ասորիներ՝ 98.000, հրեաներ՝ 5000, քրդեր՝ 210.000, թուրքեր՝ 30.500, չերքեզներ՝ 500, եզդիներ՝ 5400, բոշաներ՝ 600: Վիլայեթը կազմված էր Վանի և Հեքյարիի (Զուլամերիկ) սանջակներից: Վերջինիս կենտրոնը Բաշկալեն էր: Այստեղ հիմնականում բնակվում էին քրդեր, հայերը 10.000 էին: Զուլամերիկում ապրում էին նաև 80.000 ասորիներ: Վանա լճի հարավային ափերով ձգվում են Կորդվաց լեռները՝ Արտոս և Եղերով գագաթներով, արևելյան ափերով՝ երկգագաթ Վարագը և Թիմարի լեռները, հյուսիսային ափերով՝ Սիփանը և Ծաղկանց (Ալադաղի) լեռները, արևմտյան ափերով՝ Նեմրութն ու Գրգուռը: Լճափի քաղաքներից են Վանը, Արճեշը, Ալջավազը, Խլաթը, Դատվանը, Ոստանը:

Վանի սանջակն ուներ 13 գավառ՝ Վան–Տոսպ (Ավանց և Արտամետ գյուղերով, որոնցից առաջինը նավահանգիստն էր), Թիմար (Լիմ և Կտուց կղզիներով), Բերկրի, Արճեշ, Ալջավազ, Հայոց Ձոր, Գավաշ, Կարճկան, Արճակ, Սարայ, Խոշաբ, Նորդուզ, Շատախ (Թաղ կենտրոնով, Փեսանդաշտ և Խորզանք դաշտերով), Մոկս, Կարկառ:

Պատերազմի սկզբում Վանի կուսակալ Թահսին բեյին փոխարինեց հայատյաց Զնդեթ բեյը, որն Էնվերի փեսան էր: Բաշկալեի մուքեսարիֆ եղած ժամանակ նա պայտել էր տվել 12 տարեկան մի հայ պատանու և ստացել «նալբանդ» մականունը:

Նախօրոք կազմված հայաջինջ ուժերը բացահայտ հարձակման անցան, երբ բացվեց Կովկասյան ռազմաճակատը: 1914 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին Արևելյան Հայաստան գաղթեցին շուրջ 40.000 հայեր: Այդ նույն ժամանակ միայն Վանա լճի հյուսիսային շրջաններում 3 օրում կոտորվեցին 22 հազար հայեր: Թուրքական զորքերն ու քրդական հրոսակախմբերը, ոստիկանական ջոկատներն ու հանցագործ խմբերը Բաշկալեի և Սարայի շրջանների տասնյակ գյուղերում կազմակերպեցին կոտորած, թալան և առևանգումներ: Ջարդեր կազմակերպվեցին նաև Ալջավազի, Բերկրիի և այլ շրջաններում:

Կարին և Տրապիզոն: Կարինի (Էրզրումի) վիլայեթի 646.000 բնակիչներից 215.000–ը հայեր էին, 12.000–ը՝ հույներ և ասորիներ, 250.000–ը՝ թուրքեր, 120.000–ը՝ քրդեր, 25.000–ը՝ պարսիկներ, 7000–ը՝ չերքեզներ, 3000 եզդիներ: Վիլայեթի մի շարք շրջաններում հայերը մեծամասնություն էին կազմում, իսկ Կարին, Բաբերդ, Երզնկա, Խնուս և Դերջան քաղաքներում հայեր էին բնակչության մեկ երրորդից մինչև կեսը:

Կարինն ավանդաբար համարվում էր Արևմտյան Հայաստանի կենտրոնը, կարևոր ստրատեգիական կետ, և ցեղասպանությունն իրականացնելու համար այստեղ էր ուղարկվել երիտթուրքական պարագլուխներից Բեհաէդդին Շաքիրը: Նա ստեղծեց հայերի տեղահանության ու ջարդի իրականացման հատուկ մարմին, կազմակերպվեցին հատուկ հրոսակախմբեր: Թուրքական իշխանությունները 1915 թ. ապրիլի 30–ին քաղաքից դուրս կազմակերպեցին մուսուլմանական հավաքույթ, որտեղ կոչ արվեց անողոքաբար ոչնչացնել բոլոր հայերին: Թուրքական հրոսակախմբերը մայիսի 12–ին Կարինից շարժվեցին շրջակա հայկական գյուղերը, տեղահանեցին 25.000 հայերի, նրանց քշեցին դեպի Դերջան ու մաս–մաս ոչնչացրին: Այդ նույն ժամանակ թուրքերը խումբ–խումբ ոչնչացրին նաև Կարին–Երզնկա գծի վրա աշխատող զինաթափված հայ

զինվորներին: Վանից նահանջող թուրքական բանակը մայիսի 19–ին հարձակվեց Խնուսի վրա ու կոտորեց տեղի հայ բնակչությանը: Ապա եկավ Կարինի հերթը, ուր բնակվում էին 78.000 հայեր: Ինչպես նշում է պրոֆ. Մ. Արզումանյանը, դա վիթխարի ուժ էր, որին կարելի էր կազմակերպել ակտիվ ինքնապաշտպանություն, սակայն, ցավոք, դա չարվեց (Մ. Արզումանյան, Հայաստան 1914–1917, Երևան, 1969, էջ 373):

1915 թ. մայիսի 26–ին Կարինում տեղի ունեցան գլխավորապես մտավորականների ու հոգևորականների զանգվածային ծերբակալություններ: Ավարտվեց 1877–1978 թթ. ռուս–թուրքական պատերազմում զոհված ռուս զինվորների հուշարձանը: Տեղահանվեցին 160 երևելի հայ ընտանիքներ, որոնք Քղիի ճանապարհին հոշոտվեցին թուրք և քուրդ ավազակախմբերի կողմից: Կարինի երիտասարդության կոչը՝ դիմել ինքնապաշտպանության՝ լռեցվեց հոգևորականության և աղայական դասի կողմից, որոնք հորդորեցին ենթարկվել իշխանություններին:

Հունիսի 4–ին նոր հարձակում սկսվեց Կարնո դաշտի հարյուրից ավելի գյուղերի վրա: Երկու ժամում տեղահանելով բնակչությանը, նրանց քշեցին դեպի Դերջան ու Երզնկա և ճանապարհին կոտորեցին:

Դրան հետևեց Երզնկայի աղետը, որտեղ կային 25.000 հայեր: Հունիսի 9–10–ին նրանք երեք քարավաններով դուրս բերվեցին քաղաքից և հունիսի 14–ին նրանց միացրին Քեմախում: Այստեղ կազմակերպվեց չորսժամյա ջարդ, և հազարավոր հայեր կոտորվեցին:

Երզնկայի ճակատագրին արժանացան նաև Բաբերդի հայերը, որտեղ կար 19.000 հայություն: Նրանց գլխավոր ջարդը նույնպես տեղի ունեցավ Քեմախի կիրճում: Չէր օգնում նաև հավատափոխությունը: Նրանց բոլորին կնքում էին Աբդուլլա անունով, որ հետո հեշտ գտնեն ու ոչնչացնեն:

Մայիսի 20–ին տեղահանեցին Խնուսի և շրջակա 27 գյուղերի հայ բնակչությանը՝ 1700 ընտանիք, որոնց հոշոտեցին Բասկանի մոտ: Կոտորածն ուղեկցվում էր անմարդկային դաժանությամբ: Քիչ է ասել գազանային, որովհետև գազանների միջավայրում նման բաներ չեն լինում: Օրինակ՝ թուրքերը լլկում էին կանանց ու աղջիկներին, մորթում երեխաներին իրենց ծնողների առաջ, պատռում էին հղի կանանց փորը, մոր աչքերի առաջ բռնաբարում էին աղջկան ու ստիպում մորը՝ ջուր լցնել իրենց ձեռքերին, մորթում էին երեխաներին և ստիպում ծնողներին՝ ուտել նրանց միսը: Այո, ոչ մի գազան նման բաներ չի անում:

Հունիսի 9–ին քաղաքը թողնելու կարգադրություն արվեց Կարին քաղաքի հայերին: Հունիսի 19–ին դեպի Բաբերդ ու Երզնկա քշվեց կա-

րինցիների երկրորդ քարավանը՝ շուրջ 10.000 մարդ: Երզնկայի դաշտում կազմակերպվեց ահավոր ջարդ, և խոշտանգվեցին հազարավոր մարդիկ: Կենդանի մնացածներին տարան Քեմախի կիրճը և այնտեղ կոտորեցին:

Կարինցիների երրորդ քարավանը՝ 8.000 մարդ, քաղաքից դուրս բերվեց հունիսի 24–ին և Քեմախի կիրճում արժանացավ նախորդների ճակատագրին:

Հուլիսի 3–ին ճակատագրի նույն ճանապարհով գնաց կարինցիների չորրորդ քարավանը՝ 9.000 հոգի: Վերջին՝ հինգերորդ քարավանը՝ 7.000 հոգի, դուրս բերվեց հուլիսի 18–ին, որոնց թվում էր նաև Կարինի հոգևոր առաջնորդ Սմբատ եպ. Սաաթետյանը, և որոնց կոտորեցին Դերջանի մոտ: Միայն շատ քչերը հասան Ուրֆա և Հալեպ: 1915 թ. նոյեմբերի սկզբին տեղահանեցին ու ոչնչացրին նաև Կարինի հայ կաթոլիկներին:

Այդպիսով Կարինը լիովին հայազրկվեց: Մնացին միայն 20 արհեստավորներ, 50 որմնադիրներ և ամերիկյան միսիոներ Ստեպլտոնի մոտ ապաստանած 18 աղջիկներ, սակայն սրանց մեծ մասին էլ ոչնչացրին: Երբ ռուսական զորքերը մտան Կարին՝ հայտնաբերեցին 22 հայ աղջիկների միայն:

Ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ուներ Տրապիզոնի և Սամսունի ծովեզրյա շրջանը, որտեղ 1915–ի հունվարին արդեն երևացել են ռուսական ռազմանավեր: Տրապիզոնում ու նրա շրջակայքում բնակվում էին շուրջ 60.000 հայեր, իսկ բուն քաղաքում՝ 14.000: Տրապիզոնահայության մասսայական տեղահանությունն ու ջարդը գլխավորում էր Ջեմալ Ազմի փաշան: Բռնի տեղահանությունը կատարվեց 1915 թ. հունիսի 17–ից մինչև հուլիսի 6–ը: Հայերին քաղաքից դուրս էին բերում մի քանի հարյուր հոգուց կազմված խմբերով ու Երզնկայի ճանապարհին կոտորում: Շատերին էլ խեղդամահ արեցին ծովում: Հատուկ նավերով հատկապես տղամարդկանց հեռացրին ծովափից ու բոլորին խեղդամահ արեցին: Տեղահանության ժամանակ հայտարարվեց, որ հղի կանայք կարող են մնալ, բայց հետո նրանց բոլորին նույնպես ծովը թափեցին: Թուրքերը բարբարոսաբար պարկերի մեջ լցրին ու ծովը թափեցին նաև հույն միտրոպոլիտ Խրիստաֆի հավաքած 600 հայ մանուկներին, որոնցից միայն 8–ը փրկվեցին: Տրապիզոնի ու նրա շրջակայքի տեղահանված հայությունը ոչնչացվեց Գյումուշխանե–Երզնկա ճանապարհին: Թեքքե կայանում 100–ի չափ հայ տղամարդիկ ըմբոստացան, զինաթափեցին պահակներին ու բարձրացան լեռները, իսկ

աքսորյալների քարավանների մնացորդներն իրենց վախճանը գտան դարձյալ Քեմախի կիրճում:

Գտնվեցին, սակայն, փոքր թվով տրապիզոնցիներ, որոնք հերոսական գոտեմարտ մղեցին թուրքերի դեմ: Այսպես՝ բաց ծով դուրս բերված 40 հայ տղամարդիկ հարձակվեցին իրենց ուղեկցող ոստիկանների վրա ու բոլորին ոչնչացրին, սակայն իրենք էլ գրեթե բոլորը զոհվեցին՝ փրկվեցին երկու հոգի: Տրապիզոնում հնչակյան Հարություն Սարգսյանը իր Գուրգեն և Պարույր որդիների հետ փորձեց սպանել Ջեմալ Ազմիին և ոտքի կանգնեցնել հայերին, բայց նրանք ժամանակից շուտ ձերբակալվեցին ու սպանվեցին: Սեդրակ Սեյրանյանն ու Երվանդ Տերտերյանը ամրացան իրենց տներում, թուրքերի դեմ կռվեցին մինչև վերջին փամփուշտը և անձնասպան եղան:

Շուրջ 600 խիզախ տրապիզոնցիներ բարձրացան լեռները և երկար ժամանակ մարտնչեցին թուրքերի դեմ՝ Ջիլ Օհաննեսի, Միքայել Ջեյթունճյանի, Հակոբ Քեհյանի գլխավորությամբ: Միայն 1923 թվականին նրանց հաջողվեց նավակներով դուրս գալ ռուսական ափ:

Այսպիսով՝ շուրջ 60 հազար տրապիզոնահայերից փրկվեցին ընդամենը 2500 հոգի:

Սամսունի սանջակում կար 30.000 հայություն, իսկ քաղաքում՝ 5000: Այստեղ տեղահանության հրամանն ստացվեց 1915–ի հուլիսի սկզբին, որոնց քշեցին դեպի Ամասիա և Թոքատ, ու ճանապարհին կոտորեցին: Շատերը տանջանքներից փրկվելու համար իրենց նետում էին Եփրատը: Թուրքերը ցուցադրաբար 5 տարվա բանտարկության դատապարտեցին սամսունցի մի հայ կնոջ, որն իր մանկահասակ որդուն նետել էր Եփրատ գետը:

Տարոն: Պատմական Տարոնը Բիթլիսի (Բաղեշ) վիլայեթն էր, որն ուներ 398.000 բնակիչ, որից հայեր՝ 180.000, ասորիներ՝ 15.000, 40.000 թուրքեր, 140.000 քրդեր, 10.000 չերքեզներ, 8000 պարսիկ, 5000 եզդի: Հարյուրավոր գյուղերից բացի 40.000 հայեր ապրում էին Բիթլիսում, 80.000՝ Մուշում, 18.000՝ Սղերդում, 10.000՝ Մանազկերտում: Բիթլիսի վիլայեթի մեջ էր մտնում նաև հերոսական Սասունը:

Ի տարբերություն մյուս վայրերի, թուրք մարդակերները որոշել էին տարոնահայությանը բնաջնջել տեղում, առանց տարագրության, որովհետև Մուշն ու Սասունը հայ ազատագրական շարժման կենտրոնատեղին էին և անցյալում շատ կորուստներ էին պատճառել թշնամուն:

Պատերազմի նախօրյակին Բիթլիսի նահանգապետն էր կատաղի իթթիհատական Մուստաֆա Աբդուլ Հալըգը, իսկ Մուշի գավառապետն էր ջարդարար Սերվեթ բեյը: Նրանք իրենց գործակիցների հետ միասին Տարոնի աշխարհը բաժանեցին 20 շրջանի և յուրաքանչյուրի համար առանձնացրին հրոսակախմբեր՝ հայերին ոչնչացնելու առաջադրանքով:

Տարոնում մասսայական ձերբակալություններն սկսվեցին 1915 թ. գարնանը: Մայիսի սկզբին Վանի ազատագրումից հետո Զեյթունը շարժվեց դեպի Սղերդ ու Բիթլիս և սկսեց կոտորել բնակչությանը:

Թուրք–քրդական ուժերը մեկ օրում՝ 1915 թ. հունիսի 28–ին, ոչնչացրին Մշո դաշտի 125 հայաբնակ գյուղեր: Մուշ քաղաքի հայերը Հաջի Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ դիմում են ինքնապաշտպանության՝ հակառակ հովվապետ Վարդան վրդ. Հակոբյանի հնազանդության հորդորների:

Սեբաստիա: Սվազի (Սեբաստիա) վիլայեթում կար 370.000 հայություն: Կուսակալն էր մոլեռանդ իթթիհատական Մուամմերը: 1915 թ. հունիսի 3–ին ձերբակալվեցին 3500 հայեր: Տեղահանության հրամանը տրվեց հունիսի 18–ին: Սեբաստիա քաղաքի շուրջ 36.000 հայությունը տեղահանվեց 15 օրում: Նրանց տանում էին դեպի Մոսուլ և Դեր–Զոր: Սեբաստիա–Խարբերդ խճուղու վրա գտնվող Հասան–չելեպի մեծ գյուղը դարձավ իսկական սպանդանոց: Հայերին սպանում էին մանգաղներով, մահակներով, կացնով, ծողերով, սղոցներով: Բարեբախտություն էր համարվում գնդակով սպանվելը, և դահիճները մի գնդակի համար երկու ոսկի էին պահանջում: Մի քարավանից 4000 երեխաների թուրքերը թափեցին Եփրատը:

Սեբաստիայի Մարզվան քաղաքի 22.000 բնակիչներից 12.000–ը հայեր էին: Հունիսի վերջին նրանք բոլորը փոքր խմբերով տեղահանվեցին և ոչնչացվեցին: Տարագրվեց նաև Ամասիայի հայ բնակչությունը:

Բնաջնջվեցին ավելի քան 300.000 սեբաստահայեր:

Խարբերդ: Խարբերդը Մեծ Հայքի Ծոփաց աշխարհի հանձիթ գավառն էր, որը 19–րդ դարում դարձավ Մամուրեթ–ուլ–Ազիզի կուսակալություն՝ Մեզիրե կենտրոնով, որից ոչ հեռու գտնվում էր գլխավոր քաղաքը՝ Խարբերդը: Կուսակալությունն ուներ երեք սանջակ՝ Խարբերդ, Դերսիմ, Մալաթիա, որոնք բաժանված էին գավառակների: Հայկական գավառակներից (վիճակ) էին Ակնը, Արաբկիրը և այլն:

Խարբերդի վիլայեթն ուներ 575.000 բնակիչ, որից հայեր էին 168.000–ը, ասորիներ՝ 5000, հույներ՝ 1000: Մնացածը մահմեդականներ էին, որից թուրքեր՝ 126.000, քրդեր՝ 95.000, պարսիկներ՝ 180.000:

Խարբերդ քաղաքն ուներ 20.000 բնակիչ, որից 10.000–ը՝ հայեր: Մալաթիայի 35.000 բնակչության 2/5–ը հայեր էին, 3/5–ը՝ թուրքեր ու քրդեր: Խարբերդի վիլայեթն ուներ 360 գյուղ, որից 65–ը՝ հայաբնակ:

Պատերազմի սկզբում Խարբերդահայությունը նույնպես ենթարկվեց զորահավաքի և պատերազմական տուրքի կամայականություններին: Աշխատանքի տանելու պատրվակով Խարբերդի 4000 հայ զինվորների խմբերով քշեցին դեպի Մեզիրե և բոլորին սրախողխող արեցին:

1915 թ. ապրիլ–մայիս ամիսներին Խարբերդում տեղի ունեցան մասսայական ձերբակալություններ: Բանտ նետվեցին Թլկատինցին (Հովհ. Հարությունյան), Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), թրքագետ–պատմաբան Նիկողոս Թենեքեջյանը: Քոլեջի տեսուչ «Խարբերդի Սոկրատ» Հովհ. Պուճիգանյանի գանգը թուրքերը փշրեցին, ասելով, թե նրա ռումբը այնտեղ է: Ձերբակալվածներին մերկացնում էին ու ծեծում, ածելիով կտրտում մարմինը և աղ ու քացախ ցանում, մազերն ու եղունգները քաշում, պայտում, ցից հանում, տանջամահ անում (Հուշամատյան Մեծ եղեռնի, էջ 383): Երբ մի գիշեր ոստիկանները փորձեցին դուրս տանել բանտարկյալներին, նրանք հրկիզեցին իրենց անկողինները և հրդեհ բռնկվեց, նահատակվեցին 37 հոգի: Կենդանի մնացածներին, այդ թվում նաև Երուխանին ու Թլկատինցուն, թուրքերը կացնահարեցին:

1915 թ. հունիսի 25–ին սկսվեց Խարբերդցիների տեղահանությունն ու աքսորը դեպի Ուրֆա: Հուլիսի 1–ին Մեզիրեից դուրս բերվեց առաջին քարավանը՝ 2500 մարդ, որը շարժվեց դեպի Տիգրանակերտ: Տղամարդկանց անմիջապես առանձնացրին ու կոտորեցին: Մնացածները 8 օրից հասան Տիգրանակերտ, իսկ 15 օրից՝ Դեր–Զոր, որտեղ գրեթե բոլորն էլ կոտորվեցին: Հուլիսի 3–ին Խարբերդից շարժվեց երկրորդ քարավանը՝ 3000 հոգի, որը նույն ճակատագրին արժանացավ: Նրանցից Հալեպ հասավ 68 հոգի միայն: Նոյեմբերին տեղի ունեցավ վերջին գաղթը, և Խարբերդում թաքնված մնացին միայն 200 հայեր:

Մալաթիայի 35.000 բնակիչներից 15.000–ը հայեր էին, որոնք նույնպես տեղահանվեցին և ճանապարհին հոշոտվեցին:

Խարբերդում ուժեղ ինքնապաշտպանություն չհաջողվեց կազմակերպել, թեև դիմադրության որոշ փորձեր եղան: Մորենիկ գյուղի մի խումբ երիտասարդներ կռվեցին մինչև վերջին փամփուշտը: Նույնը եղավ Ծոփքի Ս. Նշան կղզում: Քիչ թվով Խարբերդցիներ էլ անցան Դերսիմ և պայքարը շարունակեցին:

Խարբերդի ոսկեղեն դաշտը վերածվեց ավերակների:

Տիգրանակերտ: Դիարբեքիրի (Տիգրանակերտ) 124 հազար հայությունը, թեև շատ հեռու էր ռազմական թատերաբեմից, նույնպես ենթարկվեց ցեղասպանության արհավիրքներին: Դեռևս 1914–ի օգոստոսին թուրքերը հրդեհեցին Դիարբեքիրի շուկան, որի հետևանքով այրվեցին հայերի 1080 խանութներ: Այնուհետև տեղի ունեցավ հայ զինվորների կոտորածը:

1915 թ. ապրիլի 15–ին ձերբակալեցին 300 երիտասարդներ և Հայոց առաջնորդարանից պահանջեցին հանձնել զենքը: Գումարվեց հայոց ազգային ժողով՝ Տիգրանակերտի առաջնորդ Մկրտիչ վրդ. Չլղատյանի նախագահությամբ: Հարցը դրված էր որոշակի՝ ենթարկվե՞լ, թե՞ դիմել ինքնապաշտպանության: Տեղի է ունենում պառակտում. Առաջնորդ Չլղատյանի կողմնակիցները, որոնք դիմադրության կոչ էին անում, պարտություն են կրում, և հաղթանակում է կործանարար գիծը՝ ցուցադրել հավատարմություն իշխանություններին: Այդ դիրքորոշման հեղինակն էր Խաչատուր Տիգրանյանը: Դավաճանների մատնությամբ հավաքվում է եղած զենքը և ինքնապաշտպանության գործը ձախողվում է:

Ապրիլի վերջին–մայիսի սկզբին Դիարբեքիրում, որտեղ բնակվում էին 45.000 հայեր, ձերբակալվեցին 400 մտավորականներ, ապա 11 հազար խաղաղ քաղաքացիներ, որոնք գազանաբար խոշտանգվեցին: Առաջնորդ Մկրտիչ վրդ. Չլղատյանին հանեցին բանտից, պտտեցրին փողոցներով, երեսին մուր քսեցին, ականջներին զանգակներ կախեցին: Հետո տարան մզկիթ, որտեղ մեկ–մեկ քաշեցին նրա ատամները, քունքերին շիկացած երկաթ հպեցին, աքցանով պոկեցին մարմնի մսերը, փորեցին աչքերը և կաթիլ–կաթիլ նավթ լցնելով վրան՝ վառեցին (Ս. Ակունի, էջ 66): Նույն բախտին արժանացավ Տիգրանակերտի կաթոլիկ առաջնորդ Ագդրեաս եպ. Չելեպյանը:

Մայիսի 30–ին Դիարբեքիրից դուրս բերեցին 700 հայերից կազմված մի քարավան, որը մոտակա ձորում ենթարկվեց հրոսակախմբի հարձակմանը և ոչնչացվեց: Հետո նահատակներին հագցրին քրդական հագուստներ և լուսանկարեցին՝ հասկանալի ստոր նպատակներով:

Հուլիս–օգոստոսին տեղահանվեց Դիարբեքիրի ողջ հայությունը, որոնց աքսորում են դեպի Ռաս–ուլ–Այն և Դեր–Զոր, սակայն քչերը միայն տեղ հասան: Միայն Պիկաքլան ձորում, Ֆայեզ էլ Ղոսեյնի վկայությամբ, ջարդի ենթարկվեցին 24 հազար հայեր (Ֆայեզ էլ Ղոսեյն, Հերոսական հայության անցյալեն, էջ 39–40): Սհավոր ջարդ տեղի ունեցավ Ռաս–ուլ–Այնի շրջանում՝ չերքեզների ձեռքով: Նրանք հոշոտված

հայուհիների մազերից 25 մետրանոց պարան հյուսեցին և ուղարկեցին Դիարբեքիրի դահիճ Ֆեյզի բեյին:

Միայն Տիգրանակերտ քաղաքից նահատակվեցին 36.000, իսկ շրջաններից՝ 45.000 մարդ: Պատմությունը պահպանել է մի քանի անհատների՝ Մարտինցի Մարտոյի, Հագրացի Կիրակոսի, Զավզավաթչի Մնճոյի և Իսպիրի որդի Մարտոյի անունները, որոնք զենք վերցրին, կռվեցին ամիսներով, տարիներով, դիմադրեցին մի քանի վաշտի և մեծ կորուստներ պատճառեցին անարգ թշնամուն: Սակայն, ցավոք, դրանք անհատներ էին միայն:

Դիարբեքիրի վիլայեթի հայության տարագրմամբ ու ոչնչացմամբ ամայացավ Արևմտյան Հայաստանի գողտրիկ անկյուններից մեկը: Սակայն թուրքական յաթաղանը մահ էր սփռում նաև Թուրքիայի մնացած մասերում բնակվող հայ զանգվածների մեջ:

Արևմտյան և կենտրոնական Անատոլիա: Տարագրության և կոտորածի ենթարկվեցին նաև Թուրքիայի մյուս մասերում բնակվող և փոքրամասնություն կազմող հայերը, որոնք որևէ վտանգ չէին ներկայացնում Օսմանյան կայսրության համար: Իզմիդի (Նիկոմիդիա) սանջակում ապրում էին 71.000, Բրուսայի (Բուրսա) վիլայեթում՝ 90.000, Այդնի (Իզմիր) վիլայեթում՝ 27.000, Անկարայի (Էնկյուրի) վիլայեթում՝ 67.500, Կոնիայի վիլայեթում՝ 25.000, Կասթեմունիի վիլայեթում՝ 14.000 հայեր (Լեփսիուս, էջ 133):

Իզմիդի և Բրուսայի հայության տարագրությունը տեղի ունեցավ 1915 թ. հուլիս–օգոստոս ամիսներին: Բութանիայի 40–ից ավելի գյուղերում, Պարտիզակում, Արմաշում և Ադաբազարում չտեսնված բռնություններ գործադրվեցին: Հուլիսի 30–ին տարագրվեցին և խոշտանգվեցին Պարտիզակի Օվաճըգի և Տեոնկելի շուրջ 20.000 հայեր: *Էսկիշեհիր–Իզմիդ ճանապարհով տարագրվեցին 40–50.000 հայեր:*

Պարտիզակցի 250 երիտասարդներ Զալըմ Կարապետի գլխավորությամբ բարձրացան լեռները և մի քանի ամիս անձնազոհ պայքար մղեցին: Նրանց հետևեց Օվաճըգցի Տոնիկի 60 հոգիանոց խումբը, որը կռվեց մինչև 1920 թ. օգոստոսի 1–ը:

Հուլիսի վերջերին տարագրեցին Անկարայի վիլայեթի 15–70 տարեկան տղամարդկանց, որոնց կոտորեցին Անկարայից 6–7 ժամվա հեռավորության վրա մի վայրում: Դրանից հետո 6–7 հարյուրանոց քարավաններով տարագրեցին մնացած բնակչությանը: Աքսորեցին և կոտորեցին նաև Անկարայի ու նրա շրջակայքի 2000 տուն հայ կաթոլիկնե-

ին: Հուլիս–օգոստոսին Անկարայի վիլայեթում հոշոտվեցին 42.000 հայեր: Անկարայի կուսակալ Աթքֆը նույնն արեց Կասթեմունիում, երբ այստեղ նշանակվեց նույն պաշտոնով:

Աննկարագրելի ջարդի ենթարկվեցին Յոզղաթի 75.000 հայերը, որոնցից 12.500–ը բնակվում էին քաղաքում, 63.000–ը՝ շրջակա 48 հայկական գյուղերում: Այստեղ մյութեսարիֆն էր Քեմալ բեյը՝ Զնդեթի աներորդին: Յոզղաթի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Դանիելյանը վճռական գոտեմարտի փոխարեն հնազանդության կոչ արեց և ինքն էլ նահատակվեց: Յոզղաթի հայության ջարդն սկսվեց հուլիսի սկզբին: Չագմագ գյուղում թուրքերը մորթեցին հաղթահասակ Մանուկ Թավլյանին և խմեցին նրա արյունը՝ «անոր պես զորավոր ըլլալու համար» (Հուշամատյան, էջ 325): Քեմալ բեյի հրամանով օգոստոսի 1–ին Յոզղաթի 10.000 հայերի քշեցին Յարադարասի ձորը և դիոլ–զուռնայի նվագածության տակ նախճիր կատարեցին: Նա միակ ոճրագործն էր, որ պատերազմից հետո Պոլսում կախաղան բարձրացվեց:

Եղեռնի ենթարկվեց յոզղաթահայության շուրջ 97 տոկոսը:

Պատերազմի նախօրյակին Կեսարիայի (Կայսերի) սանջակում, որն առանձին վարչական միավոր էր և ուղղակիորեն ենթարկվում էր Բ. Դռանը, կային 47.500 հայեր, որոնցից 15.000–ը՝ քաղաքում, մնացածները՝ շրջակա 24 գյուղերում: Այստեղ հալածանքներն սկսվեցին 1915–ի փետրվարին, որոնք ավելի սաստկացան ապրիլին: Ինչպես գրում է Վ. Կեսարացին, երբ դարբնվում էին հայ ժողովրդի գոյությունը արմատախիլ անող անօրինակ ոճիրներ, ժողովրդի ղեկավար գործիչներից շատ քչերը գուշակեցին վերապահված անողոք ճակատագիրը: Բոլորը զգուշության, համբերության ոգի էին քարոզում (Հուշամատյան, էջ 343): Խիզախ հնչակյան Կարապետ Չիյտեմյանը պահանջեց դիմել կազմակերպված դիմադրության, բայց հավանություն չստացավ: Կախաղան բարձրացող Կ. Չիյտեմյանին մնում էր շպրտել դահիճների երեսին, որ եթե իր ընկերները համաձայնեին իր հետ, ապա տեղերը փոխված կլինեին: Գտնվեցին նաև հայ դավաճաններ՝ Գևորգ Ելանջյան, Միհրան Յազջյան, Հովակիմ Եզեկիելյան, Մինաս Մինասյան, իսլամացածներ Սարգիս Տոնիկյան, Կյուլպենկ Պետրոսյան, որոնք ոչ միայն մատնեցին իրենց ընկերներին, այլև թուրքերին ցույց տվեցին պահված զենքերի տեղերը: Մայիս–նոյեմբեր ամիսներին 17 քարավաններով կեսարահայությունը տարագրվեց ու բնաջնջվեց: Հալեպ և Դեր–Զոր հասան 6000 մարդ (Արշակ Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, հ. Բ, Գահիրե, 1937, էջ 1409):

Բուրսայի վիլայեթի 78 հազար հայերից փրկվեցին 28.300–ը, Կոնիայի 25 հազարից՝ 10.000–ը: Նման որոշ «մեղմության» պատճառն այն էր, որ հիշյալ վայրերն իրենք աքսորավայրեր էին:

Կիլիկիա: Կիլիկիայի հայերը, որոնց թիվը կազմում էր 205.000, ապրում էին Ադանայի վիլայեթում և Հալեպի վիլայեթի Մարաշի սանջակում: Այստեղ թուրքերը 78.000 էին: Պատերազմի սկզբում Զեյթունը, որտեղ կար 28 հազար բնակիչ, դարձավ զինակոչիկների հավաքակայան: Այստեղ գերմանական հյուպատոսն էր Ռյոսլերը: Դեռևս 1914–ի օգոստոսին 600 զինվորներով Զեյթուն եկավ Մարաշի մյութեսարիֆ Հայդարը՝ զորահավաքն ու զինաթափումը իրականացնելու նպատակով: Սկսելով խժդժություններն ու բռնությունները՝ թուրքերը ձերբակալեցին և ապա սպանեցին զեյթունցիների համայնքի ավագ Նազարեթ Չաուշին: Զեյթունի Սահակ կաթողիկոսի հորդորների հետևանքով քաջարի զեյթունցիները, չնչին բացառությամբ, այս անգամ ինքնապաշտպանության չդիմեցին: 1915 թ. մարտի կեսերից սկսվեց Զեյթունի տեղահանությունը: Քաղաքի երևելիներին ձերբակալելուց հետո մարտի 23–ին Զեյթունից ու նրա շրջակայքից տարագրվեցին 18 հազար զեյթունցիներ: Մայիսի կեսերին Զեյթունում մնաց ընդամենը... 6 արհեստավոր հայ, իսկ քաղաքը սպանված հարյուրապետի անունով վերանվանվեց Սուլեյմանլի: Զեյթունցիներին քշեցին դեպի Դեր–Զոր և Կոնիա, և նրանք նույնպես ապրեցին տարագրության բոլոր սարսափները:

1915 թ. ապրիլ–հուլիս ամիսներին Ադանայի վիլայեթի և Մարաշի սանջակի հայկական գյուղերն ու քաղաքները դատարկվեցին հայերից: Ընդհանուր առմամբ Կիլիկիայից տարագրվեցին 100 հազարից ավելի հայեր: Դատարկված հայկական բնակավայրերն անմիջապես բնակեցվում էին մահմեդականներով:

Հալեպի վիլայեթում հայերի տարագրությունն սկսվեց 1915 թ. մայիսին: Իրար հետևից հայաթափվեցին Մարաշը, Այնթապը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսապը, Ուրֆան: Այստեղից ընդհանուր առմամբ տարագրվեց 200.000 հայ:

Ջարդի ենթարկվեցին նաև Եվրոպական Թուրքիայի հայերը: Ադրիանապոլսի (Էդիրնե) վիլայեթի, Ռոդոսթոյի և Հալիպոլիի 27.500 հայերից մնացին 7000–ը:

Եղեռնի ալիքը համեմատաբար մեղմ էր Կ. Պոլսում և Զմյուռնիայում, որոնք միջազգային նավահանգիստներ էին, որոնցում շատ էին օտարերկրյա ներկայացուցչությունները, ուստի երիտթուրքերը, հան-

գիստ թողնելով այդ քաղաքների հայ ազգաբնակչությանը և բավարարվելով միայն մտավորականության խողխողմամբ, փորձում էին դրանով շղարշել վիլայեթներում ոթած արյան գետերը: Սակայն դա էլ տնական չէր. զմյուռնահայությունը հետագայում արտաքսվեց ու ոչնչացվեց քեմալականների ձեռքով:

Ընդհանուր առմամբ 1915–1916 թվականներին արևմտահայությունը հիմնականում տեղահանված էր ու ոչնչացված: Այդ առումով ռուսական և եվրոպական դեսպանորդների զեկուցագրերը իրենց արտաքին գործերի նախարարներին՝ Փոքր Ասիան հայերից լիովին դատարկված լինելու մասին, ճիշտ ու ճիշտ համապատասխանում էին իրականությանը (Մ. Ներսիսյան, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 371):

ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԱՔՍՈՐԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Տեղահանված հայությունը աքսորվում էր դեպի Միջագետքի անապատները՝ հատկապես Ռաս–էլ–Այն (Ռես–ուլ–Այն) ու Դեր–Զոր (Դեյր–էզ–Զոր): Ըստ Արամ Անտոնյանի տվյալների՝ միայն տիֆից Իսլահիեում մահացավ 150.000, Կատմայում՝ 60.000, Պապում՝ 80.000, Մեսքենեում՝ 100.000 մարդ (Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 18–19): Օրեցօր հալվում էր նաև Հալեպում կուտակված հայությունը: Այստեղ գերեզմանոց էին տանում նաև դեռևս կենդանության նշաններ ցույց տվող մարդկանց (Հայերի ցեղասպանությունը, էջ 286):

Այնուհետև սկսվեց անապատներ աքսորված հայության բեկորների մասսայական ոչնչացումը: Առաջին մեծ նախճիրը տեղի ունեցավ Ռաս–ուլ–Այնում, որը գտնվում էր Եփրատի վրա և բնակեցված էր չեչեններով: 1916 թվականի սկզբին այստեղ էին հավաքվել շուրջ 50.000 տարագրյալ հայեր: Սկզբնական շրջանում կայմակամ Յուսուֆ Զիա բեյը, որը դեմ էր ցեղասպանությանը, նպաստում էր հայերին վրաններում տեղավորելուն և նրանց աշխատանքով ապահովելուն: Սակայն 1916 թվականի փետրվարին այստեղ է գալիս Ադանայի կուսակալ նշանակված ոչ անհայտ Ջևդեթ բեյը և հրամայում է բոլորին կոտորել: Հրամանը չկատարող կայմակամը պաշտոնանկ արվեց, և նրան փոխարինեց արյունարբու Քերիմ Ռեֆիկ բեյը, որը մարտի 17–ից սկսեց հայ գաղթականների նոր տեղահանությունն ու կոտորածը: Այդ գործը անմիջականորեն

հանձնարարվեց չեչեն ցեղապետ Արսլան բեյին: Մարտ–հունիս ամիսներին հայերը Ռաս–ուլ–Այնից քշվեցին դեպի Շեդդատե ու ճանապարհին գրեթե բոլորը հոշոտվեցին: Հրաման էր տրված չխնայել ոչ ոքի: Ռաս–ուլ–Այնում և նրա շրջակայքում սպանվեցին 70.000 հայեր:

Ինքիլլիում էին հավաքվել 50.000 հայեր՝ հիմնականում կանայք և երեխաներ, Բաղդադի երկաթուղու շինարարության վրա աշխատելու համար: Ջևդեթի հրամանով նրանք աքսորվեցին Մարաշի և Այնթապի ճանապարհով ու մորթոտվեցին: Նրանցից հետո քայլողները ծառերին իրենց մազերից կախված էին տեսնում տասնյակ մերկ աղջիկների (Արամ Անտոնյան, էջ 62):

Սակայն ամենասարսափելին կատարվեց Դեր–Զորում: Այդ անապատային ոչ մեծ քաղաքը գտնվում էր Եփրատի աջ ափին, որտեղ բնակվում էին արաբներ, չերքեզներ ու չեչեններ: 1915 թվականի մայիսին Դեր–Զոր հասան առաջին հայ աքսորյալները, որոնք զեյթունցիներն էին: Նրանց հետևեցին նորանոր քարավաններ: Դեր–Զորի կառավարիչն էր արաբ Ալի–Սուադը, որը նույնպես դեմ էր հայերին կոտորելուն: Նրա աջակցությամբ շուրջ 350–400 հազար տարագիր հայերի բնակավայր դարձավ Դեր–Զորից կես ժամվա ճանապարհի վրա գտնվող անապատը, որտեղ հայերը վրաններ խփեցին, ու կարծեք թե ավազուտային անապատը կենդանություն առավ: Երբ Ալի–Սուադից պահանջեցին անապատի խորքը քշել ու ոչնչացնել հայերին, վերջինս կտրականապես հրաժարվեց, ուստի անմիջապես պաշտոնանկ արվեց: Դեր–Զորի կառավարիչ նշանակվեց Կեսարիայի շրջանում իր գազանություններով աչքի ընկած չերքեզ Սալահ Զեքի բեյը: Մեծաքանակ հայ տարագիրներ էին կուտակված Հալեպի վիլայեթի Պապ, Մաարա, Մումբուջ, Մեսքենե, Տիփսի, Աբուսհարաթ, Համամ, Ռաքքա, Սեբվա և այլ բնակավայրերում: Երբ թուրքական կառավարությունը հրահանգեց նրանց բոլորին քշել Դեր–Զոր և ոչնչացնել, Հալեպի արաբ կուսակալ Ջելալ բեյը հայտարարեց. «Ես այս նահանգի վալին եմ, չեմ կարող նրա դահիճը լինել» (Ա. Շիրակյան, էջ 42): Նրա պաշտոնազրկումից հետո կուսակալ նշանակվեց հայատյաց Բեքիր Սամի բեյը, որին էլ ավելի ուշ փոխարինեց գազանաբարո Աբդուլհալիգ բեյը՝ օգնական ունենալով Թալեաթից հատուկ հրահանգավորված Նուրի բեյին: Այդ նրանք էին, որ ջանադրաբար իրականացրին Հալեպի վիլայեթից հայերին Դեր–Զոր քշելու և ամենավայրագ մեթոդներով ոչնչացնելու ողջ գործողությունը,

որոնց թիվը հասավ 200.000–ի: Նրանցից հրաշքով փրկվեցին 5–6 հազարը միայն (Հուշամատյան, էջ 531–532):

1916 թվականի մայիսի սկզբին Զեքի բեյը ձեռնամուխ եղավ այդ ժամանակ Դեր–Զորում գտնվող շուրջ 200.000 հայերին մաս առ մաս բնաջնջելու գործին: Հայտարարելով, թե իբր աքսորյալները շուտով վերադառնալու են իրենց բնակավայրերը, նա հրահանգեց նախապատրաստվել: Կազմվեց 1000 հայ երիտասարդներից բաղկացած ջոկատ, որն ուղարկվեց իբր ճանապարհները կարգի գցելու նպատակով, սակայն վայրագորեն ոչնչացվեց: Այնուհետև աքսորյալներին կարգադրվեց Սուվարի, Շեղադիեի, Ռաս–ուլ–Այնի վրայով «հետ վերադառնալ» չորս մեծ քարավաններով, իրարից հինգ օրվա տարբերությամբ: Առաջին քարավանը Դեր–Զորից դուրս բերվեց 1916 թ. մայիսի 16–ին: Հասնելով Խաբուրի գետափը՝ նրանք ենթարկվեցին ոստիկանների ու շրջակա ցեղերի հարձակմանը: Տղամարդկանց, կանանց, երեխաներին պարզապես մորթում էին ու գցում գետը, խաչում էին, անդամահատում, կենդանի թաղում: Գազանություններով աչքի ընկավ հատկապես չեչեն Մահմադ բեյը: Նման քստմնելի եղանակներով Դեր–Զորի շրջակայքում ոչնչացվեցին ավելի քան 400.000 հայեր (Գ. Պալաքյան, Հայ գողգոթան, էջ 62):

Ընդհանուր առմամբ 1915 թվականին տարագրվեց շուրջ մեկուկես միլիոն արևմտահայություն, որից 800.000–ը կոտորվեց դեռ ճանապարհին, իսկ մնացածները բանջնջվեցին արաբական անապատներում: Փրկվեցին միայն շատ քչերը, այն էլ արաբ ժողովրդի բարյացակամության շնորհիվ: Այդ բեկորները արաբների օգնությամբ իրենց գաղթավայրերը հիմնեցին Դեր–Զորում, Ռաքքայում, Հատիչեում, Ջեզիրեում և այլ վայրերում:

Հայ գաղթականությունը: Շուրջ մեկ միլիոն արևմտահայեր էլ հարկադրված բռնեցին գաղթի արհավիրքներով լի ճանապարհը: Նրանցից մոտ 400 հազարը ապաստան գտավ Կովկասում և Ռուսաստանում, իսկ մնացածները՝ Մերձավոր Արևելքի երկրներում, Եգիպտոսում, Հունաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ–ում և այլ երկրներում: Ամենուրեք նրանց հետապնդում էին սովն ու համաճարակները:

Անօգնական հայ գաղթականների վիճակը մեղմացնելու նպատակով որոշ գործ կատարեց Ռուսաստանը: Արտգործնախարար Սազոնովը խնդիր դրեց, որ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան համատեղ տրամադրեն մեկ միլիոն ֆրանկ և նվիրատվության ձևով փոխանցեն Պոլսի ամերիկյան դեսպանին՝ հայոց պատրիարքի միջոցով փախստականներին օգնելու համար: Ֆրանսիական կառավարությունը սկզբունքորեն համաձայնեց, սակայն Անգլիան խուսանավեց: Այդ նախաձեռնությունն, այդպիսով, մնաց անհետևանք: Որոշ գումար բաց թողեց միայն Ռուսաստանը, որը չնչին էր կարիքների համեմատ: Ռուսաստանում ստեղծվեցին օգնության բազմաթիվ կոմիտեներ: Այդպիսի օրգաններ ստեղծվեցին նաև արտասահմանում: Ընդհանուր առմամբ հայ գաղթականներին օգնելու համար ռուսահայությունը տվեց 4.580.000 ռուբլի ոսկով, գաղութահայությունը՝ 620.000 ռուբլի, իսկ ցարական կառավարությունը՝ 1.700.000 ռուբլի: Պարզաբանենք, սակայն, որ այդ գումարը նախատեսված էր ոչ թե միայն հայ, այլ նաև մյուս ազգություններին պատկանող գաղթականության համար: Ինչպես դիպուկ կերպով գրել է պրոֆ. Մ. Արզումանյանը, եթե միջոցները քիչ էին, ապա դրանց տնօրինողները շատ էին, որն ստեղծում էր կատարյալ քաոս ու չարաշահումների մթնոլորտ (էջ 470): Ծայր էր առել գանձագողությունը, հավաքված միջոցների հանցագործ վատնումն ու շռայլումը:

Հայերի կոտորածը շարունակվում էր հայ փախստականների սովահարությամբ, և միայն քիչ մասին հաջողվեց դուրս գալ այդ ծանր մղձավանջից:

ԵՂԵՌՆԻ ՀԱՆՑԱՎՈՐՆԵՐԸ: ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Նախ՝ Հայոց Մեծ եղեռնի զոհերի թիվը: Ըստ Գիբբոնսի, Լեփսիուսի, Մորգենթաուի, Մանդելշտամի, Ֆայեզ էլ Ղոսեյնի և այլ հետազոտողների տվյալների՝ 1915–1916 թվականներին հայերի կորուստը կազմում էր ավելի քան մեկ միլիոն մարդ: Մինչև պատերազմի ավարտը այդ թիվը հասավ մեկուկես միլիոնի: Հայոց ցեղասպանության սփյուռքահայ հետազոտող Երվանդ Խաչանասյանը «Հայոց թիվը» (Բոստոն, 1965, էջ 21) աշխատության մեջ, ի մի բերելով օտարերկրյա և հայկական բազմաթիվ աղբյուրների հաղորդած տվյալները, գրում է. «Մեծ Եղեռնին հայության նահատակների թիվը նվազագույնը մեկ ու կես միլիոն էր, իսկ ավելի ճիշտ, եթե ընդունենք 2.500.000 իբրև Թուրքիայի ամբողջ հայության քանակ, եղեռնի մեր զոհերի թիվը պետք է հաշվել 1.763.000»:

Արևմտահայության նյութական կորուստները կազմեցին շուրջ 15 միլիարդ ֆրանկ: Ավերվեցին ու ոչնչացվեցին բազմաթիվ դարավոր հուշարձաններ, ձեռագրեր, գրքեր և այլ հոգևոր արժեքներ:

Հայոց Մեծ եղեռնի ամենագլխավոր հանցագործը թուրքական բռնակալությունն էր: Երիտթուրքերը ժառանգեցին ու զարգացրին հայերի բնաջնջման համիդյան մեթոդները: Հիշեցնենք, որ դեռևս 1915–ի օգոստոսի 31–ին Թալեաթը ցինիկորեն հայտարարեց, թե ինքը հայկական հարցի լուծման գործում երեք ամսում ավելի շատ գործ կատարեց, քան Աբդուլ–Համիդը 30 տարում: Նա չէր թաքցնում նաև, որ հայերի բռնագաղթն ու կոտորածը կազմակերպել է Թուրքիայի կառավարությունը: Միաժամանակ երիտթուրքական գործիչները ձգտում էին ամեն կերպ արդարացնել իրենց ցեղասպանական գործողությունները, թմբկահարելով, թե հայերը հեղափոխականներ էին, դավաճաններ, ռուսասերներ: Ջեմալ փաշան ուղղակի գրում է, որ հայ և թուրք ժողովուրդների թշնամության հանցավորը անհիշյալ Մոսկովյան քաղաքականությունն էր (Ջեմալ փաշա, Հայկական հարցը, էջ 53–54):

1915 թվականի մայիսի 23–ին մամուլում հրապարակվեց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի համատեղ հայտարարությունը Հայաստանում տեղի ունեցող հայերի կոտորածների մասին: Որակելով դրանք իբրև հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ, դաշնակցային կառավարությունները հայտարարում են Դռանը, որ նրանք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարում թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչներին (Հայերի ցեղասպանությունը..., էջ 249): Օսմանյան կառավարության՝ 1915 թ. հունիսի 6–ին տված պատասխանը լիովին ժխտում էր ցեղասպանության փաստը, միաժամանակ կեղծ մեղադրանք ներկայացնում հայերին, թե իբր նրանք Անտանտի պետություններից զենք են ստացել, հեղափոխական կազմակերպություններ հիմնել ու ապստամբել, ինչպես նաև կազմակերպել են կամավորական ջոկատներ: Թուրքիայի ներքին գործերի մինիստրությունը, Թալեաթի գլխավորությամբ, շտապեց 1916 թվականին թուրքերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն հրատարակել «Հայկական կոմիտեների ապստամբական շարժումները սահմանադրության հայտարարությունից առաջ և հետո» փաստաթղթերի ժողովածուն, որտեղ կոտորածների ողջ մեղքը բարդվում է հայերի վրա ու հայտարարվում. «Հայերն իրենք են մեղավոր, որ իրենց կոտորել են,

բնաջնջել... Նրանք վտանգավոր էին թուրքական պետության համար, որովհետև համակրում էին ռուսներին, անգլիացիներին ու ֆրանսիացիներին... Անհրաժեշտ էր նրանց երկրի խորքը քշել... Տեղի են ունեցել սոսկ տխրալի ծայրահեղություններ, մի քանի չինովնիկներ թույլ են տվել էքսցեսներ, բայց կպատժվեն» (Հուշամատյան, էջ 1093): Հասկանալի է, որ այդ կեղծագիրն ուներ բացահայտ զրպարտչական բնույթ:

Պատմագրության մեջ դրվել է այն հարցը, թե թուրք ժողովուրդը մեղք ունի՞ հայկական եղեռնի մեջ, թե՝ ոչ: Պետք է ասել, որ սփյուռքահայ գրեթե բոլոր հեղինակները, որոնց մի ստվար մասը նաև դեպքերին ականատես–ժամանակակիցներ են, հարցին տալիս են միանշանակ դրական պատասխան՝ այո՛, թուրք ժողովուրդն ամբողջությամբ մեղսակից է մեծ ոճրին: Խորհրդահայ պատմագրության մեջ «մարքսիստական մեթոդոլոգիայով» գինված որոշ պատմաբաններ անօգուտ ճիգեր են թափել «թուրք աշխատավոր ժողովրդին» առանձնացնել «ոճրագործ կառավարությունից» ու նրա վրայից վերցնել պատասխանատվությունը, նույնիսկ նրան ներկայացնել իբրև տառապյալ հայերի բարերար: Մեր կարծիքով, որոշ վերապահումներով ընդունելի է պրոֆ. Մ. Արզումանյանի մոտեցումը: Նա գրում է. «Իհարկե, սխալ կլինի հավասարության նշան դնել թուրքական բռնակալ կառավարողների, իշխող դասակարգերի և աշխատավոր մասսաների մեջ: Վերջիններս իրենք էին ճնշվում սեփական կեղեքիչներից, իսկ հայկական կոտորածների ժամանակ էլ եղան դեպքեր, երբ նրանք այս կամ այն օգնությունը կազմակերպեցին տարաբախտ հայերին... բայց կարեկցանքի ու օգնության առանձին դեպքերը եղանակ չստեղծեցին, և մեծ ոճիրը կազմակերպվեց հետամնաց ու մոլեռանդ թուրք ժողովրդի, ինչպես նաև մնացած մուսուլմանների (չերքեզների, քրդերի և մյուսների) մասնակցությամբ...

Թուրք ժողովուրդը պետք է իր մեղքը հատուցի նրանով, որ դատապարտի հայկական կոտորածները, պատժի նրա հանցավորներին և ուղղի պատմական անարդարությունը» (Մ. Արզումանյան, էջ 513–515):

Հայկական եղեռնի երկրորդ գլխավոր հանցավորն ու պատասխանատուն իմպերիալիստական Գերմանիան էր, որը հովանավորում ու աջակցում էր Թուրքիային: Գերմանիան նպատակ ուներ ռուսական կողմնորոշում ունեցող հայերին քշել դեպի արաբական անապատները և նրանց օգտագործել, իբրև բանվորական ուժ Բաղդադի երկաթուղու վրա: Եվ իզուր չէ, որ սփյուռքահայ մի շարք հեղինակներ հայերի բնաջնջումը սահմանում են «Գերմանական մեթոդ–թուրքական գործե-

լակերպ» արտահայտությամբ: Գերմանական այդ ծրագիրն էր, որ հետագայում կատարելագործեցին ֆաշիստները (Զոն Կիրակոսյան, էջ 349): Այո՛, փաստերը վկայում են, որ հայերին տեղահանելու և Միջագետքի անապատները քշելու գաղափարը թուրքերին հուշել էին գերմանացիները: Այդ ծրագրի իրականացման գործում քստմնելի դեր կատարեցին Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը, Հալեպի հյուպատոս Ռյոսլերը և ուրիշներ: Դիպուկ է նկատել Գր. Պալաքյանը, թե Թուրքիայում գտնվող գերմանացի բոլոր սպաները, հազվագյուտ բացառությամբ, թուրքերի չափ հայատյաց էին (Գր. Պալաքյան, էջ 34–35):

1915 թ. հուլիսին հայերի բնաջնջման դեմ բողոքով հանդես եկավ Հռոմի Բենեդիկտ 15–րդ պապը: Այդ առթիվ նա սեպտեմբերին հատուկ նամակ հասցեագրեց սուլթանին, որը, սակայն, մնաց անպատասխան:

Տերությունների բարձրագոչ խոստումներն ու հայտարարությունները, սակայն, մնում էին սոսկ որպես այդպիսիք: Անգլիական կառավարությունը հրաժարվեց անգամ մասնակցել տարագիր արևմտահայությանը նյութական օգնություն ցույց տալու նպատակով 1916 թ. հունվարին Ռուսաստանի նախաձեռնած ծրագրին, ըստ որի՝ Մեծ Բրիտանիային հատկացվում էր 20 հազար ֆունտ ստեռլինգի մասնաբաժին: Իսկ բրիտանական կառավարության հրաժարումը ենթադրում էր նաև ֆրանսիական կառավարության հրաժարում, որովհետև նա իր մասնակցությունը պայմանավորել էր միայն անգլիական կողմի մասնակցությամբ:

Ինչպես գրում է նորագույն հետազոտող Լ. Հովհաննիսյանը, դիվանագիտական բողոքներն ու հայտարարությունները, անշուշտ, անհրաժեշտ էին, բայց, ցավոք, ոչ բավարար՝ հայերի սպանդը կանխելու համար (Լիլիթ Հովհաննիսյան, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, Երևան, 2002, էջ 63):

1915 թ. հունիսին Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունը դիվանագիտական ու քաղաքական նկատառումներով պաշտոնական բողոք–հուշագիր ներկայացրեց թուրքական կառավարությանը: Սակայն Ավստրո–Հունգարիան, Իտալիան և Բուլղարիան չդատապարտեցին արևմտահայերի ցեղասպանությունը:

ԱՄՆ–ի արտգործնախարարությունը երկու անգամ բողոք ներկայացրեց թուրքական կառավարությանը՝ հայերի կոտորածներին վերջ տալու պահանջով:

«Ճիշտ է,— եզրակացնում է Լ. Հովհաննիսյանը,— եվրոպական տերությունները և ԱՄՆ–ը դատապարտեցին արևմտահայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ գործված հանցագործություն և դրա ողջ պատասխանատվությունը դրեցին երիտթուրքական կառավարության վրա, բայց նրանց Արևելյան քաղաքականության ոլորտում բնաջնջվող հայերի շահերի պաշտպանությունը երկրորդական տեղ էր գրավում: Տերությունները հետամուտ էին՝ իրենց նեղ պետական շահերը պաշտպանելու, իրենց քաղաքական նկատառումներով առաջնորդվելու (Լ. Հ., էջ 68)»:

Դաժան իրականությունն այն էր, որ ճիշտ այն պահին, երբ աշխարհի անտարբեր աչքերի առջև արևմտահայության արյան գետեր էին գոյանում, 1915 թ. աշնան–1916 թ. գարնան ամիսներին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև գաղտնի բանակցություններ էին ընթանում Օսմանյան կայսրության տարածքների բաժանման վերաբերյալ, որը նրանց համար շատ ավելի կարևոր էր, քան մորթոտվող արևմտահայության ճակատագիրը:

Ասվածի առարկայական արտահայտությունն է Սայքս–Պիկոյի գաղտնի համաձայնագիրը՝ կայացած 1916 թ. մայիսին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար է. Գրեյի և ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնի միջև, և որը վերաբերում էր Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանմանը: Համաձայնագիրն այդպես կոչվեց անգլիացի դիվանագետ Մ. Սայքսի և ֆիանսիացի դիվանագետ Ժ. Պիկոյի անուններով, որոնք նախապատրաստել էին փաստաթուղթը: Բանակցությունների փաստաթղթերում «Հայաստան» և «Հայկական հարց» տերմիններն առհասարակ բացակայում էին:

Իսկ մինչ այդ՝ 1915 թ. կնքված անգլո–ֆրանս–ռուսական մեկ այլ համաձայնագրով դաշնակիցները ճանաչել էին Ռուսաստանի իրավունքները Կոստանդնուպոլսի և նեղուցների, Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի նահանգների և Քուրդիստանի մի մասի վրա: Սայքս–Պիկոյի համաձայնագիրը նախատեսում էր տարբեր երկրների անցնող հինգ՝ կապույտ, կարմիր, դարչնագույն, դեղին, կանաչ, ինչպես նաև A, B, C գոտիների ստեղծում: Կապույտ գոտին, որի մեջ էր Կիլիկիան, անցնում էր Ֆրանսիային, կարմիրը՝ Անգլիային, դեղինը՝ Ռուսաստանին, որն իր մեջ ներառում էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

1917 թ. նոյեմբերի վերջին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հրապարակեց Սայքս–Պիկոյի մինչ այդ գաղտնի պահվող համաձայնագիրը և չեղյալ հայտարարեց այն (Հայկական հարց: Հանրագիտարան (ռուսերեն): Երևան, 1991, էջ 286–287):

Ինչպես եզրակացնում է Լ. Հովհաննիսյանը, 1915–1916 թվականներին, սկսելով Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային ինքնավարություն տալու ծրագրից, եռյակ համաձայնության երկրները հանգեցին դրանց գրավմանն ու բաժանմանը (Լ. Հ., էջ 100):

ԱՇԽԱՐՀԻ ԱԿԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դարի աննախադեպ ոճրագործությունը՝ հայոց ցեղասպանությունը, չէր կարող չհարուցել աշխարհի առաջադեմ հասարակայնության բուռն զայրույթն ու ցասումնալի բողոքը: Ցեղասպանության զայրագին դատապարտմամբ ու հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ իրենց ձայնը բարձրացրին ռուս, անգլիացի, ամերիկացի, ֆրանսիացի, գերմանացի, լեհ ու այլ ազգերի բազմաթիվ ականավոր մտավորականներ:

Ամերիկյան գիտնական, փիլիսոփայության դոկտոր Հերբերտ Ադամս Գիբոնսը հրատարակեց «Նորագույն պատմության ամենասև էջը. Վերջին կոտորածները Հայաստանում» մեծարժեք գիրքը, որը հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին ուսումնասիրություններից մեկն է և որի հայերեն առաջին թարգմանությունը լույս է տեսել Նյու Յորքում 1916–ին:

Թուրքական գազանությունների հուժկու դատապարտմամբ եռանդագին կերպով հանդես եկավ ամերիկյան հռչակավոր գրող–հրապարակախոս Ջոն Ռիդը:

Պատերազմի տարիներին Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն հրատարակեց հուշերի գիրք, որը չափազանց կարևոր սկզբնաղբյուր է հայոց Մեծ եղեռնի պատմության համար: Արտահայտելով իր խորին համակրանքը մորթոտվող արևմտահայության նկատմամբ՝ հեղինակը տվել է թուրքերի ոճրագործությունները մերկացնող բազմաթիվ արժեքավոր վկայություններ:

1916 թ. ապրիլի 9–ին, ելույթ ունենալով Փարիզում, Սորբոնի համալսարանի դահլիճում, ֆրանսիացի աշխարհահռչակ գրող Անատոլ Ֆրանսն ասաց. «Երբ մենք տեսանք Թուրքիայում այդ դժբախտ զոհը, որի հայացքը լիակատար հույսով ուղղված էր դեպի մեզ, մենք վերջապես հասկացանք, որ Արևելքում մեռնում է մեր Քույրը, որ նա մեռնում է միայն այն բանի համար, որ նա մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ

նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես, ինչպես մենք, հավատացել է այն ամենին, ինչին հավատացել ենք մենք և մեզ նման ընկալել է իմաստություն, բանաստեղծություն և արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը... Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի: Նրան մնացել է շատ քիչ արյուն,— թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»:

Զայրագին բողոքով հանդես եկավ աշխարհահռչակ ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանը:

Հայոց ցեղասպանության դեմ վճռաբար հանդես եկավ ֆրանսիական սոցիալիստ, հրապարակագիր Անրի Բարբին: Նա 1916 թ. մարտին այցելեց Արևմտյան Հայաստան, հավաքեց համապատասխան նյութեր և հրատարակեց «Սարսափի երկրին մեջ. Նահատակ Հայաստան. Պոլիս, 1919» գիրքը, որը արևմտահայերի ողբերգությունը օբյեկտիվորեն պատկերող աշխատություն է: Նա միաժամանակ հիացմունքով գրել է հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի մասին:

Դատապարտող ելույթներով հանդես եկան նշանավոր գիտնականներ Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլերը, Վիկտոր Բերարը և ուրիշներ:

Հայոց ցեղասպանությունը լայն արձագանք գտավ Շվեյցարիայում: Շվեյցարական առաջադեմ մտածողները, դեմոկրատական խավերի ներկայացուցիչները մամուլի միջոցով իրենց խորին զայրույթն արտահայտեցին համաշխարհային պատմության մեջ աննախադեպ այդ ոճրագործության առթիվ և պահանջեցին հնարավոր բոլոր միջոցներով կանխել նրա հետագա ընթացքը:

Ուժգնորեն հնչեց բելգիացի նշանավոր գրող Էմիլ Վերհարնի ձայնը, որը հատուկ գիրք նվիրեց պատերազմի իրադարձություններին ու հայոց տառապանքներին: Գիրքը կրում է «Ռազմի կարմիր թներ» վերնագիրը:

Հայ ժողովրդի անկեղծ բարեկամն էր ու նրա շահերի անհողդողդ պաշտպան կանգնեց նորվեգացի աշխարհահռչակ բևեռախույզ–աշխարհագրագետ, Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ Ֆրիտյոֆ Նանսենը: Պատերազմի ժամանակ նա ցնցվեց արևմտահայությանը բաժին ընկած անլուր աղետից և իրեն նվիրեց եղեռնից փրկված հայության բեկորներին օգնելու գործին: Նա կանգնեց Ազգերի Լիգայի ստեղծած հայ գաղթականության գործերի միջազգային հանձնաժողովի գլուխ: Սահմանվեց «Նանսենյան անձնագիրը», որը տրվում էր աշխարհով մեկ սփռված հայ գաղթականներին, որոնք չունեին որևէ պետության քաղաքացիություն և անձը հաստատող փաստա-

թուղթ: Նրա գրչին են պատկանում «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» (Երևան, 1993), «Խաբված ժողովուրդ» (Երևան, 2001) մեծարժեք գրքերը, որոնք նվիրված են հայ ժողովրդի անցյալի լուսաբանմանն ու նորագույն ժամանակաշրջանի վերլուծությանը: Դիմակազերծ անելով եվրոպական դիվանագետներին՝ մեծ նորվեգացին երկրորդ գրքում գրել է. «Վայ հայ ժողովրդին, որ խճճվել է Եվրոպայի քաղաքականության մեջ, նրա համար ավելի լավ կլիներ, եթե հայ ժողովրդի անունը երբեք չհիշատակվեր եվրոպական դիվանագետների շուրթերով: Բայց հայ ժողովուրդը երբեք չկորցրեց հույսը: Նա սպասեց, և անընդհատ, համառ աշխատելով, շատ երկար սպասեց: Նա սպասում է մինչև այսօր»:

1925 թ. Նանսենը եղավ Խորհրդային Հայաստանում՝ հայ գաղթականներին տեղավորելու հարցերով, մասնակցեց Շիրակի ջրանցքի բացմանը: Նրա պայծառ անունը հավերժորեն գրանցված է հայ ժողովրդի ճշմարիտ բարեկամների ցանկում:

Եղեռնի օրերին բուլղարական ձախ սոցիալ–դեմոկրատների՝ տեսնյակների համագումարը հատուկ քննության ենթարկեց արևմտահայության ողբերգության հարցը և դատապարտեց այդ հրեշավոր ոճրի հանցագործներին: Քիչ ավելի ուշ նույնն արեց բուլղարական կոմունիստական շարժման հիմնադիրներից մեկը՝ Վասիլ Կոլարովը:

Համաշխարհային հասարակայնության բուռն ուշադրությանն արժանացավ անգլիացի հրապարակախոս և պատմաբան Առնոլդ Թոյնբիի 1915 թ. հրատարակած «Հայկական սարսափները. Մի ազգի բնաջնջումը» գիրքը:

1916 թ. Լոնդոնում լորդ Ջեյմս Բրայսի նախաձեռնությամբ ու նրա ներածականով հրատարակվեց արևմտահայերի դժոխային վիճակը պատկերող փաստաթղթերի մեծածավալ ժողովածու: Բրայսը հերքում է բոլոր այն կեղծ փաստարկները, որոնք միտում ունեն արդարացնել թուրքերի ոճրագործությունը:

1916 թ. հունվարի 1–ին Գերմանիայի Ռայխստագի (պառլամենտ) նիստում Հայոց ցեղասպանության մասին վճռական հարցապնդում արեց միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ, պատգամավոր Կարլ Լիբկնեխտը, որը փաստորեն իր երկրի կառավարությանը համարեց թուրք ոճրագործների հանցակից: Նրա ելույթները լայն արձագանք գտան ամբողջ աշխարհում:

Հայ ժողովրդի ջերմ պաշտպանությամբ հանդես եկավ գերմանացի նշանավոր միսիոներ, աստվածաբանության դոկտոր Յոհաննես

Լեփսիուսը: Տեղեկանալով հայերի տեղահանման ու ոչնչացման մասին, Լեփսիուսը նախ ապարդյուն ճիգեր գործադրեց ազդելու Գերմանիայի կառավարության վրա: Այնուհետև նա մեկնեց Կ. Պոլիս, փորձեց ստանալ գերմանական դեսպան Վանգենհայմի աջակցությունը, բայց իզուր: Հաջողություն չունեցավ նաև նրա հանդիպումը Թալեաթի և Էնվերի հետ: Պոլսում նա հանդիպեց նաև Զավեն պատրիարքի հետ: Հալածանքների ենթարկվելով՝ Լեփսիուսը փախչում է Հոլանդիա և հրատարակում «Հայաստանի ջարդերը» գիրքը, որտեղ փաստական հարուստ նյութի հիման վրա տրված է Հայոց եղեռնի իրական պատկերը: Իբրև վկա մասնակցելով Թալեաթ փաշայի սպանության գործով դատավարությանը՝ նա մեծապես նպաստեց Թալեաթին սպանողի՝ հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի արդարացմանը:

Հայոց ցեղասպանության դեմ իր ազնիվ ձայնը բարձրացրեց գերմանացի գրող և հրապարակախոս Արմին Վեգները: Պատերազմի ժամանակ նա Թուրքիայում զինվորական թղթակից էր, սանիտարական ծառայության լեյտենանտ: Միջագետքում նա սեփական աչքերով տեսավ արևմտահայերի ողբերգությունը և երդվեց մինչև վերջին շունչը պայքարել հայերի արդար դատի համար: Եղեռնի վերաբերյալ նա հավաքեց շուրջ 2000 լուսանկարներ: 1919 թ. հունվարին Վեգները ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնին հղեց բաց նամակ՝ «Հայ ժողովրդի արտաքսումը դեպի անապատներ» վերնագրով, որը կարևորագույն փաստաթուղթ է Հայոց եղեռնի մասին: Հեղինակը խնդիր է դնում պատժել հանցավորներին և արդարացիորեն լուծել Հայկական հարցը: 1919 թ. գարնանը Վեգները Բեռլինի թատրոններից մեկում դասախոսություն է կարդում Հայոց եղեռնի մասին, որն ուղեկցվում է էկրանի վրա ահավոր տեսարաններ պատկերող լուսանկարների ցուցադրումով:

Ա. Վեգները երկու անգամ՝ 1927–ին և 1968–ին, եղել է Խորհրդային Հայաստանում, հիացել հայ ժողովրդի նվաճումներով, այն անվանել իսկական հրաշք:

Հայ ժողովրդի մեծ բարեկամներից էր գերմանացի աշխարհահռչակ գիտնական, հայագետ Յոզեֆ Մարկվարտը: Վեգների դասախոսության ժամանակ նա ապտակել էր մի թուրք ստահակի, տնից վռնդել իրեն կողոպտված հայկական ձեռագիր վաճառել ցանկացող մի թուրք սպայի: 1919–ին Մարկվարտը Բեռլինում հրատարակեց «Հայ ազգի ծագումն ու վերածնունդը» աշխատությունը, որտեղ մերկացրեց թուրք

մարդասպաններին ու նրանց գերմանացի հովանավորներին: Նա իր ազգանունը հայերեն թարգմանեց «Բդեշխյան»:

Մեծագույն հայասեր էր ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը՝ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հեղինակը, որը լույս տեսավ 1934–ին: Գիրքը արգելվեց հիտլերյան իշխանության կողմից, իսկ ինքը վտարանդվեց: Սակայն գիրքը թարգմանվեց աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Արաբ պետական գործիչ, իրավաբան Ֆայեզ էլ Ղոսեյնը 1917 թ. Կահիրեում ֆրանսերեն հրատարակեց «Հերոսական հայության անցյալեն: Ջարդերը Հայաստանի մեջ (ականատեսի վկայություններ)» գիրքը, որը հայերեն լույս տեսավ դարձյալ Կահիրեում, 1960–ին: Գրքում արտահայտված է արաբ հեղինակի ճշմարտացի մոտեցումը Հայոց եղեռնի նկատմամբ, նրա դատապարտող վերաբերմունքը: Հեղինակն այն համոզման է, որ երիտթուրքերի չարագործությունը ոչ մի կապ չունի մահմեդական կրոնի հետ:

1961–ին Հայոց եղեռնի դեմ իր ձայնը բարձրացրեց լեհ նշանավոր հրապարակախոս Բոգդան Գեմբարսկին՝ մամուլի միջոցով բաց նամակով դիմելով թուրք մտավորականությանը: Նա պահանջում էր ասել ողջ ճշմարտությունը, դատապարտել Հայոց եղեռնի հանցավորներին և հայ ժողովրդին տալ արդարացի փոխհատուցում: Հրապարակի վրա են նրա «Նամակներ աշխարհին» (Երևան, 1990) և «Մահվան դատապարտվածները» (Երևան, 1993) գրքերը:

Եղեռնի ահավոր ժամանակաշրջանում հայ ժողովրդի թիկունքին պատվար կանգնեց ռուս առաջադեմ մտավորականությունը: Հենց այդ դժնդակ օրերին՝ 1916–ին, ռուս նշանավոր գրող Մաքսիմ Գորկին Վահան Տերյանի աջակցությամբ հրատարակեց «Հայ գարականության ժողովածու», իսկ նրա հիմնադրած «Լետոպիս» ամսագրում հրապարակվեցին հայապաշտպան մի շարք հոդվածներ:

1915 թ. *Մոսկվայում լույս տեսավ ռուս ականավոր գրականագետ*, պրոֆեսոր Յուրի Վեսելովսկու «Արևմտյան Հայաստանի ողբերգությունը» գրքույկը, որտեղ հեղինակը մերկացնում է եվրոպական շահադիտական դիվանագիտությունը, որը և հանգեցրեց հայկական կոտորածներին: Նա սովորել է Մոսկվայի հայկական Լազարյան ճեմարանում, գիտեր հայերեն, խորապես ուսումնասիրել էր հայոց պատմությունն ու գրականությունը: Վեսելովսկու գրչին է պատկանում նաև «Մոռացված երկրամասի զավակները» (Մոսկվա, 1916) գրքույկը, ինչպես նաև մի ամբողջ հոդվածաշար, որոնք ցնցող պատկերներով ընթերցողին են ներկայացնում հայ ժողովրդի ողբերգությունը:

Ռուս մեծահամբավ բանաստեղծ և գիտնական Վալերի Բրյուսովը սովորել էր հայերեն, ուսումնասիրել հայկական սկզբնաղբյուրներ: Պատերազմի ժամանակ նա եղավ Երևանում, Էջմիածնում, տեսավ արևմտահայ գաղթականներին, զրուցեց նրանց հետ: Նա գրեց «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը» աշխատությունը, որի մեջ 9 գլուխներով ներկայացրեց հայ ժողովրդի անցած ուղին՝ Վանի թագավորությունից մինչև 1915 թվական: Նա ձեռնարկեց նաև հայ բանաստեղծության թարգմանության ու տարածման գործին:

Ռուս նշանավոր արևելագետ, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին դեռ պատերազմից առաջ և նրա ընթացքում եղել էր Արևմտյան Հայաստանում, ուսումնասիրել պատմական հուշարձանները, ականատես եղել կոտորածներին: Պատերազմի տարիներին ռուս ականավոր գիտնականը գրեց հայ ժողովրդի պատմության հարցերին նվիրված մի շարք արժեքավոր հոդվածներ, որոնք 1916 թ. ամփոփեց «Հայերը և պատերազմը» աշխատության մեջ: Ցավով նկարագրելով հայ ժողովրդի տառապանքները՝ ռուս գիտնականը միաժամանակ հիացմունքով է խոսում նրանց ինքնապաշտպանական կռիվների մասին:

Հայ ժողովրդի մեծագույն ողբերգության մասին փաստական նյութեր և գիտական լուսաբանություն է տվել ռուս մեծահամբավ պատմաբան, ակադեմիկոս Ե. Վ. Տարլեն՝ «Եվրոպան իմպերիալիզմի էպոխայում» ժողվածուի 5–րդ հատորում: Հայոց եղեռնը նա որակել է իբրև միանգամայն բացառիկ երևույթ համաշխարհային պատմության մեջ՝ սկսած Չինգիզ խանի ժամանակներից: Նա քննարկել է Թալեաթի և Էնվերի դիրեկտիվները հայերի բնաջնջման մասին: Գիտնականը մանրամասնորեն նկարագրել է եղեռնի գործադրության եղանակները, մերժել ցեղասպանությունը հայերի կարծեցյալ ապստամբությամբ պատճառաբանելու ստահոդ վարկածը: Նա բացահայտել է նաև բուրժուական դիվանագիտության խաղացած սև դերը: Համբավավոր գիտնականն ամենայն մանրամասնությամբ կանգ է առել Սողոմոն Թեհլերյանի պատմության վրա, ջերմությամբ խոսել հայ վրիժառուի մասին:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ կարևոր փաստական նյութեր են պարունակում Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, կադետ Ս. Կոտլյարևսկու մի շարք հոդվածները, որոնց մեջ առանձնանում է «Հայ ժողովրդի ողբերգությունը» հոդվածը: Նա հույս է հայտնում, որ ապագան բարեհաճ կլինի տաղանդավոր հայ ժողովրդի տառապած և հյուծված սերունդների համար:

Իր աշխատություններով ու ելույթներով տառապյալ արևմտահայությանը զորավիգ կանգնեց ռուս նշանավոր արևելագետ Մաքսիմ Կովալևսկին:

Արևմտահայության ողբերգական ճակատագրի վերաբերյալ բազմաթիվ նյութեր հրատարակվեցին ռուսական պարբերական մամուլում: Դրանցից էին «Կավկազսկոյե սլովո», «Կավկազսկի տելեգրաֆ», «Ռուսսկիե վեդոմոստի» թերթերը: Կարևոր դեր խաղաց «Արմյանսկի վեստնիկ» ամսագիրը, որը 1916–1918 թթ. լույս էր տեսնում Մոսկվայում, շաբաթը մեկ անգամ և որի խմբագիրն էր Ա. Ջիվելեգովը: Ամսագրին մասնակցում էին բանաստեղծ Ս. Գորոդեցկին, պրոֆեսոր Ս. Կոտլյարևսկին: Ամսագրի շուրջ 100 համարներում զետեղված են բազմաթիվ հոդվածներ արևմտահայության դառնաղետ ճակատագրի մասին:

Համանման հոդվածներ են հրապարակված նաև «Արմյանե ի վոյնա» ամսագրում, որի 10 համարները հրատարակվել են Օդեսայում, 1916–1917 թվականներին:

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ: ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆԸ

1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո, երբ Թուրքիան ճանաչվեց իբրև պարտված պետություն, երիտթուրքական վարչակարգը տապալվեց և Ահմեդ Իզզեթ փաշայի գլխավորած նոր կաբինետը որոշում կայացրեց Օսմանյան կայսրությանը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին: Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 16–ի որոշմամբ, երբ Թուրքիայի վարչապետն էր Ահմեդ Թեվֆիկը, կազմվում են հարցաքննիչ հանձնախմբեր՝ Անկարայի նախկին վալի Մազհար բեյի նախագահությամբ, որոնք սկսում են հավաքել արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական հրահանգներ և հրամաններ, ինչպես նաև ականատեսների վկայություններ:

Օսմանյան կայսրության նահանգները բաժանվում են 10 դատաքննչական շրջանների, յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում

են դատախազներ, հարցաքննիչ դատավորներ և քարտուղարներ: Մամուլը լայն աշխատանք է կատարում հանցագործներին բացահայտելու և դատաքննությանը հանձնելու ուղղությամբ:

Ձերբակալվում են երիտթուրքական մի շարք մինիստրներ և կուսակցության ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազորներ, կուսակալներ, զինվորականներ և պաշտոնատար այլ անձինք: Սակայն հայկական կոտորածների հիմնական կազմակերպիչները հասցրել էին փախուստի դիմել և ծպտված թաքնվել Գերմանիայում:

1919 թ. հունվարի 8–ին Կ. Պոլսում կազմվում են Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական արտակարգ ատյաններ: Նույն թվականի մարտի 8–ին սուլթան Մեհմեդ 6–րդ Վահիդեդդինի (1918–1922) հատուկ հրամանագրով երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու մինիստրները հանձնվում են Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը: Այդ ժամանակ կառավարական կաբինետը գլխավորում էր Դամադ Ֆերիդ փաշան՝ 1919 թ. մարտի 4–ից մինչև հոկտեմբերի 1–ը:

Երիտթուրքական կառավարության ղեկավարների և կուսակցության կենտկոմի անդամների դատավարությունն սկսվում է 1919 թ. ապրիլի 27–ին Կ. Պոլսում և ընդհատումներով տևում մինչև հունիսի 26–ը: Այն տեղի էր ունենում անգլիական օկուպացիոն զորքերի հսկողության տակ: Դատաքննությունն անցկացնող հանձնաժողովի անդամներն էին գեներալ–լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշան (նախագահ), գեներալ–մայոր Զեքի փաշան, գեներալ–մայոր Մուստաֆա փաշան, գեներալ–մայոր Ալի Նազըմ փաշան, գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյը: Մայիսին տեղի ունեցած 6 նիստերի ընթացքում հարցաքննվում են կուսակցության կենտկոմի անդամները, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և մի քանի մինիստրներ: Սակայն անբացատրելի պարագաներում մայիսի 28–ին անգլիական հրամանատարության կողմից 77 ձերբակալվածներ դուրս են բերվում բանտից և աքսորվում Մալթա կղզի, որի հետևանքով դատավարությունն ընդհատվում է: Հունիսին դատավարությունը վերսկսվում է և տեղի ունեցած 7 նիստերում լսվում է հեռակա կարգով 11 և դատավարությանը ներկա 20 կուսակցական և պետական բարձրաստիճան անձանց դատաքննությունը: Հեռակա կարգով դատվողներն էին ներքին գործերի մինիստր, մեծ վեզիր Թալեաթ փաշան, ռազմական մինիստր Էնվեր փաշան, ծովային մինիստր Ջեմալ փաշան, երիտթուրքական կուսակցության կենտկոմի անդամ, Թեշքիլաթը մախսուսեի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյը, կենտկոմի անդամ, հանրակրթության մի-

նիստր, Թեշքիլաթը մախսուսեի անդամ դոկտոր Նազըմ բեյը, ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, հողագործության և առևտրի մինիստր Սուլեյման էլբիստանի բեյը, վերջինիս հաջորդ Մուստաֆա Շերիֆ բեյը, փոստի և հեռագրատան մինիստր Օսկան էֆենդին, կենտկոմի անդամ դոկտոր Ռուզուհի էֆենդին, հասարակական անվտանգության մինիստր, Թեշքիլաթը մախսուսեի անդամ Ազիզ էֆենդին:

Դատարանում ներկա գտնվողների մեջ էին 1913–1916 թթ. մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, կուսակցության կենտկոմի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյը, Կ. Պոլսի պարետ Ահմեդ Ջևադ բեյը, Անկարայի պատգամավոր Աթիֆ բեյը, կենտկոմի անդամներ Ջիա Գյոքալփը, Քյուչուկ Թալեաթ բեյը, Ռիզա բեյը, արդարադատության և արտգործմինիստր Խալիլ էֆենդին, 1917–1918 թթ. ներքին գործերի մինիստր Իսմայիլ Ջանփոլատ բեյը, հանրակրթության մինիստր Շյուքրի բեյը, պարենավորման մինիստր Քեմալ բեյը և ուրիշներ:

Հանձնաժողովի նախագահը առաջին հերթին հաստատում է մեղադրյալների ինքնությունը, իսկ դատական քարտուղար Շեֆիկ բեյն ընթերցում է մեղադրական եզրակացությունը: Գլխավոր դատախազ Մուստաֆա Նազըմ փաշան համաձայնություն է տալիս բացականերին հեռակա կարգով դատելուն:

Մեղադրական եզրակացություններում բերված փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայում են, որ արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, այլ եղել են կանխամտածված և իրականացվել են կուսակցության կենտկոմի նախաձեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով:

Դատավարության 2–րդ, 5–րդ և 6–րդ նիստերում հարցաքննության է ենթարկվում Թեշքիլաթը մախսուսեն: Բացահայտվում է, որ այդ կազմակերպության հանցագործ գործունեությանը մասնակից են եղել կուսակցության կենտկոմի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյը, Անկարայի պատգամավոր Աթիֆ բեյը, հանրակրթության մինիստր Շյուքրի բեյը, մեջլիսի նախագահ Խալիլը, հասարակական անվտանգության մինիստր Ազիզ բեյը, Կ. Պոլսի պարետ Ջևադը: Նրանց ղեկավարել է ներքին գործերի մինիստր Թալեաթը: Լիովին բացահայտվում է այն փաստը, որ տեղահանության և կոտորածի մասին որոշումը կայացվել է երիտթուրքական կուսակցության կենտկոմի գաղտնի նիստերից մեկում՝ ձայների մեծամասնությամբ:

1919 թ. հուլիսի 5–ին կայացված դատավճռում շեշտը դրվում է արևմտահայության կոտորածների և ունեցվածքի կողոպտման վրա: Կարևոր հանցանշաններից մեկն է համարվում առանց մեջլիսի որոշման Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելու փաստը:

Քաղաքացիական քրեական օրենսգրքի 45–րդ հոդվածի 1–ին կետով դատարանը մահվան վճիռ է կայացնում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և Նազըմի նկատմամբ: Երկուսն ազատվում են, մնացածները դատապարտվում են 15 և ավելի պակաս տարով աքսորի:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և այլ պաշտոնատար անձանց դատավարությունը տեղի է ունենում 1919 թ. հունիսի 21–ին, 23–ին և 28–ին: Դատավճիռը կայացվում է շատ ուշ՝ 1920 թ. հունվարի 8–ին, Կ. Պոլսի Առաջին արտակարգ ատյանի հանձնախմբի կողմից, որի նախագահն էր գեներալ–մայոր Էսադ փաշան, անդամներն էին երկու գեներալ–մայոր և մեկ գնդապետ: Ամբաստանվում էին 36 անձինք:

Մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ շրջանային պատասխանատու քարտուղարները կուսակցության կենտկոմի և կառավարության կողմից ստացված բանավոր և գրավոր գաղտնի հրամանների համաձայն մասնակցել են Թալեաթ փաշայի և նրա գործընկերների կատարած հանցագործություններին: Հանձնաժողովի նախագահը հերքում է մեղադրյալների կեղծ ցուցմունքները և բացահայտում, որ տեղահանությունը եղել է լոկ պատրվակ՝ հայերի բնաջնջումն իրականացնելու համար:

Քրեական օրենսդրության 45–րդ հոդվածի 2–րդ և 55–րդ հոդվածի վերջին կետի համաձայն Սինոպի, Էդիրնեի և Բալուի պատասխանատու քարտուղարները դատապարտվում են 10 տարուց ավելի, իսկ մյուսները՝ մի քանի տարվա բանտարկության:

Վերոհիշյալ դատավարությունների ընթացքում Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանը մանրամասն հարցաքննություն էր կատարում նաև գավառներում տեղի ունեցած տեղահանության և կոտորածների անմիջական իրականացնողների նկատմամբ: Առաջինը լսվում է Յոզղաթի մութեսարիֆի տեղակալ և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի և Յոզղաթի ոստիկանության պետ, մայոր Թևֆիկ բեյի կատարած հանցագործությունների հարցը: Առաջինը դատապարտվում է մահվան, իսկ երկրորդը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի: Քեմալի մահավճիռը

վավերացվեց սուլթանի կողմից և 1919 թ. ապրիլի 11–ին նրան կախեցին Կ. Պոլսի Բայազեդի հրապարակում:

Տրապիզոնի հայերի տեղահանությանը և կոտորածին վերաբերող 1919 թ. մայիսի 22–ի դատավճռով մեղադրվում են 8 հանցագործներ: Կատարած ծանր հանցագործությունների համար դատարանը հեռակա կարգով մահվան է դատապարտում Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյին և կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյին: Մյուսները դատապարտվում են տարբեր ժամկետների տաժանակիր աքսորի կամ բանտարկության:

1919 թ. մայիսի 24–ի դատավճռով, որը վերաբերում էր Կ. Պոլսի արվարձան Բյույուք Դերեի տեղահանությանը, 4 մեղադրյալները դատապարտվում են տարբեր ժամկետներով բանտարկության:

Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածին վերաբերող 1920 թ. հունվարի 13–ի դատավճռով կուսակցության կենտկոմի անդամ և Թեշքիլաթը մախսուսեի նախագահ Բեհաէդդին Շաքիրը հեռակա կարգով դատապարտվեց մահվան, իսկ կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ բեյը՝ 15 տարի տաժանակիր աքսորի:

Այսպիսով՝ ընդհանուր առմամբ թուրքական ռազմական արտակարգ ատյանը մահվան վճիռ կայացրեց հետևյալ 9 ցեղասպանների նկատմամբ. Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ, Բեհաէդդին Շաքիր, Ջեմալ Ազմի, Նայիլ բեյ, Քեմալ բեյ, Թևֆիկ բեյ:

Ինչ վերաբերում է Մալթա կղզի աքսորված 120 երիտթուրք ոճրագործներին, ապա նրանց մի մասը փոխանակվեց թուրքական գերության մեջ գտնվող 25 անգլիացի զինվորների հետ, մյուս մասն էլ կամաց–կամաց ազատ արձակվեց: Նրանցից շատերը հետագայում դարձան Մուստաֆա Քեմալի գործընկերները:

Դատավարությունների արձանագրություններն ու որոշումները 1919–1920 թթ. շատ քիչ տպաքանակով տպագրվեցին թուրքական պաշտոնական «Թաքվիմ ի վեքայի» արաբատառ թերթի հավելվածներում: Դրանց պատճենները ՀՀԿՊՊ արխիվին է հանձնել ֆրանսահայ Ռոժե (Կարպիս) Ջրբաշյանը: Իհարկե, դատաքննության նյութերն ամբողջական չեն, որովհետև շատ նյութեր չեն տպագրվել հիշյալ թերթում: Նյութերն ամբողջությամբ ամփոփված են եղել ռազմական արտակարգ ատյանի 293 թղթապանակներում:

Ինչպես իրավամբ նշում է «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» (Երևան, ԳԱ հրատ., 1988) գրքի առաջաբանի հեղինակ Ա. Հ. Փափազյանը, պատերազմի ավարտից հետո երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը խոշոր երևույթ էր արևմտահայության ցեղասպանությունը համայն մարդկության առաջ բացահայտելու տեսանկյունից: Միանգամայն իրավացի է հայ ականավոր պատմաբան Զոն Կիրակոսյանը՝ գրելով. «Զինվորական տրիբունալի անդամները 5 հոգի էին, բոլորն էլ թուրքեր... երիտթուրք ղեկավարներին ներկայացվել էր երկու մեղադրանք. Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և հայ ժողովրդի բնաջնջումը: Սա արդեն պաշտոնական ճանաչումն էր հրեշավոր ոճրագործության, որ կատարել էին երիտթուրքական պետական մարմինները...

Երիտթուրքական կառավարության անկումից հետո թուրքական պետական իշխանություններն իրենք են ընդունել հայոց նկատմամբ կատարված գենոցիդը, իրենք են դատել և դատապարտել նրանց անմարդկային գործողությունները» (Զ. Կիրակոսյան. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք երկրորդ: Երևան, 1983, էջ 176, 221):

Իհարկե, երիտթուրքերի դատավարությունը երբեք էլ 1,5 միլիոն նահատակված հայերի արյան, կորսված բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի և նյութական ու մշակութային ահռելի կորուստների փոխհատուցումը չէր: Ավելին՝ թուրքական նոր իշխանություններն ամենևին էլ մտահոգված չէին դատարանի վճիռներն ի կատար ածելու հարցով: Գլխավոր հանցագործները փախել և անլեգալ կերպով ապաստանել էին Բեռլինում, իսկ Մալթայի աքսորականներն ազատ շրջում էին կղզում, իսկ հետո էլ մեծամասամբ Իտալիայի վրայով սկսեցին վերադառնալ Թուրքիա: Նրանցից շատերը բարձր դիրքեր գրավեցին Մուստաֆա Քեմալի կառավարությունում և բանակում:

Նման պայմաններում երիտթուրքական բորենիների նկատմամբ մահավճիռներ կայացրին ու դրանց իրագործմանը ձեռնամուխ եղան հայ վրիժառուները:

1919 թ. սեպտեմբերի 27–ին Երևանում իր աշխատանքներն սկսեց ՀՀԴ 9–րդ ընդհանուր ժողովը, որը տևեց մինչև հոկտեմբերի վերջը: Համագումարի օրակարգի հարցերից մեկն էլ Մեծ եղեռնի գլխավոր հանցագործներին պատժելու հարցն էր: Հակառակ մի շարք պատգամավորների՝ որոնք գտնում էին, թե նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը կարիք ունի Թուրքիայի հետ բարեկամության (Սիմոն Վրա-

ցյան, Ռուբեն Տեր–Մինասյան, Ռուբեն Դարբինյան և ուրիշներ), ժողովը որոշեց հաշվեհարդար տեսնել հայ ժողովրդի դահիճ թուրք ճիվաղների հետ: Կազմվեց այդ գործը իրականացնող Պատասխանատու մարմին՝ ԱՄՆ–ից պատգամավոր Շահան Նաթալիի ղեկավարությամբ: Նրա օգնականն էր Գրիգոր Մերջանովը:

Շահան Նաթալին (Հակոբ Տեր–Հակոբյան) ծնվել է 1884 թ. Խարբերդի շրջանի Հյուսեյնիկ գյուղում: Համիդյան կոտորածների ժամանակ կորցնում է հորը և բազմաթիվ ազգականների: Խարբերդի եփրատ Քոլեջում սովորելուց հետո ընդունվում է Պոլսի Պերպերյան վարժարանը, որն ավարտում է 1900–ին: Նա վերցնում է իր սիրելի ուսուցիչ Շահան Պերպերյանի անունը, իսկ Նաթալի մականվան ընտրության պատճառը հայտնի չէ: 1904–ին Խարբերդում անդամակցում է ՀՅԴ–ին: Նույն թվականին տեղափոխվում է ԱՄՆ: 1908–ի Օսմանյան Սահմանադրության հռչակումից հետո վերադառնում է երկիր, ապա նորից անցնում Ամերկա, ընտրվում տեղի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի անդամ: 1924–ին Փարիզում կայացած ՀՅԴ 10–րդ ընդհանուր ժողովում ընտրվում է նորընտիր բյուրոյի անդամ: 1929 թ. Փարիզում կայացած ՀՅԴ 11–րդ ընդհանուր ժողովում հեռացվում է կուսակցության շարքերից՝ խոր տարաձայնությունների պատճառով: Զբաղվել է գրական–հասարակական գործունեությամբ, հեղինակ է մի շարք աշխատությունների (տե՛ս Շահան Նաթալի, Թուրքերը և մենք, Երևան, 1992): Գրական անունն է Նեմեսիս:

1961–ին այցելում է Խորհրդային Հայաստան, բուժում ծայնը, հիանում հայրենիքի բարգավաճմամբ: Մահացել է 1983–ի ապրիլի 18–ին, 99 տարեկան հասակում, Բոստոնում:

Թուրք դահիճների ահաբեկումների գործը ծրագրվում է խիստ գաղտնի պայմաններում: Կատարվում են նախապատրաստական աշխատանքներ՝ հետապնդում, զենքի հայթայթում, կազմվում է շուրջ 200 ճիվաղների ցուցակ:

Գլխավոր թիրախը «Թիվ մեկ» ոճրագործի՝ Թալեաթ փաշայի ոչնչացումն էր, որը հանձնարարվում է Սողոմոն Թեհլերյանին: Շահանի պահանջով ոճրագործին սպանելուց հետո հայ վրիժառուն չպիտի փախչեր, որպեսզի դատավարությանը տրվեր քաղաքական բնույթ:

Սողոմոն Թեհլերյանը ծնվել է Երզնկայի մոտ գտնվող Բագառիճ գյուղում: Եղեռնի ժամանակ սպանել էին նրա մորը, կացնահարել եղբայրներին, լլկել երկու քույրերին, նրանց երեխաներին, իսկ ինքը մնացել էր դիակների տակ ու մի կերպ փրկվել:

1921 թ. մարտի 15–ին նա օրը ցերեկով Բեռլինում, Շառլոտենբուրգի Հարդենբերգ փողոցի վրա ծծրակին ատրճանակի կրակոցով սպանեց դահճապետ Թալեաթ փաշային ու կամավոր հանձնվեց ոստիկանությանը: 1921 թ. հուլիսի 2–3–ին տեղի ունեցավ դատավարություն: Դատում էր Բեռլինի նահանգային դատարանը՝ դոկտոր Լեմբերգի նախագահությամբ: Դատախազն էր Գոլնիկը: Դատապաշտպաններն էին դոկտորներ Գորդոնը, Վերթաուերը և պրոֆեսոր Նիմայերը: Երդվյալ ատենակալները 14 հոգի էին: Կանչված էին բազմաթիվ վկաներ:

Դատավարության ժամանակ Սողոմոնը հանդես եկավ ամբողջ հայ ժողովրդի անունից, նկարագրեց զարհուրելի ոճիրը և մեղադրեց հանցագործներին: Նա հպարտորեն հայտարարեց, որ ինքը լուծել է իր նահատակված ժողովրդի արդարի վրեժը:

Վկաներ դոկտոր Յո. Լեփսիուսը, կարնեցի տիկին Քրիստինե Թերզիբաշյանը, եպիսկոպոս Գրիգորիս Պալաքյանը և ուրիշներ անհերքելի փաստեր բերեցին երիտթուրքերի ոճրագործությունների մասին: Լեփսիուսը հայտարարեց, որ պատերազմից առաջ Թուրքիայում բնակվում էին 1 միլիոն 850 հազար հայեր, որից շուրջ 1 միլիոն 400 հազարը տեղահանվեցին, իսկ ոճրագործ Թալեաթի հրամանագրի մեջ կան «Աքսորավայրն է ոչնչացում» բառերը: Տեղահանվածների միայն 10 տոկոսը աքսորավայր հասավ, մնացած 90 տոկոսը սպանվեց ու առնանգվեց ճանապարհին: Աքսորի նպատակը հայ ազգի ոչնչացումն էր:

Ծագումով կարնեցի տիկին Ք. Թերզիբաշյանը ականատեսի վկայությամբ պատմեց, որ իրենց 21 անձից բաղկացած ընտանիքից մի կերպ փրկվեցին միայն 3–ը:

Եպիսկոպոս Գր. Պալաքյանը պատմեց հայ մտավորականության դժոխային աքսորի ու ոչնչացման մասին:

Դատարանում ելույթ ունեցողների մեծ մասն ընդգծում էին հատկապես Թալեաթի հանցավորությունը և պահանջում արդարացնել մեղադրյալին՝ իբրև ժողովրդական վրիժառուի:

Վկա գեներալ Լիման ֆոն Սանդերսը փորձեց հիմնավորել, որ հայերի տեղահանությունը կատարվել է ռազմական նկատառումներով, որովհետև հայերը միացել էին ռուսներին ու չէին ցանկանում զինաթափվել: Պաշտպանության տակ վերցնելով Թալեաթին՝ գերմանացի գեներալը փորձում է ժխտել հայերի բնաջնջման վերաբերյալ կառավարական հրամանի առկայությունը և հայտարարում, թե իբր այդ դեպքերը տեղի են ունեցել քրդերի և անճարակ ոստիկանների մեղքով: Նա ճիգ է

թափում նաև ապացուցելու, որ Գերմանիան ոչ միայն մեղսակից չէ հայոց ցեղասպանությանը, այլև ամեն ինչ արել է հայերի ջարդերն արգելելու համար:

Հենվելով գերմանացի գեներալի ստահոդ վկայությունների վրա՝ թրքամոլ դատախազ Գոլնիկը պահանջում է Թալեաթի սպանությունը դիտել իբրև կանխամտածված ծանր հանցագործություն, որի համար ամբաստանյալը պետք է գնդակահարվի:

Դատապաշտպանները հերքեցին դատախազի փաստարկները: Դոկտոր Գորդոնը համոզիչ կերպով ցույց տվեց, որ Թալեաթի սպանությունը տեղին է, և նրա կատարողը պետք է արդարացվի: Նույն միտքը հաստատեցին դոկտոր Վերթաուերը և Քիլի համալսարանի իրավաբանության պրոֆեսոր Նիմայերը:

Գերմանական դատարանը, հակառակ որոշակի շրջանների ճիգերին, արդարացրեց Սողոմոն Թեհլերյանին՝ անպարտ ճանաչելով նրան Թալեաթի սպանության համար: Դա նույնպես երիտթուրքերի հրեշավոր ոճրագործության դատապարտում էր: Ներկաները ծափահարություններով ընդունեցին այդ արդարացի դատավճիռը:

Հայ վրիժառուների արդար սուրը հասավ նաև հայ ժողովրդի մյուս գլխավոր դահիճներին: 1921 թ. դեկտեմբերի 6–ին Հռոմում Արշավիր Շիրակյանը սպանեց Թուրքիայի նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշային:

1922 թ. ապրիլի 17–ին, Բեռլինում նույն օրը կարնեցի Արամ Երկանյանն սպանեց Հատուկ կազմակերպության նախագահ, արյունարբու Բեհաեդդին Շաքիրին, իսկ Արշավիր Շիրակյանը՝ Տրապիզոնի նախկին վալի, հայակեր Ջեմալ Ազմիին:

1922 թ. հուլիսի 25–ին Թիֆլիսում խոտորջուրցի երկու երիտասարդներ՝ Պետրոս Տեր–Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը, գնդակահարեցին իթթիհատական եռապետության անդամ Ջեմալ փաշային, որը Քաբուլից վերադառնում էր Անկարա:

1922 թ. օգոստոսի 4–ին Միջին Ասիայում սպանվեց Թալեաթից հետո երկրորդ հայակեր Էնվեր փաշան, որն անցել էր բասմաչների զինված հրոսակախմբերի գլուխ և անհաջողություն կրելով՝ 300 հեծյալներով փորձում էր փախչել Աֆղանստան:

Ինչ վերաբերում է երիտթուրքական հնգյակի վերջին անդամին՝ իթթիհատական կենտկոմի քարտուղար դոկտոր Նազըմին, ապա նա իբրև Մուստաֆա Քեմալի դեմ կազմակերպված դավադրության մասնակից դատվեց և այլ՝ նախկին իթթիհատականների հետ կախաղան հանվեց 1926–ին Անկարայում (տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, Գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 320–323):

Հայ վրիժառուները պատժեցին նաև ազգությամբ հայ դավաճաններին՝ մատնիչներ Վահե Եսայանին (Իհսան), Օրթագյուղի մուխթար Արթին Մկրտչյանին, Հմայակ Արամյանցին, Արշավիր Յասյանին և ուրիշների, որոնք թուրքական ոստիկանությանն էին մատնել հայ մտավորականներին ու հետագայում կախաղան հանված 20 հնչակյաններին:

Հայ վրիժառուների արդար դատաստանից չխուսափեցին նաև մուսավաթական Ադրբեջանի վարչապետ Խան–Խոյսկին, որին սպանեց Արամ Երկանյանը՝ 1920 թվականին Թիֆլիսում և ներքին գործերի նախարար Բեհբուդ խան Ջիվանշիրը, որին սպանեց Միսաք Թոռլաքյանը 1921 թ. հուլիսի 19–ին Պոլսում, որոնք մեղավոր էին 1918 թ. սեպտեմբերին Բաքվի հայերի ջարդի համար:

Միանգամայն իրավացի է պրոֆ. Մ Արզումանյանը, գրելով, որ դրանք սովորական տեռորիստական ակտեր չէին, այլ քաղաքական սպանություններ, հանցագործների պատժման և արդարության հասնելու այն ժամանակվա պայմաններում միակ հնարավոր ձևը (Մ. Արզումանյան. Հայաստան 1914–1917: Երևան, 1969, էջ 632–634): Դրանք արդարացի ժողովրդավրիժառուական գործողություններ էին, որոնք, իհարկե, չնչին չափով միայն կարող էին ամոքել հայ ժողովրդի ահռելի վիշտը:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Թուրքական պետության ծրագրված ու կանխամտածված ցեղասպանության քաղաքականությանը հայ ժողովուրդը մի շարք վայրերում հակադրեց իր դարավոր դիմադրական ոգին և գիտակցված մահ ընտրելով՝ ինքնապաշտպանական դյուցազնամարտ մղեց անարգ թշնամու դեմ՝ Տարոն աշխարհից մինչև Վան, Մուսա լեռից մինչև Ուրֆա և Շապին–Գարահիսար: Որքան էլ որ թույլ ու անկազմակերպ էին այդ հերոսամարտերը, այնուամենայնիվ, դրանք հայոց դյուցազներգության նոր էջեր էին: Մենք դժվարանում ենք դրանք գոյամարտեր անվանել, որովհետև դա կռիվ չէր գոյությունը պահպանելու համար, մանավանդ որ հաղթանակի հույս ոչ մի տեղ փաստորեն չկար, այլ դա ընտրություն էր պատվավոր մահվան և տարագրության ճանապարհներին ստուգապես ոչնչանալու միջև: Ուրեմն անվանենք դրանք ինքնապաշտպանական հերոսամարտեր կամ դյուցազնամարտեր, մանավանդ, եթե նկատի ունենանք ուժերի անհամեմատելի անհավասարությունը:

Հիրավի, բնական հարց է առաջանում. ինչպե՞ս եղավ, որ 1915–ին հայկական որոշ շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին և գիտակցված մահվան գնացին, իսկ ուրիշ շրջաններ անծանոթ եղան թուրքական յաթաղանին: Կամ՝ ինչո՞ւ հնարավոր չեղավ համակարգել և փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջև: Փաստորեն, 1915–ին արևմտահայությունը չուներ ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր: Այդ հարցում խաբուսիկ դեր խաղաց 1908–ի սահմանադրությունը, որը ջլատեց արևմտահայության մարտական և քաղաքական ուժերը: Կարևոր դեր խաղաց նաև հայ հասարակական–քաղաքական որոշ ղեկավար շրջանների դրսևորած անհեռատեսությունը, տարբեր հասարակաշերտերի մեջ գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԵՎ ՇԱՏԱԽ

Պատերազմի հենց սկզբից ջարդվող հայությունը տեղ–տեղ դիմեց տարերային դիմադրության: 1914 թ. նոյեմբերի վերջերին Ոստանի գայմագամ Շուքրի բեյը հարձակվեց Գավաշ և Կարճկան գավառների սահմանագծում գտնվող հայաբնակ Բելու գյուղի վրա: Հայերը մի քանի օր դիմադրեցին և նոր միայն թողեցին գյուղը:

Ուժեղ դիմադրություն կազմակերպվեց Գավաշ գավառի Աքանան գյուղում, խառակոնցի Լևոնի գլխավորությամբ, և կնքվեց երկուստեք համաձայնություն:

1915 թ. փետրվարի սկզբին արյունալի ընդհարումներ տեղի ունեցան Կարկառ գավառակում, ուր կային 18 հայաբնակ գյուղեր: Նրանց դիմադրությունը գլխավորում էր Կարկառի ինքնապաշտպանության հերոս, ձկորցի Գալուստ Պողոսյանը կամ Վուշիկ Գալոն: Մի քանի օր հատկապես ուժեղ մարտեր տեղի ունեցան Որիզ գյուղի մոտ: Զոհեր տալով՝ հայ բնակչությունը քաշվեց դեպի Մոկս ու Գավաշ: Թուրքերը ցից հանեցին զոհված Վուշիկ Գալոյի գլուխը:

1915 թ. փետրվարին քրդերը Ամարե Չաթոյի գլխավորությամբ հարձակվեցին Ալջավազ գավառի վրա, որն ուներ 21 հայկական գյուղ՝ 6000 բնակչությամբ: Հայերը դիմեցին ինքնապաշտպանության՝ Արճրա գյուղացի Օհան Դարբինյանի և կարաքեշիշցի Մկոյի (Սև հայու տղա մականունով) գլխավորությամբ: Առեն գյուղում հայերը ջարդեցին քրդերին, որտեղ սպանվեց Ամարե Չաթոն: Սակայն եկան թուրքական զորքեր՝ թնդանոթներով և արյունահեղ դատաստան տեսան հայերի հետ:

Մարտի սկզբին թուրք ժանդարմները հարձակվեցին Թիմար գավառի էրերին, Ալյուր և Խավենց գյուղերի վրա: Թիմարի ինքնապաշտպանությունը գլխավորում էր վանեցի Ռուբեն Իսրայելյանը: Բողանց գյուղում 500–անոց թուրքական զորքը մեծ զոհեր տվեց և «հաշտություն» կնքվեց: Դրանից հետո տիրեց չարագուշակ լռություն:

1915 թ. փետրվարի 17–ին պարսկական սահմանում ռուսներից կրած պարտությունից հետո 600 չերքեզ զինվորներով Վան վերադարձավ Ջևդեթը: Նա չերքեզներին տեղավորեց հայկական թաղում գտնվող Համուդ աղայի զորանոցում և կարգադրեց, որ հայ տղամարդիկ երեք օրվա ընթացքում ներկայանան զինվորագրման:

Ապրիլի 5–ին թուրքերը Հայոց Ձորի գավառի Հիրճ գյուղում 50 հայ տղամարդկանց լցրին ախոռը և բոլորին սրախողխող արեցին: Նույն կերպ վարվեցին նաև Արճեշ գավառի Ականց գյուղի 400 հայ տղամարդկանց հետ: Մոտ 1000 տղամարդիկ ոչնչացվեցին Բերկրիի գավառի Բանդի–Մահու գետի ափերին:

Ի պատասխան թուրքերի ջարդարարական քաղաքականության՝ տեղ–տեղ հայերը դիմեցին ինքնապաշտպանության: Վանից հյուսիս–արևելք գտնվող Արճակ գավառի Արճակ ու Խառակոնիս գյուղերի բնակիչները Շիրին Հակոբյանի գլխավորությամբ զենք վերցրին, ջարդեցին թուրքերին և քաշվեցին Կզլջա լեռը: Այստեղ բարձրացան նաև շրջակա այլ գյուղերի բազմաթիվ բնակիչներ: Այստեղից շուրջ 8000 հայեր, հետ մղելով թուրքերի գրոհը, իջան Ավերակի գյուղը: Գյուղը պաշարվեց, և հայերը, տալով 100 սպանված, շարժվեցին դեպի Վան: Թուրքերին դիմադրություն ցույց տվեցին նաև Լիմ, Զարանց, Սնուն, Պախելիկ, Ոսկեբակ և այլ գյուղերի 3000 հայեր, որոնք նույնպես քաշվեցին դեպի Վարագա լեռը:

Ուժեղ դիմադրություն կազմակերպվեց Հայոց Ձոր գավառում, որն ընկած է Վանից հարավ: Գավառի միջով հոսող Խոշաբ գետի ափերին ընկած էին 35 հայկական գյուղեր: Երբ ապրիլի 6–ին թուրքերը ժանդարմապետ Էդհեմ բեյի գլխավորությամբ հարձակվեցին հայկական գյուղերի վրա, հայերը քաշվեցին Քերծ գյուղի լեռը և դիմեցին ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանության դիմեցին նաև Անկշտանց, Էրմերի և Կոզի գյուղերի հայերը:

Ապրիլի 7–ին զենքի դիմեցին Կեմ և Անգղ գյուղերի բնակիչները՝ տալով 700 զոհ: Իշխանի գոմ գյուղում 1000 թուրքերի ու քրդերի դեմ ելան 100 հայեր, արյունալի մարտ մղեցին և դեպի Վարագ ու Փեսանդաշտ հեռացան նաև Քերծի լեռան վրա ամրացած 2000 հայերը: Դրանով էլ Հայոց Ձորի ինքնապաշտպանությունն ավարտվեց:

Ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաև Թիմար գավառում, որի 50 գյուղերից 30–ը հայկական էին: Ապրիլի 8–ին քուրդ ցեղապետ Արիֆի ելուզակները պաշարեցին Տիրամեր գյուղը, միաժամանակ հարձակվեցին հարևան Ջանիկ գյուղի վրա: Այդ և շրջակա Վիրկաբիբ, Սոսրաթ, Շահգելդի, Նորշեն, Գոմս և այլ գյուղերի բնակիչները, կռիվներ մղելով, շարժվեցին դեպի Լիմ կղզին: Ահեղ կռիվներ տեղի ունեցան հատկապես լճափին, որից հետո 12.000 հայեր փոխադրվեցին Լիմ կղզի:

Ապրիլի 12–ին թուրքական զորքերն ու քրդական խուժանը հարձակվեցին Այլուր ամենամեծ գյուղի վրա: Այստեղ ինքնապաշտպանությունը գլխավորում էին Աբիսողոմը և Սարգիս Մարդոյանը: Սակայն թշնամին խաբեությամբ մտավ գյուղ և կոտորեց բնակչությանը:

1915–ի ապրիլի 25–ին Զնդեթը 1500 զորքով շարժվեց Վարագի վրա, որը Վասպուրականի Արծվի բույնն էր: Ուժեղ մարտեր մղվեցին Շուշանց գյուղի մոտ: Սակայն ուժերն անհավասար էին, և գյուղի պաշտպանները գիշերով անցան Վան:

Այսպիսով՝ Վանի վիլայեթի շրջաններում հայ ժողովուրդը հերոսական գոտեմարտ մղեց:

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

1915 թվականի հայերի ինքնապաշտպանության փառապսակը դարձավ Վանի հերոսամարտը:

Վանը կազմված էր երկու մասից. արևմտյան մասը Քաղաքն էր կամ Քաղաքամեջը՝ հինավուրց բերդով, պետական հիմնարկներով, զինապահեստով, շուկայով, իսկ արևելյան մասը Այգեստանն էր: Նրանց միացնում էր յոթ կիլոմետր երկարությամբ մի փողոց՝ Սղգայի ջադդան, որի կենտրոնում գտնվում էր Խաչ–փողանի հրապարակը: Վանն ուներ 41.000 բնակիչ, որից 23.000–ը՝ հայեր, 18.000–ը՝ մահմեդականներ: Քաղաքամեջում ապրում էր 4000 մարդ, որից 3000–ը՝ հայեր: Մնացած բնակչությունն ապրում էր Այգեստանում, որի հայաբնակ թաղերն էին Արարքը, Նորաշենը, Հանկույսները: Քաղաքի և Այգեստանի միջև ընկած էր մի ամայի տարածություն, որտեղ մի ժամանակ տեղավորված էր դատարկված Հայկավանք թաղը: Քաղաքից հարավ–արևելք ընկած էր թրքաբնակ Շամիրամի թաղը, իսկ հարավային Կլոր–դար թաղն ուներ խառը բնակչություն: Թուրքերը հայկական թաղերի թիկունքում ստեղծել էին զորանոցներ՝ Հաջի–Բեքիրի, Թոփրակ–կալեի, Համուդ–աղայի: Եթե Քաղաքամեջը պարսպապատ էր ու հենված Շամիրամի ժայռերին, ապա Այգեստանը գրեթե զուրկ էր բնական ամրություններից ու շրջապատված էր այգիներով: Միայն հյուսիսային կողմում ձգվում էր մի փոքրիկ լեռնաշղթա, ուր գտնվում էին Ձմզմ մաղարան ու Միերի դուռը:

Պատերազմն սկսվելուց հետո դեպի Վան դիմեցին շուրջ 70.000 գաղթականներ, որը մի կողմից՝ դժվարացնում էր պարենավորման գործը, իսկ մյուս կողմից՝ ծառայում զինվորական ուժի աղբյուր:

Հայերին բնաջնջելու հաստատ մտադրությամբ՝ կանոնավոր ու մեծաքանակ զինվորական ուժերով դեպի Վան շտապեց կուսակալ Ջևդեթը: Նախ նա տեսակցություն ունեցավ դաշնակցական գործիչներ, օսմանյան պառլամենտի Վանի երեսփոխան Վռամյանի (Օննիկ Դերձակյան), Արամ Մանուկյանի հետ և աշխատեց կեղծ ու պատիր հավաստիացումներով բթացնել նրանց զգոնությունը: Ապա նա պահանջեց, որ Վանի երիտասարդությունը զորակոչվի: 1915 թ. ապրիլի 1–ին Այգեստանի Նորաշեն եկեղեցում գումարված խորհրդակցությունը Վռամյանի և Արամի հորդորներով հավանություն տվեց Ջևդեթի պահանջին: Ապրիլի 2–ին արդեն Վանի առաջնորդական փոխանորդ եզնիկ վարդապետ Ներկարարյանի անունով կոչ հրապարակվեց՝ քաղաքացիական պարտականությունը կատարելու մասին: Սակայն այդ ամենը առաջացրեց Վանի հայ ազգաբնակչության զայրույթը, որը կանխազգում էր նախապատրաստվող ահավոր սպանդը, մինչդեռ իրենց ղեկավարները հպատակության կոչեր էին անում: Մթնոլորտն ավելի շիկացավ, երբ Ջևդեթը Շատախի դեպքերը քննելու համար այնտեղ ուղարկեց հաշտարար հանձնաժողով՝ դաշնակցական ղեկավար գործիչ Վանա Իշխանի գլխավորությամբ, սակայն ճանապարհին ապրիլի 4–ին, Հիրճ գյուղում կազմակերպվեց նրանց տմարդի սպանությունը: Նույնպիսի խարդախ ճանապարհով սպանվեց նաև Վռամյանը, իսկ Արամը վերջին պահին կարողացավ խուսափել թակարդից:

Ջևդեթը արագորեն համալրեց իր զորքերը, բերեց թնդանոթներ և նախապատրաստվեց հարձակման: Ընդհատվեց կապը Քաղաքամեջի ու Այգեստանի միջև:

Վանի հայությունը փրկությունը տեսավ միայն ինքնապաշտպանության մեջ, երբ դանակն արդեն ոսկորին էր հասել: Խաղաղ ժամանակ վանեցիները պառակտված էին Դաշնակցություն, Հնչակյան և Ռամկավարական կուսակցությունների մեջ, որոնք կատաղի պայքարի մեջ էին միմյանց դեմ: Սակայն ազգային դժբախտության ծանր պահին, բարեբախտաբար, վանեցիները հասկացան այդ գործելակերպի կորստաբերությունը և մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները՝ համերաշխորեն մարտի ելան թուրք ջարդարարների դեմ:

Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության Զինվորական մարմին՝ ռամկավար Արմենակ Եկարյանի նախագահությամբ: Նրա մեջ մտան դաշնակցականներ Կայծակ Առաքելը և Բուլղարացի Գրիգորը, ինչպես նաև խորհրդականներ՝ դաշնակցական Արամ Մանուկյանը, ռամկավար Գաբրիել Սեմերճյանը, հնչակյան Հրանտ Գալիկյանը, նախկին արմենական, անկուսակցական, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Ստեղծվեցին նաև պարենավորման, զինբաշխ, հայթայթիչ, կարմիր խաչի, տեղեկատու և այլ մարմիններ:

Հայերն ունեին շուրջ 1500 կռվող և նույնքան էլ հրացան, մաուզեր և սահմանափակ թվով փամփուշտ: Այս փոքրաթիվ ուժերի դեմ կանգնած էր թուրքական կանոնավոր 10–12 հազարանոց բանակը՝ 12 թնդանոթով: Թուրքական զորքերին ղեկավարում էին գերմանական փորձված սպաներ:

Սակայն հայերը ցուցաբերեցին մեծագույն կազմակերպվածություն և խիզախություն: Այգեստանը բաժանվեց պաշտպանական հինգ շրջանների՝ 73 դիրքերով, ուր ամրացան 1053 զինվոր՝ 505 հրացանով, 75 հազար փամփուշտով, 549 մաուզերով ու 40 հազար փամփուշտով: Զինվորական մարմինը անհրաժեշտ հրահանգներ մշակեց կռվողների համար: Դրանցում հաջողության գրավական էր համարվում կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանների ճշգրիտ կատարումը, գնդակների խնայողական ու նպատակային ծախսումը, աչալրջությունը, հարբեցողության խստագույն բացառումը և այլն:

Զինվորական մարմինը, արգելելով վանեցի մարտիկներին՝ հայհոյել թշնամու կրոնը, միաժամանակ կոչ ուղղեց թուրք ազգաբնակչությանը, պարզաբանելով, որ հանցավոր են ոչ թե ժողովուրդները, այլ կառավարողները, և կոչ արեց պահանջել արյունարբու Ջևդեթից՝ վերացնել քաղաքի պաշարումը: Սակայն այդ կոչը արձագանք չգտավ՝ թուրքերի հետամնացության ու կրոնական ֆանատիզմի պատճառով:

1915 թ. ապրիլի 7–ի առավոտյան թուրքերն սկսեցին հարձակումը: Հարձակվում էին թուրքական թաղերից և հատկապես զորանոցներից, իսկ թնդանոթային համազարկերը ավերածություն էին առաջացնում շուրջբոլորը: Հայերը կռվում էին չտեսնված համառությամբ ու կազմակերպվածությամբ՝ ամուր պահպանելով իրենց դիրքերը: Ավելին՝ կռվի հենց առաջին օրը հայերին հաջողվեց գրավել Խաչ–փողանում գտնվող թուրքական դիրքը՝ հեռագրատունը, և պաշարել Համուդ–աղա-

յի զորանոցը: Այդ զորանոցի գրավումն ուներ կարևոր նշանակություն, որովհետև այն ցցված էր հայկական թաղերի կենտրոնում, որտեղից թուրքերն ուժեղ կրակ էին տեղում շրջակայքի վրա: Ճիշտ է, ապրիլի 8–ին հայ մարտիկները ստիպված էին թողնել Հանկույսների եկեղեցու դիմաց գտնվող Շահբենդերյանի դիրքը, բայց դրա փոխարեն հաջողվեց հրդեհել անգլիական հյուպատոսարանի շենքը, ուր դիրքավորվել էին մի քանի տասնյակ թուրք ժանդարմներ:

Ջինվորական մարմինը սահմանեց «Պատվո խաչ» շքանշան, որն արծաթյա փոքրիկ խաչ էր՝ «Հայ Յեղ.» մակագրությամբ: Դրանով պարգևատրվեցին կռիվներում աչքի ընկած շատ մարտիկներ:

Հերոսամարտի երրորդ օրը՝ ապրիլի 9–ին, վանեցիներին հաջողվեց ոչնչացնել Համուդ–աղայի զորանոցը, որը մեծ վտանգ էր ներկայացնում: Այն կառուցվել էր դեռևս 1904–ին սուլթան Աբդուլ Համիդի օրոք և վանեցիների աչքում թուրքական բռնապետության խորհրդանիշն էր: Երբ Շահբենդերյանի դիրքի անկումից հետո կապ հաստատվեց Համուդ–աղայի և Թոփրակ–կալեի զորանոցների միջև, վտանգն ավելի մեծացավ: Ուստի զորանոցի խորտակումն ուներ ոչ միայն ռազմական, այլև բարոյաքաղաքական նշանակություն: Ճակատային գրոհով Համուդ–աղայի զորանոցի գրավումը հնարավոր չէր, որովհետև այն գտնվում էր Հանկույսների թաղի կենտրոնում, ուներ բավականաչափ զորք ու զենք, նրան հարում էին թուրքական մի քանի տներ, որոնք նույնպես վերածվել էին դիրքերի: Ուստի Բուլղարացի Գրիգորի առաջարկով որոշվեց պայթեցնել զորանոցը: Այդ նպատակով գործի անցան քյանքան (հողափոր) արհեստավորները՝ Կոլե Խաչոյի և Կարապետի գլխավորությամբ, որոնք հայկական դիրքերից մինչև զորանոցի հիմքը ստորգետնյա անցք փորեցին և ռումբեր դրեցին: Բայց դրանք շատ խորն էին բացվել, և տեղի ունեցած խուլ պայթյունը չվնասեց զորանոցին: Սակայն երկրորդ լիցքի պայթյունի հետևանքով առաջացած հրդեհը լափեց ողջ զորանոցը, որը ցնծություն առաջացրեց պաշարվածների շարքերում: Զորանոցի ոչնչացման հաջորդ օրը՝ ապրիլի 10–ին, այգեստանցիներին հաջողվեց ետ գրավել Շահբենդերյանի դիրքը: Այդ գործում կարևոր դեր կատարեց քյանքան Խամբոյի աղջիկ Սևոն՝ 19–ամյա Իսկուհի Համբարձումյանը, որը, կյանքը վտանգելով, հետախուզեց դիրքը և մարտիկներին առաջնորդեց այնտեղ: Քաջարի աղջիկը պարգևատրվեց «Պատվո խաչ» շքանշանով:

Ապրիլի 10–ին Ջինվորական մարմինը կոչ հրապարակեց, որում նշվում էր Վանը 24 ժամվա ընթացքում ծնկի բերելու Ջևդեթի ծրագրի

ձախողման մասին և ընդգծվում էր, որ այս կռիվը գոյության կռիվ չէ միայն, այլ կռիվ է ճշմարտության և արդարության համար, ցույց տալու համար, որ հայը գիտի մեռնել զենքը ձեռքին:

Գնալով մարտերն ավելի թեժանում էին, և Այգեստանի հայերը նորանոր քաջագործություններ էին կատարում: Ապրիլի 15–ին Տիգրան Վարժապետ Այիճյանը, ռիսկի ենթարկելով սեփական կյանքը, հրկիզում է Արարուց հրապարակի վրա գտնվող թուրքական ոստիկանությունը, որը լուրջ վտանգ էր ներկայացնում: Տիգրան Վարժապետը նույնպես պարգևատրվեց «Պատվո խաչ» շքանշանով:

Ինքնապաշտպանությունը բարձր կազմակերպվածությամբ սկսվեց նաև Քաղաքամեջում, որը կտրված էր Այգեստանից: Հյուսիսից այն պաշտպանված էր Շամիրամի բերդով ու գահավեժ լեռներով, իսկ մյուս երեք կողմերից շրջապատված էր սեպաձև պարիսպներով: Այստեղ էին գտնվում պետական հիմնարկները և հայոց առաջնորդարանը: Քաղաքամեջում կար 3000 հայ բնակչություն: Այստեղ ևս կազմվեց Ջինվորական մարմին՝ Հիսուսյան վարժարանի տեսուչ Հայկակ Կոսոյանի ղեկավարությամբ: Անդամներն էին Լևոն Գալջյանը, Միհրան Թորամանյանը, Դավիթ Սարգսյանը, Միհրդատ Միրզախանյանը, Հարություն Ներկարարյանը, Սարգիս Շահինյանը: Ստեղծվեցին նաև մատակարարման, կարմիր խաչի և այլ մարմիններ:

Երկու վերստ երկարությամբ ձգվող ինքնապաշտպանության շրջագիծը բաժանված էր 4 շրջանների և բազմաթիվ դիրքերի: Սակայն զենքը քիչ էր՝ 100 հրացան, 210 ատրճանակ, 60 հազար փամփուշտ, իսկ ողջ շրջագիծը բոլոր կողմերից գտնվում էր թուրքերի օղակի մեջ:

1915 թ. ապրիլի 7–ին՝ առավոտյան ժամը 9–ին, Այգեստանից երեք ժամ հետո թուրքերն այստեղ էլ անցան հարձակման: Հայերը ոչ միայն քաջաբար պաշտպանվեցին, այլև հենց առաջին օրը հրդեհեցին փոստ–հեռագրատունը, ոստիկանատունը և դատարանը, որոնք թուրքերի համար ամուր դիրքեր էին: Այդ գործողությունների ժամանակ աչքի ընկան 16–ամյա Արամ Կապարուկյանը և տիկին Աղավնի Վարպետյանը: Երկրորդ օրը՝ ապրիլի 8–ին, հայերը կարողացան ոչնչացնել կառավարական նոր փոստատունը և զինարանը: Նրանք նոր դիրքեր խորտակեցին նաև հաջորդ չորս օրերին:

Տեսնելով, որ զենքի ուժով հնարավոր չէ կոտրել հայերի դիմադրությունը, Ջևդեթը դիմեց խարդախության և նամակ գրեց իր բարեկամ, իտալական հյուպատոս Սպորդոնիին՝ խնդրելով նրա միջնորդությունը, որպես-

զի հայերը զինաթափվեն ու հանձնվեն: Երբ այդ փորձը ձախողվեց, Ջնդեթը դիմեց նոր միջոցի. նա թույլ տվեց գաղթականներին մտնել քաղաք, սով առաջացնելու մտադրությամբ, սակայն դա էլ դրությունը չփոխեց:

Վանի հերոսական ինքնապաշտպանության առաջին տասնօրյակն անցավ հաջող: Այդ մասին ընդգծվում էր ապրիլի 16–ին Զինվորական մարմնի հրապարակած կոչում: Միաժամանակ փորձեր են արվում խիզախ ու ճարպիկ սուրհանդակների միջոցով կապ հաստատել դրսի հայության, ռուսական բանակի հետ և խնդրել օգնություն: Ապրիլի 12–ից սկսած՝ մի քանի սուրհանդակներ ուղարկվեցին, սակայն դրանցից միայն մեկին հաջողվեց Պարսկաստանի վրայով տեղ հասնել, այն էլ մեծ ուշացումով:

Վանի ինքնապաշտպանության երկրորդ տասնօրյակում նույնպես ծավալվեցին ծանր մարտեր: Ապրիլի 19–ին թուրքերի ձեռնարկած կատաղի հարձակումը ոչ մի արդյունք չտվեց. նրանք տվեցին մեծ կորուստներ ու նահանջեցին ելման դիրքերը:

Ձենք հայթայթելու համար վանեցիներն ստեղծեցին զինարան, փամփշտարան և վառոդարան, որտեղ աշխատում էին համապատասխան մասնագետներ՝ Վանի վարժապետանոցի տնօրեն, քիմիկոս պրոֆեսոր Միքայել Մինասյանի ղեկավարությամբ: Նրա օգնականներն էին Վարդան Պապիկյանը և Հարություն Կաքավյանը: Այստեղ արագությամբ վերանորոգվում էին վնասված զենքերը, պատրաստվում էր վառոդ, նույնիսկ ձուլվեցին երկու թնդանոթներ:

Կենսական դեր կատարեց 500 արհեստավորներից կազմված «Ամրաշենների խումբը», որոնք անհապաղ հասնում էին ամենավտանգավոր դիրքերը և անմիջապես վերականգնում թնդանոթների պատճառած ավերածությունները: Կռվի առաջին տասնօրյակում նրանք Այգեստանի շուրջ փորեցին խոր և լայն խրամատներ, ստորերկրյա թունելներ և հաղորդակցության այլ ուղիներ: Այդ նրանք էին, որ թշնամու դիրքերի տակ ստորերկրյա անցքեր էին բացում, որտեղ դրված ռումբերով քարուքանդ էին արվում թշնամու դիրքերը: Ամրաշեն խմբի զինվորներից էին Շավարշ Հովիվյանը, Ազատ Խորենյանը և Գրիգոր Պաջիրյանը:

Անգնահատելի դեր կատարեց Հովհաննես Բուճիկանյանի ղեկավարած նվագախումբը՝ «Ֆանֆառը», կազմված Վարժապետանոցի մի խումբ աշակերտներից: Նվագախումբը հասնում էր ամենավտանգված դիրքերը և իր աշխույժ նվագով ոգևորում էր մարտիկներին: «Ֆանֆառը» ինքնապաշտպանության ողջ ընթացքում դարձավ Այգեստանի հե-

ռոսամարտի խանդավառ ոգին: Նրա հայտնվելը որքան ոգևորում էր հայերին, նույքան էլ նյարդայնացնում և խուճապի էր մատնում թուրքերին: Նվագախմբի ուղեցույց առաջնորդն էր Մարգար Փախչոյանը: Վանեցիների դիմադրողական ուժը ոչ միայն չէր թուլանում, այլև աճում էր, որովհետև նրանք արդեն ձեռք էին բերել մարտնչելու փորձ, և, բացի այդ, նրանց հույս էր ներշնչում ռուսական զորքերի մոտենալը: Իսկ ռուսական զորքը և Անդրանիկի գլխավորած հայ կամավորների 1–ին գունդը 1915 թ. ապրիլի 20–ին Դիլմանի ճակատամարտում ջախջախել էին Խալիլ բեյի գլխավորած թուրքական բանակին և առաջ էին շարժվում դեպի Վան: Ռուսական մեկ այլ զորաբանակ էլ, որի առաջապահն էր Դրոյի գլխավորած հայ կամավորների 2–րդ գունդը, Վանին էր մոտենում Իգդիր–Բերկրի գծով:

Ռուսական զորքերի և հայ կամավորների մոտենալուց ահաբեկված Ջնդեթը ապրիլի 21–ին ձեռնարկեց նոր հարձակում: Ուժեղ ռմբակոծությունից Վանը կորավ հրի ու ծխի մեջ, սակայն վանեցիները, մեծ ու փոքր, անձնուրաց կռվի ելան ատելի ոսոխի դեմ: Չտեսնված համարձակությամբ աչքի էին ընկնում պատանի վանեցիները: Նրանք ոչ միայն կապավորի դեր էին կատարում, փամփուշտ ու պարեն հասցնելով դիրքերը, այլև, մահը արհամարհելով թաց լաթերով հանգցնում էին թուրքական պատրույգավոր ռումբերը, վնասազերծում դրանք և վառոդը հասցնում փամփուշտ լցնողներին: Այդ խիստ վտանգավոր գործում աչքի ընկան 12–14–ամյա պատանիներ Ասլանը, Բաբկենը, Արտաշեսը, Ոստանիկը, Մարտիրոսը և շատ ուրիշներ, որոնց մի մասը զոհվեց՝ չհասցնելով կտրել ռումբի վառվող պատրույգը: Այդ խիզախ պատանիների մեջ էր նաև Արամ Թովմասյանը՝ ապագայի շնորհաշատ երգիծաբան Լեռ–Կամսարը: Իսկ հայ կաթոլիկների դպրոցի սան Կիրակոս Կիրակոսյանը անցավ թշնամու դիրքերը, սպանեց թուրք երկու զինվորների և նրանց զենքերով ետ վերադարձավ՝ արժանանալով Պատվո խաչի:

Կռիվները վերսկսվեցին ապրիլի 24–ին, որոնք գնալով ավելի ուժեղացան: Ապրիլի 28–ին Ջնդեթը ձեռնարկեց, կարելի է ասել, վերջին խոշոր հարձակումը, և այդ օրը տեղի ունեցան ամենակատաղի կռիվները, սակայն վանեցիները ոչ մի թիզ հող չզիջեցին:

Ապրիլի 30–ին հայերը գրավեցին Խաչ–փողանի կարևոր կետերը և մի մեծ շան պոչին նավթոտ թիթեղ կապելով ու վառելով՝ բաց թողեցին դեպի թուրքերի դիրքերը: Դա սարսափի մեջ գցեց առանց այն էլ ընկճված թուրքերին, որոնք դեռևս շարունակեցին կռիվը մինչև մայիսի 3–ը՝

գլխավորապես ռմբակոծելով քաղաքը: Սակայն մոտեցող ռուսական բանակի, հայ կամավորների և Վանի հայության հուժկու հարվածների տակ թշնամին խուճապահար փախուստի դիմեց: Մայիսի 3–ին հայ մարտիկները լիովին ազատագրեցին քաղաքը, հրդեհեցին թուրքական բռնապետության ամրոց Հաջի–Բեքիրի զորանոցը և ապա Վանի բերդի վրա բարձրացրին հայոց դրոշը: Այգեստանցիները և Քաղաքամեջի պաշտպանները բոլոր ցավերն ու տառապանքները մոռացած՝ ցնծությամբ դիմավորեցին միմյանց և ջերմորեն գրկախառնվեցին: Արժե, հավանաբար, հիշատակել, որ երբ Քաղաքամեջի պաշտպանները վերահաշվառեցին ունեցած զինամթերքը, պարզվեց, որ խնայվել է ունեցած ռազմապաշարի կեսը, որովհետև այստեղ ևս հրահանգվել էր և ոչ մի աննպատակ գնդակ չարձակել:

Մայիսի 5–ին երկու թևերով Վան մտան հայ կամավորների երկու խմբերը՝ Ներքին Թիմարից Դրոն և Համազասպը, վերին Թիմարից՝ Արճակի վրայով, Քեռին ու Վարդանը (ըստ Հ. Կոսոյանի՝ հայ կամավորները և ռուսական բանակը Վան են մտել մայիսի 7–ին (տե՛ս Հ. Կոսոյան, Վան–Քաղաքամեջի ապրիլյան կռիվները, Երևան, 1992, էջ 130): Իսկ ավելի շուտ, ըստ Հ. Գևորգյանի, Վան էր մտել Դրոյի զորախմբի առաջապահ ջոկատը՝ Դաշնակցական Խեչոյի և Դալի Ղազարի գլխավորությամբ: Ապա մայիսի 6–ին Վան մտավ բուն ռուսական բանակը՝ գեներալ Նիկոլանի հրամանատարությամբ:

Այդպես վերջացավ Վանի 27–օրյա հերոսամարտը, որի ընթացքում հայերը տվեցին 200 սպանված և վիրավոր: Այն հայոց ազատամարտի փայլուն դրվագներից է և պատիվ է բերում հայ ժողովրդին:

ՇԱՏԱԽ

Վանի ինքնապաշտպանությանը զուգահեռ 40–օրյա հերոսական ու հաղթական կռիվ մղեցին Շատախի հայերը:

Շատախ գավառը, որը հայտնի է նաև Ջերմաձոր անունով, գտնվում է Վանա լճի հարավում և ներկայացնում է բարձրաբերձ լեռների, անդնդախոր ձորերի և հորձանուտ գետերի մի ուրույն լեռնաշխարհ: Գավառի հյուսիսային սահմանը Արտոս լեռն է իր թևերով, արևմուտքում՝ Առնոս լեռը և Մոկս գավառը, արևելքում՝ Նորոդուզի և Անձևացյաց գավառները, իսկ հարավային սահմանը Արևելյան Տիգրիսն է, որը հոսում է գավառի ամբողջ երկարությամբ ձգվող մի վիթխարի ձորի միջով: Երկու կողմերից նրան են միանում մի շարք ձորակներ ու արագահոս գետակներ, որոնք միախառնվելով Տիգրիսին՝ հոսում են դեպի հարավ:

Շատախի 110 գյուղերից 50–ը հայաբնակ էին, մնացածը՝ քրդաբնակ, իսկ թուրքեր առհասարակ չկային: Գավառի կենտրոնը Թաղ գյուղն էր, որը դարձավ ապրիլյան կռիվների հենակետը: Երկու հարյուր տներից բաղկացած գյուղը զուտ հայաբնակ էր և գտնվում էր երեք ամեհի ձորերի միացման տեղում:

Շատախցի հայերից զենքը միշտ անբաժան էր, որով սարսափ է ազդել քրդերի վրա, առաջացրել տեղական թուրքական իշխանությունների ակնածանքը: Այդ պատճառով էլ Ջնդեթը որոշեց առաջինը քանդել այդ վտանգավոր բույնը և ապա հեշտությամբ բնաջնջել ամբողջ նահանգի հայությանը:

Վասպուրականում 1900–ական թվականներին Հ. Հ. Դաշնակցությունը լծվեց հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության կազմակերպման գործին: Դաշնակցության գործունեության գլխավոր առանցքը կազմում էր բնական դիրքերով օժտված Լեռնապարի շրջանը, որի մի կարևոր օղակն էլ Շատախն էր: 1904–ից Լեռնապարում գործում էին դաշնակցական գործիչներ Իշխանը (Նիկողայոս Պողոսյան, 1883–1915), Արամը, Սարգիսը, Նիկոլը, Վ. Փափազյանը (Կոմս) և ուրիշներ: Ըստ Ս. Մեսրոպյանի տեղեկության՝ 1908–1914 թթ. Շատախի 10.000 գյուղացիությունը 7000 օսմանյան ոսկի է տրամադրել ինքնապաշտպանության գործին, որը խոսուն ցուցանիշ է (տե՛ս «Վան–Վասպուրականի հերոսամարտը» ժողովածուի «Հերոսամարտ Շատախում և Փեսանդաշտում» գլուխը, հեղինակ՝ Ս. Մեսրոպյան, Երևան, 1990, էջ 74):

1912 թ. Դաշնակցության Վասպուրականի շրջանային ժողովը միաձայնությամբ որոշում է. «Նկատի ունենալով, որ իթթիհատականները թշնամական դիրք են բռնել հայ ժողովրդի նկատմամբ, անհրաժեշտ է զարկ տալ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը և պատրաստ լինել ամեն անակնկալի»: Այդ որոշման հիման վրա գավառներում ստեղծվեցին ինքնապաշտպանության հատուկ զինվորական մարմիններ: Նույն թվականի հոկտեմբերին Արամի մասնակցությամբ Շատախի շրջանային ժողովն ընտրեց «Անտառի» Զինվորական մարմին, որի մեջ մտան Հովսեփ Չոլոյանը, Միհրան Տեր–Մարգարյանը և Սամվել Մեսրոպյանը: Զինվորական մարմինը կազմեց ամբողջ գավառի ինքնապաշտպանության հատակագիծը, տնտեսական կարողության

վիճակագրությունը: Հերոսամարտի նախօրյակին Շատախն ուներ հետևյալ զինական կարողությունը՝ 120 նոր սիստեմի հրացան, 70 տասնոց մաուզեր ատրճանակ, 50–ից ավելի զանազան ատրճանակներ, 100–ից ավելի շեշխանա ծխավոր հին տիպի հրացան, մեծ քանակությամբ վառոդ, կապար, փամփուշտ: Զենքն ու զինամթերքը պահեստավորվեց գյուղերից դուրս ապահով տեղերում:

Մշակվեց ինքնապաշտպանական կռվի մի նախագիծ, ըստ որի՝ հնարավոր էր կռվի ընթացքում ամբողջ շրջանը իրար միացնել: 1915 թ. հունվարի 7–ին Զինվորական մարմինը Թաղում հրավիրեց խմբապետների խորհրդակցություն, որտեղ որոշվեցին ռազմական կարևոր նշանակություն ունեցող վայրերը և պատասխանատու ղեկավարները: Ինքնապաշտպանության ճակատը ներկայացնում էր մոտ 50 կիլոմետր երկարությամբ մի գիծ: Պատրաստություն տեսնվեց 300 զինվորի համար վեց ամսվա զենքի, ռազմանյութի և պարենի պաշար: Պարենը ամբարվեց Թաղ, Արմշատ, Կաճետ, Կազպի, Ծիծանց, Պոլս, Սիվտկի, Գոմեր և Քրմենց գյուղերում: Երիտասարդությունը մարզվում էր թռուցիկ խմբերի մեջ, ժողովուրդը հոգեբանորեն նախապատրաստվում էր դիմագրավել ամեն մի անակնկալ:

1915 թ. փետրվարի կեսերին խմբապետ խումարցի Պետրոսի սպանությամբ Շատախում դեպքերը գահավեժ ընթացք ստացան: Գավառի ինքնապաշտպանության ղեկավարությունը այդ սպանությունը գնահատեց իբրև թուրքական դավադիր ծրագրի սկիզբ: Մարտի 15–ին Զինվորական մարմինը Վան ուղարկեց Սամվել Մեսրոպյանին և Միհրան Տեր–Մարգարյանին՝ Դաշնակցության Կենտրոնական կոմիտեից ցուցումներ ստանալու համար: Մարտի 25–ին ձերբակալվեց Զինվորական մարմնի անդամ Հովսեփ Չոլոյանը: Նրան ազատելու փորձերը հաջողություն չունեցան:

Մարտի 30–ին հրավիրվեց բոլոր խմբապետների խորհրդակցություն, որը հանգեց հետևյալ որոշման. 1. ապարդյուն և վտանգավոր համարել համաձայնության փորձերը կառավարության հետ, 2. հայտարարել զինվորական դրություն և հարաբերությունները խզված համարել իշխանությունների հետ, 3. որոշման մասին հատուկ սուրհանդակի միջոցով տեղեկացնել Կենտրոնական կոմիտեին: Կազմվեց նոր Զինվորական մարմին, որի մեջ մտան Սամվել Մեսրոպյանը, Ազատ Սիմոնյանը և Տիգրան Բաղդասարյանը: Խմբապետները ստանձնեցին իրենց վստահված դիրքերի պաշտպանությունը, որոնք յոթն էին՝ Շահրուրա բերդ,

Հաշկանից կամուրջ, Պոլս, Սողվանց գյուղ, Տիգրիսի վրա գտնվող Խլբտանի, Կաճեթի և Արմշատի կամուրջներ: Հիշյալ վայրերը իրար հետ կապելու համար ստեղծվեցին երկու թռուցիկ խմբեր: Գավառի ինքնապաշտպանության կենտրոնը Թաղն էր, որն ընկած էր Տիգրիսի աջ ափին, այնտեղ, որտեղ Սիվտկին գետը, կիսելով գյուղը, միանում էր Տիգրիսին: Գյուղաքաղաքը բաժանված էր երեք թաղամասերի՝ Վերին, Ներքին և Զրաղացի: Առաջին երկու թաղերն ընկած էին Սիվտկին գետի աջ ափին, Քյուրյուկ լեռան ստորոտին, որի լանջին ընկած էր բախտորոշ ռազմական կետ հանդիսացող Սողվանց գյուղը: Զրաղացի թաղը գետի ձախ ափին էր, Ջամլանաբեկ լեռան լանջին: Թաղի դիմաց, Տիգրիսի ձախ ափին գտնվում էին կառավարչատունը, հեռագրատունը, բանտը և զորանոցը: Տիգրիսի վրա երկու կամուրջները կապում էին կառավարչատունը Թաղի հետ: Կռիվների ընթացքում Տիգրիսի ձախ ափը և Զրաղացի թաղի մի կարևոր մասը, որտեղ էր և հայոց դպրոցը, գտնվում էին թուրքերի ձեռքին: Զինվորական մարմնի կենտրոնը Թաղի հայոց եկեղեցին էր, իսկ մարտիկները դիրքավորված էին յոթ տներում: Նույնքան դիրքեր էլ ունեին թուրքերը: Հայկական դիրքերում կային 115 մարտիկներ, իսկ թուրքական դիրքերում՝ 150 ժանդարմ, 2000–ի չափ քուրդ աշիրեթներ, երկու թնդանոթ:

Կռիվների սկզբում հայ մարտիկներին հաջողվեց հնարամտորեն հարկադրել անձնատուր լինել Սիվտկին գյուղի 20 հոգուց բաղկացած թուրքական ջոկատին, ինչպես նաև վերացնել Շահրուրի բերդի շրջակայքում գտնվող Խանի և Գոմերի պահակախմբերը: Հայ մարտիկները հաշվեհարդար են տեսնում նաև Սակ գյուղում իջևանած 14 ժանդարմների հետ՝ իրենք էլ տալով երեք զոհ:

Շատախի սույն դեպքերի կապակցությամբ Վանի կուսակալ Զնդեթը հղանում է դավադիր ծրագիր՝ նա Վռամյանի միջոցով առաջարկում է Կենտրոնական կոմիտեին երկու կողմից հատուկ ներկայացուցիչներ ուղարկել Շատախ՝ իբր կացությունը պարզելու և խաղաղեցնելու համար: Միաժամանակ նա հատկապես մատնանշում է, որ հայերի կողմից գնացողն անպայման լինի Իշխանը: Ապրիլի 3–ի երեկոյան Իշխանը մեկնում է Վանից՝ հետը վերցնելով Շատախի Զինվորական մարմնի անդամ Միհրան Մարգարյանին, իր զինակիցներ Վ. Խռանյանին և Քոթոթ Պողոսին: Սակայն ճանապարհին Հիրճ գյուղում հանգստանալիս չորսն էլ զոհ են գնում Զնդեթի կազմակերպած դավադրությանը:

Ապրիլի 4–ին Թաղի թուրքական վարչության և հայերի միջև բանակցություններ սկսվեցին, որոնք, սակայն, անցան ապարդյուն: Ինքնապաշտպանության աշխատանքներին լծվեցին նաև կանայք, որոնք պարեն էին նախապատրաստում, հեռու վայրերից քար էին կրում՝ դիրքերն ամրացնելու նպատակով: Նույն օրն էլ պայթեց առաջին գնդակը, և սկսվեցին հազարավոր համազարկեր: Այսպիսով՝ 1915–ին դարավոր ստրկության և գերության շղթաները փշրելու առաջին քայլը կատարվեց Վասպուրական աշխարհի Շատախ գավառի կենտրոն Թաղ ավանում: Ապրիլի 4–22–ը Թաղում և ամբողջ գավառում ընթացան թեժ մարտեր: Առաջին օրը հայերը այրեցին Ներքին թաղի ոստիկանատունը, ձերբակալեցին մի ոստիկանի և գրավեցին 240 փամփուշտ: Ապրիլի 7–ին հայերն այրեցին ջրաղացի կամուրջը և կտրեցին թուրքերի հաղորդակցության ճանապարհները: Ապրիլի 12–ին հայերը Խլքտանի կամուրջը քանդելու անհաջող փորձ կատարեցին: Ապրիլի 17–ին Հայոց եկեղեցին վերածվեց մի բարդ զինական դարբնոցի: Այստեղ կենտրոնացրին ուռկանների վրայից հանված կապարը, կշռաքարեր և այլ մետաղյա իրեր, սկսեցին վառոդ պատրաստել, նորոգել շարքից ելած զենքերը և փամփուշտներ լցնել: Ապրիլի 18–ին թուրք ոստիկանները փորձեցին անցնել Հաշկանից կամուրջը, սակայն հինգ զոհ տալով՝ նահանջեցին: Ապրիլի 20–ին սկսեց գործել հայերի պատրաստած թնդանոթը, որը հրաշալիորեն քանդում էր թշնամու դիրքերը:

Ապրիլի 4–ի թվակիր նամակով, որը, ինչպես նաև մոտ 25 այլ գրություններ, ընկան հայերի ձեռքը. Շատախի կայմակամ Համդի բեյը կուսակալ Զնդեթից խնդրում էր օգնական ուժեր և զինամթերք ուղարկել, որովհետև հայերին իրենց դիրքերից հանելու համար լուրջ զինվորական ուժի ամենախիստ կարիք կա: Համդի բեյի ապրիլի 6–ի թվակիր նամակում, ուղղված գումարտակի հրամանատար Քյամիլ բեյին, նշվում էր, որ իրենք արդեն ութ օր է, ինչ կռվում են Թաղի ապստամբների դեմ: Մոտ 500 ֆիդայիներ ամրացել են տներում, որոնց անընդհատ օգնության են գալիս շրջակա ավերված գյուղերից: Եվ եթե առաջիկա օրերին իրենց չհաջողվի գրավել Թաղը և շրջակա բլուրները, այլևս ոչինչ հնարավոր չի լինի անել: Դրա համար անհրաժեշտ է մեկ թնդանոթ և հմուտ սպայի ղեկավարությամբ մի զորամաս: Ապրիլի 10–ին Համդի բեյը Զնդեթին գրում էր, որ Թաղի կռիվը առավել լուրջ կերպարանք է ստանում և սաստկանում, ապստամբներին հասցվող օգնությունը օր օրի ավելանում է: Սպանվել է Նորդուզի մյուդիրը, իսկ Հայոց Ջորի, Գյավաշի

և Մոկսի ուժերից ոչ մի տեղեկություն չկա: Ճանապարհ ընկած ռազմանյութը կարող է գրավված լինել հայերի կողմից, առանց որի հնարավոր չէ մաքրել Թաղը, ուստի կայմակամը թախանձագին խնդրում էր ռազմամթերք հասցնել: Ապրիլի 12–ին Զնդեթը ծածկագրով հավաստիացնում էր Համդի բեյին և Նորդուզի կայմակամ Խալլոդ բեյին, որ Շատախի համար ուղարկված է 10 սնդուկ մաուզերի փամփուշտ և մի թնդանոթ: Սակայն ապրիլի 27–ին Համդի բեյը գումարտակի հրամանատար Քյամիլ բեյին գրում էր, որ չնայած Զնդեթի հավաստիացումներին, ոչ մի թնդանոթ էլ չի ստացվել, և օրը ցերեկով Թաղի կառավարչատուն մտնել–ելնելը հնարավոր չէ, քանի որ մուտքը գտնվում է դիմացի հայկական դիրքի կրակի տակ, որը կարելի է քանդել միայն թնդանոթով, ուստի խնդրում էր շտապ երկու թնդանոթ ուղարկել:

Եվ իրոք, մինչդեռ Շատախի կայմակամը դիմումներ էր կատարում կուսակալին և գումարտակի հրամանատարին՝ պահանջելով ռազմամթերք, թնդանոթներ և լրացուցիչ զորամասեր, շատախցիները ամուր փակել էին հաղորդակցության ուղիները, և թուրքերը դրսի հետ հաղորդակցվում էին միայն Մուսկավա գյուղի լեռնային անանցանելի կածաններով:

Ապրիլի 24–ից սկսած՝ շատախցիների դրությունն սկսեց ծանրանալ: Տիգրիսի վրա նոր կամուրջներ կապելով՝ քրդերը մտան Արմշատ և Բոլիս հայկական գյուղերը, որտեղ տեղի ունեցան եռօրյա կատաղի կռիվներ, որից հետո հայերը խմբապետ Սեթի գլխավորությամբ քաշվեցին Վարիսետ լեռան դիրքերը՝ թիկունքից Թաղը պաշտպանելու նպատակով: Այստեղ կենտրոնացվեցին շատախցիների լավագույն ուժերը՝ Ազատի, Միհրան Չաթոյանի, Հովսեփ Գուրունյանի, Սահակ Չոլոյանի գլխավորությամբ:

Ապրիլի 28–ի առավոտյան Թաղի պաշտպանները հեռվում նկատեցին ոչ թե սպիտակ, որին սպասում էին, այլ բարձրացող կարմիր դրոշ, որ նշանակում էր, թե թշնամին մոտենում է, և դրությունը անհուսալի է: Անհրաժեշտ էր սուրհանդակ ուղարկել, և առաջ եկավ 12 տարեկան Սրբոն: Փոքրիկ հերոսուհին վերցրեց նամակը, տեղ հասավ և պատվով կատարեց իր պարտականությունը: Զինվորական մարմինը տագնապով հետևում էր Սողվանց գյուղի կողմից բարձրացված դրոշակին: Կարճ ժամանակ անց դրոշակը երեք անգամ գլուխն իջեցրեց ու մեկեն վայր ընկավ: Դա նշանակում էր, որ Սողվանցն անցել է թշնամու ձեռքը: Դրանով Թաղն ընկավ պաշարման մեջ, և անհրաժեշտ էր կապ

ստեղծել դրսի ուժերի հետ: Այս անգամ սուրհանդակի պարտականությունը հանձն առավ չորս զավակների մայր Ասմարը, որը թշնամու շղթայի միջով, Սիվտկնա ծորով անցնելով 10 կմ ճանապարհ, Ջինվորական մարմնի նամակը հասցրեց Ազատին ու վերադարձավ: Մինչև մայիսի 4–ը պաշարված թաղեցիները վարեցին վճռական դիրքային կռիվներ, երբ Բազիկը 10 մարտիկներով ճեղքեց օղակը և մտավ Թաղ: Մայիսի 5–ին թուրքերը գործի դրեցին նոր ստացած երկու թնդանոթները և սկսեցին ավերել հայերի դիրքերը, որոնք, սակայն, գիշերվա ընթացքում վերականգնվում էին:

Թաղեցիները նորից սուրհանդակ ուղարկեցին Սիվտիկին՝ խնդրելով արագացնել Սողվանի գրավումը: Հարձակումը նախապատրաստում էր Ազատը, որի հետ էին Միհրան Չաթոյանը, Արշակ Պետրոսյանը, Սեթը, Մեսրոպ Ջանոյանը՝ 120 լավագույն մարտիկներով: Նրանք վճռական հարձակումով վերագրավելու էին Սողվանը և թաղեցիներին փրկելու էին պաշարման օղակից: Մայիսի 8–ի առավոտյան սկսվեց Ազատի հարձակումը Քյուրիկ լեռան գագաթից, որտեղից լսվեց Մ. Ջանոյանի փողի ձայնը, և մոլեգնած գրոհի դուրս եկան նաև Թաղի պաշտպանները: Թաղի եկեղեցու 38 օր լռած եկեղեցու զանգերը կրկին սկսեցին ղողանջել: Հաղթանակը կատարյալ էր. Սողվանը վերագրավվեց և նրա վրա կրկին սկսեց ծածանվել սպիտակ դրոշը: Մութն ընկնելուն պես Ազատը մտավ Թաղ, և նույն պահին էլ հայտնի դարձավ, որ հայ կամավորական գնդերը մտել են Վան, իսկ Արամը թաղեցիներին էր ուղարկել երկու արկղ փամփուշտ և երկու հրացան: Մայիսի 11–ին քրդերը լքեցին Թաղի շրջակայքի իրենց դիրքերը և դիմեցին փախուստի: Այսպես, Շատախի 42–օրյա հերոսամարտը ավարտվեց փայլուն հաղթանակով:

Մայիսի 11–ին ստացվեց Դրոյի նամակը, որը հայտնում էր, որ իր հազար կամավորներով հասել է Սիվտկին: Մայիսի 12–ին Թաղը շուքով ու մեծարանքով ընդունեց Դրոյին, իսկ վերջինս հիացմունքի ու դրվատանքի խոսքերով ողջունեց ռազմիկ շատախցիներին:

1915 թ. ապրիլի սկզբներին ինքնապաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաև Ոշտունիքում կամ Գավաշ գավառում՝ Լևոն Շաղոյանի ղեկավարությամբ: Երբ Ոստանի կայմակամը զենքեր պահանջեց Գավաշի ժողովրդից և ապա հարձակում ձեռնարկեց հայկական Փայխներ, Նոր Գյուղ, Մոխրաբերդ և այլ գյուղերի վրա, գավաշցիները մարտերով հեռացան և ապաստանեցին սահմանակից Փեսանդաշտում: Այստեղ պատսպարվեց մոտ 6000 մարդ:

Փեսանդաշտը մի ավազան–դաշտ է 13 կիլոմետր երկարությամբ և 8 կիլոմետր լայնությամբ՝ շրջապատված լեռներով: Այնտեղ էին գտնվում Առեղ, Կայնամիրան, Շիտան և Կաղազիզ հայկական չորս գյուղերը: Վարչական բաժանմամբ Փեսանդաշտը մտնում էր Շատախի գավառի մեջ:

Փեսանդաշտի ինքնապաշտպանությունն ուներ չորս դիրք՝ Բարադոտիկի, Շահրուրա–Բերդի, Կարոսլախի և Նառի: Զինական ընդհանուր ուժն էր 150 հրացան և 70 ատրճանակ:

Ապրիլի 14–16–ը թուրքերն ուժգին հարձակումներ կատարեցին հատկապես Բարադոտիկի ուղղությամբ, որի ինքնապաշտպանությունը անձամբ ղեկավարում էր Լևոն Շաղոյանը՝ իր տրամադրության տակ ունենալով 80 հրացանավորներ և 40 ատրճանակավորներ: Թշնամու գրոհներն ուղեկցվում էին լեռնային թնդանոթի ուժգին կրակով: Սակայն այդ բոլոր գրոհներն ավարտվում էին անհաջող և թշնամու մարդկային կորուստներով: Ապրիլի 17–ին թուրքերը ձեռնարկեցին վերջին հարձակումը՝ փորձելով Արտոս լեռան գագաթով անցնել փեսանդաշտցիների թիկունքը: Սակայն Լևոն Շաղոյանի հմուտ գործողությունների շնորհիվ թուրք ժանդարմները ծուղակի մեջ ընկան և հինգ սպանված ու բազմաթիվ վիրավորներ թողնելով՝ դիմեցին փախուստի:

Մայիսի 10–ին Փեսանդաշտ մտան հայ կամավորական գնդերը:

Թուրք ջարդարարներին դիմադրելու թույլ փորձեր են եղել նաև տարբեր նահանգներում, որոնց մասին, սակայն, չգիտես ինչու, մի տեսակ ընդունված չէ խոսել: Մինչդեռ, մեր կարծիքով, նմանօրինակ թեկուզ աննշան դեպքերը պետք է մեկիկ–մեկիկ հավաքել, ի մի բերել և ներկայացնել ըստ պատշաճի, ինչպես նաև որոնումներ ու պրպտումներ պիտի կատարել այդ ուղղությամբ:

Այսպես՝ հիշատակություն կա, որ Տրապիզոնից ու նրա շրջակայքից բռնագաղթված շուրջ 100 հայ տղամարդիկ Թեքքե կայանում հարձակվել են պահակների վրա, զինաթափ արել նրանց և հեռանալով լեռները՝ շարունակել են կռվել թուրք բարբարոսների դեմ: Կամ՝ ցեղասպանության առաջին իսկ օրերին Ջեմալ Ազմի փաշայի հրամանով 40 հայ տղամարդու ծով են դուրս բերել՝ խեղդամահ անելու նպատակով, սակայն մահապարտները մերկ ձեռքերով հարձակվել են ուղեկցող թուրք ոստիկանների վրա, բոլորին ոչնչացրել և իրենք էլ զոհվել: Փրկվել են միայն երկու հայեր, որոնց անունները հայտնի են՝ Ադամ Հովսեփյան և Շապինգարահիսարցի Անդրանիկ:

Տրապիզոնցի Հարություն Սարգսյանն իր երկու որդիների՝ Գուրգենի և Պարույրի հետ միասին ծրագրել են սպանել ջարդարար Ջեմալ Ազմիին և ապա զենքի կոչել հայերին: Սակայն նրանք ընկել են թուրք ոստիկանության ձեռքը և սպանվել: Տրապիզոնցիներ Սեդրակ Սեյրանյանն ու Երվանդ Տերտերյանը իրենց տները վերածել են կրակակետերի, մինչև վերջին գնդակը կռվել թուրք հրոսակների դեմ և անձնասպան եղել:

Թուրք մարդասպանների դեմ զենք է բարձրացրել Սև ծովի ափին՝ Տրապիզոնի մոտ գտնվող Կովատ Շամի հայ բնակչությունը, որը, մեր կարծիքով, հայոց 1915 թվականի դյուցազնամարտի ցարդ արժանվույնս չլուսաբանված փառահեղ էջերից է: Այդ դյուցազնամարտի վերաբերյալ արխիվային կարևոր փաստաթուղթ է հայտնաբերել ու հրատարակել Մ. Արզումանյանը (Հայաստան 1914–1917, Երևան, 1969, էջ 387): Ըստ այդ արժեքավոր փաստաթղթի՝ Տրապիզոնի ջարդի ու դիմադրության օրերին հայոց կաթողիկոս Գևորգ 5–րդը դիմել է ցարական իշխանություններին՝ խնդրելով ռուսական սևծովյան նավատորմի օգնությունը Կովատ Շամի և Տրապիզոնի բնակչությանը: «Թախանձագին խնդրում էմ Ձերդ գերազանցությանը փրկել իմ ազգին գազանացած ֆանատիկներից,— գրել է կաթողիկոսը,— օգնության գալ դժբախտ մարտիկներին, որոնք վերջին ճիգերն են թափում հանուն Քրիստոսի հավատի ու նվիրվածության Ռուսաստանի»:

Իհարկե, պատերազմական հանգամանքների բերումով ռուսական նավատորմը չկարողացավ օգնության հասնել, և տրապիզոնահայությունը կոտորվեց, սակայն շուրջ 600 խիզախ հայորդիներ, այդ թվում նաև համշենահայեր քաշվեցին Տրապիզոնի լեռները և երկար ժամանակ զենքը ձեռքին մարտնչեցին թուրք հրոսակների դեմ: Նրանց հերոսական պայքարի ղեկավարներն էին Ձիլ Օհաննեսը, Միքայել Ջեյթունջյանը, Հակոբ Քեհյանը և ուրիշներ: Նրանց անօրինակ պայքարը տևեց մինչև 1923 թվականը, երբ աննկուն հայորդիներին ի վերջո հաջողվեց նավակներով դուրս գալ ռուսական ափ: Կարծում ենք նաև, որ հայոց ինքնապաշտպանության այս եզակի դրվագը դեռ սպասում է իր Ֆրանց Վերֆելին:

ՄՈՒՇԻ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Մուշի և Սասունի ինքնապաշտպանությունը հայոց 1915 թվականի դյուցազնամարտի թերևս ամենաանբավարար լուսաբանված էջերից

է: Առ այսօր լուրջ պարզաբանումների կարիք են զգում այդ ինքնապաշտպանության ժամանակամիջոցի, ղեկավարների, արդյունքների, գնահատականի և հարակից այլ հարցեր:

Նախ ասենք, որ խորհրդահայ պատմագրության մեջ այդ ինքնապաշտպանության կազմակերպման ու ղեկավարման գլխավոր դերը վերագրվել է Դաշնակցությանն ու նրա գործիչներին, ուստի և նրանց ողջ գործունեությունը որակվել է իբրև արկածախնդրական ու վնասակար: Այսպես՝ խորհրդահայ անվանի պատմաբան Ջոն Կիրակոսյանը, որը ծանրակշիռ ավանդ ունի հայոց ցեղասպանության պատմության լուսաբանման բնագավառում, «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965» մեծարժեք մենագրության մեջ գրում է, որ երբ Մուշի մյութեսարիֆ Սերվեթ բեյը մշեցիներին և սասունցիներին առաջարկեց վերադարձնել հայ դասալիք զինվորներին, միանալ թուրքական բանակին և կռվել ռուսական բանակի դեմ, մերժում ստացավ: Վերջիններս հայտարարեցին, որ բռնի տեղահանման կամ կոտորածների դեպքում իրենք կդիմեն ինքնապաշտպանության: Գտնելով, որ նման դիրքորոշումը բնականաբար կատաղեցնելու էր թուրքական իշխանություններին, որոնք անհաջող փորձեր ձեռնարկեցին հաշվեհարդար տեսնելու ինքնապաշտպանության կազմակերպման մասին այդքան ամպագոռգոռ հայտարարությունների հեղինակները շատ աղոտ պատկերացում ունեին թուրքական կառավարության հակահայկական պլանների մասշտաբների մասին, իսկ ուժերի հարաբերությունը դուրս էր որևէ համեմատությունից: Մինչդեռ, ըստ նրա, տարիներ շարունակ Տարոնում և Սասունում բուն դրած դաշնակցական «լիազոր–ղեկավարները» ոչ միայն փաստորեն ոչնչով չէին նպաստել վտանգի դեպքում ժողովրդի պաշտպանությունը կազմակերպելու գործին, այլև այդ տարիներին եղբայրանալով երիտթուրքերին՝ համագործակցում էին նրանց հետ: Այդ կապակցությամբ Ջ. Կիրակոսյանը վկայակոչում է սփյուռքահայ հեղինակներ Սարգիս և Միսակ Բդեյաններին, որոնք իրենց համատեղ աշխատության մեջ (Սարգիս և Միսակ Բդեյան, Հարազատ պատմություն Տարոնի, Կահիրե, 1962, էջ 294) հավաստում են, թե սահմանադրության վեց տարիների ընթացքում նրանք ամենուրեք բոլորին քարոզում էին, թե այլևս զենքի ուժով չէ, որ պիտի ձեռք բերել ինքնուրույնություն (Ջ. Կիրակոսյան, Նշվ. աշխ., էջ 308): Սփյուռքահայ հեղինակների վկայությունների հիման վրա Ջ. Կիրակոսյանը ցույց է տալիս, որ Մուշ–Սասուն գործուղված դաշնակցական լիազոր–ղեկավար

Ռուբեն Տեր–Մինասյանը մինչև 1914 թվականը հարում էր երիտասարդ թուրքերի քաղաքականությանը և նույնիսկ Կարինի իրենց համագումարում առաջարկում էր հայկական կամավորական խմբեր կազմել և պատերազմ ծագելու դեպքում թուրքական բանակի կազմում կռվել ռուսական բանակի դեմ: «Այսպիսի մտայնություն և վարքագիծ ունեցող, տարիներ շարունակ պրոթուրքական քաղաքականությանը տուրք տված մարդը,— շարունակում է Ջ. Կիրակոսյանը,— ինչ խոսք, որ չէր կարող գլխավորել ժողովրդի ինքնապաշտպանության գործը» (Ջ. Կ., էջ 309): Ուստի նա անվերապահորեն համերաշխում է Մուշի ինքնապաշտպանության ղեկավարներից եղիշե քահանա Տեր–Պարսամյանին, ըստ որի Ռ. Տեր–Մինասյանը եղավ առաջինը ժողովրդին լքողը և իր գլուխն ազատողը (Եղիշե քահ. Տեր–Պարսամյան: Տարոնո ինքնապաշտպանությունն ու ջարդը 1914–1915, Ֆրեզնո, 1920, էջ 27): Ջ. Կիրակոսյանը եզրակացնում է, որ Մուշում և Սասունում ինքնապաշտպանության գործը բարձիթողի վիճակում էր, ժողովուրդը զինված չէր, և մի քանի հարյուր հրացանով ու ատրճանակով հնարավոր չէր դիմագրավել թուրքական կանոնավոր զորքի հարձակմանը:

Ջ. Կիրակոսյանը գտնում է, որ այն, ինչը չէր հաջողվել անել Մշո դաշտի ժողովրդին փրկելու համար, ինքնապաշտպանության գործի լավ կազմակերպման դեպքում հնարավոր էր անել Սասունում՝ օգտվելով ճակատում թուրքական զորքերի պարտություններից և Սասունի ժողովրդին դեպի ռուսական զորքը շարժելով: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, բացի սասունցիների առանձին–առանձին խմբերի հերոսական դիմադրությունից, կազմակերպված, ընդհանուր ղեկավարության ներքո ծրագրված ոչինչ չարվեց: Ռուբեն Տեր–Մինասյանը և Վահան Փափազյանը (Կոմս) Մշո դաշտի տեղահանությունից և կոտորածից առաջ արդեն բարձրացել էին Սասուն՝ իրենց հետ տանելով կռվող ուժեր, զենք ու պարեն, պատճառաբանելով, թե անցյալի փորձով թուրքերն առաջինը կհարձակվեն լեռնային Սասունի վրա և հետո միայն կանցնեն դաշտի հայության կոտորածին: Եվ հենց նման մտածելակերպն ու գործելակերպն էլ, ըստ վերը նշված սփյուռքահայ հեղինակների, աղետավոր եղավ թե՛ Մուշի, թե՛ Սասունի հայության համար: Այդ նույն հեղինակների վկայությամբ դաշնակցական ղեկավարներն արհամարհեցին ժողովրդական պայքարի մեջ թրծված մարդկանց՝ Հաջի Հակոբ Կոտոյանի, Մանուկ Շառոյանի և այլոց կարծիքը, որոնք անհրաժեշտ էին գտնում առաջին հերթին կազմակերպել Մշո դաշտի ինքնապաշտպանությունը: Եվ

պատահական չէր, որ դեռ այն ժամանակ Վ. Փափազյանը սասունցիների կողմից որակվեց իբրև «տմարդի ու ստոր արարած» (էջ 313):

Իրականությանը ամենևին չի համապատասխանում Ջ. Կիրակոսյանի այն հայտարարությունը, թե իբր Ռ. Տեր–Մինասյանն իր հիշողությունների յոթ հատորներում, ինքնագովերգությամբ զբաղվելով, «մոռացել է» հիշատակել Մուշի և Սասունի ժողովրդի ինքնապաշտպանությունը ծախողելու գործում իր պատասխանատվության մասին (Նշվ. աշխ., էջ 313): Բանն այն է, որ նշված իրադարձությունների մասին խոսք է գնում ոչ թե բոլոր յոթ հատորներում, այլ միայն յոթերորդ հատորի երկրորդ մասում, որի հեղինակը ոչ թե Ռուբեն Տեր–Մինասյանն է, այլ նրա զինակիցներից մեկը՝ Խմբապետ Մուշեղը (Սասունցի Մուշեղ, Մուշեղ Ավետիսյան), որի գրչին էլ պատկանում են գովեստները Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկի հասցեին:

Հենց իր՝ Ջոն Կիրակոսյանի շարադրանքի համաձայն իրականությունն այն էր, որ Սասնա լեռներին ապաստանել էր շուրջ 50 հազար ժողովուրդ, որին պաշարել էր թուրքական 30 հազարանոց կանոնավոր զորքը: Թշնամուն քիչ թե շատ կազմակերպված դիմադրություն հաջողվեց ցույց տալ Տալվորիկի շրջանում, որից հետո որոշվեց թե՛ ժողովրդին և թե՛ կռվող ուժը հավաքել Անդոկի հովտում: Միակ ելքը թշնամու օղակը ճեղքելը և ռուսական բանակին միանալն էր, որը սակայն շատ քչերին հաջողվեց: Հիսուն հազարանոց ամբոխը ղեկը կորցրած նավի նման լեռնաշխարհի մի անկյունից մյուսն էր շպրտվում: Համընդհանուր խուճապի պայմաններում բոլորի համար մի նոր նշանաբան է ձևավորվում՝ թող ազատվի, ով կարող է: Ինքնապաշտպանական կռիվները շարունակվեցին Տալվորիկի անմատչելի լեռնային քերծերի վրա, Ծովասարում և այլ վայրերում: Հազարավոր սասունցիներ զոհ գնացին թշնամու սրին ու գնդակին, սովին ու սառնամանիքին:

Սասունի սարերում ապաստանած 50 հազար հայ բնակչությունից 1915 թվականի աշնանը մաս–մաս, խումբ–խումբ Կովկաս հասան 10–15 հազար մարդ, մնացածը զոհ գնաց թուրքական յաթաղանին (Նշվ. աշխ., էջ 317):

Սասունի հերոսամարտի դաշնակցական ղեկավարների վերաբերյալ նույնանման բացասական վերաբերմունք ունի Մ. Արզումանյանը (Մ. Արզումանյան, Հայաստան, 1914–1917, Ե., 1969): Ցույց տալով 1915 թ. գարնանը տարոնահայության գլխին կախված ռեալ վտանգը, հեղինակն այն միտքն է հայտնում, որ տեղի հոգևոր և դաշնակցական ղեկա-

վարները պարտավոր էին զգալ վերահաս աղետը և ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանության, մանավանդ որ նրանք 1894 և 1904 թվականներին ապստամբել էին թուրք ջարդարարների դեմ և ձեռք բերել ազատագրական պայքարի անհրաժեշտ փորձ: Սակայն այդ ղեկավարները վճռական պահին ցուցաբերեցին անճարակություն և ձախողեցին տարոնցիների հնարավոր ինքնապաշտպանությունը, որոնց գուցե և հասներ մոտեցող ռուսական բանակը (էջ 391): «Հատկապես հանցավոր դեր կատարեց Տարոնի (Դուրան Բարձրավանդակի) դաշնակցական ղեկավարությունը,— շարունակում է Մ. Արզումանյանը,— որն այն ժամանակ գտնվում էր երկու տհաս «պարոնների»՝ Ռուբեն փաշայի (Տեր–Մինասյան) և «Կոմսի» (Վահան Փափազյան) ձեռքին... Նրանք անձնապես իրար չէին սիրում, բայց դա բոլորովին չխանգարեց, որ երկուսն էլ վարեին միևնույն ոճրագործ գիծը և ձախողեին տարոնցիների ինքնապաշտպանության գործը:

Թեև օրեցօր ծանրանում էր տարոնահայության վիճակը և հարկավոր էր ճիշտ կողմնորոշվել ու վճռական միջոցառումների դիմել, սակայն անճարակ գտնվեցին դաշնակցական շեֆերը և իրենց անմիտ գործողություններով օբյեկտիվորեն միայն նպաստեցին հայերի բնաջնջմանը (էջ 392): Նման եզրակացությանը Մ. Արզումանայնը տալիս է հետևյալ հիմնավորումը. 1915 թ. մայիսի սկզբին ռուսական բանակն արդեն հասել էր Բուլանըխ և մինչև Մուշ մնացել էր ընդամենը մեկ օրվա ճանապարհ: Մուշի և նրա դաշտի հայությունը հմուտ ղեկավարության դեպքում կարող էր հեշտությամբ ոչնչացնել տեղական թուրքական և քրդական փոքրաթիվ ուժերը և առաջ շարժվել դեպի ռուսական բանակը: Ուրեմն,— եզրակացնում է հեղինակը,— Տարոնի ինքնապաշտպանությունը պետք է սկսվեր Մուշից ու նրա դաշտից, ինչպես որ առաջարկում էր մշեցի հայտնի հայդուկ Հաջի Հակոբ Կոտոյանը: Մասնավորապես վերջինս առաջարկում էր թուրքերի դեմ ուղղել այն երկու հրանոթները, որոնց տեղափոխությունը ռուսների դեմ՝ հանձնարարված էր հայերին, գրավել Մուշ քաղաքի կառավարական զինապահեստը, շենքերը և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Սակայն, ինչպես ցույց են տալիս ականատեսի վկայությունները (Երվանդ Շարաֆյան. Տարոնի եղեռնը, Ականատեսի վկայություններ, Սան Ֆրանցիսկո, 1965, էջ 14), Վահան Փափազյանը խստորեն առարկեց այդ փրկարար ծրագրին և պահանջեց հանգիստ սպասել մինչև ռուսների գալը: Եվ տեղի ունեցած ժողովը մերժեց Հ. Կոտոյանի առաջարկը:

Ինչ վերաբերում է Ռուբեն փաշային, ապա նա, ըստ Մ. Արզումանյանի, դեռևս վաղուց՝ 1915–ի փետրվարի սկզբին էր փախել Սասուն և իր «Մորթապաշտ հոգին քողարկելու համար» ասում էր, թե Տարոնի ինքնապաշտպանությունը կարող է իրականացվել միայն Սասունի լեռներից, ուստի և բոլոր վայրերի, այդ թվում նաև Մուշի ու նրա դաշտի զինված ուժերը պետք է բարձրանան այնտեղ: «Դա բացահայտ ոճրագործություն էր,— ամփոփում է Մ. Արզումանյանը,— որովհետև նախ՝ մնացած բնակչությունը (կանայք, երեխաներ, ծերեր) մատնվում էին թուրքերի և քրդերի հոշոտմանը, և երկրորդ՝ հեշտացվում էր թուրքական հետագա հարձակման գործը հենց Սասունի վրա... Ռուբեն փաշան, այդ հայկական Դոն Կիխոտը, անցկացրեց իր ավանտյուրիստական գիծը, որը փաստորեն գյուտ դարձավ թուրքերի համար» (էջ 394):

Դժվար չէ նկատել, որ Մ. Արզումանյանի եզրակացությունները հենված են ոչ թե անառարկելի փաստարկների, այլ դաշնակցական ղեկավարներին հակոտնյա որոշ ականատեսների վիճահարույց ենթադրությունների վրա: Մի՞թե կարելի է պնդել, թե Հ. Կոտոյանի առաջարկած Մուշի գրավման պլանը անպայման կպսակվեր հաջողությամբ: Եվ վերջապես, Սասուն բարձրանալու որոշումն ընդունվել է, ինչպես նշվեց, տեղի ունեցած ժողովում և ոչ թե եղել է դաշնակցական ղեկավարների պարտադրանքը: Ուրեմն նման բացասական որակումների և եզրակացությունների հիմքը ոչ այնքան փաստերն են, որքան հակադաշնակցական ելակետը, որը մեր համոզմամբ մերժելի պիտի լինի պատմագրության մեջ:

Մեր կարծիքով, Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներին անհիմն կերպով «իրար չսիրող», «ոճրագործ» և նման այլ ոչ սազական արտահայտություններով պիտակավորելու փոխարեն հարկ է ընդգծել այդ գործիչների անհավատալիորեն աննկուն կամքն ու անձնազոհությունը, ծայրահեղ աննպաստ պայմաններում մինչև վերջին հնարավորությունը ժողովրդի ինքնապաշտպանությունը գլխավորելու անուրանալի փաստը: Հիշյալ և ուրիշ կոմունիստ պատմաբանների մոտ տվյալ հարցում առկա է դաշնակցության գործունեությունը ամեն կերպ սևացնելու միտումնավորությունը, որից էլ անխնա կերպով տուժում է պատմության անկողմնակալ շարադրանքը:

Սասունի 1915 թ. ինքնապաշտպանության դաշնակցական ղեկավարների վերաբերյալ բացասական վերաբերմունքը, ճիշտ է, փոքր–ինչ ավելի մեղմ երանգներով, առկա է նաև Հայկազ Պողոսյանի

«Սասունի պատմություն», Երևան, 1985, աշխատությունում: Նա նույնպես գտնում է, որ Մուշը չգրավելու և Սասուն բարձրանալու Վահան Փափազյանի և Ռուբեն Տեր–Մինասյանի դիրքորոշումը սխալ էր: Հերոսամարտի ավարտին Սասունի ինքնապաշտպանության ողջ մնացած մասնակիցներին տված Ռուբենի հրահանգը՝ ով ինչպես կարող է փրկվելու մասին, Հ. Պողոսյանը գնահատում է իբրև սեփական անձը փրկելու մտահոգությամբ ժողովրդին թշնամու ողորմածությանը հանձնելու կոչ, որը, մեր կարծիքով, հեռու է իրականությունից: Սասունի հերոսամարտի իրական դրվագներին ծանոթ ընթերցողի ականջին խորթ է հնչում նաև հեղինակի այն ձնակերպումը, թե իբր Ռուբեն Տեր–Մինասյանը և Վահան Փափազյանը, երբ տեսան, որ Մշո դաշտը և Սասունը հեղեղվեցին հայերի արյունով, թողեցին իրենց ժողովրդի բեկորներին բախտի կամքին, փախան Թիֆլիս՝ փրկելով իրենց կաշին (Հ. Պողոսյան, Նշվ. աշխ., էջ 321): Եվ, մեր կարծիքով, Թիֆլիսում Ռուբենի հաստատեին Ռոստոմի հանդիմանությունը՝ «Չկրցա՞ր հոն նահատակվիլ», ոչ թե փախուստի վավերացում է, այլ պահի անցողիկ արտահայտություն: Ի դեպ, այդ հանդիմանանքին Ռուբենը պատասխանել է շատ չոր ու կտրուկ, և այլևս այդ մասին խոսք չի եղել: Հասկանալի չէ նաև, թե ինչի հիման վրա է Հ. Պողոսյանը անարդարացի համարում Կարո Սասունուն, որը պաշտպանության տակ է վերցնում Ռուբենին (Կ. Սասունի, Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1956): Նախորդ հեղինակների նման Հ. Պողոսյանն էլ նշում է, որ երբ 1916 թ. գարնանը ռուսական զորքերը գրավեցին Մուշը, Սասունից Մուշ իջան շուրջ 10 հազար մարդ, չհիշատակելով, իհարկե, Ռուբենի և Կոմսի որևէ ծառայություն այդ խլյակների փրկության գործում:

Պատմական Հայաստանի Տուրուբերան նահանգը կամ Տարոնի աշխարհը իր Սասուն գավառով դեռևս 19–րդ դարի վերջերից վերածվել էր հայ ժողովրդի ազատագրական շարժման միջնաբերդի, և պատահական չէր, որ թե՛ սուլթանական, թե՛ իթթիհատական իշխանությունները առաջին հերթին ցանկանում էին վերջ դնել նրա գոյությանը:

1915 թ. նախօրյակին Մուշի հոգևոր առաջնորդն էր Ներսես եպիսկոպոս Խարախանյանը: Այստեղ գործում էր ՀՅԴ «Դուրան–Բարձրավանդակի» Կենտրոնական կոմիտեն, որի անդամներից էին Մշեցի Մնո Պոլեյանը, Կորյունը, Վարդան Վարդապետը, Ռուբենը (Ռ. Տեր–Մինասյան), Սեմանցի Քաթիպ Մանուկը և ուրիշներ: Շուտով այստեղ եկավ նաև Օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխան Վահան Փափազյանը (Կոմս):

Տարոն–Տուրուբերանը մտնում էր Բիթլիսի (Բաղեշի) նահանգի մեջ, որի նահանգապետն էր իթթիհատական գործիչ Մուստաֆա Աբդուլ Հալըգը: Բիթլիսի նահանգը բաժանված էր չորս գավառների կամ մյութեսարիֆությունների՝ Բաղեշի, Մուշի, Գենջի և Սղերդի: Մուշի գավառապետը կամ մյութեսարիֆն էր դարձյալ մոլի իթթիհատական Սերվեթ բեյը: Սասունի լեռնաշխարհը բաժանված էր նշված չորս գավառների մեջ:

Պատերազմի հենց սկզբից Մուշը դարձավ զինվորական պահեստային ուժերի կենտրոնատեղի: Դեռևս 1914–ի հուլիսի 21–ին հայտարարված զորահավաքի միջոցով թուրքական կառավարությանը հաջողվեց մեկ ամսվա ընթացքում Տարոնի հայկական գյուղերը մեծ մասամբ դատարկել տղամարդկանցից և ունեցվածքից: Սակայն Սասունի Ծովասարի, Շատախի և Տալվորիկի շրջանները գրեթե զինվոր չտվեցին: Զորակոչվեց միայն Խիանքի, Խուլբի և Բսանքի հայ երիտասարդության մի մասը, որոնց մեծ մասը, սակայն, հետագայում փախուստի դիմեց և վերադարձավ իր լեռները: Փաստորեն 1915–ի հունվարից սկսած Սասունի շրջանները ինքնապաշտպանության դրության մեջ էին՝ շրջապատված քրդական ցեղախմբերի և թուրքական զորամասերի կողմից:

Ինչպես նշում է սփյուռքահայ հեղինակ Նազարեթ Պերպերյանը, մինչ թուրքերը տենդագին լցված էին Տարոնի հայությանը ամեն կերպ թուլացնելուն ու բարոյալքելուն, հայ ազգային և հեղափոխական ղեկավարությունը շարունակում էր տուրք տալ օրինավոր և հավատարիմ քաղաքացու զգուշավոր կեցվածքին: Տարոնի հայության ազգային ղեկավարությունն ստանձնած Մուշի առաջնորդարանը՝ ղեկավարվելով Պոլսից ստացված ցուցումներով, խոհեմության և կառավարության պահանջներին ենթարկվելու շրջաբերականներ էր ուղարկում շրջանները՝ հայությանը կոտորածներից փրկելու մտահոգությամբ: Այդ շրջաբերականներին հաճախ հետևում էին ՀՅԴ Դուրան–Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեի նույնիմաստ շրջաբերականները: Դա ցույց էր տալիս, որ հայ ղեկավար շրջանները մոտալուտ կոտորածների վտանգն ըմբռնում էին անցյալի չափանիշներով, այսինքն՝ համոզված էին, որ տեղի է ունենալու միայն հեղափոխականների հալածանք և սպանություն («Հերոսապատում Մեծ եղեռնի», Բեյրութ, 1978, էջ 205):

Այնուամենայնիվ, 1915–ի հունվարի սկզբին ՀՅԴ Դուրան–Բարձրավանդակի Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Մուշում

հրավիրվեց խորհրդակցական ժողով՝ նվիրված ինքնապաշտպանության կազմակերպմանը: Նկատի ունենալով Տարոնի հայության պաշարված վիճակը, ժողովը որոշեց ամբողջ Տարոնը բաժանել ինքնապաշտպանական ութ շրջանների: Ժողովի որոշմամբ Ռուբենը և Իսա Կորյունը սկսեցին շրջել Մշո դաշտի գյուղերում՝ ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար:

Առաջին բախումը տեղի ունեցավ 1915–ի հունվարի 25–ին, Մշո դաշտի Ցրոնք գյուղում: Կառավարությունն այստեղ ուղարկեց 500 զինվորներից բաղկացած մի ջոկատ՝ հարյուրապետ Իսմայիլի գլխավորությամբ, փախստական զինվորներ փնտրելու պատրվակով: Կարճատև մարտից հետո ցրոնքցիների ինքնապաշտպանական խմբերը քաշվեցին լեռները: Թուրք զինվորները հրի մատնեցին գյուղի 150 տները:

Փետրվարի 6–ին բախում տեղի ունեցավ Գոմս գյուղում, որի ինքնապաշտպանության պատասխանատուն էր Կորյունը: Այդ օրը հարկ հավաքելու պատրվակով գյուղ եկավ իթթիհատական Շեյխ Մեհմեդ էմինը՝ 15 ոստիկաններով և իջևանեց Կորյունի տանը: Նա գաղտնի հրահանգ ուներ դավադրաբար սպանելու այդ պահին Գոմսում գտնվող Ռուբենին և Կորյունին: Սակայն Կորյունին հավատարիմ մի քուրդ նրան տեղեկացրեց դավադրության մասին: Վերջինս հրդեհեց սեփական տունը, իսկ հայ մարտիկները ոչնչացրին փախչող ոստիկաններին: Գոմսի այդ միջադեպն ապստամբության ազդանշան դարձավ: Ռուբենն ու Կորյունը Գոմսի ֆիդայական ուժերով շարժվեցին դեպի Սասուն: Հաջորդ օրը գազազած Սերվեթ բեյն իր մոտ կանչեց Մուշի հայոց հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանին, Օսմանյան խորհրդարանի անդամ Վահան Փափազյանին (Կոմս) և պահանջեց Կորյունի ու Ռուբենի անձնատվությունը, որը, սակայն, մերժվեց: Ստեղծված հանձնախումբը պարզեց, որ իրոք Շեյխ էմինը դավադրություն է նյութել: Մերժվեց նաև Սերվեթի հաշտության առաջարկը Ռուբենին և Կորյունին:

Շենիկ գյուղում փետրվարի10–ին Ռուբենը հրավիրեց Սասունի խմբապետների ժողով, որին մասնակցում էին Կորյունը, Միջոն, Փեթարա Մանուկը, Սեմալցի Իշխանը (Մանուկ), Գելիեգուզանցի Կիրակոսը, Շենիկցի Ղազարը և Չալոն, Ահարոնքցի Գալուստը, Սասունցի Մուշեղը: Ռուբենի զեկուցումից հետո ծրագրվեց Սասունի ինքնապաշտպանությունը, ճշտվեցին շրջաններն ու նրանց պատասխանատուները: Սասունի ընդհանուր ճակատը բաժանվեց պաշտպանության յոթ գլխավոր հատվածների.

1. Տալվորիկի, Խուլբի և Խիանքի շրջանը հանձնվեց խմբապետ Մուշեղին, որի օգնականներն էին հին ֆիդայիներ Թաթարը, Համզեն, Բազեն և Ոզգոն:

2. Փսանքի ճակատը հանձնվեց Ստեփան վարդապետին և Դավիթ Երիցյանին:

3. Գելիեգուզանի շրջանը պիտի ղեկավարեին Կորյունը և Միջոն:

4. Շենիկի և Սեմալի ուղությունը տրվեց Իշխան Մանուկին, Քյաթիպ Մանուկին, Չոլոյին և Ադամին:

5. Աղբի շրջանը հանձնվեց Աղբնա Մարտեին:

6. Կեփիի լեռնամասը տրվեց Չորա Արթինին ու նրա եղբայր Մկրտին:

7. Ալիանքի լեռնամասը վստահվեց Շենիկցի Պողոսին, Սեմալցի Տերտերին, Գրգեի Վարդանին ու Ղազարին:

Մինչ Սասունն արդեն դիմել էր ինքնապաշտպանության, Մուշ քաղաքը և Մշո դաշտը սպասողական դրության մեջ էին: Նախկին ֆիդայիների մեջ ուժեղ էր Սասունին ապավինելու տրամադրությունը: Դրա արտահայտությունը եղավ հռչակավոր ֆիդայի, ՀՅԴ Դուրպան–Բարձրավանդակի Կենտրոնական Կոմիտեի գլխավոր դեմքերից մեկի՝ Մկրտիչ Բոլեյանի (Մճո)՝ առանց ընդհանուր որոշման իր 30 կռվող ուժերով Առաքելոց վանք բարձրանալը, որից հետո խումբը մեկնեց Սասուն: Ապրիլի 23–ին վախճանվեց Խարախանյան Սրբազանը, իսկ ապրիլի 28–ին ծանր հիվանդացավ Կոմսը, որն անզգա վիճակում մնաց մինչև մայիսի 23–ը: Այդպիսով Մուշի երկու գլխավոր ղեկավարները հեռացան հրապարակից:

Սպասողական վիճակին վերջ տվեցին իրենք՝ թուրքերը, որոնք 1915 թ. մայիսի 1–ին հարձակվեցին Մշո դաշտի հյուսիսում գտնվող Խնուսի շրջանի վրա: Մինչև մայիսի 10–ը Խնուսի հայկական գյուղերը ամբողջովին կոտորվեցին ու թալանվեցին համիդիե զորքերի և քուրդ խուժանի կողմից: Խնուս գավառի շուրջ 25 հազար հայությունից փրկվեցին մի քանի հազար մարդ՝ հասնելով ռուսական զորքերի գոտի: Նրանցից հարյուրավոր երիտասարդներ համալրեցին հայ կամավորական գնդերը:

ՄՈՒՇ ՔԱՂԱՔԻ ՀՆԳՕՐՅԱ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մուշում Խարախանյան Սրբազանին հաջորդեց Վարդան վարդապետը, իսկ Կոմսի հիվանդության պատճառով կուսակցական ղեկավա-

ությունը ծանրացավ հին ու փորձառու Ֆիդայի Հաջի Հակոբ Կոտոյանի ուսերին:

Ցավոք, մինչև 1915 թ. հուլիսի 10–ը Մուշի հայությունը մնաց սպասողական անորոշ դրության մեջ և զենք բարձրացրեց միայ այն ժամանակ, երբ քաղաքը կտրվել էր դաշտի գյուղերից և թշնամին արդեն լցվել էր քաղաք: Հետևանքը եղավ այն, որ Մուշի դիմադրությունը բոլորը չէ, որ մասնակցեցին, որովհետև մի զգալի մասը հեռացել էին Սասուն: Բացի այդ, դիմադրությունը անհրաժեշտ կազմակերպվածությունը չունեցավ և հերոսական, բայց կարճատև եղավ:

Առանց դիմադրության հանդիպելու թուրք–քրդական ուժերին հաջողվեց գրավել Մուշի շրջակա բարձունքները և այնտեղ թնդանոթներ տեղադրել:

Հուլիսի 10–ին Մուշի կառավարիչ Սերվեթ բեյն իր մոտ հրավիրեց Վարդան վարդապետին և 28 երևելիների, որոնք հակված էին կառավարությանը ենթարկվելուն: Սակայն Մուշի հին ու փորձառու մարտիկներ Հաջի Հակոբը, Մուխսի Ֆարհադի Արոն, Լ. Ասլանյանը և Տիգրան Մկրտչյանը որոշում են երկու խմբի բաժանված Սասուն բարձրանալ: Մուխսի Ֆարհադի Արոյի խմբին հաջողվեց ճեղքել թուրքական շղթան և Սասուն բարձրանալ, իսկ մյուս խումբը վերադարձավ քաղաք: Ձորի թաղի խումբը Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ մնաց քաղաքում և Սասուն անցնելու փորձ չկատարեց:

Հուլիսի 10–ի առավոտյան Վարդան վարդապետը 12 հոգով ներկայացավ Սերվեթին, որը նրանց համոզեց տեղահանվել: Պատվիրակությունը վերադարձավ և պահանջեց, որ քաղաքը հետևի հրահանգին: Դրան ընդդիմացան ՀՅԴ Մուշի վարիչները:

Միաժամանակ թուրքական ոստիկանական մի ջոկատ մտավ Առաջնորդարան և ձերբակալեց Վարդան վարդապետին ու շուրջ 70 հոգու:

Մուշի դիմադրական ուժերը գտնվում էին երեք թաղամասերում՝ իրարից բավական հեռու:

Ս. Մարինե թաղում էր գտնվում Դուրան–Բարձրավանդակի կենտրոնի անդամ Տիգրան Մկրտչյանը՝ իր 15 մարտիկներով: Նրա հետ էին Ազգային քաղաքական ժողովի անդամներ Հ. Տեր–Զաքարյանը, եղիշե քահանա Պարսամյանը և Մամիկոն Պետրոսյանը, որոնք հակառակվել էին Վարդան վարդապետին:

Ձորի թաղում էր Կենտկոմի անդամ Լևոն Ասլանյանը՝ 6–7 մարտիկներով:

Տեղի ունեցավ նշված երեք մարտիկների խորհրդակցություն, որտեղ որոշվեցին դիմադրության կետերը և նրանց ղեկավարները: Հերոսամարտի ընդհանուր ղեկավար նշանակվեց Հաջի Հակոբ Կոտոյանը, օգնական՝ Տիգրան Մկրտչյանը:

Հուլիսի 11–ի երկուշաբթի առավոտյան ոստիկանների ուղեկցությամբ Վերին թաղ մտավ ժանդարմական մի ջոկատ և շարժվեց դեպի Լևոն Ասլանյանի տունը: Դուռը թակելով և պատասխան չստանալով՝ թուրքերն սկսեցին կրակել: Լսվեցին պատասխան կրակոցներ, և մի քանի ժանդարմներ սպանվեցին: Միաժամանակ սկսեցին որոտալ թուրքական հրանոթները և կռիվն ստացավ ընդհանուր բնույթ:

Հանդիպելով դիմադրության՝ թուրքերն սկսեցին հրդեհել հայկական թաղերը: Հաջորդ օրը՝ հուլիսի 12–ին, կռիվը վերածվեց մի անխնա գոտեմարտի: Ամբողջ գիշերը թուրքական թնդանոթները ռմբակոծեցին Վերին թաղի դիրքերը: Սակայն թաղի պաշտպանները վերականգնում էին քանդված դիրքերը, ամրացնում նորերը: Կանայք հաց ու ջուր էին հասցնում կռվողներին: Սակայն ռումբերի տարափը գնալով ուժգնանում էր՝ դիմադրությունը դարձնելով անհնար: Թաղի պաշտպանների մեծ մասը տեղափոխվեց Ձորի թաղ: Լևոն Ասլանյանը և Հակոբ Կոտոյանը որոշեցին վերջին ճակատամարտը տալ Ձորի թաղում: Հուլիսի 13–ի առավոտյան Ձորի թաղ անցան Վերին թաղի բոլոր պաշտպանները:

Հաջի Հակոբի կարգադրությամբ նշանառու Ձախչախենց Յոսիկը շարքից հանեց երկու թուրք թնդանոթաձիգներին, բայց ինքն էլ զոհվեց: Կազմակերպվեց Յոսիկի և Ձքոյի թաղումը, որի արարողությունը կատարեց եղիշե քհ. Պարսամյանը:

Չնայած ստացած երեք թեթև վերքերին՝ Հաջի Հակոբը շրջում էր դիրքերը, ոգևորում մարտիկներին:

Գիշերը տեղի ունեցավ վերջին խորհրդակցությունը: Դիմադրության ղեկավարները հայտնեցին, որ կռիվն անհույս է: Հաջի Հակոբը պահանջեց, որ կռվող խմբերը, պաշտպանության տակ առնելով անզեն ժողովրդին, ճեղքեն պաշարման օղակը և անցնեն մոտակա լեռները, իսկ ինքը որոշեց մնալ և կռվել մինչև վերջին շունչը: Կեսգիշերին մարտիկները և ժողովուրդը խումբ առ խումբ սկսեցին կռվելով հեռանալ, սակայն քաղաքից հաջողվեց դուրս գալ ընդամենը 700 հոգու: Մնացածները Հաջի Հակոբի գլխավորությամբ հուլիսի 13–14–ին մղեցին Մուշի մահվան ճակատամարտը: Այդ վերջին կռիվների ժամանակ Հաջի Հակոբի հետ միասին հիշվում են նաև Մամիկոն Պետրոսյանի և Միսակ

Կոնջոյանի անունները: Պատմությունը չի արձանագրել, թե որքան էր Հաջի Հակոբի շուրջ խմբված ժողովրդի թիվը, որովհետև այդ կռիվների վկա չմնաց: Հայտնի է միայն, որ Հաջի Հակոբն այդ երկու օրը մնաց իր դիրքերում և քաջությամբ դիմավորեց մահը:

Հուլիսի 13–ի կեսգիշերին քաղաքից դուրս եկած ուժերից Շահկա Արոն շուրջ 100 հոգով, որոնցից կեսն անզեն, հանդուգն հարձակմամբ ճեղքեց թուրքական զորաշղթան և հասավ Հավատորիկ: Մեկ ուրիշ խումբ խիզախ Զաքարիայի գլխավորությամբ կռվով հասավ Մշո այգիներին, որտեղ 4–ժամյա մարտի բռնվեց թուրքերի հետ ու բոլորը նահատակվեցին:

Տեր Եղիշեի հետ մոտ 200 հոգի, մեծ մասամբ անզեն պատանիներ ու երեխաներ, հասան Մոկունքի այգիներին: Այս ու այն կողմից այստեղ հասան նաև Սարո Իսպանդարյանի, Հրանտ Հալլաթյանի, Տիգրան Մկրտչյանի զինյալները: Դաշտի գյուղերում ապաստանելու հույսերը մարեցին, որովհետև պարզվեց, որ դրանք կոտորված ու հրի են մատնված դեռևս 5–6 օր առաջ: Ամենուրեք դիակներ էին փռված: Մոկունքի այգիներում ապաստանածները մտադրվեցին անցնել Քանի լեռները, բայց լույսը բացվեց, և անցումն անկարելի դարձավ: Տիգրան Մկրտչյանը ստիպված էր կրակ բացել առաջացող թշնամու վրա, և կռիվն սկսվեց: Առաքելոց վանքի կողմից թուրքական զորքերը և չեթեները կրակ էին թափում պաշտպանվող հայերի վրա, բայց վերջիններս ամուր կառչած մնացին իրենց դիրքերում և քիչ զոհեր տվեցին: Մութն ընկնելուն պես, անցնելով Բերդակ գյուղի միջով, ողջ մնացածները բարձրացան Քանի լեռները: Դա Մուշ քաղաքի հերոսամարտի ավարտն էր:

ՄՇՈ ԴԱՇՏԻ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ

Ի տարբերություն Մուշ քաղաքի, որի հերոսամարտը կարճատև եղավ, Մշո դաշտի դիմադրական կռիվները շարունակվեցին մի քանի ամիս: Դաշտի գյուղերը, 1915–ի մայիսից սկսած, շրջապատված էին քրդական զինված հորդաների և թուրք ժանդարմների կողմից: Հունիսի վերջից սկսած ընդհատվեց կապը հայկական գյուղերի միջև: Մինչ Մուշ քաղաքում և Սասունում մտածում էին, որ հարվածի ծանրության կենտրոնն իրենք պիտի դառնան, և դաշտի կռվողների մի մասը Սասուն էր բարձրանում, կառավարությունը պատրաստվում էր առաջին հարվածը հասցնել

Մշո դաշտի գյուղերին: Սակայն դաշտը լավ զինված չէր: Զրկվելով Սասուն բարձրացած իր ղեկավար մարտիկներից և լավ զենքերից, Մշո դաշտը միայն թույլ դիմադրություն կարող էր ցույց տալ: Դրա հետ միասին դաշտի ժողովուրդն էլ ուներ այն մտայնությունը, թե անզեն ժողովուրդը, կանայք ու երեխաները չպիտի կոտորվեին, այլ թուրքը պիտի հարվածեր միայն աչքի ընկնող ֆիդայիներին ու զինված տղամարդկանց:

Նման պայմաններում դաշտի գյուղերը մեծամասնությամբ չկարողացան դիմադրել և մի քանի օրվա մեջ կոտորվեցին: Այդուհանդերձ, գտնվեցին գյուղեր, որոնք հերոսաբար ծառացան թշնամու դեմ: Դրանցից են Կառնենը, Ս. Կարապետ վանքի շրջանը, Ավրանը, Ալիջանը, Վարդենիսի շրջանը:

Կառնեն գյուղը գտնվում էր Մուշ քաղաքից երկու կիլոմետր արևմուտք: Գյուղի ինքնապաշտպանությունն սկսվեց Մուշ քաղաքի հերոսամարտին զուգահեռ: Այն գլխավորում էր փորձված ֆիդայի Կառնենցի Մկրտիչը: Կառնենցիների դիմադրությունը տևեց մեկ ամբողջ օր՝ մինչև հուլիսի 12–ի ուշ գիշերը, և զինամթերքի սպառմամբ բոլորը հերոսաբար նահատակվեցին իրենց դարավոր գյուղի խորտակված պատերի տակ:

Ալիջան գյուղը գտնվում էր Մուշ քաղաքից հյուսիս–արևելք: Դեռևս մարտին Ալիջանցի Տիգրանը մի քանի ընկերներով բախվել էր թուրք ոստիկանների հետ, բարձրացել Սասուն ու միացել Ռուբենին ու Կորյունին:

Ալիջանի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար հուլիսի սկզբին այստեղ եկավ Հայկ Միրջանյանը: Նրա տանը տեղի ունեցավ խորհրդակցություն և որոշվեց զենքի դիմել: Ալիջանցիները զինաթափեցին գյուղ մտած ժանդարմներին: Դիմադրությունը ղեկավարում էին Հայկ, Մխիթար և Միսակ Միրջանյանները: Կռվին մասնակցում էին նաև կանայք: Սասուն բարձրացած Տիգրանին փոխարինում էր տղամարդու հագուստ հագած նրա քույրը: Ալիջանի հերոսամարտը տևեց չորս օր: Թշնամին ահագին կորուստ ունեցավ: Չորս օր անց ալիջանցիներն ստիպված էին բարձրանալ Քանի լեռները:

Ավրան գյուղը դիմադրեց մեկ օր՝ Հայկ Տեր–Վարդանյանի և Մակար Խարախանյանի գլխավորությամբ, իսկ շրջակա անտառներին ու լեռներին ապավինած ավրանցիները կռվեցին ևս 12 օր ու բոլորն էլ նահատակվեցին:

Վարդենիս գյուղը բավականին հեռու էր Մուշից: Այն գտնվում էր Մշո դաշտի արևելյան ծայրագավառը կազմող Չխուրի շրջանում: Շրջանի ապավենը Շամբ կոչվող ծանծաղ լիճն էր՝ շրջապատված եղեգնուտով: Լճի ափերին ընկած էին մի քանի գյուղեր: Վտանգի պահին վարդենիսցիները ծրագրել էին պատսպարվել ու կռվել հենց այդ եղեգնուտներում: Կոտորածից առաջ Շամբի եղեգնուտներ էին փոխադրվել մթերապաշար և անհրաժեշտ իրեր, ինչպես նաև Վարդենիս, Արտոնք, Ղարս և այլ գյուղերի անզեն բնակչությունը:

Վարդենիսի և շրջակա գյուղերի ինքնապաշտպանությունը տևեց 15 օր, որից հետո եղեգնուտներին ապավինած ժողովրդի համար արշալույս բացվեց. թշնամին սկսեց լեղապատառ փախչել՝ առնելով ռուսական զորքերի մոտենալու լուրը: Այդպիսով՝ Վարդենիսի շրջանից մոտ վեց հազար հոգի փրկվեցին և հայկական կամավորական գնդերի պաշտպանությամբ ու ռուսական զորքերի հետ նահանջեցին ու հասան Արարատյան դաշտ:

Սուրբ Կարապետի շրջանի մեջ, որը տարածվում էր Ավրանից արևմուտք, մտնում էին Ձիարեթ, Մեշտի, Բաղլու, Սորտար, Պոկլան, Կվարս, Բաղլու և այլ գյուղեր, որոնց թիկունքում բարձրանում էր Սերկի լեռը: Գյուղերին մոտիկ էին նաև Ս. Կարապետի անտառը և ձորը:

Մարտ ամսից սկսած կառավարությունը թուրքական զորքեր էր կենտրոնացրել Ս. Կարապետ վանքում և նրա շուրջը: Երբ հուլիսի 7–ին ջարդի ազդանշան տրվեց, անմիջապես իրագործվեց Բաղլուի, Մեշտիի, Ձիարեթի և Սորտարի պաշարումն ու կոտորածը: Նույնքան արագ էլ կատարվեց նշված գյուղերի ժողովրդի մեծ մասի և զինված խմբերի նահանջը դեպի Ս. կարապետի լեռն ու անտառը, որտեղ պիտի մղվեին ինքնապաշտպանական կռիվները: Ինքնապաշտպանությունը ղեկավարում էին առասպելական քաջի համբավ վայելող Սորտարցի Արամը, Բաղլուի Հովոն, Գոմսա Մոսոն և Մելիքը, ուսուցիչ Մկրտիչ Տեր–Մկրտչյանը և մի քանի խմբապետներ: Այստեղ էր կուտակվել 15–20 հազար հալածական ու անոթի ժողովուրդ: Դիմադրական ուժերն ունեին ընդամենը հարյուր մարտական հրացան, մի այդքան էլ ատրճանակ ու որսի հրացան՝ աղքատիկ զինամթերքով: Սակայն Ս. Կարապետի շրջանի ինքնապաշտպանությունը եղավ այնքան ուժեղ, որ թշնամուն թվում էր, թե ֆիդայական զորավոր ուժեր կան այնտեղ: Կռիվները երկար տևեցին, սակայն սովն ու զինամթերքի պակասը պատճառ դարձան, որ շատերը փորձեցին ճեղքել թշնամու օղակը և բարձրանալ Սասուն, կամ

միանալ ռուսական զորքերին: Ոմանց դա հաջողվում էր, իսկ մի մասն էլ նահատակվում էին: Կռիվը շարունակողները Սորտարցի Արամի գլխավորությամբ անընդհատ տեղից տեղ էին փոխադրվում: Հայորդի այդ հերոսը կռիվը շարունակեց մինչև 1916 թ. հունվար, երբ մի քանի ընկերներով փորձեց անցնել Սուլուխի կամուրջը և հասնել ռուսական զորքերին, բայց նահատակվեց ճիշտ այնտեղ, որտեղ ընկել էր Գևորգ Չաուշը: Սակայն Արամի պաշտպանած ժողովրդի բեկորներին հաջողվեց ազատվել և անցնել Արևելյան Հայաստան:

Տարոնի ինքնապաշտպանության հերոսական դրվագներից են Նեմրութի եռամսյա կռիվները: Երբ 1915 թ. ապրիլին սկսվեց Վանի ինքնապաշտպանությունը, Վանի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներ չկարողացան ապաստանել Վանում և ստիպված գաղթեցին Ախլաթ: Արամ Մանուկյանը նամակ ուղարկեց այդ շրջանի ղեկավարներից հին ֆիդայի Փալապեխ Կարապետին՝ հրահանգելով հավաքել զինյալ ուժերը և լեռ բարձրանալ: Վերջինս հին ֆիդայի Շամիրամցի Սողոյի հետ միասին իրենց շուրջը համախմբեցին շուրջ 300 երիտասարդների և Նեմրութի անտառում ժողով գումարեցին՝ շրջանի դիմադրական կռիվները կազմակերպելու համար: Սակայն, դժբախտաբար, վճռական որոշում չկայացվեց և ապստամբությունն ուշացավ: Դա հնարավորություն տվեց կառավարությանը նենգորեն ծերբակալել երկու հին ֆիդայիներին: Սակայն վերջիններիս վաղօրոք տրված հրահանգի համաձայն ապրիլի վերջերին Նեմրութ լեռը բարձրացան շուրջ երեք հարյուր կռվողներ՝ մեծ մասամբ անզեն: Դիմադրությունը ղեկավարում էին Սողոյի եղբայրը՝ Շամիրամցի Արամը, համագյուղացի Մուշեղը, Կծակ գյուղից հին ֆիդայի Այվազ Գևորգյանը, Տափավանք գյուղից Հարություն Տերոյանը:

Նեմրութի հերոսամարտն սկսվեց ապրիլի 15–20–ին և շարունակվեց *մինչև հուլիսի 15–ը՝ երեք ամիս, որից հետո ռուսական* բանակը առաջացավ դեպի Դատվան ու Ախլաթ, և Նեմրութի հերոսները միացան նրան ու համալրեցին հայ կամավորական գնդերը:

ՍԱՍՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Հայ ազատագրական շարժման միջնաբերդը՝ Սասունը, ըմբոստացման ուղին էր բռնել դեռևս 1914 թ. վերջերին: Մինչև 1915 թ. մարտը Սասունը տենդագին նախապատրաստվում էր ինքնապաշտպանու-

թյան: Ռուբենն ու Կորյունը Սասուն էին անցել 1915–ի փետրվարին և հրավիրել Շենիկի խորհրդակցությունը: Մի քանի շաբաթ անց նրանց միացավ Մշոն:

Թշնամին Սասուն ներխուժելու երկու ճանապարհ ուներ: Առաջինը Խուլբի ճանապարհն էր դեպի Տալվորիկ և Անտոք, երկրորդը՝ Հավետունի շրջանից դեպի Բսանք: Երկրորդ գծի վրա կային բագրանցի, պատգանցի, մամգանցի քրդական աշիրեթներ: Առավել կարևորը Խուլբի ճանապարհն էր, որին էլ կառավարությունն ուղղեց առաջին հարվածը:

Խուլբի կռիվները: 1915 թ. ապրիլի սկզբներին թուրքական կառավարական զորքերը, չեթեներն ու քրդերը հարձակվեցին Ահրոնք գյուղի վրա, որով և կռիվներն սկսվեցին: Շրջանի մարտական ուժերը բաժանվեցին մի քանի խմբերի: Ահրոնքի երիտասարդների մի խումբ ամրացավ գյուղի անտառներում, ժայռերի վրա և կռիվ սկսեց հարավից հարձակվող քրդերի դեմ: Խումբը ղեկավարում էին Մանոն, Հովհաննես Տեր–Մամբրեյանը՝ Հրայրի հորեղբորորդին, Կիբոն և Խաչոն: Մեկ այլ խումբ գործում էր Ընձքարի անտառներում ու կիրճերում: Երրորդ խումբը կազմված էր Գեղերվանքի ու Քարքորի մարտիկներից, որոնք պաշտպանում էին Անտոքի հարավային փեշերը՝ Իշխանաձորից մինչև Ահրոնք: Իսկ հայկական գյուղերի ժողովուրդն ապաստանել էր հեռավոր գոմերում ու քարանձավներում:

Շուտով հարձակվողներին միացան նաև Խիանքի քրդերը՝ Սասունի հարավից, որոնք շարժվեցին դեպի Սպիտակ լեռ ու Տալվորիկ: Այս երկու շրջաններում կռիվները տևեցին ապրիլից մինչև հունիսի վերջերը, երբ Խուլբի և Խիանքի հայությունը երիտասարդ կռվողների հետ միասին քաշվեց Անտոք՝ Սասնո վճռական քսանօրյա ճակատամարտին մասնակցելու համար:

Կուրտիկի կռիվները: Սասունի կռիվները փաստորեն սկսվեցին 1915–ի մարտի վերջերին: Ռուսական զորքերի և հայ կամավորների դեպի Վան, Մանազկերտ և Բուլանըխ առաջանալու կապակցությամբ Սերվեթ բեյը ստիպված էր հրաժարվել կանոնավոր զորքերով Սասունի վրա հարձակվելու մտադրությունից և այդ գործը հանձնարարեց քրդական հրոսակախմբերին: Սակայն կանոնավոր զորքի մեկական վաշտ գետեղվեցին Ս. Կարապետի, Ս. Հովհաննեսի և Առաքելոց վանքերում: Բացի այդ, կառավարությունը երկու վաշտ ուղարկեց՝ Կուրտիկի ամբողջ լեռնաշղթան գրավելու համար: Ռուբենը և Կորյունը չէին կարող դա հանդուրժել, ուստի սկսվեց դիրքային կռիվը, որը տևեց շուրջ երեք ամիս: Թուրքերի հենարանը Ս. Հովհաննեսի վանքն էր: Առաջին օրերի գրոհների ձախողումից հետո թուրքերն ստիպված էին հրաժարվել Կուրտիկի բարձունքներին տիրելուց և ամրացան լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա: Նրանց միակ նպատակն էր սպառել հայերի զինամթերքը, որովհետև Սասուն մտնելու հրահանգ դեռևս չունեին:

Կուրտիկի կռիվների ընդհանուր ղեկավարն էր Փեթարա Մանուկը, որը հին ֆիդայի էր, Գևորգ Չաուշի մարտական զինակիցը 1904–1907–ին: Նրա հետ էին Փեթարի հին ֆիդայիներ Ախոն, Իսրոն, Կիրակոսը, Թադոն, Գոմերը:

Տալվորիկի ճակատը: Սասունի հարավից ու հարավարևմտյան կողմից սկսված կռիվները ապրիլի երկրորդ շաբաթվա ընթացքում ծավալվեցին մինչև Սպիտակ լեռ: Գրավելով Սպիտակ լեռը՝ քրդերը պատրաստվում էին շարժվել դեպի Տալվորիկ, սակայն Գեբինի և Տալվորիկի հայ մարտիկները փակեցին Սպիտակ լեռան լեռնանցքը: Այդ ճակատի հրամանատարն էր խմբապետ Մուշեղը: Նրա ռազմավարությունն էր՝ փակել բոլոր կիրճերը և թույլ չտալ, որ թշնամին հարավից մտնի Տալվորիկ: Ճակատի կռիվներին մասնակցում էին նաև Ընկուզնակ, Իշխանաձոր և Աղբի գյուղերի մարտիկները:

Այսպիսով՝ ապրիլից սկսած, Սասունը չորս կողմից պաշարված էր, և այդ վիճակը տևեց մինչև հուլիս: Տևական կռիվ էր մղվում Կուրտիկից մինչև Սպիտակ լեռ, Իշխանաձոր, Ընկուզնակ և Աղբի տարածվող մի երկար ճակատի վրա, որը 150 կմ շրջագիծ ուներ:

Շուտով վերը նշվածին ավելացավ Բսանաց գավառի ճակատը: Բսանքի հայության մի մասը Դավիթ Երիցյանի գլխավորությամբ քաշվեց Տալվորիկ, իսկ մյուս մասը Ստեփան Վարդապետի, Աղջոյի և Իշխան Շառոյի գլխավորությամբ ապաստանեց Գոմուց վանքում և այնտեղից նոր ճակատ բացեց Սասունի հարավարևելյան լեռնամասերի վրա:

Մինչև հունիս բոլոր ճակատների վրա սասունցիները հերոսաբար դիմադրում էին բոլոր հարձակումներին: Բայց ռուսական բանակի առաջխաղացումն ուշանում էր և հետզհետե ավելի սուր էր զգացվում ռազմամթերքի և պարենի պակասը: Քրդերի ձեռքն անցան Խիանքը, Խուլբի մեծ մասը և Բսանքը: Հունիսի կեսերին պաշարման օղակն ավելի նեղացավ: Դիմադրական կռիվները հետզհետե փոխադրվեցին Անտոք, որը կենտրոնական դիրք էր գրավում: Հարավային շրջանների ժողովուրդն ու կռվողները տեղավորված էին Տալվորիկի, Անտոքի և Գեբինի լեռներում ու անտառներում:

Տալվորիկից մինչև Կուրտիկ և Ծովասարի ստորոտից մինչև Անտոքի հարավային փեշերը 30 կմ երկարություն և 40 կմ լայնություն ունեցող մի շրջան էր մնացել սասունցիների ձեռքում: 1200 քառ. կմ տարածությամբ այդ շրջանում հավաքվել էին ոչ միայն Սասունի ժողովուրդն ու մարտիկները, այլև Մշո դաշտից ու այլ վայրերից այստեղ հասած գաղթականները: Այդ բազմությանը կերակրելու հարցը մղձավանջային էր դարձել: Միակ լուծումը մոտակա քրդական գյուղերի վրա հարձակվելն էր, որը կունենար նաև ռազմագիտական նշանակություն: Այդ նպատակով կազմվեցին հարվածող խմբեր՝ հին ֆիդայիներ Չոլոյի և Շենիկցի Ղազարի գլխավորությամբ: Այդ խմբերը հունիսի վերջին երկու շաբաթների ընթացքում շեշտակի հարձակումներ կատարեցին քրդերի վրա և ձեռք բերեցին զգալի քանակությամբ մթերապաշար: Միաժամանակ այդ հարձակումների շնորհիվ քրդերը խուճապի մատնվեցին և Անտոքի ճակատից հետ քաշվեցին 25 կմ:

Հունիսի վերջերին, տեսնելով, որ թուրքերի հարձակումը Սասունի վրա ուշանում է, Ռուբենը խորհրդակցություն գումարեց, և որոշվեց օգնության հասնել Մուշ քաղաքին: Սասունցի կռվողները շարժվեցին դեպի Կուրտիկ ու Ծիրինկատար, բայց այդտեղ հանդիպեցին փախստական մշեցիների և տեղեկացան, որ քաղաքի հերոսամարտն ավարտված է և հայկական թաղերը մոխրակույտերի են վերածված:

Վահան Փափազյանը (Կոմս), որը հունիսի սկզբին Մատթեոսի հետ Սասուն էր բարձրացել և գտնվում էր Սեմալում, կռվողների խմբով անմիջապես մեկնեց Հավատորիկ, որտեղ ապաստանել էին Մուշից փրկված կռվողները և նրանց հետ միասին դիրք բռնեցին թուրքական վաշտերի դեմ: Դիրքեր ստեղծվեցին նաև Մառնիկում ու Բերդակում:

Մուշի հերոսամարտից ու հրկիզումից անմիջապես հետո թուրքական ուժերը սկսեցին բարձրանալ դեպի Ծիրինկատար, Կուրտիկ և Առաքելոց վանքի վերին ծորերը: Կուրտիկի վրայով թնդանոթներով զինված թուրքական զորամասերն ուղղվեցին դեպի Շենիկ և Սեմալ, որոնք հերոսական Սասունի առաջին դարպասներն էին: Թուրքերի գլխավոր նպատակն էր ոչնչացնել Մուշից և Մշո դաշտից ազատված հայ մարտիկներին, որոնք Կոմսի և Մատթեոսի գլխավորությամբ դիրքեր էին գրավել Հավատորիկի և Մառնիկի բարձունքների վրա: Այդ դիրքերի վրա հայ մարտիկները կռվում էին երեք ամսից ավելի, ուստի ուժասպառ էին եղել: Փոքրաքանակ սասունցիները երկու օր ուժեղ դիմադրություն ցույց տվեցին, բայց ի վերջո թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ տեղի տվեցին և անցան Շենիկ ու Սեմալ:

Հուլիսի 19-ին թուրքական հարձակումը կանոնավոր ճակատամարտի բնույթ ստացավ: Մի քանի դիրքերից թնդանոթները որոտում էին դեպի Շատախի հայկական գյուղերը (Սասունի Շատախ — Մ. Կ.), դեպի Գելիեգուզան և Անտոք: Հարավ-արևմուտքից Խուլբի և Խիանքի ուղղությամբ հարձակվում էին քրդական ուժերը, իսկ Հազոյի շրջանից թուրքական ուժերն ու քրդական աշիրեթները բարձրանում էին Բասնաց լեռները և ուղղվում դեպի Տալվորիկ:

Նման պայմաններում Ռուբենը, Կորյունը և Մճոն վերադասավորեցին ուժերը և դիմադրությունը կենտրոնացրին վեց ճակատների վրա: Տալվորիկի և Խիանքի ճակատը ղեկավարում էր խմբապետ Մուշեղը, որի օգնականներն էին Ալիջանցի Տիգրանը և Բասնցի Դավիթ Երիցյանը: Շենիկ-Սեմալի ճակատի ղեկավարությունը հանձնվեց Չոլոյին, Շենիկցի Ղազարին, Սեմալցի Քյաթիպ Մանուկին և Ադամին: Աղբիի ճակատը վստահվեց Աղբկա Մարտեին և Մշեցի Արոյին: Գեբին-Խուլբի ճակատը հանձնվեց Իշխանձորցի Արթինին, Հեղինցի Վահան Վարդանյանին և Սաղտունցի Հովհաննեսին: Գելիեգուզանի ճակատներն իրարից հեռու էին, ընդգրկվում էին Անդոքի բոլոր կողերը և հանձնված էին Կորյունի և Մճոյի ղեկավարությանը: Մարտական ղեկավարներն էին Մորուք Կարոն, Ղազար Պետոյանը, Սրգոյի Հովսեփը, Քյաթիպ Կիրակոսը, Մարգեն, Տեր Քաջի Ադամը, Ղազար Ֆահրատյանը և Գարոյի Պետրոսը: Կենտրոնը ղեկավարում էր Ռուբենը, որի կողքին էին Մուխսի Ֆարհատի Արոն, Պզտիկ Արամը, Ավրանի Արամը և Հրայրի եղբայրը՝ Մանոն, իրենց պահեստային խմբերով:

Սասունի պաշարված շրջաններում հավաքված էր շուրջ 15 հազար ժողովուրդ, բոլորն էլ կորովի և կռվի ընդունակ: Սասունը վերադարձել էր 1894 և 1904 թվականներին՝ այս անգամ ավելի ընդարձակ մասշտաբներով:

Շենիկի ուղղությամբ թուրքական բանակին հաջողվեց գրավել Մերկե-Մոգանի բարձունքները: Հայ մարտիկները նահանջեցին և ամրացան Սեմալի, Շենիկի և Կուրտիկի գծի վրա: Նույն օրը քրդերը հարավից բուռն հարձակում ձեռնարկեցին Տալվորիկի և Իշխանձորի ուղղությամբ, սակայն Սպիտակ լեռան կիրճերում Իշխանձորի լանջերին հանդիպեցին ուժեղ դիմադրության: Խմբապետ Մուշեղի, Ալիջանցի Տիգրանի, Դավիթ Երիցյանի և Տալվորիկի իշխանների մարտիկները անսասան

մնացին և գիրկընդխառն բախվեցին թշնամուն: Սկսվեց մահ–պատերազմ, և Տալվորիկում կարծես երկրաշարժ էր: Երեկոյան կողմ քրդերը զինադադար առաջարկեցին, որը և ընդունվեց:

Շենիկի ճակատում Ռուբենը, Կորյունը և Մճոն որոշեցին գիշերային կայծակնային հակահարձակման անցնել թուրքական թնդանոթների դեմ, որոնք բարձր դիրքերից 15–20 կմ տարածության վրա փոթորկալի կրակ էին տեղում: Ընտրված մարտիկների մի թնդ ուղղվեց դեպի Մճլնու աղբյուրը, մյուս թևը՝ դեպի Ալիանքի բարձունք: Հարձակվողներն անաղմուկ, սառը զենքով վերացրին պահակներին և հասան թնդանոթներին: Նրանք արագորեն ոչնչացրին թնդանոթաձիգներին և գրավեցին երեք թնդանոթները: Այնուհետև այդ նպաստավոր դիրքերից հայ մարտիկները մրրկածուփ կրակ տեղացին մոտակա դիրքերի թուրքական զորամասերի վրա՝ պատճառելով նրանց մեծ կորուստներ, իսկ կենդանի մնացածները դիմեցին խուճապահար փախուստի: Շենիկը վերագրավված էր: Գրավված էին նաև թուրքական երեք թնդանոթները, սակայն առանց ռումբերի ու մասնագետի: Ռուբենի կարգադրությամբ սասունցիները հանեցին թնդանոթների փակաղակները, այլ կարևոր մասեր ու վերադարձան իրենց կենտրոնատեղին:

Համալրելով ուժերը և բերելով նոր թնդանոթներ՝ հուլիսի 23–ին թուրքերն սկսեցին նոր, ավելի լայնածավալ հարձակում, որը տևեց մինչև օգոստոսի 2–ը: Անտոքի ամբողջ շրջանում դիրքերը ձեռքից ձեռք էին անցնում: Չնայած բացահայտ առավելությանը, թուրքերին հաջողվում էր օրական առաջանալ հազիվ մեկ կիլոմետր: Այնուամենայնիվ, պաշարման օղակը գնալով սեղմվում էր: Քաշվելով դեպի Անտոք՝ հայկական ուժերը շարունակում էին դիմադրությունը, սակայն թուրքական թնդանոթներն ավելի ու ավելի ուժեղ էին որոտում:

Օգոստոսի 2–ին տեղի ունեցավ Սասունի հերոսամարտի վերջին արարը: Թշնամուն հաջողվեց Շենիկի ճակատից ճեղքել դիմադրության կուռ շղթան՝ խլելով Կորյունի ու նրա նման հերոսների կյանքը, որոնք այլևս նահանջելու տեղ չունեին, որովհետև նահանջը կնշանակեր Սասնո ժողովրդի ստույգ կոտորածը:

Տասնօրյա հերոսական ճակատամարտից և Շենիկի անկումից հետո տեղի ունեցավ վերջին խորհրդակցությունը, որտեղ մարտական խմբերի ղեկավարները որոշեցին տարբեր ուղղություններով հարձակվել թշնամու վրա և ամբողջ ժողովրդի հետ ճեղքել պաշարման շղթան: Այդ ծրագիրը գործադրվեց օգոստոսի 3–ի գիշերը: Կռվող խմբերին ու

ժողովրդին հաջողվեց ապաստանել անառիկ լեռների ապահով վայրերում: Ռուբենի, Վահան Փափազյանի (Կոմս), Մարտիրոսի և ուրիշ խմբապետների ղեկավարությամբ կռվողներին հաջողվեց ուղղություն վերցնել դեպի հյուսիս–արևելք և օգոստոսի վերջերին հասնել ռուսական բանակին:

Ի տարբերություն շատ այլ հեղինակների, սփյուռքահայ հեղինակ Նազարեթ Պերպերյանը գտնում է, որ թեև Սասունի հերոսամարտը օգոստոսի 3–ին ավարտվեց, բայց ընդունված ռազմավարությունը փաստորեն հաջողություն ունեցավ, որովհետև սեպտեմբերի կեսերին Սասունի ժողովրդի 90 տոկոսը տակավին ողջ էր և ապաստանել էր անառիկ լեռներում: Թուրք–քրդական ուժերի բոլոր փորձերը՝ կոտորել Սասնո ժողովրդին, միշտ ապարդյուն էին անցնում, որովհետև դիմադրությունը շարունակվում էր՝ արդեն հրոսակային կռիվների ձևով ու անընդհատ տեղափոխությամբ: Սասնա լեռները մինչև 1916–ի գարունը պահպանեցին իրենց զավակներին, մինչև որ ռուսական զորքի առաջխաղացմամբ թուրք–քրդական ուժերը նահանջեցին և հայ կամավորական գնդերը վերանվաճեցին Տարոնը՝ 1916–ի առաջին ամիսներին:

Սասունի հայությունը մեկ ամբողջ տարի՝ 1915–ի փետրվարից մինչև 1916–ի փետրվար, կարողացավ դիմադրել թուրքին, որից հետո իր վճռական մասնակցությունը բերեց Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծմանը:

ՇԱՊԻՆ–ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շապին–Գարահիսարն իբրև բնակավայր հայտնի է դեռևս Տիգրան 2–րդի ժամանակներից: Նրա սպարապետ և Փոքր Հայքի կառավարիչ Միհրդատը ամրացնում է Կոլոնիա բնակավայրի բնական դիրքերը և ճակատամարտ տալիս հռոմեական զորավար Պոմպեոսի դեմ: Հայկական բանակը պաշարվում, ի վերջո պարտվում և լքում է իր դիրքերը: Պոմպեոսը գրավում է այդ անառիկ բերդը, այնտեղ կառուցում մի շարք ջրամբարներ, գաղտնուղի: Հռոմեական եռապետության անկումից հետո բերդը գրավում է հռոմեական կայսր Նիկողայոս Կոլթը և իր անունով կոչում Նիկոպոլիս: 18–րդ դարում թուրքերը հույներից գրավեցին Նիկոպոլիսը և այն վերանվանեցին Շապին–Գարահիսար, որովհետև շրջանի լեռներում կային շապի (պաղլեզ, շիբ) հանքեր: Հայերը կարճ ժամանա-

կում զբաղեցնում են Շապին–Գարահիսարի և շրջակայքի լավագույն դիրքերը, բացում Սամսոն–Սվազ առևտրական խճուղին: Խարբերդ, Ակն, Արաբկիր, Մալաթիա և Սվազ քաղաքները Պոլսի հետ հարաբերվում էին Շապին–Գարահիսարի ճանապարհով: Քաղաքի շրջակայքում բարգավաճում են նաև մի շարք հայկական գյուղեր՝ Բյուրք, Այծպտեր, Մշակնոց, Կթանոց, Գոմեշտուն, Սիս, Աղվարիս, Էնտիրես, Աղվանիս, Սևինտիկ, Դմլուճ, Սպանան, գյուղաքաղաք Թամզարա:

Շապին–Գարահիսարում բարձր հիմքերի վրա էր կրթական գործը: Բացի թաղային և անհատական դպրոցներից կային երկու ազգային երկսեռ դպրոցներ, Արամյան և Ս. Փրկիչ վարժարանները:

Զորակոչի ժամանակ Շապին–Գարահիսարի հայերը տվեցին 400 զինվոր, որոնց մեծ մասը, սակայն, խույս տվեց ծառայությունից և վերադարձավ տուն: Դասալիքներ որոնելու պատրվակով կառավարությունն սկսեց խուզարկություններն ու հետապնդումները: Ձերբակալվեցին քաղաքի երևելիները, որից հետո թուրքերը ձեռնամուխ եղան հայերին զինաթափելու գործին: Այդ խժդժություններն իրականացնում էր բանտից նոր ազատված ավազակապետ Քել Հասանը: Նրա հրամանով ձերբակալվեցին ու խոշտանգվեցին շուրջ 20 հայեր:

Թեև Շապին–Գարահիսարի հայ գործիչները ժողովրդին հրահանգել էին չկրակել, բայց պատրաստ լինել, 1915–ի հունիսին հայկական թաղերից մեկում համբերությունից դուրս եկած հայերը կրակ բացեցին թուրք ոստիկանների վրա և բախումն սկսվեց: Հրացանաձգությունը տարածվեց ողջ քաղաքով մեկ: Քաղաքի Եկեղեցու թաղ, Բերդի թաղ, Միջին թաղ և այլ հայկական թաղերի բնակիչները դիմեցին ինքնապաշտպանության, որը ղեկավարում էին Գարեգին, Անդրանիկ և Ավետիս Պարոնվարդյան եղբայրները: Թուրքերը հայերի աչքի առջև կացնահարեցին կամ գնդակահարեցին բանտարկված հայերին, և այդ ոճրագործությունը ավելի համախմբեց շապինգարահիսարցիներին:

Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունը հանձնարարվեց Ղուկաս Դովլաթյանին (Ղուկաս Աղբար), որը վայելում էր բոլոր հոսանքների համակրանքն ու վստահությունը: Իսկ մարտական գործողություններն անմիջականորեն ղեկավարում էր Անդրանիկ Օզանյանի վաղամեռիկ կնոջ՝ Վերոնիկայի եղբայրը՝ Գարեգին Թաշճյանը (Հր. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, էջ 471):

Հայերն սկսեցին իրենց ամուր դիրքերից կրակ տեղալ թուրքական թաղերի վրա, սակայն ի վերջո ստիպված էին փոխադրվել քաղաքի հինավուրց բերդը, որը կառուցված և ամրացված էր դեռևս հռոմեացի զորավարների ձեռքով և ուներ բնական ու արհեստական ամրություններ: Բերդում ապաստանեցին 5062 հոգի, որից 1500–ը՝ արական սեռի: Նրանցից կռվի ընդունակ էին 250–ը: Մնացածները ծերեր էին, կանայք, երեխաներ, պատանիներ, հիվանդներ:

Բերդում ձեռնարկվեցին կազմակերպչական աշխատանքներ՝ պարենավորում, ջրամատակարարում, զինական նախապատրաստություն, որպիսիք տարվում էին գիշեր–ցերեկ: Ամեն ոք ցուցաբերում էր կարգապահություն և զոհողության գիտակցություն՝ արհամարհելով թշնամու գերազանց ուժերը: Կազմվեց Զինվորական Խորհուրդ:

Բերդում ապաստանած ժողովուրդը մի քանի ժամվա ընթացքում բերդը վերածեց լավ ամրացված ամրոցի: Քարե հաստ պատերով նորոգվեցին աշտարակները, խարխլված պարիսպները, նոր պատնեշներով իրար կապվեցին դիրքերը: Դիրքեր կառուցվեցին իշխող յոթ ճակատների վրա, կազմվեցին դրանք պաշտպանող խմբեր՝ յուրաքանչյուրը 8–25 հոգուց կազմված, իրենց պետերով, տասնապետներով, հերթապահներով, փոխանորդներով:

Մտահոգության լուրջ հարց էր սննդամթերքի, ջրի և վառելանյութի մատակարարումը: Մեկ շաբաթում սպառվեց քաղաքից բերված մթերապաշարը, երկու օրում խմեցին բերդի լճակների նեխած, գարշահոտ, ջրաբույսերով ու միջատներով թանձրացած ջուրը: Ամառային տապի պայմաններում բերդում սկսվեց ջրի սոսկալի տագնապ: Սկսեցին մաքրել քարերով լցված հին ջրհորներից մեկը և ջուր հայտնաբերվեց, որը որոշ ժամանակ մեղմեց ջրի պակասը:

Բերդի պաշտպաններն ունեին 150 մաուզեր, 50 կարաբին և այնալու հրացան, հունական, բուլղարական հրացաններ, 40 հեծելազորային բազմահարված «Ֆիլինտա» տիպի հրացան և 80–ի չափ ձեռնառումբեր:

Ինքնապաշտպանության ղեկավար Ղուկաս Աղբարը հրահանգ տվեց՝ ոչ մի անտեղի գնդակ, ոչ մի ռումբ՝ առանց գոնե 5 թուրք սպանելու:

Կարգապահություն հաստատելու համար Զինվորական Խորհուրդը տվեց հետևյալ հրահանգները՝ 1. բացարձակ հնազանդություն խմբապետներին, 2. կուսակցական վեճեր և խռովություններ հարուցող անձը կգնդակահարվի, 3. առանց Զինվորական Խորհրդի թույլտվության ոչ ոք իրավունք չունի հեռանալ բերդից, 4. անհնազանդները տեղում կենթարկվեն մահապատժի:

Սննդի բաշխումը կատարվում էր ըստ ընտանիքի անդամների թվի: Հացը պատրաստվում էր երկու քարայրերի մեջ: Երեսուն կանայք աշխատում էին 24 ժամ և օրական թխում մոտ 8 հազար հաց: Խիստ դժվար էր վառելիք ճարելը: Գտնված ջուրը կրկին սպառվեց և սկսեցին նոր ջրհորներ որոնել: Թուրքերն սպանեցին մի պատանու, որը գիշերով դուրս էր եկել բերդից և վերադառնում էր լիքը ջրամանով:

Բերդ մտնելու հինգերորդ օրը Սեբաստիայի կուսակալն իբրև բանագնաց նամակով այնտեղ ուղարկեց մի հայ կնոջ՝ զենքը վայր դնելու և անձնատվության առաջարկությամբ: Փոխարենը կայսերական ներում էր խոստացվում բոլորին, առաջարկվում էր ցանկացած տեղում կառուցել նոր բնակավայր՝ այրված Շապին–Գարահիսարի փոխարեն: Չհնազանդվելու դեպքում կուսակալն սպառնում էր թնդանոթային կրակով հիմնահատակ ավերել բերդը:

Թուրքական խորամանկությանը քաջածանոթ հայերը մերժեցին հաշտության առաջարկը՝ հայտնելով, որ իրենք հաշտվել են մահվան հետ ու չեն վախենում թնդանոթներից:

Առավոտյան թուրքերն սկսեցին հրետակոծությունը: Հայերը հավաքում էին ժայռերի խոռոչներում պայթած ռումբերի բեկորները, տանում զինարան, փամփուշտներ ձուլում ու «վերադարձնում» թշնամուն: Ղուկաս Աղբարի հնարամտության շնորհիվ թուրքական թնդանոթներից մեկը լռեց, որովհետև հայերը նշանառու կրակով շարքից հանեցին թնդանոթաձիգներին:

Հաջորդ լուսաբացին թուրքերը վերսկսեցին գնդակոծությունը՝ երեք հրանոթներով: Ղուկաս Աղբարը և Զինվորական Խորհուրդը որոշեցին մինչ այդ պահված ռումբերը բաժանել դիրքերին: Մինչև կեսօր հայերը նախապատրաստվում էին և պատասխան կրակ չէին բացում: Այդ լռությունից քաջալերված՝ թուրքերն սկսեցին շարժվել դեպի վեր: Հայկական դիրքերից կրակ տեղացին, և թուրքերն անկանոն նահանջեցին:

Թուրքական հարձակումը վերսկսվեց հաջորդ օրը: Այս անգամ վերև էր մագլցում թուրք խուժանը, իսկ զինվորները մնացել էին ներքևում: Սկսվեց թեժ կռիվ, որը շարունակվեց մինչև երեկո, երբ հարձակվողները կրկին նահանջեցին: Նույնը կրկնվեց նաև հաջորդ մի քանի օրերին:

Բերդի պաշտպանները հույսեր էին կապում ռուսական զորքերի առաջխաղացման հետ: Նրանք սպասում էին նաև Սեբաստացի Մուրադին և Անդրանիկին, որոնք, սակայն, ուշանում էին: Մի օր էլ Սեբաստիայի ճանապարհի վրա մի սև զանգված նշմարվեց, որից ենթադրեցին, թե եկողը Մուրադն է:

Այս սպասողական դրության մեջ ուտելիքն սպառվեց: Ուտելիք կարելի էր ձեռք բերել միայն շրջակա թուրքական գյուղերի վրա հարձակվելով, որը գրեթե անհնար էր:

Կրկին ճերմակ դրոշով երևաց պատգամաբեր հայ կինը, և կռիվը դադարեց: Երկրորդ նամակով կուսակալը երդվում էր ունեցվածքի և պատվի ապահովություն շնորհել հայերին, խոստանում պատժել հայերի մատնանշած հանցավոր թուրքերին և կրկին առաջարկում հանձնվել: Հանձնվել՝ նշանակում էր մատնվել Շապին–Գարահիսարի դաշտային շրջանի հայկական գյուղերի արյունոտ ճակատագրին, որին իրենք ականատես էին եղել բերդի բարձր դիրքից: Պարզ էր նաև, որ մի քանի օրից լիովին սպառվելու էր պարենն ու զինամթերքը: Ուրեմն միակ ելքը կռվելն ու պատվով մեռնելն էր:

Բերդի պաշարումից 18 օր անց երրորդ անգամ ճերմակ դրոշով երևաց պատգամաբեր կինը: Սակայն նրան ճանապարհեցին, հայտնելով, որ կռվելու են մինչև վերջին փամփուշտը:

Եվ հարձակումը չուշացավ: Հունիսի 20–ի լուսաբացին թնդանոթների համազարկերի ուղեկցությամբ թուրք զինվորների շղթաները քայլող անտառի նման սկսեցին բարձրանալ դեպի բերդ: Հայերը պատասխանեցին միահամուռ ու անդադար կրակով՝ հաշվի չառնելով փամփուշտի խնայողության պահանջը: Նրանք գերագույն ճիգերով էին մնում դիրքերի վրա, ամեն կողմից լսվում էին օգնության կանչեր: Ղեկավարները անելանելի դրության մեջ էին. ինչպե՞ս դիմադրել թուրքական 5–6 հազարանոց կանոնավոր բանակին և նույնքան էլ խուժանին: Թշնամին հասել էր բերդի պարիսպներին: Հանկարծ Շմալի կոչվող դիրքում ռումբեր պայթեցին և թշնամին կանգ առավ: Սակայն Սառնիճներ կոչվող դիրքի կողմից զգեստափոխված և հայերի հագուստներ հագած թուրքերը կարողացան անարգել մոտենալ և ոչնչացնել գրեթե բոլորին: Թշնամուն հաջողվեց գրավել բերդի դուռը և քանդել մուտքը պաշտպանող պատվարը: Սակայն այդ ճգնաժամային պահին բերդի դռան առջև մի ռումբ պայթեց, որը նետեց Գ. Կարմիրյանը: Հացթուխ կանայք ևս ռումբ էին պահանջում: Այդ պահին 14 տարեկան Հ. Թևեքելյանը իր կյանքի գնով հրաշքով հայթայթեց ռումբը: Այն պայթեց դռան առջև և սպանեց 5–6 զինվորների, իսկ մյուսներն ահաբեկված թաքնվեցին քարերի տակ: Օգտվելով թշնամու խուճապից՝ հայ կռվողները հարձակվե-

ցին թշնամու վրա: Առջևից վազում էր Երեմիա Բալուցյանը: Թուրքերը փախուստի դիմեցին: Նրանց հնձում էին վերևից տեղացող փամփուշտները, հայ կանանց ու երեխաների նետած քարերը: Պատկերը նույն կերպ փոխվեց նաև մյուս ճակատներում: Թշնամին հեռացավ՝ թողնելով անթիվ դիակներ: Ժողովուրդը տոնում էր իր հաղթանակը՝ պարով ու լացով, որովհետև միաժամանակ լուսնի լույսի տակ թաղում էին իրենց հարազատներին, այդ թվում ինքնապաշտպանության ղեկավարներից Հ. Գարակյոզյանին, Ավագ Տուրիկյանին, Ռուբեն և Գրիգոր Պարոնվարդյան եղբայրներին, Ե. Վեցիկյանին և ուրիշների:

Հաջորդ մի քանի օրերին հարաբերական անդորր էր տիրում: Բայց ինչ որ չկարողացավ անել թշնամին, արեց սովը: Ոչ մի տեղից օգնություն չստացվեց: Անդրանիկ Պարոնվարդյանը և Նշան Սերեմյանը գնացին թուրքերի հետ բանակցելու, բայց այլևս չվերադարձան:

Ղուկաս Աղբարը ժողովի հրավիրեց բոլոր մարտիկներին: Նա հրահանգեց գիշերային ուժեղ հարձակումով ճեղքել պաշարման օղակը, իջնել դաշտ և կռիվը շարունակել շրջակա լեռներում և թուրքերին սպառնալ շրջակա թուրքական գյուղերի ոչնչացմամբ, եթե նրանք վայրագորեն վարվեն բերդում մնացած կանանց ու երեխաների հետ: Ծրագրված էր առավոտյան հարձակվել Գլխիվար Սառնիճ կոչվող դիրքից, ապա հավաքվել Թամզարայի վանքի պարտեզում ու որոշել իրենց հետագա ուղղությունը: Սակայն առավոտյան տեսան, որ թշնամին ամրացրել է այդ դիրքը, որովհետև երկու սեբաստացի երիտասարդներ մատնել էին հայերի ծրագիրը:

Մշակվեց նոր ծրագիր, որը գաղտնի պահվեց: Պարենի ու ռազմամթերքի պաշարները բաժանվեցին նահանջին մասնակցել ցանկացողներին: Նոր ծրագիրը նախատեսում էր հարձակումն սկսել Բերդի դռնից: Գիշերային կարգախոսն էր «Կծիկ»:

Նահանջն սկսվեց Դռան առջևից: Սկսեցին իջնել զգուշորեն, առանց աղմուկի: Սակայն թշնամին կռահեց հայերի մտադրությունը: Սկսվեց գիրկընդխառն կռիվը: Նահանջին մասնակցող շուրջ հազար հոգուց հարյուրը նահատակվեցին այդ գիշերային մարտում: Մնացածները, երեք ճակատի վրա հարվածելով թշնամուն, անցան դաշտ, որտեղ ցրվեցին և մոտ երկու տարի տարբեր վայրերում կռվելուց հետո բոլորն էլ սպանվեցին:

Հունիսի 28–ին բերդի վրա պարզվեց անձնատվության սպիտակ դրոշը: Չհավատալով աչքերին՝ թշնամին վեց ժամ սպասեց և նոր միայն

հաղթանակի փողերով ու թմբուկներով բարձրացավ բերդ՝ այնտեղ կատարելու համար Հայոց ցեղասպանության արարներից մեկը: Հաջորդ սերունդների շուրթերին մնաց դյուցազնական Շապին–Գարահիսարի հերոսական անունը: Իսկ շապինգարահիսարցի Արամ Հայկազն իր հուշերի գրքում գրեց. «Աղոթելու տեղ կանիծեմ այն Աստվածը՝ որ մեր ճակատագիրը գրեց» (Արամ Հայկազ, Շապին–Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957, 459 էջ):

Ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, դահիճները առանձին դաժանությամբ հաշվեհարդար տեսան Անդրանիկի հարազատների հետ՝ նման քստմնելի եղանակով վրեժխնդիր լինելով սարսափազդու ժողովրդական հերոսից: Նրանք ոչնչացրին Անդրանիկի եղբոր ու հորեղբոր ընտանիքները: Նրանց թվում էր Անդրանիկի հորեղբոր որդին՝ նշանավոր հնչակյան գործիչ և անվանի մտավորական Գագիկ Օզանյանը, որի գրչին են պատկանում «Պատմություն հայ լեզվի և բանահյուսության», «Հայապատում: Հայուն պատմական դերը» արժեքավոր աշխատությունները (Հ. Ս., էջ 471):

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Անտիոք քաղաքից արևմուտք տարածվում է մի փոքրիկ լեռնաշղթա, որն Ամանոսյան լեռների հարավային ճյուղերից է: Այդ լեռնաշղթան բաժանված է երկու մասերի. Արևելյան մասը կոչվում է Չեբել էլ Ահմար, որի բարձր գագաթը 2550 մետր է, իսկ Արևմտյան մասը՝ Չեբել Մուսա, կամ Մովսեսի լեռ՝ մոտ 1800 մետր բարձրությամբ մի գագաթով: Այդ լեռները ծածկված են անտառներով ու պուրակներով, ունեն առատ ջրեր:

Մուսա լեռան բարձունքների վրա գտնվում են հայկական վեց գյուղեր, որոնք կազմում են Սուեյդիայի (պատմական Սելևկիա նավահանգստի անունից) շրջանը: Այդ գյուղերից կարևորագույնը Բիթիասն է, որը 1915–ին ուներ 195 ընտանիք կամ 1050 բնակիչ: Նրանցից տարագրության ճամփան բռնեցին 450–ը:

Բիթիասից մեկ կիլոմետր հարավ–արևմուտք գտնվում է Հաջի–Հաբիբլի գյուղը, որն ամենաբազմամարդն է՝ 257 ընտանիք կամ 1284 բնակիչ: Նրանցից կամովին տարագրության ճանապարհը բռնեցին 384–ը:

Միջերկրական ծովի ափից 7 կմ հեռու, Մուսա լեռան լանջին գտնվում է Յողուն–Օլուք գյուղը՝ 600 մետր բարձրության վրա, բաղկացած 255 ընտանիքից՝ 1233 բնակիչ: Նրանցից տարագրության դիմեցին 57–ը: Նրանից մեկ կիլոմետր հարավ գտնվում է Խտր–Բեկ գյուղը՝ 95 ընտանիք, 1149 բնակիչ, 65 տարագրյալ: Նրանից էլ երկու կիլոմետր հարավ գտնվում էր Վագֆ գյուղը՝ 82 ընտանիք, 470 բնակիչ, 84 տարագրյալ:

Յողուն–Օլուքից 5 կմ դեպի արևմուտք՝ Մուսա լեռան լանջերից մեկի վրա է գտնվում Քեբուսիե գյուղը՝ Միջերկրականի ափից ոչ շատ հեռու: Նրա բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 1040 հոգի, բռնեցին տարագրության ճամփան և մնացին Դեր–Զորի ավազուտներում: Չտարագրվեցին 85 հոգի:

Այսպիսով՝ հայկական վեց գյուղերի բնակչության ընդհանուր թիվն էր 6811 հոգի, որից 2580–ը նախընտրեց բռնել տարագրության ճանապարհը, իսկ մնացած 4231 հոգին, որից 1711 կին, 1237 տղամարդ և 1283 երեխա, նախընտրեցին ապավինել իրենց պահապան լեռանը: Ընդհանուր առմամբ կանանց թիվը գերակշռում էր, որովհետև տղամարդիկ բանակ էին զորակոչված:

1915 թ. հուլիսի 26–ին տեղահանվելու հրահանգ ստացավ հարևան Քեսապի հայ բնակչությունը: Կային միամիտներ, որոնք հավատացին կառավարության կեղծ խոստումներին, թե իրենց մեկնումը ժամանակավոր է: Սակայն իրենց բանակատեղերից փախած հայ զինակոչիկները սարսափելի բաներ էին պատմում իրենց տեսածի մասին: Ուստի անմտություն էր կուրորեն ենթարկվել տեղահանության հրամանին:

Քեսապից չորս օր հետո՝ հուլիսի 30–ին, Սուետիայի շրջանն էլ ստացավ տեղահանության հրահանգ՝ ստորագրված Անտիոքի կայմակամի կողմից: Սուետիայի մյուդիրը հրահանգի մեկական օրինակ ուղարկեց հայկական վեց գյուղերի գյուղապետներին:

Սուետիան Սելևկիա բառի աղավաղումն է և վերաբերում է մի գյուղաքաղաքի, որը գտնվում է Անտիոքից 28 կմ դեպի արևմուտք: Այն Սուետիա նույնանուն գավառակի կենտրոնն էր:

Տեղահանության նախապատրաստվելու համար տրվում էր ութ օր: Սուետիայի տեղահանության պատրվակներից մեկն էլ այն էր, որ Անտանտի դաշնակիցները մեծ ուժեր էին կենտրոնացրել 150 կմ հեռու գտնվող Կիպրոս կղզում, և ծովեզերքից ոչ շատ հեռու երթևեկում էին անգլիական ու ֆրանսիական ռազմանավեր:

Սուետահայերը կանգնած էին երկընտրանքի առջև: Անելիքը որոշելու համար Յողուն Օլուք գյուղի քահանա Աբրահամ Տեր Գալուստյանի տանը հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին հայկական գյուղերի ներկայացուցիչները: Ոչ ոք չէր մասնակցում միայն Քեբուսիեից: Նրանց որոշումից էր կախված վեց հազարից ավելի մարդկանց ճակատագիրը: Խորհրդակցությունը տևեց ամբողջ գիշեր, եղան բուռն վիճաբանություններ, հայտնվեցին հակոտնյա տեսակետներ: Ինքնապաշտպանության դիմելու գաղափարին դեմ արտահայտվեցին Բիթիասից՝ Մովսես Ռենճիլյանը, Հաջի Հաբիբլիից՝ Գրիգոր Մարգարյանը և գերապատվելի Հարություն Նոխուդյանը: Ինքնապաշտպանությանը կողմնակից էին Մովսես Տեր–Գալուստյանը, Ավետիս Մասմանյանը, Թովմաս Այնթապլյանը, Տեր Աբրահամ Տեր–Գալուստյանը, Տեր–Վարդան Վարդերեսյանը, Մելքոն Գույումճյանը և ուրիշներ:

Եվ այսպես՝ 6811 հոգուց մեկ երրորդը՝ 2050 մարդ, բռնեցին տարագրության ճանապարհը, իսկ մնացած 4231–ը որոշեցին դիմագրավել արյունարբու թշնամուն: Դրանցից զենք կրելու ընդունակ էին շուրջ 800–ը, իսկ զենքը քիչ էր՝ 133 հունական Կրա հրացան, 7 մաուզեր, 450 հնատիպ և որսորդական հրացաններ: Յուրաքանչյուր հրացանին ընկնում էր 80–100 փամփուշտ: Դրանից բացի կար բավականաչափ վառոդ ու կապար՝ 30.000 փամփուշտի համար:

Չափազանց կարևոր էր ինքնապաշտպանության համար հենակետ ընտրելու հարցը: Ոմանք առաջարկեցին ամբողջ ժողովրդին հավաքել ամենալավ դիրք ունեցող գյուղի մեջ, և այն վերածել ամրոցի: Ի վերջո վերապատվելի Տիգրան Անդրեասյանի և Մովսես Տեր–Գալուստյանի առաջարկով որոշվեց հաստատվել Մուսա լեռան գագաթին, որի բարձրությունը 1800 մետր էր, տարածքը՝ 70–80 քառ. կմ:

1915 թ. հուլիսի 31–ին սկսվեց լեռը բարձրանալու գործողությունը, որը տևեց երեք օր: Դա կատարվում էր մեծագույն դժվարություններով, որովհետև պատերազմի ընթացքում կառավարությունը բռնագրավել էր բոլոր փոխադրական միջոցներն ու քաշող ուժը: Ամեն մի գյուղից ծայր առավ մարդկային բազմություն՝ հակերով ու պարկերով ծանրաբեռնված, իսկ հովիվները քշում էին կովերին, այծերին ու ոչխարներին: Վերելքը գնալով դժվարանում էր:

Օգոստոսի 1–ին ժողովրդի մեծ մասը հասավ Թաթար Ալան կոչված սարահարթը՝ լեռան գագաթից բավական ներքև: Հետագա բարձ-

ռացողներին տեղավորեցին Գելճա, Գուզճղազ, Տամլաճըգ և Գափլան Տուզաղը վայրերում:

Ժողովրդի տեղաշարժը աննկատ չմնաց, և Սուլտիայի մյուդիրը երեք անգամ պահանջեց հայերից հրաժարվել իրենց մտադրությունից, բայց անպատասխան մնաց:

Մուսա լեռան բարձունքներն ունեին աննպաստ կլիմա: Եթե ներքևում կիզիչ արև էր, ապա վերևում տևական, սառցային ու թանձր մշուշ էր, որը պարուրում էր մարդկանց մարմինը, թրջում հագուստները և թափանցում մինչև ոսկորները: Ռազմագիտական տեսակետից այդ մշուշն ուներ իր առավելություններն ու անպատեհությունները: Տղամարդիկ ձեռնամուխ եղան ծառերից կացարաններ պատրաստելու գործին:

Օգոստոսի 5–ին մյուդիրը նամակով մուսալեռցիների մոտ ուղարկեց մի պատվիրակություն, որի մեջ էին տարագրության կողմնակիցներ Տեր Վարդան Վարդերեսյանը, Հաջի Խաչեր Մարտիրոսյանը, Վերապատվելի Հարություն Նոխուդյանը և Գնորգ Շերպեթճյանը: Պատվելի Նոխուդյանը ճիգ չէր խնայում համոզելու ըմբոստներին՝ հրաժարվելու «արկածախնդրությունից» և իրենց ճակատագիրը վստահել «բարեխնամ» կառավարությանը: Սակայն մյուդիրի այս փորձն էլ հաջողություն չունեցավ:

Օգոստոսի 7–ին տեղի ունեցավ Թաթար Ալանի ընդհանուր ժողովը: Յուրաքանչյուր շրջան ուներ 15 ներկայացուցիչ: Սակայն ժողովը նոր էր սկսվել, երբ լուր հասավ, որ 200 թուրք ասկյարներ շարժվում են դեպի հայերի դիրքերը: Եվ սկսվեց առաջին կռիվը: Թշնամին թերագնահատել էր հայերի ուժը, այնպես որ, վեց ժամ տևած ընդհարումից հետո թուրքերը նահանջեցին՝ թողնելով տասը սպանված և քսան վիրավոր: Այդ հաղթանակն ունեցավ հոգեբանական նշանակություն և ամրապնդեց ժողովրդի կորովը:

Օգոստոսի 10–ի լուսաբացին Պազաճըգ կոչված դիրքի պահակները Հաջի Հաբիբլի գյուղի շրջակայքում նշմարեցին զինվորական կուտակումներ: Արևածագին գյուղի մոտ տեղադրված թնդանոթներն սկսեցին ռմբակոծել հայկական դիրքերը: Իջավ մշուշը, և, օգտվելով դրանից, թշնամին ընդհուպ մոտեցավ հայկական դիրքերին ու կրակ բացեց: Դիմադրությունն անկազմակերպ էր, որովհետև դեռևս չկար հրամանատարություն, իսկ հարձակվող թուրք զինվորների թիվը հազարին մոտ էր: Պազաճըգի պաշտպաններն ստիպված էին թողնել իրենց դիրքերն ու բարձրանալ ավելի վեր: Սկսվեց ուժեղ անձրև, և լեռան պաշտպանների փողից լցվող հրացանները թրջվելով՝ լռեցին: Անձրևը դժվարացնում էր նաև թուրքերի առաջխաղացումը: Հայերը դիրք բռնեցին Օմարի Գետին կոչված վայրում և ստացան օգնական ուժեր: Թշնամին ևս կրկնապատկեց ուժերը, և տեղի ունեցավ կատաղի ընդհարում: Յոթժամյա դիմադրությունից հետո հայերը քայլ առ քայլ նահանջեցին: Թուրքերը տիրացան Թաթար Ալանին և վտանգեցին Գզլճայի բնակատեղին: Ժողովուրդը լքեց իր կացարանները և ապաստանեց Գուշ Ճըղազի հյուղերում: Ընդհանուր առմամբ ճակատամարտը տևեց 12 ժամ, որտեղ թշնամին տվեց 100, հայերը՝ 3 սպանված: Իրենց քաջությամբ աչքի ընկան Պետրոս Գալուստյանը և Հակոբ Գարակյոզյանը: Առաջինը հինգ գնդակով սպանեց չորս թնդանոթաձիգների, իսկ երկրորդը կրակեց մինչև վերջին փամփուշտը և ստացած վերքերից հաջորդ օրը մահացավ:

Գզլճայի բնակիչները հաստատվեցին Տամլաճըգում: Երեք բնակավայրերն էլ գտնվում էին մի գծի վրա, հարավից հյուսիս՝ Տամլաճըգ, Գափլան Տուղազի և Գուշզղազ: Յուրաքանչյուր շրջան ուներ իր վարչությունը և զինվորական մարմինը: Այդ երեք շրջանների տեղական մարմինները Տամլաճըգում հրավիրեցին ժողով՝ իրենց գործողությունները համակարգելու նպատակով: Ստեղծվեց Կենտրոնական վարչական ժողով և զինվորական կենտրոնական վարչություն, որի վերահսկիչ նշանակվեց 21–ամյա Մովսես Տեր–Գալուստյանը: Կենտրոնական վարչական ժողովի ատենապետն էր պատվելի Տիգրան Անդրեասյանը:

Մովսես Տեր–Գալուստյանի առաջին գործը եղավ կազմակերպել մարտական ուժերը: Դրանք բաժանվեցին 43 տասնյակների՝ իրենց տասնապետերով: Կազմվեց նաև 25 հոգանոց հարվածային մի խումբ: Հրամանները փոխանցելու գործը վստահվեց պատանիների մի խմբի, որին տրվեց «Թելեֆոնի տղաք» անունը: Իգական սեռը կամ կռվում էր դիրքերում, կամ հոգում կռվողների կարիքները: Պատրաստվեցին ընդարձակ զորանոցներ, որտեղից բացակայել չէր կարելի: Փորվեցին խրամատներ, ծառերի կոճղերից պատրաստվեցին պատնեշներ: Հաշվառվեց սահմանափակ քանակությամբ պարենամթերքը: Մնում էր մտածել փրկության մասին, որի միակ ճանապարհը ծովում երթևեկող դաշնակիցների ռազմանավերն էին: Դրանց ուշադրությունը գրավելու համար որոշվեց ծովի դիմաց պարզել երկու սպիտակ սավաններ, որոնցից մեկի վրա կարված էր կարմիր խաչ, իսկ մյուսի վրա կարմիր թելով հյուսված էին «Քրիստոնյաները վտանգի մեջ են» բառերը: Գիշերը կրակ վառելու առաջարկությունը մերժվեց՝ անվտանգության նկատառումներով: Իսկ երկու դրոշները պիտի պարզվեին միայն ռազմանավ երևալու

դեպքում: Այդ գործը հանձնարարվեց 4 հոգու, որոնք հաջորդաբար գիշեր–ցերեկ հերթապահում էին: Եթե հեռավորությունը մատչելի լիներ, նրանցից մեկն անմիջապես պիտի ծովը նետվեր և նավին հասցներ մետաղյա տուփի մեջ դրված խնդրագիրը: Նրանում կային այսպիսի տողեր. «Տեր, դիմում կընենք ձեզի, հանուն Աստծո և մարդկային եղբայրության, հանուն Քրիստոսի... և կխնդրենք որ ազատեք մեր կյանքը և պատիվը: Հաճեցեք, տեր, փոխադրել մեզ Կիպրոս կամ ուրիշ ազատ երկիր մը... Եվ կամ եթե կարելի չէ, հաճեցեք փոխադրել գոնե մեր կիները, ծերերն ու մանուկները ու մեզի տվեք ուտելիք, զենք և զինամթերք, որպեսզի ձեզի հետ, ձեր կողքին կռվենք թուրքական ուժերուն դեմ... Ազատեցեք մեր կյանքը, ազատեցեք մեր պատիվը, քանի դեռ շատ ուշ չէ»:

Որոշվեց նաև ծովեզերքի ճանապարհով մի քանի հոգու ուղարկել Իսկենդերուն (Ալեքսանդրետ), որտեղ ավելի շատ էին ռազմանավեր երևում: Օգոստոսի 12–ի գիշերը երեք հոգի ճանապարհվեցին դեպի Իսկենդերուն: Սակայն մի քանի օրից նրանք վերադարձան ձեռնունայն: Նրանք մեծ դժվարությամբ հասել են Ֆարթիսլի գյուղը, որի մոտ խարիսխ ձգած ռազմանավը հեռացել էր մեկ օր առաջ:

Ճիշտ է, երկրորդ ճակատամարտին հաջորդեց երկարատև հարաբերական անդորրություն, սակայն պարենի ճգնաժամը գնալով խորանում էր:

Օգոստոսի 19–ին Աստվածածնի տոնի առթիվ գլխավոր զորանոցի մոտ հանդիսավոր պատարագ մատուցվեց, որին ներկա էր գրեթե ողջ ժողովուրդը: Պատարագը դեռ չէր վերջացել, երբ հայտնի դարձավ, որ թշնամին մեծ ուժերով շարժվում է դեպի լեռը: Հարձակվում էին մոտ 4000 զինվոր՝ տասնյակ թնդանոթներով և անհամար խուժան: Հարձակումը կատարվում էր 6 ուղղություններով: Թանձրացող մշուշը նպաստավոր էր դառնում հայերի համար, որոնք քաջ ծանոթ էին հարազատ լեռան բոլոր ժայռերին, փոսերին, առվակներին, ծառերին, կածաններին և դրանցից յուրաքանչյուրը որոգայթ կարող էր դառնալ թշնամու համար:

Երբ մշուշը փոքր–ինչ ցրվում էր, հայ առաջապահները դիպուկ կրակով հնձում էին թշնամու զինվորներին:

Թուրքերն իրենց ուժերը կենտրոնացրին Թաթար Ալանի ուղղությամբ, որտեղից հեշտ կլիներ գրավել մյուս դիրքերը: Հարձակվող զորագնդին հետևում էին 50 ջորիներ՝ բեռնված ռազմամթերքով ու թնդանոթներով: Մեկ ուրիշ զորագունդ էլ առաջանում էր ծորի ճանապարհով:

Թուրքերը երկու հայ լրտեսների միջոցով հստակ պատկերացում ունեին հայերի դիրքերի և զինվորական ուժի մասին: Չնայած կատաղի դիմադրությանը, թուրքերին հաջողվեց գրավել առաջին գիծը: Տամլաճըգի ներքնից հոսում էր Մեծ Ջուրը, որից անմիջապես այն կողմ սկսվում էր զառիվայրը: Երբ թուքական ուժերն անցան Ջուրը, Տամլաճըգի վերևում դիրք մտած հայ կանայք նրանց վրա հսկայական քարեր ու ժայռաբեկորներ գլորեցին, որոնցից անհնար էր պաշտպանվել: Դրանից հետո երկու կողմերն էլ ուժերը կենտրոնացրին Թաթար Ալանի ուղղությամբ: Թուրք զինվորներն ալիք առ ալիք նետվում էին առաջ, դեպի հայկական դիրքերը: Թաթար Ալանը վերածվել էր մահվան արենայի: Երբ գիշերն իջավ Մուսա լեռան վրա, թշնամին տիրացել էր Թաթար Ալանին և գտնվում էր հայերի վերջին դիրքերից հազիվ 200 մետր այն կողմ: Լուսաբացին հայերը կռվում էին մեկը տասի դեմ: Կեսօրից հետո սկսվեց գլխավոր հարձակումը: Հայերը կռվում էին «Դիմադրել, չնահանջել ու մեռնել» կարգախոսով: Գրաված Թաթար Ալանից թշնամին արկեր էր տեղում բնակավայրերի ու զորանոցների վրա, իսկ ժողովուրդը խուճապահար փախչում էր դեպի մոտակա անտառները: Եթե թշնամուն հաջողվեր առաջանալ ևս մի քանի հարյուր մետր, հայերն ստիպված կլինեին անձնատուր լինել կամ անձնասպանություն գործել: Մղձավանջային այդ պահին եղան նաև դասալիքներ, որոնք լքեցին դիրքերը և թաքնվեցին անտառների խորքերում:

Ճակատամարտը մղվում էր մի բլրի շուրջ, որը կոչվեց «Մահվան բլուր»: Այն զինվորը, որը ոտք էր դնում այդ բլրի ստորոտին, շանթահարված գետին էր գլորվում վերևից տեղացող կրակից: Եթե Մահվան բլուրը հանկարծ ընկներ թշնամու ձեռքը, վճռված կլիներ 4000 հայերի ճակատագիրը և Մուսա լեռան ինքնապաշտպանությունը կդասվեր անխոհեմ արկածախնդրությունների շարքին: Դրա համար էլ դիրքերը չէին լքում նույնիսկ ծանր վիրավորվածները: Թշնամին յոթգլխանի դևի պես փորձում էր շրջապատման օղակի մեջ վերցնել Մահվան բլուրը: Եվ այդ պահին կատարվեց անհավատալի մի բան: Դիրքերը լքած մարտիկներից շատերը հետ վերադարձան: Նրանցից մեկը առաջարկեց կազմել 50 հոգուց բաղկացած խումբ և անակնկալ հարվածել թշնամու թիկունքին, որը և իրագործվեց: Թշնամու աջ թևը սկսեց խուճապահար նահանջել: Բլրի պաշտպանները, օգտվելով դրանից, դուրս եկան իրենց դիրքերից ու խոյացան նրանց վրա՝ մահ սփռելով թշնամու շարքերում: Եվ պատահեց հրաշքը. թշնամին սկսեց հուսահատական աղաղակներով նահան-

ջել, և, շատ չանցած, հրանոթներն ու հրացանները լռեցին: Հայերը տվել էին 10, թշնամին՝ 500–ից ավելի զոհ: Լուսաբացին ամբողջ Մուսա լեռը հայերի ձեռքում էր: Հայերի ռազմավարն էր՝ մի քանի ջորի, 9 մաուզեր և 10 հազար փամփուշտ:

Դավաճան երկու եղբայրները հրապարակայնորեն դատվեցին և զորանոցի առջև գնդակահարվեցին:

Այդ վճռական պարտությունից հետո թուրքերը փոխեցին ռազմավարությունը. որոշեցին պաշարել Մուսա լեռը և ժողովրդին սովի մատնել:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի ռազմանավ չերևաց: Որոշվեց կրկին մարդ ուղարկել Ալեքսանդրետ՝ ռազմանավ որոնելու համար, ինչպես նաև պատրաստել փոքրիկ առագաստանավ՝ Կիպրոս հասնելու նպատակով:

Այսպես անցավ ողջ օգոստոս ամիսը: Օրեցօր ոչ միայն ավելի էր սրվում պարենավորման վիճակը, այլև մոտենում էին աշնան ցրտերը, որն անկարելի կդարձներ նման բարձրության վրա գոյատևելը:

Վերջապես սեպտեմբերի 5–ին ծովի կապույտ ջրերի հեռվում երևաց մոխրագույն մի զանգված, որից ծխի քուլաներ էին բարձրանում: Ժողովուրդը մի մարդու նման վազեց դեպի «Ազատության լեռը», որի վրա արդեն տնկված էին երկու դրոշները: Նավը մոտենում էր մեծ արագությամբ: Այն խարիսխ գցեց ծովեզերքից մի քանի կիլոմետր հեռու: Նրանից բաժանվեց մի մակույկ, որը եկավ ու կանգ առավ մի փոքրիկ ծովածոցում: Մի քանի մուսալեռցիներ տեղավորվեցին մակույկում, որը առաջացավ դեպի նավը: Նրա կողքին գրված էր «Գիշեն» անունը: Խաչեր Տումանյանը, որը լավ ֆրանսերեն գիտեր, իր ընկերներով բարձրացավ նավի կամրջակի վրա, ներկայացավ նավապետ Պրիսոնին, նրան մանրամասն ներկայացրեց կացությունը և նրանից խնդրեց պարենամթերք ու ռազմամթերք՝ պայքարը շարունակելու համար: Նավապետը խոստացավ հայերի խնդրանքը հաղորդել Կիպրոսում գտնվող գլխավոր հրամանատար ծովակալ Դարթիժ դը Ֆուրնիեին: Ծովակալն իր հերթին պիտի դիմեր Փարիզ, որտեղից պիտի ստացվեին վերջնական հրահանգները: Նավի սպաների թվում էր Տիրան Թեքեյանը:

Հայերի պատվիրակությունը մեծ պատիվների արժանացավ և նույն մակույկով վերադաձավ ծովեզերք՝ իր հետ բերելով ուտեստեղեն, դեղորայք, թարմ հաց և այլն: Մուսա լեռան վրա գտնվող հայերի ճակատագիրը պիտի որոշվեր ութ օր հետո: Հայերը ռազմանավի հրամանատարին հայտնել էին նաև, որ թուրքերը Քեբուսիե գյուղի եկեղեցում կու-

տակել են մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք, իսկ գյուղը լիքն է հայ գաղթականներով: Ռազմանավը մի քանի կիլոմետր իջավ հարավ և սկսեց ռմբակոծել թուրքերի ռազմական պահեստները:

Դրանից հետո Գիշենը բացակայեց երկու օր: Սեպտեմբերի 7–ի առավոտյան թուրքական մեծ ուժերը կրկին նետվեցին լեռան կողն ի վեր՝ Շեյխ Օրդուի կողմից: Ճակատամարտը տևեց 10 ժամ: Հայերի անտեղիտալի դիմադրության առջև իրիկնադեմին թշնամին կրկին նահանջեց՝ տալով մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ:

Սեպտեմբերի 9–ի կեսօրին ժողովուրդը ցնծության աղաղակներ արձակեց. Փրկության լեռան կողմն էր գալիս իրենց պահապան հրեշտակը՝ «Գիշեն» ռազմանավը, իսկ նրան հետևում էր «Դեսեքս» ռազմանավը:

Սեպտեմբերի 10–ին տեղի ունեցավ Մուսա լեռան վերջին ու վճռական ճակատամարտը: Թմբուկների բարձրացրած աղմուկով ու սպառնական աղաղակներով հայկական դիրքերին սկսեցին մոտենալ հազարավոր չեթեներ ու կանոնավոր վաշտեր: Նրանք այնքան խիտ էին, որ նշանառության կարիք չկար: Լեռան պաշտպանների թիկունքը հսկում էին փրկարար նավերը: Գետին էին փռվում թշնամու ամբողջ շարքեր: Մուսալեռցիները գերազանցում էին մեկը մյուսին: Հատկապես աչքի ընկավ Եսայի Յաղուբյանը, որը հայտնվում էր ամենավտանգավոր դիրքերում: Նրա վճռականությունն ու զինվորական հմտությունը մեծապես նպաստեցին այդ օրվա հաղթանակին: Հետ չէին մնում նաև հայ կանայք: Խուժանը տեղի տվեց ու սկսեց նահանջել, որը վերածեց փախուստի՝ տալով հարյուրավոր սպանվածներ: Հայերից զոհվեցին երկուսը, մի քանիսը վիրավորվեցին:

Ճակատամարտի ավարտին երկու ռազմանավերն սկսեցին գնդակոծել թուրքերի ռազմական բազաներն ու գյուղերը:

Երբ ռմբակոծությունն ավարտվեց, Գիշենից մի մակույկ եկավ ափ: Հայերին հայտնվեց ֆրանսիական կառավարության որոշումը, որ անհնար է օգնական զորքեր ափ հանել և շարունակել դիմադրությունը: Ծովակալ Դարթիժ դը Ֆուրնիեն հրահանգ էր ստացել Մուսա լեռան հայերին փոխադրել ապահով վայր՝ Կիպրոս կամ Եգիպտոս: Հարահանգվում էր առանց ժամանակ կորցնելու ժողովրդին հավաքել ծովեզերքին, որտեղից նրանք մակույկներով կփոխադրվեն ռազմանավեր:

Դիրքերում թողնելով փոքրաքանակ ուժեր՝ ժողովրդին հրահանգ տրվեց իջնել ծովեզերք: Այդ գործողությունը տևեց երկու օր:

Սեպտեմբերի 12–ի առավոտյան «Գիշեն» և «Դեսեքս» ռազմանավերին միացան ուրիշ երեք ռազմանավեր՝ «Դեստրե», «Ադմիրալ Շարնե», «Ֆոտր», և սկսվեց փոխադրման գործողությունը տասնյակ մակույկների միջոցով: Փրկարար նավերի թվում էր նաև ֆրանսիական «Ժաննա Դ'Արկ» շոգենավը, ինչպես նաև անգլիական մեկ շոգենավ: Իրիկնադեմին ռազմանավերը բարձրացրին իրենց խարիսխները: Նրանց հրահանգ էր տրված մեկնել եգիպտոսի Պորտ Սայիդ նավահանգիստը:

Ֆրանսիական բանակի կազմում ստեղծվեց Հայկական լեգեոն, որի առաջին զինվորագրյալները Մուսա լեռան մարտիկներն էին: Լեգեոնն աչքի ընկավ Արարայի ճակատամարտում և արաժանացավ մարշալ Ալենբիի բարձր գնահատականին:

Տարիներ անց Սուետիայի հայությունը դաշնակից զորքերի հետ վերադարձավ իր գյուղերը:

Մուսա լեռան հերոսամարտի մասին անմահ վեպ ստեղծեց ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը՝ «Մուսա լեռան քառասուն օրը» վերնագրով, որը լույս տեսավ 1933–ին: 1938–ին գերմանացիները գրավեցին Ավստրիան, և վեպի հեղինակը, որը կասկածելի էր գերմանացիների համար, անցավ Փարիզ: Այնուհետև նա կնոջ հետ մեկնեց ԱՄՆ: Մահացավ Կալիֆոռնիայում 1945–ի օգոստոսի 26–ին: Վեպը թարգմանված է 36 լեզուներով:

1938–ին Պոլսում թուրքերն այրեցին «անհծյալ վեպի» հազարավոր օրինակներ: 1961–ին անգլերեն երկրորդ տպագրությունը լույս տեսավ երկու միլիոն տպաքանակով և շուտով սպառվեց: Վեպը բարձր է գնահատել Վիլյամ Սարոյանը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սլովենիայի պարտիզանները Ռոգ լեռը կոչեցին «Սլովենիայի Մուսա լեռ»:

ՈՒՐՖԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Ուրֆա կամ Եդեսիա քաղաքը գտնվում է Միջագետքի հյուսիսային սահմաններում, ծովի մակերևույթից 553 մետր բարձրության վրա: Ուրֆայի գավառն ուներ շուրջ 10 հազար քառ. կմ տարածք և իբրև ինքնուրույն մյութեսարիֆություն՝ ենթարկվում էր Պոլսին:

Ուրֆա քաղաքը հաղորդակցության ուղիների հանգույց էր: Բացի հայերից, այնտեղ բնակվում էին նաև թուրքեր, քրդեր, ասորիներ, արաբներ: Ուրֆայի հնագույն անունն էր Ուռհա, իսկ Ուրֆա դարձավ թուրքական տիրապետության ժամանակաշրջանում: Ուրֆայի շրջանը Սելևկյան թագավորության անկումից հետո կոչվեց Օսրոյեն, իսկ Մակեդոնացու արշավանքներից հետո քաղաքը կոչվեց Եդեսիա: Հայերը Ուրֆայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից սկսած:

1895–ին՝ համիդյան կոտորածների ժամանակ, Ուրֆան հերոսաբար կռվեց և շուրջ մեկ ամիս դիմադրեց թշնամական հարձակումներին: Կոտորածների զոհ գնացին շուրջ 8 հազար ուրֆացի հայեր:

20–րդ դարի սկզբին Ուրֆա քաղաքի հայության թիվն անցնում էր 30 հազարից, իսկ մոտակա միակ հայկական Կարմուճ գյուղում բնակվում էին ևս 5 հազար հայեր:

1908–ի Օսմանյան Սահմանադրության հռչակումից հետո Ուրֆայում ստեղծվեցին Հնչակյան և Դաշնակցության կազմակերպություններ: ՀՅԴ–ն ձեռնամուխ եղավ զինամթերման գործին, որի համար ստեղծվեց երեք հոգուց կազմված գաղտնի մարմին՝ Մկրտիչ Յոթնեղբայրյան, Կիրակոս Դերձակյան, Կարապետ Գարագաշյան: Կատարվում էին զինավարժություններ, կազմվում թուցիկ խմբեր, պատրաստված էր ինքնապաշտպանության հատակագիծ: Դաշնակցական կազմակերպության մեջ կարևոր դեր էին խաղում Հակոբ Գասապյանը, Գևորգ Յոթնեղբայրյանը, Սարգիս Գասապյանը, Կարապետ Թափթափյանը, Կիրակոս Դերձակյանը, Մկրտիչ Յոթնեղբայրյանը, Հարություն Ռասթկելենյանը: Կազմակերպության ղեկավարն էր Հարություն Տեր–Խորենյանը:

1915 թ. մայիսի սկզբից մինչև հուլիսի վերջերը Ուրֆան դարձավ հայ տարագիրների իջևանը: Շուտով ձերբակալություններ սկսվեցին հենց Ուրֆայում: Իբրև մյութեսարիֆ այստեղ ժամանեց իթթիհատական Ալի Հայդարը՝ հայտնի ջարդարարներ Խալիլի ու Ահմեդի հետ, որոնք Թեշքիլաթը Մախսուսեի անդամներ էին:

Ուրֆայի Հայոց քաղաքական ժողովը խորհրդակցություն հրավիրեց առաջնորդարանում: Հանգանակվեց մեծ գումար՝ թուրք պաշտոնյաներին կաշառելու համար: Կուսակցությունների ներկայացուցիչներն առաջարկում էին նոր ձերբակալությունների դեպքում զենքի դիմել, որին համաձայն էին Առաջնորդ Արտավազդ վարդապետը և ավետարանականների պատվելին: Սակայն մի շարք պահպանողականներ դեմ էին: Վիճաբանությունների թունդ պահին ժողովի դահլիճ մտավ Մկրտիչ Յոթնեղբայրյանը, որը փախստական և հետապնդման մեջ էր: Երբ նա տեղեկացավ համակերպվելու և «խոհեմ» քաղաքականություն

վարելու որոշման մասին, զայրացած ցավ հայտնեց, որ ժողովուրդը հետևում է թուլամորթ ու համակերպվող մարդկանց խորհուրդներին: Նա հայտարարեց, որ ինքը թույլ չի տա, որ Ուրֆայի ժողովուրդը տարագրվի: «Իսկ դուք բոլորդ անխուսափելիորեն պիտի երթաք մորթվելու՝ հակառակ ձեր պատրաստած կաշառքներուն»,— ավարտեց իր խոսքը Մկրտիչը: Տեղին է մի փոքրիկ հատված բերել Ուրֆայի ասորիների առաջնորդ, պատվելի Ճռնազյանի հուշերից: «Կուսակցությունները չուզեցին առաջնորդել ինքնապաշտպանության գործը... Ուստի ինքնապաշտպանության միակ խիզախ և անկախ պատասխանատու և առաջնորդը եղավ Յոթնեղբայրյան Մկրտիչ: Ան իր եղբոր Սարգիսին և Ռասթկելենյանին ու իր մյուս ընկերներուն հետ կռվեցավ և քաջաբար միասին նահատակվեցավ...

Ուրֆայի հայ երևելիները ամեն պարագային տակ ինքնապաշտպանության գաղափարին հակառակ կեցան: Միայն վերջին րոպեին կրցան տեսնել իրականությունը, բայց ուշ էր» (Հերոսապատում Մեծ եղեռնի, Եվա Դերվիշյան, Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկան, Պեյրութ, 1978, էջ 358–359):

Ուրֆայի հայության մղձավանջն սկսվեց հունիսի 8–ին, երբ ձերբակալվեցին 16 երևելիներ և կուսակցական գործիչներ: Երկու օր անց նրանք աքսորվեցին 10 ժամվա ճանապարհ հեռու գտնվող Բագգա գյուղաքաղաքը: Այստեղ բանտում քրդական տարազով ծպտված նրանց այցելեց Մկրտիչը և հայտնեց, որ հաջորդ օրը հարձակում է լինելու բանտի վրա ու բոլորին ազատելու են, սակայն բանտարկյալները չհամաձայնեցին (նույն տեղում, էջ 360): Մի քանի օր անց Ուրֆայի մեծամեծները կոտորվեցին Բագգայից մեկ ժամ հեռու գտնվող մի վայրում:

Հունիսի 25–ին Ուրֆայում սկսվեցին զանգվածային նոր ձերբակալություններ: Հուլիսի 10–ին կառավարչատուն կանչեցին Արտավազդ վարդապետին և պահանջեցին 48 ժամվա մեջ հավաքել հայկական թաղերում գտնվող բոլոր զենքերը: Հայերը հանձնեցին ոչ պիտանի զենքերը: Հուլիսի 26–ին Առաջնորդին նույնպես ձերբակալեցին: Հուլիսի 28–ի գիշերը բոլոր բանտարկյալներին հանեցին բանտից ու տարան դեպի Տիգրանակերտ, սակայն Ուրֆայից մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող Շեյթան Դերեսի վայրում բոլորին կոտորեցին:

Օգոստոսի 4–ին թուրք զինվորներն ու չեթեները հանկարծակի պաշարեցին Ուրֆայից երկու ժամ հեռավորության վրա գտնվող Գուտեմե և Կարա Քյոփրու վայրերում գտնվող ավելի քան 1500 անզեն հայ զինվորներին ու բոլորին կոտորեցին:

Մկրտիչ Յոթնեղբայրյանը թաքնվում էր Հարություն Ռասթկելենյանենց տանը: Տեղեկանալով այդ մասին՝ թուրք ոստիկաններն Սիմեոնի ու Բաքր չաուշի գլխավորությամբ պաշարեցին ողջ թաղը: Երբ թուրքերը փորձեցին բռնաբարել Հարությունի մորը, վերջինս թաքստոցից դուրս թռավ և մաուզերով գնդակահարեց, գետին տապալեց Բաքրին, իսկ Սիմեոնը փախավ: Մկրտիչը փոխեց թաքստոցը: Այլևս անիմաստ էր սպասել և տեղահանության հրամանն ստանալուց հետո միայն զենքի դիմել, ինչպես որոշված էր: Ուրֆացիները որոշեցին չհապաղել: Կռիվը պետք է սկսվեր այն դեպքում, երբ Մայր եկեղեցու զանգերը ուժգնորեն ու անընդհատ ղողանջեին:

Սեպտեմբերի 29–ի առավոտյան թուրք ոստիկանները պաշարեցին Գուտեմեի կոտորածից միակ փրկվածների՝ Սարգիս և Գրիգոր Տարախչյանների թաքստոցը: Եվ... սկսեցին ղողանջել եկեղեցիների զանգերը: Քառորդ ժամ անց բոլորն իրենց դիրքերում էին: Հերոսամարտն սկսված էր:

Մկրտիչ Յոթնեղբայրյանի հրամանով թաղում գտնվող թուրք ոստիկանները զինաթափվեցին, իսկ դիմադրողներն սպանվեցին: Նա հրահանգեց նաև թուրքական և հայկական թաղերի միջև նոր պատնեշներ չբարձրացնել, այլ ամրացնել թուրքական թաղերին նայող տները: Բոլոր դիրքերին բաժանվեցին ռումբեր:

Սեպտեմբերի 30–ի արշալույսին թուրք խուժանը երեք խմբի բաժանված հարձակվեց հայկական թաղերի վրա: Հայերը թույլ տվեցին, որ ամբոխը մտնի թաղերից ներս և ռմբահարեցին նրանց: Առաջին այդ օրը թուրքերը թողեցին 450 դիակ, հայերը տվեցին 8 զոհ:

Կռվից հետո Յոթնեղբայրյանն ու Ռասթկելենյանն այցելեցին բոլոր դիրքերը: Նրանք ստեղծեցին Զինվորական խորհուրդ, որի մեջ մտան Հարություն Սիմյանը, Խորեն Կյուպելյանը, Լևոն Եղբերլերյանը, Հովհաննես Իմիրզյանն ու Արմենակ Աթարյանը: Ընտրվեց Պարենավորման մարմին, պատրաստվեց հիվանդանոց: Բացվեց զինագործարան, որտեղ լցնում էին դատարկ փամփուշտները, նորոգում զենքերը: Խորհրդի կենտրոնն էր Չամիչենց տունը:

Զինվորական խորհրդի կարգադրությամբ հայկական թաղամասը բաժանվեց վեց շրջանների, որոնք բոլորը միասին ունեին 32 դիրք: Յուրքանչյուր շրջան ուներ իր խմբապետը, ամեն տասնյակ՝ իր տասնա-

պետն ու փոխանորդը: Երկու խումբ թողնվեց կենտրոնում՝ իբրև պահեստային ուժ:

Հոկտեմբերի 1–ի գիշերը թուրքերը մտան կաթոլիկական եկեղեցու բակը: Մկրտչի հրահանգով ծուղակ սարքվեց և բոլորը ոչնչացվեցին: Նույնը կատարվեց նաև Թեմրին թաղում Գևորգ Ալահայտոյանի գլխավորությամբ: Գերված երկու թուրք զինվորների զենքերը Մկրտիչը հանձնեց կռվին մասնակցած օրիորդ Խանում Քեթենճյանին և օրիորդ Մարիամ Չիլինկիրյանին:

Շուտով հայտնի դարձավ, որ Հալեպից դեպի Ուրֆա է գալիս Ֆախրի փաշան՝ 6000 զորքով ու թնդանոթներով, ինչպես նաև Սուլեյման բեկը՝ 600 կռվողներով: Ուրֆա էին իջնում նաև շրջակա քրդական աշիրեթները:

Հոկտեմբերի 3–ի առավոտյան հայկական թաղի ուղղությամբ արձակվեց առաջին թնդանոթի ռումբը: Նույն գիշեր Հ. Ռասթկելենյանին հաջողվեց նոր ծուղակի մեջ գցել թուրքերին:

Մկրտիչի եղբայրը՝ Սարգիս Յոթնեղբայրյանը՝ Քոռ Սաքոն, Գևորգ Ալահայտոյանը և հինգ ուրիշ քաջեր կարողացան քրդական տարազով աննկատ մոտենալ Ֆախրի փաշայի թնդանոթներին, դիպուկ կրակով ոչնչացնել թնդանոթաձիգներին, հանել թնդանոթներից մեկի փականակը և վերադառնալ:

Հոկտեմբերի 7–ի առավոտյան Հայր Աբրահամի դիրքի մարտիկները նկատեցին, որ դիմացի բլրի լանջին բարձրացել են երկու պատնեշներ, որոնց հետևում տեղադրված են թուրքական թնդանոթներ: Քիչ անց առաջացավ մի թուրք բանագնաց հիսնապետ, որն իր հետ բերել էր Ֆախրի փաշայի նամակը՝ ուղղված Մկրտիչ Յոթնեղբայրյանին: Փաշան հիացմունք էր հայտնում հայերի քաջության կապակցությամբ և առաջարկում էր հանձնվել՝ խոստանալով, որ դիմադրության մասնակիցները ոչ միայն չեն պատժվի, այլև կարևոր պաշտոններ կստանան թուրքական բանակում: Հակառակ պարագայում թուրք փաշան սպառնում էր քարուքանդ անել ամբողջ հայկական թաղը: Պատասխանի համար ժամանակ էր տրվում մինչև կեսօր:

Մկրտիչը հրավիրեց Չինվորական խորհրդի և խմբապետների խորհրդակցություն: Նա շատ լավ գիտեր, որ ուշ կամ շուտ իրենց կռիվը վերջանալու է, որովհետև աշխարհից կտրված, թուրքական պետության կենտրոնում գտնվող քաղաքը երկար չէր կարող դիմադրել: Ուրֆացի կտրիճներին մնում էր մեռնել քաջաբար ու հպարտ: Քաջ ծանոթ լինելով

թուրքի խոստումների ու երդման արժեքին՝ Մկրտիչը պատասխանեց, որ Ուրֆայի հայությունը պիտի կռվի մինչև վերջին մարդը և ավելացրեց, որ մեկ ժամից ինքն սպասում է Ֆախրի փաշային Մասմանայի դիրքում՝ դիրքից դիրք խոսակցություն ունենալու համար: Խոսակցությունը կայացավ, որի ընթացքում փաշան հայ հերոսին երդումով խոստացավ հազարապետի պաշտոն, որին ի պատասխան Մկրտիչը թվարկեց հայ ժողովրդի նկատմամբ կատարված բոլոր ոճիրները, որոնք պատմությունը չի ներելու, և թուրքական պետությունը պետք է կործանվի արյան հեղեղներում:

Բանակցություններից հետո Գալաբոյանի դիրքերից թշնամին երկու թնդանոթներից անկանոն կրակի հեղեղ թափեց հայկական թաղերի վրա: Թուրքերը նոր կրակակետ հաստատեցին նաև մինարեթի վրա:

Հոկտեմբերի 8–ին Ֆախրի փաշայի զորքերը նոր ուժեղ հարձակում սկսեցին: Նրանք տների պատերը ծակելով ջանում էին անցնել հայկական Թեմրին թաղը: Նրանց հաջողվեց հավաքվել հայկական տներից մեկի բակում, բայց նրանց վրա դանակներով հարձակվեցին հայ տղաները: Երեկոյան դեմ թուրքերին հաջողվեց գրավել մի քանի տուն, որը վտանգեց Թեմրին թաղից մինչև Պզտիկ Մեյդան գտնվող շրջանը: Սակայն Մկրտչի մտահղացմամբ Գևորգ Ալահայտոյանը թուրք զինվորի տարազով խաբեց թշնամուն և իմացավ գիշերային կարգախոսը, իսկ 30 հայ մարտիկներ, դարձյալ թուրքի տարազով ծպտված, ծուղակի մեջ գցեցին հայկական թաղերին անծանոթ թուրք զինվորներին ու կոտորած սարքեցին: Թուրքերը տվեցին 200 սպանված, իսկ մնացածները փախան հայկական թաղերից:

Հոկտեմբերի 9–ի կիրակի օրը թուրքերին հաջողվեց ամրանալ Թլֆտուր կոչվող բլրի գագաթին, որը գտնվում էր հայկական թաղի թիկունքում, և այնտեղից կարելի էր հարվածել հայերի բոլոր դիրքերին ու տներին: Ուղիղ ժամը 12–ին բլրի գագաթից սկսեցին որոտալ թուրքական թնդանոթները: Մկրտիչը և Հարությունը շրջում էին դիրքից դիրք ու ժողովրդի մեջ նկատում սարսափ ու վարանում: Այդ ժամանակ զինված օրիորդների երեք խմբեր՝ օրիորդներ Խանում Քեթենճյանի, Մարիամ Չիլինկիրյանի և Կեմչյանի ղեկավարությամբ անցնում են դիրքից դիրք ու քաջալերում կռվողներին: Դիրքերի մարտիկներն սկսում են երգել հայրենասիրական երգեր: Կոչ անելով փամփուշտ չխնայել՝ Մկրտիչը դուրս նետվեց իր դիրքից, ծնկեց փողոցի կենտրոնում ու դիմահար կրակով տապալեց առաջ վազող թուրք զինվորին: Հայկական դիրքե-

րից մեկից բազմաթիվ ռումբեր տեղացին հարձակվող թուրքերի վրա, որոնք տվեցին բազմաթիվ սպանվածներ ու սկսեցին փախչել: Հաղթանակը կատարյալ էր: Սակայն այդ պահին թշնամու գնդակը մխրճվեց Մկրտչի աջ ծունկը, և նա տեղափոխվեց հիվանդանոց: Մկրտչի վիրավորվելու լուրն արագորեն տարածվեց ժողովրդի մեջ:

Հիվանդացավ նաև Հարություն Ռասթկելենյանը: Քառասուն աստիճան ջերմությամբ նա սլանում էր դիրքից դիրք՝ կռվողներին խրախուսելու համար, իսկ վերջիններս, 12 օր ու գիշեր կռվելով, հիվանդ էին և ուժասպառ, փոխարինողներ չկային, որովհետև շատ հայ մարտիկներ սպանված էին: Նահատակված էին լավագույն կռվողներ Գարատաշյանը, Ալաջաջյանը, Էդբերլերյանը, Արզումալաճյանը, Լգլգույանը, Սնքարյանը և ուրիշներ, սպառվելու վրա էր ձեռնառումբերի պաշարը, դատարկվում էր դինամիտի պահեստը:

Նման պայմաններում հիվանդանոցում, Մկրտչի անկողնու մոտ խորհրդակցության հավաքվեցին Ջինվորական մարմնի անդամները՝ կռվի նոր ծրագիր մշակելու համար: Բոլորը միաբերան ուխտեցին կռվել մինչև վերջին փամփուշտը ու վերջին մարդը:

Հոկտեմբերի 10–ի լուսադեմին թուրքական թնդանոթները վերսկսեցին ավերիչ ռմբակոծությունը: Մեկը մյուսի հետևից քանդվում էին հայերի տները, և պաշարման օղակը գնալով սեղմվում էր: Ուրֆացի մարտիկները կռվում էին ավերակների հետևից, անընդհատ «ամենայն տեղ մահը մի է» երգելով:

Հոկտեմբերի 11–ին Մկրտիչը նամակ ստացավ գերմանացի Մ. Էքարտից, որը ցանկություն էր հայտնում հանդիպել հերոսի հետ: Տեսակցության ժամանակ գերմանացի սպան փորձեց համոզել Մկրտչին, որ հետագա դիմադրությունն ավելորդ է, և պետք չէ ժողովրդի բնաջնջման պատճառ դառնալ: Նա խոստացավ հերոսին փոխադրել Գերմանիա, ապահովել զինակիցների կյանքը: Գերմանացու երեսին շպրտելով նրա խաղացած բացասական դերը Ուրֆայում՝ Մկրտիչը խստորեն պատասխանեց. «Եթե ձեր մեջ տակավին քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներում մեջ անգեն ու անպատսպար կոտորվող բազմությունները: Ո՞ւր են մեր ղեկավարները, ո՞ւր է մեր առաջնորդը, բերեք միայն այս վերջինը ու անմիջապես վար դնեմ զենքերս»: Էքարտը հեռացավ՝ սպառնալով անձամբ ղեկավարել թնդանոթաձգությունը (նշվ. աշխ., էջ 393–394):

Հոկտեմբերի 12–ին թնդանոթաձգությունն ավելի սաստկացավ, և թուրքերը կատաղի հարձակման անցան: Թուրքերը մեծ թվով դիակներ էին թողնում, բայց զոհեր էին տալիս նաև հայերը, որոնց այլևս փոխարինողներ չկային: Պաշարման օղակը սեղմվում էր և վտանգ կար, որ ժողովուրդը մաս առ մաս պիտի ընկներ թուրքերի ձեռքը: Ռասթկելենյանն առաջարկեց, որ կռվող տղաներն իրենք սպանեն իրենց մայրերին ու քույրերին, որպեսզի նրանք չընկնեն թուրքերի ձեռքը: Մկրտիչն առաջարկեց մի քանի օրվա դիմադրությունից հետո, երբ այլևս հնարավոր չլինի շարունակել կռիվը, մնացած ուժերով ճեղքել Թլֆտուր–Պետենին ճակատը և ապաստանել շրջակա լեռներում:

Հոկտեմբերի 13–ին չորս ժամվա ռմբակոծությունից հետո թշնամին կրկին հարձակվեց բոլոր դիրքերի վրա: Կռվի էին ելել անգամ փամփուշտ լցնող վարպետները: Թուրքերի ձեռքն անցան նաև մինչ այդ չգրավված տները: Սահավոր կռիվներ տեղի ունեցան հատկապես Հայր Աբրահամի շրջանում: Հայերի գնդակներն իզուր չէին անցնում, ճանապարհները լցվում էին թուրք զինվորների դիակներով, բայց նրանց տեղ կռվի դաշտ էին հասնում նորերը:

Հաջորդ օրը հայկական թաղի տարածքը զգալի չափով փոքրացած էր: Մկրտիչն ու Հարությունն իրենց շուրջը հավաքեցին վերջին ուժերը, ամրացնել տվեցին նոր դիրքեր, ճշտեցին զինամթերքի քանակը, դասավորեցին մարտիկներին: Տնից տուն, փողոցից փողոց շրջելով, նրանք խրախուսում էին ժողովրդին, որ հանձնվելու մասին չմտածեն: «Քաջությամբ վերջացնենք քաջությամբ սկսած գործը»,— այս էր նրանց վերջին կարգախոսը:

Մինչև հոկտեմբերի 18–ը կռիվը շարունակվեց նույն սաստկությամբ: Սկսել էր մաղել աշնանային անձրևը, ամենուրեք ավերակներ էին, վառոդի ու նեխած դիակների անտանելի հոտ: Այդ պայմաններում անգամ Մկրտիչը հղացել էր նոր ծրագիր, որն իրագործելու համար Հարություն Սիմյանը նոր ռումբեր էր լցնում: Հայերը ամերիկյան հյուպատոսարանի վրա ճերմակ դրոշ բարձրացրին, և երբ թուրքերը լցվեցին շենքի բակը, հայերը թաքստոցներից դիպուկ կրակով ոչնչացրին բոլորին: Դա վերջին դասն էր Ֆախրի փաշային:

Նույն գիշեր կարճ խորհրդակցությունից հետո հայերը փորձեցին ճեղքել պաշարման օղակը և հեռանալ լեռները, բայց հուժկու կրակի տակ ընկան և վերադարձան դիրքերը՝ այնտեղ մահն ընդունելու համար:

Ողբերգական էր ժողովրդի վիճակը. բազմաթիվ ընտանիքներ սկսեցին դիմել հավաքական անձնասպանության:

Հաջորդ օրը թուրքերն ամեն կողմից խուժեցին հայկական թաղերը և մտան Մայր եկեղեցու գավիթը: Չարաղետ մի գնդակ զարկեց Հարություն Ռասթկելենյանի ճակատին և ընկավ «խաչից նոր իջեցված Քրիստոսի տեսքով» հերոսը:

Հոկտեմբերի 20–ին դիմադրությունը շարունակվում էր միայն երկու թաղերում, իսկ գրավված թաղերում բազմաթիվ կանայք ու աղջիկներ անձնասպան էին լինում: Հրանոթային կրակը դադարեց, և թուրքերը դիրքեր գրավեցին բազմաթիվ հայկական թաղերում ու տներում: Դա տևեց երեք օր, մինչև որ ընկան ուրֆացի վերջին կտրիճները, և զորքը տիրացավ Ուրֆայի ամբողջ հայկական թաղամասին:

Հոկտեմբերի 23–ի կիրակի օրը խոր ու մեռելային լռություն էր: Այդ օրը Ուրֆայի հայության մեկամսյա աննախընթաց հերոսամարտը հասավ իր վախճանին: Եվ Ֆախրի փաշան բացականչեց. «Ինչ կլիներ մեր վիճակը, եթե այդ ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այդպես ծառանային»:

Վերջին օրերին Մկրտիչ Յոթնեղբայրյանին պատգարակով դիրքից դիրք էին պտտեցնում, և միայն նրա երևալը ուժ էր տալիս ուժասպառ մարտիկներին: Մի վերջին ճիգով նա աջ ու ձախ կրակեց թուրք զինվորների վրա և վերջին գնդակով կյանքն ավարտեց փառավոր մահով: Ֆախրի փաշան թնդանոթի 24 համազարկով թուրք խուժանին տեղեկացրեց հսկայի մահը:

Կազմակերպվեց հոկտեմբերի 18–ին ճակատից խոցված Հարություն Ռասթկելենյանի թաղումը, որի մասնակիցներից մեկն ասել է. «Նա խաչից նոր իջեցրած Քրիստոսի տեսք ուներ, ճակատին՝ արյունի պսակ»:

Հայոց աշխարհի համար ընկան նաև Գևորգ Ալահայտոյանը, Սարգիս Յոթնեղբայրյանը, Հարություն Սիմյանը, Արմենակ Ադդարյանը, Լևոն Չերչյանը, Վաղարշ Մեսրոպյանը, Գառնիկ Շամլյանը և շատ ու շատ ուրիշներ:

Եվ եթե մի ամբողջ ամիս տևեց Ուրֆայի հերոսամարտը, ապա դրա մեջ իրենց մեծ բաժինն ունեն Ուրֆայի հայուհիները: Նրանք ոչ միայն գթության քույրեր էին, այլևս զենքը ձեռքին դիրքերի վրա կռվողներ, իրենց ամուսիններին ու եղբայրներին ոգեշնչողներ: Փամփշտակալներով գոտեպնդված տիկին Եղիսաբեթ Յոթնեղբայրյանը Մկրտիչի

կինն էր ու նրա համարզը: Զինավառ տիկին Սուլթան Սիմյանը Ռասթկելենյանի քույրն էր: Հայ կնոջ պատիվն ու փառքը մինչև երկինք բարձրացնողներից էին նաև օրիորդ Մարիամ Չիլինկիրյանը, օրիորդ Խանում Քեթենճյանը, տիկին Խաթուն Գոնտուրաճյանը և շատ ուրիշներ: Նրանք կամ ընկան դիրքերում, կամ օրհասական վերջին գրոհից հետո թույն ընդունեցին, իսկ շատերն էլ, իրենց զավակների ձեռքից բռնած նետվեցին իրենց ձեռքով հրդեհված տների բոցերի մեջ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՕՁԱԿՈՄԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմը «ամենազոր դիրիժորի նման» (Վ. Ի. Լենինի խոսքերն են — Մ. Կ.) արագացրեց ցարիզմի կործանումը, որովհետև այն ծայրահեղորեն սրեց սոցիալ–տնտեսական ճգնաժամը և դասակարգային հակասությունները Ռուսաստանում: Երկրի տնտեսությունը փլուզվեց, իսկ բնակչության հիմնական մասը մատնվեց սովի: Նույնը տեղի ունեցավ նաև Անդրկովկասում: Հայաստանում կրճատվեցին ցանքատարածությունները, անասնագլխաքանակը, նվազագույնի հասավ պղնձի, գինու–կոնյակի արտադրությունը, ստեղծվեց պարենային ծանր կացություն, աշխատավոր ժողովուրդը մատնվեց ծայրահեղ աղքատության ու սովի:

Նման պայմաններում աշխուժացավ հեղափոխական շարժումը, որն ընդգրկեց նաև բանակը: Աճող հեղափոխական շարժման, տնտեսական քայքայվածության և ռազմաճակատներում կրած պարտությունների հետևանքով ցարիզմը խոր ճգնաժամ էր ապրում:

1917 թ. հունվարի 9–ին 1905 թ. «Արյունոտ կիրակիի» տարեդարձը նշելու համար Պետրոգրադում գործադուլ արեց 145 հազար մարդ: Հզոր գործադուլներ տեղի ունեցան նաև Մոսկվայում, Խարկովում, Նիժնի Նովգորոդում, Բաքվում և այլ քաղաքներում: Այդ գործադուլները մասսայական քաղաքական ցույցերի սկիզբը դրեցին: Փետրվարի կեսերին և ցույցերի ալիքը խիստ բարձրացավ: Բանվորները ցույցի էին դուրս գալիս «Կորչի պատերազմը», «Հաց», «Կեցցե հանրապետությունը» լոզունգներով: Ի պատասխան դրա՝ կառավարությունը մշակեց Պետրոգրադի պաշտպանության պլանը: Պետրոգրադի բանվորների թիվը հասնում էր 400 հազարի:

1917 թ. փետրվարի 23–ը (մարտի 8–ը) իրադարձությունների զարգացման շրջադարձային օր եղավ: Այն դարձավ Փետրվարյան բուրժուա–դեմոկրատական հեղափոխության առաջին օրը: Այդ օրը գործադուլ էին անում Պետրոգրադի 50 ձեռնարկությունների շուրջ 128 հազար բանվորներ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք: Պետրոգրադի ՌՍԴ(բ)Կ բոլշևիկյան կոմիտեի կոչով բանվորները նշեցին Կանանց միջազգային օրը: Փետրվարի 24–ին (մարտի 9–ին) արդեն գործադուլ էր անում շուրջ 200 հազար մարդ: Չնայած ոստիկանական ուղեկալներին, Վիբորգյան շրջանի բանվորների նշանակալի մասն անցավ քաղաքի կենտրոնական մասը և հորդեց Լիտեյնի և Նևսկի պողոտաները: Փետրվարի 25–ի (մարտի 10–ի) առավոտյան կամուրջների վրա և քաղաքի կենտրոնում բանվորներին դիմավորեցին զինվորական ուղեկալները: Փետրվարի 25–ին Պետրոգրադում սկսվեց համընդհանուր գործադուլ, որին մասնակցում էին 300 հազար բանվորներ: Նույն օրը Պետրոգրադի բոլշևիկյան կոմիտեն թռուցիկներով կոչ արեց զինվորներին՝ միանալ բանվորներին: Կոմիտեի երեք անդամներ ձերբակալվեցին:

Փետրվարի 26–ի (մարտի 11–ի) կիրակի օրվա կեսօրին տասնյակ հազարավոր բանվորներ շարժվեցին քաղաքի կենտրոն՝ վստահ լինելով, որ իրենց վրա չեն կրակի: Սակայն Պետրոգրադի ռազմական օկրուգի հրամանատար գեներալ Ս. Խաբալովը, կատարելով Նիկոլայ 2–րդ ցարի հրամանը՝ մայրաքաղաքում կարգուկանոնը վերականգնելու մասին, կարգադրեց զորքերին կրակ բացել ցուցարարների վրա, որի հետևանքով 40 մարդ սպանվեցին և նույնքան էլ վիրավորվեցին: Սակայն Պավլովյան գնդի զինվորների մի մասն անցավ ցուցարարների կողմը: Փետրվարի 27–ի առավոտյան ցուցարարների կողմն անցավ Վոլինյան գնդի ողջ պահեստային մասը, որի զինվորները բանվորների հետ գնացին բանտ և ազատեցին քաղբանտարկյալներին, հրդեհեցին Օկրուգային դատարանի շենքը: Զինվորներից ստացած զենքով բանվորներն սկսեցին ավերել ոստիկանական բաժանմունքները: Այնուհետև բանվորներն ու զինվորները գրավեցին Կրոնվերկյան զինապահեստը և գրավեցին 40 հազար հրացան և 30 հազար ատրճանակ: Փետրվարի 27–ի առավոտյան ապստամբեցին շուրջ 10 հազար զինվորներ, ցերեկը նրանց թիվը հասավ 25 հազարի, իսկ երեկոյան՝ 67 հազարի: Փետրվարի 28 (մարտի 13)–ին զինվորներն ու բանվորները գրավեցին ծովակալության շենքը (Ադմիրալտեյստվո), Ձմեռային պալատը և Պետրոպավլովյան ամրոցը:

Նիկոլայ 2–րդի ցուցումով Ստավկան շտապ ստեղծեց պատժիչ ջոկատ՝ գեներալ Ն. Իվանովի հրամանատարությամբ և նետեց Պետրոգրադի վրա: Սակայն ջոկատի զինվորները դեռ մայրաքաղաքի մատույցներում անցան հեղափոխական զորքերի կողմը: Ցարական վերջին կառավարության մինիստրները ձերբակալվեցին և բանտարկվեցին Պետրոպավլովյան ամրոցում: Հեղափոխությունը Պետրոգրադում հաղթանակեց:

Ձինված ապստամբության բուն ընթացքում Պետրոգրադի հեղափոխական պրոլետարիատը ձեռնամուխ եղավ Բանվորների դեպուտատների Սովետի ստեղծմանը: Ձեռնարկություններում Սովետի դեպուտատների ընտրություններն սկսվեցին դեռևս փետրվարի 24–25–ին: Փետրվարի 27–ի ցերեկը ժողովրդի հսկայական զանգվածները հասան Պետական դումայի շենքին, զինվորներն արձակեցին ժամապահներին և դրեցին իրենց պահակախումբը: Մենշևիկներ Ն. Չխեիձեն և Սկոբելևը մտան ներս և Դումայի մենշևիկ պատգամավորների հետ միասին իրենց հայտարարեցին «Բանվորների դեպուտատների սովետի ժամանակավոր գործադիր կոմիտե»: Ժամանակավոր գործադիր կոմիտեն կոչ արեց բանվորներին և զինվորներին՝ ընտրել Պետրոգրադի Սովետի դեպուտատներ և նրա առաջին նիստը նշանակեց փետրվարի 27–ի երեկոյան ժամը 7–ին: Առաջին նիստին մասնակցեց 250 դեպուտատ, ընտրվեց Գործադիր կոմիտե, որի նախագահ ընտրվեց մենշևիկ Ն. Չխեիձեն, նախագահի ընկերներ՝ տրուդովիկ Ա. Կերենսկին և մենշևիկ Սկոբելևը: Գործադիր կոմիտեն բաղկացած էր 39 հոգուց, որից 6–ը բոլշևիկ, 13 մենշևիկ, 6 էսէռ, 2 տրուդովիկ, անկուսակցականներ: Պետրոգրադի սովետի դեպուտատների թիվը հասնում էր 3000–ի, որից 800–ը՝ բանվորներ, 2000–ը՝ զինվորներ: Բանվորների և զինվորների ներկայացուցիչների մեծամասնությունը անկուսակցականներ էին և այդ պահին գնում էին Գործկոմի մենշևիկա–էսէռական մեծամասնության հետևից: Պետրոգրադի սովետը դարձավ հեղափոխական իշխանություն: Կազմակերպվեցին զինվորական և պարենային հանձնաժողովներ, ստեղծվեց բանվորական զինված միլիցիա, հսկողություն սահմանվեց տպարանների, երկաթուղու վրա: Սովետի մենշևիկա–էսէռական ղեկավարությունը կառավարություն կազմելուն մասնակցելու հարց չէր դնում, մինչդեռ բոլշևիկները հրապարակեցին Մանիֆեստ՝ ժամանակավոր հեղափոխական կառավարություն ստեղծելու կոչով:

Փետրվարի 27–ին, երբ ապստամբած ժողովուրդը ներխուժեց Տավրիկյան պալատ, դահլիճներից մեկում Պետական դումայի ներկայացուցիչներն ընտրեցին Պետական դումայի ժամանակավոր կոմիտե, որի մեջ մտան Պետական դումայի նախագահ, օկտյաբրիստ Մ. Ռոձյանկոն (նախագահ), կադետ Ն. Նեկրասովը (տեղակալ), օկտյաբրիստ Ի. Դմիտրյուկովը, պրոգրեսիստ Ա. Կոնովալովը, տրուդովիկ, հետո էսէռ Ա. Կերենսկին, մենշևիկ Ն. Չխեիձեն, օկտյաբրիստ Ս. Շիդլովսկին, կադետ Պ. Միլյուկովը, անկուսակցական Մ. Կարաուլովը, կենտրոն խմբից Վ. Լվովը, պրոգրեսիստ Վ. Ռժևսկին: Փետրվարի 28–ի երեկոյան Մ. Ռոձյանկոն հայտարարեց ժամանակավոր կոմիտեի կողմից կառավարական ֆունկցիաներն իր վրա վերցնելու մասին:

Պետրոգրադի Սովետը և ժամանակավոր կոմիտեն գործում էին միմյանցից անկախ: Ժամանակավոր կոմիտեն որոշեց արագացնել նոր կառավարության ձևավորումը և այդ նպատակով Մոսկվայից հրավիրեց Համամիութենական երկրային (զեմսկի) միության նախագահ իշխան Գ. Ե. Լվովին: Մարտի 1–ին բանակցություններ սկսվեցին Պետրոգրադի Սովետի գործկոմի և ժամանակավոր կոմիտեի միջև՝ նոր կառավարություն կազմելու մասին: Մարտի 2–ին Սովետի ընդհանուր ժողովը համաձայնություն տվեց ժամանակավոր կառավարություն կազմելու մասին:

Մարտի 3–ին Նիկոլայ 2–րդ ցարը և հետո ցարական ընտանիքի անդամները հայտարարություն արեցին գահից հրաժարվելու մասին:

Ձուգահեռաբար Սովետի ընտրություններ եղան նաև Մոսկվայում: Այստեղ ընտրվեց նաև ժամանակավոր հեղափոխական կոմիտե, որի նախագահ ընտրվեց մենշևիկ Ա. Նիկիտինը:

Պետրոգրադում 1917 թ. մարտի 2–ին (15–ին) Պետական դումայի ժամանակավոր կոմիտեն կազմավորեց ժամանակավոր կառավարություն, որը գոյատևեց մինչև 1917 թ. հոկտեմբերի 25–ը (նոյեմբերի 7–ը): Այն գործադիր իշխանության բարձրագույն մարմին էր, որը կատարում էր նաև օրենսդրական ֆունկցիաներ: Առաջացավ երկիշխանություն՝ բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների Սովետներ և ժամանակավոր կառավարություն: Վերջինիս մեջ մտան կադետ, իշխան Գ. Ե. Լվովը՝ մինիստր–նախագահ և ներքին գործերի մինիստր, կադետ Պ. Միլյուկովը՝ արտաքին գործերի մինիստր, օկտյաբրիստ Ա. Գուչկովը՝ ռազմա–ծովային մինիստր, կադետ Ն. Նեկրասովը՝ հաղորդակցության մինիստր, պրոգրեսիստ Ա. Կոնովալովը՝ առևտրի և արդյունաբերության, անկուսակցական Մ. Տերեշչենկոն՝ ֆինանսների, կադետ Ա.

Մանուիլովը՝ լուսավորության, կադետ Ա. Շինգարյովը՝ հողագործության, էսէռ Ա. Կերենսկին՝ արդարադատության մինիստր, Վ. Լվովը՝ Սինոդի օբեր–դատախազ, օկտյաբրիստ Ի. Գոդնեը՝ պետական վերահսկիչ:

Տեղերում ժամանակավոր կառավարության իշխանությունը իրականացնում էին նահանգային և գավառական կոմիսարները: Ժամանակավոր կառավարության ստեղծմամբ Փետրվարյան հեղափոխությունը փաստորեն ավարտվեց: Այն պետք է գործեր մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի հրավիրումը:

Փետրվարյան հեղափոխության հաղթանակի լուրը հասավ նաև Անդրկովկաս ու Հայաստան: Մարտի սկզբներին ցույցեր ու միտինգներ տեղի ունեցան ամբողջ Հայաստանում՝ Կարսում, Սարիղամիշում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Մեծ Ղարաքիլիսայում, Էջմիածնում, Լոռիում, Ղարաբաղում, Նախիջևանում, Վանում, Բայազետում, Ալաշկերտում, Էրզրումում, Երզնկայում և այլուր: Առավել նշանավորը Կարսի կայազորի ապստամբությունն էր, որին միացան տեղի բանվորները, արհեստավորները, մտավորականությունը: Այստեղ շարժումը գլխավորում էին բոլշևիկները: Մարտի 6–ին ոտքի կանգնեց Կարսի 40 հազարանոց կայազորը: Ապստամբները ձերբակալեցին բերդի պարետին, շտաբի պետին, քաղաքի պարետին, նահանգապետին, բազմաթիվ սպաների ու գեներալների: Մինչև մարտի 10–ը ապստամբները գրավեցին փոստը, հեռագրատունը, ձերբակալվեց ոստիկանության և ժանդարմերիայի լրիվ կազմը, ոչնչացվեց Կարսի ռազմական դատարանը:

Ալեքսանդրապոլում ցույցերի ալիքը գագաթնակետին հասավ մարտի 10–ին:

Հեղափոխությունը համեմատաբար թույլ արձագանք գտավ Երևանում, որը գլխավոր մայրուղիներից հեռու ընկած գավառական քաղաք էր: Այնուամենայնիվ, այստեղ ևս կայացան զինվորական և աշխատավորական ցույցեր:

Ալավերդու բանվորությունը ձեռնարկատերերին ներկայացրեց տնտեսական պահանջներ: Հանրահավաքներ տեղի ունեցան Ախալքալաքում և Ախալցխայում: Մարտի 5–ին Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը հրաժարական տվեց:

1917 թ. մարտի 9–ին ժամանակավոր կառավարությունն Անդրկովկասում ստեղծեց իր տեղական մարմինը՝ ՕԶԱԿՈՄ–ը՝ Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն, որի կազմի մեջ մտան կադետներ Խալամովը (նախագահ), Պապաջանյանը, Պերևերզևը, Զաֆարովը, սոցիալ–ֆեդերալիստ Աբաշիձեն: Մարտի 10–ին Աբաշիձեին փոխարինեց մենշևիկ Չխեենկելին: Օզակոմի վրա դրվեց պատերազմի իրավունքով գրավված Արևմտյան Հայաստանի քաղաքացիական վարչության կառավարումը:

Հայաստանում ևս ստեղծվեցին բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդներ: 1917 թ. մարտին խորհուրդներ ստեղծվեցին Ալավերդում, Ղափանում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում, Սարիղամիշում, Խնուսում, Կաղզվանում, Ախալքալաքում, Օլթիում, Երզնկայում, Վանում, Բայազետում և այլուր: Դրանց կողքին գործում էին Օզակոմի նահանգական և մարզային կոմիսարիատներն ու գործադիր կոմիտեները: Կային նաև գյուղական գործադիր կոմիտեներ, որոնք նույնպես Օզակոմի իշխանության մարմիններ էին:

Օզակոմի կառավարման ժամանակաշրջանն ընդունված է համարել անիշխանության ժամանակաշրջան, որն արտահայտվում էր առաջին անհրաժեշտության մթերքների ու ապրանքների անընդհատ աճող թանկությամբ ու շատ վայրերում մոլեգնող սովով: Տեղի ունեցող բազմաթիվ ժողովներն ու համագումարները, որոնք առաջ էին քաշում զանազան ծրագրեր, բարձրացնում էին նաև ժողովրդի պարենավորման հարցը, բայց դրանք հարցը չէին լուծում: Մինչդեռ պարենային ճգնաժամի գլխավոր պատճառը շարունակվող պատերազմն էր, որին գումարվում էր Օզակոմի ու նրա տեղական մարմինների՝ ժամանակի թելադրանքով պայմանավորված անճարակությունն ու անգործությունը:

Կատարյալ աղքատություն, սով ու թշվառություն էր տիրում ողջ Հայաստանում, որն իր հերթին թալան ու գողություն էր ծնում: Գյուղերի բնակչությունը օրը ցերեկով թալանի էր ենթարկվում, իսկ Օզակոմի իշխանությունները անգործության էին մատնված: Անզոր էր նաև Երևանի նահանգային իշխանությունը:

Տնտեսական հիմքի վրա ծագեցին հուզումներ, որոնք լայն չափեր ընդունեցին հենց Երևանում: Այդ հուզումների ընթացքում տեղի էին ունենում մթերքի պահեստների, շուկաների, խանութների ավերում ու թալան: Երևանում անկարգությունները զսպվեցին զորքով: Հայաստանում մեծ պրոբլեմ էր նաև քրդական ավազակախմբերի թալանչիական հարձակումները բնակչության վրա:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1917 Թ. ԱՊՐԻԼԻ 26–Ի ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

1917 թ. ապրիլի 26–ին հրապարակվեց ժամանակավոր կառավարության որոշումը՝ Արևմտյան Հայաստանի կառավարման մասին: Այն ստորագրել էին ժամանակավոր կառավարության մինիստր–նախագահ, իշխան Գ. Լվովը, արտաքին գործերի մինիստր Պ. Միլյուկովը և Գործերի կառավարիչ Վլ. Նաբոկովը: Կարգադրությունը պարունակում էր հետևյալ հոդվածները.

Հոդված 1. Պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի քաղաքացիական կառավարումը վերցվում է Կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմածկատի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն ենթարկվում ժամանակավոր կառավարությանը:

Հոդված 2. Երկրամասի քաղաքացիական կառավարումը հանձնվում է ժամանակավոր կառավարության նշանակած Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարին:

Հոդված 3. Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի մոտ գտնվում է քաղաքացիական մասի օգնականը:

Հոդված 4. Ընդհանուր կոմիսարը, իր քաղաքացիական մասի օգնականի զեկուցման համաձայն, անմիջապես ներկայացնում է իր նկատառումները Թուրքահայաստանի շրջանների կառավարման մասին:

Այսպիսով՝ ինչպես գրում է Ս. Վրացյանը, Թուրքահայաստանի խնդիրը նորից դրվում էր միջազգային հողի վրա, հանվում էր կովկասյան միջցեղային կրքոտ հարաբերությունների միջավայրից և կապվում ուղղակի կենտրոնական կառավարության հետ, որն ինքնին մեծ հաջողություն էր հայերի համար (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 27):

Նորագույն ուսումնասիրողներից Վահան Մելիքյանն այն կարծիքն է հայտնում, որ ժամանակավոր կառավարության որոշման գլխավոր նպատակը Արևմտյան Հայաստանի անեքսիան էր և նրա վարչական ենթարկումը կենտրոնին (Վ. Հ. Մելիքյան, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 148): Նա գտնում է նաև, որ նշված որոշումը օրենսդրական տեսք հաղորդեց Արևմտյան Հայաստանի կառավարմանը և Հայաստանի անկախության կորստից հետո առաջին անգամ ճանաչվեց Արևմտյան Հայաստանի գոյությունը (նշվ. աշխ., էջ 149):

Ժամանակավոր կառավարության մայիսի 15–ի հրամանով Թուրքահայաստանի և պատերազմի իրավունքով գրավված մարզերի կոմիսար նշանակվեց գեներալ–կոմիսար Պյոտր Ավերյանովը, որը մայիսի 25–ին անցավ իր պարտականությունների կատարմանը:

Հուլիսին հաստատվեց Ռուսաստանի պետական սահմանը Արևմտյան Հայաստանում, որն անցնում էր Բայբուրդ–Դերջան–Մամախաթուն–Խնուս–Մանազկերտ–Արծեշ–Բերկրի–Սարայ քաղաքներով:

Ինչպես վկայում է Ս. Վրացյանը՝ գործը չուշացավ: Հատկացվեցին մեծագումար վարկեր, ձեռնարկվեցին միջոցներ՝ գաղթականության վերադարձի ուղղությամբ: Կարճ ժամանակում Թուրքահայաստանը և մանավանդ Տարոնն ու Վասպուրականը վերակենդանացան: Ամեն տեղ բռնել էր հայ ազգաբնակչությունը, գյուղերը վերաշինվում էին, արտերը ծածկվում էին կանաչով: Գործում էին զանազան բարեգործական հաստատություններ, ստեղծվում ինքնապաշտպանական խմբեր: Արևմտյան Հայաստանը հարություն էր առնում մոխիրների տակից (Ս. Վ., էջ 29):

Գեներալ–կոմիսար Պ. Ավերյանովի 1917 թ. սեպտեմբերի 9–ի հրամանով նախկին վիլայեթների փոխարեն Արևմտյան Հայաստանի տարածքներից ստեղծվեցին երեք մարզեր՝ Էրզրումի, Խնուսի, Վանի: Այստեղ համապատասխանաբար կոմիսարներ նշանակվեցին Յա. Գլոտովը, Ն. Նիկոնենկոն, Կոստի Համբարձումյանը:

Օգոստոսի 8–ին սահմանվում է գեներալ–կոմիսարի քաղաքացիական մասի երկրորդ տեղակալի պաշտոն, որն զբաղեցնում է Դաշնակցության նշանավոր գործիչ, բժիշկ Հակոբ Զավրիևը (Զավրիյան):

1917 թ. օգոստոսի 31–ին Պ. Ավերյանովը ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում Արևմտյան Հայաստանում մարզային ու քաղաքային միլիցիա ստեղծելու օրենքի նախագիծ:

Միանգամայն համամիտ ենք Վ. Մելիքյանի այն եզրակացությանը, որ Արևմտյան Հայաստանը առաջին անգամ իր պատմության մեջ ուղղակիորեն ենթարկվեց Ռուսական պետությանը, և Ռուսաստանի կողմից հայկական հողերի կցումը, անեքսիան, տվյալ պատմական իրողության մեջ անվիճելիորեն դրական քայլ էր, նույնիսկ հայկական հարցի լուծում էր նշանակում (Հ. Մ., էջ 154):

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Փետրվարյան հեղափոխությունից հետո անհավատալի կենսունակություն դրսևորեց Մեծ եղեռնի արհավիրքն ապրած արևմտահայ ժողովուրդը և քայլեր ձեռնարկեց սեփական ճակատագրի տնօրինման ուղղությամբ: Այդ առումով մեծ դեր կատարեց Արևմտահայերի առաջին համագումարը, որը կայացավ Երևանում՝ 1917 թ. մայիսի 2–11–ը: Համագումարի ոգին Անդրանիկն էր: Դեռևս ապրիլին նա Թիֆլիսում հիմնել էր մի ընկերություն, որը պետք է զբաղվեր արևմտահայությանը հուզող հարցերով և այդ նպատակով հիմնադրեց «Հայաստան» թերթը, որի նախաձեռնողներ դարձան Անդրանիկը և Վ. Թոթովենցը: Թերթը հենց այդպես էլ կոչվում էր՝ «Անդրանիկի օրգան»:

Համագումարին ներկա էին 80 պատգամավորներ և 400 հյուրեր: Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը: Նախագահության կազմում էին Լևոն Շանթը, Վրթանես Փափազյանը, Արտակ Դարբինյանը:

Համագումարի հանդիսավոր բացումը կատարեց Անդրանիկը, իսկ բացման խոսքն ասաց Արամ Մանուկյանը:

Համագումարն ընտրեց 15 հոգուց կազմված Արևմտահայ ազգային խորհուրդ, որոնցից 8–ը դաշնակցականներ էին: Խորհրդի մեջ մտան Անդրանիկը, Սմբատ Բորոյանը (Մախլուտո), Հրանտ Գալիկյանը, Արտակ Դարբինյանը, Զապել Եսայանը, Ավ. Թերզիբաշյանը, Գ. Հայկունին (Բուշնիկ), Հմ. Մանուկյանը, Լևոն Շանթը, Վ. Պապիկյանը, դոկտոր Խ. Բոնապարտյանը, Կարո Սասունին, Հակ. Տեր–Զաքարյանը, Վահան Փափազյանը (Կոմս): Խորհուրդն իր կողմից ընտրեց 5 հոգուց բաղկացած բյուրո՝ Վահան Փափազյան, Արտակ Դարբինյան, Հ. Տեր–Զաքարյան, Կ. Սասունի, Հ. Գալիկյան: Գրավված վայրերի և Անդրկովկասի զանազան կենտրոններում կազմվեցին Արևմտահայ բյուրոյի մասնաճյուղեր, որոնք դարձան արևմտահայության ներկայացուցիչները: Բյուրոյին հաջողվեց համախմբել գաղթականների օգնության գործով զբաղվող բոլոր մարմիններին:

Արևմտահայ խորհրդին կից ստեղծվեցին կրթական, որբանոցային, առողջապահական պարենավորման, իրավաբանական, աշխատանքի, տեղեկատու հանձնաժողովներ:

Արևմտահայ խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց, որ մինչև 1917 թ. գարունը Կովկասից Վան, Բիթլիս, Կարին և Տրապիզոն են ներգաղթել շուրջ 150 հազար արևմտահայ գաղթականներ:

Համագումարը միաձայնությամբ ընդունեց բանաձև, որը ձևակերպում էր հետևյալ հետագա անելիքները. 1. թուրքահայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանում և նրա քայքայված տնտեսության վերականգնում, 2. հայրենիքի վերաշինություն, 3. նոր սերնդի կրթական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակություն: Դրանով համագումարն ավարտեց իր աշխատանքները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Փետրվարյան հեղափոխության հետևանքով 1917 թ. գարնանը Կովկասյան բանակը հայտնվեց չափազանց ծանր դրության մեջ, որի գլխավոր պատճառը ներքին անկազմակերպվածությունն էր: Ծայր առավ անկասելի դասալքությունը, բանակում սով ու համաճարակ էր: Այդ ամենը ստիպեցին ժամանակավոր կառավարությանը և ռուսական բանակի գերագույն հրամանատարությանը՝ փոխել ազգային զորամիավորումների նկատմամբ իրենց վերաբերմունքը և դրանց ստեղծմանը խոչընդոտելու փոխարեն հովանավորել այն: Վերաբերմունքի նման փոփոխության բուն նպատակն էր հանձին ազգային զորամասերի ձեռք բերել առավել կարգապահ, մարտունակ և հուսալի զորամիավորումներ:

1917 թ. ապրիլի վերջերին կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին արդեն գոյություն ունեցող հայկական հրաձգային գումարտակների հետագա ընդլայնման ուղղությամբ: Մայիսի 5–ին Կովկասյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ Յուդենիչը հեռագրով խնդրեց Գերագույն շտաբի թույլտվությունը՝ հայկական վեց գումարտակները գնդերի վերածելու մասին: Յուրաքանչյուր գունդ ունենալու էր սկզբում երկու, ապա՝ երեք, իսկ հետո՝ չորս գումարտակ: Սակայն մայիսի 10–ին Մոգիլյովի զորակայանից ստացվեց մերժողական պատասխան՝ վկայակոչելով պարենային դժվարությունները: Սակայն մայիսի 27–ին Յուդենիչը նոր զեկուցագիր ուղարկեց Մոգիլյով, որով ավելի հանգամանորեն էր հիմնավորում հայկական գնդերի ստեղծման անհրաժեշտությունը: Զեկուցագրում շեշտվում էր, որ հայկական գումարտակներում կարգապահությունը համեմատաբար բարձր է, հեղափոխության «կազմալուծող»

ազդեցությունը նրանց վրա քիչ է, իսկ ռազմաճակատում հայերը վստահելի և մարտունակ ուժ են: Այս անգամ Յուդենիչը խնդրում էր թույլատրել հայկական գումարտակներից կազմել երկգումարտականոց գնդեր և միավորել դրանք հայկական մեկ բրիգադի մեջ, իսկ հետագայում գնդերի կազմը հասցնել երեք գումարտակի:

1917 թ. մայիսի վերջին իր գործունեությունն սկսեց ռուսական բանակում ծառայող հայ բարձրաստիճան զինվորականությունը: 1917 թ. մայիսի 22–ին փոխգնդապետ Հ. Տիգրանյանի, Ն. Մելիք–Փարսադանյանի և աշուղ Ջիվանու որդու՝ էսէռ Պ. Լևոնյանի նախաձեռնությամբ Պետրոգրադում ստեղծվեց Հայկական զինվորական հանձնաժողովը, որի նախագահ դարձավ Գերագույն շտաբի գեներալ–մայոր Լ. Տիգրանյանը: Շուտով նրա կազմի մեջ մտավ Գերագույն շտաբի անդամ, Պետրոգրադի ռազմական օկրուգի գլխավոր շտաբի պետ գեներալ–մայոր Հակոբ Բագրատունին (տե՛ս Հ. Ավետիսյան, Գեներալ Հակոբ Բագրատունի, ՊԲՀ, 1997, Հ. 1): Այդ հանձնաժողովի նպատակն էր Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացնել ռուսական բանակում ծառայող շուրջ 120 հազար հայ զինվորականներին և կազմավորել գոնե մեկ հայկական կորպուս:

Մայիսի 31–ին զինվորական հանձնաժողովի պատվիրակությունը Ռազմածովային մինիստր Ա. Կերենսկուն հանձնեց մի զեկուցագիր՝ հայկական չորս դիվիզիաներ կազմելու մասին, որը և արժանացավ մինիստրի հավանությանը:

Դրանից հետո Պետրոգրադի Հայկական զինվորական հանձնաժողովը լուծարվեց և ռազմաճակատային սպա Արսեն Շահմազյանի նախագահությամբ Թիֆլիսում հիմնվեց Հայ զինվորական միություն:

Համանման խնդրանքով հունիսի 10–ի նամակով Ա. Կերենսկուն դիմեցին նաև Օզակոմի նախագահ Վ. Խառլամովը և նրա անդամ Մ. Պապաջանյանը, որը և համաձայնություն տվեց հայկական հրաձգային գումարտակները անհապաղ գնդերի վերածել և նրանցից դիվիզիաներ ձևավորել: Մակագրված նամակը հանձնվեց Գերագույն շտաբ՝ Գերագույն զորահրամանատար, գեներալ Ա. Բրուսիլովին, որն էլ 1917 թ. հունիսի 19–ի թիվ 480 հրամանով արտոնեց ստեղծել հայկական վեց գունդ՝ յուրաքանչյուրը երկու գումարտակից: Մի քանի օր անց՝ հունիսի 28–ի թիվ 540 հրամանով Ա. Բրուսիլովը թույլատրեց կազմվելիք 6 գնդերի հիման վրա ստեղծել մեկ Հայկական հրաձգային բրիգադ (տե՛ս Ա. Նազարյան, Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում

1914–1918 թվականներ, Երևան, 1999, էջ 103): Հայկական բրիգադի ձևավորման գործը հանձնարարվեց գնդապետ Պավել Բեժանբեկին:

1917 թ. օգոստոսի վերջերին հայկական հրաձգային 6 գնդերի հրամանատարներն էին.

1–ին գունդ՝ փոխգնդապետ Դ. Կարաքեշիշյան,
2–րդ գունդ՝ գնդապետ Ս. Սամարցյան,
3–րդ գունդ՝ գնդապետ Լ. Հովսեփյան,
4–րդ գունդ՝ փոխգնդապետ Ա. Հովսեփյան,
5–րդ գունդ՝ գնդապետ Պ. Փիրումյան,
6–րդ գունդ՝ փոխգնդապետ Մ. Մելիք–Մուրադյան:

Ինչպես նշում է Ա. Նազարյանը, ռուսական բանակում այդ ժամանակ մեծ տարածում գտավ «հարվածային» կամ «մահապարտներ» անվանումով զանազան գումարտակների և գնդերի հռչակումը՝ զորքի մարտական ոգին բարձրացնելու նկատառումով: 1917 թ. հուլիսին հայկական 5–րդ, ապա՝ 2–րդ գնդերը նույնպես սկսեցին կրել «մահապարտներ» անվանումը, այլ ոչ թե Սարդարապատի ճակատամարտի ժամանակ, ինչպես նշվում է շատ աշխատություններում (Ա. Նազարյան, էջ 107, ծան. 85, էջ 221):

1917 թ. գարնանից Անդրկովկասում և Հայաստանում գնալով ուժեղանում էին թուրք–թաթարական և քրդական ավազակախմբերի զինված խժդժությունները: Ընդառաջ գնալով այդ կապակցությամբ հայերի դիմումներին՝ 1917 թ. օգոստոսի 30–ին ժամանակավոր կառավարության որոշմամբ Կովկասյան գործող բանակի կազմում ստեղծվեց Երևանյան ջոկատը, որի գլխավոր խնդիրն էր մաքրել ռազմաճակատի թիկունքը քրդական և մահմեդական ավազակախմբերից: Իսկ այդ ժամանակ Երևանի նահանգում 50 հազար քուրդ բնակչություն կար: Ջոկատի հրամանատար նշանակվեց գեներալ–մայոր Շիլինկովը: Ջոկատի գործողություններն ընդգրկում էին Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր–Դարալագյազի, Նախիջևանի գավառները, Բայազետի, Դարաքիլիսայի, Բերկրիի օկրուգները, Մակվի խանության հյուսիսը:

1917 թ. գարնանը փորձ կատարվեց առանձին զորամիավոր կազմակերպել արևմտահայերից: Թիֆլիսում ԱՄՆ–ի հյուպատոս Ֆ. Սմիթը մայիսի 29–ին հանդիպեց Անդրանիկի հետ: Խոսք գնաց արևմտահայերից 30 հազարանոց զորք կազմավորելու մասին, սակայն այդ գործը հետաձգվեց:

Հայկական կամավորական ջոկատների շատ խմբապետներ ու զինվորներ ցանկություն հայտնեցին վերադառնալ զինվորական ծառայության: Նրանց իրավունք տրվեց վերադառնալու գործող բանակի շարքերը՝ ընդհանուր հիմունքներով ծառայելու համար:

Վանի, Էրզրումի և Խնուսի մարզերում կազմակերպվեցին հայկական ժողովրդական միլիցիայի ջոկատներ, որոնց ընդհանուր թիվը հասավ 3 հազարի, իսկ ճանապարհների հսկողության համար կազմվեցին հեծյալ խմբեր: Այդ ինքնապաշտպանական–ժողովրդական ոչ կանոնավոր զորամիավորները գլխավորում էին նախկին մեծահամբավ ֆիդայիները: Բաբերդի ջոկատի պետն էր Սեպուհը, Երզնկայինը՝ Սեբաստացի Մուրադը, Խնուս–Մուշում՝ Մանուկը և Մուշեղը, Ալաշկերտում՝ Սմբատը, Վանում՝ Լևոն Շաղոյանը և Բուլղարացի Գրիգորը: Ալաշկերտի զինվորական շրջանի ոստիկանապետ նշանակվեց Համազասպը: Նման կարգի խմբեր ստեղծվեցին գրեթե բոլոր հայաբնակ վայրերում, իսկ այդ ժամանակ Արևմտյան Հայաստան էր վերադարձել մոտ 200 հազար արևմտահայություն: 1917 թ. ամռան վերջին ոչ կանոնավոր այդ զորամասերում կար մոտ 4–5 հազար մարդ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հետփետրվարյան ժամանակաշրջանի հայ կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկն էլ հայ եկեղեցական համագումարն էր, որը կայացավ էջմիածնում 1917 թ. հունիսի 12–25–ին: Հայոց եկեղեցին ողջունեց Փետրվարյան հեղափոխությունը և գտավ, որ այն նպաստավոր է հայ ժողովրդի շահերի տեսակետից: Համագումարին ներկա էին 67 հոգևորականներ: Համագումարն ուներ հինգ բաժանմունքներ՝ եկեղեցու բարեփոխության, տնտեսական, դպրոցական–կալվածական, վարչական, ռուսահայ եկեղեցական կյանքի:

Համագումարը եկեղեցու ներքին կյանքի խնդիրներին զուգահեռ բարձրացրեց նաև համահայկական հույժ կարևոր հիմնահարցեր, քննարկեց դրանց լուծման ուղիները: Հայ եկեղեցին հնարավորություն ունեցավ անկաշկանդորեն բարձրացնել իրեն հուզող խնդիրները: Համագումարում դրսևորվեցին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5–րդի առաջադիմական հայացքները:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանի հաջորդ կարևորագույն իրադարձությունը հայ իրականության մեջ՝ Հայոց ազգային համախորհրդակցության հրավիրումն ու Ազգային խորհրդի ստեղծումն էր:

Փետրվարյան հեղափոխությունից հետո, 1917 թ. մարտի 7–ին, Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում հրավիրվեց հայ քաղաքական ուժերի միավորիչ հավաք, որը շարունակվեց մինչև հունիս և որին մասնակցում էին զանազան կազմակերպությունների 50 ներկայացուցիչներ: Բազմաթիվ այլ հարցերի թվում քննարկվեց նաև ազգային գործերը ղեկավարելու համար ժամանակավոր միջկուսակցական մարմին ստեղծելու հարցը: Այդ նպատակով որոշվեց Երևանում հրավիրել հայոց Ազգային համագումար, որն այդպես էլ չկայացավ, իսկ մինչ այդ Թիֆլիսում հրավիրել Ազգային համախորհրդակցություն՝ բոլոր դասերի, դասակարգերի ու հոսանքների ներկայացուցիչներից:

Հայոց Ազգային համախորհրդակցությունը կայացավ Թիֆլիսում, Ռուսթավելու պողոտայի վրա գտնվող Հայ դերասանական ընկերության թատրոնի շենքում, 1917 թ. սեպտեմբերի 29–ից մինչև հոկտեմբերի 13–ը: Օրակարգի հարցերն էին՝ ժամանակավոր կառավարության քաղաքականության և տվյալ քաղաքական պահի գնահատման, Օզակոմի նկատմամբ վերաբերմունքի, նոր վարչական սահմանագծման, զեմստվային (տեղական կառավարման) իշխանություններ մտցնելու, պարենավորման, գաղթականության, ազգամիջյան հարաբերությունների, Կովկասյան ճակատի պաշտպանության, վտանգված վայրերի ապահովության, դպրոցների ազգայնացման և այլ հարցեր: Ներկայացուցիչներ ունեին նաև Կովկասի, Մոսկվայի (Ստ. Մամիկոնյան) ու Պետերբուրգի (Ն. Ադոնց) հայությունը:

Խորհրդաժողովի առաջին ու գլխավոր գործը եղավ քաղաքական պահի մասին ընդունած բանաձևը՝ բացարձակ վստահություն ու կատարյալ աջակցություն ժամանակավոր կառավարությանը, աշխատել վերջացնել պատերազմը դաշնակիցների հետ համախորհուրդ և մինչ այդ ամեն կերպ նպաստել ինքնապաշտպանության գործին:

Ազգային Համախորհրդակցությանը մասնակցում էին ՀՅԴ–ն, Ս. Դ. Հնչակը, ՀԺԿ–ն, սպեցիֆիկները, ՌՍԴ(բ)Կ, մենշևիկները և էսէռները:

ՀԺԿ–ն (Հայ ժողովրդական կուսակցություն) հիմնադրվել է 1917 թ. մարտի17–ին Թիֆլիսում հայ սահմանադրական–դեմոկրատների՝ կադետների կողմից, որոնք համախմբված էին «Մշակի» շուրջը: 1917 թ. սեպտեմբերին տեղի ունեցած ՀԺԿ 1–ին համագումարում ընդունվեց կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և ընտրվեց Կենտկոմի կազմը: Կենտկոմի նախագահ ընտրվեց Միք. Պապաջանյանը, փոխնախագահ՝ Ս. Հարությունյանը: Կուսակցության հայտնի գործիչներից էին Հ. Առաքելյանը, Լ. Ղուլյանը, Դ. Մելիք–Ղարագյոզյանը և ուրիշներ: Կենտրոնական օրգաններն էին «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), «Ժողովուրդ» (Երևան), «Ժողովրդական թերթ» (Աշխաբադ) թերթերը:

ՀԺԿ–ի դիրքորոշումն էր՝ Անդրկովկասի հայաբնակ վայրերում ստանալ տարածքային–ազգային, իսկ Ռուսաստանի հայաբնակ վայրերում՝ կուլտուր–ազգային ինքնավարություն: Արևմտյան Հայաստանի հարցը նրանք համարում էին միջազգային դիվանագիտության հարց: Ժողովրդականները խնդիր էին դնում վերականգնել հայ եկեղեցու բոլոր իրավունքները, ինչպես նաև բարեփոխումներ մտցնել եկեղեցու գործերում:

ՀԺԿ–ն ողջունեց Փետրվարյան հեղափոխությունը, կոչ արեց աջակցել ժամանակավոր կառավարությանը և գտնում էր, որ ազգային–սոցիալական բոլոր հիմնահարցերի լուծումը պետք է վերապահել հրավիրվելիք Սահմանադիր ժողովին:

Սոցիալ–դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ, «Սպեցիֆիկներ») ձևավորվել է 1903–ին՝ ժենևում, հետո տեղափոխվել Կովկաս: Կորիզը կազմել են ՀՅԴ–ից հեռացած մի խումբ մտավորականներ: Հիմնադիր գաղափարախոսներից էին Երվանդ Պալյանը, Գարեգին Կոզիկյանը (Եսալիմ), Բախշի Իշխանյանը և ուրիշներ: Ավելի ուշ նրանց միացավ Դավիթ Անանունը: Նրանք հաճախ էին խոսում Հայաստանի առանձնահատուկ՝ սպեցիֆիկ պայմանների մասին, և բոլշևիկները նրանց անվանեցին «սպեցիֆիկներ»: Նրանք դնում էին կուլտուր–ազգային ինքնավարության պահանջ:

Հայ մենշևիկներից էին՝ Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ), Արշակ Զուրաբյանը, Հայկ Ազատյանը, Արամայիս Երզնկյանը, Սիմոնիկ Փիրումյանը: Հայաստանի խորհրդայնացումից հետո նրանց մի մասը դարձան բոլշևիկներ:

Հայ էսէռների կուսակցությունը Ռուսաստանի էսէռական կուսակցության մասնաճյուղն էր, կոչվում էր Սոցիալիստ–հեղափոխական կուսակցության հայ կազմակերպություն: Ձևավորվել է 1907–ին, Բաքվում՝ Լևոն Աթաբեկյանի գլխավորությամբ: Նրանք ընդունում էին անհատական տեռորը, կողմնակից էին հողը գյուղացիներին բաժանելուն, մասնավոր սեփականությանը: Կուսակցության ակտիվ գործիչներից էին Լ. Աթաբեկյանը, Վ. Մինախորյանը, Գ. Մելիք–Շահնազարյանը, Հ. Ղազանչյանը և ուրիշներ:

Համախորհրդակցությանը մասնակցելու համար ընտրված էին 185 պատգամավոր՝ 10.000 բնակչից մեկը: Ամենաշատ՝ 91 պատգամավոր ուներ ՀՅԴ–ն, որը տվյալ ժամանակաշրջանում հայ ազգային–քաղաքական կյանքի տիրապետող և ուղղություն տվող ուժն էր:

Համախորհրդակցությանը մասնակցելու հրավեր ուղարկվեց նաև հայ բոլշևիկներին, սակայն ՌՍԴԲԿ բոլշևիկների՝ Թիֆլիսի կոմիտեի նախագահ Ա. Միկոյանը Համախորհրդակցության նախագահին գրավոր հայտնեց, որ իրենք բոյկոտում են համախորհրդակցությունը, որովհետև տվյալ պահին բոլշևիկների գլխավոր մտահոգությունը տեղի ունեցած բուրժուա–դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության փուլին հասցնելն է: Իսկ Շուշիում լույս տեսնող «Նեցուկ» թերթում բոլշևիկ Ներհակը (Աշոտ Հովհաննիսյան) գրեց, թե իրենք չեն կարող ժամավաճառ լինել այդ ազգային կատակերգության մեջ, քանի որ իրենց համար առաջնայինը բանվորական հարցն է ու դասակարգային պայքարը:

Օրակարգում բացառվում էր հայ ժողովրդի ազգային ինքնորոշման հարցը, որովհետև այդ փուլում հայ հասարակական–քաղաքական շրջանները ազգային վերածննդի հեռանկարը կապում էին միայն և *միայն Ռուսաստանի հետ:*

Համախորհրդակցությունը հանգեց այն որոշման, որ պետք է համախմբել բոլոր ուժերը՝ Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության համար:

Խորհրդակցությունը գտավ, որ Ռուսաստանի պետական կառուցվածքը պիտի լինի դաշնակցային (ֆեդերատիվ) հանրապետությունը: Անդրկովկասը պիտի ենթարկվի վարչական նոր բաժանման և այնտեղ պիտի մտցվի զեմստվային՝ տեղական ինքնակառավարում: Երկրամասում պիտի կազմավորվեն Ռուսաստանի հետ կապված երեք ազգային՝

հայկական, վրացական, թաթարական (ադրբեջանական) ինքնավար կենտրոններ:

Համախորհրդակցությունն ընտրեց երկու ղեկավար մարմին.

1. Ազգային ժողով՝ բաղկացած քաղաքական կուսակցությունների, խոշոր քաղաքների ազգաբնակչության, արևմտահայերի, զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներից: Այն ունենալու էր 35 անդամ, որից 25–ը՝ կուսակցություններից, 4–ը՝ Մոսկվայից, Պետրոգրադից, Նոր Նախիջևանից և Բաքվից, 1–ը՝ Կաթողիկոսի ներկայացուցիչ, 1–ը՝ Արևմտահայ ազգային խորհրդից, 2–ը՝ Օզակոմի ներկայացուցիչներ, 2–ը՝ Պետրոգրադի զինվորական և քաղաքական մարմինների ներկայացուցիչներ: Ազգային ժողովն ունենալու էր օրենսդրական իրավունքներ:

2. Ազգային խորհուրդ՝ բաղկացած քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից: Այն Ազգային ժողովի գործադիր մարմինն էր՝ բաղկացած 15 անդամներից.

1. Ավետիս Ահարոնյան (նախագահ) — դաշնակցական
2. Ռ. Տեր–Մինասյան — դաշնակցական
3. Խ. Կարճիկյան — դաշնակցական
4. Ն. Աղբալյան — դաշնակցական
5. Կ. Ղազարյան — դաշնակցական
6. Ա. Մանուկյան — դաշնակցական
7. Հ. Տեր–Օհանյան — էսէռ
8. Լ. Աթաբեկյան — էսէռ
9. Ղ. Տեր–Պետրոսյան — հնչակյան
10. Ա. Երզնկյան — մենշևիկ
11. Ս. Հարությունյան — ժողովրդական
12. Հ. Այվազյան — ժողովրդական
13. Տ. Բեկզադյան — անկուսակցական
14. Ս. Մամիկոնյան — անկուսակցական
15. Պ. Զաքարյան — անկուսակցական

Ավելի ուշ Ազգային խորհուրդներ ստեղծվեցին նաև Երևանում և Բաքվում:

Հայոց ազգային խորհուրդը դարձավ 1918 թ. ստեղծված Հայաստանի Հանրապետության սաղմ:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Սոցիալիստական հեղափոխությունն իրականացնելու նպատակով 1917 թ. հոկտեմբերի 16–ին ՌՍԴ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն վերջնական որոշում ընդունեց զինված ապստամբության մասին: Այն ղեկավարելու համար ընտրվեց Ռազմա–հեղափոխական Կենտրոն՝ ՌՀԿ, որի մեջ մտան Ա. Բուբնովը, Ֆ. Ձերժինսկին, Յա. Սվերդլովը, Ի. Ստալինը, Մ. Ուրիցկին, որը մտավ Ռազմա–հեղափոխական Կոմիտեի մեջ՝ իբրև նրա ղեկավար միջուկ:

Պետրոգրադում զինված ապստամբության բոլշևիկյան ուժերի ավանգարդը մայրաքաղաքի Կարմիր գվարդիան էր, որի մարտիկների թիվը հասավ 40 հազարի, որոնց պաշտպանում էին Ռուսաստանի այլ քաղաքների շուրջ 200 հազար կարմիրգվարդիականներ: Ապստամբության նախօրյակին Պետրոգրադի կայազորի հեղափոխական զինվորների թիվը հասնում էր 150 հազարի: Բոլշևիկների կողմն անցած Բալթիական նավատորմն ուներ ավելի քան 80 հազար նավաստի և շուրջ 700 մարտական և օժանդակ նավեր: Նրանց հետևից էին գնում ռազմաճակատների և թիկունքային կայազորների միլիոնավոր հեղափոխական զինվորները: Այդ ուժերը հենվում էին երկրի հեղափոխական բանվորների և չքավոր գյուղացիության վրա:

Ժամանակավոր կառավարությունը, հենվելով մենշևիկների և էսէռների վրա, հավաքում էր հակաբոլշևիկյան ուժերը, բայց արդեն նրա քաղաքական մեկուսացումն ակներև էր. ուժերի հսկայական գերակշռությունը հեղափոխության կողմն էր:

Հոկտեմբերի 24–ի երեկոյան Վ. Ի. Լենինը թողեց կոնսպիրատիվ բնակարանը և տեղափոխվեց հեղափոխության շտաբ՝ Սմոլնի:

Նախ և առաջ կարմիրգվարդիականները, հեղափոխական զինվորներն ու նավաստիները հսկողության տակ վերցրեցին Նևայի կամուրջները և քաղաքի կարևորագույն կետերը, գրավեցին Պետրոգրադի մատույցները՝ փակելով ռազմաճակատից մայրաքաղաք կանչված զորքերի ճանապարհը: Ժամանակավոր կառավարությունը ռեալ ուժ չուներ դիմադրություն ցույց տալու համար:

Հոկտեմբերի 25-ի առավոտյան հեղափոխական ուժերը գրավեցին երկաթուղային կայարանները, էլեկտրակայանները, Պետբանկը, փոստն ու հեռախոսակայանը, գլխավոր կառավարական հիմնարկները: Ձմեռային պալատը, Գլխավոր շտաբը, Մարիինյան պալատը և մի քանի այլ կետեր դեռևս մնում էին ժամանակավոր կառավարության ձեռքին:

Հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) առավոտյան ժամը 10-ին Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն հանդես եկավ «Ռուսաստանի քաղաքացիներին» կոչով, որով ազդարարվում էր հեղափոխության հաղթանակը և հայտարարվում, որ ժամանակավոր կառավարությունը տապալված է և իշխանությունն անցել է Պետրոգրադի խորհրդի օրգան ՌՀԿ-ի ձեռքը: Նույն օրը երեկոյան 10 անց 40 րոպեին Սմոլնիում բացվեց Բանվորների և զինվորների դեպուտատների Խորհուրդների Համառուսաստանյան Երկրորդ Համագումարը, որը երկրի աշխատավոր ժողովրդի անունից հռչակեց ամբողջ իշխանության անցումը Խորհուրդներին:

Հոկտեմբերի լույս 26-ի (նոյեմբերի 8-ի) գիշերվա ժամը 2-ն անց 10 րոպեին Ձմեռային պալատը գրոհով գրավվեց և ժամանակավոր կառավարությունը ձերբակալվեց: Հոկտեմբերյան զինված ապստամբությունը Պետրոգրադում հաղթանակեց:

Հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին) Վ. Ի. Լենինի զեկուցումից *հետո Խորհուրդների համագումարն ընդունեց Դեկրետ հաշտության* մասին և Դեկրետ հողի մասին:

Համագումարն ընտրեց Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտե՝ ՀԿԳԿ և ստեղծեց առաջին խորհրդային կառավարությունը՝ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ՝ ժողկոմխորհ՝ Վ. Ի. Լենինի նախագահությամբ:

Հակահեղափոխական ուժերը Կերենսկու, գեներալ Կրասնովի և Գերագույն հրամանատարի գլխավոր շտաբի պետ Դուխոնինի գլխավորությամբ խռովություն բարձրացրին՝ Խորհրդային իշխանությունը տապալելու նպատակով, որը հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13-ին) հեղափոխական ուժերի կողմից լիկվիդացվեց:

Պետրոգրադում զինված անարյուն ապստամբության հաղթանակից հետո, որի ընթացքում սպանվեց ընդամենը 6 և վիրավորվեց 50 մարդ, զինված ապստամբություն սկսվեց նաև Մոսկվայում: Այստեղ հեղափոխական ուժերը հանդիպեցին հակահեղափոխության դաժան դիմադրությանը: Հոկտեմբերի 25-ից (նոյեմբերի 7-ից) սկսած ընթացան համառ մարտեր, և միայն նոյեմբերի 2-ին (15-ին) Մոսկվայում հաստատվեց խորհրդային իշխանություն:

Հոկտեմբերի 25-27-ը (նոյեմբերի 7-9-ը) խորհրդային իշխանություն հաստատվեց Մինսկում, Կրոնշտադտում, Իվանովո-Վոզնեսենսկում, Լուգանսկում, Կազանում, Դոնի Ռոստովում, Եկատերինբուրգում, Ոնելում, Սամարայում, Սարատովում: Հետագա օրերին խորհրդային իշխանություն հաստատվեց Բաքվում՝ հոկտեմբերի 31-ին (Նոյեմբերի 13-ին), Տաշքենդում, Վլադիվոստոկում: Նոյեմբերի վերջերին իշխանությունը Խորհուրդներին անցավ 28 նահանգական քաղաքներում, բոլոր արդյունաբերական կարևորագույն կենտրոններում և գլխավոր ռազմաճակատներում: Կենտրոնում սկսված հեղափոխությունն անարգել տարածվեց ամբողջ երկրում:

Երկրի մի շարք շրջաններում տեղի ունեցան հակահեղափոխական խռովություններ, որոնք, սակայն, հեղափոխական ուժերի կողմից ճնշվեցին: 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. փետրվար խորհրդային իշխանություն հաստատվեց ողջ Ռուսաստանի հսկայական տարածքում, Ուկրաինայում, Մերձբալթիկայում, Բելոռուսիայում, Հյուսիսային Կովկասում, Սիբիրում, Ղազախստանում և Միջին Ասիայում:

Մի շարք պատճառների հետևանքով պայքարը խորհրդային *իշխանության համար Անդրկովկասում՝ ձգձգվեց մինչև 1920-1921 թվականները:*

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1917 թ. նոյեմբերի 2(15)-ին հրատարակվեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որտեղ տրված են խորհրդային իշխանության ազգային քաղաքականության հիմնական սկզ-

բունքները՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնող ժողովուրդների իրավահավասարություն և սուվերենություն, ազատ ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև Ռուսաստանից անջատվելն ու ինքնուրույն պետություն կազմելը, ազգային և կրոնական բոլոր տեսակի արտոնությունների ու սահմանափակումների վերացում, ազգային փոքրամասնությունների ազատ զարգացում:

Դեկլարացիային համապատասխան՝ խորհրդային Ռուսաստանը ճանաչեց Լեհաստանի և Ֆինլանդիայի անկախությունը, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթյան և մյուս ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը: Դեկլարացիան լիովին տարածվում էր նաև հայ ժողովրդի վրա:

Ռուսաստանի համար չափազանց մեծ կարևորություն ներկայացնող ազգային հարցի լուծմանը ցանկալի ընթացք տալու նպատակով կենտրոնական կառավարության համակարգում ստեղծվեց Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատ, որի կազմում գործում էին տարբեր ազգությունների կոմիսարիատներ: 1917 թ. դեկտեմբերին ժողկոմսովետի որոշմամբ ստեղծվեց նաև Հայկական գործերի կոմիսարիատը՝ անվանի հեղափոխական գործիչ, բոլշևիկ Վառլամ Ավանեսովի (Սուրեն Մարտիրոսյան) ղեկավարությամբ: Նրա տեղակալն էր հայ մեծ բանաստեղծ, բոլշևիկ Վահան Տերյանը: Կոմիսարիատն ուներ կուլտուր–լուսավորական, հրատարակչական, գաղթականության ու սոցիալական ապահովության, ռազմական, ինֆորմացիայի ու կապի, ագիտացիայի և վիճակագրության բաժիններ: Կոմիսարիատը կապեր ուներ Ռուսաստանի բոլոր հայաբնակ վայրերի հետ:

1917 թ. նոյեմբերի 2(15)–ին բոլշևիկներին հաջողվեց Բաքվում հռչակել խորհրդային իշխանություն, և ականավոր բոլշևիկ Ստեփան Շահումյանը դարձավ Բաքվի բանվորների և զինվորների սովետի գործկոմի նախագահ:

Անդրկովկասի ազգային քաղաքական կուսակցությունները թշնամաբար ընդունեցին Հոկտեմբերյան հեղափոխության լուրը և որոշեցին չճանաչել Ռուսաստանի խորհրդային իշխանությունը: Այդ առթիվ ահա թե ինչ է գրում Ս. Վրացյանը. «Հոկտեմբերյան հեղաշրջումը Թիֆլիսում հանդիպեց խիստ բացասական վերաբերումի: Բացի ընդհանուր պատճառներից, որով բոլշևիկյան կոմունիզմը նկատվում էր ցնորական մի ճիգ պատմությունը գիտական ընկերվարությունից (սոցիալիզմից — Մ. Կ.) դեպի ուտոպիա և, հետևաբար, աշխատավոր մարդկության

բնաշրջումը առողջ ճանապարհից շեղելու, Անդրկովկասում կային և հատուկ պատճառներ. վրացի սոցիալ–դեմոկրատ մենշևիկների համար բոլշևիզմը, նախ և առաջ, կուսակցական հակառակորդ էր... Հայերի համար հոկտեմբերյան հեղաշրջումը անընդունելի էր, ամենից առաջ, բոլշևիկների դեպի պատերազմն ու ճակատի պաշտպանության գործը բռնած դիրքի պատճառով. բոլշևիկների մեջ նրանք տեսնում էին քայքայող ուժ, մինչդեռ վայրկյանը պահանջում էր Ռուսաստանի հզորությունը: Մահմեդականների աչքին բոլշևիզմը դասակարգային թշնամի էր. մահմեդական ներկայացուցիչների մեծ մասը խաներ ու բեկեր էին» (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 53):

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԻ ԵՎ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ռուսաստանի նորաստեղծ խորհրդային իշխանությունը չճանաչելու, ընդգծված հակախորհրդային դիրքորոշման, Կենտրոնի հետ կապը կորցնելու և Օզակոմի վերջնական հեղինակազրկման պայմաններում բնականաբար առաջացավ Անդրկովկասյան տեղական նոր իշխանություն ստեղծելու պահանջը: Այդ նպատակով նոյեմբերի 15(28)–ին Թիֆլիսում հրավիրվեց մի խորհրդակցություն, որին մասնակցում էին Անդրկովկասի բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների, Թիֆլիսի բանվորների և զինվորների խորհրդի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի, Հանրային ապահովության կոմիտեի, Օզակոմի, քաղաքական կուսակցությունների և Սահմանադիր ժողովի պատգամավորների ներկայացուցիչներ: Քննարկելով ստեղծված իրավիճակը՝ խորհրդակցությունը որոշեց ստեղծել տեղական իշխանություն՝ Անդրկովկասյան Սեյմ՝ իբրև օրենսդիր մարմին և Անդրկովկասյան կոմիսարիատ՝ իբրև Սեյմի գործադիր մարմին: Սեյմի կազմության հիմք ընդունվեց Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի համար Անդրկովկասից ընտրված պատգամավորների քանակը. որոշվեց եռապատկել կուսակցական ցանկերով ընտրված պատգամավորների թիվը: Սեյմի նախագահ ընտրվեց մենշևիկ Նիկոլայ Չխեիձեն: Սեյմի անդամներից 32–ը մենշևիկներ էին (25 վրացի, 4 հայ, 2 ռուս, 1 գերմանացի), 30–ը՝ մուսավաթականներ, 27–ը՝ դաշնակցականներ: Կային նաև էսէռներ և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ, արտաքին հարաբերությունների ու աշխատանքի կոմիսար նշանակվեց Պետական դումայի անդամ, մենշևիկ Եվգենի Գեգեչկորին: Նոր կառավարությունը բաղկացած էր 12 կոմիսարներից: Ներքին գործերի կոմիսար նշանակվեց մենշևիկ Ա. Չխեենկելին, ռազմական և ռազմա–ծովային կոմիսար՝ էսէռ Դ. Դոնսկոյը, երկրագործության կոմիսար՝ էսէռ Ա. Ներուչը, առևտրի և արդյունաբերության կոմիսար՝ մուսավաթական Մ. Ջաֆարովը, հաղորդակցության կոմիսար՝ մուսավաթական Մելիք–Ասլանովը, արդարադատության՝ մուսավաթական Խան–Խոյսկին, պետական վերահսկիչ՝ մուսավաթական Բեբութովը:

Հայերին տրվեց երեք տեղ. ֆինանսների կոմիսար՝ դաշնակցական Խաչատուր Կարճիկյան, խնամատարության կոմիսար՝ դաշնակցական Համո Օհանջանյան, պարենավորման կոմիսար՝ հնչակյան Գևորգ Տեր–Ղազարյան:

Երկրամասի ժողովուրդներին ուղղված դեկլարացիայում Անդրկովկասյան կոմիսարիատը հայտարարեց, որ Կոմիսարիատը ժամանակավոր մարմին է և գոյություն է ունենալու մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի գումարումը: Սահմանադիր ժողովի ընտրությունները տեղի էին ունեցել 1917 թ. նոյեմբերի 12–ին: Այն բացվեց 1918 թ. հունվարի 5–ին և բոլշևիկների կողմից ցրվեց հաջորդ օրը՝ հունվարի 6–ին:

Իրականում Անդրկովկասյան առանձին կառավարության՝ Կոմիսարիատի ստեղծումը ուղղակիորեն նշանակում էր Անդրկովկասը կտրել Խորհրդային Ռուսաստանից, որը մեր խորին համոզմամբ չէր բխում անդրկովկասյան ժողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի շահերից ու կործանարար էր նրա համար:

Անդրկովկասում ստեղծված իրադրությունը չէր կարող չմտահոգել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, որն իր հերթին չէր ճանաչում Անդրկովկասյան Կոմիսարիատի իշխանությունը: ՌԽՖՍՀ Ժողկոմսովետի 1917 թ. դեկտեմբերի 16–ի նիստում քննարկելով Կովկասում ստեղծված դրությունը՝ որոշում կայացվեց կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ, բանվորների և զինվորների Բաքվի սովետի նախագահ Ստեփան Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար՝ մինչև Կովկասում խորհրդային իշխանության հաստատումը: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ 1918 թ. հունվարի 22–ին Ստ. Շահումյանը եկավ Թիֆլիս և անցավ

իր պարտականությունների կատարմանը: Արտակարգ կոմիսարի մանդատը և 500 հազար ռուբլի դրամ դարձյալ մեծ դժվարությամբ Թիֆլիս էր հասցրել լեգենդար Կամոն՝ Սիմոն Արշակի Տեր–Պետրոսյանը: Հունվարի 31–ին Թիֆլիսում ռուսերեն լույս տեսավ «Ժողկոմսովետի Կովկասյան տեղեկատուն», որտեղ հրատարակվեց Ստ. Շահումյանի դիմումը՝ ուղղված Կովկասի բոլոր խորհուրդներին, բանվորներին, զինվորներին և գյուղացիներին: Այնտեղ ասված էր. «Կովկասը կանգնած է անդունդի եզրին: Փրկեցեք նրան: Ստեղծեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա–գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը...» («Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. 7, էջ 27): Հունվարի 25–ին անդրերկաթուղու բանվորների ժողովում Ստ. Շահումյանը հանդես եկավ զեկուցումով, որից հետո ընդունված բանաձևում դատապարտվում է Անդրկովկասյան կոմիսարիատի հակախորհրդային քաղաքականությունը և պահանջվում է Անդրկովկասում հաստատել խորհրդային իշխանություն:

1918 թ. փետրվարի 14–ին Անդրկովկասյան կոմիսարիատն առաջարկեց Ստ. Շահումյանին՝ 24 ժամվա ընթացքում թողնել Վրաստանի սահմանները, և անցնելով ընդհատակ, փետրվարի 20–ին Ստ. Շահումյանը հարկադրված վերադարձավ Բաքու:

Ահա թե Ստ. Շահումյանի առիթով ինչ է գրում Ս. Վրացյանը. «Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը Ստ. Շահումյանին նշանակել էր Անդրկովկասի կոմիսար, և սա աշխատում էր հեղաշրջում առաջ բերել Թիֆլիսում: Բոլշևիկները ձգտում էին օգտագործել զորքը, որի մեջ նրանց ազդեցությունը օրեցօր ավելանում էր, և որին գրգռում էին Անդրկովկասյան Կոմիսարիատի դեմ, որը, իբր թե, Անդրկովկասը անջատել էր Ռուսաստանից: Փոխանակ բանակի մեջ վայելած համակրանքից օգտվելով՝ թուրքերի դեմ պատվար կանգնեցնելու, Շահումյանը և իր ընկերները ճգնում էին զինվորությանը մասնակից դարձնել Կոմիսարիատի դեմ մղած իրենց պայքարին և աստիճանաբար ճակատից հետ էին քաշում զորամասերը...» (Ս. Վրացյան, էջ 54):

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որն սկսվել էր դեռևս Փետրվարյան հեղափոխության օրերին, մեծ չափերով արագացավ: Հրապարակվել էր հողի մասին դեկրետը, և ռուսական բանակի ուշքն ու միտքը Ռուսաստան վերադառնալն էր, ուր հող էին բաժանում: Ուստի, ինչպես պատկերավոր նկարագրում է Ս. Վրացյանը, առանց սպասելու վերին հրամանատարության սահմանած կարգին, ռուս զինվորները մաս–մաս, հազարներով ու տասնյակ հազարներով լքում էին դիրքերը, թողնում բազմամիլիոն հարստություններ, ռազմամթերքի ու պարենի անհաշիվ պաշար և հրացանը գրկած՝ նետվում էին վագոնները, շտապում դեպի տուն: Նույն՝ Ս. Վրացյանի վկայությամբ՝ կովկասյան մահմեդականները թուրքերի թելադրանքով մի կողմից աշխատում էին արագացնել ռուսական զորքերի փախուստը, մյուս կողմից էլ փորձում էին հափշտակել նրանց զենքն ու զինամթերքը: Եվ այդ հողի վրա տեղի էին ունենում արյունալի ընդհարումներ նահանջող ռուսական զորամասերի ու մահմեդական ազգաբնակչության միջև:

Այդ կարգի ընդհարումներից ամենաբնորոշը Շամխորի կոտորածն էր, որը տեղի ունեցավ 1918 թ. հունվարի 9–12–ին, Թիֆլիս–Բաքու երկաթգծի Դալար և Շամխոր կայարանների միջև: Կովկասյան ռազմաճակատից տուն վերադարձող զինվորական էշելոնների վրա հարձակվեցին Անդրկովկասյան կոմիսարիատի ուղարկած զրահագնացքը՝ վրացի Աբխազավայի հրամանատարությամբ, ելիզավետպոլի (Գյանջա) մուսուլմանական ազգային խորհրդի կազմակերպած բանդաները՝ թուրք էսէռ Ասլան բեկ Սաֆիքյուրդսկու գլխավորությամբ և Մաղալովի գլխավորած «Վայրենի դիվիզիան»: Դարանակալած ոճրագործները մի քանի օր շարունակ գնդակոծում էին ռուսական էշելոնները: Հանկարծակիի եկած ռուս զինվորները կռվեցին մինչև հունվարի 20–ը և մի կերպ ճանապարհ բացեցին դեպի Բաքու՝ տալով մոտ 2000 սպանված ու վիրավոր: Մահմեդական խաժամուժին հաջողվեց գրավել 15 հազար հրացան, 70 գնդացիր, 20 թնդանոթ և այլ ռազմամթերք: Ինչպես վկայում է Ս. Վրացյանը, Սաֆիքյուրդսկին, հեծած առջևի թնդանոթին՝ հաղթականորեն մուտք գործեց Գանձակ (Ս. Վրացյան, էջ 57):

Իբրև արտակարգ կոմիսար՝ Ստ. Շահումյանը վճռական բողոք հայտնեց Շամխորի դեպքերի առիթով և այն համարեց մեծագույն ոճրագործություն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1917 թ. վերջերին Կովկասյան ռազմաճակատի քայքայումից և այնտեղից ռուսական զորքերի հեռանալուց հետո ազգային զորամասերի շուտափույթ կազմավորումը դարձավ օրվա հրամայական պահանջ:

1917 թ. նոյեմբերի 16–ին Մոգիլյովի զորակայանը պաշտոնապես կարգադրեց ռուսաստանյան բանակային կորպուսների համաձայն կազմավորել Հայկական կորպուս, ուստի կորպուսի ձևավորման սկիզբ պետք է համարել այդ հրամանը տալու օրը՝ 1917 թ. նոյեմբերի 16–ը (տե՛ս Ա. Նազարյան, Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում, Երևան, 1999, էջ 150):

1917 թ. նոյեմբերի 19–ին, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկու հրամանով սկսվեց Հայկական բանակային կորպուսի անմիջական ձևավորման գործընթացը: Պրժևալսկու հմր. 796 կարգադրությամբ կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ–մայոր Թովմաս Նազարբեկյանը (1855–1931): Դեռևս Դիլմանի ճակատամարտում (1915 թ. ապրիլի 16–18) տարած փայլուն հաղթանակի համար նա, իբրև 2–րդ կովկասյան հրաձգային դիվիզիայի պետ, պարգևատրվել էր Գեորգինյան խաչով:

1917 թ. նոյեմբերի 30–ի հմր. 136 հրամանով գեներալ Պրժևալսկին որոշեց Հայկական կորպուսի կառուցվածքային կազմը, որը վերջնականապես հաստատվեց դեկտեմբերի 6–ի հմր. 142 հրամանով, ըստ որի՝ կորպուսի մեջ մտան 1–ին և 2–րդ հայկական հրաձգային դիվիզիաները, Հայկական առանձին հեծելազորային բրիգադը, կորպուսի օժանդակ զորամասերը:

Հայոց ազգային խորհրդի կողմից Դրոն (Դրաստամատ Կանայան) նշանակվել էր գոյություն ունեցող և ստեղծվելիք հայկական բոլոր զորամասերի ընդհանուր կոմիսար:

1918 թ. փետրվարի դրությամբ Հայկական բանակային կորպուսն ուներ հետևյալ կառուցվածքային և հրամանատարական կազմը.

Կորպուսի հրամանատար՝ գեներալ–մայոր Թովմաս Նազարբեկյան, շտաբի պետ՝ փոխգնդապետ Սկլյարևիչ, հրետանու պետ՝ գնդապետ Կոստանդին Համազյան (Գամազով):

Փետրվարի 25–ին շտաբը ժամանեց Ալեքսանդրապոլ:

Առաջին դիվիզիա–հրամանատար՝ գեներալ–մայոր Մովսես Սիլիկյան, օգնական՝ գնդապետ Դանիել–բեկ Փիրումյան, շտաբի պետ՝ կապիտան Ա. Վեքիլյան:

Դիվիզիայի մեջ մտնող 1–ին գունդը (գնդապետ Կարաքեշիշյան) գտնվում էր Էրզրումում, 2–րդ գունդը (գնդապետ Սամարցյան)՝ Խնուսում, 5–րդը (գնդապետ Պ. Փիրումյան)՝ Վանում, 7–րդը (գնդապետ Ալ. Բեյ–Մամիկոնյան)՝ Սարիղամիշում, 1–ին հրետանային բրիգադը (գնդապետ Ք. Արարատյան)՝ Թիֆլիսում:

Երկրորդ դիվիզիա–հրամանատար՝ գեներալ–մայոր Միքայել Արեշյան, օգնական՝ գնդապետ Ա. Տեր–Սարգսյան, շտաբի պետ՝ գնդապետ Պ. Աքայան:

Դիվիզիայի կազմի մեջ մտնող 3–րդ գունդը (գնդապետ Փիրումյանց) գտնվում էր Թիֆլիսում, 4–րդ գունդը (գնդապետ Ա. Հովսեփյան)՝ Էրզրումում, 6–րդ գունդը (գնդապետ Մ. Մելիք–Սուրադյան)՝ Ղամարլու–Մակու շրջանում, 8–րդ գունդը (իշխան Հ. Արղության)՝ Ղարաքիլիսայում, 2–րդ հրետանային բրգադը (գնդապետ Կոստանյան)՝ Ալեքսանդրապոլում:

Հեծելազորային բրիգադ — հրամանատար՝ գնդապետ Նիկոլայ Ղորղանյան:

Բրիգադի մեջ մտնող 1–ին հեծյալ գունդը (կապիտան Հ. Փիրումյան) գտնվում էր Թիֆլիսում, 2–րդ հեծյալ գունդը (փոխգնդապետ Ջալինյան)՝ Էջմիածնում:

Բացի այդ, Ալեքսանդրապոլում, Բաքվում, Կարսում, Երևանում, Թիֆլիսում, Նախիջևանում կային պահեստային գնդեր և գումարտակներ, հեծյալ հարյուրակներ, որոնք նույնպես մտնում էին Հայկական բանակային կորպուսի մեջ: Արդեն 1918 թ. գարնան սկզբին Հայկական բանակային կորպուսում կար հետևակային 16 գունդ, 6 գումարտակ, 3 հեծյալ գունդ, 2 հրետանային բրիգադ՝ 8 մարտկոց, մեկ ավիաջոկատ՝ 3 ինքնաթիռով, 3 ավտոմոբիլային վաշտ, օժանդակ այլ զորամասեր: Սակայն այդ զորամասերի մեծ մասը հաստիքային կազմի առումով լրացված չէր: Գործող զորամասերում գտնվում էր ընդամենը 7790 մարտիկ՝ 6970 հետևակային և 820 հեծելազորային: Ներքին ու արտաքին բարդ

պայմաններում կորպուսի անձնակազմը հաստիքային քանակությանը համապատասխան համալրելն այդպես էլ չհաջողվեց:

Արևմտահայ զինուժը: 1917 թ. դեկտեմբերի 12–ին Թիֆլիսի Հայոց թեմի առաջնորդարանում գումարվեց Արևմտահայ ազգային խորհրդի ընդլայնված խորհրդաժողովը, որը քննարկեց ռազմաճակատի պաշտպանության գործում արևմտահայերի ռազմական մասնակցության հարցը: Որոշվեց ստեղծել արևմտահայերից կազմված երկրապահ դիվիզիա: Ընդունված որոշումների իրագործման համար Արևմտահայ ազգային խորհրդի կազմից ընտրվեց գործադիր մարմին՝ Հայաստանի ապահովության խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Վ. Փափազյանը, անդամներ՝ Սեպուհը, Կարո Սասունին, Ա. Թերզիբաշյանը, Ժ. Միրզախանյանը, Հ. Գալիկյանը և ուրիշներ: Հայոց ազգային խորհրդի և Արևմտահայ խորհրդի միացյալ նիստում որոշվեց (9 կողմ, 3 դեմ) երկրապահ դիվիզիայի հրամանատար նշանակել Անդրանիկին: Գեներալ Մ. Սիլիկովն ստացավ մեկ ձայն:

Կովկասյան ռազմաճակատի ռուսական բարձր հրամանատարությունը Արևմտահայ դիվիզիայի ձևավորման համար հսկայական միջոցներ ու սպայական կադրեր տրամադրեց: Գլխավոր հրամանատար Պրժևալսկու 1917 թ. դեկտեմբերի 15–ի հրամանով ենթապորուչիկ Անդրանիկ Օզանյանը պարգևատրվեց սուրբ Վլադիմիրի 4–րդ աստիճանի սրով ու ժապավենով և սուրբ Ստանիսլավի 2–րդ աստիճանի սրով: Մեկ շաբաթ անց՝ 1917 թ. դեկտեմբերի 22–ին, Պրժևալսկու հմր. 167 գաղտնի հրամանով Արևմտահայ դիվիզիան անվանվեց Հատուկ հայկական հրաձգային դիվիզիա, որի հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանը: Նրա կազմի մեջ մտան կամավորական սկզբունքով ձևավորված հայկական հետևակային չորս՝ Էրզրումի, Ղարաքիլիսայի, Խնուսի և Վանի գնդերը, հեծյալ մեկ գունդ, պահեստի մեկ գունդ, լեռնային 6 մարտկոց, 2 գնդացրային պարկ: Ծախսերը հոգալու էր Արևմտյան Հայաստանի գեներալ–կոմիսարի շտաբը:

Ռուսական բանակի կանոնակարգով դիվիզիայի հրամանատարը պետք է ունենար գեներալի աստիճան: Գեներալ Պրժևալսկու զեկույցի հիման վրա Անդրկովկասյան կոմիսարիատը որոշում կայացրեց Անդրանիկին տալ գեներալ–մայորի աստիճան:

Գեներալ Պրժևալսկու 1918 թ. հունվարի 4–ի հմր. 32 հրամանով կազմավորվեցին ևս երեք արևմտահայ հրաձգային գնդեր և գոյություն

ունեցող 7 գնդերի հիման վրա կազմավորվելու էին երեք առանձին հայկական հրածգային բրիգադներ:

1918 թ. հունվարի 16–ի հմր. 77 հրամանով Կովկասյան ռազմաճակատի զորքերի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ Լեբեդինսկին կարգադրեց արևմտահայերից կազմավորել ավելի խոշոր զորամիավորում՝ Հատուկ հայկական հավաքական ջոկատ, որը կարող էր ունենալ դիվիզիայից (18–20 հազար) ավելի՝ մինչև 30 հազար կազմ: 1918 թ. հունվարի 23–ին գեներալ Լեբեդինսկին տեղեկացրեց գեներալ–կոմիսար Պ. Ավերյանովին, որ Հատուկ հավաքական ջոկատի հրամանատար նախատեսված Անդրանիկ Օզանյանին շնորհվել է զաուրյադ (դերակալ) գեներալ–մայորի աստիճան: Դա նշանակում էր գեներալ–մայորի պաշտոնակատար, քանի որ Անդրանիկը զինվորական կրթություն չուներ, բայց նրան ենթարկվում էին գնդապետներ, փոխգնդապետներ, կապիտաններ, պորուչիկներ: Անդրանիկի՝ գեներալ Թ. Նազարբեկյանին ենթարկվածությունը կրում էր սոսկ անվանական բնույթ:

1918 թ. փետրվարի կեսերին Հատուկ հայկական հավաքական ջոկատն ուներ հետևյալ կառուցվածքն ու հրամանատարական կազմը.

Ջոկատի հրամանատար՝ դերակալ գեներալ–մայոր Անդրանիկ Օզանյան, շտաբի պետ՝ գնդապետ Միխայիլ Ջինկնիչ:

1–ին հատուկ բրիգադ — հրամանատար՝ գնդապետ Մորել: Կազմը՝ Էրզրումյան հետևակային գունդ (գնդապետ Թորգոմ Արսենյան), Երզնկայի հետևակային գունդ (կապիտան Կարապետ Հասանփաշայան), մեկ պահեստային, մեկ հեծյալ գունդ, լեռնահրետանային դիվիզիան, գնդացրային պարկ:

2–րդ հատուկ բրիգադ — հրամանատար՝ գնդապետ Դ. Հովսեփյան: Կազմը՝ Ղարաքիլիսայի (փոխգնդապետ Արեշյան) և Խնուսի (փոխգնդապետ Գեղամյան) հետևակային գնդերը, օժանդակ զորամասեր:

3–րդ հատուկ բրիգադ — հրամանատար՝ գնդապետ Տ. Բաղդասարյան: Կազմը՝ Վանի երեք հետևակային գնդերը, Մակվի, Զեյթունի գնդերը, հրետանային դիվիզիան, գնդացրային պարկ:

Ջոկատի կազմում էին նաև Մուրադի, Սեպուհի, Պանդուխտի, Դալի Ղազարի և այլոց գլխավորած կամավորական խմբերը և ժողովրդական միլիցիայի զորամիավորումները:

Ըստ զորավար Անդրանիկի տվյալների՝ Հատուկ հավաքական ջոկատի կազմում կար 9000 կանոնավոր զորք և 16.000 անկանոն ուժ, երկուսը միասին՝ 25.000:

«ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԱՍԻՆ ԴԵԿՐԵՏԸ

1917 թ. նոյեմբերին ՌԽՖՍՀ ժողկոմսովետը ստեղծեց կառավարական հանձնաժողով՝ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դեկրետի նախագիծ մշակելու նպատակով: Հանձնաժողովի մեջ մտնում էին Ի. Ստալինը, Վ. Ավանեսովը, Վ. Տերյանը, Ս. Լուկաշինը, ձախ էսէռ Պ. Պռոշյանը, մենշևիկ Աքսելրոդը, դաշնակցական Ս. Զորյանը (Ռոստոմ): Հանձնաժողովը կազմեց զեկուցագիր Արևմտյան Հայաստանի մասին և դեկրետի նախագիծ, որը ներկայացվեց ՌԽՖՍՀ ժողկոմսովետի քննարկմանը:

Արևմտյան Հայաստանի մասին համառոտ զեկուցագրում ներկայացվում էր արևմտահայերի դառը ճակատագիրը, նրանց բնաջնջման ընթացքը: Ցույց էր տրվում, որ եթե դեռևս 17–րդ դարում հայերն իրենց հայրենիքում կազմում էին բնակչության 98 տոկոսը, ապա 1914–ին արդեն կազմում էին միայն 42 տոկոս, իսկ մնացած 58 տոկոսը հույներ, քրդեր, եզդիներ, ղզլբաշներ և թուրքեր էին: Եվ, այնուամենայնիվ, պատերազմն սկսվելուց առաջ հայերը ամենամեծ թիվը կազմող ազգային խումբն էին, իսկ բոլոր մուսուլմանները միասին 38 տոկոս էին: Ներկայացվում էր նաև 1915 թ. ցեղասպանությունը արևմտահայության նկատմամբ:

Զեկուցագրի ոգով էլ կազմված էր դեկրետի նախագիծը, որով նախատեսվում էր անհրաժեշտ քանակությամբ ռուսական զորքեր թողնել Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթներում, մինչև որ ազատ քվեարկությամբ կորոշվի Արևմտյան Հայաստանի անկախության հարցը և կկազմակերպվի հայկական ժողովրդական միլիցիա: Ըստ Բ. Բորյանի՝ դեկրետի նախապատրաստման և ընդունման գործում վճռական դեր է խաղացել Ստ. Շահումյանը:

1917 թ. դեկտեմբերի 29–ին ՌԽՖՍՀ ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկեց և ընդունեց դեկրետ Արևմտյան Հայաստանի մասին, որը հրապարակվեց դեկտեմբերի 31–ին: Դեկրետում ասվում էր. «Ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարում է հայ ժո-

դովրդին, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»:

Ժողկոմսովետը դեկրետի կենսագործման համար անհրաժեշտ էր գտնում ապահովել հետևյալ պայմանները. 1. զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը, 2. տարբեր երկրներում ցրված գաղթական հայերի, վտարանդիների, ինչպես նաև պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն աքսորված հայերի անարգել վերադարձը Արևմտյան Հայաստան, 3. Արևմտյան Հայաստանի ժամանակավոր կառավարության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի Դեպուտատների խորհրդի ձևով:

Դեկրետի կենսագործումը դրվում էր Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի վրա:

Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարը հաստատեց դեկրետը:

Սակայն մի շարք արտաքին ու ներքին աննպաստ պայմանների պատճառով հայ ժողովրդի բաղձանքներին համահունչ այդ դեկրետը չիրագործվեց, մնաց թղթի վրա: Նախ և առաջ Խորհրդային Ռուսաստանի վրա հարձակումը վերսկսեց Գերմանիան և նրան պարտադրեց Բրեստ–Լիտովսկի թալանչիական պայմանագիրը, որով Խորհրդային Ռուսաստանից անջատվեց մոտ 1 միլիոն քառ կմ. տարածք՝ 46 միլիոն բնակչությամբ: Դրան զուգահեռ 1918 թ. հունվարի վերջերին Արևմտյան Հայաստան ներխուժեցին թուրքական զորքերը: Ռուսական բանակում ստեղծված դեմոբիլիզացիոն իրավիճակի պայմաններում Խորհրդային Ռուսաստանն ի վիճակի չէր կանխելու թուրքերի առաջխաղացումը: Բացասական դեր կատարեց նաև Անդրկովկասյան սեյմի հակախորհրդային դիրքորոշումը:

Չնայած Արևմտյան Հայաստանի մասին ՌՍՖՍՀ Ժողկոմսովետի դեկրետը չիրագործվեց, սակայն այն ունեցավ պատմական նշանակություն. դրանով խորհրդային կառավարությունը ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքները Արևմտյան Հայաստանում (Լ. Խուրշուդյան. ՌՍՖՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, Բանբեր Երևանի համալսարանի, 1987, հ. 3):

Ակադեմիկոս Գ. Գալոյանն ավելի է լայնացնում դեկրետի պատմական նշանակության շրջանակները: Այդ առթիվ նա գրում է. «Խորհրդային կառավարության հրովարտակն ինքնին ուներ քաղաքական լուրջ հնչեղություն, քանի որ միջազգային դիվանագիտական փաստաթղթերում առաջին անգամ էր դրվում Արևմտյան Հայաստանին լրիվ անկախություն տալու հարցը: Սրանում էր այդ հրովարտակի պատմական նշանակությունը:

Այսուհետ անհնար դարձավ Հայաստանին անկախություն տալու հարցի չնկատելն ու շրջանցելը, իսկ հետագայում այն վճռորոշ նշանակություն ունեցավ Սևրում թուրքերի հետ դաշնակիցների պայմանագիրը կնքելիս:

Չի կարելի բացառել նաև այն իրողությունը, որ այդ հրովարտակի ազդեցության տակ դաշնակից տերությունները, այդ թվում և ԱՄՆ–ը, պետական մակարդակով բազմաթիվ որոշումներ ընդունեցին Հայաստանին անկախություն տալու վերաբերյալ» (Գալուստ Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 21):

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ 1918 Թ. ԳԱՐՆԱՆԸ

Դեռևս 1917 թ. դեկտեմբերի 2(15)–ին Բրեստ–Լիտովսկում զինադադար կնքվեց Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո–Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա) միջև՝ 28 օրով, դեկտեմբերի 4–ից մինչև 1918 թ. հունվարի 1(14)–ը, որը կարող էր խախտվել 7 օր առաջ նախազգուշացնելուց հետո միայն: Զինադադարը տարածվում էր նաև Կովկասյան ռազմաճակատի վրա:

Սակայն Անդրկովկասյան Կոմիսարիատը, որը չէր ճանաչում Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, գեներալ Վիշինսկու գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Երզնկա, որտեղ 1918 թ. դեկտեմբերի 5(18)–ին կնքվեց «Պայմանագիր պատերազմի Կովկասյան–թուրքական ռազմաբեմում գործող ռուսական ու թուրքական բանակների միջև զինադադարի մասին»: Զինադադարը կնքվեց մինչև հաշտության պայմանագրի կնքումը և կարող էր խախտվել այդ մասին 14 օր առաջ զգուշացնելուց հետո միայն:

1917 թ. դեկտեմբերի 9(22)–ին սկսվեցին Բրեստ–Լիտովսկի հաշտության բանակցությունները, որտեղ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավարն էր Ա. Իոֆֆեն: Խորհրդային կառավարությունը Վահան Տերյանին նշանակեց պատվիրակության կազմում հայկական հարցի խորհրդական, որին Վ. Լենինի ստորագրությամբ տրվեց վկայական: Պատվիրակության քարտուղարն էր հայ բոլշևիկ Լևոն Կարախանը:

Սակայն բանակցությունների ընթացքում Գերմանիան Խորհրդային Ռուսաստանին վերջնագիր ներկայացրեց և խախտելով 7 օրվա մասին պայմանավորվածությունը՝ անցավ հարձակման:

Գերմանացիների հարձակումից էլ առաջ՝ 1918 թ. փետրվարի 12–ին, խախտելով Երզնկայի զինադադարը և պատճառ բռնելով այսպես կոչված «հայկական գազանությունները»՝ Կովկասյան ռազմաճակատում հարձակում սկսեցին թուրքերը: Նույն օրը թուրքական բանակը գրավեց Երզնկան, հաջորդ օրը՝ Բայբուրդը: Փետրվարի 24–ին թուրքերը գրավեցին Տրապիզոնը, իսկ Էրզրումի ռազմաճակատում՝ Մամախաթունը:

Այդ օրերին Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած ուժերին համառ դիմադրություն էին ցույց տալիս հայկական փոքրաթիվ ուժերը՝ գնդապետ Մորելի գլխավորությամբ:

Ալեքսանդրապոլում համալրելով իր ուժերը՝ ռազմաճակատ մեկնեց Անդրանիկը: Նրա առջև խնդիր էր դրված պաշտպանել Էրզրումն ու նրա շրջակայքը: Փետրվարի 18–ին Անդրանիկը մեծ դժվարությամբ հասավ Էրզրում և քաղաքը գտավ խուճապի մատնված: Նա ձեռնամուխ եղավ քաղաքի պաշտպանության կազմակերպմանը: Հայերի փախուստը դադարեց:

Էրզրումի շրջանում ահեղ մարտեր սկսվեցին 1918 թ. փետրվարի վերջերին, որոնք տևեցին երկու շաբաթից ավելի: Այդտեղ թուրքերի դեմ կռվում էին Անդրանիկի կամավորական դիվիզիան և առաջին հայկական հետևակային բրիգադը՝ գնդապետ Մորելի հրամանատարությամբ: Հարձակվող թուրքական զորքերը թվակազմով երեք անգամ գերակշռում էին հայկական ուժերին: Անդրանիկն աներևակայելի ջանքեր էր թափում, բայց ապարդյուն: Հայկական զորքերն սկսեցին հետ քաշվել: Նահանջել սկսեցին նաև ռազմաճակատի զորքերը՝ Բեժանբեկովի հրամանատարությամբ: Մարտի 12–ին թուրքական զորքերը գրավեցին Էրզրումը:

Մինչ այդ, 1918 թ. փետրվարի 10(23)–ին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասյան Սեյմը, որի մեջ մտան դեռևս 1917–ի նոյեմբերին Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորները: Ընտրությունների արդյունքում վրաց մենշևիկներն ստացել էին 12, ադրբեջանական մուսավաթը՝ 10, դաշնակցականները՝ 9 մանդատ: Այդ թվերը եռապատկվեցին և Սեյմում ընդգրկվեցին համապատասխանաբար 36, 30 և 27 պատգամավորներ: Կային նաև էսէռներ և այլ կուսակցությունների ներկայացուցիչներ՝ ընդհանուր թվով 125 պատգամավոր: Սեյմի նախագահ ընտրվեց մենշևիկ Ն. Չխեիձեն:

Սեյմը, անընդունակ լինելով դիմադրություն կազմակերպելու հարձակվող թուրքերին, համաձայնեց հաշտության բանակցություններ սկսել Տրապիզոնում:

1918 թ. փետրվարի 16–ի նիստում Սեյմը գործնականորեն զբաղվեց Տրապիզոնում կնքվելիք հաշտության խնդրով: Միաձայնությամբ ընդունվեց հաշտության հետևյալ հիմնական պայմանները.

1. Ստեղծված պայմաններում Անդրկովկասյան Սեյմը իրեն համարում է իրավատեր՝ կնքելու հաշտություն Թուրքիայի հետ:

2. Կնքվելիք հաշտության դաշնագրին իբրև հիմք պիտի դրվի 1914 թ. ռուս–թուրքական սահմանը, որը գոյություն ուներ նախքան պատերազմը:

3. Պատվիրակությունը ջանալու է ձեռք բերել Արևելյան Անատոլիայի ժողովուրդների՝ հայերի, ասորիների, լազերի համար ինքնորոշման իրավունք և, ի մասնավորի, Թուրքահայաստանի համար ինքնավարություն՝ թուրքական պետության շրջանակներում: Հայերի համար առանց այն էլ ծանր այդ կետը ընդունվեց մեծ դժվարությամբ, որովհետև մուսավաթականները դա համարում էին միջամտություն «եղբայրական Թուրքիայի» ներքին գործերին:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեյմի 5–րդ՝ փետրվարի 17–ի նիստում հաստատվեց Տրապիզոն մեկնող պատվիրակության կազմը՝ Ա. Չխենկելի (նախագահ) և 11 անդամներ, այդ թվում հայերից՝ Հովհ. Քաջազնունի և Ալ. Խատիսյան: Պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) և Ռուբեն Տեր–Մինասյանը պատվիրակության մեջ մտան իբրև խորհրդականներ:

Պատվիրակությունը նույն օրը՝ փետրվարի 17–ին, պիտի մեկներ Տրապիզոն, երբ ստացվեց Բրեստ–Լիտովսկի բանակցություններում խորհրդային պատվիրակության քարտուղար Լևոն Կարախանի հեռագիրը, որով հայտնվում էր, որ փետրվարի 4–ին գերմանացիները ներկայացրել են նոր վերջնագիր և մերժել են մինչև դաշնագրի ստորագրումը դադարեցնել ռազմական գործողությունները, ուստի իրենք որոշել են ստորագրել դաշնագիրը, որը դեռևս քննարկման ընթացքում է: Տեղեկացվում էր նաև, որ վերջնագրի ամենածանր կետն է Արդահանի, Կարսի և Բաթումի անջատումը Ռուսաստանից:

Լ. Կարախանի հեռագիրը վրդովմունք առաջացրեց Սեյմում, որտեղ ընդունվեց բողոքի հետևյալ հեռագիրը. «Բրեստ–Լիտովսկ՝ հաշտության խորհրդաժողովին, Պետրոգրադ՝ Սովնարկոմին, Լոնդոն, Փարիզ, Վաշինգտոն, Հռոմ, Տոկիո, Կ. Պոլիս, Բեռլին, Վիեննա՝ արտաքին գործոց նախարարներին, Կիև՝ Կենտրոնական ռադային, Օդեսա՝ Սովդեպին. Համաձայն Սեյմի վճռի՝ Անդրկովկասյան կառավարության Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերող ամեն մի դաշնագիր, որ կնքվում է առանց իր գիտության ու մասնակցության, համարվում է զուրկ միջազգային արժեքից և պարտավորեցուցիչ ուժից իրեն համար: Այսու հայտնվում է նաև ի գիտություն հանրության, որ Անդրկ. Սեյմը արդեն ընտրել է հաշտության պատվիրակություն, որն ըստ Թուրքիայի հետ կայացված նախնական համաձայնության, պատրաստվում է մեկնել Տրապիզոն՝ վերջնական հաշտություն կնքելու նպատակով» (Ս. Վ., էջ 83):

Անդրկովկասյան պատվիրակությունը Տրապիզոնի նավահանգիստ հասավ փետրվարի 23–ին միայն: Պատվիրակությունը մի քանի օր ստիպված էր մնալ նավում, քանի որ թուրքական պատվիրակությունը դեռ չէր ժամանել, իսկ քաղաքը գրավված էր թուրքական զորքերի կողմից:

Վերջապես փետրվարի 27–ին Տրապիզոն հասավ 5 հոգուց կազմված թուրքական պատվիրակությունը՝ նախկին ծովային մինիստր Ռաուֆ բեյի գլխավորությամբ, և անդրկովկասյան պատվիրակությանը թույլ տրվեց նավից իջնել ցամաք:

Տեսնելով անդրկովկասյան բազմամարդ պատվիրակությանը (40–ից ավելի մարդ), թուրքերը հեգնանքով ասացին, որ եթե նրանք եկել են Տրապիզոնը գրավելու նպատակով, քիչ են, իսկ եթե եկել են բանակցելու համար՝ չափազանց շատ են:

Տրապիզոնի հաշտության կոնֆերանսը բացվեց 1918 թ. մարտի 1–ին: Արևելյան շողոքորթությամբ ու ճռռոմ լեզվով բացելով կոնֆերանսը՝ Ռաուֆ բեյը կտրուկ պահանջ դրեց ստույգ հայտարարություն անել Անդրկովկասյան հանրապետության էության, ծնի, քաղաքական ու վարչական կազմակերպության մասին և հարցում արեց, թե արդյո՞ք կատարված են այն պայմանները, որոնք պահանջվում են միջազգային իրավունքով պետություն կազմելու համար:

Հաջորդ՝ մարտի 2–ի նիստում, Անդրկովկասյան պատվիրակությունը պատասխանեց, թե առաջադրված հարցերը հերթի են դրված Անդրկովկասյան Սեյմում, որն ստեղծված է ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքով, իսկ Անդրկովկասը դեռ ֆակտո պետություն է, որը դեռ չի հայտարարել պետություններին իր անկախությունը:

Մարտի 3–ի նիստում Ռաուֆ բեյը հայտարարեց, որ Անդրկովկասյան պետության կազմակերպությունը չի համապատասխանում միջազգային իրավունքին և այդ պետությունը դեռ հայտարարություն չի արել իր անկախության մասին, ուստի Օսմանյան կառավարությունը խնդրում է պաշտոնական հայտարարություն անել այդ մասին:

Անդրկովկասյան պատվիրակության վիճակն էլ ավելի ծանրացավ, երբ նույն օրը՝ 1918 թ. մարտի 3–ին կնքվեց Բրեստ–Լիտովսկի թալանչիական հաշտության պայմանագիրը, որով հոգուտ Քառյակ միության, Ռուսաստանից գավթվում էր մոտ մեկ միլիոն քառ. կմ տարածք: Խլվում էին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսն ու Արդահանը: Պայմանագրի 4–րդ հոդվածում, որը նվիրված էր Կովկասին, ասված է. «Ռուսաստանը կանի իրենից կախված ամեն ինչ, որպեսզի ապահովի Արևելյան Անատոլիայի պրովինցիաների արագ մաքրումը և նրանց կանոնավոր վերադարձը Թուրքիային: Արդահանի, Կարսի ու Բաթումի օկրուգները ևս անհապաղ մաքրվում են ռուսական զորքերից: Ռուսաստանը չպետք է խառնվի այդ օկրուգների պետական–իրավական և միջազգային–իրավական հարաբերությունների նոր կազմակերպմանը, այլ այդ օկրուգների բնակչությանը կվերապահի նոր իրավակարգի հաստատումը՝ հարևան պետությունների, հատկապես Թուրքիայի համաձայնությամբ» (Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 104–105):

Խորհրդային պատվիրակությունը հանդես եկավ հատուկ դեկլարացիայով, որի մեջ ընդգծվում է, թե տվյալ հաշտությունը ոչ թե համաձայնության արդյունք է, այլ մի կողմի բռնի ուժի թելադրանք մյուսին,

ուստի և այն անեքսիոնիստական է ու իմպերիալիստական: Դեկլարացիայում Արդահանի, Կարսի ու Բաթումի մասին ասված է, որ Գերմանիան այդ մարզերը խլում է հօգուտ Թուրքիայի, որոնք ոչ մի անգամ չեն գրավվել թուրքական զորքերի կողմից:

Բրեստ–Լիտովսկում, բացի հիմնական պայմանագրից, ստորագրվեց նաև «Ռուս–թուրքական լրացուցիչ պայմանագիր», որը նախատեսում էր ռուսական զորքերի էվակուացիա Արևելյան Անատոլիայի գրաված շրջաններից՝ 6–8 շաբաթվա ընթացքում: Ռուսաստանը սահմանագծում 150 կիլոմետրի վրա պետք է պահպաներ մեկ դիվիզիա, իսկ մնացած զորքերը, ինչպես նաև հայկական զորամասերը, պետք է զորացրվեին: Վերականգնվում էր 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից առաջ գոյություն ունեցած սահմանագիծը:

Սակայն կրկին վերադառնանք Տրապիզոն: Մարտի 7–ին, կոնֆերանսի 4–րդ նիստում Ա. Չխենկելին հայտարարեց, որ Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը պարտավորեցուցիչ և ընդունելի չէ Անդրկովկասի համար, որը պատրաստվում է Թուրքիայի հետ կնքել հաշտություն:

Ռաուֆ բեյը պատասխանեց, որ օսմանյան պատվիրակությունը պնդում է Բրեստ–Լիտովսկի դաշնագրի վրա և ավելացրեց, որ բանակցությունները շարունակելու համար Անդրկովկասը պետք է հռչակի իր անկախությունը: Մարտի 8–ի հինգերորդ նիստում Չխենկելին նորից ընդգծեց Բրեստ–Լիտովսկի դաշնագիրն իրենց կողմից մերժելու մասին, որին ի պատասխան՝ Ռաուֆ բեյը վճռականորեն հայտարարեց, որ դաշնագիր կնքելու համար բանակցությունները կարող են սկսվել միայն այն ժամանակ, երբ Անդրկովկասյան պատվիրակությունը հրաժարվի Բաթումի, Կարսի և Արդահանի սանջակների վրա ունեցած հավակնություններից: Իսկ ինչ վերաբերում է Թուրքահայաստանի ինքնավարության հարցին, ապա դա թուրքական ներքին խնդիր է և չի կարող քննության առնվել, որովհետև օսմանյան պատվիրակությունը թույլ չի տա միջամտել իր ներքին գործերին:

Բանակցություններն ընդհատվեցին, և Անդրկովկասյան պատվիրակությունը մի քանի հոգու, այդ թվում և Հ. Քաջազնունուն, ուղարկեց Թիֆլիս՝ նոր հրահանգներ ստանալու համար: Մարտի 13–ի նիստում Սեյմը որոշում ընդունեց պատվիրակության ղեկավար Ն. Չխենկելուն արտակարգ լիազորություններ տալու մասին:

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

Էրզրումի անկումով (1918 թ. մարտի 12) փաստորեն ամբողջ Թուրքահայաստանը նորից անցավ թուրքերի ձեռքը և հայկական շրջանները նորից դարձան ավերակ ու անմարդաբնակ: Թուրքերի դեմ դիմադրությունը փաստորեն ստացավ հայ–թուրքական պատերազմի բնույթ, և բացառապես հայ ժողովրդից էր կախված պատերազմի վախճանը: Անդրկովկասյան Սեյմը ոչ միայն չէր նպաստում պատերազմին, այլև իր ներքին հակամարտություններով ավելի էր թուլացնում ճակատի պաշտպանության գործը:

1918 թ. մարտի 2–ին Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը նշանակվեց ճակատի հրամանատար, որը ձգվում էր Օլթիից մինչև Մակու: Օլթի–Բաթում գիծը պիտի պաշտպանեին վրացական զորքերը: Այդ երկու ճակատների ընդհանուր հրամանատարն էր գեներալ Լեբեդինսկին:

Գեներալ Թ. Նազարբեկյանի տրամադրության տակ կար 36 գումարտակ զորք, մոտ 15.000 զինվոր, որոնք պետք է պաշտպանեին 250 կմ երկարությամբ ձգվող ռազմաճակատը:

Հայկական ուժերի դեմ գործում էին թուրքական 5–րդ, 11–րդ և 36–րդ դիվիզիաները՝ Էրզրում–Սարիղամիշ հատվածում, 1 դիվիզիա Ալաշկերտում և 1 դիվիզիա Վանա լճի շուրջը: Թուրքերն ունեին թվական գերազանցություն:

Հայերը ցույց էին տալիս ուժեղ դիմադրություն, և թուրքերը յուրաքանչյուր թիզ հողը գրավում էին մեծ զոհեր տալով:

Հայ–թուրքական ընդհարումները սկսվեցին մայրտի առաջին կեսին: Մարտի 10–ին թուրքական զորքերի ճնշման տակ հայկական զորքերը հետ քաշվեցին դեպի Խան–Դերե, իսկ մարտի 20–ին թուրքերը 6 գումարտակով լայն ճակատով շարժվեցին դեպի Կարաքուրտ, Բարդուս և այդ կետերը գրավելուց հետո հարձակվեցին Խան–Դերեի վրա: Նրա պաշտպանությունը հանձնարարվեց Դրոյին, որն այդ օրերին եկել էր Սարիղամիշ: Սկսվեց արյունահեղ ճակատամարտ, որը տևեց մի քանի օր: Մարտի 23–ին, երբ Կարսից կտրվելու վտանգ առաջացավ, գեներալ Արեշյանը նահանջի հրաման տվեց: Մարտի 23–ի լույս 24–ի գիշերը հայկական զորքերը թողեցին Սարիղամիշը՝ նախօրոք պայթեցնելով պահեստներն ու ռազմական օբյեկտները:

Սարիղամիշի անկումով հայկական զորքերը դուրս եկան Ալաշկերտից: Հայկական զորքեր մնացին միայն Վանում, որոնք պաշտպանվեցին մինչև ապրիլի կեսերը և ապա կռվով նահանջեցին դեպի Պարսկաստան:

ԱԴՖՀ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արտակարգ լիազորություններ ստանալուց հետո Ա. Չխենկելին մարտի 28 (ապրիլի 10)–ին Ռաուֆ բեյին հաղորդեց, որ ինքն ընդունում է Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը և պատրաստ է շարունակելու բանակցությունները՝ հիմնվելով դրա վրա: Պատվիրակության հայ անդամներ Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը նույնպես գտնում էին, որ ստեղծված պայմաններում Բրեստ–Լիտովսկի դաշնագրի ընդունումը պետք է համարել փոքրագույն չարիք: Սակայն ապրիլի 13–ին Ռաուֆ բեյն այդ գրությանը պատասխանեց, որ բանակցությունները շարունակելու համար անհրաժեշտ է, որ Անդրկովկասը հայտարարի իր անկախությունը: Հաջորդ օրը՝ արդեն նոր տոմարով ապրիլի 14–ին կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորիի հեռագրով պատվիրակությունը հետ կանչվեց Տրապիզոնից: Բանն այն է, որ Սեյմի մարտի 31–ի նիստում վրացի և հայ պատգամավորները կտրականապես դեմ արտահայտվեցին Բրեստ–Լիտովսկի պայմանագիրն ընդունելուն և կոչ արեցին զենքը ձեռքին ճակատ մեկնել ու պաշտպանել հայրենի հողը: Ուստի և Սեյմը միաձայնությամբ ընդունեց պատվիրակությանը Տրապիզոնից հետ կանչելու որոշում, որը փաստորեն նշանակում էր, որ Անդրկովկասը պաշտոնապես պատերազմի մեջ էր մտնում Թուրքիայի հետ: Պատերազմը վարելու համար ընտրվեց երեք հոգուց կազմված հատուկ մարմին՝ Ե. Գեգեչկորի, Խ. Կարճիկյան, Ն. Ռամիշվիլի: Ընդունվեց նաև կոչ՝ ուղղված Անդրկովկասի ժողովուրդներին, որով Անդրկովկասյան ընդհանուր հայրենիքը պաշտպանելու համար զենքի էին կոչում բոլորին (Ս. Վ., էջ 103–105):

Ինչպես իրավացիորեն նշում է Ս. Վրացյանը (էջ 105) Սեյմի որոշումը՝ պատերազմը շարունակելու մասին, նորություն էր միայն վրացիների համար, որովհետև հայերն արդեն իսկ պատերազմի մեջ էին: Այդ էր պատճառը, որ վրացի ղեկավարները դիմեցին աղմկոտ քայլերի, և նույնիսկ ժորդանիան և Ծերեթելին հրացան առած մեկնեցին ռազմաճակատ: Թիֆլիսում ստեղծվեց պատերազմական բարձր տրամադրություն: Սակայն այդ ոգևորությունը կարճ տևեց, որովհետև ստացվեց Բաթումի անկման լուրը. թուրքերն առանց դիմադրության հանդիպելու այն գրավեցին ապրիլի 11–ին: Վրացական զորքերն անընդհատ նահանջում էին, աճում էր դասալքությունն ու բարոյալքումը:

Վրացիների անհաջողությունները սուր ցավ էին պատճառում հայերին: Սարիղամիշի անկումից հետո ՀՅԴ Արևելյան բյուրոյի նախաձեռնությամբ Ալեքսանդրապոլում հրավիրվեց համազգային խորհրդաժողով, որը պետք է որոշեր հայերի վարքագիծը պատերազմի հարցում: Պատերազմի և խաղաղության մասին զեկուցում կարդաց Հ. Քաջազնունին, որն աշխատեց համոզել թուրքական պայմաններն ընդունելու անհրաժեշտությունը: Սակայն մեծամասնությունը պաշտպանեցին պատերազմը շարունակելու անհրաժեշտությունը:

Ստեղծված բարդ իրավիճակը շատ ճիշտ է ներկայացրել Ս. Վրացյանը, որն այդ առթիվ գրում է. «Թիֆլիսում, սակայն, ամեն բան որոշված էր. վրացիներն ու թուրքերը վճռել էին՝ վերջ տալ պատերազմին, ընդունել թուրքական վերջնագիրը և հայտարարելով Անդրկովկասի անկախությունը՝ վերսկսել հաշտության բանակցությունները: Այս քայլն անելիս վրացիները որոշ հույսեր էին կապում գերմանացիների հետ..., իսկ կովկասյան թուրքերի համար Թուրքիան ցանկալի բարեկամ էր:

Այսպիսով՝ հայերի համար ստեղծվում էր ահավոր կացություն. միանալ վրացիներին ու թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ոչ միայն ամբողջ Թուրքահայաստանից, այլև Ռուսահայաստանի մի երրորդ մասից, և դեռ հարց էր՝ կգոհանայի՞ն արդյոք թուրքերը միայն Բրեստ–Լիտովսկի պայմանագրով: Չմիանալ՝ նշանակում էր անջատվել հարևաններից, մնալ մենակ, կտրված ամբողջ աշխարհից, շրջապատված մահմեդական ծովով, թուրքական բանակի սպառնալիքի տակ՝ դատապարտված ստույգ մահվան: Պետք էր ընտրել չարիքներից փոքրագույնը, և հայերը միացան այդ որոշմանը» (Ս. Վ., էջ 108):

Մեր պատկերացմամբ, սակայն, «ուրիշ ճանապարհներն» ի սկզբանե փակելու և ինքնապահովագրման միտումով է գրված շարունակությունը, որտեղ ասվում է, թե կային նաև խորհրդային Ռուսաստանի ճանապարհը ցույց տվող մարդիկ, որոնք առաջարկում էին ձեռք մեկնել բոլշևիկներին, սակայն... Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշևիկների ուժը՝ ավելի քան խնդրական: «Ուրիշ ճանապարհ չկար,— շարունակում է Ս. Վրացյանը: 1918 թ. ապրիլի 9(22)–ին գումարվեց Սեյմի 22–րդ նիստը, ուր դրվեց Անդրկովկասի անկախության հայ-

տարարության հարցը: Մեռելատան էր նմանվում այդ օրը Սեյմի դահլիճը: Մենակ հայերը չէին սգավոր. վրացիներն էլ լավ չէին զգում իրենց...

Տոնական տրամադրություն ունեին միայն վրացի ազգայնականները, բայց, մանավանդ, թուրքերը... Մուսավաթական ֆրակցիան իրեն զգում էր նորափեսայի դերում...

Իսկական սգի մեջ էին հայերը: Սիրտ չկար խոսելու: Եվ ի՞նչ խոսել. բոլոր խոսքերն արդեն ասված էին: Նրանց ապրումները արտահայտեց Հ. Քաջազնունին: Հուզված, մազերը ցրիվ՝ բարձրացավ ամբիոն ու կարդաց. Պարոնայք Սեյմի անդամներ: Դաշնակցության ֆրակցիան՝ գիտակցելով շատ պարզ այն մեծ պատասխանատվությունը, որ առնում է իր վրա այս պատմական վայրկյանին, միանում է ինքնուրույն Անդրկովկասյան պետության հայտարարությանը: Եվ ուրիշ ոչինչ» (Ս. Վ., էջ 109):

Հատկանշական է, որ մի շարք պատգամավորներ խստորեն դեմ արտահայտվեցին Անդրկովկասի անկախությանը: Օրինակ՝ էսէռ Լ. Թումանյանն ասաց, որ Անդրկովկասի ներկա պայմաններում հայտարարված անկախությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ կատարյալ ստրուկ դառնալ Թուրքիային: Իսկ ռուս Սեմյոնովն ասաց, որ անկախության հայտարարությունը հնարավորություն կտա թուրքերին՝ պարզապես գրավելու ամբողջ Անդրկովկասը:

Երկար վիճաբանությունից հետո, սակայն, Սեյմը ընդունեց հետևյալ բանաձևը. «Անդրկովկասյան Սեյմը որոշեց՝ հայտարարել Անդրկովկասը ռամկավար դաշնակցային հանրապետություն»: Այդպիսով՝ ստեղծվեց Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետությունը՝ ԱԴՖՀ–ն, որը գոյություն ունեցավ ընդամենը մեկ ամիս չորս օր և 1918 թ. մայիսի 26–ին լուծարվեց:

Սեյմը հավանություն տվեց Տրապիզոնի պատվիրակության գործունեությանը և հանձնարարվեց նրան՝ շարունակել բանակցությունները ու հասնել հաշտության շուտափույթ կնքման:

Ընդունվեց Ե. Գեգեչկորիի կառավարության հրաժարականը և նոր կառավարության կազմելը հանձնարարվեց Ա. Չխենկելիին: Անդրկովկասյան Սեյմի 1918 թ. ապրիլի 13(26)–ին 25–րդ նիստում հանդիսավորապես հռչակվեց անկախ ԱԴՖՀ–ի առաջին կառավարության կազմը. Ա. Չխենկելի (նախագահ), Ն. Ռամիշվիլի (ներքին գործերի նախարար), Ա. Խատիսյան (ֆինանսների նախարար), Խ. Մելիքով–Ասլանով (հաղորդակցության ճանապարհների նախարար), Ֆ. Խան–Խոյսկի

(արդարադատության նախարար), Գ. Գեորգաձե (ռազմական նախարար), Ն. Խոմերիկի (երկրագործության նախարար), Ն. Ուսուբբեկով (ժողովրդական լուսավորության նախարար), Մ. Հաջինսկի (առևտրի և արդյունաբերության նախարար), Ա. Սահակյան (պարենամթերքի նախարար), Ռ. Քաջազնունի (պետական խնամատարության նախարար), Ա. Երզնկյան (աշխատանքի նախարար), Ի. Հայդարով (պետական վերահսկիչ) (տե՛ս Ա. Զ. Սահակյան, Անդրկովկասյան Սեյմի 1918 թ. կառավարության հարցի շուրջ, ՊԲՀ, 1988, հ. 3):

1918 թ. ապրիլի 28–ին թուրքական հրամանատարությունը հայտնեց Անդրկովկասյան Սեյմին, որ իր կառավարությունը ճանաչել է Անդրկովկասի անկախությունը և այդ մասին հայտնել իր դաշնակիցներին:

Անդրկովկասի անկախության հռչակումը, որը փաստորեն նշանակում էր երկրամասը կտրել Խորհրդային Ռուսաստանից, տրամագծորեն հակասում էր հայ ժողովրդի կենսական շահերին, ուստի այդ իրադարձության ճշմարիտ գնահատականի հարցը կարոտ է հետագա հանգամանալի ուսումնասիրության: Խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված էր ասել, որ Անդրկովկասի անկախության հռչակմամբ գերմանա–թուրքական իմպերիալիստների համար լիակատար հնարավորություն էր ստեղծվում ազատորեն խախտել Բրեստ–Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող 4–րդ հոդվածը, այն պատճառաբանությամբ, որ վերջինս անջատվել է Խորհրդային Ռուսաստանից, և, այդպիսով, Անդրկովկասը հեշտ ավար էր դառնում օտարերկրյա նվաճողների համար (Հայ ժողովրդի պատմություն, հատոր 7, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 39): Կարծում ենք, որ նման գնահատականն ընդհանուր առմամբ ճշմարտացիորեն է արտացոլում իրականությունը:

Հիմնահարցի օբյեկտիվ լուսաբանումը բանալի նշանակություն ունի նաև խորհրդա–անդրկովկասյան հետագա հարաբերություններն ու իրադարձությունները պարզաբանելու համար:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ

Վերևում արդեն նշվել է, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Բաքվի սովետը 1917 թ. նոյեմբերի 2–ին ընտրեց նոր

գործադիր կոմիտե՝ բոլշևիկ Ստեփան Շահումյանի նախագահությամբ, և Բաքվում հռչակեց խորհրդային իշխանություն:

1918 թ. մարտի վերջերին խորհրդային իշխանություն հաստատվեց ամբողջ Բաքվի նահանգում և Դաղստանում:

1917 թ. դեկտեմբերի 30–ին Բաքվում ստեղծվեց Հայոց ազգային խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Աբրահամ Գյուլխանդանյանը: Խորհուրդը ձեռնամուխ եղավ Բաքվում հայկական զինուժի կազմակերպման գործին:

Շամխորի և Ելիզավետպոլի հայտնի իրադարձություններից հետո, երբ Կովկասյան ռազմաճակատից տուն վերադարձող ռուսական զինվորական էշելոնները գնդակոծվեցին, մահմեդական կանոնավոր և անկանոն զորամասերը շրջափակեցին Բաքու–Թիֆլիս երկաթուղին: Դրա հետևանքով Արևմտյան ռազմաճակատից և Իրանից Հայկական կորպուսում ծառայելու նպատակով Անդրկովկաս վերադարձող շուրջ ութ հազար հայ զինվորներ հարկադրաբար կուտակվեցին Բաքվում: Այդ ժամանակ Հայոց ազգային խորհուրդը Բաքու ուղարկեց Համազասպ Սրվանձտյանին, որը քաղաքում կազմավորեց հայկական գումարտակ: Ստեղծված կարմիրգվարդիական ջոկատների շուրջ 6 հազար զինվորների մեծ մասը նույնպես հայեր էին:

Բաքվի Հայոց ազգային խորհուրդը հայ բնակչության շրջանում 18–45 տարեկան տղամարդկանց զորակոչ հայտարարեց: 1918 թ. մարտի 5–ին ընտրվեց Բաքվի հայկական զորամասերի Գլխավոր զինվորական մարմին՝ Վարդանի, գնդապետներ Բախտամյանի և Ղազարյանի գլխավորությամբ: Հայկական զորամասերում ընդգրկված հայ զինվորների թիվը հասավ 13 հազարի, որոնք Կովկասյան Կարմիր բանակի շտաբի և Բաքվի Հայոց ազգային խորհրդի միջև 1918 թ. ապրիլի 14–ին կնքված համաձայնագրով միացան Բաքվի խորհրդի կարմիր գվարդիային:

1918 թ. ապրիլի 25–ին Բաքվի բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների սովետը ընտրեց Բաքվի նահանգի ժողովրդական կոմիսարների սովետ: Ժողկոմսովետի նախագահ և արտաքին գործերի կոմիսար ընտրվեց Ստ. Շահումյանը, ներքին գործերի կոմիսար՝ Ա. Ջափարիձեն, ժողովրդական տնտեսության՝ Ի. Ֆիոլետովը, ռազմածովային՝ Գ. Կորգանովը, արդարադատության՝ Ա. Կարինյանը, լուսավորության՝ Ն. Կոլեսնիկովան, հաղորդակցության, փոստի և հեռագրի՝ Ի. Սուխարցևը, քաղաքային տնտեսության՝ Ն. Նարիմանովը, հողագործության՝ Մ. Վեզիրովը, աշխատանքի՝ Յա. Զևինը: Բաքվում և Ադրբեջանի մի շարք շրջաններում հաստատված խորհրդային իշխանությունը հայտնի է նաև Բաքվի կոմունա անունով:

Ժողկոմսովետը 1918 թ. հունիսի 2–ի դեկրետով ազգայնացրեց նավթարդյունաբերությունը, ձկնարդյունաբերությունը, Կասպյան առևտրական նավատորմը, բանկերը: Հողի ազգայնացման դեկրետով այն խլվեց կալվածատերերից և տրվեց գյուղացիությանը: Իրականացվեցին նաև այլ սոցիալ–տնտեսական ու մշակութային վերափոխումներ:

Արդեն 1918 թ. հունիսին Բաքվի կոմունան իր տրամադրության տակ ուներ 20 հազար զինվորներից բաղկացած հրածգային գնդեր, որոնցից 15–16 հազարը հայեր էին և որը լավագույն հենարան էր Ստ. Շահումյանի համար (տես Ա. Նազարյան, նշվ. աշխ., էջ 204–205):

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Սարդարապատի հերոսամարտը հայոց նորագույն պատմության Ավարայրն է: Միանգամայն իրավացի է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, որը Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» (Երևան, 1965, 1969) գրքի առաջաբանում գրել է. «Դժվար է վանել այն միտքը, որ Սարդարապատի շիկացած ավազուտներում կատարված այդ ողբերգությունը հայ ժողովրդի նոր պատմության համար ավելի նշանակալից է և այժմեական, քան վերագրվում է նրա հին պատմության մեջ այն ողբերգությանը, որ կատարվել է Ավարայրի դաշտում՝ Տղմուտի ափին (էջ 19)»:

Սարդարապատի հաղթանակի պատմական իմաստի խոր ընկալումով է արտահայտված հայոց Մեծերից մեկի՝ մարշալ Հովհաննես Բաղրամյանի հետևյալ միտքը. «Կցանկանայի, որ յուրաքանչյուր ընթերցող լրջորեն խորհեր գլխավոր շահի մասին՝ վտանգներով լեցուն այս շրջանում պահպանել ամեն հայի համար սուրբ այս օրրանը՝ Արարատյան դաշտն իր ստվար բնակչությամբ, իր քաղաքներով, հայ ժողովրդի հազարամյա մշակույթի կենտրոններով ու օջախներով» (Հ. Բաղրամյան, Իմ հիշողությունները. «Սարդարապատի հերոսները» գլուխը, Երևան, 1979, էջ 91):

Սարդարապատի նշանակությունն առավել առարկայական է ներկայացրել անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուոքըրը «Հայաստան: Ազգի վերապրումը» գրքում, որտեղ նա գրել է. «Եթե հայերը պարտություն կրեին Սարդարապատում, Հայաստան բառը կարող էր նշանակել սոսկ մի հին աշխարհագրական տերմին, ինչպես, օրինակ, Կապադովկիան»:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին Սարդարապատի հերոսամարտի շուրջ լիակատար լռություն էր պահպանվում: Պատճառը պարզ էր. այն անմիջականորեն ազդվում էր դաշնակցության գործունեության հետ: 1950-ական թթ. կեսերից պատմագրության մեջ սկսեցին հայտնվել ժլատ, գրեթե ոչինչ չասող տողեր: Այսպես՝ 1954-ին հրատարակված «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» առաջին պրակում (ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1954, էջ 25) Սարդարապատի մասին գրված է ընդամենը հետևյալը. «1918 թ. մայիսին թուրքերը վերսկսեցին հարձակումը Արևելյան Հայաստանի վրա... Հայ ժողովուրդն իր համար ստեղծված այս բացառիկ ծանր օրերին, հակառակ դաշնակների կապիտուլյանտական-դավաճանական քաղաքականության, մի շարք վայրերում համառ դիմադրություն ցույց տվեց թուրքական զավթիչներին: Երևանի շրջակա գյուղերի բնակչությունը Սարդարապատի տակ մայիսի վերջին օրերին պարտության մատնեց Երևանի վրա արշավող թուրքական դիվիզիային և ստիպեց նրան նահանջել դեպի Ալեքսանդրապոլ: Նույն օրերին Ղարաքիլիսայի տակ Ղազախ-Դիլիջանի և Փամբակի գյուղերի գյուղացիությունը երեք օր կանգնեցրեց թուրքական բանակի առաջխաղացումը»: Եվ էլ ուրիշ ոչինչ:

Սարդարապատի հերոսամարտին սուղ էջեր են նվիրված Երվանդ Սարգսյանի «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում» (Երևան, 1964) ընդհանուր առմամբ արժեքավոր մենագրությունում: Պարզապես բերենք մի նմուշ այդ շարադրանքից՝ առանց մեկնաբանությունների. «Թուրք զավթիչների դեմ մղած պայքարում առաջին դիրքերում էին գտնվում հայ կոմունիստները և սպարտակյանները: Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը հայ ժողովրդական զանգվածների համառ կամքի և հաղթելու կարողության փայլուն դրսևորումն էին, մի բան, որին բոլորովին չէին սպասում ոչ դաշնակցական պարտիայի պարագլուխները, ոչ Ազգային խորհուրդը և ոչ էլ բանակի գլխավոր հրամանատարությունը (էջ 451)»:

Հիմնահարցին նվիրված միակ հատուկ աշխատությունը Հարություն Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» մենագրությունն է, որն ունի երկու հրատարակություն՝ 1965 թ. և 1969 թ. և առաջնեկության իրավունքով գնահատելի գործ է: Սակայն հեղինակի ընդգծված հակադաշնակցական վերաբերմունքն ուղղակի ավերածություններ է առաջացրել շարադրանքում: Նշված մենագրության սուր քննադատությունն էր ուղղված Երևանի Ազգային խորհրդի նախկին անդամ Արշալույս Աստվածատրյանի «Սարդարապատի պատմաշինությունը» գրքույկը (Բեյրութ, 1966):

1967–ին հրատարակվեց ՀՍՍՀ ԳԱ «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի առաջնեկը՝ 7–րդ հատորը, որտեղ, ցավոք, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերին հատկացված է ընդամենը մեկուկես էջ (էջ 43–44): Բավական է, երևի, ասել, որ այստեղ չի հիշատակված որևէ անուն:

Մակիչ Արզումանյանի «Արհավիրքից վերածնունդ» (Երևան, 1973) արժեքավոր մենագրությունում, ճիշտ է, Սարդարապատն արդեն արժանացել է երկրորդ գլխի վերնագրում հիշատակվելու պատվին՝ «Սուլթանական Թուրքիայի արշավանքը Անդրկովկասի վրա և Սարդարապատի հերոսամարտը», սակայն 131 էջանոց այդ գլխում Մայիսյան հերոսամարտերին վերաբերում է ընդամենը 8 էջ՝ 7 կոմունիստների ու սպարտակյանների անուն–ազգանունների բարեխիղճ թվարկմամբ: Մինչդեռ Երևանի զորաբաժնի հրամանատար Մ. Սիլիկովն իբր ցուցաբերում է պասիվություն և զբաղվում հիմնականում զորքի էվակուացիայով (էջ 144): Գոնե լավ է, որ չեն անտեսված Դանիել Բեկ և Պավել Բեկ–Փիրումյանների ու մի շարք այլ հրամանատարների անունները, այն էլ հավանաբար նրա համար, որ ըստ հեղինակի 5–րդ գունդը հայտնի էր իբրև բոլշևիկյան գունդ:

1982–ին լույս տեսավ ակադեմիկոս Ծատուր Աղայանի «Հրկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» արժեքավոր մենագրությունը: Այստեղ արդեն մի ամբողջ ծավալուն գլուխ է հատկացված Մայիսյան հերոսամարտերին՝ շուրջ 150 էջ, որտեղ Սարդարապատը, Բաշ–Ապարանը և Ղարաքիլիսան տրված են առանձին ենթագլուխներով, հիմնականում օբյեկտիվորեն են ներկայացված հերոսամարտի դրվագներն ու գործող անձերը: Սակայն, ցավոք, նսեմացված է Դրոն, կան վիճահարույց մի շարք այլ գնահատականներ:

Ռազմական պատմաբանի հմուտ գրչով է շարադրված Աշոտ Հարությունյանի «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թվականին և ինքնապաշտպանական կռիվները» (Երևան, 1984) մեծարժեք մենագրության համապատասխան բաժինը: Արժանվույնս գնահատված են զորավարներ Թ. Նազարբեկյանի, Մ. Սիլիկյանի և մյուս զորահրամանատարների ծառայությունները, հայկական կանոնավոր զորամասերի խաղացած դերը, անկողմնակալ քննադատության են ենթարկված Հ. Թուրշյանի մերժելի տեսակետները: Գրքում, ցավոք, տեղ չի տրված Բաշ–Ապարանի հերոսամարտին, առկա են գաղափարախոսական նկատառումներով պայմանավորված որոշ անընդունելի ձևակերպումներ ու գնահատականներ: Սակայն ընդհանուր առմամբ մենագրությունը մի նշանակալի առաջընթաց քայլ է հիմնահարցի լուսաբանման ճանապարհին:

Դրոյի՝ Դրաստամատ Կանայանի դերը Բաշ–Ապարանի ճակատամարտում ըստ ամենայնի լուսաբանված է Համլետ Գևորգյանի «Դրո» (Երևան, 1991, 2000) աշխատության մեջ:

Հայ զորահրամանատարների և հայկական զորաբաժինների մարտական գործողությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան Մուրադ Կարապետյանի «Հայաստանի Հանրապետության բանակը. 1918–1920, Երևան, 1991» աշխատության մեջ:

Մայիսյան հերոսամարտերի պատմության, ճիշտ է, սեղմ, բայց ամբողջական և օբյեկտիվ շարադրանք է ֆրանսահայ պատմաբան Սերժ Աֆանասյանի «Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, Մայիս 1918» (Երևան, 1991) աշխատությունը, որտեղ հեղինակն օգտագործել է օտարալեզու կարևորագույն աղբյուրներ ու գրականություն:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը» (Երևան, 1996) երկհատոր մենագրության 2–րդ գրքի համապատասխան ենթաբաժինը կրում է «Հայոց նոր Ավարայրը» վերնագիրը: Հեղինակը հայտնում է այն կարծիքը, որ Սարդարապատի ճակատամարտի վճռական և առավել հերոսական օրը մայիսի 27–ն էր, որ Բաշ–Ապարանում փայլուն հաղթանակ ձեռք բերվեց Դրոյի գլխավորությամբ և որ, այնուամենայնիվ, ամենակատաղի ճակատամարտը տեղի ունեցավ Ղարաքիլիսայի մոտ, որի ղեկավար հերոսներից մեկն էլ Գարեգին Նժդեհն էր: Քննարկվում է նաև Անդրանիկի՝ Ղարաքիլիսայի ճակատամարտին չմասնակցելու խնդիրը և հայտնվում է այն կարծիքը, որ բավարար հիմքեր չկան արդարացնելու Անդրանիկի տարօրինակ վարմունքն ու անընմբռնելի կեցվածքը, երբ *չորս կողմը կրակ ու արյուն էր* (էջ 151):

Ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը «Հայկական հարցը 1918 թվականին» (Երևան, 1997) մենագրությունում առանձին ենթագլուխ է հատկացրել Մայիսյան հերոսամարտերին: Պարզաբանելով պատմագրության մեջ գոյություն ունեցող շփոթը՝ հեղինակը ցույց է տալիս, որ թուրքերի շրջապատման ու ջախջախման պլանը մշակել էր գեներալ Մ. Սիլիկյանը՝ իր շտաբով, իսկ գնդապետ Դանիել Բեկ–Փիրումյանը Երևանյան ջոկատի հրամանատարի տեղակալն էր, որի հրամանատարության տակ մայիսի 23–ին միավորվեցին Սարդարապատի և Իգ-

դիրի ջոկատները: Գրքում հրապարակված են նաև արխիվային նորահայտ նյութեր:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ, ԿԱՐՍԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՆԿՈՒՄԸ

Էրզրումի անկումից հետո հայկական ուժերը նահանջեցին դեպի Սարիղամիշ: Տասնօրյա կատաղի մարտերից հետո, 1918 թ. ապրիլի 5–ին նրանք թողեցին նաև Սարիղամիշը, որը թուրքերը գրավեցին ապրիլի 10–ին և դիմադրական կռիվներ մղելով՝ տասնմեկ օր անց միայն հասան Կարս: Նրանք կանգ առան Բեգլի–Ահմեդում՝ Կարսից 20 կմ արևմուտք: Ապրիլի 7–ին թուրքերը գրավեցին Վանը, իսկ ապրիլի 15–ին՝ Բաքումը: Կարսի կայազորն ուներ 3.600 զինվոր, 1700 նորակոչիկ հրետանավոր, 100 գործող հրանոթ, 700 հնատիպ հրանոթ: Զինվորականների կարծիքով այդ ուժերը կարող էին մեկ ամիս պաշտպանել Կարսը:

Սակայն Անդրկովկասի անկախության հռչակումից հետո (1918 թ. ապրիլի 22) ռազմական կոմիսար Ն. Չխենկելին գեներալ–լեյտենանտ Օդիշելիձեի միջոցով հեռագրով տեղեկացրեց Վեհիբ Փաշային, որ սկսած 1918 թ. ապրիլի 23–ի ժամը 17.00–ից, Անդրկովկասյան կառավարությունը դադարեցնում է ռազմական գործողությունները: Միաժամանակ Օդիշելիձեն հրամայեց գեներալ Թ. Նազարբեկյանին՝ թուրքերին հանձնել Կարսը: Սեյմի հայ անդամները տեղյակ էին դրան, ուստի հրամանը համարվեց դավաճանություն: Նազարբեկյանը փորձում էր կապվել Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի հետ, բայց գիծը չէր գործում՝ վրացիների անբարյացակամության հետևանքով: Երբ ի վերջո ստացվում է Ազգային խորհրդի հեռագիրը՝ հաշվի չառնել Չխենկելու հրամանները, արդեն ուշ էր. Նազարբեկյանը բերդի պարետ Դենին կարգադրություն էր արել բերդը հանձնելու մասին, և ապրիլի 26–ին թուրքերն առանց դիմադրության հանդիպելու գրավեցին Կարսի անառիկ բերդը:

Կարսի գնով զինադադար կնքվեց և Տրապիզոնում ընդհատված թուրք–անդրկովկասյան բանակցությունները վերսկսվեցին Բաքումում 1918 թ. մայիսի 11–ին:

Բաքումի, Սարիղամիշի և Կարսի գրավումից հետո թուրքական գլխավոր հրամանատարությունը 1–ին և 6–րդ բանակային կորպուսներից և այլ օժանդակ զորամասերից ստեղծեց «Կարս» բանակային խմբավորումը՝ Յաղուբ Շևքի փաշայի գլխավորությամբ: Առաջին կորպուսի հրամանատարն էր Քյազիմ Կարաբեքիր փաշան: Խմբավորման հիմնական նպատակն էր՝ գրավել ամբողջ Արևելյան Հայաստանը, Թիֆլիսը, Բաքուն, Դաղստանը, հասնել Անդրկասպյան շրջաններ: Բացի այդ, Քյազիմ Կարաբեքիրը հրաման ուներ Ալեքսանդրապոլի գրավումից հետո ուժերի մի մասը շարժել դեպի Ջուլֆա–Թավրիզ և գրավել Հյուսիսային Պարսկաստանը, դեպի ուր Մոսուլի կողմից շարժվում էր թուրքական 6–րդ բանակը: Դրա նպատակն էր կանխել անգլիացիների մուտքը Հյուսիսային Պարսկաստան:

Կարսի անկումով Ալեքսանդրապոլի դրությունը խիստ բարդացել էր: Հայկական զորքերի հրամանատարության մեջ տիրում էր այն թյուր մտայնությունը, թե թուրքերն Արփաչայը չեն անցնի, սակայն թուրքերն իրենց հաշիվներն ունեին:

1918 թ. մայիսի 14–ի լույս 15–ի գիշերը թուրքական զորքերի հրամանատար Խալիլ բեյը վերջնագիր ներկայացրեց Չխենկելուն և Ալեքսանդրապոլի զորքերի հրամանատարին՝ պահանջելով մինչև առավոտյան ժամը 7–ը դատարկել Ալեքսանդրապոլը և զորքերը քաղաքից հեռացնել 25 վերստ: Չսպասելով գրեթե անընթեռնելի վերջնագրի պատասխանին՝ թուրքերն սկսեցին հարձակումը: Դեռևս մայիսի 13–ին Հայկական կորպուսի շտաբը տեղափոխվել էր Ղարաքիլիսա, իսկ Թ. Նազարբեկովը մնացել էր քաղաքում: Ինչևիցե, կարգին պաշտպանություն չկազմակերպվեց, և թուրքերին հաջողվեց առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրոհով տիրել քաղաքին:

Մոտակայքում գտնվող Անդրանիկի զորամասը նույնպես առանձին ակտիվություն չդրսևորեց ու Նազարբեկովի հրամանով նահանջեց դեպի Ջալալօղլի (Ստեփանավան):

Այդ օրերին Արևելյան Հայաստանում փաստորեն դեռ ոչ մի կառավարություն կամ վարչական մարմին չկար: Գեներալ Թ. Նազարբեկյանը ենթարկվում էր Կովկասյան ռազմաճակատի շտաբին, ուստի Թիֆլիսից տրվող հրամանները նրա համար պարտադիր էին: Ալեքսանդրապոլի գրավումից հետո նա նույնպես տեղափոխվեց Ղարաքիլիսա և ընդունեց հետևյալ որոշումը.

1. Հայկական 1–ին դիվիզիան և 2–րդ դիվիզիայի 7–րդ և 8–րդ գնդերը պետք է փակեին Փամբակի լեռնանցքը, որով ճանապարհ էր բացվում դեպի Համամլու (Սպիտակ)–Ղարաքիլիսա: Նրանց վրա էր դրված նաև Ջաջուռի լեռնանցքի պաշտպանությունը:

2. Հեծյալ բրիգադը պետք է կատարեր վերջապահի դեր՝ Ալեքսանդրապոլից հյուսիս:

3. 1–ին և 2–րդ բրիգադները և 2–րդ հեծյալ գունդը պետք է շարժվեին Սարդարապատի ուղղությամբ՝ Երևանյան զորախումբն ու Երևանի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով:

Թուրքերն Ալեքսանդրապոլի գրավումից հետո ձեռնամուխ եղան իրենց սովորական զբաղմունքին՝ վանդալիզմին՝ անմեղ մարդկանց գնդակահարություններ, բռնաբարություններ, թալան, կողոպուտ: Թուրքերն անխտիր գնդակահարում էին հատկապես Էրզրումից ու Կարսից գաղթած հայերին:

«Կարս» խմբավորման հրամանատար Յաղուբ–Շևքի փաշան զորքերը բաժանեց չորս զորախմբերի և նրանց մարտական առաջադրանք տվեց:

1. Առաջին զորախումբը, որի հրամանատարն էր Մյուրսել բեյը, հարձակվելով Վորոնցովկայի (Կալինինո) ուղղությամբ, դուրս էր գալու Բոլնիս Խաչեն, Բորչալու և գրավելու էր Թիֆլիսը:

2. Երկրորդ զորախումբը, որի հրամանատարն էր Ջեմալ–Ջավիդ բեյը, հարձակվելու էր Ջաջուռ–Սպիտակ–Ղարաքիլիսա–Դիլիջան–Ղազախ–Ելիզավետպոլ ուղղությամբ: Այս ուղղությունը գլխավորն էր, որովհետև նրանց նպատակն էր հասնել Բաքու:

3. Երրորդ զորախումբը հարձակվելու էր Ալեքսանդրապոլ–Բաշ–Ապարան ուղղությամբ՝ հետագայում ըստ անհրաժեշտության Երևան կամ Ղարաքիլիսա ուղղվելու նպատակով:

4. Չորրորդ զորախումբը՝ 1–ին բանակային կորպուսի 36–րդ հետևակային դիվիզիան, որը հայտնի էր նաև Գելիբոլու (Գալիպոլյան) անունով, հարձակվելու էր Ալեքսանդրապոլ–Երևան երկաթգծի ուղղությամբ, Անի–Սարդարաբադ–Էջմիածին–Երևան գծով: Երրորդ և Չորրորդ զորախմբերը, այսինքն՝ 9–րդ և 36–րդ հետևակային դիվիզիաները խնդիր ունեին Սարդարապատի ու Աշտարակի կողմից նեխուժել Երևան և վերջ տալ արևելահայության կենտրոնին:

Միաժամանակ թուրքական հրամանատարությունը խոշոր ուժեր կենտրոնացրեց Արդահան–Ախալցխա–Բորժոմի ուղղությամբ՝ Թիֆլիսի վրա հարձակվելու նպատակով:

Ինչպես նշում է ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանը, թուրքական պլանն ուներ մի շարք էական թերություններ: Մինչև Ալեքսանդրապոլ հասնելը թուրքերը մեծ կորուստներ էին կրել և խիստ հոգնած էին, իսկ մատակարարումն անբավարար էր: Բացի այդ, թուրքական հրամանատարությունն ուժերը հավասարապես բաժանել էր չորս ուղղությունների, մինչդեռ դրանք հավասար նշանակություն չունեին: Առավել կարևոր թերություն էր այն, որ նշված չորս ուղղություններն իրարից բաժանված էին լեռներով, հետևաբար թուրքական դիվիզիաները պետք է հարձակվեին մեկը մյուսից անկախ: Դա թուրքերի հարձակման ամենաթույլ կողմն էր:

Հայկական զորքերի հրամանատարությունը կարողացավ հմտորեն օգտվել թուրքերի թույլ տված այդ կոպիտ սխալից, վերադասավորեց իր ուժերը և ընդունեց միանգամայն ճիշտ որոշում՝ թուրքերին ջախջախել առանձին–առանձին (Ա. Հ. Հարությունյան. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները: Երևան, 1984, էջ 174–177):

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Ալեքսանդրապոլ–Սարդարապատ–Երևան ուղղությամբ հարձակվող թուրքական խմբավորման մեջ մտնում էին 36–րդ հետևակային «Գելիբոլու» դիվիզիան, որը կազմված էր երեք հետևակային և մեկ հրետանային գնդից՝ 40 հրանոթով, հարվածային և սակրավոր մեկական գումարտակ, հեծյալ գունդ, քրդական կանոնավոր հեծելազոր, բաշիբոզուկներ: Այդ ուժերը միասին չէին անցնում 4000–5000 հոգուց:

Թուրքական այդ զորախմբի դեմ պիտի մարտնչեր հայկական զորքերի այսպես կոչված Ալագյազի զորախումբը, որի մեջ մտնում էին երկու հետևակային բրիգադ՝ Երզնկայի, Էրզրումի, Խնուսի, Ղարաքիլիսայի գնդերով և մեկ հատուկ հեծյալ գնդով:

Առաջին բրիգադի հրամանատարն էր գնդապետ Մորելը, սակայն նրան փոխարինում էր փոխգնդապետ Մխիթարյանը: Երկրորդ բրիգադի հրամանատարն էր կապիտան Շնեուրը: Յուրաքանչյուր գնդում կար

մոտ 300–400 զինվոր, որը նախատեսվածից քիչ էր: Այդ զորամասերը նահանջել էին Էրզրումից մինչև Արարատյան դաշտ և խիստ հոգնել էին ու հյուծվել, կորցրել անձնակազմի մեծ մասը, բարոյապես հուսալքված էին, ուստի չէին կարողանում կազմակերպված դիմադրել թշնամուն:

1918 թ. մայիսի 21–ին թուրքական 36–րդ դիվիզիայի առաջապահ զորամասերը մոտեցան Սարդարապատ գյուղին: Երևանում և շրջակա գյուղերում խուճապ սկսվեց:

Գեներալ Թ. Նազարբեկյանը, որն իր շտաբով գտնվում էր Ղարաքիլիսայում, հայկական 2–րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանին կարգադրեց Էջմիածնի շրջանում անցնել հակահարձակման և կանխել թուրքերի առաջխաղացումը դեպի Երևան:

Գեներալ Մ. Սիլիկյանն ընդունեց միանգամայն ճիշտ ու մտածված որոշումներ: Բաշ–Ապարանի կողմից Երևանի վրա հարձակվող թուրքերի դեմ նա առանձնացրեց գնդապետ Դոլուխանյանի 6–րդ հրաձգային գունդը, գնդապետ Զալինյանի պարտիզանական հեծյալ գունդը և գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը:

Երևանին վտանգ էր սպառում նաև Կողբի և Իգդիրի կողմից, որտեղից առաջ էին շարժվում թուրքական 5–րդ և 12–րդ դիվիզիաները: Սիլիկյանը կարգադրեց Արաքսի ափին գտնվող փոքրաթիվ ստորաբաժանումներին՝ պայթեցնել Ղարղալայի և Մարգարայի կամուրջները, Արաքսի ձախ ափին խրամատներ կառուցել և թույլ չտալ թշնամուն՝ անցնել գետը:

Ռեալ վտանգ էր սպասվում նաև Նախիջևան–Շարուր ուղղությունից, որտեղ Սիլիկյանը հակագրոհ կազմակերպելու առաջադրանք էր տվել 3–րդ հետևակային բրիգադի հրամանատար, գնդապետ Բաղդասարյանին:

Դեռևս 1917 թ. դեկտեմբերի սկզբին իբրև Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչ Երևան էր եկել Արամ Մանուկյանը, որի առաջարկով Երևանում ստեղծվեց պաշտպանության հատուկ կոմիտե: Կոմիտեն հայտարարեց մինչև 28 տարեկան երիտասարդների զորահավաք:

Սարդարապատ գյուղն ընկած էր Երևանից արևմուտք՝ մոտ 30 կմ հեռավորության վրա, իսկ համանուն կայարանը գյուղից հեռու էր երկու կմ: Այստեղ էլ 1918 թ. մայիսի 21–24–ը տեղի ունեցավ այն ճակատամարտը, որը, ինչպես Ավարայրը 15 դար առաջ, պիտի ապահովեր հայ

ժողովրդի հարատևումը (տե՛ս Սերժ Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, Մայիս 1918, Երևան, 1991, էջ 40):

Մայիսի 19–ին թուրքական 36–րդ Կովկասյան դիվիզիան ներխուժեց Արարատյան դաշտ և մայիսի 20–ին գրավեց Արաքս կայարանը, որն ընկած էր Ալեքսանդրապոլ–Երևան երկաթգծի վրա՝ Սարդարապատից 10 կմ հեռու:

Գեներալ Մ. Սիլիկյանը, որի հրամանատարական կետը գտնվում էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանի շենքում, այցելեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5–րդին և առաջարկեց նրան անվտանգության համար տեղափոխվել Սևանա կղզի: Սակայն կաթողիկոսն արժանապատվորեն պատասխանեց. «Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ դա, հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա Մայր տաճարի շեմին» (Մ. Աֆանասյան, էջ 41):

Հիրավի, իրավիճակն այնպիսին էր, որ նահանջի մասին մտածել անգամ չէր կարելի: Պետք էր հաղթել կամ մեռնել:

Մայիսի 20–ին գեներալ Մ. Սիլիկյանը իր տեղակալի՝ փոխգնդապետ Վեքիլյանի հետ միասին մշակեց գործողության պլան, որի իրականացումը հանձնարարվեց գնդապետ Դանիել Բեկ–Փիրումյանին:

Ռազմաճակատը ձգվում էր Արաքսից մինչև Արագած լեռան փեշերը և Բաշ–Ապարան:

Ապահովելով թևերի պաշտպանությունը՝ գեներալ Մ. Սիլիկյանն իր լավագույն ուժերը տեղափոխեց կենտրոնական ճակատ՝ Էջմիածնի տակ:

Մայիսի 21–ի ուշ երեկոյան թուրքական 36–րդ դիվիզիան գրավեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Շարունակելով հարձակումը՝ թուրքերը գրավեցին Վերին Խերիբեկլու գյուղը և մոտեցան Ղամըշլու (Եղեգնուտ) կիսակայարանին՝ Երևանից 20 կմ հեռավորության վրա: Սակայն կապիտան Խորեն Իգիթխանյանի հրետանային մարտկոցը՝ 10 հրանոթ, որը նախօրոք տեղավորվել էր Արդալար գյուղի մոտ, անսպասելիորեն կրակ բացեց և հարկադրեց թուրքերին՝ գամված մնալ տեղում:

Մայիսի 22–ին հայկական զորամիավորումները երկու ուղղություններով թիկունքից հակահարձակման անցան Քյորփալու (այժմ՝ Արշալույս) և Ղուրդուղուլի (այժմ՝ Արմավիր) գյուղերի բնագծերից, եռանդուն գրոհով Ղամըշլու (այժմ՝ Եղեգնուտ) գյուղի շրջանում ոչնչացրին թշնամուն: Հակահարձակման դիմած զորամիավորումների մեջ էին հայկական հետևակային 5–րդ գունդը, որը մեծ մասամբ բաղկացած էր դա

ռաբաղցի զինվորներից և որի հրամանատարն էր գնդապետ Պավել (Պողոս) Բեկ–Փիրումանը՝ գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի հորեղբորորդին: Կիլիկիայի ապագա կաթողիկոս, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը նրանց մկրտել էր «Մահապարտների գունդ» անունով: Գունդը ուժեղացված էր շրջակա գյուղերից հավաքված շուրջ 500 կամավոր աշխարհազորայիններով, որոնց հավաքագրել էին Եզնիկ և Թադևոս եպիսկոպոսները և Գրամփա գյուղի քահանա Հովհաննես Տեր–Մկրտչյանը: Աշխարհազորայիններին առաջնորդում էին արքեպիսկոպոսներ, ճեմարանի տեսուչ, հայտնի հայագետ Գարեգին Հովսեփյանը և Էրզրումի առաջնորդ Զավեն Բաբայանը, որոնք ձիու վրա նստած գնում էին առջևից՝ խաչը ձեռքներին:

Հարձակվողների թվում էին նաև գնդապետ Դոլուխանյանի 6–րդ գունդը, փոխգնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական հետևակային գունդը, Իգդիրի և Խնուսի հետևակային գնդերը: Զեյթունի հեծյալ գունդը՝ գնդապետ Սալիբեկովի հրամանատարությամբ, կապիտան Ամիրխանյանի հատուկ հեծյալ խմբի չորս էսկադրոնները: Այդ օրը՝ մայիսի 22–ին, ամբողջությամբ ոչնչացվեց թուրքական «Գելիբոլու» դիվիզիայի երկու վաշտ՝ շուրջ 500 ասկյար: Շատ թուրք սպաներ, ձեռքները վեր բարձրացրած, գթություն էին հայցում՝ գոչելով, որ իրենք Թրակիայից են ու մասնակից չեն եղել Հայոց եղեռնին:

Կեսօրից հետո էստոնացի կապիտան Կլիչի մարտկոցը դիպուկ կրակով շարքից հանեց ջրհան կայանը՝ 30 աստիճան շոգի պայմաններում թուրքերին զրկելով ջրի միակ աղբյուրից:

Մայիսի 22–ին երեկոյան 5–րդ գնդի առաջապահները՝ Վարդան Զաղինյանի և Միքայել Օհանջանյանի ղեկավարությամբ և փոխգնդապետ Պերեկրյոստովի կամավորները հետ գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը:

Հինգ ժամվա ընթացքում թուրքերը նահանջեցին 15–20 կմ, բայց քանի որ նրանց չէին հետապնդում, ամրացան Արաքս կայարանից 5–6 կիլոմետր հյուսիս–արևելք՝ Թուլքի թափա և Չիմնի ղրռ կոչվող բարձունքներում:

Հաղթանակը կատարյալ էր: Գեներալ Մ. Սիլիկյանը հաղորդում է Գլխավոր շտաբ, որ զորքերի մարտական ոգին գերազանց է, դասալիքները զենքը ձեռքներին վեադառնում են, զինվորները պատրաստ են մարտի գնալու:

Հաղթանակի լուրը կայծակի արագությամբ հասավ Երևան: Բոլորը շտապում էին կայարան՝ ձեռքներին մի կտոր հաց, շաքար ու թեյ, ծխախոտ, կժերով ջուր՝ կռվողներին ուղարկելու համար, իսկ երիտասարդությունը հորդում էր Անգլիական այգի՝ կամավոր գրվելու համար:

Հաղթանակի առթիվ կաթողիկոս Գևորգ 5–րդը էջմիածնում հանդիսավոր պատարագ մատուցեց: Մայր տաճարի զանգերն սկսեցին դողանջել, որին շուտով ձայնակցում են էջմիածնի բոլոր վանքերի, ապա մոտակա գյուղերի եկեղեցիների զանգերը: Նույն օրը զանգահարությունը տարածվում է ամենուրեք, և մայիսի 22–29–ը՝ ութ օր շարունակ, Արագածի լանջերից մինչև Արաքս, Սարդարապատից մինչև Սևան գիշեր–ցերեկ անդադար դողանջում էին բոլոր եկեղեցիների զանգերը: Ինչպես պատկերավոր լեզվով գրում է Հ. Թուրշյանը, մահասարսուռ ահազանգը զարթեցնում, զգաստացնում, սթափեցնում էր բոլորին, խանդավառում ամենքին, մղում հերոսական անձնազոհության (Հ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 143): Նույն հեղինակը ցույց է տալիս նաև, որ Սարդարապատը իսկական ժողովրդական պատերազմ էր, որին մասնակցում էր զինվորությունը, գյուղացիությունը, բանվորները, արհեստավորները, հոգևորականությունը, մտավորականությունը: Եզնիկ վարդապետի կոչով հավաքագրված 500 աշխարհազորայինները մարտի նետվեցին պատանքներ հագած, զենք էին վերցրել ծերունի Թադևոս Թադևոսյանը, պատանի Ակսել Բակունցը, ապագա ակադեմիկոսներ Արարատ Ղարիբյանը, Գրիգոր Ղափանցյանը, մաթեմատիկայի ուսուցիչ Բահաթուր Բահաթրյանը, ապագա մանկավարժ Արշավիր Շավարշյանը, աշակերտներ:

Մեր կարծիքով, միանգամայն իրավացի է Հ. Թուրշյանը, գրելով, որ Սարդարապատը բախտորոշ գոյամարտ էր, հայ ժողովրդի կենաց ու մահու կռիվ, որտեղ ինքնապաշտպանության գերագույն մղումով ոտքի էին ելել հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու կուսակցությունները, որտեղ կողք կողքի կռվում էին միապետականը, կոմունիստը, դաշնակցականը, հնչակյանն ու ռամկավարը, հոգևորականը: «Բռունցքը սեղմվելու սահման ունի,— գրում է նա,— որից հետո այն դառնում է քարի պես ամուր: Սարդարապատում թուրքերը դեմ առան հայ ժողովրդի քարի պես սեղմված բռունցքին» (Հ. Թուրշյան, էջ 147): Միանգամայն դիպուկ է նկատել ակադեմիկոս Հ. Ավետիսյանը, թե Սարդարապատի հերոսամարտը հայերի հայրենական պատերազմն էր

(Հայոց պատմություն. Հանրակրթական դպրոցի 7–րդ դասարանի դասագիրք, Երևան, 2000, էջ 155):

Մայիսի 23–ին մարտեր տեղի չունեցան. կողմերը նախապատրաստվում էին նոր ճակատամարտի:

Մայիսի 24–ին գեներալ Մ. Սիլիկյանը հայրենասիրական կոչ ուղղեց ժողովրդին՝ զենք վերցնելու և հայրենիքը պաշտպանելու համար: Այնտեղ ասված էր. «Հայեր. բոլորը մինչև 50 տարեկան պետք է զենք վերցնեն հայրենիքը պաշտպանելու համար: Հիշեք Ավարայրի խիզախ կանանց, որոնք քաջալերում էին տղամարդկանց՝ Վարդանի գլխավորությամբ մղվող կռվում: Հետևեցեք նրանց օրինակին, եթե ուզում եք բարձր պահել ձեր պատիվը: Արհամարհեք վախկոտներին... ես խորապես համոզված եմ, որ իմ կոչը լսելի կլինի և 2–3 օրում մենք ոտքի կհանենք հերոսական մի ուժ, որն ընդունակ կլինի թշնամուն դուրս քշելու մեր երկրից և ապահովելու հայ ժողովրդի գոյությունը» (Ս. Աֆանասյան, էջ 46): Մայիսի 24–ին թուրքերն իջան դաշտի վրա իշխող բարձունքներից՝ երեք օր առաջ կրած խայտառակ պարտության վրեժը լուծելու վճռականությամբ: Մայիսի 24–26–ին Սիլիկովը մի քանի անգամ փորձեց ճակատային գրոհով դուրս մղել թշնամուն իրենց դիրքերից, բայց դա նրան չհաջողվեց: Գերմանական, կատարելագործված գնդացիրներից տեղացող թուրքական մրրկածուփ կրակը պարզապես գետնին էր գամում հարձակվող հայ զինվորներին: Այդ ժամանակ Սիլիկյանն ընդունեց ճիշտ որոշում՝ ճակատային գրոհներից բացի ձեռնարկել նաև թևային հարձակում: Այդ նպատակով նա փոխգնդապետ Կարապետ Հասանփաշայանի հրամանատարությամբ ստեղծեց հարվածային խումբ, որին տրվեց «Խզնաուզի զորախումբ» անունը: Նրա մեջ մտնում էին երգնկայի հետևակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, հատուկ հեծյալ գնդի երկու էսկադրոն, Խնուսի գնդի մեկ վաշտ և չորս թնդանոթ՝ բոլորը միասին 600 զինվոր և 200 հեծյալ: Գեներալ Մ. Սիլիկյանը հրամայեց այդ խմբին՝ մայիսի 27–ի լուսաբացին շարժվել Խզնաուզ (այժմ՝ Արագած, Կոշի մոտ) գյուղից և Արագած լեռան փեշերով, Շամիրամի ձորով շրջանցել Թուլքի թափայի (Աղվեսաբլուր) թուրքերի դիրքերը ձախ թևից: Նույն օրվա կեսօրին Կարապետ Հասանփաշայանի զինվորները թշնամու վրա կրակ բացեցին թիկունքից: Այդ հարվածից թուրքերը հանկարծակիի եկան, սակայն դրան հետևեց 5–րդ հետևակային «Մահապարտների» գնդի գումարտակների հարձակումը ճակատից և հնչակյան Մշեցի Պանդուխտի (Միքայել Սեֆերյան) պարտիզանների հարվածը հյուսիսից: Ձախ թևում գործող Իգդիրի գնդերն ու պարտիզանները Դանիել Բեկ–Փիրումյանի հրամանով, որը զինվորներին առաջնորդում էր կարմիր աստառի կողմը շրջված զինվորական շինելը հագին, գրոհում են հակառակորդի դիրքերը Չիմնի ղըռում: Ամբողջ ճակատով թուրքերը լքում են դիրքերը և օգտվելով մթությունից՝ փախուստի դիմում Ալեքսանդրապոլի ուղղությամբ՝ մարտի դաշտում թողնելով մեծ թվով սպանվածներ և վիրավորներ: Ալեքսանդրապոլ հասած շուրջ 1500 վիրավորների մասին նրանք լուր տարածեցին, թե իբր երկաթուղային աղետ է տեղի ունեցել:

Հաղթանակը կատարյալ էր. կռիվների արդյունքում թուրքերը հետ շպրտվեցին ավելի քան 50 կիլոմետր:

Իր աշխատության մեջ Ա. Հարությունյանը նույնպես նշում է, որ հաղթանակն ապահովելու գործում հայկական զորքերին զգալի օգնություն ցույց տվեց տեղի բնակչությունը և այդ օրերին հայերի մեջ տիրում էր միասնություն՝ անկախ քաղաքական համոզմունքներից: Այդ կապակցությամբ, գնահատելով Հ. Թուրշյանի աշխատությունը՝ իբրև հիմնահարցի ուսումնասիրության առաջին փորձ, Ա. Հարությունյանը խստորեն քննադատում է նրան այն միտումը դրսևորելու համար, թե իբր ճակատամարտը շահել է ժողովուրդը և ոչ թե բանակը, որ նա անհարկի հոլովում է Թ. Նազարբեկյանի և Մ. Սիլիկյանի անունները, մեղադրում նրանց ապաշնորհության և անձեռնհասության մեջ, ուռճացնում է Դանիել Բեկ–Փիրումյանի դերը: Ռազմական պատմաբանն այն աներեր համոզմունքն է հայտնում, որ Սարդարապատի ճակատամարտի կազմակերպիչը եղել է Հայկական կորպուսի 2–րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Սովսես Սիլիկյանը, գրեթե ամեն ինչ կատարվել է նրա հրամանով (Ա. Հարությունյան, էջ 179–182): Իր եզրակացությունները Ա. Հարությունյանն ամրապնդում է Սարդարապատի ճակատամարտի մասնակից, հայ նշանավոր զորավար, մարշալ Հ. Բաղրամյանի հուշերում Մ. Սիլիկյանին տրված բարձր գնահատականներով:

Հատկանշական է, որ տեսնելով թշնամու հապճեպ փախուստը, սովորաբար զգույշ ու շրջահայաց գեներալ Մ. Սիլիկովը ցանկանում է նրան հետապնդել և հետ վերցնել Ալեքսանդրապոլը և անգամ այդ մասին նոր կոչ է ուղղում ժողովրդին: Սակայն մայիսի 30–ին Երևան ժամանած գեներալ Թ. Նազարբեկյանը արգելեց այդ օպերացիան և հրամայեց դադարեցնել կռիվները: Դրա դեմ զայրագին բողոքեց Դանիել Բեկ Փիրումյանը, ասելով, որ ինքը չի կարող կատարել այդ կործանարար

հրամանը և հրամայել հաղթական զինվորներին՝ նահանջել արյան գնով նվաճած հողից (Ս. Աֆանասյան, էջ 55):

ԲԱՇ–ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Դեռևս Սարդարապատի ճակատամարտից անմիջապես առաջ գեներալ Մ. Սիլիկյանի մշակած պլանի համաձայն Արագած լեռան փեշերի և Բաշ–Ապարանի պաշտպանությունը հանձնարարվեց Դրոյի հրամանատարության տակ դրված զորախմբին:

Էսադ փաշայի գլխավորած թուրքական 9–րդ դիվիզիայի մի մասը, որի կազմում կար հրետանային երկու մարտկոց, դեռևս մայիսի 20–ին գրավեց Համամլուն (այժմ Սպիտակ), իսկ մայիսի 22–ին՝ Բաշ–Ապարանը: Դրոյի զորախմբի ձախ թևի համար թիկունքից հարվածի տակ ընկնելու սպառնալիք ստեղծվեց: Ուստի Դրոն նահանջեց հարավ՝ սպասելով համալրումների:

Ապարանը և շրջակա գյուղերը թողած՝ զինված հայ երիտասարդների մի խումբ հավաքվում է Քուլուջա գյուղում և Դավիթ Մելիքսեթյանի գլխավորությամբ այստեղ թույլ դիմադրություն է ցույց տալիս թուրքերին: Շուտով Երևանից այստեղ են հասնում մի քանի տասնյակ ապարանցիներ՝ Արսեն աղայի (Տեր–Պողոսյան, Ռաֆֆու Խենթի որդու) ղեկավարությամբ: Նրանց են միանում նաև Մատթեոս Հովհաննիսյանի և Սեդրակ աղայի (Ջալալյան) խմբերը: Փաստորեն կարելի է ասել, որ մայիսի 22–23–ին Ապարանի ճակատում թուրքերին դիմադրություն են ցույց տալիս միայն աշխարհազորային թույլ խմբերը:

Հյուսիս–արևելքից Երևանին սպառնացող վտանգը կանխելու համար գեներալ Մ. Սիլիկյանը մայիսի 24–ին Սարդարապատի ճակատից հանեց և Բաշ–Ապարանի ճակատ ուղարկեց Դոլուխանյանի հետևակային 6–րդ գունդը, Ջալինյանի 2–րդ հեծյալ գունդը, Կորոլկովի հեծյալ կամավորներին, Սիլինի սահմանապահ վաշտը, Իգիթխանյանի և Սակիլարիի հրետանային մարտկոցները: Դա փաստորեն հանգեցրեց Սարդարապատի ճակատի մերկացմանը: Բաշ–Ապարան են մեկնում նաև գանձակեցի Ջեմլյակի, զանգեզուրցի Յապոնի, բաշգյառնեցի Մարտիրոսի, Քաչալ Ղազարի, սասունցի Մանուկի, մակվեցի Մեսրոպի խմբերը:

Երևանի հարավում թուրքական 5–րդ դիվիզիան փորձում է Ղամարլուի (այժմ՝ Արտաշատի շրջանում), Գայլի դրունքի միջով անցնել Արաքսը գետը, սակայն բարեբախտաբար գետը վարարած էր, և Բաղդասարյանի ջոկատին հաջողվում է խորտակել թշնամու ինքնաշեն նավակներն ու նրան հետ շպրտել:

Թողնելով Բաշ–Ապարանը՝ Դրոյի զորախումբը քաշվեց հարավ՝ դեպի Ալի Քուչակ, այնուհետև դիրքեր գրավեց Ղազնաֆար և Ղարաքիլիսա գյուղերում: Մայիսի 24–ին Դրոն ստացավ Սարդարապատի ճակատից հանված համալրումը: Նրանց միացան նաև Զհանգիր աղայի գլխավորած 200 եզդի հեծյալները, որոնք նույնպես եկել էին Սարդարապատի ճակատից: Հայկական ուժերի ընդհանուր թիվն այստեղ հասավ շուրջ 5 հազարի: Դրոն իր համհարզ, գնդապետ Պրիտոմանովի հետ միասին հակահարձակում նախապատրաստեց և մայիսի 25–ին թուրքերին հետ շպրտեց Բաշ–Ապարանից: Եռօրյա համառ մարտերից հետո թուրքերը հետ քաշվեցին դեպի Չինգիլդաղի և Քուլուջայի բարձունքները: Մարտերից մեկում ընկավ հայդուկ Ջեմլյակը (Նանումյան), որի հեծյալները Ղոնդաղսազ գյուղի մոտ ջարդել էին 30 ասկյարների:

Բաշ–Ապարանի ճակատամարտում ևս հայ հոգևորականությունը հանդես բերեց անձնուրացություն. Փամբ գյուղի քահանա Տեր Գևորգ Հայրապետյանը հավաքեց իր և հարևան գյուղերի բնակիչներին և առաջնորդեց նրանց դեպի Բաշ–Ապարան, որոնք միացան աշխարհազորայիններին և խիզախորեն կռվեցին թշնամու դեմ:

Մայիսի 29–ին ջախջախված թուրքերը փախան Համամլուից, որով և վերջնականապես վերացավ թուրքական 9–րդ դիվիզիայի կողմից Երևանը աքցանի մեջ առնելու վտանգը:

Թուրքերը Բաշ–Ապարանի ճակատում թողեցին 200 սպանված, երկու գնդացիր, հարյուրից ավելի հրացան, այլ ռազմամթերք:

Սակայն ճակատամարտի ավարտից հետո թուրքերը սպիտակ դրոշով բանագնաց ուղարկեցին և բանակցությունների մեջ մտան Դրոյի հետ: Մայոր Ռուշդի բեյը Դրոյին հայտնեց, որ Բաթումում ստորագրվել է զինադադար, որի համաձայն պետք է ռազմական գործողությունները դադարեցնել: Նա պահանջեց նաև հունիսի 1–ից հայկական զորքերը հետ քաշել Արագածից հարավ: Այդ պայմանները կատարվեցին Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո, որը նույնպես չէր կարող չառաջացնել հենց նոր փայլուն հաղթանակ տարած հայոց զորքի խոր հիասթափությունը:

Բանն այն է, որ մայիսի 29–ին դեռ ոչ մի զինադադար չէր կնքվել, այլ հայ պատվիրակները տվել էին միայն թուրքական վերջնագիրն ընդունելու նախնական համաձայնությունը և թուրքերը զինադադար էին հաստատում միայն այնտեղ, որտեղ իրենց գործերը վատ էին: Ուստի անընդունելի է Հ. Թուրշյանի այն եզրակացությունը, թե Դրոն առաջինը ծախեց Սարդարապատի և Բաշ–Ապարանի փայլուն հաղթանակները (Հ. Թ., էջ 184):

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Թուրքերի կողմից Համամլուն և Բաշ–Ապարանը գրավելուց հետո (մայիսի 20 և 22) Ղարաքիլիսայի վիճակը խիստ ծանրացավ: Հայկական ուժերը նահանջեցին դեպի Ղշլաղ՝ Ղարաքիլիսայից 5 կմ արևմուտք: Դեպի Ղարաքիլիսա ծգվեցին գաղթականների անվերջանալի քարավանները:

Հայկական ուժերը նահանջում են դեպի Դիլիջան, որտեղ հաստատվել էին գեներալ Թ. Նազարբեկյանը և իր գլխավոր շտաբը:

Սակայն այստեղ հասավ Սարդարապատի հաղթանակի լուրը, և նահանջող զորքն ու ժողովուրդը որոշեցին կանգ առնել ու հակահարված տալ թշնամուն: Մայիսի 23–ին Դարպաս գյուղի քահանա Տեր Կոմիտաս Սարգսյանը, փամփշտակալներով գոտևորված և մինչև ատամները զինված, հնչեցնել է տալիս եկեղեցու զանգերը և հավաքելով Դարպասի, Հաջիղարայի ու Ղշլաղի գյուղացիներին և դիմադրություն կազմակերպում: Նույն օրը Ղարաքիլիսայում կայացած հանրահավաքում Մեսրոպ եպիսկոպոս Տեր–Մովսեսյանը, գեներալ Համազյանը, գնդապետ Սամարցյանն ու Գարեգին Նժդեհը, որոնք այստեղ էին եկել Դիլիջանից, որոշում են դիմադրություն ցույց տալ: Միաժամանակ գեներալ Թ. Նազարբեկյանը հրամայում է գնդապետ Ալեքսանդր Բեյ–Մամիկոնյանին՝ գնալ Ղարաքիլիսայի վրա, իսկ ինքը մի ոգևորիչ կոչ է ուղղում հայ ժողովրդին:

Բեյ–Մամիկոնյանի գլխավորած զորքը բաժանված էր երեք մասի. ռազմաճակատի աջ թևը հյուսիսում վստահված էր Անդրանիկին, որն իր 2700 կամավորներով պիտի պաշտպաներ Գյառգյառի լեռնանցքը՝ Ջալալօղլիից (այժմ Ստեփանավան) հարավ: Ձախ թևում՝ Հաջիղարա գյուղի մոտ գտնվում էր գնդապետ Սամարցյանի զորաբաժինը, որի հետ էր

կապիտան Գուրգեն Տեր–Մովսեսյանի հրետանային 4–րդ մարտկոցը, որոնք պետք է պաշտպանեին Գյադա–Մայմեխ լեռան գագաթը Ղարաքիլիսայի հարավում և թույլ չտային թուրքերին՝ հարվածելու թիկունքից: Կենտրոնում գնդապետ Նիկոլայ Կորգանովի հեծյալները և Նժդեհի կամավորները պաշտպանելու էին Ղարպասից մինչև Ղշլաղ ծգվող հատվածը: Հրետանու հրամանատարն էր գեներալ Ղամազյանը: Հայկական ուժերը բոլորը միասին կազմում էին 7 հազար զինվոր, 20 գնդացիր, 12 թնդանոթ՝ 10 հազար թուրքերի դեմ, որոնք ունեին 70 թնդանոթ:

Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը հրամայել էր 1–ին դիվիզիայի հրամանատար, գեներալ Արեշովին՝ պաշտպանել Ջաջուռի լեռնանցքը, թույլ չտալ, որ թուրքերն անցնեն Համամլու և արգելակել նրանց առաջխաղացումը դեպի Ղարաքիլիսա: Սակայն Արեշովը, ցուցաբերելով անկարողություն և հանցավոր անտարբերություն, ոչ մի միջոցառում չձեռնարկեց, այլ զորախմբի հրամանատարությունը հանձնեց գնդապետ Ալ. Բեյ–Մամիկոնյանին և ինքը մեկնեց Ղարաքիլիսա, որպեսզի խուսափի պատասխանատվությունից:

Մայիսի 20–ի կեսօրին թուրքերը գրավեցին Ջաջուռը և հայտնվեցին Ղալթախչիում: Մայիսի 21–ին թուրքական առաջապահները հայտնվեցին Վորոնցովկայում:

Մայիսի 24–ին Դիլիջանի կողմից Սարդարապատի հաղթանակի լուրով ոգևորված հայկական զորքը և աշխարհազորը շարժվեցին դեպի Ղարաքիլիսա: Մայիսի 25–ին սկսվեց Ղարաքիլիսայի պատմական ճակատամարտը, որը տևեց մինչև մայիսի 28–ը:

Մայիսի 25–ին Կորգանովի հեծյալները հրետանու աջակցությամբ թուրքերին դուրս շպրտեցին Արջուտ գյուղից:

Մայիսի 26–ին սկսված կռիվներն ավելի ծանր էին: Այդ օրը թուրքական 11–րդ դիվիզիան հասավ Գյադա–Մայմեխի գագաթը, անցավ լեռնանցքը և մոտեցավ Սարալ գյուղին: Սակայն գյուղի մոտ սկսված կատաղի ճակատամարտում թուրքերը ջախջախվեցին և, ծանր կորուստներ կրելով ու կռվի դաշտում թողնելով իրենց վիրավորներին, հետ շպրտվեցին:

Կռիվները վերսկսվեցին մայիսի 27–ին՝ Գյադա–Մայմեխի ուղղությամբ, երբ թուրքերը փորձեցին շրջանցել հայերի ձախ թևը: Չորս ժամվա ընթացքում կապիտան Գուրգեն Տեր–Մովսեսյանի հրետանավորները հետ մղեցին թուրքերի երեք գրոհ: Սակայն ուշ երեկոյան կռվելով մինչև վերջին ռումբը և չստանալով գնդապետ Սամարցյանի ուղարկած

օգնությունը՝ հայերը ստիպված էին թվական կրկնակի գերակշռություն ունեցող թշնամու ճնշման տակ թողնել Գյադա–Մայմեխի լեռնանցքը: Այդ կռվում հերոսի մահով ընկավ կապիտան Գ. Տեր–Մովսեսյանը, իսկ նրա հրետանավորները արկերն սպառելուց հետո սվինամարտի նետվեցին թշնամու դեմ ու մեծ մասամբ զոհվեցին անհավասար գոտեմարտում: Իր հիշողություններում մարշալ Հ. Բաղրամյանը բարձր է գնահատել քաջարի կապիտանին, որին անձամբ ճանաչում էր, իսկ Ա. Հարությունյանը հայ քաջարի հրետանավորների սխրանքը համեմատում է 1812 թ. Բորոդինոյի ճակատամարտում Ռաևսկու հրետանավորների հերոսության հետ (Ա. Հ., էջ 195):

Դիլիջանի ճանապարհի վրա իշխող այդ կարևորագույն ռազմավարական կետի կորուստը ծանր հետևանքներ ունեցավ: Մայիսի 28–ին թուրքերը գրավեցին Դարպասը և ռմբակոծեցին Ղշլաղը:

Հյուսիսում Անդրանիկն իր կամավորներով թուրքական 5–րդ դիվիզիայի դեմ երկու օր մղած կատաղի մարտերից հետո, ապահովելով շուրջ 20 հազար գաղթականների երթը, մայիսի 25–ին նահանջեց դեպի Վարդաբլուր, իսկ այնուհետև ամրացավ Հ. Թումանյանի ծննդավայր Դսեղում: Անդրանիկն անհետևանք թողեց գնդապետ Ա. Բեյ–Սամիկոնյանի խնդրանքը՝ պաշտպանել իր զորքերի ձախ թևը: Ոմանք պնդում են, թե իբր Անդրանիկը Բեյ–Մամիկոնյանի խնդրանքի կապակցությամբ պատասխանել է. «Ես չգիտեմ, թե ով է այդ Բեյ–Մամիկոնյանը: Ես գիտեմ միայն Վարդան Մամիկոնյանին և դրանից ավելի ոչինչ չեմ ուզում իմանալ»: Ուրիշներն էլ պնդում են, թե Բեյ–Մամիկոնյանի հեռագիրն Անդրանիկն ստացել է մեծ ուշացումով: Բոլոր դեպքերում աջ թևի մերկացումն Անդրանիկի՝ ճակատամարտին չմասնակցելու հետևանքով, սպառնալիքի տակ դրեց գնդապետ Նիկոլայ Կորգանովի ուժերը: Այս հարցում միանգամայն իրավացի է Ա. Հարությունյանը, գրելով, որ Անդրանիկը Դսեղից պետք է թներ առներ և թռչեր հասներ Ղարաքիլիսա, որպեսզի փրկության ձեռք մեկներ անպաշտպան ժողովրդին:

Մայիսի 27–ին թուրքական երեք հազարանոց զորքը Գյուլագարակի կողմից գրավում է Բզովդալ գյուղը և Ղշլաղից արևելք դուրս է գալիս հայերի թիկունքը:

Մայիսի 28–ին թուրքերը մտան Վարդանլի գյուղը՝ Ղարաքիլիսայից 5 կմ հարավ–արևելք, և կտրեցին Ղարաքիլիսայից Դիլիջան տանող ճանապարհը, իսկ երեկոյան նրանք արդեն գրավեցին Ղարաքիլիսան: Չնայած թուրքերը խոստացել էին քաղաքի իշխանություններին, թե իբր

ձեռք չեն տա խաղաղ ազգաբնակչությանը, քաղաք մտնելուն պես նրանք սկսեցին կոտորել բոլոր նրանց, ովքեր չէին հասցրել ժամանակին հեռանալ և զբաղվեցին իրենց հատուկ վանդալիզմով: Երեք օր շարունակ թուրքերը թալանում էին բնակչությանը, բռնաբարում կանանց:

Ղարաքիլիսայի զորաբաժնի կորուստներն զգալի էին՝ 1500 սպանված և վիրավոր, շուրջ 1000 գերի: Թուրքերը նույնպես ունեցան զգալի կորուստներ, սակայն նրանք հասցրեցին ազատել իրենց շուրջ 2000 գերիներին:

Հայկական ուժերի մի մասը նահանջեց Դիլիջանի ճանապարհով, իսկ մյուս մասը փրկվեց Թիֆլիս տանող երկաթուղով: Հայկական ուժերի մի մասն էլ հասավ Նիկիտինո (այժմ Ֆիոլետովո) Դիլիջանից 10 կմ հեռավորության վրա և այստեղ մնաց մինչև հաշտության կնքումը, իսկ գլխավոր շտաբը տեղափոխվեց Ախտա (այժմ՝ Հրազդան):

Այսպիսով՝ Ղարաքիլիսայում տեղի ունեցավ չորսօրյա արյունալի ճակատամարտ, որտեղ հայերը կռվեցին խիզախորեն և քաղաքը թուրքերին զիջեցին թշնամու թվական ու զինական գերակշռության ճնշման տակ:

Չնայած դրան՝ Ղարաքիլիսայի ճակատամարտն ունեցավ այն կարևոր նշանակությունը, որ Թիֆլիսը փրկվեց թուրքական ներխուժումից, որտեղ մայիսի 23–ից հայտարարվել էր պաշարողական դրություն: Վրացիները հնարավորություն ստացան ստեղծել գերմանա–վրացական խաղը ջոկատ, որն ուղարկվեց Սանահին կայարան՝ Թիֆլիսից 50 կմ հեռու, և Գերմանիայի դաշնակից թուրքերը իրենց շտաբից ստացված հրամանով կանգ առան:

Բաթումի պայմանագիրն ստորագրելուց առաջ թուրքական 3–րդ Կովկասյան բանակի հրամանատար Վեհիբ փաշան ասել է. «Բեգլի Սիմեդում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում ու Սարդարապատում հայերը արիաբար դիմադրեցին: Բեգլի Սիմեդում հաջողվեց ճեղքել ճակատը միայն այն բանից հետո, երբ աջ թևում երկու գունդ նահանջեց: Կարսում մենք ունեինք 19 հազար կռվող՝ կայազորի ու տեղական ուժերի 7 հազարի դիմաց: Այդուհանդերձ մեր հրամանատարությունը նախատեսել էր երեք շաբաթ՝ քաղաքը գրավելու համար: Սարդարապատում մենք ջախջախվեցինք: Ճիշտ է, մենք թույլ տվեցինք սխալ՝ իջնելով բարձունքներից: Եվ մենք դրա գինը վճարեցինք: Սակայն ամենից տպավորիչը մեզ համար դա Ղարաքիլիսայի կռվի չորս օրերն էին: Շուտափույթ հավաքված հայկական ուժերը շատ ավելի նվազ էին թե՛ թվով,

թե՛ զենքով: Եվ միայն ծանր կորուստների գնով էր, որ կռվի ելքը մեզ համար բարենպաստ եղավ: Առաջին երկու օրը մեր բոլոր հարձակումները ետ էին մղվում հակահարձակումներով: Միայն զինամթերքի սպառումից հետո հայերը ստիպված էին դադարեցնել հերոսական մարտը և նահանջել... Դա ամենալուրջ ճակատամարտն էր, որին ես մասնակցեցի Դարդանելից հետո (1915–1916 թթ. Վեհիբ փաշան թուրքերի Դարդանելյան կամ Գալիպոլյան բանակախմբի հրամանատարն էր — Մ. Կ.): Դուք ունեք բոլոր այն հատկանիշները, որոնք ձեզ կարող են դարձնել մի երկրորդ բուլղարացիներ: Ձեր գյուղացիները նույնքան ազնիվ են, խստաբարո և քաջ, քան այս վերջինները» (Ս. Աֆանասյան, էջ 65–66):

Պատմագիտական գրականության մեջ վկայակոչվում են նաև Վեհիբ փաշայի այն խոսքերը, թե Դարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել (Ա. Հարությունյան, էջ 204):

Սարդարապատի հերոսամարտի արդյունքները և պատմական նշանակությունը լավագույնս ընդհանրացրել է ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը՝ գրելով. «Սարդարապատը, Բաշ–Ապարանը, Դարաքիլիսան հայ ժողովրդի աննկուն կամքի, իր անկախության համար մինչև վերջ միահամուռ՝ ազգովին պայքար մղելու պատրաստակամության և վճռականության վկաներ եղան: Հայ ժողովրդի Մայիսյան այդ հերոսամարտերը վիժեցրին Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և այնտեղի հայերին ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը: Հայերի հերոսական ոգին, համաժողովրդական սխրանքը, հայրենիքի պաշտպանության միասնական կամքը ստիպեցին թուրքերին հաշվի նստել իրենց հետ: Հաղթանակը հայոց պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության ստեղծման նախադրյալներ ընծեռեց» (Հրանտ Ավետիսյան. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 236):

Ազդու է նաև Սերժ Աֆանասյանի եզրափակումը. «Սարդարապատը խորհրդանիշն է պատվի ու ազատության համար մղված պայքարի, մի պայքարի, որը պահանջում էր ինքնահրաժարում ու գերմարդկային զոհաբերություններ, մի հրաշք, պայմանավորված ամբողջ մի ժողովրդի կամքով ու վճռականությամբ՝ մեռնել զենքը ձեռքին Արարատյան դաշտում, Էջմիածնի պատերի տակ, բայց թույլ չտալ, որ բարբարոսությունն ամբողջացնի իր գործը: Այդ հաղթանակը անսպառ ոգևորության աղբյուր է: Նա ապացուցում է, որ այս մարտիրոսացած ժողովրդի ե-

րակներում տակավին հոսում է, ինչպես 15 դար առաջ Ավարայրում, արյունն այն հերոսների, որոնք ստեղծել են նրա պատմության աստեղային ժամերը:

Մայիսի 24–ը, ինչպես ապրիլի 24–ը, պետք է մեծարվի բոլոր հայերի կողմից, քանի որ այն ունի համազգային նշանակության իմաստ...

Սարդարապատի, Բաշ–Ապարանի, Դարաքիլիսայի կռիվներում մեր հերոսների թափված արյունը հնարավորություն տվեց դնել պետության հիմքը և ապահովել երեքհազարամյա ազգի շարունակությունը» (Ս. Աֆանասյան, էջ 81–82):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Անդրկովկասի անկախության հռչակումից հետո (1918 թ. ապրիլի 22) Ե. Գեգեչկորին հրաժարական տվեց և կազմվեց նոր կառավարություն՝ Ա. Չխենկելիի գլխավորությամբ: Սեյմը որոշել էր թուրքերի հետ Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները շարունակել Բաքումում: Բաքումի հաշտության կոնֆերանսին մասնակցելու համար կազմվեց Անդրկովկասյան նոր պատվիրակություն հետևյալ կազմով. Ա. Չխենկելի՝ նախագահ, Ն. Նիկոլաձե, Ա. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Հաջինսկի, Խան–Խոյսկի: Գեներալ Գ. Ղորղանյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ նշանակվեցին խորհրդականներ:

Բաքումի կոնֆերանսի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1918 թ. մայիսի 11–ին: Թուրքերի կողմից կոնֆերանսին մասնակցում էին՝ Խալիլ բեյը, Վեհիբ փաշան և ուրիշներ, Գերմանիայի կողմից՝ գեներալ Ֆոն Լոսովը և ուրիշներ: Նախագահում էր Խալիլ բեյը:

Ա. Չխենկելին առաջարկեց իբրև բանակցությունների հիմք ընդունել Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը, սակայն Խալիլ բեյը վճռականորեն մերժեց այդ առաջարկը, պատճառաբանելով, որ Տրապիզոնի բանակցությունների խզումից հետո նոր դեպքեր են տեղի ունեցել՝ պատերազմ է եղել Թուրքիայի և Անդրկովկասի միջև, արյուն է հոսել, ուստի այլևս անկարելի է գոհանալ Տրապիզոնում ներկայացված պայմաններով: Այնուհետև Խալիլ բեյը Չխենկելիին հանձնեց մի կնքված ծրար, որի մեջ էր Թուրքիայի և ԱԴՖՀ միջև կնքվելիք հաշտության պայմանագրի նոր նախագիծը: Դրանով էլ Բաքումի խորհրդաժողովի առաջին ու վերջին նիստն ավարտվեց:

Ներկայացված նախագիծը բաղկացած էր 12 հոդվածներից, 3 հավելվածներից և սարսափելի ծանր պայմաններ էր պարունակում ամբողջ Անդրկովկասի, Վրաստանի և, մանավանդ, Հայաստանի համար:

Վրաստանից գրավվում էր Բաթումի շրջանը՝ նավահանգստով, Ախալցխայի գավառը: Հայաստանից խլվում էին Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Շիրակի, Էջմիածնի գավառների մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ–Կարս և Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղին: «Հայաստան փաստորեն չէր մնում,— գրում է Ս. Վրացյանը,— հայերին թողնվում էր հազիվ 11.000 քառակուսի վերստ լեռնոտ տարածություն Արագածի և Սևանա լճի միջև: Հողային պայմաններին զատ դրվում էին և չափազանց ծանր տնտեսական, առևտրական, ռազմագիտական և այլ պահանջներ» (Ս. Վ., էջ 119):

Հայ ժողովրդի մղած Մայիսյան հերոսամարտերից հետո պարզ դարձավ, որ Անդրկովկասը արագ քայլերով գնում էր դեպի քայքայում, որովհետև օրեցօր սաստկանում էին հակամարտությունները վրացիների, ադրբեջանցիների ու հայերի միջև: Վրացիները որոնում էին գերմանացիների հովանավորությունը և գաղտնի բանակցություններ էին վարում նրանց հետ, ադրբեջանցիները բռնել էին թուրքերի փեշից և քաշում էին դեպի Բաքու, որն ադ օրերին բոլշևիկների ձեռքին էր: Հայերը մնացել էին մենակ և օրհասական կռիվ էին մղում առաջ շարժվող թուրքական զորքերի դեմ:

1918 թ. մայիսի 26–ին Բաթումում Խալիլ բեյը Չխենկելուն հանձնեց վերջնագիր, որով պահանջվում էր 72 ժամվա ընթացքում պատասխանել երկու շաբաթ առաջ իրենց ներկայացրած հաշտության նախագիծն ընդունել կամ չընդունելու մասին:

Նույն օրը՝ 1918 թ. մայիսի 26–ին, Թիֆլիսում գումարվեց Սեյմի վերջին, ողբերգական նիստը, որը վրացիների պնդմամբ ընդունեց հետևյալ բանաձևը. «Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության խնդրում երևան եկան հիմնական տարակարծություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կազմող ազգերի միջև, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակավոր իշխանության գոյությունը, Սեյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և հայտարարում չեղյալ իր լիազորությունները» (Ս. Վ., էջ 159):

1918 թ. մայիսի 26–ի կեսօրին Սեյմը ցրվեց, իսկ հինգ ժամ անց, նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Նոյ Ժորդանիայի նախագահությամբ, որը հանդիսավորապես հռչակեց Վրաստանի անկախությունը:

Ինչպես գրում է Ս. Վրացյանը, վրացիների վարմունքը սարսափելի կացություն ստեղծեց հայերի համար և առաջացրեց նրանց անսահման վրդովմունքը: Հայերը, ոչ առանց հիմքի, նենգ դավադրություն ու դավաճանություն էին տեսնում վրացիների վարմունքի մեջ: Նրանք զգում էին, որ մի վատ խաղ է խաղացվել իրենց գլխին: Նույնիսկ նույն օրը՝ մայիսի 26–ի երեկոյան, Հայոց Ազգային խորհուրդը բուռն վիճաբանություններից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ որոշեց բողոքել Վրաստանի անկախության դեմ, սակայն դեպքերի հետագա զարգացման հետևանքով այդ որոշումը չգործադրվեց:

Ս. Վրացյանը վկայում է, որ այդ օրերին հայ գործիչների մեջ միաձայնություն չկար: Ա. Ահարոնյանը, Ստ. Մամիկոնյանը, Տ. Բեկզադյանը, Ա. Բաբայյանը, Ռ. Տեր–Մինասյանը և էսէռները վճռականորեն դեմ էին անկախությանը: Խ. Կարճիկյանը, Ս. Հարությունյանը, Ավ. Շահխաթունյանը, Ս. Վրացյանը, Ա. Երզնկյանը, մենշևիկները կողմնակից էին շուտափույթ կերպով Հայաստանի անկախությունը հայտարարելուն:

Այդ հարցում վճռական խոսք ասաց ՀՀԴ–ն: Մայիսի 26–ի երեկոյան տեղի ունեցավ ՀՀԴ Թիֆլիսի կոմիտեի արտակարգ նիստը, որն անհրաժեշտ գտավ, որ Հայոց Ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, ստանձնի կառավարական ֆունկցիաներ:

1918 թ. մայիսի 27–ին Ադրբեջանի ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանի անկախությունը:

Անկախության հայտարարության վրա պնդում էին նաև Բաքումից վերադարձած հայ ներկայացուցիչները՝ Հ. Քաջազնունին, Ա. Խատիսյանը, Մ. Պապաջանյանը, որոնք մայիսի 27–ի երեկոյան մանրամասնորեն զեկուցեցին բանակցությունների ընթացքի և ստեղծված իրավիճակի մասին: Հաջորդ օրը՝ 1918 թ. մաիսի 28–ին Հայոց Ազգային խորհուրդը որոշեց Բաքում ուղարկել հայկական պատվիրակություն (Ա. Խատիսան, Մ. Պապաջանյան, Հ. Քաջազնունի)՝ տալով նրան անկախ Հայաստանի անունից թուրքերի հետ բանակցելու և հաշտություն կնքելու բացարձակ լիազորություն: Իսկ Հայաստանի անկախության հայտարարությունը, ինչպես Ս. Վրացյանն է նշում՝ եղավ ավելի ուշ՝ մայիսի 30–ին, ավելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգային խորհրդի հոժար կամքով:

Մայիսի 29–ին գումարվեց ՀՀԴ Արևելյան և Արևմտյան բյուրոների, ՀՀԴ Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի, Սեյմի ու Ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների միացյալ նիստը, որտեղ որոշվեց

Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն, կազմել կառավարություն միջկուսակցական հիմունքներով՝ մինչև օրենսդրական ժողովի գումարումը: Որոշվեց նաև Ազգային խորհուրդն ու կառավարությունը տեղափոխել Երևան, որը պիտի դառնար Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը:

Այդ ժողովից հետո 1918 թ. մայիսի 30–ին Հայոց Ազգային խորհուրդը հրապարակեց հետևյալ հայտարարությունը, որն ըստ Ս. Վրացյանի, թեև իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին:

«Հայտարարություն: Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար:

Հայոց Ազգային խորհուրդ, 1918 թ. մայիս 30, Թիֆլիս»: Այս բանաձևի հեղինակը Նիկոլ Ադբալյանն էր:

Այսպիսով՝ ինչպես գտնում է Ս. Վրացյանը, Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվի մայիսի 30–ը, սակայն, հակառակ դրան, համարվում է մայիսի 28–ը, այսինքն՝ այն օրը, երբ Ազգային խորհուրդը որոշեց հայկական պատվիրակություն ուղարկել Բաքում, իսկ հաշտության բանակցություններ վարելու թուրքերի նախապայմանը անկախության հայտարարությունն էր, ուստի այդ օրն էլ կարող է համարվել անկախության սկզբնավորության օր (Ս. Վ., էջ 161):

Այսպես թե այնպես, շարունակում է Ս. Վրացյանը, Հայաստանի Հանրապետության ծագման օրը եղավ մայիսի 28–ը:

Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար մտավ ազգային տոնացույցի մեջ, իբրև սրբազան օրերից մեկը:

Հայաստանի անկախության հռչակման առիթով ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյանը գրել է. «Մեր պատմության այդ ծանրագույն ժամանակաշրջանը միաժամանակ ազգային իղձերի իրականացման ժամանակաշրջան էր: Հինգ դարից ավելի կորցրած պետականության վերականգնումը մեր հինավուրց ժողովրդի դարավոր բաղձանքն էր, որն ի-

ռականացավ համառ պայքարով, անթիվ զոհերով ու զրկանքներով: Հայկական պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակն էր, բեկումնային իրադարձություն նրա կյանքում, բազմադարյան պատմության մեջ» (Հրանտ Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 256):

Արխիվային նորահայտ մի փաստաթղթի հիման վրա Հ. Ավետիսյանը գրում է, որ Հայաստանի պետականության վերականգնման և Հայաստանի Հանրապետության ստեղծման փաստը ի լուր ամբողջ աշխարհի հայտնել են Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը, վարչապետ Հ. Քաջազնունին, արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը՝ հետևյալ հակիրճ ու հստակ ծանուցմամբ. «Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումից հետո Հայոց Ազգային խորհուրդը, այն իրավունքների հիման վրա, որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, 1918 թվականի մայիսի 28–ին որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայկական ժողովրդավարական Հանրապետություն» (Հրանտ Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 257):

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակներ Ա. Խատիսյանը (պատվիրակության նախագահ), Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը Բաթում հասան 1918 թ. մայիսի 30–ին և նույն օրն էլ, երեկոյան ժամը 5–ին, սկսվեցին բանակցություններ հայկական և օսմանյան պատվիրակությունների միջև: Մի շարք նիստերից հետո կողմերը եկան համաձայնության և 1918 թ. հունիսի 4–ին ստորագրվեց «Հաշտության և բարեկամության պայմանագիր Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև», երեք հավելվածներ, որոնք վերաբերում էին տրանզիտին, սահմանակից շրջաններում առևտրին, կրոնական ազատություններին և մեկ համաձայնագիր՝ երկաթուղային գույքի բաշխման մասին: Թուրքական կողմից այն ստորագրեցին պետական խորհրդի նախագահ Խալիլ բեյը և Կովկասյան ռազմաճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ–լեյտենանտ Վեհիբ Մահմեդ փաշան, հայկական կողմից՝ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը: Դա առաջին միջազգային փաստաթուղթ էր, որ ստորագրում էին անկախ ՀՀ–ն ներկայացուցիչները:

Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից: Առաջին հոդվածն արձանագրում էր, որ Օսմանյան կայսերական կառավարության և ՀՀ կառավարության միջև հաստատվում է հաշտություն և մշտական բարեկամություն:

Երկրորդ հոդվածը գծում էր հայ–թուրքական սահմանը: Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Շարուր–Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզվանը, Սարիղամիշը, Ախալքալաքը, Լոռին: Հայաստանը բաղկացած էր լինելու Նոր Բայազետի գավառից, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների մի մասից՝ ընդամենը 9.000 քառակուսի վերստ (մոտ 11.000 քառակուսի կիլոմետր) տարածություն: Պետական սահմանն անցնում էր Երևանից 7 կիլոմետր հեռավորության վրա: Ըստ ակադեմիկոս Հ. Ավետիսյանի հաշվումների՝ Թուրքիան հայերին էր «հատկացնում ամբողջ Անդրկովկասի տարածքի 5 տոկոսը, որտեղ բնակում էր ընդամենը 310 հազար մարդ, որից էլ հայեր՝ 230 հազար: Մինչդեռ Վրաստանին տրվում էր երկրամասի տարածքի 33 տոկոսը՝ 61.000 կմ քառակուսի, Ադրբեջանին՝ 38 տոկոսը՝ 70.000 կմ քառակուսի: Հայերը պահանջում էին 54,5 հազար կմ քառակուսի, որը 29 տոկոսն էր, բայց ստացան 5 տոկոս: Կովկասահայության ճնշող մասը՝ 1 միլիոն 200 հազար մարդ, բնակվելու էին ՀՀ սահմաններից դուրս: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի արտահայտությամբ՝ «Թուրքերը հայերին տեղ տվեցին Սևանում լողանալու համար, բայց դուրս գալու՝ չորանալու համար, տեղ չտվեցին» (Հ. Ա., էջ 255–256):

Ստորագրված հավելվածներով թուրքական զորքերն իրավունք էին ստանում անարգել անցնել Հայաստանի տարածքով, օգտվել Ղարաքիլիսա–Ղազախ խճուղուց՝ զորամասեր և ռազմամթերք փոխադրելու համար:

Ակադեմիկոս Հ. Ավետիսյանը գտնում է, որ Թուրքիան համաձայնեց ինքնիշխան Հայաստանի գոյությանը այն հաշվով, որ տնտեսապես թույլ և չնչին տարածք ունեցող Հայաստանը չի կարող վտանգ սպառնող Թուրքիային, իսկ հեռանկարում նրանք տեսնում էին այդ Հայաստանի վերացումը (Հ. Ա., էջ 254):

Երրորդ հոդվածը նախատեսում էր, որ հայ–ադրբեջանական սահմանի վերաբերյալ համաձայնագրի մասին պիտի հաղորդվի օսմանյան կառավարությանը:

Չորրորդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորում էր զենքի ուժով օգնություն ցույց տալ ՀՀ կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը խնդրեր՝ երկրում կարգն ու հանգստությունը ապահովելու համար:

Հատուկ ուշադրության է արժանի հինգերորդ հոդվածը, որով ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տարածքում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ: Խոսքն այստեղ վերաբերում էր Անդրանիկի զորամասին և գոյություն ունեցող ֆիդայական խմբերին: Հատկանշական է, որ այդ հոդվածի հիշատակումը Ս. Վրացյանի մոտ բացակայում է:

Վեցերորդ հոդվածում խոսվում էր ՀՀ–ում բնակվող մուսուլմանների կրոնը հարգելու մասին, յոթերորդ հոդվածը վերաբերում էր հյուպատոսական կոնվենցիային, ութերորդը՝ երկաթուղային տարիֆներին, իններորդը՝ փոստային և հեռագրական կապին, տասներորդը՝ կողմերի քաղաքացիների անշարժ գույքի տնօրինմանը:

Ուշագրավ է տասնմեկերորդ հոդվածը, ըստ որի, ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործադրել բոլոր ջանքերը՝ որպեսզի Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը:

Տասներկուերորդ հոդվածով կողմերը պայմանավորվում էին ուժի մեջ թողնել Բրեստ–Լիտովսկի պայմանագրի դրույթները, տասներեքերորդը վերաբերում էր զորքերի էվակուացիային, իսկ վերջին՝ տասնչորսերորդ հոդվածը նախատեսում էր պայմանագիրը փոխադարձաբար վավերացնել մեկ ամսվա ընթացքում (Բաքումի պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, պրոֆ. Ջոն Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 531–537, էջ 771–ի ծանոթությունը):

Բաքումի պայմանագրի մասին Ս. Վրացյանն իր խոսքն ավարտում է այսպես՝ վերջնահաշվարկը, հավանաբար, թողնելով ընթերցողին. «Այսպիսով,— գրում է նա,— ըստ Բաքումի դաշնագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետություն: Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցության մեջ, իբրև ազատ անձնավորություն միջազգային իրավունքի: Նրա հողի տարածությունը մոտավորապես 12.000 քառակուսի կիլոմետր էր, բնակչության թիվը գաղթականներով

միասին՝ մոտ մեկ միլիոն: Եվ... մայրաքաղաքից յոթ կիլոմետր հեռու երևում էին թուրքական թնդանոթները...» (Ս. Վ., էջ 164):

Ինչպես նկատել է ակադեմիկոս Հ. Ավետիսյանը, Բաքումի պայմանագիրը ոչ թե թուրքական «գթասրտության» արդյունք էր, նրանց «պարգևն» էր հայերին, ինչպես փորձում էին ներկայացնել Կարաբեքիրը, Վեհիբը և ուրիշներ, այլ թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառը, ինչպես երևում է Խալիլ բեյի, նույն Վեհիբ փաշայի և Շևքի փաշայի ակամա խոստովանանքներից, Սարդարապատի, Բաշ–Ապարանի և Ղարաքիլիսայի տակ հայերի հերոսամարտերն էին: Դեռևս 1920 թ. ապրիլի 20–ին, ժխտելով Հայաստանի անկախությունը թուրքական շնորհ համարելու մտայնությունը, Համո Օհանջանյանը հայտարարել է, «Իր անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը հայ ժողովուրդը ապացուցել է Սարիղամիշի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի և այլ մարտերում, ուր Հայաստանի հազարավոր զավակներ զոհվեցին այդ անկախության համար... Հայ ժողովուրդը իր այս զոհերով ստեղծեց անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը» (Հ. Ա., էջ 253–254): Ավելացնենք նաև, որ Ղարաքիլիսայի հերոսամարտում զոհվել էր Հ. Օհանջանյանի ավագ որդին՝ Մոնիկը:

Ըստ Հ. Ավետիսյանի հաշվարկների՝ Բաքումի պայմանագրով Անդրկովկասից Թուրքիային բռնակցվեց 38 հազար քառակուսի վերստ տարածք, որը պոկված էր Հայաստանից և Վրաստանի հայաբնակ վայրերից: Այդ տարածքը 12,5 հազար քառակուսի կիլոմետրով ավելին էր այն տարածքից, որ թուրքերը զավթել էին Բրեստի դաշնագրով (նշվ. աշխ., էջ 256):

Սակայն Բաքումի թալանչիական պայմանագիրը կարճատև գոյություն ունեցավ: 1918 թ. Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր անվերապահ պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում, և դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից, իսկ Կարսի մարզը դատարկեցին 1919 թ. ապրիլին:

Խորհրդային ժամանակաշրջանի պատմագրության մեջ Բաքումի պայմանագիրը գնահատված է միանշանակորեն՝ ընդգծված է նրա հակախորհրդային ուղղվածությունը:

Անվանի պատմաբան Լեոն գրել է. «Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը: Մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանա լճի չորս կողմը հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզման: Պև-

տական սահմանը անցնում էր Երևանի տակով, հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ երկարությամբ երկաթուղի» (Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 404):

Իսկ Անդրանիկը զայրույթով ասել է. «Վեց հարյուր տարվան ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցնեք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմանները հանդուրժել, մոռանալով մեր երեսուն տարվա զոհերը և մեկ միլիոն նահատակները» (Հայ ժողովրդի պատմություն, բուհական դասագիրք, Երևան, 1979, էջ 420):

Մ. Արզումանյանը գրում է. «Անդրկովկասի հակահեղափոխական կառավարիչները, երկրամասը կտրելով Սովետական Ռուսաստանից և դուրս գալով Բրեստի հաշտության դեմ, ստացան Բաքումի ստորացուցիչ և ստրկացուցիչ պայմանագիրը, որը նրանց շղթայակապ արեց ու հանձնեց թուրքական զավթիչների ողորմածությանը» (Մ. Ա., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 165):

Ինչպես գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, Անդրանիկին հատկապես հավասարակշռությունից հանել էր Բաքումի պայմանագրի այն հոդվածը, որի համաձայն ինքն ու իր զորքը համարվում էին օրենքից դուրս: Ամենաթանձր հիշոցներ հղելով պայմանագիրը ստորագրողների հասցեին՝ Անդրանիկն այն համարում էր սոսկալի տարողությամբ դավաճանություն: Մերժելով Բաքումի պայմանագիրը՝ Անդրանիկը մերժեց նաև Հայաստանի անկախությունը, Հայաստանի Հանրապետությունը՝ այն համարելով թուրքից ստացած նվեր:

Ժողովրդական հերոսը հայության համար կործանարար էր համարում Ռուսաստանից անջատ նրա գոյությունը: Հր. Սիմոնյանը փաստերով ցույց է տալիս, որ վրդովված էր ոչ միայն Անդրանիկը, այլև ողջ Արարատյան երկիրը: Երևանի փողոցներում խմբված մարդկանց հուզված խոսակցությունների ընդհանուր եզրակացությունը մեկն էր. հայ զորքը հաղթել է կռվի դաշտում, իսկ թուրքերը, հայ զինվորներին խաբելով, դիվանագիտական խոշոր հաղթանակ են տարել: Ալեկոծվող ժողովրդի հուզմունքը գնալով աճեց և վերաճեց զանգվածային բողոքների: Հունիսի 5–9–ը Երևանում տեղի ունեցան խոշոր ցույցեր հաշտության դեմ: Արամ Մանուկյանը ստիպված էր հանդես գալ և համոզել ժողովրդին, որ այլ ելք չկար:

Դժգոհ էր նաև զորքը: Գեներալ Մ. Սիլիկյանը Երևանի Ազգային խորհրդից և անձամբ Արամից պահանջեց չենթարկվել Բաքումի պայմանագրին, առաջ շարժվել, թուրքերից մաքրել Արարատյան և Շիրակի դաշտերը, գրավել Կարսը՝ մի կողմ թողնելով Ալեքսանդրապոլը: Շատ զորամասերի զինվորներ ու սպաներ հեռագրերի տարափով պահանջում էին նույնը, այլապես սպառնում էին չենթարկվել հրամանատարությանը: Եվ անգլիացիների հնարավոր օգնության հետ հույսեր կապող Անդրանիկը Դիլիջանից բռնեց Բաղդադի ճանապարհը՝ Միջագետքում գտնվող անգլիական զորքերին հանդիպելու նպատակով (Հր. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Գիրք Բ, Երևան, 1996, էջ 161–165):

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Բաքումի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո թուրքական զորքերի հրամանատարությունը շտապում էր օր առաջ հասնել Բաքու, որտեղ դեռևս 1918 թ. ապրիլի 25–ին ստեղծվել էր խորհրդային իշխանություն՝ ժողկոմխորհուրդ՝ բոլշևիկ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ: Մինչև հուլիսի վերջերը՝ երեք ամսից մի քիչ ավել տևած այդ իշխանությունը հայտնի է «Բաքվի կոմունա» անունով:

Բաքվի պաշտպանությունը մեծ նշանակություն ուներ ինչպես Խորհրդային Ռուսաստանի սահմանները պաշտպանելու գործում, այնպես էլ բացառիկ էր նրա նշանակությունը հայության գոյության համար: Ինչպես գրել է Բաքվի հերոսական պաշտպանության ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ գեներալ Հակոբ Բագրատունին, գրավելով Բաքուն՝ տեղի հայերի համար իրենց բոլոր հետևանքներով, թուրքերը հետևողականորեն կգրավեին Ղարաբաղն ու Երևանը, որը կնշանակեր մեր ժողովրդի համար ֆիզիկական կործանում, ուստի Բաքվի հերոսական և փառապանծ պաշտպանությունը հսկայական դեր խաղաց հայ ժողովրդի փրկության գործում (Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 299–300):

Իսկ դաշնակցական գործիչ Սերգեյ Մելիք–Յոլչյանը գրել է, թե Բաքվի նշանակությունը բուն Հայաստանի համար մեծ է նրանով, որ Սարդարապատը, Ղարաքիլիսան և Բաշ–Ապարանը իրենց հաղթությամբ մեծ չափով պարտական են Բաքվի զորքերին, որոնք քաշելով իրենց վրա թշնամու առավելագույն և լավագույն ուժերը՝ հնարավորություն տվին նրանց պատվով դուրս գալու այդ հերոսամարտերից:

Դեռևս 1917 թ. վերջերին Բաքվում նաև ստեղծվել էր Ազգային խորհուրդ, որի նախագահ էր ընտրվել դաշնակցական Աբրահամ Գյուլխանդանյանը:

Անդամներից էին Խանասորի Վարդանը (Մեհրաբյան), էսէռ Լևոն Աթաբեկյանը, Բագրատ եպիսկոպոսը, Ռոստոմը, Քաջազնունին:

1918 թ. հունվարի կեսերին՝ Շամխորի արյունոտ դեպքերից հետո, Բաքվի և Թիֆլիսի միջև երկաթուղային կապը կտրվեց: Այդ պատճառով Բաքվում կուտակվում էին ավստրո–գերմանական ճակատից տուն վերադարձող հազարավոր հայ զինվորներ, որոնք հայտնվեցին թշվառ վիճակի մեջ: Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը իր վրա վերցրեց նրանցից կանոնավոր զորամասեր կազմելու և ռազմաճակատ ուղարկելու գործը: Այդ գործը հանձնվեց խմբապետ Համազասպին (Սրվանձտյան): Շուտով ստեղծվեց 3000 հոգուց բաղկացած և երեք գումարտակից կազմված Համազասպի բրիգադը: Ազգային խորհուրդը կազմակերպեց նաև 2–րդ հայկական պահեստի գունդը՝ գնդապետ Ս. Եղիազարյանի հրամանատարությամբ:

1918 թ. մարտին Բաքվում սկսվեց հայ–ադրբեջանական ընդհարում, որը զսպվեց Ազգային խորհրդի ուժերով, իսկ հայերը պատսպարեցին ադրբեջանցի մտավորականներին:

1918 թ. ապրիլի 14–ին Բաքվի բանվորների և զինվորների սովետի և Հայոց Ազգային խորհրդի միջև կնքվեց համաձայնություն, ըստ որի՝ Համազասպի բրիգադը վերակազմավորվեց Կարմիր բանակի 16–րդ և 17–րդ գումարտակների՝ Համազասպի հրամանատարությամբ, իսկ նրա օգնական նշանակվեց Սերգո Մանուչարյանը: Համաձայնագիրը ստորագրեցին Ս. Շահումյանը, Մ. Ղորղանյանը, Ա. Գյուլխանդանյանը և ուրիշներ: Այդպիսով հայկական զորամասերը ապրիլի 14–ից անցան բոլշևիկների ձեռքը: Նրանց թիվը 10–12 հազար էր՝ 50 թնդանոթներով (Ս. Վ., էջ 175): Նրանց մեջ էր հաշվվում նաև դաշնակցական զորամասը՝ 700 ընտիր մարտիկներով՝ Գ. Բալայանի հրամանատարությամբ: Այն անմիջականորեն ենթարկվում էր կուսակցության ղեկավար մարմնին և նրա մարտական խումբն էր, գործողության մեջ էր դրվում միայն արտակարգ դեպքերում:

Բաքվի կոմունայի ստեղծումից հետո ռազմածովային կոմիսար և գլխավոր հրամանատար նշանակվեց բոլշևիկ Գրիգորի Կորգանովը (Ղորղանյան), շտաբի պետ՝ գնդապետ Ավետիսյանը, հայկական զորամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ գնդապետ Ղազարյանը:

Միաժամանակ Ստ. Շահումյանի գլխավորած կառավարությունը ձեռնամուխ եղավ զինվորական ուժերի վերակազմմանն ու լրացմանը:

Վ. Ի. Լենինը Ս. Տեր–Գաբրիելյանի միջոցով կոմունարներին է ուղարկում 4 զրահամեքենա, 13 օդանավ, այլ օգնություն: Լենինի ցուցումով կազմակերպվում և Գ. Պետրովի հրամանատարությամբ դեպի Բաքու է մեկնում 6 գնդից բաղկացած մի մեծ ջոկատ, սակայն նրանց մեծ մասը թողնվում են Ցարիցինում:

Հենց այդ ժամանակ էր, որ Անդրանիկը, որն իր զորամասով գտնվում էր Նախիջևանի գավառում, 1918 թ. հուլիսի 14–ին Ջուլֆայից հեռագրում է Ստ. Շահումյանին և հայտնում, որ ինքը Նախիջևանը հայտարարում է Ռուսական հանրապետության անբաժան մասը և ենթարկվում է Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը:

Ստ. Շահումյանն այդ մասին հաղորդում է Վ. Լենինին և միաժամանակ ջերմորեն ողջունում «իսկական ժողովրդական հերոս» Անդրանիկին ու նրա դրոշի տակ կռվող զինվորներին: Սակայն, դժբախտաբար, ստեղծված բարդ պայմաններում Անդրանիկը չկարողացավ միանալ Բաքվի սովետական զորքերին, որոնց ընդհանուր թիվը հայկական զորքերի հետ միասին շուրջ 17.000 էր, որոնց շուրջ 70 տոկոսը հայեր էին: Բաքվի Կարմիր բանակի 3–րդ բրիգադի հրամանատարն էր դաշնակցական Համազասպը, շտաբի պետը՝ անկուսակցական Ս. Մուսայելյանը, բոլշևիկյան կոմիսարը՝ Ա. Միկոյանը:

Բաքվի պաշտպանների շարքերում էին Անդրանիկի մերձավոր զինակիցներ Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և Սեբաստացի Մուրադը, որոնցից վերջինը զոհվեց Բաքվում:

Այդ նույն ժամանակ Նուրի փաշան Գանձակում կազմավորում էր հռչակավոր «իսլամական բանակը», որի նպատակն էր գրավել Բաքուն: Հունիսի սկզբին այստեղ հասան նաև թուրքական կանոնավոր զորամասեր: Հունիսի սկզբներին թուրք–ադրբեջանական ուժերի առաջապահները երևացին Հաջի–Կաբուլի շրջանում, իսկ մեկ այլ թևը շարժվում էր դեպի Շամախի:

Նախաձեռնությունը վերցնելու նպատակով 1918 թ. հունիսի 5–ին Բաքվի զորքերն անցան հարձակման, մինչև հունիսի 26–ը գրավեցին Կարամարգյան–Քուրդամիր և Զուբովկա–Պետրոպավլովսկ գծերը և հարուստ ռազմավար: Թշնամին թողեց հարյուրավոր դիակներ:

Հունիսի 25–ին թուրքական մի դիվիզիա շարժվեց դեպի Գյոկչա, իսկ մի ուրիշը՝ Եվլախի ուղղությամբ: Հունիսի 27–29–ը տեղի ունեցան կատաղի կռիվներ: Մեծ զոհեր տալուց հետո հունիսի 29–ին թուրքերն անցան հակահարձակման: Եռօրյա արյունահեղ կռիվներից հոգնած՝ ա-

նոթի ու ծարավ Բաքվի զորքերը թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ սկսեցին նահանջել դեպի Կարամարգյան: Հուլիսի 6–ին Բաքվի ուժերը կանգնեցին Շամախի–Քուրդամիր գծի վրա:

Հուլիսի 5–ին Պարսկաստանից Բաքու հասավ գնդապետ Լազար Բիչերախովն իր զորամասով և նշանակվեց Բաքվի պաշտպանության պետ: Հուլիսի 8–26–ը տեղի ունեցան արյունահեղ կռիվներ, որից հետո Բաքվի ուժերը նահանջեցին նաև Շամախիից և հասան մինչև Խուրդալան ու Ալեաթ:

Հուլիսի 26–ին դավաճանաբար լքելով դիրքերը՝ Դերբենդ փախավ Բիչերախովը: Նույն օրը թուրքերի արևելյան ճակատի հրամանատար Մուրսել փաշան Հայոց Ազգային խորհրդին ուղարկեց վերջնագիր՝ քաղաքը հանձնելու մասին:

Հուլիսի 27–28–ին թուրքերն արդեն քաղաքի տակ էին՝ Բիբի–Հեյբաթում ու Բալաջարիում: Դրությունը հուսահատական էր: Ռուսաստանից օգնություն ստանալու հույս չկար: Մնում էր Պարսկաստանի վրայով անգլիացիներից օգնություն ստանալու աղոտ հույսը: Հուլիսի 27–ին այդ հարցը դրվեց բանվորների, գյուղացիների, զինվորների և նավաստիների պատգամավորների խորհրդի, նավային կոմիտեների և Կովկասյան Կարմիր բանակի ռազմեղկոմի արտակարգ նիստում: Բոլշևիկներին հակառակ՝ խորհուրդը ձայների մեծամասնությամբ (258 կողմ, 236 դեմ) որոշեց Բաքու հրավիրել անգլիացիներին:

1918 թ. հուլիսի 31–ին Բաքվի սովետի նիստում ժողկոմսովետը ցած դրեց իր լիազորությունները, հայտարարելով, որ չի կարող ոչ հանձնվել թուրքական զավթիչներին, ոչ էլ հրավիրել անգլիացիներին: Նրանք նավերի վրա փոխադրեցին ռազմամթերքը, պարենը, բանկերի գումարները, բոլշևիկյան զորքերն ու հեռացան դեպի Աստրախան: Բացի Ս. Շահումյանից, հեռացողների մեջ էին Արտ. Կարինյանը, Գ. Կորգանովը, Ս. Տեր–Գաբրիելյանը, Աշ. Հովհաննիսյանը և ուրիշներ:

Ս. Շահումյանի հրաժարականից հետո՝ հուլիսի 31–ին, Բաքվում ստեղծվեց Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի և բանվորների, զինվորների, նավաստիների խորհրդի դիկտատուրա, որի նախագահն էր էսէռ Տիշկովը, փոխնախագահը՝ դաշնակցական Ալեքսանդր Առաքելյանը, ֆինանսների կոմիսարը՝ դաշնակցական Ս. Մելիք–Յոլչյանը, ներքին գործերի կոմիսարը՝ էսէռ Լև Ումանսկին, Ռոստոմը, Աբրահամ Վելունցը և ուրիշներ՝ թվով 18 մարդ: Ռազմածովային կոմիսար նշանակվեց գեներալ Հակոբ Բագրատունին: Դիկտատուրայի

զորքերի ընդհանուր հրամանատար նշանակվեց գեներալ Դոկուչանը, շտաբի պետ՝ գնդապետ Ավետիսյանը:

Հուլիսի 31–ին սկսվեց անհավասար մարտ հայերի և թուրքական բանակի ու խաժամուժի միջև, որը տևեց 6 օր: Հայերի դեմ կանգնած էր թուրքական 30–հազարանոց բանակը (ըստ Հր. Սիմոնյանի՝ 15 հազար — Մ. Կ.)՝ Նուրի և Մուրսել փաշաների հրամանատարությամբ: Օգոստոսի 4–ին և 5–ին կռիվներն ավելի սաստկացան:

Օգոստոսի 7–ին Բաքու հասավ անգլիական զորքերի առաջին ջոկատը՝ 600 մարդ, օգոստոսի 13–ին՝ երկրորդը՝ 1000 հոգի, ընդամենը՝ 1640 հոգի, որից կռվող ուժ՝ 900 զինվոր: Մինչև օգոստոսի 17–ը Բաքու հասավ անգլիական մեկ բրիգադ՝ երեք գումարտակ և մեկ դաշտային մարտկոց, երեք զրահապատ մեքենա: Ընդհանուր հրամանատարն էր գեներալ Դենստերվիլը:

Օգոստոսի 29–ին թուրքերը հարձակման անցան անգլիացիների գրաված ճակատում: Վերջիններս ուժեղ դիմադրությունից հետո թողեցին դիրքերի մի մասը: Սեպտեմբերի 1–ին թուրքերը նոր հարձակում սկսեցին, և Դենստերվիլն ու ֆրանսիական գնդապետ Շարդինին Ցենտրոկասպիի դիկտատուրայի առջև դրեցին Բաքուն անմիջապես հանձնելու հարցը: Դիկտատուրան մերժեց այդ առաջարկը և պահանջեց, որ անգլիացիները մեկնեն ճակատ՝ հակառակ դեպքում սպառնալով հրետակոծել նրանց նավերը:

Կռիվները շարունակվեցին, սակայն թշնամին քայլ առ քայլ մոտենում էր քաղաքին: Սեպտեմբերի 14–ի լուսաբացին թուրքերը գրավեցին Գայլի դրունքի դիրքերը: Նույն օրը անգլիացիները նստեցին նավերը և հեռացան Պարսկաստանի ուղղությամբ:

Սեպտեմբերի 15–ի առավոտյան նավերով Բաքվից հեռացան Հայոց ազգային խորհրդի անդամները, ինքնապաշտպանության զինվորները, այդ թվում Ռոստոմն ու Հ. Բագրատունին:

Սեպտեմբերի 15–ին էլ թուրք–մուսավաթական ուժերը ներխուժեցին Բաքու: Այստեղ եկավ նաև Ադրբեջանի կառավարությունը: Երեք օր ու գիշեր շարունակվեց Բաքվի հայ ազգաբնակչության եղեռնը, որին զոհ գնաց շուրջ 30.000 մարդ (տե՛ս Բ. Իշխանյան, Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920 թ.):

Ինչ վերաբերում է Բաքվի կոմիսարների ճակատագրին, ապա տեղի ունեցավ հետևյալը. Ցենտրոկասպիի դիկտատուրայի առաջին գործը եղավ ռազմանավեր ուղարկել ու հետ բերել Աստրախան հեռա-

ցող բոլշևիկյան 17 նավերը: Բաքվի 26 կոմիսարները ձերբակալվեցին և բանտ նետվեցին: Երբ սեպտեմբերի 15–ին թուրքերը մտան Բաքու, բոլշևիկ ընկերներին հաջողվեց բանտից ազատել կոմիսարներին և «Թուրքմեն» շոգենավով դուրս բերել Բաքվից: Սակայն շոգենավի դավաճան կապիտանը նավն ուղղեց ոչ թե դեպի Աստրախան, այլ տարավ Կրասնովոդսկ: Այստեղ գոյություն ունեցող էսէռական իշխանություններն ու անգլիացիները անդրկասպյան ավազուտներում 1918 թ. սեպտեմբերի 20–ին Բաքվի 26 կոմիսարներին գնդակահարեցին, որոնց թվում էին Ստ. Շահումյանը, Պ. Ջապարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, Գ. Կորգանովը: Քանվեց կոմիսարներից 8–ը հայեր էին՝ Ստ. Շահումյան, Գր. Կորգանով, Սուրեն Հովսեփյան, Արսեն Ամիրյան, Թադևոս Ամիրյան, Արմենակ Բորյան, Արամ Կոստանյան, Բաղդասար Ավագյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության ծննդյան մասին հետևյալ տպավորիչ, պատկերավոր ու իրական նկարագիրն է տվել այդ հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը. «Այսպես, ուրեմն,— գրում է նա,— ընդ հուր և ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կոչվեց անկախ կյանքի: Ցնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի համար նա նկատվում էր անժամանակ ծնունդ: Հիվանդ երեխա աշխարհ բերած մոր պես, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգավոր՝ շշնջալով. «Դու իմ և ուրախությունն ես, դու՝ դժբախտությունը իմ...»:

Այո՛, արցունքի ու տառապանքի կռվից ծնվեց Հայաստանի անկախությունը: Ոմանք չէին հավատում դրան. անկախություն ու հանրապետություն բառերը դնում էին չակերտի մեջ: Եվ այդպես վարվելու հիմքերը շատ էին զորավոր. իրոք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախությունը այդ պայմաններում թվում էր հեգնանք:

Փաստորեն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12.000 քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, աշխարհի խուլ անկյունում, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված ատամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, ավար ու ավեր, լաց ու թշվառություն, կոտորած ու սարսափ: Իսկ մյուս կողմը՝ էնվերի բանակը հաղթական՝ համաթրքական երազներով տոգորված, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դեպի Ապշերոն ու Թուրքեստան» (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 184):

Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումից և հայկական պատվիրակության վերադարձից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության կառավարության կազմակերպմանը և վարչապետ հրավիրեց Հովհաննես Քաջազնունուն (Իգիթխանյան, 1868–1938), որը ձևավորեց կառավարություն հետևյալ կազմով. արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի՝ Արամ Մանուկյան, ֆինանսների՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական՝ Հովհաննես Հախվերդյան: Վերջինս անկուսակցական էր, իսկ մյուսները դաշնակցականներ էին:

1918 թ. հուլիսի 17–ին Հայոց Ազգային խորհուրդն ու կառավարությունը վերջապես Թիֆլիսից մեկնեցին Երևան: Քանի որ Սանահին կայարանից սկսած երկաթուղին թուրքերի ձեռքում էր և ճանապարհը երկաթուղով շարունակելը վտանգավոր էր, մեկնողները Սանահինից ճանապարհը պիտի շարունակեին Աղստաֆա–Դիլիջան ճանապարհով: Մեկնողների մեջ էին կառավարության անդամներ Հ. Քաջազնունին, Խ. Կարճիկյանը, Հ. Հախվերդյանը, Ազգային խորհրդի անդամներ Ավ. Սահակյանը, Ս. Տիգրանյանը, Ստ. Մալխասյանը, Ա. Բաբալյանը և ուրիշներ, ինչպես նաև պահակախումբ՝ Դալի Դազարի գլխավորությամբ: Նրանց հետ էին նաև երկու գերմանացի և մեկ թուրք սպա:

Ս. Վրացյանի նկարագրության համաձայն՝ մեկնումը կատարվեց շատ տխուր պայմաններում, որովհետև վրացիներն ամեն ինչ արել էին, որպեսզի վիրավորեն հայերի ինքնասիրությունը: Վրաց կառավարությունից ոչ ոք չէր եկել կայարան, իսկ երկաթուղային վարչությունը տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անհարմար վագոն: Նրանք մեծ դժվարությամբ էին թույլատրել տանելու նաև երկու կիսախարխուլ ավտոմոբիլ: Հայաստանի վարիչները Թիֆլիսից մեկնեցին նվաստացած ու դառն զգացումներով, կարծես թշնամի երկրից էին հեռանում: Կայարաններից մեկում վրացի սահմանապահները նույնիսկ փորձեցին խուզարկել Հայաստանի կառավարության վագոնը, բայց գերմանացի սպաները թույլ չտվեցին:

Տարօրինակ է, բայց դրան հակառակ՝ բոլորովին այլ էր ադրբեջանցիների վերաբերմունքը: Սահմանի վրա նրանք հայկական կառա-

վարությանը դիմավորեցին զինվորական պատիվներով, ընդառաջ ելան նահանգապետը և Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչները: Աղստաֆայում և Ղազախում կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն և ճաշկերույթ: Նրանց համակրանքով էին դիմավորում նաև ադրբեջանցի գյուղացիները, որոնք մինչև Հայաստանի սահմանը բարեկամական ցույցեր էին անում (Ս. Վ., էջ 688):

Հայաստանի հողի վրա առաջին հանդիսավոր դիմավորումը տեղի ունեցավ Դիլիջանում, որտեղ կատարվեց ճոխ հյուրասիրություն: Նույնը տեղի ունեցավ նաև Սեմյոնովկայում և Ելենովկայում (այժմ՝ Սևան), որտեղ դիմավորման–ճանապարհման արարողություններին մասնակցում էին հայկական զինվորական ստորաբաժանումները:

Հուլիսի 19–ի երեկոյան ճանապարհորդները հասան Ախտա (այժմ՝ Հրազդան), ուր Երևանից դիմավորելու էր եկել Արամ Մանուկյանը: Փողոցում կանգնած էր զորքն ու զինվորական նվագախումբը: Ավ. Սահակյանն ընդունեց հրամանատարի զեկույցը, որից հետո զինվորական ստորաբաժանումները հանդիսավոր երթով անցան կառավարության անդամների առջևից:

Քանաքեռում հյուրերին դիմավորեց Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը՝ իր սպայակույտով:

Հուլիսի 19–ի ուշ երեկոյան Ազգային խորհրդի և կառավարության անդամները հասան Երևան: Քաղաքը զարդարված էր դրոշակներով, գորգերով ու կանաչով: Աստաֆյան (ներկայիս՝ Աբովյան) փողոցը լեցուն էր բազմությամբ: Փողոցի երկու կողմում կանոնավոր շարքերով կանգնած էին զորքերը՝ Սարդարապատի ու Բաշ–Ապարանի հերոսները, որոնք ողջունեցին հյուրերին խանդավառ «կեցցե»–ներով ու զինվորական երաժշտությամբ:

Երեկոյան տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին ռուս, ուկրաինացի, ադրբեջանցի բազմաթիվ հյուրեր: Արտասանվեցին ողջույնի ճառեր, որոնց Հ. Քաջազնունին պատասխանեց հետևյալ խոսքերով. «Մեր պետությունը կոչվում է ոչ թե հայկական, այլ Հայաստանի Հանրապետություն: Այդ ցույց է տալիս, որ մեր պետությունը հայրենիք է նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդների համար» (Ս. Վ., էջ 189):

Հաջորդ օրվանից կառավարությունն անցավ գործի և ձեռնամուխ եղավ պետական ապարատի կառուցմանը:

Ինչպես իրավամբ գրում է Ս. Վրացյանը, երկիրը կատարյալ քաոսի և անիշխանության մեջ էր, ուստի պետք էր կարգ ու օրենք հաստատել, գաղթականությանը ապահովել սննդով ու կացարանով, կանխել սահմանային ընդհարումները, զսպել ներքին մահմեդական խռովությունները, մի խոսքով՝ պետք էր ոչնչից պետություն ստեղծել:

Թիֆլիսի և Երևանի Ազգային խորհուրդների մի շարք միացյալ նիստերում քննարկվեց Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի ստեղծման հարցը: Որոշվեց եռապատկել 15 հոգուց կազմված Ազգային խորրդի անդամների թիվը, հրավիրել նաև ադրբեջանցիների, եզդիների և ռուսների ներկայացուցիչներին: Այդ եղանակով կազմվեց 46 հոգուց բաղկացած Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդ անունով: Նրանցից 38–ը հայեր էին, 6–ը՝ ադրբեջանցիներ, մեկ ռուս, մեկ եզդի: Խորհրդի հայ պատգամավորները ներկայացնում էին երեք կուսակցություն. դաշնակցականներ՝ 18, էսէռներ՝ 6, սոցիալ–դեմոկրատներ՝ 6, ՀԺԿ՝ 6, չեզոք՝ 2 (Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., Քաղաքական պատմություն, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 53): Կառավարության նախկին կազմին ավելացավ արդարադատության նախարար, անկուսակցական Գ. Պետրոսյանը:

Հաստատվեց Հայաստանի ազգային դրոշը՝ հորիզոնական կամիր, կապույտ ու նարնջի գույներով, որտեղ կարմիրը հայ ժողովրդի թափած արյունն էր, կապույտը՝ Հայաստանի կապույտ երկինքը և նարնջի կամ ոսկեգույնը՝ խտացումն աշխատանքի (Ս. Վ., էջ 191): Պետական հիմն (օրհներգ) ճանաչվեց Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիքը»:

1918 թ. օգոստոսի 1–ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում (Հ. Պարոնյանի անվան երաժտական կոմեդիայի թատրոնի նախկին, այժմ՝ քանդված շենքը — Մ. Կ.) մեծ հանդիսավորությամբ բացվեց Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը: Առաջին նիստը բացելու պատիվը վերապահվեց Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին: Նա իր ճառի վերջում ասաց. «Այո, մեր հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությանը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հավատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն

կյանքի երկաթե ուժով...» (նշվ. ժողովածու, էջ 55): Այդ կանխատեսումն իրականացավ մեկ տարի էլ չանցած:

Երբ Ավ. Սահակյանը խոսքն ավարտեց՝ առաջարկելով ընտրել խորհրդի նախագահ, խորհրդարանի շենքի գլխին բարձրացավ Հանրապետության եռագույն դրոշը, դրսում հնչեցին հազարավոր «կեցցեներ», «Մեր հայրենիքը» և զորքը պատվի առավ:

Հայաստանի խորհրդի նախագահ ընտրվեց դաշնակցական Ավ. Սահակյանը, փոխնախագահներ՝ ժողովրդական Գր. Տեր–Խաչատրյանը և էսէռ Դ. Զուբյանը:

Խորհրդի նիստից հետո գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ տեղի ունեցավ զորահանդես. զորքն անցավ հանդիսատեսների առջևից և ժողովրդի ծափողջույնների ու երաժշտության ուղեկցությամբ բարձրացավ Աստաֆյան փողոցով: «Տեսարանը հուզիչ էր,— գրում է Ս. Վրացյանը: Շատերի աչքից ացունք էր հոսում: Հայաստանի Խորհրդարան, հայոց կառավարություն, հայկական բանակ... Երազ չէ՞ր արդյոք» (Ս. Վ., էջ 195):

Օգոստոսի 3–ին, Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում, վարչապետ Հ. Քաջազնունին հրապարակեց իր գլխավորած կառավարության ծրագրային հայտարարությունը (տես ՀՀ 1918–1920 թթ. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 57–59):

Երկրի ընդհանուր վիճակը ներկայացնելով մեկ բառով միայն՝ կատաստրոֆային (աղետալի — Մ. Կ.), վարչապետն ընդգծեց, որ նման պայմաններում կառավարության գլխավոր խնդիրն է կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանության վիճակից և պայմաններ ստեղծել պետական շինարարության համար, որը հանգելու է հետևյալին.

1. Ներքին գործերի բնագավառում երկրում հաստատել տարրական կարգ ու կանոն, կյանքի և գույքի ապահովություն, բացել հաղորդակցության ճանապարհները, վերականգնել փոստ–հեռագրական կապը, հնարավորին չափ մեղմացնել պարենավորման տագնապը, տնօրինել գաղթականների վիճակը, նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր ժողովի հրավիրումը:

2. Ֆինանսների բնագավառում հող նախապատրաստել սեփական դրամական համակարգ ստեղծելու համար, վերականգնել արդյունաբերությունը և ապրանքափոխանակությունը, մշակել հարկային առողջ համակարգ:

3. Արդարադատության բնագավառում բարեկարգել դատարանը, քրեական դատավարությանը մասնակից դարձնել ժողովրդի ներկայացուցիչներին:

4. Զինվորական բնագավառում վերակազմել երկրի զինվորական ուժերը, ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ:

5. Արտաքին գործերի բնագավառում ամրացնել հաշտությունը օսմանյան կառավարության հետ, լուծել Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանային հարցերը՝ հիմք ունենալով ազգագրական սկզբունքը:

Ներկայացված ծրագիրը վարչապետն անվանեց պետության գոյությունն ապահովող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր, որը եղած հնարավորությունների առավելագույնն է:

Ծրագիրն արժանացավ էսէռների և սոցիալ–դեմոկրատների խիստ քննադատությանը, իսկ դաշնակցականներն ու ՀԺԿ–ն հավանության արժանացրին:

Օգոստոսի 6–ի նիստում պատասխանելով ծրագրի քննադատներին՝ Հ. Քաջազնունին դրեց վստահության քվե ստանալու պահանջ: Հոգուտ կառավարության քվեարկեցին դաշնակցականները, 4 ժողովրդականներ, մահմեդական և ռուս պատգամավորները, ձեռնպահ մնացին 5 սոցիալ–դեմոկրատ, 3 էսէռ, 2 ժողովրդական և 1 անկուսակցական:

«Այսպիսով,— ինչպես նշում է Ս. Վրացյանը,— իր կյանքի առաջին իսկ օրից Հայաստանի Խորհուրդը դուրս եկավ ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով ու անակնկալներով լի մի մարմին: Նրա այս հիվանդությունը բնածին էր և մինչև վերջ էլ կարելի չեղավ դարմանել» (Ս. Վ., էջ 198):

Նորահռչակ Հայաստանի Հանրապետության ներքին ահավոր կացության մասին շատ նկարագրություններ կան, սակայն դրանցից ոչ մեկն այնպես տպավորիչ չի ներկայացնում դաժան իրականությունը, ինչպիսին Ս. Վրացյանինն է: Ուստի խոսքը տանք նրան՝ համոզված, որ մեջբերման երկարաշունչ լինելը չի թուլացնի ունկնդրի կամ ընթերցողի ուշադրությունը. «Արտակարգ դժվար պարտականություն էր դնում պատմությունը Հայաստանի գործիչների վրա: Իսկապես որ, «անձն քառսի և ավերակների կույտ էր» (Հ. Քաջազնունու ծրագրային ելույթի բառերն են — Մ. Կ.) Հայաստանն այդ օրերին: Եվ սարսափելին այն էր, որ չէր երևում ոչ մի հեռանկար... Դրսից պաշտպանություն, ապրուստի

միջոց, դրամական օժանդակություն չէր գալիս: Ինչ որ արվելու էր՝ պետք էր անել սեփական ուժերով:

Հայաստանը, ավելի շուտ, գաղթականական կայան էր. ամբողջ երկրում շուրջ 450.000 գաղթական էր թափված, որից մոտ 40.000–ը՝ Երևանում, շատերը՝ փողոցների և ավերակ շենքերի մեջ: Հաց չէր ճարվում, ժողովուրդն ապրում էր ինչպես կարող էր...

Սարսափելի էր որբերի վիճակը: Երևանի «Զանգ» թերթը գրում էր օգոստոսի 3–ին. «Տասնյակ հազարավոր որբեր այսօր ցրված Հայաստանի Հանրապետության սահմաններում, մոռացված ամենքից՝ ենթակա են ցրտի, քաղցի և համաճարակ հիվանդությունների... Մահացողներին վերջ չկա. մեռնում են ամենքը և ամենուրեք, գյուղերում թե քաղաքներում, բացօթյա ամենքի աչքի առաջ»:

Հացի, բնակարանների, հագուստի և դեղերի պակասն ու գաղթականության խռնվածությունը առաջ բերին ու զարգացրին համաճարակ հիվանդություններ, սկզբում՝ խոլերան, ապա՝ բծավոր տիֆը, որի գերանդին առատ հունձ էր անում ամեն կողմ: Տուն չկար, որ հիվանդ չունենար: Հիվանդները թափվում էին և փողոցներում ու հրապարակներում... Հապճեպով պատրաստված հիվանդանոցներն անզոր էին իրական դարման հասցնելու, դեղ չկար, վառելիք չկար, սնունդ չկար, սպիտակեղեն չկար: Եվ մարդիկ մեռնում էին անմռունչ, հարյուրներով, հազարներով: Ժողովուրդը սպառվում էր վառվող մոմի պես:

Սովի ու համաճարակի հետ երկրում խախտված էր և ապահովությունը: Դասալիք զինվորներ, ապրուստի միջոց չունեցող գաղթականներ ու տեղացիներ, խմբերով և անհատ–անհատ, հարձակվում էին ճամփորդների վրա, թալանում տները, խանգարում հանրային անդորրությունը: Հասարակական չարիք էր դարձել, այսպես կոչված «մաուզերիզմը»՝ մաուզերով զինված մարդիկ շահատակություններ էին անում նույնիսկ մայրաքաղաքի փողոցներում, և խաղաղ բնակչությունը տառապում էր նրանց ձեռքին...

Վեց ամսվա ընթացքում, սովից ու հիվանդություններից Հայաստանում մեռավ 180.000 մարդ» (Ս. Վ., էջ 199–200):

ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի խորհրդի և կառավարության առաջին գործը եղավ ծնավորել պետական ապարատը: Վերակազմվեցին բանակն ու վարչական հիմնարկները, կանոնավորվեց զինվորական և պետական ծառայողների ռոճիկը, միջոցներ ձեռնարկվեցին դատարանների և դպրոցների բացման ուղղությամբ: Խոշոր գումարներ հատկացվեցին գաղթականների ու որբերի խնամատարության, պարենամթերքի հայթայթման համար:

Մինչև սեփական օրենսդրության ընդունումը Հայաստանի Հանրապետության սահմաններում գործողության մեջ դրվեցին նախկին ռուսական օրենքները:

1918 թ. օգոստոսի 29–ին հրապարակվեց օրենք մասնավոր գենքի ու զինամթերքի պետականացման մասին:

Սեպտեմբերի 11–ին բամբակի առևտուրը հայտարարվեց կառավարության մենաշնորհ՝ որոշակի գնով, և պետականացվեց ամբողջ երկրի բամբակը: Իսկ այդ օրերին բամբակի առևտուրը կառավարության եկամտի միակ աղբյուրն էր:

Նույն օրը հաստատվեց դպրոցական օրենքը, որով յուրաքանչյուր հասարակական, համայնքային կազմակերպության և առանձին անհատների իրավունք էր տրվում անարգել դպրոց բացել և այն պահել սեփական միջոցներով, իսկ պետությանը վերապահվում էր ընդհանուր վերահսկողության իրավունքը:

Սեպտեմբերի 28–ին ընդունվեց կարիքավոր գաղթականներին հողով, աշխատանքով կամ պետական նպաստով ապահովելու օրենքը: Եվ հոկտեմբերի 8–ին որոշվեց գաղթական կանանց համար բացել պետական ջուլհականոցներ՝ գործի դնելով 1500 դազգահ և 20.000 ճախարակ, բաց թողնվեց 7 միլիոն ռուբլի: Հոկտեմբերի 11–ի օրենքով գաղթականների կարիքների համար տրամադրվեց 13 միլիոն ռուբլի: Ձեռնարկվեցին նաև այլ հրատապ միջոցառումներ:

1918 թ. նոյեմբերի 4–ին Հովհ. Քաջազնունու վարչապետությամբ կազմվեց նոր՝ կոալիցիոն կառավարություն, որտեղ դաշնակցականների հետ միասին նախարարական պորտֆելներ ստացան 5 ժողովրդականներ՝ Ա. Էնֆիաջյան՝ ելնմտական (Խ. Կարճիկյանը դարձավ խնամատարության նախարար — Մ. Կ.), Ս. Հարությունյան՝ արդարադատության, Մ. Աթաբեկյան՝ հանրային կրթության, Լ. Ղուլյան՝ պարենավոր-

ման, Գ. Մելիք–Ղարագյոզյան՝ արտգործնախարար դաշնակցական Ս. Տիգրանյանի տեղակալ:

Նոյեմբերի 14–ին դաշնակցական սպա, ղուրդուղուլեցի Եգոր Տեր–Մինասյանը իր աշխատասենյակում սպանեց խնամատարության նախարար Խ. Կարճիկյանին՝ անհիմն մեղադրելով նրան Կարսի անկման համար:

ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո՝ 1918 թ. հոկտեմբերի 30–ին, Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կանգնած անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա դաշնակիցների և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև ստորագրվեց զինադադար: Դաշնակիցների անունից զինադադարն ստորագրեց բրիտանական ծովակալ Քալթորփը, Թուրքիայի կողմից՝ Ռաուֆը, Հիքմեթը և Սաադուլլան: Այն բաղկացած էր 25 հոդվածներից: Ըստ զինադադարի պայմանների՝ թուրքական զորքերն անհապաղ զորացրվում և դուրս էին բերվում իրենց գրաված վայրերից, այդ թվում և 11–րդ հոդվածով՝ Անդրկովկասից (Հայաստանը... փաստաթղթերում, էջ 537–539): Հոդված 15–ով դաշնակիցներն օկուպացնում էին Բաքուն, իսկ հոդված 24–ով հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցներն իրենց վերապահում էին նրա մի մասը գրավելու իրավունք:

Նոյեմբերի կեսերին Երևանում թուրքական ներկայացուցիչ Մեհմեդ Ալի փաշան ՀՀ զինվորական նախարարին հայտնեց, որ ինքը գլխավոր շտաբից հրաման է ստացել տեղեկացնել, որ վեց շաբաթվա ընթացքում թուրքական զորքերը կդատարկեն գրավված տարածքները:

Սկսվեց թուրքական զորքերի նահանջը և նրանց դատարկած տարածքների գրավումը հայկական զորքերի կողմից: 1918 թ. նոյեմբերի 18–ին հայկական զորքերը մտան կողոպտված ու ավերված Ղարաքիլիսա, ուր ամենուրեք թափված էին հազարավոր դիակներ:

Նոյեմբերի 22–ին թուրքերն սկսեցին դատարկել Ալեքսանդրապոլը: Դեկտեմբերի 4–ին հայկական գումարտակը մտավ Ալեքսանդրապոլ: Պատկերը նույնն էր՝ թուրքերը կողոպտել–տարել էին ամեն ինչ, բերդը պայթեցրել էին, ամեն ինչ այրել, «այստեղից թուրքն էր անցել»:

1919 թ. մարտի 26–ին ՀՀ կառավարությունը Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատար, գեներալ Թոմսոնին ներկայացրեց մի հուշագիր, որով պահանջում էր անհապաղ լուծել Ղարաբաղի, Շարուրի և Կարսի հարցերը: Կարսը այդ ժամանակ կառավարվում էր թուրքերի ստեղծած տեղական կառավարության՝ Շուրայի միջոցով: Անգլիացիները չէին ուզում գրգռել մահմեդականներին և արգելում էին, որ հայերը գրավեն Կարսը:

Սակայն 1919 թ. ապրիլից անգլիացիների քաղաքականությունը փոխվեց հօգուտ հայերի. որոշվեց հայ–անգլիական ուժերով գրավել Կարսը: Կարսի զինվորական նահանգապետ նշանակվեց գնդապետ Թեմբրլեյը, քաղաքացիական նահանգապետ՝ Ստ. Ղորղանյանը, հայկական զորամասի պետ՝ գեներալ Հովսեփյանը: Հայ–անգլիական զորքերը երկաթուղով և խճուղով շարժվեցին առաջ և, առանց դիմադրության հանդիպելու, ապրիլի 24–ին մտան Կարս: Անգլիացիները ձերբակալեցին Շուրայի անդամներին, 150 թուրքերի և աքսորեցին Մալթա կղզի: Ապրիլի 28–ին անգլիացիները իշխանությունը լիովին փոխանցեցին հայերին: Մայիսի 2–ին հայերի ձեռքն անցավ Կարս–Սարիղամիշ երկաթուղին:

Մայիսի 9–ին հայկական զորքերը գրավեցին Մերդենեկը, մայիսի 13–ին առանց կռվի մտան Օլթի և Կաղզվան:

Առանց միջադեպերի տեղի ունեցավ նաև Նախիջևանի գրավումը, որի նահանգապետ նշանակվեց Գևորգ Վարշամյանը, զորքերի հրամանատար՝ Դրոն:

Մայիսի 3–ին Նախիջևանը հայտարարվեց Հայաստանին կցված: Նախիջևանցիները սկզբում հրաժարվեցին ճանաչել Հայաստանի իշխանությունը, սակայն ենթարկվեցին գեներալ Դնիի կտրուկ պահանջին: Մայիսի 20–ին հայկական զորքերը մտան Նախիջևան:

Մայիսի վերջին արդեն թուրքերի ազատած բոլոր շրջանները՝ Շիրակը, Կարսը, Կաղզվանը, Կողբը, Սարդարապատը, Սուրմալուն, Վեդիբասարը բնակեցվեցին իրենց տները վերադարձած տասնյակ հազարավոր գաղթական հայերով:

ՀԱՅ–ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անկախությունից առաջ վրացիները բազմիցս հայտարարել էին, որ Ախալքալաքի գավառն ու Բորչալուի գավառի մեջ մտնող Լոռին համարում են հայկական տարածքներ, սակայն անկախությունից հետո հանկարծ պահանջեցին, որ դրանք մտնեն Վրաստանի մեջ՝ հիմնավորելով այդ պահանջը ռազմաստրատեգիական ու տնտեսական անհրաժեշտությամբ: Մինչ այդ, դեռևս թուրքերի առաջխաղացման ժամանակաշրջանում՝ 1918 թ. մայիսին, վրաց–գերմանական զորամասերը գրավել էին Բորչալուն՝ վստահեցնելով հայերին, որ դա արվում է պաշտպանական նպատակներով, և թուրքերի հեռանալուց հետո գրաված վայրերից կհեռանան նաև վրացական զորքերը: Սակայն դա տեղի չունեցավ, և վրացական կառավարությունը հայտարարեց Վրաստանի սահմանները՝ նրանց մեջ ներառելով վիճելի համարվող տարածքները: Հայաստանի կառավարությունը անմիջապես բողոքեց այդ հայտարարության դեմ:

Վիճակն ավելի սրվեց, երբ 1918 թ. հոկտեմբերին թուրքերն սկսեցին դատարկել Լոռի–Փամբակի շրջանը, իսկ Դրոյի գլխավորած հայկական զորքերը զբաղեցրին այդ տարածքները: Վրացական կառավարությունը հայերի այդ քայլը համարեց ապօրինի և հոկտեմբեր 19–ին Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանին բողոք ներկայացրեց: Հաջորդ օրը Սանահինում կանգնած վրացական զրահագնացքի հրամանատար Գոգուաձեն վերջնագրով պահանջեց հայկական զորամասերից՝ հեռանալ Լոռիից և այն Շահալիով հանդերձ հանձնել վրացիներին: Նրանք իրենց պահանջը հիմնավորում էին նրանով, որ Լոռին մտնում է Թիֆլիսի նահանգի մեջ, որն անվիճելիորեն վրացական հող է: Այդ հարցում Վրաստանին բացահայտորեն հովանավորում էր Գերմանիան:

Վրացիների վերջնագիրը մեծագույն վրդովմունքով ընդունվեց Երևանում, և ՀՀ կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը, չհանձնել Շահալի կայարանը և հարկ եղած դեպքում ցույց տալ զինված դիմադրություն: Հայաստանի խորհուրդը հավանություն տվեց կառավարության քաղաքականությանը տվյալ հարցում:

Հոկտեմբերի 23–ին վրացական զրահագնացքը ռմբակոծեց Շնող գյուղը և հասավ մինչև Այրում:

Բացի դրանից, ինչպես նկատում է Ս. Վրացյանը, վրացիները կարծես դիտմամբ խնդիրներ էին ստեղծում, վիրավորում էին հայերի արժանապատվությունը, խոչընդոտում հաղորդակցությանը դրսի հետ, փակում ճանապարհները հայերի առջև: Սովի և հիվանդությունների ծիրանքներում գալարվող Հայաստանի համար նման վերաբերմունքը գնահատվում էր իբրև տմարդի ու թշնամական: Օրինակ՝ վրացիները բռնագրավեցին Բաքվում գնված և Հայաստան տեղափոխվող 40 ցիստեռն նավթն ու 9 ցիստեռն բենզինը: Վրացի զինվորները շահատակություններ էին անում հայկական Շուլավեր, Ուզունլար և այլ գյուղերում (Ս. Վ., էջ 222–224):

1918 թ. դեկտեմբերի 5–ին վրացական զորքերը, օգտվելով թուրքերի հեռանալուց, գրավեցին Ախալքալաքի գավառը և այն հայտարարեցին Վրաստանին միացված: ՀՀ բողոքներն ապարդյուն անցան:

1918 թ. դեկտեմբերի 13–ին բռնկվեց հայ–վրացական պատերազմը: ՀՀ կառավարությունը հրամայեց Դիլիջան–Լոռու զորամասի հրամանատար Դրոյին՝ մաքրել Լոռին վրացական զորքերից, և հաջորդ օրը զորամասն առաջ շարժվեց Վորոնցովկա–Պրիվոլնոյե–Այրում գծով: Զորամասի աջ թևում փոխգնդապետ Կորոլկովի ուժերն էին, կենտրոնում փոխգնդապետ Նեստերովսկին էր, ձախ թևում՝ գնդապետ Տեր–Նիկողոսյանը, պահեստային ուժերի հրամանատարն էր գնդապետ Միրիմանյանը, ընդհանուր առմամբ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանոթ, 4 հեծյալ հարյուրյակ:

Պատերազմի առաջին իսկ օրը գնդապետ Տեր–Նիկողոսյանի զորամասը գիշերային գրոհով գրավեց Վորոնցովկան, Պրիվոլնոյեն և Միխայլովկան: Գնդապետ Նեստերովսկու զորամասը գրավեց Սանահին կայարանը: Այրումի կողմից Կորոլկովի զորամասը կտրեց վրացական զրահագնացքների նահանջի ճանապարհը և պայթեցրեց դրանցից մեկը: Ռոտմիստր Փիրումյանի հարյուրյակը գրավեց Լալվար սարը:

Դեկտեմբերի 14–15–ին հայկական զորքերի ճնշման տակ վրացական զորքերը թողեցին Ալավերդին, իսկ դեկտեմբերի 16–ին Կորոլկովը գրավեց Այրումը: Դեկտեմբերի 17–ին Ախթալա կայարանի մոտ հայկական ուժերը գրավեցին 2 զրահագնացք և դրանք ուղղեցին վրացիների դեմ: Վրացական զորքերի հրամանատար գեներալ Ծուլուկիձեն փախուստի դիմեց՝ հայերին թողնելով իր սալոն–վագոնը:

Կորոլկովի ջոկատը մոտեցավ Սադախլուին, իսկ դեկտեմբերի 18–ին Տեր–Նիկողոսյանը գրավեց Բոլնիս–Խաչենը: Կռիվներն ընթանում էին ձյան, ցրտի, հագուստի ու սննդի պակասի պայմաններում:

Դեկտեմբերի 19–ի երեկոյան Ֆիերկովսկու վաշտը և Տեր–Մարտիրոսյանի հեծյալ հարյուրյակը գրավեցին Սադախլուն: Վրացիները սպիտակ դրոշ բարձրացրին: Բայց այդ, պահին մոտեցավ վրացական զրահագնացքը, և հայկական ուժերը շրջապատման մեջ ընկան, իսկ Ֆիերկովսկին ու Տեր–Մարտիրոսյանը գերի ընկան:

Դեկտեմբերի 20–ին Կուռո Թարխանյանի հարյուրյակը գրավեց Շուլավերը: Շուլավեր–Սադախլուի շրջանում ծավալվեցին թեժ մարտեր: Դեկտեմբերի 23–ին հայկական ուժերը Ասլանյանի հրամանատարությամբ վերագրավեցին Սադախլուն և ձեռք գցեցին մեծաքանակ ռազմավար, 100 վագոն պարեն: Գեներալ Ծուլուկիձեի զորախումբը գլխովին ջախջախվեց, ինքն էլ փախավ: Նրան փոխարինեց գեներալ Մազնիևը: Հարձակումներն ու հակահարձակումները իրար հաջորդեցին մինչև դեկտեմբերի 28–ը:

Հակամարտությանը միջամտեցին անգլիական գեներալ Ռայկրոֆտը, ֆրանսիական գնդապետ Շարդինյին, որոնք վրացիներին ու հայերին հարկադրեցին դեկտեմբերի 28–ին ստորագրել համաձայնագիր՝ դեկտեմբերի 31–ի գիշերվա ժամը 12–ին պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին:

Դեկտեմբերի 31–ի առավոտյան Սադախլուի շրջանում սկսվեց ուժեղ ճակատամարտ, որտեղ վրացիները կենտրոնացրել էին մոտ 3,5 հազար զինվոր՝ 12 թնդանոթով: Ճակատամարտը դեռ չէր ավարտվել, երբ հասավ պայմանաժամը՝ ժամը 12–ը, և կողմերը կանգ առան իրենց գրաված դիրքերում: Հայ–վրացական պատերազմն ավարտվեց, և դժվար էր ասել, թե ով հաղթեց այդ պատերազմում: Պատերազմը մեծ չարիք պատճառեց երկու կողմերին էլ (Ս. Վ., էջ 248):

1918 թ. հունվարի կեսերին Թիֆլիսում բացվեց հայ–վրացական հաշտության խորհրդաժողովը, որը տևեց երկար՝ երեք ամիս: Մշակվեց Լոռու չեզոք գոտու վարչության կանոնագիրք: Չեզոք գոտին կառավարվելու էր անգլիացի ընդհանուր նահանգապետի կողմից, որն ունենալու էր մեկ վրացի և մեկ հայ տեղակալներ: Ստորագրվեց նաև փոստ–հեռագրական համաձայնություն, վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը, կողմերը փոխադարձաբար ճանաչեցին միմյանց ակախությունը: Այդպիսով հայ–վրացական հարաբերությունները կանոնավորվեցին:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀՀ–ԻՆ

1919 թ. սկզբներին ՀՀ ներքին վիճակը շարունակում էր մնալ չափազանց ծանր. սովն ու համաճարակները, մանավանդ բծավոր տիֆը շարունակում էին իրենց «հունձքը», որոնք օրական հարյուրավոր կյանքեր էին խլում: Առաջին հինգ ամիսների ընթացքում Երևանում, որի բնակչությունն այդ ժամանակ մոտ 60.000 էր, մեռավ մոտ 4000 մարդ: 1919 թ. հունվարի 26–ի 40–օրյա տառապանքներից հետո բծավոր տիֆին զոհ գնաց Արամ Մանուկյանը, նաև ուրիշ պաշտոնյաներ: Հատկապես սոսկալի էր գաղթականների վիճակը, որոնք տառապում էին սովի ճիրաններում: Գյուղերի մեծ մասը կանաչով էին կերակրվում: Մայիսին հացաբաժինը Երևանում իջեցվեց 100 գրամի:

1919 թ. փետրվարի 4–ին Հայաստանի խորհուրդը որոշեց օգնություն խնդրել Եվրոպայից և ԱՄՆ–ից: Եվ օգնությունը չուշացավ: Այդ նպատակով Հայաստան եկավ ԱՄՆ–ի պարենավորման մինիստր Հուվերը՝ իբրև նպաստամատույցի տնօրեն: «Ինչ էլ լինի մեր վերաբերումը դեպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում,— գրում է Ս. Վրացյանը,— ամերիկյան մարդասիրական նպաստն ու պարենը երբեք չենք մոռանա, չպետք է մոռանանք» (Ս. Վ., էջ 254–256): 1919 թ. մայիսի 20–ին Բաքում հասավ ամերիկյան առաջին նավը՝ բեռնված 125 հազար փութ ալյուրով (1 փութը հավասար է 16 կիլոգրամի — Մ. Կ.), իսկ մեկ շաբաթ անց եկավ երկրորդ նավը՝ 600.000 փութ ալյուրով: Տարվա ընթացքում Հայաստանն Ամերիկայից ստացավ 1.295.243 փութ ալյուր, 256.758 փութ ցորեն, 125.000 փութ լոբի, 68.563 փութ բրինձ, 20.000 փութ կորեկ, 8.010 փութ եգիպտացորեն, 10.738 փութ վարսակ, 5.950.000 տուփ խտացրած կաթ, 12.000 փութ կակաո, 44.000 փութ շաքար, 5.000 փութ ճարպ, 1.500 փութ թեյ: Պայմանագրի համաձայն՝ 1920 թ. սկզբին գալու էր ևս 2.170.000 փութ ալյուր (Ս. Վ., նույն տեղում): Այդ ամենը Հայաստան հասցվեց մեծ դժվարություններով:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Արևմտահայերի երկրորդ համագումարը ՀՀ ներքին կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկն էր, որը տեղի ունեցավ Երևանում 1919 թ. փետրվարի 6–13–ին: Համագումարին մասնակցում էին 55 պատգամավորներ, որոնք ընտրվել էին տարբեր շրջանների արևմտահայ գաղթականների կողմից: Հրավիրված էին նաև Ամենայն հայոց կաթողիկոսը, Անդրանիկը և ուրիշներ: Կաթողիկոսն ուղարկեց Գևորգ եպ. Չորեքչյանին, իսկ Անդրանիկը հրաժարվեց մասնակցել: Նախագահում էր Գրիգոր Բուլղարացին: Փետրվարի 13–ի նիստում գաղտնի քվեարկությամբ ընտրվեց «Արարատյան հանրապետության մեջ ապրող արևմտահայ հատվածի Գործադիր մարմին՝ բաղկացած 9 հոգուց. Սմբատ Բորոյան, Կ. Սասունի, Գր. Բուլղարացի, Արսեն Կիտուր և ուրիշներ: Փաստորեն ՀՀ կառավարության կողքին ստեղծվում էր մի նոր կառավարություն:

Գործադիր մարմինը մի շարք ժողովներում քննարկեց համագումարի որոշումը՝ «Միացյալ և Անկախ Հայաստան՝ մեկ հայրենիք» ունենալու մասին որոշումը և եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է օր առաջ հայտարարել Հայաստանի երկու հատվածների միացումը և այդ մասին պաշտոնապես դիմեց ՀՀ կառավարությանը:

Փետրվարի 25–ին կառավարությունը քննության առավ Գործադիր մարմնի դիմումը և միաձայնությամբ համաձայնվելով առաջարկին՝ հանձնարարեց արտաքին գործերի նախարարին՝ պատրաստել զեկուցագիր՝ Հայաստանի Խորհուրդ մտցնելու համար:

1919 թ. մայիսի 28–ին Հայաստանի Խորհրդի հանդիսավոր նիստում կատարվեց Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը: Այդ առթիվ Երևանում տեղի ունեցավ համաժողովրդական տոնակատարություն և զորահանդես, շքերթ:

Վարչապետ Ա. Խատիսյանը հայտարարեց, որ Միացյալ Հայաստանի պետական ձևը դեմոկրատական հանրապետությունն է և ինքը հանդիսանում է Միացյալ Հայաստանի կառավարությունը: Տրվեց հրետանային 30 համազարկ:

ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1919 թ. մարտի 12–ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց Խորհրդարանի ընտրություններ անցկացնելու մասին, որի հիման վրա մշակվեց «Օրենք Հայաստանի Խորհրդարանի ընտրությունների մասին»: Քսան տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի, առանց սեռի, կրոնի և ազգության խտրության, իրավունք ուներ մասնակցելու ընտրություններին: Ընտրությունը պիտի կատարվեր ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ: Խորհրդարանում պետք է ընտրվեր 80 պատգամավոր: Ստեղծվեցին կենտրոնական, գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և թաղամասային ընտրական հանձնաժողովներ: Ընտրություններին պետք է մասնակցեին 365.780 ընտրողներ:

Ընտրություններն անցկացվեցին 1919 թ. հունիսի 21–23–ին: Ընտրությունների արդյունքը հետևյալն էր՝ դաշնակցություն՝ 72 պատգամավոր, սոցիալիստ–հեղափոխականներ (էսէռներ)՝ 4, թուրքեր՝ 3, անկուսակցական՝ 1, ընդամենը 80 պատգամավոր:

Նորընտիր խորհրդարանի բացումը տեղի ունեցավ 1919 թ. օգոստոսի 1–ին:

Բացումը կրկին կատարեց Խորհրդարանի ավագագույն անդամ Ավետիք Սահակյանը, որն ընդգծեց, որ սահմանների ընդլայնման վերաբերյալ ուղիղ մեկ տարի առաջ արած իր կանխատեսումն իրականացել է:

Խորհրդարանի երրորդ նիստում 40 քվեով՝ ընդդեմ 8–ի, վարչապետ ընտրվեց Ալեքսանդր Խատիսյանը: Կազմվեցին խորհրդարանական 12 հանձնաժողովներ: Խորհրդարանը նիստեր պիտի գումարեր շաբաթը 2 անգամ՝ երկուշաբթի և ուրբաթ օրերը:

Օգոստոսի 10–ի նիստում հայտարարվեց նոր կառավարության կազմը՝ վարչապետ և արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործերի և արդարադատության՝ Ա. Գյուլխանդանյան, պարենավորման և ֆինանսների՝ Ս. Արարատյան, խնամատարության և աշխատանքի՝ Ավ. Սահակյան, հանրային կրթության և արվեստի՝ Նիկոլ Աղբալյան, զինվորական՝ գեներալ Ք. Արարատյան: Կազմը հաստատվեց 37 կողմ, 2 դեմով, որից հետո Ա. Խատիսյանը հրապարակեց կառավարության ծրագիրը: Նա ներկայացրեց երկրի ներքին ու արտաքին բարդությունը, թուրք–ադրբեջանական դավերը, պարենային և ֆինանսական անկայուն վիճակը, հայկական հարցի ընթացքը Հաշտության կոն-

ֆերանսում, մանրամասնորեն կանգ առավ հետագա անելիքների վրա. սահմանել պետական վարկեր, պետական օգնություն կազմակերպել տարերային աղետներից տուժած աշխատավոր դասակարգին, ամեն կերպ խրախուսել մասնավոր կապիտալի մուտքը երկիր, կարգավորել հարկային համակարգը՝ կիրառելով եկամտային հարկի պրոգրեսիվ համակարգը, ուժեղացնել ուղղակի հարկերը ի հաշիվ անուղղակի հարկերի, ձեռք բերել արտաքին փոխառություններ, արագացնել սեփական դրամ ունենալը, հրապարակել ազատ բանվորական օրենսդրություն, հիմնել աշխատանքի բորսաներ, պայքարել գործազրկության դեմ:

Ժողովրդական լուսավորության բնագավառում սկզբունքը պիտի լինի ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթություն, զարկ տալ պրոֆեսիոնալ կրթությանը:

Արտաքին քաղաքականության հիմքում ընկած պիտի լինի հավատը դեպի դաշնակից պետությունները, հարևան պետությունների հետ բարեկամական փոխհարաբերությունների ստեղծումը, սահմանների կարգավորումը, բացառել զենքի ուժով սահմանային վեճերի լուծումը:

Հողային հարցում կառավարությունը պիտի իրականացնի կալվածատիրական, վանքապատկան և մասնավոր բոլոր հողերի ազգայնացումը և դրա բաժանումը սակավահող գյուղացիությանը՝ ըստ կարիքի: Արդարադատության բնագավառում՝ հասնել ընտրովի դատարանների ստեղծման:

Պաշտպանության բնագավառում՝ պարտադիր զինծառայություն, ժողովրդական միլիցիայի ստեղծում, զորքի ազգայնացում (Ս. Վ., էջ 296–298):

1920 թ. հունվարի 19–ին դաշնակից երկրների Գերագույն խորհուրդը ճանաչեց Հայաստանի Հանրապետության դե ֆակտո գոյությունը:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ 1918–1920 ԹԹ.

Արցախը երբեք և ոչ մի դեպքում չի եղել ադրբեջանական հող:

1813 թ. Արցախը մտավ Ռուսաստանի կազմի մեջ, իսկ 1867 թ. ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը, որի մեջ էին Արցախը և Զանգեզուրը:

1918 թ. երեք հանրապետությունների ստեղծումից հետո Թուրքիան ստիպեց ՀՅ կառավարությանը՝ ամբողջ նախկին Ելիզավետպոլի նահանգը ճանաչել մուսավաթական Ադրբեջանի տիրապետություն և Զանգեզուրը, Արցախը և Գանձակի հայկական գավառները՝ 300 հազար հայ բնակչությամբ, հայտարարվեցին Ադրբեջանի մաս:

1918 թ. հուլիսի 22–26–ին Շուշիում անցկացվեց Ղարաբաղի հայության Առաջին համագումարը՝ յուրաքանչյուր գյուղից մեկական պատգամավոր: Մինչև 1920 թ. մայիսի վերջը հրավիրվեց այդպիսի 9 համագումար ևս:

Առաջին համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդ և մերժեց Ադրբեջանին ենթարկվելու պահանջը:

1918 թ. Բաքվի կոմունայի անկումից հետո (սեպտեմբերի 15) Արցախի վիճակը ծանրացավ, այն կտրվեց Բաքվից ու Զանգեզուրից: Դեռևս 1918 թ. օգոստոսին Էնվերի եղբայր Նուրի փաշան գրավոր պահանջեց ընդունել, որ Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է:

1918 թ. սեպտեմբերին հրավիրվեցին համաղարաբաղյան 2–րդ և 3–րդ համագումարները, որոնք մերժեցին այդ պահանջը: Թուրքերը և մուսավաթականները ամեն կողմից շրջապատեցին Ղարաբաղը:

Ղարաբաղի գավառներում ստեղծվեցին զորակայաններ և նշանակվեցին հրամանատարներ: Զորակոչվեց 3.000 մարդ: Սեպտեմբերի 22–ին թուրքական բանակը մտավ Լեռնային Ղարաբաղ: Սկսվեց Ղարաբաղի հայ գյուղացիության փառապանծ հերոսապատումը թուրք–ադրբեջանական նվաճողների դեմ:

1918 թ. սեպտեմբերի 24–ին թուրքերը մտան Շուշի: Նրանք լուծարեցին Ղարաբաղի կառավարությունը, ձերբակալեցին 60 մտավորականների, այդ թվում՝ Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանին: Շուշին անձնատուր եղավ, բայց Արցախի գավառները մնացին անառիկ:

Թուրք–ադրբեջանական 400–անոց զորամասը հոկտեմբերի 17–ին գրավեց Վարանդայի Մսմնա գյուղը: Քյազիմ բեյի այդ ջոկատին ջարդելու գործը հանձնարարվեց Ասլանիկին՝ Ասլան Մուրադխանյանին: Ոտքի կանգնեցին Վարանդայի Ավետարանոց, Թաղավարդ, Սղնախ, Ճարտար, Մաշադիշեն (Կոլխոզաշեն) և այլ գյուղերի գյուղացիները: Ասլանիկի մարտիկները փակեցին բոլոր ճանապարհները: Մսմնայի ճակատամարտն ընթացավ հոկտեմբերի 18–ի ամբողջ օրը և ավարտ-

վեց դարաբաղցիների փայլուն հաղթանակով: Թուրքերից փրկվեց 60 հոգի, մնացածը սպանվեցին: Թուրքերը 700–անոց նոր ջոկատ ուղարկեցին Սմնա, բայց սրանք հետ շպրտվեցին: Դրանից հետո թուրք–ադրբեջանական ուժերը թողեցին Ղարաբաղը: 1919 թ. Ասլանիկը զոհվեց դավադիր գնդակից:

1918 թ.՝ առաջին աշխարհամարտի ավարտից հետո, Անդրկովկասում թուրքերին փոխարինեցին անգլիացիները, Բաքու եկան Անտանտի ներկայացուցիչները: Բաքվի գեներալ–նահանգապետ նշանակվեց անգլիական գեներալ Թոմսոնը: Մուսավաթը նրան տվեց 4500 զորք՝ Ռուսաստանի դեմ: Անդրկովկասում Անգլիան ուներ 30.000 զորք: Անգլիացիները նույնպես պահանջեցին Ղարաբաղի հայությունից՝ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

1918 թ. նոյեմբերի 16–ին Անդրանիկը արցախցիների խնդրանքով շարժվեց դեպի Շուշի, անցավ Ջաբուխը և հասավ Շուշիից 40 վերստի վրա գտնվող Ավդալլար գյուղը: Սակայն այստեղ նրան հասավ Թոմսոնի հեռագիրը՝ կանգնեցնել զորաշարժը և նրա պահանջով Անդրանիկը վերադարձավ Գորիս: Թոմսոնը սպառնում էր, որ հակառակ դեպքում Ղարաբաղի հարցը չի լուծվի Փարիզի կոնֆերանսում: Թոմսոնի երաշխավորությամբ 1919 թ. հունվարի 15–ին մուսավաթական խոսրով բեկ Սուլթանովը նշանակվեց Արցախի նահանգապետ: Երկու ամիս անց՝ ապրիլին, Թոմսոնին փոխարինեց գնդապետ Շատելվորդը, որը հայտարարեց, որ պաշտպանելու է Սուլթանովի բոլոր հրամանները:

1919 թ. փետրվարի 12–21–ին տեղի ունեցավ Արցախի հայության 4–րդ համագումարը, որը բողոքեց Սուլթանովին նշանակելու դեմ:

Ադրբեջանը ամեն կերպ ձգտում էր անգլիացիների օգնությամբ Անդրանիկին հեռացնել Զանգեզուրից, որը 1919–ի ապրիլի 2–ին Անգեղակոթից մեկնեց Էջմիածին:

1919 թ. ապրիլի 23–29–ին հրավիրվեց համաղարաբաղյան 5–րդ համագումարը: Նիստերից մեկին մասնակցեցին Շատելվորդը և Սուլթանովը: Բոլոր 48 պատգամավորները նորից անհողդողդ մերժեցին Ադրբեջանի իշխանությունը:

Հատկանշական է, որ 1919 թ. հունիսին բազմամարդ միտինգներ են տեղի ունենում Երևանում և Թիֆլիսում՝ ի պաշտպանություն արցախահայության: Հունիսի 16–ին մեծ միտինգ տեղի ունեցավ Երևանում, որտեղ ճառեր արտասանեցին Դավիթ Անանունը, Ա. Խոնդկարյանը, Դրոն: Հունիսի 22–ին Թիֆլիսում տեղի ունեցած միտինգը ղեկավարում

էր Հովհաննես Թումանյանը: Ընդունված բանաձևը պահանջում էր Ղարաբաղի միացումը Հայաստանին (Ս. Վ., էջ 335–336):

1919 թ. հունիսի 28–ին Շուշիից 4 վերստի վրա գտնվող Շոշ գյուղում Սուլթանովի հրավերով հավաքվեց Ղարաբաղի 6–րդ համագումարը: Օրակարգի հարցն էր Ադրբեջանի իշխանության ճանաչումը: Մշակվեց նախնական համաձայնության նախագիծ:

1919 թ. ամառվանից սկսվեց ծանր ժամանակաշրջան: Օգոստոսի 12–ին Շոշ գյուղում տեղի ունեցավ 7–րդ համագումարը, որը անգլիացիների ճնշմամբ որոշում ընդունեց ժամանակավոր համաձայնության գալ Ադրբեջանի կառավարության հետ, մինչև Փարիզի կոնֆերանսը կվճռեր Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ստորագրված համաձայնագիրը բաղկացած էր 26 կետից (լրիվ տեքստը տե՛ս Ս. Վրացյան, էջ 339–341):

1919 թ. նոյեմբերի 23–ին Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով ռազմական գործողությունները դադարեցվեցին:

1920 թ. փետրվարի 28–ից մարտի 5–ը Վարանդայի Շոշ գյուղում տեղի ունեցավ Ղարաբաղի 8–րդ համագումարը, որտեղ նորից մերժվեց Ադրբեջանին ենթարկվելու անարդար պահանջը և հարց դրվեց մայր Հայաստանի հետ վերամիավորվելու օգտին:

Արցախի դեմ ադրբեջանական հարձակում սկսվեց 1920 թ. մարտի 22–ի երեկոյան: Մարտի 27–ին և 28–ին Քյաթուկ գյուղի կողմից թշնամու վրա է գրոհում Դալի Ղազարի 350–անոց ջոկատը: Ասկերանի ուղղությամբ հայկական շտաբի պետն էր Հարություն Թումյանը, որը վկայում է, որ այդ ուղղությամբ թշնամին ուներ 30 հազար զորք: Հայերը կռվում էին 300 կմ–ի վրա՝ սահմանի ամբողջ երկայնքով: Ապրիլի 2–ին Ասկերանի ճակատում կռիվները ամենաթեժն էին: Բայց ահա ապրիլի 3–ին թշնամին ճեղքեց ճակատը և շարժվեց դեպի Շուշի: Դալի Ղազարի ջոկատը նահանջեց, իսկ ինքը կռվեց մինչև վերջին փամփուշտը և վերջ տվեց կյանքին:

Խանքենդի ուղղությամբ գնդապետ Զ. Մեսյանի 400–անոց ջոկատը գրավում է Խանքենդը, զինաթափում մուսավաթականներին:

Դիզակի ուղղությամբ հրամանատարն էր Հովակ Ստեփանյանը՝ 450 հոգով, որոնք կարողանում են ճանապարհ բացել դեպի Զանգեզուր:

Շուշիում Սուլթանովի ուժերը մարտի 23–ին հարձակվեցին քաղաքի հայկական թաղամասի վրա և հրդեհեցին այն: Կոտորվածների թիվը հասնում էր 10 հազարի:

ՀՀ կառավարությունը վճռեց անհապաղ օգնության հասնել Արցախին, Զանգեզուրում գտնվող զորամասերին կարգադրեց մտնել Արցախ: 1920 թ. ապրիլի 17–ին Զանգեզուրի կողմից Վարանդա մտան Դրոյի, Ղափանի կողմից Դիզակ՝ Նժդեհի զորամասերը: Ազատարարներին ընդունեցին ցնծությամբ: Եվ այսպես՝ երկար պայքարից ու տառապանքներից հետո Արցախը վերամիավորվեց մայր հայրենիքի հետ: Կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարություն:

1920 թ. ապրիլի 25–ին Վարանդայի Թաղավարդ գյուղում կայացած 9–րդ համագումարն ընդունեց հետևյալ որոշումը. 1. Չեղյալ հայտարարել 7–րդ համագումարի կողմից Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը: 2. Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս: 3. Խնդրել ՀՀ Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խ. Ռուսաստանի կառավարությանը:

Արցախի ժամանակավոր կառավարությունը որոշում է պաշտոնապես ընդունել ՀՀ դրոշը, զինանշանը, հիմնը, դրամը, ենթարկվել Զանգեզուրի նահանգապետությանը:

1920 թ. ապրիլի 29–ին և 30–ին, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, հեղկոմներ ստեղծվեցին Շուշիում, Կարյագինոյում, Աղդամում և այլուր: Կարմիր բանակը մոտենում էր Արցախի սահմաններին, և Սուլթանովը որոշեց դիմակավորվել, ապրիլի 29–ին նա ստեղծեց Ղարաբաղի հեղկոմ և իրեն հռչակեց նրա նախագահ:

Արցախահայերը Սուլթանովի դեմ հեռագրեր ուղարկեցին Լենինին, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովին: Մայիսի 14–ին Սուլթանովի հեղկոմը լուծարվեց, ինքը ձերբակալվեց և տարվեց Բաքու, սակայն ոչ թե պատժվեց, այլ ազատվեց և ապահով անցավ Պարսկաստան:

Ադրբեջանի խորհրդայնացմամբ մարդիկ սպասում էին, որ վերջ կտրվի զավթողական քաղաքականությանը Զանգեզուրի և Արցախի նկատմամբ, սակայն այդպես չեղավ, պայքարը թևակոխեց նոր, ավելի դժվարին փուլ:

1920 թ. ապրիլի 30–ին Խ. Ադրբեջանի արտգործժողկոմ Մ. Հուսեյնովը Հայաստանի կառավարությանը հղեց հետևյալ հեռագիրը.

«Ադրբեջանի Խ. Հանրապետության բ/գ կառավարությունը, հանձինս հեղկոմի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքը, երրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածները: Հակառակ դեպքում, ԱՍԽՀ հեղկոմը իրեն կհամարի ՀՀ–ն հետպատերազմական դրության մեջ: Վերջնագրի պատասխանի համար տրվում է երեք օր»: Մայիսի 1–ին ստացվում է երկրորդ հեռագիրը, որը ստորագրել էին Օրջոնիկիձեն, Կիրովը, Մեխոնոշինը և Լևանդովսկին. «ՌԽՖՍՀ անունից Հայաստանի կառավարությանը առաջարկում ենք անհապաղ դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողությունները Խ. Ադրբեջանի տարածքում և ձեր զորքերը դուրս բերել նրա սահմաններից: Դա պետք է կատարվի այս առաջարկությունն ստանալուց հետո՝ քսանչորս ժամվա ընթացքում: Հակառակ պարագայում այն կիրագործվի Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով, և դրա հետևանքների համար ողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի կառավարության վրա»: Սա նշանակում էր, որ Արցախն առանց այլևայլության համարվում էր ուրիշի տարածք: Հայաստանի կառավարությունն իր հերթին հեռագրով հայտնեց, որ Ադրբեջանի կառավարությունը ոտնահարում է Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավորների իրավունքներն ու կամքը:

1920 թ. մայիսի սկզբին 11–րդ Կարմիր բանակի 32–րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը եվլախից շարժվեցին դեպի Արցախ: Կարմիր բանակի պատվիրակությունը Սահակ Տեր–Գաբրիելյանի գլխավորությամբ հանդիպում ունեցավ Դրոյի հետ և կտրականապես պահանջեց հայկական զորամասերը դուրս բերել Արցախից:

Դրոն ստիպված էր մայիսի 25–ին թողնել Արցախը և վերադառնալ Գորիս: Հաջորդ օրը Թաղավարդում կայացած 10–րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային, ստեղծեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ:

1920 թ. օգոստոսի 10–ին՝ Սևրի պայմանագրի ստորագրման օրը, համաձայնագիր կնքվեց Խ. Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև, ըստ որի՝ խորհրդային զորքերը գրավեցին վիճելի տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը՝ մինչև դրանց հետագա ճակատագրի վերջնական լուծումը (մանրամասն տե՛ս Հրանտ Աբրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991):

ԶԱՆԳԵԶՈՒՐԸ 1918–1920 ԹԹ.

Ցարական իշխանության օրոք Զանգեզուրը կազմում էր Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգի մի գավառը՝ 6.743 քառակուսի վերստ տարածքով և 227 հազար բնակչությամբ, որից հայեր էին շուրջ 95 հազարը:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Գանձակից անկախ կազմվեց Ղարաբաղ–Զանգեզուր շրջանային գործադիր կոմիտե:

Բաթումի դաշնագրից հետո Անդրանիկի ջոկատը՝ 3000 հետևակ, 700 հեծյալ և շուրջ 20 հազար գաղթականներ, Նոր Բայազետի, Դարալագյազի ու Ջուլֆայի վրայով անցան Խոյ՝ անգլիական զորքերին հանդիպելու նպատակով: Սակայն թուրքերի հետ կռվի բռնվելով՝ Անդրանիկը նահանջեց Ջուլֆա, ապա Նախիջևան:

1918 թ. հուլիսի վերջերին Անդրանիկը մտավ Զանգեզուր և անցավ տեղի ինքնապաշտպանության գլուխ: Կռիվները թուրքերի դեմ տևեցին մինչև դեկտեմբեր: 1919 թ. ապրիլին Անդրանիկն անցավ Էջմիածին, որտեղ զենքերն ու ռազմամթերքը հանձնեց կաթողիկոսին, անցավ Թիֆլիս, որտեղից էլ մայիսի 6–ին մեկնեց արտասահման:

Թուրքերի պարտությունից հետո 1918 թ. դեկտեմբերի սկզբին ստեղծվեց Զանգեզուրի Ազգային խորհուրդ՝ կազմված 9 անդամներից: Խորհրդի նախագահ ընտրվեց Մ. Պարոնյանը, նշանակվեցին շրջանային կոմիսարներ: Գորիսում ստեղծվեց շրջանային դատարան, 1919 թ. հայտարարվեց զորահավաք, ստեղծվեց տեղական զորամաս:

1919 թ. մարտի 6–ին Գորիս հասավ Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած Զանգեզուրի ընդհանուր կոմիսարը՝ փոխգնդապետ Արսեն Շահմազյանը: Մարտի 31–ին Գորիսում հրավիրվեց համազանգեզուրյան համագումար, որտեղ Ազգային խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը: Նրա փոխարեն ընտրվեց Զանգեզուր–Ղարաբաղի Շրջանային խորհուրդ: Կազմվեց նաև Զինվորական խորհուրդ, գլխավոր շտաբ: Նշանակվեցին շրջանների զինվորական հրամանատարներ:

Գավառապետ նշանակվեց Ն. Հովսեփյանը, վարչապետ և ներքին գործերի վարիչ նշանակվեց Ա. Շիրինյանը, որը կազմեց վարչություն:

Այդ բոլոր միջոցառումները կատարվում էին պատերազմական պայմաններում: Մինչև նոյեմբերի վերջը թուրքերը բազմիցս նախահարձակ եղան, բայց ամեն անգամ չարաչար պարտություն կրեցին ու նահանջեցին: Երկուստեք կռիվներին մասնակցում էին մինչև 3.000 մարդ:

Հարկ է նշել, որ անգլիացիները վարում էին շեշտված թուրքամետ քաղաքականություն: Այսպես՝ 1919 թ. մայիսի 2–ին Շուշիից Գորիս եկավ անգլիական միսիայի պետ, մայոր Մակ Մեյզնը: Նա զանգեզուրցիներից պահանջեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, որին տրվեց գրավոր կտրուկ մերժում (Ս. Վ., էջ 352):

Դրանից հետո Ադրբեջանի կառավարությունն սկսեց ուժեր կենտրոնացնել Զանգեզուրի շուրջը՝ գեներալ Ալի աղա Շիխլինսկու հրամանատարությամբ: Ղարաբաղի կողմից մոտեցան 3 հետևակ և 2 հեծյալ գնդեր, 12 թնդանոթ, 400 քրդեր, իսկ Շարուր–Նախիջևանի կողմից՝ ավելի քան 3000–անոց զորք: Ռազմական գործողություններից առաջ Խ. Սուլթանովը կոչ ուղղեց զանգեզուրցիներին՝ հաղորդելով հետևել դարաբաղցիների օրինակին և հոժարակամ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Կոչը, իհարկե, անուշադրության մատնվեց:

1919 թ. նոյեմբերի 1–ին ադրբեջանական զորքերը Զաբուղից, Կարյագինոյի կողմից, Նախիջևանից ու Դարալագյազից սկսեցին ընդհանուր հարձակում:

Վեց օր շարունակ Զանգեզուրի լեռներում որոտում էին թնդանոթները, ճարճատում գնդացիրները, պայթում էին հրացանային համազարկերը: Առաջին օրերին թշնամին գրավեց Խնածախ, Խոզնավար, Բայանդուր, Կոռնիձոր գյուղերն ու սպառնում էր Գորիսին:

Սակայն, նոյեմբերի 4–ին զանգեզուրցիները փոխգնդապետ Արսեն Շահմազյանի հրամանատարությամբ կանգնեցրին թշնամու առաջխաղացումը, անցան հուժկու հակագրոհի և նոյեմբերի 6–ին հարկադրեցին ադրբեջանական զորքերին՝ դիմել փախուստի: Թշնամին թողեց բազմաթիվ դիակներ, 150 գերի, մեկ թնդանոթ, 20 գնդացիր, հարուստ ավար, իսկ ադրբեջանական 2–րդ ձիավոր գունդը ամբողջովին ոչնչացվեց:

Այդ իրադարձություններից հետո գնդապետ Հասկելի փոխանորդ գնդապետ Ռեյը և բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպը պահանջեցին Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններից՝ վերջ տալ արյունահեղությանը և փոխադարձ համաձայնությամբ լուծել Զանգեզուրի հարցը:

1919 թ. նոյեմբերի 20–ին գնդապետ Ռեյի առանձնասենյակում տեղի ունեցավ վարչապետներ Ա. Խատիսյանի և Ուսուպբեկովի հանդիպումը: Ստորագրվեց 5 կետից բաղկացած համաձայնագիր, ըստ որի գործողությունները դադարեցվում էին:

Սակայն նոյեմբերի վերջերին Զանգեզուր հասավ Երևանից ուղարկված Գարեգին Նժդեհը, որի գլխավորությամբ դափանցիները ադրբեջանցիներից մաքրեցին Ողջի գետի շրջանը, ինչպես նաև Գեղվածորի 40 ադրբեջանաբնակ գյուղեր:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

ՀՀ կառավարության անհավատալի ճիգերը, չնայած աննկարագրելի ծանր պայմաններին, հանգեցրին նրան, որ 1919 թվականի ամռանն արդեն Հայաստանը կազմակերպված պետություն էր: Երկիրը բաժանված էր 10 գավառների, որոնցից յուրաքանչյուրն ուներ վարչություն և դատական իշխանություն՝ հաշտարար դատարաններ: Երևանում կար շրջանային դատարան, դատաստանական պալատ, Սենատ: Մայիսի 28–ին Ղամարլու (ներկայիս Արտաշատ), Վաղարշապատ (ներկայիս Էջմիածին), Աշտարակ, Իգդիր, Կողբ, Ղարաքիլիսա (ներկայիս՝ Վանաձոր), Ջալալօղլի (ներկայիս՝ Ստեփանավան) և Դիլիջան գյուղերին տրվեց քաղաքի կարգավիճակ:

Երկրի կառավարումը կատարելագործելու նպատակով 1919 թ. մայիսի 25–ին Երևանում գումարվեց գավառապետերի համագումար, որին մասնակցում էին Երևանի, Էջմիածնի, Դարալագյազի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Զանգեզուրի, Սուրմալուի գավառապետերը: Համագումարին մասնակցում էին նաև Հայաստանի խորհրդի, կառավարության անդամներ: Օրակարգի հարցերն էին՝ երկրի վարչական սահմանների ճշգրտումը, մասնագետ ոստիկանների պատրաստումը և ոստիկանական դպրոցի բացումը, պետական պաշտոնյաների և ոստիկանների տնտեսական վիճակի բարելավումը, ոստիկանների համազգեստի խնդիրը և այլն: Համագումարի աշխատանքները ղեկավարում էր ներքին գործերի նախարարի տեղակալ Ս. Մանասյանը, որը մեծ գործ կատարեց երկրի ներքին կյանքի կազմակերպման ու զարգացման բնագավառում:

Կառավարությունը միջոցառումներ ձեռնարկեց պետական հիմնարկներն աստիճանաբար հայացնելու ուղղությամբ: 1919 թ. ապրիլի 17–ին Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հայկական թերթերի ներկայացուցիչների ժողովը: Ժողովը որոշեց կոչ ուղղել պետական, հասարակական և մասնավոր հիմնարկություններին՝ խոսել ու գրել հայերեն, մերժել ոչ հայերենով նյութերի ընդունումը, պահանջել հայոց լեզվի պաշտոնականացում, ստեղծել հայացման կոմիտե:

Գրագրությունները հայերեն վարելու և հիմնարկներում հայերեն խոսելու վերաբերյալ Ս. Մանասյանը գավառներ ուղարկեց հատուկ շրջաբերական:

1919 թ. դեկտեմբերի 26–ին ընդունվեց հատուկ օրենք, որով հայերենը հայտարարվեց պետական լեզու:

Մի շարք կարևոր միջոցառումներ ձեռնարկվեցին երկրի վերաշինության և տնտեսության բարեկարգման ուղղությամբ: Այսպես՝ 1919 թ. ապրիլ–մայիս ամիսներին բանակցություններ ընթացան Անդրկովկասի ջրային գործի անվանի մասնագետ Ս. Զավալիշինի հետ և նրան հանձնարարվեց Հայաստանի ջրային պաշարների ու ոռոգման ուսումնասիրումը, այդ նպատակով հատկացվեց 4 միլիոն ռուբլի: Ս. Զավալիշինը աշխատանքի հրավիրեց շուրջ 70 ինժեներների, տեխնիկների, հանքաբանների, հողագետների, բուսաբանների, որոնք ավելի քան մեկ տարի հետազոտեցին Հայաստանի ջրային ռեսուրսները, որոշեցին ոռոգման վիճակը, նոր բացվելիք ջրանցքների ուղղությունները, կառուցվելիք էլեկտրակայանների տեղաբաշխումը և այլն: Այդ հետազոտությունների արդյունքներն ընդունվեցին ակադեմիկոս Ա. Թամանյանի գլխավորած հանձնաժողովի կողմից և հետագայում հիմք ծառայեցին Սևան–Հրազդան կասկադի կառուցման համար:

1919 թ. մայիսի 1–ին կառավարությունը պետականացրեց Կողբի աղահանքերը՝ աղի արտադրությունն ու վաճառքը պետականորեն կազմակերպելու նպատակով:

Մայիսի 26–ին կառավարությունը որոշում ընդունեց Կարս–Բաթում խճուղի բացելու մասին՝ պարենի փոխադրումն այդ գծով կազմակերպելու նպատակով: Սակայն Աջարիայում սկսված հակավրացական շարժումը խոչընդոտ եղավ այդ կարևոր գործին:

Օգոստոսի 25–ին որոշում ընդունվեց ժողովրդական տնտեսության նախարարություն հիմնելու մասին:

Հոկտեմբերի 17–ին Խորհրդարանը 5 միլիոն ռուբլի վարկ բացեց Հայաստանի Կոոպերատիվների միությանը:

Հոկտեմբերին ավարտվեց Երևանի ուժեղ ռադիոկայանի կառուցումը, որը հաղորդումներ էր արձակում մինչև Բասրա, Տաշքենդ և Աստրախան:

Հայաստանի Հանրապետությունը 1920 թվական մտավ բավականաչափ ամրապնդված: Երկրի սահմանների վրա և ներսում տիրում էր համեմատական խաղաղություն, որը հնարավորություն տվեց շարունակել պետության կառուցման գործը:

1920 թ. հունվարի 4–ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց Հայաստանի քաղաքների համագումարը, որին մասնակցում էին Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր Բայազետ, Աշտարակ և Ղամարլու քաղաքների ներկայացուցիչները: Ելույթ ունեցողները շեշտը դրեցին պետության վերաշինության գործում քաղաքների դերի, քաղաքների ինքնավարության և դրանց միություն ստեղծելու անհրաժեշտության վրա: Համագումարը զբաղվեց քաղաքների կյանքին վերաբերվող բազմաթիվ իրավական, տնտեսական, ֆինանսական, պարենավորման, կուլտուր–կրթական, բժշկա–առողջապահական, շինարարական խնդիրներով, քննարկման ներկայացվեցին բազմաթիվ ծրագրեր: Համագումարում հիմնադրվեց Հայաստանի Քաղաքների միությունը:

1920 թ. հունվարի 19–ին Դաշնակիցների Գերագույն խորհուրդը կայացրեց հետևյալ որոշումը 1. Հայկական պետության կառավարությունը ճանաչված է դե ֆակտո: 2. Սույն ճանաչումը չի կանխորոշում այս պետության ապագա սահմանների խնդիրը:

Ճանաչման լուրը Երևան հասավ հունվարի 23–ին. ամբողջ բնակչությունը ցնծությամբ փողոց դուրս եկավ և խանդավառ ցույց կազմակերպեց: Լուրը ավետեցին նաև հրանոթային համազարկերը, որոնք որոտացին միտինգում Ա. Խատիսյանի ճառի պահին: Ստացվեցին բազում շնորհավորական հեռագրեր:

Հունվարի 26–ին Երևանում գումարվեց Արհեստակցական միության խորհրդի անդրանիկ նիստը, որին մասնակցում էին 13 միությունների 38 ներկայացուցիչներ՝ կոոպերատիվների, ավտոգարաժի, դեղագործների, ուսուցիչների, փոստ–հեռագրի պաշտոնյաների, ծառայողների, բանկային աշխատողների, կաշեգործների, երկաթուղայիների, ջուլհակների, տպագրիչների, հացթուխների, որբանոցների աշխատակիցների միությունները: Ժողովը հաստատեց Միության կանոնադրությունը, ընտրեց գործադիր մարմին:

Քիչ ավելի ուշ ստացվեց նաև Դենիկինի ճանաչումը:

1920 թ. հունվարի 31–ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը, որին մասնակցում էին Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպը, Հայաստանի գերագույն կոմիսար, գնդապետ Հասկելը, ֆրանսիական ներկայացուցիչ կապիտան Պուաղեբարը, Դենիկինի ներկայացուցիչ գնդապետ Զինկնիչը, պարսից հյուպատոս Ասադուլլա խանը, Ադրբեջանի ներկայացուցիչ Հախվերդովը, հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, Ռ. Տեր–Մինասյանը, Ս. Վրացյանը, գեներալ Թ. Նազարբեկյանը, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և շատ ուրիշներ:

Հանդեսը բացեց համալսարանի տեսուչ, պրոֆեսոր Իվ. Ղամբարյանը: Նախարար Նիկոլ Աղբալյանն իր ընդարձակ ճառում մաղթեց, որ համալսարանը մատչելի լինի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար և որ ուսումը ձրի լինի: Բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպն ասաց, որ համալսարանի բացումը նույնքան կարևոր է, որքան անկախությունը: Պատմության մեջ եղել են դեպքեր, երբ պետականությունները կարճ են ապրել, բայց չի եղել դեպք, որ մի անգամ բացված համալսարանը կարճ կյանք ունենա և որ Հայաստանը հանձին էջմիածնի ճեմարանի, Վիեննայի և Վենետիկի հայկական վարժարանների արդեն իսկ դե ֆակտո գոյություն ուներ, չնայած այդ ճանաչումը տոնվեց մի քանի օր առաջ:

Գնդապետ Հասկելն ուրախություն հայտնեց, որ Հանրապետության ծանր հոգսերը չեն ճնշում ժողովրդի կրթության ծարավը և իր ցանկությունն է, որ հայ ժողովուրդն անկախ լինի նաև իր կրթությամբ: Տեղի ունեցավ նաև ճոխ հացկերույթ, գրական–երաժշտական երեկո և պարահանդես:

Կարևոր իրադարձություն էր Հայաստանի բժիշկների առաջին համագումարը, որը բացվեց 1920 թ. ապրիլի 20–ին Երևանում: Մասնակցում էին 72 պատգամավորներ հանրապետության բոլոր ծայրերից: Հաջորդ օրը համագումարը բաժանվեց 5 հատվածի և քննարկվեցին բժշկա–առողջապահական բոլոր սուր հարցերը:

1920 թ. հունվարի 27–ին ստեղծվեց Սերմացնման հատուկ կոմիտե, որը եռանդուն գործի անցավ և ամբարեց 375 հազար փութ սերմացու, 225 միլիոն ռուբլու վարկ բացվեց սերմացու գնելու համար, հաստատվեցին սերմացուի բաշխման պայմանները. պետական պահեստներից սերմացու պիտի տրվեր գյուղական համայնքներին, գյուղատնտեսական ընկերություններին, հասարակական ու պետական հիմնարկություններին: Բաժանված սերմացուն պիտի պետությանը վերադարձվեր կալի ժամանակ՝ բերքով կամ դրամով: Մինչև մայիսի սկիզբը կառա-

վարությունը ժողովրդին բաժանեց մոտ 330 հազար փութ սերմացու ցորեն, գարի, կորեկ, բրինձ, հաճար, կտավատ, գետնախնձոր, եգիպտացորեն: Բաժանվեց նաև 500 փութ բանջարանոցային սերմ, բամբակի ու ծխախոտի սերմ: Ծխախոտագործության, բամբակագործության և այգեգործության զարգացման համար հողագործներին տրամադրվեց հող, վարկ, գործիքներ ու սերմացու:

1920 թ. մարտի 1–ին Խորհրդարանը մեկ միլիոն ռուբլու վարկ բացեց՝ գյուղատնտեսական գործիքներ գնելու համար: Բաքումից բերվեցին տրակտորներ, հնձելու և քամելու մեքենաներ, գութաններ, սերմացտիչներ, այգեգործական և մեղվաբուծական գործիքներ, գերանդիներ, մանգաղներ և այլ գործիքներ: Այգիների համար բերվեց մեծ քանակությամբ պղնձարջասպ: Մեքենաների, գործիքների և նյութերի բաշխումը կատարում էր գյուղատնտեսության նախարարությունը:

Կարևոր իրադարձություն էր 1920 թ. մարտի 15–ին երդվյալ ատենակալների դատարանի բացումը: Ողջույնի խոսք ասացին վարչապետ Ա. Խատիսյանը, արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը, դատարանի նախագահ Մ. Մելիք–Միրզախանյանը: Դատարանի կազմը բաղկացած էր երեք հոգուց՝ դատախազից և օգնականից, երկու քարտուղարներից: Ներկա էին 19 երդվյալ ատենակալներ և մեկ տեղակալ՝ բոլորն էլ տղամարդիկ: Վիճակահանությամբ կատարվեց 12 ատենակալների ընտրություն, որոնք հայտարարեցին կրոնական երդումից հրաժարվելու մասին և ազնիվ խոսք տվեցին՝ դատելու խղճի մտոք: Նրանք հասարակական տարբեր խավերի պատկանող մարդիկ էին: Առաջին գործը կողոպուտի մեջ մեղադրվող երկու անձինք էին, որոնց երդվյալ ատենակալներն անպարտ ճանաչեցին:

Խորհրդարանը մի շարք օրենքներ մշակեց հանրային կրթության *ասպարեզում: 1920 թ. մարտին հաստատվեց դպրոցական հանձնախմբի* օրինագիծը եկեղեցական–ծխական դպրոցների աշխարհականացման ու պետականացման մասին: Օրինագծի կետերն էին.

1. Հոգևոր եկեղեցական–ծխական դպրոցների կայքերն ու գույքերը և նրանց շենքերը պետականացվում են:

2. Պետականացվող կայքերն ու գույքերը և նրանց շենքերը հանձնվում են հանրային կրթության և արվեստի նախարարությանը (Ս. Վ., էջ 388–389):

Ապրիլին ընդունվեց օրինագիծ տարրական կրթության մասին, ըստ որի՝ պետական դպրոցներում մտցվում էր 6–ամյա տարրական կրթություն՝ երկու եռամյակներով: Սահմանվում էր, որ տարրական դպրոցներում ավանդվելու են հետևյալ առարկաները. հայոց լեզու, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, առողջապահություն, երգեցողություն, նկարչություն, մարմնամարզություն, ձեռքի աշխատանք՝ ըստ հանրային կրթության և արվեստի նախարարության մշակած ծրագրի և դասատախտակի:

Հանրապետությունում լայնորեն ծավալվեց սկաուտական շարժումը:

1920 թ. փետրվարի 18–ին հիմնվեց Հայաստանի Կարմիր խաչը:

Մարտի 1–ի դրությամբ 1 դոլարն արժեր 580 ռուբլի, 1 թուրքական ոսկին՝ 3000 ռուբլի, 1 ֆունտ ստեռլինգը՝ 2000 ռուբլի: Վարչապետի ռոճիկը 8150 ռուբլի էր՝ 14 դոլար, նախարարներինը՝ 7.450 ռուբլի, Խորհրդարանի անդամներինը՝ 6.800 ռուբլի: Գոյություն ուներ 40 կարգի ռոճիկ, առավելագույնը 8150 ռուբլի էր, նվազագույնը՝ 2000 ռուբլի:

Զուգահեռաբար ընթանում էին նաև ներքին կազմակերպական և շինարարական աշխատանքները: 1920 թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունը բաժանված էր չորս նահանգապետությունների. 1. Արարատյան (նահանգապետ՝ Ս. Թորոսյան), 2. Շիրակի (նահանգապետ՝ Կ. Սասունի), 3. Վանանդի (նահանգապետ՝ Ստ. Ղորղանյան), 4. Սյունիքի (նահանգապետ՝ Ս. Մելիք–Յոլչյան): Նահանգներն իրենց հերթին բաժանվում էին գավառների:

ՀՀ–ում շրջանառության մեջ էր թղթադրամը, ամսական տպվում էր 600–800 միլիոն ռուբլի: Մինչև օգոստոս արդեն բաց էր թողնված երկու միլիարդ ռուբլու հայկական չեկ: Լոնդոնում պատրաստվում էին հայկական դրամանիշներ: Շրջանառության մեջ էին նաև անդրկովկասյան բոները: Դրամական այդ հեղեղը մեծ չափով անդրադառնում էր *մթերքների գների վրա, որոնք աճում էին խելահեղ արագությամբ:*

Փետրվարի 8–ից Երևանում սկսեց գործել Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատը, որի նպատակն է կապ ստեղծել արտասահմանյան շուկաների հետ, կարգավորել գները:

Հարկային գործի ասպարեզում մտցվեց առաջատվական (պրոգրեսիվ) հարկատվության համակարգ. որքան շատ էր եկամուտը, այնքան պիտի բարձրանար պետության ստացած տոկոսը:

Հայաստանի արդյունաբերությունը և ելևմուտքի բարելավման ասպարեզում վճռական դեր պիտի կատարեր Անկախության փոխառությունը, որի մասին օրենքը հրատարակվեց հունիսի 10–ին: Օրենքում

ասված էր. «ՀՀ արդյունաբերական ուժերը և տնտեսությունը վերականգնելու և հանրապետության թղթադրամների ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն ամերիկյան դոլարի անվանական գումարի պետական փոխառություն 6 տոկոսով: Փոխառության 75 տոկոսը հատկացնել վերոհիշյալ նպատակին, իսկ 25 տոկոսը գործադրել պետական այլ կարիքների համար» (Ս. Վ., էջ 448):

Փոխառությունն արվելու էր 10 տարով, Հայաստանում և արտասահմանում: Բաց էին թողնվելու 10, 25, 50, 100, 500 և 1000 դոլարանոց, պարտաթղթեր, որոնք ազատ էին լինելու տուրքերից: Փոխառությունն ապահովվում էր ՀՀ ամբողջ գույքով: Փոխառության գործի ղեկավար նշանակվեց Ալ. Խատիսյանը, որն ուղարկվեց արտասահման:

Օգոստոսի 1–ին փոխառության բացումը կատարվեց Երևանում, Թիֆլիսում և Բաքումում, որն անցավ մեծ հաջողությամբ: Արդեն սեպտեմբերի 5–ին Հայաստանին հատկացված փոխառությունը ավելի գումարով ծածկված էր, և կառավարությունը փակեց բաժանորդագրությունը Հայաստանի սահմաններում:

Նույն խանդավառությամբ անցավ Անկախության փոխառությունը նաև գաղութահայության մեջ՝ Պոլսում, Իզմիրում, Եգիպտոսում, Բալկանյան երկրներում, Պարսկաստանում:

Հայաստանը դարձել էր ձգողական մի ուժ, որ դեպի իրեն էր քաշում աշխարհի բոլոր ծայրերում ապրող հայերի հոգին ու նյութական ու բարոյական աջակցությունը: Սև ծովի ափերից, Գերմանիայից, Անգլիայից, Ռումինիայից, Բուլղարիայից, Պոլսից, Իզմիրից, Իտալիայից, Ֆրանսիայից, Բելգիայից, Կանադայից, ԱՄՆ–ից, Հարավային Ամերիկայից, Պարսկաստանից, Միջագետքից, Հնդկաստանից, Ճապոնիայից, Չինաստանից, Հեռավոր Արևելքից, Ճավայից և այլ կողմերից նվերներ էին հասնում Երևան կամ Փարիզի պատվիրակությանը՝ Հայաստանի համար: Ուղարկում էին զինվորական հագուստ, դեղորայք, գրենական պիտույքներ, ավտոմոբիլներ, սավառնակներ, ուտելիք, հագուստ, գրադարաններ, գրամեքենաներ, ծխախոտ, խինին, բժշկական գործիքներ, նկարներ, զարդեղեն: Մեծագումար կտակներ էին անում Հայաստանին, կազմում արդյունաբերական խոշոր ծրագրեր (Ս. Վ., էջ 450): Այսպես՝ Եգիպտոսի գործարանատեր Մելքոնյան եղբայրները ընդունեցին Հայաստանի քաղաքացիություն և իրենց ամբողջ հարստությունը՝ մոտ 6 միլիոն դոլար, կտակեցին Հայաստանին: Հայտնի կապիտալիստ Ա. Մելիք–Ազարյանը Հայաստանին նվիրեց Թիֆլիսում գտնվող մեկ միլիոն արժողությամբ իր փառահեղ տունը: Բաքվի հայտնի կապիտալիստ Արշակ Ղուկասյանը Հայաստանին կտակեց 8 միլիոն ռուբլի: Ստավրոպոլի հայ կապիտալիստ Պոպովը իր ամբողջ հարստությունը՝ 25 միլիոն ռուբլի, կտակեց Հայաստանի համալսարանին: Գ. Կյուլպենկյանը խոստացավ Հայաստանում կառուցել մի շարք պետական խոշոր շենքեր: Հ. Մելիքյանը պատրաստվում էր Երևանում կառուցել ժողովրդական տուն: Հայ ռամկավար կուսակցությունը Եգիպտոսում որոշեց Հայաստան ուղարկել 50 օղանավ: ՀՀԴ–ն Ամերիկայում Հայաստանի բանակի համար հանգանակեց 0,5 միլիոն դոլար, Երևան ուղարկեց մեծ քանակությամբ պաքսիմատ ու պահածո: Հայաստանի համալսարանին ու Հանրային գրադարանին նվիրեցին մի շարք մեծարժեք գրադարաններ: Մայիլյան եղբայրների գիտական արշավախումբը ուսումնասիրում էր Հայաստանի տնտեսական հարստությունները: Հունիսին Երևան եկավ ինժեներ Կ. Ս. Արղության–Երկայնաբազուկը և ներկայացրեց չորս տարում Բաքում–Կարս–Սարդարապատ երկաթուղի կառուցելու առաջարկություն:

Մայիսի 8–ին հաստատվեց Գլխավոր ճարտարապետի վարչություն՝ ակադեմիկոս Ալ. Թամանյանի գլխավորությամբ:

Խնամատարության նախարարության համակարգում սկսեց գործել Գլխավոր բժշկաառողջապահական վարչությունը, հիվանդանոցների թիվը 9–ից հասցվեց 30–ի, մահճակալների թիվը՝ 300–ից 1600–ի: Պայքար սկսվեց մալարիայի դեմ:

Սեպտեմբերին ստեղծվեց Հանքատեխնիկական հանձնաժողով՝ հանքերն ուսումնասիրելու համար:

Կարևոր գործ էր հողային հարցի լուծումը, որի համար ստեղծվեցին Հողային հատուկ կոմիտեներ: Կոմիտեները պիտի արձանագրեին և սահմանված չափով գյուղացիությանը պիտի բաշխեին մասնատիրական, եկեղեցական–վանական և լքյալ հողերը, պիտի լուծեին հողային վեճերը:

Սկսվեցին Էջմիածնի և Շիրակի ջրանցքների շինարարությունը, բայց դրանք ավարտվեցին արդեն խորհրդային իշխանության օրոք:

Հուլիսի 1–ին ստեղծվեց Հայկոոպը՝ Հայաստանի կոոպերատիվների միությունը, որի մեջ մտնում էին 350 կոոպերատիվ ընկերություններ՝ 95.000 անդամներով:

Արդարադատությունը զարգանում էր անկանոն պայմաններում. հիմնականում գործում էին արտակարգ դատարանները: Օգոստոսին

բացվեց Կարսի շրջանային դատարանը, որով էլ Երևանի ու Շիրակի շրջանային դատարանների հետ դրանց թիվը հասավ 3–ի:

Լուրջ ուշադրության առարկա էր կրթական գործը: Որոշված էր 1920–1921 ուստարում բացել 1500 տարրական դպրոց: Հունիսի 21–ին կառավարությունը որոշեց համալսարանը փոխադրել Երևան և նրան հատկացնել նախկին Ուսուցչական սեմինարիայի շենքը՝ ներկայիս ԵՊՀ պատմության և աստվածաբանական ֆակուլտետների մասնաշենքը Աբովյան փողոցի վրա: Համալսարանը պիտի բացվեր 1920 թ. հոկտեմբերի 16–ին, 4 բաժիններով՝ պատմա–լեզվաբանական, իրավաբանական, բնագիտական, ֆիզիկա–մաթեմատիկական, իսկ բժշկական բաժինը նախատեսվում էր բացել հաջորդ տարի: Մինչև հոկտեմբերի 1–ը գրանցվել էին համալսարանի 632 ուսանողներ:

Երևանում բացվելու էր պետական երաժշտանոց, որտեղ աշխատելու համար հրավիրվել էին Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը և ուրիշներ:

Քայլեր ձեռնարկվեցին պետական թատրոնի կազմակերպման ուղղությամբ: 1920 թ. ամռանը Երևանում մի շարք ներկայացումներ տվեցին հռչակավոր դերասաններ Հ. Ջարիֆյանը, Հ. Աբելյանը, Օ. Մայսուրյանը՝ իրենց ընտիր խմբով:

Սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացվելու էր ժողովրդական գեղարվեստի ուսումնարան, իսկ սեպտեմբերի 27–ին այնտեղ բացվեց միջնակարգ տեխնիկական դպրոց:

Կարսում բացվելու էր Ռազմական գիմնազիա, Էջմիածնում վերաբացվելու էր հոգևոր ճեմարանը, Երևանում բացվելու էր բժշկական վարժարան, Ուսուցչական սեմինարիա: Երևանում և այլ քաղաքներում կային սղագրության, կար ու ձևի, գորգագործության, զինվորական, հաշվապահական, բժշկական, երկաթուղային, մանկավարժական, երկրաչափական, հայերեն և օտար լեզուների, սկաուտական և այլ մասնագիտական դպրոցներ ու դասընթացներ:

Գործում էին մի շարք ընկերություններ ու միություններ. Հայաստանի գրական ընկերությունը, մարմնամարզական ընդհանուր միությունը, տեխնիկական, իրավաբանական, բժշկական, ուսուցչական, ուսանողական միությունները, հրատարակչական ընկերությունը, Հայուհյաց միությունը, «Մանկապարտեզ» ընկերությունը, մոտ 20 հայրենակցական միություններ և այլն:

Հանրային կրթության և արվեստի նախարարության համակարգում ստեղծվեց Հայաստանի Հնության պահպանության կոմիտե, որի կազմի մեջ մտան պրոֆեսորներ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Աշխարհբեկ Քալանթարը, ակադեմիկոս Ա. Թամանյանը: Կոմիտեի առաջին հոգսը եղավ Անիի ավերակների ուսումնասիրությունը, և ճարտարապետ Թ. Թորամանյանը հաստատվեց այնտեղ: Կազմվեց գիտական արշավախումբ, որը պետք է կազմեր Հայաստանի հնագիտական քարտեզը: Կազմվեցին հնագիտական երկու արշավախմբեր, որոնք հավաքեցին մեծ քանակությամբ նյութեր, սակայն պատերազմը արգելք եղավ նրանց աշխատանքներին:

Կառավարությունը հոգ տարավ Սևանա լճի վրա նավարկություն կազմակերպելու ուղղությամբ: Լճի վրա սկսեցին գործել շոգեմակույկներ և «Աշոտ Երկաթ» ռազմանավը՝ մեկ թնդանոթով: Սեպտեմբերի 3–ին Շահթախթից Երևան բերվեց «Սեստրիցա Նյուշա» շոգենավը, որ ռուսները տանում էին Վան, բայց թողել էին ճանապարհի կեսին: Նավը վերանվանվեց «Գեղանուշ» և պիտի փոխադրվեր Սևան: Ենթադրվում էր Սևանի բոլոր ափերը միմյանց կապել նավային հաղորդակցությամբ: Սևանի նավագնացության կազմակերպիչն էր Խորհրդարանի անդամ Տիգրան Ծամհուրը և երիտասարդ ծովային սպա Թումանյանը:

1920 թ. հուլիսին ՀՀ կառավարությունը հաստատեց Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի՝ գերբի նախագիծը, որի հեղինակներն էին ակադեմիկոս Ա. Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Զինանշանի կենտրոնում վահան էր՝ բաժանված չորս մասի, որոնցում տեղավորված էին Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց և Ռուբինյանց զինանշանները: Վահանի կենտրոնում Մեծ և Փոքր Մասիսներն էին, նրանցից վերև՝ Հ. Հ. տառերը: Վահանը ձախից ու աջից բռնել էին առյուծն ու արծիվը, իսկ ներքևում սուր էր, գրիչ, հասկեր և շղթա: Նախագիծը լուրջ առարկությունների հանդիպեց, սակայն կառավարությունը ժամանակավորապես հաստատեց մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Առարկողները «կատարյալ գազանանոցի» էին նմանեցնում այն:

Հուլիսի 5–ին հաստատվեց Հայաստանի քաղաքացիության մասին օրենքը՝ բաղկացած հինգ կետերից ու երկու ծանոթություններից: Ըստ այդ օրենքի՝ ՀՀ քաղաքացի էր ճանաչվում յուրաքանչյուր նախկին ռուսահպատակ կամ թուրքահպատակ, որը տվյալ պահին ապրում էր ՀՀ սահմաններում:

ԿՐԹԱԿԱՆ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի առաջին Հանրապետության պետական գործիչները անհրաժեշտ նշանակություն էին տալիս կրթական գործի և մշակութային կյանքի զարգացմանը, ուստի այդ ուղղությամբ նույնպես, չնայած սուղ հնարավորություններին, ձեռնարկվեցին լուրջ միջոցառումներ:

1919 թ. մայիսի 30–ին կառավարությունը որոշեց 15–օրյա ժամկետում դատարկել բոլոր դպրոցական շենքերը, նորոգել դրանք և նախապատրաստել նոր ուսումնական տարվա համար: Այդ նպատակին հատկացվեց շուրջ 11 միլիոն ռուբլի: Արդեն տարվա վերջին հանրապետությունում կար 431 տարրական դպրոց, որոնցում սովորում էին ավելի քան 38 հազար աշակերտներ և աշխատում էին շուրջ 1100 ուսուցիչներ: Միջնակարգ դպրոցների թիվը քիչ էր՝ ընդամենը 20 դպրոց՝ 5162 աշակերտներով և 288 ուսուցիչներով:

1919 թ. մայիսի 16–ին կառավարությունը որոշում ընդունեց համալսարան բացելու մասին:

Հուլիսի 15–ին բացվեցին հուշարձանների պահպանման և արվեստի հովանավորության բաժինները:

Մայիսի 25–ին Երևանում բացվեց Հայ արվեստագետների միության կազմակերպած անդրանիկ նկարչական ցուցահանդեսը՝ հանրային կրթության և արվեստի նախարարության հովանավորությամբ: Ցուցադրված էին Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի և այլոց նկարներ: Կառավարությունը պետական թանգարանի համար ցուցահանդեսից գնեց 100.000 ռուբլու նկարներ:

Հուլիսի 9–ին կառավարությունը Հայ գրողների միության քարտուղար Հովհաննես Թումանյանի դիմումի համաձայն հատկացրեց 100.000 ռուբլի՝ որպես նպաստ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին տալու համար: Միության վարչությունը այդ գումարը բաժանեց ութ ամենահեղինակավոր ու կարիքավոր գրողների:

Սեպտեմբերի 10–ին Խորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրական–Մարդաբանական թանգարան–գրադարան: Նոր հիմնադրված թանգարան–գրադարանին հանձնվեց Հայոց ազգագրական ընկերության ամբողջ շարժական և անշարժ գույքը՝ մոտ 10.000 գիրք, պարբերականներ, 120 ձեռագրեր, ազգագրական նյութեր: Ընկերության հիմնադիր և վարիչ, հայ նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը նույն պաշտոնով տեղափոխվեց Հայաստան:

1919 թ. վերջին Երևանում արդեն գործում էին թատերական վարժարանը, երաժշտական, հայոց լեզվի, մանկավարժական դասընթացներ:

Ինչպես գրում է Ս. Վրացյանը, տարվա վերջին արդեն երկիրը գտնվում էր համեմատական բարեկարգության մեջ և ոգևորության ու գուրգուրանքի առարկա էր ոչ միայն Հայաստանում, այլև նրանից դուրս *ապրող հայերի համար: Հայաստանը դարձել էր այն հուսատու փարոսը*, որ իրեն էր քաշում աշխարհի չորս կողմը սփռված հայությանը:

1919 թ. դեկտեմբերին Թիֆլիսում կազմվեց Հայ կուլտուրական հաստատությունների միությունը, որի մեջ, մտան Հայ գյուղատնտեսական ընկերությունը, Հայոց տեխնիկական ընկերությունը, Հայ կանանց միությունը, Հայ իրավաբանների միությունը, Հայ բժիշկների միությունը, Ազգագրական ընկերությունը, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը: Միության նպատակն էր բազմակողմանի օգնություն ցույց տալ Հայաստանի կառավարությանը: Շատ հայ մասնագետներ ու հասարակական գործիչներ ցանկություն էին հայտնում տեղափոխվել Հայաստան՝ հայրենիքին ծառայելու մղումով (Ս. Վ., էջ 372–376):

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀՀ ստեղծման պահին Հայկական բանակային կորպուսը բաղկացած էր երկու հրաձգային դիվիզիաներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ չորսական հրաձգային գնդեր և մեկական հրետանային բրիգադներ՝ վեցական հրետանային մարտկոցներով: Կորպուսի մեջ էին մտնում նաև Հայկական առանձին հեծյալ բրիգադը՝ բաղկացած երկու հեծյալ գնդերից և հեծյալ լեռնային մարտկոցից, Ալեքսանդրապոլի բերդապահ հետևակային բրիգադը՝ բաղկացած հինգ հետևակային գնդերից, Հայկական համահավաք զորաջոկատը՝ բաղկացած երեք հատուկ հետևակային բրիգադներից, Հայկական պահեստային հետևակային բրիգադը, գնդացրային, հրետանային դիվիզիաներ, ավտոմոբիլային երեք վաշտեր, ավիաջոկատ և այլ մասնագիտացված զորամասեր ու ստորաբաժանումներ: (Մուրադ Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը (1918–1920), Երևան, 1996, էջ 27):

Քանի որ Բաթումի պայմանագրով ՀՀ–ը կարող էր ունենալ ընդամենը մեկ հետևակային դիվիզիա, ուստի Հայկական բանակային կորպուսը պետք է վերակազմավորվեր և վերածվեր մեկ հետևակային դիվիզիայի:

Վերակազմավորումը տեղի էր ունենում Թուրքիայի անմիջական վերահսկողության պայմաններում: Կազմավորվող Հայկական Առանձին դիվիզիայի հրամանատար նշանակվեց կորպուսի 2–րդ հրածգային դիվիզիայի նախկին հրամանատար, գեներալ–մայոր Մովսես Սիլիկյանը (Սիլիկովը): Նրա թիվ 1 հրամանով շտաբի պետ նշանակվեց փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլյանը (Վեքիլովը): Ավելի ուշ շտաբի պետ դարձավ գնդապետ Զինկևիչը: Դիվիզիայի կազմավորման աշխատանքներն ավարտվեցին օգոստոսի 15–ին:

Սկզբնական շրջանում Հայկական Առանձին հետևակային դիվիզիան բաղկացած էր 6 հետևակային գնդերից՝ երեքական գումարտակով, մեկ հրետանային բրիգադից, համահավաք հեծյալ գնդից և օժանդակ այլ ստորաբաժանումներից: Այս կառուցվածքը պահպանվեց մինչև 1918 թ. վերջը:

Առաջին հետևակային բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանը (Փիրումով), երկրորդ բրիգադի հրամանատար՝ գնդապետ Բաղդասարյանը (Բաղդասարով): Գնդերի հրամանատարներ նշանակվեցին գնդապետներ Դոլուխանյանը, Պերեկրյոստովը և ուրիշներ: Հրետանային բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Քրիստափոր Արարատյանը, որը հետո նշանակվեց զինվորական նախարար:

Դիվիզիայի հավաքական հեծելազորային գնդի հրամանատար նշանակվեց գնդապետ Նիկոլայ Կորգանովը:

Հայաստանի առաջին Հանրապետությունն ունեցավ զինվորական չորս նախարար՝ Հովհաննես Հախվերդյանը (1918 թ. հունիս–1919 թ. մարտ), Քրիստափոր Արարատյանը (1919 թ. մարտ–1920 թ. ապրիլ), Ռուբեն Տեր–Մինասյանը (1920 թ. ապրիլ–նոյեմբեր), Դրաստամատ Կանայանը՝ Դրոն (1920 թ. նոյեմբեր–դեկտեմբեր):

1919 թ. սկզբին ՀՀ զինվորական նախարարությանն առընթեր ստեղծվեց Ռազմական խորհուրդ, որի մեջ մտան դիվիզիայի ավագ զորահրամանատարները և նախարարության վարչությունների պետերը: Մարտի 25–ին Ռազմական խորհրդի անփոփոխ նախագահ նշանակվեց Հայկական կորպուսի նախկին հրամանատար, գեներալ–լեյտենանտ

Թովմաս Նազարբեկյանը: Կառավարության ապրիլի 24–ի հրամանագրով նրա վրա դրվեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ սպարապետի պարտականությունը:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո (1918 թ. նոյեմբերի 30) Բաթումի պայմանագիրը ուժը կորցրած համարվեց, և ՀՀ կառավարությունը կտրուկ ընդլայնեց իր զինված ուժերը:

1919 թ. հունվարին զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանի հրամանով Հայկական Առանձին դիվիզիան վերակազմավորվեց: Կազմավորվեցին երեք առանձին հետևակային բրիգադներ՝ յուրաքանչյուրը բաղկացած հետևակային երկու գնդից: Առաջին բրիգադի հրամանատար նշանակվեց գեներալ–մայոր Դանիել Բեկ Փիրումյանը, երկրորդինը՝ գեներալ–մայոր Արտեմ Հովսեփյանցը, երրորդինը՝ գեներալ–մայոր Բոգդան Բաղդասարյանը:

Հայկական բանակն ուներ նաև միլիցիոներական և պարտիզանական զորքեր, հեծելազոր, ինժեներական զորամասեր, սահմանապահ ուժեր: Տեխնիկական զորքերի մեջ էր մտնում ավիացիոն զորաջոկատը, ինժեներական գումարտակը, ռադիոհեռագրային դիվիզիոնը, Սևանի նավատորմիկը, 4 զրահագնացք, 1 զրահապատ մեքենա: Գործում էին գլխավոր շտաբի սպայական դասընթացը, սպայական նախապատրաստական դպրոցը:

1920 թ. հոկտեմբերի 25–ի դրությամբ ՀՀ բանակը բաղկացած էր հետևակային, հեծելազորային և հրետանային կանոնավոր և կամավորական զորամասերից: Հետևակային կանոնավոր զորքերը բաղկացած էին հինգ առանձին հետևակային բրիգադներից, որոնց մեջ մտնում էին 1–10–րդ հետևակային գնդերը: Յուրաքանչյուր գունդ բաղկացած էր 2 գումարտակից, գումարտակը՝ 4 վաշտից: Յուրաքանչյուր հետևակային գնդում կար 1500 սվին: Հրետազորը բաղկացած էր 11 լեռնային–հեծյալ մարտկոցներից, որոնցից յուրաքանչյուրում կար 4 հրանոթ, երեք հաուբիցային մարտկոցներից, Կարսի և Ալեքսանդրապոլի ամրոցային հրետանուց:

Զինված ուժերի այս կառուցվածքը մասնակի փոփոխություններով պահպանվեց մինչև ՀՀ անկումը և հայկական բանակի վերակազմավորումը:

1919 թ. վերջին հայկական բանակի թվաքանակը կազմում էր 30.000 մարդ: Համեմատության մեջ դնելով տարաբնույթ թվական

տվյալներ՝ հայոց բանակի պատմության հետազոտող Մուրադ Կարապետյանը հանգում է այն եզրակացության, որ եթե 1918 թ. վերջին հայկական դիվիզիայի շարքերում ծառայում էին մոտ 16.000, 1919 թ. աշնան վերջին՝ 30 հազար մարդ, ապա 1920 թ. նոյեմբերի սկզբին ՀՀ բանակի թվաքանակը, ներառյալ նաև կամավորական–պարտիզանական, միլիցիոներական և թիկունքային ծառայողները, հասնում էր 40 հազարի (Մ. Կ., նշվ. աշխ., էջ 45–48):

1920 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1919 թ. ամռանը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը բավական աշխուժացավ՝ կապված գյուղացիական և բանվորական հուզումների ու ելույթների ուժեղացման հետ: Բանվորական շարժման կենտրոնը Ալեքսանդրապոլն էր, որտեղ գործում էր բոլշևիկյան ընդհատակյա կոմիտե: Բոլշևիկների ղեկավարությամբ ստեղծվեց նաև Հայաստանի «Սպարտակ» կոմունիստական երիտասարդական միությունը:

1919 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին խորհրդակցությունը, որին մասնակցում էին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Ս. Խանոյանը, Դ. Ղուկասյանը և ուրիշներ: Խորհրդակցությունն ընտրեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները միավորող ղեկավար օրգան՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե՝ Արմենկոմ, որի կազմում մտան Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Ա. Ալավերդյանը, Ղ. Ղուկասյանը, Ս. Խանոյանը:

Երկրում ստեղծված ծանր վիճակը ներկայացնելու և դրանից դուրս գալու ուղիները ցույց տալու նպատակով Արմենկոմը հանձնարարում է Սարգիս Կասյանին (1876–1937) գրել հատուկ աշխատություն: 1919 թ. վերջերին լույս տեսավ Ս. Կասյանի «Ո՞ւր է ելքը» գրքույկը՝ Ս. Ատենյան կեղծանվամբ: Հեղինակը մանրամասն վերլուծության էր ենթարկում երկրում ստեղծված դրությունը և գտնում, որ հայ ժողովրդի փրկության միակ ուղին երկրում խորհրդային իշխանության հաստատումը կարող է լինել: «Երկրագնդի վրա,— գրում է Ս. Կասյանը,— թերևս ոչ մի ժողովուրդ այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի վրա:

Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտաշնչում են դառն ու լեղոտ օդը և թունավորում ամբողջ երկիրը՝ սպանելով կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը...

Հայաստանում դրությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք...

Երկաթի և արյան միջոցով պահվող, ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրա կառուցված այս աշխարհը չէ, որ պիտի փրկե հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն աշխարհը, որի արշալույսը բացվել է ռուսական հյուսիսում:

Միակ ելքը դա է, ուրիշը չկա» (ԳԱ ՀԺՊ, Երևան, 1967, հ. 7, էջ 78):

1920 թ. հունվարի կեսերին Երևանում անլեգալ տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որին մասնակցում էին տեղական կազմակերպությունների 22 ներկայացուցիչներ: Կոնֆերանսն ընդգծեց, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը գոյություն ունեցող իշխանության բռնի տապալումն ու խորհրդային իշխանության հաստատումն է: Կոնֆերանսն ընտրեց ՌԿ(բ)Կ Արմենկոմի 10 հոգուց բաղկացած նոր կազմ, որի մեջ մտան Ս. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը Հ. Կոստանյանը, Ղ. Ղուկասյանը, Ա. Նուրիջանյանը, Դ. Տեր–Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Ս. Մարտիկյանը:

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը անմիջականորեն ղեկավարում էր ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն, որտեղ աշխատում էին Վ. Ի. Լենինի զինակիցներ Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ա. Միկոյանը և ուրիշներ:

Ներկայացնելով երկրում տիրող վատթարագույն վիճակը՝ ԳԱ ՀԺՊ 7–րդ հատորում ընդգծվում է, որ «Ժողովուրդը տեսնում և հասկանում էր, որ դաշնակցականներն իրենց տիրապետության ընթացքում *իրեն չտվեցին ո՛չ ազատություն, ո՛չ հող և ո՛չ էլ խաղաղություն*: Պատերազմները, սովն ու համաճարակը ֆիզիկական բնաջնջման էին ենթարկում ժողովրդին... Դաշնակցական պետական սիստեմը այլասերված էր: Զեղծարարությունը, կաշառակերությունն ու չարաշահումները չտեսնված չափերի էին հասել: Հափշտակումներն ու կեղեքումները բացահայտ սանձարձակության էին վերածվել: Հայաստանում բուրժուական դեմոկրատիայի ամենատարրական նորմերն իսկ չէին պահպանվում: Տիրող կարգերի դեմ ամենափոքր բողոքի արտահայտությունն անգամ դիտվում էր որպես «ազգի դավաճանություն» և պատժվում ամենաբիրտ միջոցներով:

Երկրի դրությունը բարդացել էր նաև նրանով, որ հարյուր հազարավոր գաղթականներ փախչելով թուրքական յաթաղանից, ապաստանել էին Հայաստանում, չունենալով ո՛չ օթևան և ո՛չ էլ հաց: Սովն ու համաճարակը գերեզման էին տանում հազարավոր մարդկանց: Միայն 1918–1919 թվականների ձմռանը սովից ու համաճարակից մեռել են ավելի քան 150 հազար մարդ:

Դաշնակցականների կառավարական կուսակցությունը դառնալը արագացրեց նրանցից հուսախաբ եղած աշխատավոր մասսաների հիասթափության պրոցեսը, նրանց զրկեց ժողովրդի վրա ունեցած երբեմնի «ազդեցությունից» (ԳԱ ՀԺՊ, Երևան, 1967, հ. 7, էջ 82):

Ինչպես նշում է Ս. Վրացյանը, հայ կոմունիստների հակապետական շարժման (այսինքն՝ Մայիսյան ապստամբության — Մ. Կ.) դրդիչ և ազդանշան հանդիսացավ Ադրբեջանի խորհրդայնացումը: «Ադրբեջանի հեղաշրջումը,— գրում է նա,— զուգադիպեց մայիսի մեկի տոնին: Երևանում և Հայաստանի մյուս վայրերում հայ աշխատավորությունը պատրաստվում էր առանձին հանդիսավորությամբ տոնելու աշխատավորների միջազգային համերաշխության օրը: Բոլշևիկները օգտվեցին դրանից և աշխատեցին մայիսյան տոնը վերածել ընդհանուր հակապետական ապստամբության: Երևանում այդ չհաջողվեց, բայց գավառական մի շարք քաղաքներում նրանք ունեցան կարճատև հաջողություն» (Ս. Վ., էջ 411):

Հիրավի, 1920 թ. սկզբներին Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակը, ջախջախելով օտարերկրյա ինտերվենտներին և ռուսական սպիտակգվարդիական ուժերին՝ մոտեցել էր Անդրկովկասի սահմաններին: 1920 թ. ապրիլի 28–ին 11–րդ Կարմիր բանակը մտավ Ադրբեջան և այնտեղ հաստատվեց խորհրդային իշխանություն: Մայիսմեկյան ցույցերը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում, Զանգեզուրում և այլ վայրերում անցան Հայաստանում ևս խորհրդային իշխանություն հաստատելու բուռն պահանջներով:

Երևանում 1920 թ. մայիսի 1–ի վաղ առավոտյան սկսված ցույցից հետո միտինգի ժամանակ կրակոտ ճառով հանդես եկավ Արմենկոմի անդամ Ստեփան Ալավերդյանը:

Մայիսմեկյան հուժկու ցույց տեղի ունեցավ նաև Ալեքսանդրապոլում: Մի շարք վայրերում քաղաքական ցույցերը շուտով վերածվեցին զինված ապստամբության:

Մայիսի 2–ին Ալեքսանդրապոլի կայարանում գտնվող «Վարդան զորավար» զրահագնացքը, որի հրամանատարն էր կապիտան Սարգիս Մուսայելյանը, դադարում է ենթարկվել հրամանատարությանը և վերածվում է ապստամբության նախապատրաստման շտաբի: Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության մայիսի 3–ին և 5–ին ուղարկված նամակներով առաջարկում է Արմենկոմին՝ սկսել ապստամբություն:

Ապստամբությունը կանխելու նպատակով Դաշնակցության բյուրոյի որոշմամբ մայիսի 4–ին Ա. Խատիսյանի կառավարությունը հրաժարական տվեց: Մայիսի 5–ին գումարվեց Խորհրդարանի արտակարգ նիստը, որն ընդունեց Ա. Խատիսյանի հրաժարականը և նշանակեց նոր կառավարություն. ՀՅԴ բյուրոն իր ամբողջ կազմով անցավ իշխանության գլուխ: Փաստորեն հայտարարվեց Դաշնակցության դիկտատուրա, իսկ Խորհրդարանը մեկ ամսով դադարեցրեց իր գործունեությունը: Բյուրո–կառավարության կազմն էր. վարչապետ և արտգործնախարար՝ Համո Օհանջանյան, ներքին գործերի և զինվորական նախարար՝ Ռուբեն Տեր–Մինասյան, ֆինանսների՝ Աբրահամ Գյուլխանդանյան, հաղորդակցության՝ Արշակ Զամալյան, գյուղատնտեսության, պետական գույքերի և աշխատանքի՝ Սիմոն Վրացյան, խնամատարության՝ Ս. Արարատյան, հանրային կրթության և արվեստի՝ Գ. Ղազարյան:

Նոր կառավարությունն անմիջապես հայրենիքը հայտարարեց վտանգի մեջ և կոչ ուղղեց ժողովրդին՝ համախմբվել կառավարության շուրջը և հասնել հաղթանակի (կոչի լրիվ տեքստը տես՝ Ս. Վրացյան, էջ 415–416): Բյուրո–կառավարությունը դիմեց արտակարգ միջոցների:

Երկրում հայտարարվեց արտակարգ դրություն: Հայաստանը բաժանվեց չորս նահանգի՝ Կարսի, Շիրակի, Երևանի և Ղարաբաղի, որտեղ նշանակվեցին գեներալ–կոմիսարներ: Գավառներ գործուղվեցին արտակարգ լիազորներ՝ տեղերում զինված ելույթները ճնշելու նպատակով: Զորքը դրվեց մարտական վիճակի մեջ: Սկսվեցին մասսայական ձերբակալություններ: Գործադուլները հայտարարվեցին պետական հանցագործություն, իսկ կոմունիստական կուսակցությունը՝ օրենքից դուրս: Ստեղծվեցին չորս արտակարգ դատարաններ: Օրենք ընդունվեց մահապատիժ սահմանելու մասին (ԳԱ ՀԺՊ, հ. 7, էջ 86):

Սակայն ձեռնարկված այդ միջոցառումները չկասեցրին ապստամբության ընթացքը: Արմենկոմը ապստամբության նախապատրաստման հարցում դանդաղեց, որը և ճակատագրական նշանակություն ունեցավ: Միայն մայիսի 6–ին Արմենկոմը Ալեքսանդրապոլ ուղար-

կեց իր ներկայացուցիչներին՝ Արտաշես Մելքոնյանին և Դրաստամատ Տեր–Սիմոնյանին:

Մայիսի 7–ին «Վարդան զորավար» զրահագնացքում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին մասնակցում էին 14 մարդ: Խորհրդակցությունն ընտրեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե, որի կազմում մտան Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Ա. Մելքոնյանը, Դ. Տեր–Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Պ. Պետրոսյանը, Գ. Սարգսյանը, Ա. Տեր–Սահակյանը, Լ. Ուլիբեկյանը: Կարմիր զորքերի հրամանատար նշանակվեց Ս. Մուսայելյանը:

Խորհրդակցությունը որոշեց ապստամբությունը սկսել մայիսի 10–ին: Հաստատվում է ապստամբության հետևյալ ռազմական պլանը. Ղազախից կապվել Աղստաֆայում կանգնած Կարմիր բանակի զորամասերի հետ, սկսել ապստամբությունը, որից ամենիջապես հետո ապստամբում են Ալեքսանդրապոլը, Կարսը և Սարիղամիշը, Ղարաքիլիսան և Դիլիջանը: Ալեքսանդրապոլից և Դիլիջանից միաժամանակ ապստամբական զորքերը շարժվում են Երևանի վրա և ստիպում դաշնակցականներին կա՛մ նահանջել, կա՛մ կռիվն ընդունել: Երևանում ապստամբություն չէր նախատեսվում:

1920 թ. մայիսի 10–ին ՌՀԿ–ն հրապարակեց կոչ, որով Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զորքերի կամքով դաշնակցական կառավարությունը հայտարարեց տապալված և երկրում հռչակեց խորհրդային իշխանություն:

Մայիսի 8–ին ՌՀԿ ստեղծվեց Կարսում, որի մեջ մտան Ղ. Ղուկասյանը, Ա. Նազարյանը, Դ. Մելիքյանը, Գ. Բայթունին, Վ. Ղազանչյանը, Ա. Թովմասյանը: Մայիսի 10–ին ապստամբություն բռնկվեց նաև Կարսում:

Ապստամբեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները: Քյավթառլու գյուղի բժիշկ, բոլշևիկ Ա. Փանյանի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովը բռնագրավեց պահեստները և սերմացուն բաժանեց գյուղացիներին: Ստեղծվեց ՌՀԿ, որի կազմում էին Ա. Փանյանը, Ն. Կուրղինյանը և Ա. Մովսիսյանը: Մայիսի 10–ին հեղկոմը ձերբակալեց դաշնակցական ղեկավարներին և զինեց գյուղացիներին: Ապստամբեցին նաև Պարնիի, Նորաշենի, Ղուլիջանի և Արթիկի գյուղացիները՝ Ս. Գալոյանի և Ե. Գալոյանի ղեկավարությամբ:

Գեներալ Ղամազյանին հանձնարարվում է համոզել Ս. Մուսայելյանին՝ հետ կանգնել ապստամբությունից, սակայն վերջինս անհող-

դողդ պատասխանում է. «Չջանան շուռ տալ պատմության անիվը, թող չփորձեն կանգնեցնել իրադարձությունների բնական ընթացքը, դաշնակցական կառավարության երգը արդեն երգված է... պրոլետարական հեղափոխության կարմիր դրոշը մի քանի օր հետո կծածանվի դաշնակցականների մեռյալ պառլամենտի վրա» (Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 318):

Կարսի ապստամբության ղեկավարները թույլ են տալիս սխալ՝ հաջորդ օրը կալանքից ազատելով ձերբակալված դաշնակցական ղեկավարներին: Կարսի կայազորի պետ, գեներալ Փիրումովի գլխավորությամբ ստեղծվում է «Հայրենիքի փրկության կոմիտե», որը մայիսի 12–ին անցնում է հարձակման:

Օգնություն չստանալով Ալեքսանդրապոլից՝ Կարսի ՌՀԿ–ն թողնում է քաղաքը և փոխադրվում բերդ, որը շրջապատվում է կառավարական ուժերի կողմից: Ապստամբները, մարտեր մղելով, նահանջում են և հասնում Ալեքսանդրապոլից 18 կմ հեռավորության վրա գտնվող Արգինա գյուղ: Այստեղ նրանք կռվի են բռնվում վրա հասած կառավարական ուժերի հետ: Զոհվում են Ղ. Ղուկասյանը, Ծ. Ծառուկյանը և ուրիշներ:

Ալեքսանդրապոլի ապստամբների կողմն են անցնում բանակի զինվորների զգալի մասը և գեներալ Խաչատուրովը, որը, սակայն, շուտով զոհվում է:

Սակայն գրավելով իշխանությունը՝ Ալեքսանդրապոլի ՌՀԿ–ն դանդաղկոտություն հանդես բերեց և հարձակման անցնելու փոխարեն անցավ պաշտպանության:

Ինչպես նշում է Ս. Վրացյանը, Ալեքսանդրապոլը վերագրավելու համար կազմվեց առանձին մի զորամաս՝ խմբապետ Սեպուհի (Արշակ Ներսիսյան, 1872–1940) գլխավորությամբ: Սեպուհը պահանջեց իր մոտ բանակցությունների եկած ՌՀԿ–ի պատվիրակներից՝ մինչև մայիսի 14–ի առավոտյան ժամը 6–ը անձնատուր լինել և հանձնել զրահագնացքը: Մայիսի 13–ին գիշերը ապստամբները թողին զրահագնացքը և ցրվելով տարբեր ուղղություններով՝ թաքնվեցին: Մայիսի 14–ի առավոտյան հանրապետական զորքերը առանց կռվի մտան քաղաք և զրահագնացքի վրա բարձրացավ հանրապետության դրոշը: Նույն օրը ձերբակալվեցին Ս. Մուսայելյանը, Ա. Մելքոնյանը և ուրիշներ, իսկ Ավիս Նուրիջանյանին հաջողվեց փախչել: Ձերբակալ

վածներին հանձնեցին արտակարգ դատարանին (Ս. Վ., էջ 422–423): Ալեքսանդրապոլի անկումը ճակատագրական եղավ ամբողջ ապստամբության համար:

Ալեքսանդրապոլից և Կարսից անմիջապես հետո ապստամբություն բռնկվեց Սարիղամիշում: Այստեղ ստեղծված ՌՀԿ–ն, որի մեջ մտնում էին Ա. Ճուղուրյանը, Լ. Մխչյանը, Ս. Ոսկանյանը, Պ. Կուխմալայկինը և ուրիշներ, իշխանությունն իր ձեռքում պահեց մինչև մայիսի 17–ը:

Ալեքսանդրապոլի և Կարսի անկումից հետո կառավարական զորքերը շարժվեցին դեպի Սարիղամիշ: Քաղաքը գրավվեց, իսկ Կուխմալայկինը, Ս. Ոսկանյանը և Պ. Մատիչկոն գնդակահարվեցին:

Մայիսի 13–14–ին ապստամբություն բռնկվեց Նոր Բայազետում: Ալեքսանդրապոլից այստեղ վերադարձած Հովի. Սարուխանյանը դեռևս մայիսի 8–ին ստեղծում է ՌՀԿ, որի մեջ մտնում են Բ. Բատիկյանը, Ս. Մակարյանը, Մ. Պետրոսյանը և ուրիշներ: Մայիսի 17–ին ապստամբները գրավում են Նոր Բայազետը:

Նոր Բայազետի դեմ ուղարկվում են խոշոր ուժեր, որոնք մայիսի 19–ին վերագրավում են քաղաքը: Գնդակահարվում են Հ. Սարուխանյանը և ուրիշներ:

Մայիսի 14–ին ապստամբություն բարձրացավ Ղազախ–Շամշադինի շրջանում: Ապստամբությունը ղեկավարում էր Շավարշ Ամիրխանյանի գլխավորած ՌՀԿ–ն, որի մեջ մտնում էին Ե. Մկրտումյանը, Ան. Բերբերյանը, Գ. Հարությունյանը, Կ. Այվազյանը: Այստեղ ապստամբությունը տևեց մեկուկես ամիս:

Մայիսի 19–ին ապստամբությունը հասավ Իջևան: Այստեղ ապստամբության ղեկավարներից էին Ս. Հակոբջանյանը, Ե. Շամախյանը, Ժ. Իշխանյանը, Ե. Մկրտումյանը, Հ. Յաղուբյանը և ուրիշներ: Տեղի ՌՀԿ–ն դիմում է 11–րդ Կարմիր բանակին և օգնություն խնդրում, և մայիսի 21–ին ռուսական կարմիր ջոկատը մտավ Իջևան:

Զանգեզուրում ապստամբությունը բռնկվեց մայիսի վերջերին: Առաջին ապստամբության դրոշ բարձրացրեց Խնձորեսկը: Ապստամբությունը ղեկավարում էր Հակոբ Կամարու գլխավորած Զանգեզուրի կոմունիստների ժամանակավոր Կենտկոմը: Ապստամբության ղեկավարներից էին նաև Բ. Հարությունյանը, Ք. Մկրտչյանը, Մ. Մաշուրյանը:

Սակայն Զանգեզուրում գտնվող Դրոյի զորամասը կարողացավ արագորեն ճնշել ապստամբությունը և այն լայն տարածում չստացավ:

Այսպիսով՝ երկու շաբաթվա ընթացքում կառավարական զորքերը ամբողջ երկրում վերջ դրեցին Մայիսյան ապստամբությանը:

Ապստամբության պարտությունից հետո՝ հուլիսի 8–ին, վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց հատուկ քննչական հանձնաժողով՝ ապստամբության պատճառները քննելու և դրանք վերացնելու նպատակով: Բանտարկվեցին հարյուրավոր մարդիկ, հազարավոր մարդիկ էլ փախան և ապաստանեցին Խորհրդային Ադրբեջանում:

Ապստամբության ղեկավարներից Ստ. Ալավերդյանը, Ա. Փանյանը, Ե. Սնյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը և ուրիշներ գնդակահարվեցին:

Ապստամբության պարտության պատճառներից մեկն այն էր, որ ապստամբությունը միաժամանակ չսկսվեց Հայաստանի տարբեր վայրերում: Անվճռականություն դրսևորեց ապստամբության ղեկավարությունը:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ Մայիսյան ապստամբության պարտությունից հետո: Ավելի լավ է ձայնը տանք Ս. Վրացյանին. «Բոլշևիկյան ապստամբության հաշվեհարդարը զուգադիպեց Մայիսի 28–ին՝ անկախության տարեդարձին, որը տոնվեց արտակարգ հանդիսավորությամբ, ամբողջ Հայաստանում, բայց, մանավանդ, Երևանում,— գրում է նա: Քաղաքը զարդարված էր առանձին շքեղությամբ... Տները թաղված էին ծառերի ոստերի ու ծաղիկների, գորգերի ու դրոշակների մեջ: Աբովյանի վրա կանգնած էր հաղթական շքեղ կամար... Հանդեսին մասնակցում էր Ամենայն Հայոց կաթողիկոսը... Անհաշիվ բազմություն գյուղերից ու քաղաքից՝ վաղ առավոտվանից լցվել էին փողոցները... Զորահանդեսից հետո տեղի ունեցավ զորամասի շքերթը... Մինչև ուշ գիշեր քաղաքը հրճվանքի մեջ էր: Երեկոյան հրավառություն:

Փառահեղ հանդեսներ կատարվեցին և գավառներում... Երբեք, մինչև այդ, Հայաստանի ժողովուրդը նման ուրախություն չէր հայտնաբերել, երբեք «Մեր Հայրենիքը» չէր հնչել այնպես անկեղծ, լիաթոք ու խրոխտ...» (Ս. Վ., էջ 426–427):

Մայիսյան ապստամբությանը տված գնահատականը Ս. Վրացյանն ամփոփում է այսպես. «Հայաստանի քաղաքական կյանքի ամենաածանրակշիռ վայրկյանին, հայ բոլշևիկները չքաշվեցին խռովություններ հանել երկրի ներսը, եղբայրական քաղաքացիական պատերազմ առաջ բերելու, զինված ապստամբության միջոցով Հայաստանի անկախությունը խորտակելու և պետական իշխանությու-

նը հափշտակելու փորձ անելով: Հայ ժողովրդի այդ դավը վիժեց, բայց անհաշիվ վնասներ հասցրեց թե՛ ներքին և թե՛ արտաքին կյանքում» (Ս. Վ., էջ 441):

Սակայն տասնամյակներ անց նույն Ս. Վրացյանը Բեյրութում խորհրդահայ նշանավոր արվեստագետ Ռուբեն Զարյանի հետ զրույցի ժամանակ պիտի անհուն ափսոսանքով խոստովաներ, որ եթե իրենք խորաթափանց լինեին և իշխանությունը բոլշևիկներին հանձնեին դեռևս 1920 թ. մայիսին, ապա Խորհրդային Հայաստանի ներկայիս տարածքը կրկնակի ավելին կլիներ: «է՜, ինչ ասեմ, ինչպես արդարանամ»,— հոգոց է հանել նախկին վարչապետը («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, Ռ. Զարյանի հուշերը, 24.11.1993): Ի դեպ, փաստերի համակողմանի վերլուծությամբ ճիշտ նույն տեսակետին է հանգել սփյուռքահայ մեծահռչակ պատմաբան, ՀԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը (տե՛ս Լևոն Հախվերդյան, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 1995, էջ 84, տե՛ս նաև Գ. Գալոյան, էջ 153):

Մեր համոզմամբ՝ 1920 թ. Մայիսյան ապստամբությունը Անդրկովկասի խորհրդայնացման պլանի երկրորդ քայլն էր, որը պետք է հաջորդեր Ադրբեջանի խորհրդայնացմանը (1920 թ. ապրիլ), սակայն ինչ–ինչ պատճառներով՝ Ադրբեջանում մուսավաթական խռովության բռնկում, տեխնիկապես վատ նախապատրաստություն և այլն, չհաջողվեց: Բնականաբար հետաձգվեց նաև Վրաստանի խորհրդայնացումը: Իրադարձությունների հետագա զարգացումը անխուսափելիորեն տանում էր դեպի ամբողջ Անդրկովկասի խորհրդայնացում, և այն, ինչը չհաջողվեց 1920 թ. մայիսին, հաջողվելու էր նույն թվականի նոյեմբերին և հաջորդ տարվա փետրվարին:

Կարծում ենք նաև, որ Մայիսյան ապստամբության իրական պատմությունը շարադրելու և օբյեկտիվ գնահատական տալու ուղղությամբ անհրաժեշտ են պատմաբանների՝ կուսակցական կոքերից զերծ հետագա ջանքերը:

ԹՈՒՐՔ–ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇՈՒՄԸ

1919 թվականին Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի ամենասուր հիմնահարցերից մեկը մահմեդական հակապետական շարժումներն էին, որոնք կազմակերպում էին Թուրքիան և Ադրբեջանը՝ երկրի անկախությունը վերացնելու նպատակով:

ՀՀ գոյության առաջին իսկ օրերից երկրի ներսում ապրող մահմեդական տարրը թշնամական դիրք բռնեց հայոց պետականության նկատմամբ՝ ձգտելով միանալ Ադրբեջանին կամ Թուրքիային: Վերջիններս էլ ձգտում էին Հայաստանի վրայով՝ Կարս–Սուրմալու–Ղարաբաղ–Զանգեզուր–Նախիջևան շերտով միանալ իրար:

Թուրքերի պարտությունից և Անդրկովկասից հեռանալուց հետո թուրքական հրամանատարությունը Հայաստանում և Վրաստանում՝ Աջարիայում, Ախալցխայում, Կարսում, Սուրմալուում, Շարուր–Նախիջևանում և այլուր կազմակերպեց տեղական «անկախ հանրապետություններ»՝ իրենց կառավարություններով՝ «շուրաներով»: Հայաստանի տարածքի վրա կազմակերպվեցին Արևմտյան Կովկասի հանրապետությունը՝ Կարսի շուրայով և Արևելյան Կովկասի կամ Արաքսյան հանրապետությունը, որի մեջ մտնում էին Սուրմալուն, Զանգիբասարը, Վեդիբասարը, Շարուր Նախիջևանը՝ Նախիջևան կենտրոնով: Այդ հանրապետություններում կազմված մահմեդական ջոկատները զինված էին թուրքական զենքով, նրանց ղեկավարում էին թուրք սպաներ:

Հայաստանի ներսում մահմեդական խռովությունների գլխավոր կազմակերպիչը 1919 թ. մարտին իբրև դիվանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանից Երևան ուղարկված մոլի պանթուրքիստ Խան Թեքինսկին էր:

Թուրք–ադրբեջանցիների գործը հեշտանում է նրանով, որ 1919 թ. մայիսի երկրորդ կեսին անգլիական զորքերը հեռացան Կարսից և Նախիջևանից, և հայերը միայնակ մնացին իրենց փոքրաքանակ ուժերով: Այդ օրերին ՀՀ–ն ուներ 3 հետևակային բրիգադ՝ յուրաքանչյուրը երկու գնդից և գունդը՝ երեք գումարտակից, երկու հեծյալ գունդ՝ յուրաքանչյուրը վեց հարյուրյակով, 12 մարտկոց՝ 4–ական թնդանոթով, 3 զրահապատ, մի քանի տեղական զորամասեր:

Մահմեդականների խռովությունն սկսվեց Բոյուք–Վեդի գյուղից, որտեղ հարևան գյուղերի հետ միասին կային մոտ 4000 կռվողներ: Հուլիսի 1–ին Դավալուի մոտերքում մահմեդականներն սպանեցին 9 հայ զինվորների և 12 գյուղացիների: Այդ առիթով անգլիական ներկայացուցչի համաձայնությամբ և գնդապետ Ապրեսյանի հրամանատարությամբ հուլիսի 4–ին Բոյուք–Վեդին գրավելու համար ուղարկվեց հայկական մի զորամաս: Գնդապետը բանակցություններ սկսեց գյուղի ներ-

կայացուցիչների հետ, բայց մահմեդականները հանկարծակի կրակ բացեցին՝ սպանվեց 5 սպա, 30 զինվոր, 7 սպա և 120 զինվոր վիրավորվեցին: Հուլիսի 8–ին Ապրեսյանը փորձեց ուժով գրավել գյուղը, բայց հաջողություն չունեցավ:

Միաժամանակ գլուխ բարձրացրին Շարուրի և Նախիջևանի մահմեդականները: Հուլիսի կեսերին մոտ 300 ասկյարներով Շահթախթ հասավ թուրքական բանակի գնդապետ Խալիլ բեյը և անցավ մահմեդական շարժման գլուխ: Հուլիսի 20–21–ին ապստամբություն սկսվեց Շարուր–Նախիջևանի բոլոր կողմերում: Հայկական փոքրաթիվ զորամասերը Ջուլֆայում, Նախիջևանում, Շահթախթում և Բաշ–Նորաշենում ընկան շրջապատման մեջ: Մի քանի օրվա արյունահեղ կռիվներից հետո՝ հուլիսի 25–ին, Նախիջևանի հայկական զորքերը հայ ազգաբնակչության մի մասի հետ նահանջեցին՝ գնդապետ Կարաքեշիշյանի գլխավորությամբ:

ՀՀ կառավարությունն արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց. հայտարարվեց զորահավաք, պետական դավաճանության և դասալքության համար մտցվեց մահապատիժ:

Սկսվեց բնակչությունից զենքի հավաքագրում, Ա. Ջամալյանը նշանակվեց այդ գծով կոմիսար: Զորակոչվեցին մինչև 40 տարեկան բոլոր սպաները: Ստեղծվեց 3 հոգուց կազմված Ապահովության կոմիտե՝ վարչապետի գլխավորությամբ:

Կառավարությունը ռազմական օգնության խնդրանքով դիմեց դաշնակիցներին, և հուլիսի 26–ին Երևան եկան անգլիական և ֆրանսիական զինվորական ներկայացուցիչներ՝ մի քանի հարյուր հնդիկ զինվորներով:

Օգոստոսի 10–ին հայկական զորքերը նոր հարձակման դիմեցին Բեյուք–Վեդիի վրա և երեկոյան գրավեցին շրջակա մի քանի գյուղեր: Սկսվեցին կատաղի մարտեր, որոնք տևեցին մի քանի օր: Հայկական զորքերին հաջողվեց ամրանալ Բեյուք–Վեդիի առջև փորված դիրքերում:

Հայաստանի խորհրդարանը օգոստոսի 15–ին հայտարարեց, որ Հայրենիքը վտանգի մեջ է և կոչ արեց ժողովրդին լարել բոլոր ուժերը՝ հաղթանակի հասնելու համար:

Օգոստոսի 7–ին մահմեդական հարձակումները սկսվեցին Կողբի շրջանում, և հայկական զորքը նահանջեց Արաքսի ափը:

Օգոստոսի 23–ին թուրքերը սկսեցին աշխուժանալ Էջմիածնի շրջանում: Ամբողջ Զանգիբասարը հրաժարվեց ճանաչել ՀՀ իշխանությունը:

Կռիվների թատերաբեմ դարձավ նաև Կարսի նահանգը: Օգոստոսի 18–ին 18.000 թուրք–քրդական ուժեր հարձակվեցին Կաղզվանի վրա, բայց հետ մղվեցին: Օգոստոսի 22–ին 400 թուրքեր փորձեցին կտրել Սարիղամիշի երկաթուղին, սակայն օգոստոսի 30–ին հայկական ուժերը հարձակման անցան և նրանց հետ շպրտեցին: Կարսի շրջանում հայկական զորամասերի հաջող գործողությունների շնորհիվ մահմեդական շարժումը ճնշվեց:

Մահմեդական շարժումների ամենաթեժ պահին Հայաստան եկավ Հաշտության կոնֆերանսի Հնգի խորհրդի կողմից Հայաստանի կոմիսար նշանակված ամերիկյան գնդապետ Ուիլիամ Հասկելը: Օգոստոսի 21–ին նա գնացքով հասավ Երևան, որին ցույց տրվեց արտակարգ հանդիսավոր ընդունելություն:

Նա մեծամեծ շատ խոստումներ տվեց, բայց դրանից վիճակն առանձնապես չթեթևացավ: Դրա փոխարեն նա շտապ մեկնեց Բաքու և օգոստոսի 29–ին համաձայնագիր ստորագրեց Ադրբեջանի կառավարության հետ, որով Շարուր–Դարալագյազ–Նախիջևանի շրջանները ճանաչվում էին վիճելի տարածքներ, իսկ Ղարաբաղ–Զանգեզուրը տրվում էր Ադրբեջանին: Եվ միայն Ա. Խատիսյանի ու Ռ. Տեր–Մինասյանի բացատրությունները լսելուց հետո էր, որ Հասկելը չեղյալ հայտարարեց համաձայնագրի՝ Ղարաբաղ–Զանգեզուրին վերաբերող մասը (Ս. Վ., էջ 323–325):

ՀՀ ներքին կյանքի ամենասուր հարցերից մեկը թրքաբնակ վայրերի գրավումն էր: Զանգիբասարի, Վեդի–Բասարի, Կողբի, Շարուր–Նախիջևանի մի շարք շրջաններ շարունակում էին մնալ ապստամբ վիճակում: Այդ շրջանները ոչ միայն չէին ճանաչում ՀՀ իշխանությունը, այլև անվերջ ավազակային հարձակումներով խոչընդոտում էին երկրի վերաշինությանը:

Շարուր–Նախիջևանում իշխանությունը փաստորեն գտնվում էր Անկարայի գործակալ Խալիլ բեյի ձեռքում: Նրա ազդեցության տակ էին նաև Վեդիբասարն ու Զանգիբասարը, որտեղ կային նաև Թուրք ասկյարներ, կառուցված էին ամուր դիրքեր, տեղադրված էին հրանոթներ ու գնդացիրներ, կար հեռախոսակապ: Զենքն ու զինամթերքը մատակարարում էր Թուրքիան: Առավել ուժեղ ամրացված էր Բեյուք–Վեդին:

Այդ բոլոր շրջաններից կազմվել էր այսպես կոչված Հարավարևմտյան Ադրբեջանը:

Մայիսյան ապստամբության ճնշումից հետո՝ 1920 թ. հունիսի 18–ին, Զանգիբասարին ներկայացվեց վերջնագիր՝ Հայաստանի իշխանությունը ճանաչելու, զինաթափելու և թուրք–ադրբեջանական գործակալներին իրենց բնակավայրերից հեռանալու մասին:

Պատասխան չստանալով՝ Վաղարշապատի զորախմբին (հրամանատար՝ գնդապետ Ա. Շահմազյան) հրամայվեց զենքի ուժով գրավել Զանգիբասարը, որը մի քանի օրում կատարվեց: Հայկական զորամասերի դեմ կռվում էին շուրջ 400 զինված տեղական ադրբեջանցիներ և մոտ 800 թուրք ասկյարներ, որոնք ունեն 3 թնդանոթ, 8 գնդացիր և առատ փամփուշտ: Հունիսի 19–ին հայկական ուժերի Նորագավիթի զորասյունը ճեղքեց հակառակորդի դիրքերը և գրավեց Հաջի–Էյլազ գյուղը: Փարաքարի և Ղարխունի զորասյուները գրավեցին մի քանի գյուղեր և հարձակում ձեռնարկեց Չորան–Քյարա և Շոռլու–Մեհմանդար գյուղերի վրա: Հակառակորդը փախավ երկաթուղագծից հարավ:

Հունիսի 21–ի լուսաբացին հայկական զորքերը կարճ կռվից հետո գրավեցին Սարաջալար և Ռամազանքենդ գյուղերը, որով և ավարտեցին Զանգիբասարի մաքրումը թշնամի ազգաբնակչությունից:

Զանգիբասարին զուգահեռ՝ հունիսի 18–ին հայկական զորքերը գեներալ Հովսեփյանի ընդհանուր ղեկավարությամբ և գնդապետ Միրիմանյանի անմիջական հրամանատարությամբ ռազմական գործողություններ սկսեցին Կարսի նահանգում՝ ածխահանքերը գրավելու նպատակով: Հայկական զորքերը շարժվեցին երեք ուղղություններով և երկօրյա հաջող կռիվներից հետո իրար միացան ածխահանքերի արևմտյան մասում: Հակառակորդը, Խալիլ բեյի գլխավորությամբ, խայտառակ պարտություն կրեց և դիմեց փախուստի՝ հայերին թողելով երկու թնդանոթ, մեծ քանակությամբ ռազմամթերք ու պարեն: Թշնամին տվեց հարյուրավոր սպանվածներ, իսկ հայերը՝ 5 սպանված, 22 վիրավոր: Մինչև Օլթի ամբողջ տարածքն անցավ հայերի ձեռքը:

Զանգիբասարից հետո իրականացվեց Բեյուք–Վեդիի գրավումը, որտեղ թշնամին ուներ 3000 կռվող, 3 թնդանոթ, 9 գնդացիր: Ընդհանուր հրամանատարն էր թուրք սպա Մուստաֆա բեյը:

Այդ ուժերի դեմ հայկական կողմը դուրս բերեց 26 վաշտ հետևակ, 7 հարյուր հեծելազոր, 16 թնդանոթ, 1 զրահագնացք, կամավորական խմբեր: Ընդհանուր հրամանատարն էր գեներալ Շելկովնիկյանը:

Հուլիսի 10–ի երեկոյան հայկական զորամասերը Ղամարլուից և Նոր Բայազետից հարձակման անցան՝ Բեյուք–Վեդի գյուղը գրավելու նպատակով: Հուլիսի 11–ին Ղամարլուի ուղղությամբ համառ կռիվներից հետո հայկական զորքերը գրավեցին Կարայազ, Ճաթղռան, Ենգիջա, Բեգլու, Ներքին Կարաբաղլար գյուղերը: Բեյուք–Վեդիից մեկ վերստ հյուսիս գտնվող Գյավուր Ղալասի լեռան մոտ թուրքերը հուսահատ դիմադրություն ցույց տվեցին:

Նոր Բայազետի ուղղությամբ հուլիսի 11–ի երեկոյան հայկական զորքերը գրավեցին Աղքիլիսա, Մաղուկ, Գյոլ և այլ գյուղեր: Նույն օրը ուշ երեկոյան հայկական 2–րդ գունդը գրոհով գրավեց Գյավուր Ղալասի սարը և հուլիսի 12–ի վաղ առավոտյան մտավ Բեյուք–Վեդի, իսկ թուրքերը փախան դեպի Դավալու:

Նույն օրը երեկոյան հայկական ուժերը գրավեցին Դավալուն և Գայլի Դրունքը: Վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը Ղամարլուի հետ:

Դարալագյազի ուղղությամբ հուլիսի 16–ին հայկական զորքերը գրավեցին Արաքս–Ղուշչի–Բաշ–Նորաշեն–Ախուր գիծը: Հուլիսի 16–ին հայկական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց, որովհետև Նախիջևանի Մահմեդական ազգային խորհուրդը հաշտության խնդրանքով պատգամավորություն էր ուղարկել Երևան: Կառավարությունը ներկայացրեց կտրուկ պահանջներ՝ անվերապահ հնազանդություն, երկաթուղագծի կատարյալ ապահովություն, զենքի ու զինամթերքի հանձնում: Պատվիրակությունը գնաց և այլևս չվերադարձավ:

Հուլիսի 22–ին ռազմական գործողությունները վերսկսվեցին, որի արդյունքում հուլիսի 25–ին հայկական զորքերը գրավեցին Շահթախթը: Թուրքերը փախան դեպի Մակու՝ Պարսկաստան, և մինչև Նախիջևան դատարկեցին ամբողջ տարածքը: Այդ ընթացքում մահմեդականներից մաքրվեց նաև Սևանա լճի արևելյան ափը:

Այսպիսով՝ 1920 թ. ամռանը ՀՀ սահմանները տարածվեցին Ղարաբաղից սկսած մինչև Օլթիի ածխահանքերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական կապեր հաստատեց մի շարք երկրների հետ:

Առաջինը Հայաստանի Հանրապետությունը ճանաչեց Թուրքիան, որը նրա հետ 1918 թ. հունիսի 4–ին ստորագրեց Բաթումի ստրկացուցիչ պայմանագիրը:

Դիվանագիտական նորմալ հարաբերություններ հաստատվեցին Վրաստանի դեմոկրատական հանրապետության հետ, իսկ Ադրբեջանի հետ հարաբերությունները խիստ լարված էին՝ սահմանային վեճերի հետևանքով:

Հայաստանի Հանրապետությունը լիազոր–ներկայացուցիչներ կամ հյուպատոսներ ուներ ԱՄՆ–ում, Բուլղարիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում, Հաբեշստանում և այլ երկրներում:

Դիվանագիտական կապեր էին ստեղծվել Ուկրաինայի, Դենիկինի, ապա՝ Վրանգելի կառավարությունների, Կուբանի, Սիբիրի կառավարությունների հետ:

Կապեր էին հաստատվել նաև Խորհրդային Ռուսաստանի հետ:

Իրենց հերթին Երևանում դիվանագիտական ներկայացուցիչներ ունեին Պարսկաստանը, Վրաստանը, Ադրբեջանը:

ՀՀ առաջին միջպետական կապերը հաստատվեցին Քառյակ միության երկրների՝ Գերմանիայի, Թուրքիայի, Ավստրո–Հունգարիայի, Բուլղարիայի հետ:

Բաթումի պայմանագրով Թուրքիան Հայաստանից գավթել էր շատ ավելի տարածք, քան նախատեսված էր Բրեստ–Լիտովսկի պայմանագրով: Այդ հողի վրա որոշ հակասություններ էին ծագել երկու դաշնակիցների՝ Թուրքիայի և Գերմանիայի միջև: Վերջինս չէր ցանկանում Թուրքիայի չափից ավելի ուժեղացումը և պաշտպանում էր Բրեստ–Լիտովսկի պայմանագիրը: Ենթադրվում էր Կոստանդնուպոլսում հրավիրել կոնֆերանս՝ Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով: Այդ կապակցությամբ 1918 թ. հունիսին Թուրքիա և Գերմանիա մեկնեցին Անդրկովկասի երեք հանրապետությունների պատվիրակները: Հայաստանից Կոստանդնուպոլիս մեկնեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, Բեռլին՝ Համո Օհանջանյանը: Նրանք մի քանի ամիս մնացին այնտեղ, սակայն պարզվեց, որ ոչ մի կոնֆերանս էլ չի գումարվելու: Այնուհետև Քառյակ միությունը առաջին համաշխարհային պատերազմից դուրս եկավ իբրև պարտված կողմ, և, բնականաբար, ուժը կորցրին ինչպես Բրեստ–Լիտովսկի, այնպես էլ Բաթումի պայմանագրերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

1918 թ. նոյեմբերի 11–ին Ֆրանսիայի Ռետոնդ կայարանի մոտ գտնվող Կոմպիենի անտառում՝ սալոն–վագոնում կնքվեց զինադադար մի կողմից պարտված Գերմանիայի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ–ի միջև, որով ռազմական գործողությունները դադարեցվում էին: Պատերազմը վերջացավ Անտանտի հաղթանակով: Պատերազմի ընթացքում սպանվեց 10 միլիոն մարդ, որից Ռուսաստանին բաժին էր ընկնում 2 միլիոն 300 հազար զինվոր, Գերմանիային՝ 2 միլիոն, Ավստրո–Հունգարիային՝ 1 միլիոն 440 հազար, Ֆրանսիային՝ 1 միլիոն 383 հազար, Անգլիային՝ 744 հազար, Իտալիային՝ 700 հազար, ԱՄՆ–ին՝ 53 հազար, Թուրքիային՝ 325 հազար զինվոր: Մինչդեռ հայ ժողովուրդը կորցրեց 1,5 միլիոն մարդ:

Դեռևս 1918 թ. հոկտեմբերի 7–ին կանգնած լինելով պարտության փաստի առաջ՝ Թալեաթ փաշայի կառավարությունը հրաժարական տվեց, և երիտթուրքերի պարագլուխները փախան արտասահման՝ հիմնականում Բեռլին և Հռոմ:

1918 թ. հոկտեմբերի 30–ին՝ Կոմպիենի զինադադարից էլ առաջ, հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կանգնած անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա ստորագրվեց զինադադար դաշնակիցների անունից՝ Մեծ Բրիտանիայի և պարտված Թուրքիայի միջև: Զինադադարի 24–րդ հոդվածում ասված էր, որ հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգություններ լինելու դեպքում դաշնակիցներին իրավունք է վերապահվում գրավելու նրա մի մասը:

Մուդրոսի համաձայնագրով՝ Թուրքիայի տարածքի մեծ մասը չէր օկուպացվում դաշնակիցների կողմից, իսկ թուրքական բանակն էլ փաստորեն չզինաթափվեց, և հենց այդ հանգամանքն էլ բարենպաստ պայմաններ ստեղծեց քեմալական շարժման համար:

Մուդրոսի զինադադարից հետո Թուրքիայում տիրապետող դիրք գրավեց դաշնակիցներից հատկապես Անգլիան, որի զորքերը գրավեցին Մոսուլը, Ալեքսանդրետը և մտան Ստամբուլ, ուր հետո եկան նաև ֆրանսիական և իտալական զորքեր:

Զինադադարից հետո հաղթողների և պարտվողների միջև պետք է կնքվեր հաշտության պայմանագրերի մի ամբողջ համակարգ:

Դեռևս 1918 թ. հունվարի 8–ին ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը հանդես եկավ իր հանրահայտ «14 կետերով», որոնք պարունակում էին հաշտության պայմանագրեր կնքելու համընդհանուր պահանջներ, «բաց դռների» և «ազատ ծովերի» քաղաքականություն: Այդ փաստաթղթում Հայկական հարցը առանձին չի ձևակերպվել, այլ դրվել է ընդհանուր ձևով և բավականաչափ մանվածապատ: 12–րդ հոդվածում ասված է. «Այժմյան Օտտոմանյան կայսրության թուրքական մասերի համար պետք է ապահովել կայուն սուվերենություն, բայց մյուս ժողովուրդներին, որոնք ներկայումս գտնվում են թուրքական տիրապետության տակ, պետք է ապահովել կյանքի աներկմիտ անվտանգություն և անխախտ պայմաններ՝ ավտոնոմ զարգացման համար» (Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 208): Ի՞նչ ավտոնոմիա, ո՞ւմ հովանավորությամբ, ո՞ւմ համար՝ պարզ չէր: Ինչպես նկատել է Մ. Արզումանյանը, ամերիկյան իմպերիալիստների համար հայկական հարցը մտցվում էր թուրքական պրոբլեմի մեջ, իսկ վերջինս դիտվում էր «ռուսական հարցի» լուծման տեսանկյունով, այսինքն հակախորհրդային ինտերվենցիայի կազմակերպման նկատառումներով (Մ. Ա., էջ 210): Մինչդեռ պատերազմի ժամանակ Վիլսոնը ի լուր աշխարհի հայտարարում էր. «Մենք ցած չենք դնի նաև զենքը, քանի դեռ Թուրքիայի ճնշված ժողովուրդները չեն ստանա իրենց ազատությունը: Թուրքիան իր դաժանություններով գերազանցեց իր ուսուցիչներին և դրանով ապացուցեց Եվրոպայում գոյություն ունենալու իր կասկածելի իրավունքը: Նա դարձել է կայզերի հավատարիմ ու արժանավոր ծառան: Հայերի ընդհանուր կոտորածը ստիպում է մեզ Եվրոպայի սահմաններից վերացնել այդ տգետ բանդան: Հայաստանը պետք է ստանա այն, ինչի համար նա պատմական իրավունք ունի: Նա կյանքի ավելի շատ իրավունք ունի,

քան Թուրքիան, քանի որ նա կարող է ավելի լավ կառավարել իրեն: Վաղ թե ուշ Թուրքիան կկանգնի տրիբունալի առջև ու պետք է հաշվետու լինի, և այն ժամանակ նրանից կպահանջեն կողոպտածը վերադարձնել իր իսկական տիրոջը» (Մ. Ա., էջ 211):

Հայերին մեծամեծ խոստումներ էին տալիս նաև Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի զանազան պետական գործիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ. Անգլիայի պրեմիեր Ասկվիթը, նրա հաջորդ Լլոյդ Ջորջը, արտգործնախարարի տեղակալ Ռոբերտ Սեսիլը, Ֆրանսիայի պառլամենտի նախագահ Պոլ Դեշանելը, արտգործնախարար Պիշոնը, վարչապետ Ժորժ Կլեմանսոն, Իտալիայի վարչապետ Օռլանդոն, սենատոր Լուցաթին և ուրիշներ:

Հայերը որոշակի սպասելիքներ ունեին և նախապատրաստվում էին հաշտության կոնֆերանսին:

Դեռևս պատերազմի ժամանակ Եվրոպայում էր արևմտահայերից կազմված Ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Նա 1918 թ. հոկտեմբերի 29–ին և նոյեմբերի 30–ին դիմեց դաշնակիցներին, որպեսզի նրանք Հայաստանը պաշտոնապես ճանաչեն պատերազմող կողմ և հրավիրեն հաշտության կենֆերանսին, սակայն մերժում ստացավ, քանի որ ՀՀ–ը դեռ չէր ճանաչվել իբրև պետություն:

1919 թ. հունվարի 18–ին Փարիզում բացվեց հաշտության կոնֆերանսը, որին մասնակցում էին 27 երկրների 1000 պատվիրակներ: Մասնակից պետությունները բաժանվում էին 4 կատեգորիաների, սակայն դրանցից և ոչ մեկի մեջ Հայաստանը չէր մտնում: Հայաստանի և ոչ մի ներկայացուցիչ Փարիզի հաշտության կոնֆերանսի չկանչվեց, մինչդեռ այնտեղ էին հրավիրվել Նիկարագուայի, Հոնդուրասի և այլ երկրների ներկայացուցիչներ, որոնք ոչ պատերազմ էին մղել, ոչ էլ զոհեր էին տվել:

Հաշտության կոնֆերանսին չէր հրավիրվել նաև Խորհրդային Ռուսաստանը:

Դոկտոր Դիլոնի արտահայտությամբ՝ կոնֆերանսի օրերին Փարիզը վերածվել էր «կոսմոպոլիտական քարվանսարայի», որտեղ հավաքվել էին տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ՝ իրենց ազգային տարազներով: Իսկ Հերբերտ Ուելսի արտահայտությամբ՝ այդ «էկզոտիկ» համայնապատկերը արաբական հեքիաթի տպավորություն էր թողնում:

Կոնֆերանսի աշխատանքները ղեկավարելու համար ստեղծվեց Տասի խորհուրդը՝ կազմված ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու Ճապոնիայի կառավարությունների ղեկավարներից ու արտգործնախարարներից, որին, սակայն, շուտով փոխարինեց Մեծ քառյակը կամ Չորսի խորհուրդը՝ ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնը, Ֆրանսիայի պրեմիեր Կլեմանսոն, Անգլիայի պրեմիեր Լլոյդ Ջորջը, Իտալիայի պրեմիեր Օռլանդոն;

Կոնֆերանսում հաստատվեց ազգային լիգայի կարգավիճակը և ընդունվեց մանդատային համակարգը: Մանդատները պետք է տար Ազգային լիգան, այն երկրներին, որոնք չէին կարող տվյալ ծանր ժամանակաշրջանում ինքնուրույնաբար կառավարվել և այս կամ այն զարգացած պետության հովանավորության կարիքն ունեին: Ենթամանդատային երկրները բաժանվեցին երեք կատեգորիաների, և Հայաստանը մտավ առաջինի մեջ, որոնք օսմանյան տիրապետության տակ եղած նախկին մարզերն էին:

Փարիզի կոնֆերանսին մասնակցելու համար 1918 թ. դեկտեմբերի 3–ին ՀՀ կառավարությունը կազմեց պատվիրակություն, որի նախագահն էր Ավետիս Ահարոնյանը, անդամներն էին Համո Օհանջանյանը և Միքայել Պապաջանյանը: Պատվիրակությունը Փարիզ հասավ փետրվարի 4–ին:

Ինչպես նշում է Մ. Արզումանյանը, հայկական երկու պատվիրակությունները գործում էին բավականաչափ անմիաբան, մինչև իսկ միմյանց դավաճան և մատնիչ էին անվանում: Եթե ազգային պատվիրակությունը Պողոս Նուբարի գլխավորությամբ ներկայացնում էր արևմտահայությանը ու հավակնում էր Միացյալ և անկախ Հայաստանի ստեղծողը լինելու, որի բաղկացուցիչ մասը պիտի լիներ «Արարատյան հանրապետությունը» (այդպես էին անվանում ՀՀ–ը արևմտահայերը — Մ. Կ.), ապա ՀՀ պատվիրակությունը Ա. Ահարոնյանի գլխավորությամբ պահանջում էր հաշվի նստել կատարված փաստի հետ ու հայոց ընդարձակ պետություն ստեղծելու համար հենակետ դարձնել գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը:

Ի վերջո Ա. Ահարոնյանի պատվիրակությունն ընդունեց Պ. Նուբարի մշակած պահանջները, և 1919 թ. փետրվարի 10–ին նրանք երկուսով միասին ներկայացան Ֆրանսիայի արտգործնախարար Պիշոնին: Վերջինս խորհուրդ տվեց համատեղ հուշագիր ներկայացնել կոնգրեսին:

1919 թ. փետրվարի 12–ին հայկական երկու պատվիրակությունների նախագահները Փարիզի կոնֆերանս ներկայացրին «Հայկական պահանջների հուշագիրը»:

Այնտեղ խնդիր է դրվում դատապարտել արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կատարած ոճրագործությունը, պատժել հանցավորներին, հատուցել վնասը և հայերին հանձնել իրենց երկիրը: Հուշագրում պահանջվում էր ստեղծել հայկական միասնական պետություն, որի մեջ պիտի մտնեին Արևմտյան Հայաստանը (Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվասի, Էրզրումի, Տրապիզոնի վիլայեթները), Կիլիկիան՝ Մարաշի, Սսի, Զեբել–Բեշիքերթի և Ադանայի սանջակները ու Ալեքսանդրետով, Արևելյան Հայաստանը՝ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը, Կարսի մարզը՝ բացի Արդահանից հյուսիս ընկած շրջաններից: Դա կազմում էր մոտ 300.000 քառակուսի կիլոմետր տարածություն (Մ. Ա. էջ 227): Նախատեսվում էր, որ հայկական նորաստեղծ պետությունը դրվի դաշնակից պետությունների կամ Ազգերի լիգայի հովանավորության տակ և պետություններից որևէ մեկին 20 տարով տրվի Հայաստանի մանդատը:

1919 թ. փետրվարի 24–ից մինչև ապրիլի 22–ը Փարիզում տեղի ունեցավ ազգային համագումար, որին մասնակցում էին հայկական գաղթօջախների 38 ներկայացուցիչներ: Ա. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ Մ. Պապաջանյանը դեռ տեղ չէր հասել:

Համագումարը հաստատեց կոնֆերանսին ներկայացված հուշագիրը և ավելացրեց վնասների հատուցման չափը՝ մոտ 15 միլիարդ ֆրանկ արևմտահայությանը և մոտ 5 միլիարդ արևելահայությանը:

Ընտրվեց Ազգային պատվիրակության նոր կազմ. Պողոս Նուբար՝ նախագահ, պրոֆեսոր Աբրահամ Տեր–Հակոբյան՝ փոխնախագահ, անդամներ՝ Արշակ Չոպանյան, Կարապետ Փաստրմաճյան, Վահան Թեքեյան, դոկտոր Հակոբ Նևրուզ, որը պետք է ՀՀ պատվիրակության հետ միասին կազմեր Ամբողջական Հայաստանի պատվիրակություն:

1919 թ. փետրվարի 26–ին Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը ընդունվեցին Տասի խորհրդի կողմից և ներկայացրին Հայաստանը օր առաջ դաշնակից զորքերով գրավելու և Հայաստանի մանդատը ԱՄՆ–ին տրամադրելու խնդրանքը: Համանման խնդրանքով դեռևս

փետրվարի 27–ին ԱՄՆ–ի պրեզիդենտ Վ. Վիլսոնի մոտ էին եղել արքեպիսկոպոս Դուրյանը և պրոֆեսոր Հակոբյանը:

1919 թ. ապրիլի 17–ին Փարիզում Վ. Վիլսոնը 20 րոպեով ընդունեց Պողոս Նուբարին և Ա. Ահարոնյանին ու նրանց հավաստիացրեց, որ ինքն աշխատում է Հայաստանին պահանջված տարածքը տրամադրելու և երկրի մանդատը վերցնելու ուղղությամբ:

Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, ընդունելի չէ Մ. Արզումանյանի անաքող թշնամական վերաբերմունքը հայ ազգային գործիչների հասցեին, որոնք, իբր, ծրագրում էին հայկական պետության ստեղծումը ԱՄՆ–ի կամ որևէ այլ իմպերիալիստական պետության զորքերի օկուպացիայի միջոցով, կամ նրա այն եզրակացությունը, թե իմպերիալիստական պետությունների զավթողական ձգտումներն ու ագրեսիվ գործողությունները միայն աղետ էին բերում հայ ժողովրդին (Մ. Ա. էջ 229, 230):

1919 թ. փետրվարի 26–ին Վիլսոնը Սպիտակ տանը հայտարարեց, որ եթե ԱՄՆ–ը որևէ մանդատ ընդունի Ազգերի լիգայից, ապա առաջին հերթին նա պիտի ընդունի Հայաստանի մանդատը: Եվ, մեր կարծիքով, այս դեպքում էլ մերժելի է Մ. Արզումանյանի եզրահանգումը, թե իբր մանդատի միջոցով ամերիկյան իմպերիալիզմը ձգտում էր դաշնակցական Հայաստանը դարձնել հակախորհրդային ինտերվենցիայի պլացդարմ: Ճիշտ է, այդ օրերին ԱՄՆ–ում հրատարակված «Ամերիկան՝ Հայաստանի մանդատատեր» գրքույկում նույնպես նշվում էր Հայաստանի տնտեսական և ստրատեգիական նշանակությունը ԱՄՆ–ի համար և այն դիտվում էր իբրև թուրքերին բոլշևիկներից բաժանող արգելք (Մ. Ա., էջ 232), սակայն չենք կարծում, թե ամեն ինչ հանգում էր միայն ու միայն դրան:

1919 թ. հունիսի 28–ին Վերսալում ստորագրվեց հաշտության պայմանագիր Գերմանիայի հետ: Փարիզի կոնֆերանսի աշխատանքի հիմնական մասը համարվեց ավարտված և մեծ պետությունների ղեկավարները մեկնեցին: Սակայն շատ հարցեր, այդ թվում նաև թուրքականը, որի հետ կապված էր նաև Հայաստանի հարցը, դեռևս չէին լուծված: Ուստի պետությունների արտաքին գործերի նախարարները մնացին և շարունակեցին հաշտության պայմանագրերի նախապատրաստումը Ավստրիայի, Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի հետ:

ՀԱՐԲՈՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փարիզի կոնֆերանսը անդրադարձավ նաև ապագա Հայաստանի մանդատի հարցին և այն առաջարկեց ԱՄՆ–ին: Կոնֆերանսի ամերիկյան պատվիրակությունը մեծ աշխատանք տարավ Հայաստանի սոցիալ–տնտեսական և քաղաքական վիճակի մասին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու ուղղությամբ:

Կոնֆերանսի Չորսի խորհրդի գիտությամբ ԱՄՆ–ը Թուրքիա և Անդրկովկաս գործուղեց գեներալ–մայոր Ջեյմս Հարբորդի զինվորական առաքելությանը, որի գլխավոր նպատակն էր պարզել Հայաստանի շահավետությունը ամերիկյան կապիտալի համար (Արիստակես Սողոմոնյան. Ջ. Հարբորդի զինվորական առաքելությունը և Հայաստանի մանդատը: ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1985, թիվ 9, էջ 13–23):

1919 թ. օգոստոսի 14–ին Ջ. Հարբորդը Փարիզի ամերիկյան պատվիրակության նախագահ Ֆրենկ Փոլքից ստացավ կոնկրետ հրահանգներ՝ ուսումնասիրել Հայաստանի քաղաքական, զինվորական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ հարցեր: Փարիզից մեկնելուց առաջ Հարբորդը շվեդական հյուպատոսարանի միջոցով Մուստաֆա Քեմալից խնդրեց չարգելել իր առաքելության հետագա շրջագայությունը արևելյան Անատոլիայում և ստացավ վերջինիս համաձայնությունը:

1919 թ. օգոստոսի 15–ին Հարբորդի 40 հոգուց բաղկացած առաքելությունը Փարիզից մեկնեց Կ. Պոլիս: Նրա կազմում ընդգրկված էին բարձրաստիճան սպաներ, քաղաքագետներ, տնտեսագետներ, ինժեներներ և այլ մասնագետներ: Հայկական շրջանների կարծիքով՝ եթե ԱՄՆ–ը ընդուներ Հայաստանի մանդատը, ապա Ջ. Հարբորդը լինելու էր նրա առաջին կառավարիչը:

1919 թ. սեպտեմբերի 6–ին Հարբորդի առաքելությունը Կ. Պոլսից մեկնեց Անատոլիա, եղավ Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերում՝ Դիարբեքիրում, Խարբերդում, Մալաթիայում, Սվասում, Երզնկայում, Էրզրումում, Կարսում: Սեպտեմբերի 29–ին Հարբորդի առաքելությունը ժամանեց Երևան: ՀՀ կառավարության երեք օր տևած նիստերում քննարկվում է Հայաստանի մանդատի հարցը, որտեղ ամերիկյան գեներալը գալիս է այն եզրակացության, որ ամերիկյան մանդատը պիտի հաստատվի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Փոքր Ասիայի և Ան-

դրկովկասի վրա՝ Ալեքսանդրետից մինչև Բաքու, այսինքն Միջերկրականից մինչև Կասպից ծով (նշվ. հոդվածը, էջ 17): ՀՀ կառավարությունը բավարարեց Հարբորդի բոլոր պահանջները և նրան տրամադրեց անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր: Հարբորդին հանձնվեցին հանրապետության սոցիալ–քաղաքական, տնտեսական վիճակի մասին տվյալներ, հարևան պետությունների ու դաշնակիցների հետ ունեցած գաղտնի բանակցությունների ու դաշնագրերի պատճենները, կառավարության անդամների մանրամասն կենսագրությունները, Թիֆլիսի, Բաքվի, Կ. Պոլիսի հայ բուրժուազիայի ժողովների որոշումները՝ մանդատն ընդունվելու դեպքում Հայաստան գնալու իրենց պատրաստակամության մասին (նշված հոդվածը, էջ 18):

Հոկտեմբերի 2–ին Հարբորդի առաքելությունը Երևանից մեկնեց Թիֆլիս, ապա՝ Բաքու: Հոկտեմբերի 6–ին առաքելությունը ժամանեց Բաքում, որտեղից էլ մեկնեց Փարիզ: Փարիզում ամերիկյան պատվիրակության նախագահին բանավոր զեկույց տալուց հետո Հարբորդը մեկնեց Վաշինգտոն, զեկուցագիր հանձնեց պրեզիդենտ Վ. Վիլսոնին և հաշվետվություն տվեց սենատին: Հարբորդի զեկուցագիրն անուղղակիորեն հաստատում էր ցեղասպանության փաստը: Զեկուցագիրը բաղկացած էր չորս բաժնից՝ քարտեզներով և լուսանկարներով: Ընդհանուր զեկուցագրի համար հիմք էին ծառայել այն 11 զեկուցագրերը, որոնք շրջագայության ընթացքում Հարբորդի հանձնարարությամբ կազմել էին առաքելության անդամները:

Զեկուցագրում Ջ. Հարբորդը եզրակացնում է, որ անդրկովկասյան հանրապետություններից ոչ մեկն էլ ի վիճակի չէ ոտքի կանգնել, եթե նրանց վրա չհաստատվի միասնական մանդատ ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ Անատոլիայի և Կ. Պոլսի վրա: Ամենաանհուսալին նա համարում էր Հայաստանի դրությունը, որը ոչինչ չուներ ուժերը լարելու համար, մինչդեռ Վրաստանը գոնե ելք ուներ դեպի ծով, իսկ Ադրբեջանը նավթ ուներ:

Միացյալ մանդատի անհրաժեշտությունը Ջ. Հարբորդը փորձում էր հիմնավորել նաև նրանով, որ Թուրքիան չմասնատելով՝ առիթ չեն տա հայերի նոր կոտորածների, իսկ առանձնացնելով Հայաստանը՝ տեղի մահմեդականներին կգրգռեն հայերի դեմ:

Ըստ Ջ. Հարբորդի հաշվարկների՝ ենթամանդատային տարածքներում կարգուկանոն պահպանելու համար անհրաժեշտ կլիներ 59 հազար զինվոր, իսկ չնախատեսված իրադարձությունների ժամանակ այդ թիվը կարելի էր հասցնել 200.000–ի: Այդ բանակի ռազմական ծախսերը 5 տարում կկազմեին 757 միլիոն դոլար: Ջ. Հարբորդի զինվորական առաքելությունը Հայաստանի հարցի լուծման գործում փաստորեն ոչ մի էական դեր չկատարեց:

ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Դեռևս 1919 թ. հոկտեմբերին, երբ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարն այցելեց Լոնդոն, Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնը նրան որոշակիորեն ասաց, որ անհնար է ստեղծել Հայաստան՝ համաձայն փետրվարի 12–ի հուշագրի: Դրա փոխարեն դաշնակիցները նախատեսում են ստեղծել Հայաստան՝ Կովկասյան Հայաստանին ավելացնելով Թուրքահայաստանի մի մասը՝ ելքով դեպի Սև ծով, իսկ Կիլիկիան տրվելու է Ֆրանսիային:

1920 թ. սկզբին դաշնակից տերությունների դեսպանների՝ Լոնդոնում կայացած կոնֆերանսը մշակեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը: 1920 թ. ապրիլի 19–26–ը Իտալիայի Սան Ռեմո քաղաքի Դնաշան վիլայում հրավիրվեց Անտանտի Գերագույն խորհրդի նիստը: Կոնֆերանսին մասնակցում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պրեմիեր–մինիստրներ Դ. Լլոյդ Ջորջը, Ա. Միլերանը, Ֆ. Նիտտին, արտգործնախարարներ Քերզոնը, Բերտելոն, Սցիալոյան, Փարիզում Ճապոնիայի դեսպան Մացուին: ԱՄՆ–ի ներկայացուցիչը մասնակցում էր դիտորդի կագավիճակով: Հունաստանի և Բելգիայի ներկայացուցիչները մասնակցում էին միայն իրենց երկրներին վերաբերող հարցերի քննարկմանը:

Սան Ռեմոյի կոնֆերանսը քննարկեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի, Ազգերի լիգայի կողմից արաբական երկրներին տրվելիք մանդատների, Գերմանիայի կողմից 1919 թ. Վերսալի հաշտության պայմանագրի ռազմական հոդվածների կատարման, Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ դաշնակիցների դիրքորոշման հարցերը:

Կոնֆերանսի որոշմամբ՝ Անգլիան ստացավ Պաղեստինի և Իրաքի, Ֆրանսիան՝ Սիրիայի և Լիբանանի մանդատները:

Կոնֆերանսը որոշում ընդունեց նաև Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրական հարաբերությունները վերականգնելու մասին:

Կոնֆերանսում հաստատված Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախնական նախագիծը դրվեց Սևրի պայմանագրի հիմքում:

Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ կոնֆերանսին մասնակցելու թույլատրեցին ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին և Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարին: Հետաքրքրական է, որ Վիլսոնը հեռագրեց Սան Ռեմո և հիշեցրեց Անտանտի պետություններին՝ հայկական պետություն ստեղծելու նրանց պարտքի մասին (Մ. Ա., էջ 256):

Սան Ռեմոյի կոնֆերանսում Հայաստանի հարցի արծարծումը մանրամասնորեն ներկայացված է բրիտանական պատվիրակության քարտուղարի նոթագրություններում, որ ամփոփված են անգլիական արտաքին քաղաքականության փաստաթղթերի բազմահատոր հրատարակության 8–րդ հատորում: Այդ նոթագրությունները պրոֆ. Վ. Դիլոյանի հայերեն թարգմանությամբ հրատարակել են Ջ. Կիրակոսյանը և Ռ. Սահակյանը՝ «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրում (ԲՀԱ, 1972, թիվ 3, էջ 19–66), որը հետագայում ամբողջությամբ զետեղվել է հիշյալ հեղինակների կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (1828–1923) ժողովածուում (Երևան, 1972, էջ 612–672):

Տվյալ պահին Հայաստանի հարցի արծարծման բարդությունն ընդգծելու նպատակով Ջ. Կիրակոսյանը և Ռ. Սահակյանը նշում են, որ դեռևս 1920 թ. հունվարի 28–ին Կ. Պոլսում թուրքական պառլամենտն ընդունեց Թուրքիայի անկախության հռչակագիրը՝ «Ազգային ուխտը», որը բանաձևեց 1919 թ. հուլիս–սեպտեմբերին Էրզրումի և Սվասի համագումարների ծրագրային հարցադրումները, քեմալական ազգայնական պայքարի նպատակներն ու ծրագրային դրույթները, որտեղ առաջին պլան էր մղվում թուրքական կայսրության ամբողջականությունը փրկելու ձգտումը: Էրզրումի համագումարի ընդունած որոշման հենց առաջին կետում ընդգծվում էր Անատոլիայի վեց վիլայեթներում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում, հայկական իշխանության ստեղծումը կանխելու անհրաժեշտությունը, որը հռչակվում էր թուրքերի սրբազան գործը: Ինքը՝ Մ. Քեմալը անհնարին էր համարում գեթ մի թիզ հող հանձնել Հայաստանին կամ որևէ այլ պետության և ասում էր. «Մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին» (Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Սան Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը, ԲՀԱ, Երևան, 1972 թ., թիվ 3, էջ 20):

Դրանից հետո էր, որ 1920 թ. մարտի 16–ին դաշնակից տերությունների անունից անգլիական զորքերը օկուպացրին Կոստանդնուպոլիսը (Ստամբուլ) և ցրեցին թուրքական պառլամենտը (Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 135):

Ինչպես նշում են Ջ. Կիրակոսյանը և Ռ. Սահակյանը, արդեն 1919 թ. կեսերից Անատոլիայի վրա իր հսկողությունը հաստատած Մուստաֆա Քեմալից զինված ուժի միջոցով որևէ բան ստանալ՝ Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր: Միակ ուղին հայ պետական և ազգային գործիչները շարունակում էին որոնել տասնամյակների ընթացքում հայ ժողովրդին ոչինչ չտված Անգլիայի ու Ֆրանսիայի, ԱՄՆ–ի և Իտալիայի կառավարությունների կայացնելիք որոշումներում՝ վերսալյան դիվանագիտության ֆորումներում:

Ինչպես իրավամբ նշում են հեղինակները, Անտանտի տերությունները Սան Ռեմոյում ընդունած իրենց որոշումները անկարող էին պարտադրել Թուրքիային, որովհետև այնտեղ, բացի Կ. Պոլսից ու առափնյա մի շարք շրջաններից, դրության տերը սուլթանը չէր, այլ հենց այդ նույն Անտանտի դեմ պայքարի դրոշ պարզած Քեմալը:

Սան Ռեմոյում գլխավոր կռիվը նավթի համար էր, ուստի շուտով ֆրանսիական զորքերի թիվը Մերձավոր Արևելքում հասավ 80 հազարի: Այս դեպքում ֆրանսիական դիվանագետները չէին տրտնջում ուժերի պակասությունից, ինչը նրանք անում էին Հայաստանին զինված ուժով օգնելու հարցում: Հիրավի, տարիներ շարունակ մարդասիրական կեղծ ճառեր արտասանած արևմտյան գործիչների առաջին ելակետը շահն էր, հաշիվն ու հաշվենկատությունը, այլ ոչ թե հայ ժողովրդի կենսական շահերի բավարարումը (ԲՀԱ, էջ 22):

Ապրիլի 20–ի նիստում Անգլիայի պրեմիեր–մինիստր Լլոյդ Ջորջը ուղղակի հայտարարեց, որ «եթե հայերն ի վիճակի չեն պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նման ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարություններից ոչ մեկը պատրաստ չի լինի օգնելու նրանց թեկուզ մեկ գումարտակով»:

Ֆրանսիացիներն ասում էին, թե Ֆրանսիան չի կարող դրամ ծախսել Հայաստանում, և իրենք ոչ մի հնարավորություն չեն տեսնում, թե դաշնակիցները օգնություն ուղարկեն Հայաստանին:

Սան Ռեմոյում դրվեց այն հարցը, որ տվյալ պահին Էրզրումը թուրք ազգայնականների կենտրոնն է, ուստի որևէ մեկը պետք է նրանց դուրս

հանի այնտեղից: Լլոյդ Ջորջը պարբերաբար կրկնում էր, որ դաշնակից տերություններն ի վիճակի չեն ուժեր ուղարկելու հայերին օգնության, իսկ եթե էրզրումը զիջվի հայերին, ապա միակ պատասխանը, որ կտան թուրքերը, կլինի հայերին կոտորելը: Այդ դեպքում ի՞նչ են անելու իրենք. շարունակելո՞ւ են ջուր ծեծել հայերի «մեծ հույսերի» մասին: Միակ «մեծ հույսը», որ ինքը տեսնում է, հայկական կոտորածներն են:

Ֆրանսիացի պարոն Բերտելոն ասաց, որ եթե իրենք էրզրումը հռչակեն հայկական, դա կտա՞ էրզրումը Հայաստանին: Էրզրումը պետք է վերցվի զենքի ուժով և վերցնելիս էլ արյուն պետք է հեղվի, իսկ ինքը չի հավատում, որ հայերը, որոնք չկարողացան պաշտպանվել կոտորվելուց, դեռ մի բան էլ կշարժվեն թշնամական երկիր և կգրավեն մի ամրոց, որ ռուսական բանակներին է դիմադրել:

Պատասխանելով այն պնդումներին, թե առանց էրզրումի հայերը չեն կարող գոյություն ունենալ, Լլոյդ Ջորջն ասաց. «Եթե Հայաստանը չի կարող գոյություն ունենալ առանց էրզրումի, հայերը չեն կարող գոյություն ունենալ առհասարակ: Տերությունները չեն կարող վերցնել այն և հանձնել նրանց, իսկ նրանք էլ իրենք չեն կարող վերցնել (էջ 23)»:

Առավել լկտի էր Բերտելոն, որը Հայաստանին ֆինանսական օգնություն տրամադրելու կապակցությամբ անթաքույց ասաց, որ կան հարուստ հայեր, ովքեր կարող են դրամ գտնել, և որ Հայաստանում կա արժեքավոր ունեցվածք, որը կարող է գրավ վերցվել (էջ 29):

Իսկ Պողոս Նուբարն ու Ա. Ահարոնյանը շարունակում էին ակնկալիքներ ունենալ Լոնդոնից ու Փարիզից: Այդ առումով հետաքրքրական է նրանց պահվածքը կոնֆերանսի նիստերի ժամանակ:

Ապրիլի 22–ին նիստի ժամանակ կոնֆերանսի դահլիճ հրավիրվեց Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան: Նրան առաջադրվեց երեք հարց՝ 1. Պատրա՞ստ է Հայաստանը պաշտպանելու իր նոր սահմանները և ցանկանո՞ւմ է, նա, որպեսզի էրզրումը ընդգրկվի այդ սահմաններում, 2. Հայաստանն ի վիճակի կլինի՞ վերակառուցել իր բանակը և միջոցառումներ ձեռնարկել նոր պետության ապահովության համար, 3. Հայերն ի վիճակի կլինե՞ն գրավել էրզրումը, որն այժմ թուրքերի տիրապետության տակ է, և հաստատվել այդ ամրոցում:

Պողոս Նուբար փաշան ասաց, որ ինքը կասկած չունի, որ հայերը կարող են հաստատվել էրզրումում և ամրապնդել իրենց դիրքերն այնտեղ: Նրանք արդեն իսկ Երևանում ունեն զորամասեր, որոնք կռվել են ողջ պատերազմի ընթացքում և դրսևորել իրենց իբրև գերազանց զինվորներ: Նրանք լիովին պատրաստ են կրկին մարտնչել և գրավել էրզրումը, որի ներառումը խիստ էական է Հայաստանի նոր հանրապետության համար: Հայերն արդեն ունեն 15 հազարից ոչ պակաս բանակ և կարող են առանց դժվարության ոտքի հանել ևս 40 հազար, եթե դաշնակիցները պատրաստ են ապահովել նրանց զինամթերքով և հանդերձանքով: Ներկայումս հայ զինվորները զուրկ են ոտնամաններից և ամենևին զինամթերք չունեն: Սակայն ոչ ոք չի կարող հարցականի տակ դնել նրանց ռազմական արժեքը: Նրանք մեկ գումարտակ են տվել ֆրանսիական արտասահմանյան լեգեոնին, որը կռվել է Ֆրանսիայում, Պաղեստինում և այլուր: Նրանք ամենաբարձր գովասանքի են արժանացել ֆրանսիական արտգործնախարարի, ինչպես նաև ֆելդմարշալ լորդ Ալենբիի կողմից: Հայկական զորքերը մարտնչել են նաև ռուսական բանակի հետ և վերջում, ռուսների հեռանալու հետևանքով, նրանց ուսերին է մնացել պատերազմի ողջ բեռը: Ինքը և իր կոլեգաները համոզված են, որ եթե նրանց տրվի զենք, զինամթերք, հանդերձանք և սպաներ, նրանք մեծ օգուտներ կբերեն: Օրերս ինքը գրություն է ստացել Ամերիկայից, որ շուրջ 10 հազար կամավորներ պատրաստ են Կիլիկիա մեկնելու: Ինչ վերաբերում է էրզրումին, ապա այդտեղ տիրապետությունը բացարձակապես էական նշանակություն ունի հայկական նոր պետության ապահովության համար և այդ ամրոցը իսկապես նրա ապագայի բանալին է:

Լլոյդ Ջորջի այն հարցին, թե էրզրումի գրավման համար Հայաստանն սպասո՞ւմ է դաշնակից զորքերի օգնությանը, Պողոս Նուբարը պատասխանեց, թե որքան էլ Հայաստանն ուզենար ռազմական աջակցություն ստանալ դաշնակիցներից, նրանք արդեն օգնությունը պարտադիր չեն համարում: Մ. Քեմալը, անկասկած, նշանակալից թվով մարդիկ ունի իր տրամադրության տակ, բայց ինքը չի կարծում, որ դրանք իրենց մարտական արժեքով կամ թվաքանակով հավասար լինեն այն զինվորներին, որոնց Հայաստանը կարող է մարտադաշտ հանել:

Պ. Նուբարը մեկ անգամ ևս ընդգծեց, որ չի կարելի պատկերացնել Հայաստանն առանց էրզրումի: Լ. Ջորջի այն հարցին, թե արդյոք վերջին 50 կամ 100 տարվա ընթացքում էրզրումի նահանգում երբևէ եղե՞լ է հայկական մեծամասնություն, Պ. Նուբարը դրական պատասխան տվեց և ավելացրեց, որ պահանջվելու դեպքում ինքը պատրաստ է ներկայացնել անհրաժեշտ վիճակագրական տվյալներ (ԲՀԱ, էջ 51–53):

Ապրիլի 23–ին առավոտյան նիստում սինյոր Նիտտին կոնֆերանսը բացված հայտարարելուց հետո ասաց, որ հայկական պատվիրակության ղեկավար պարոն Ահարոնյանը դրսում սպասում է և շատ է անկանում, որպեսզի Գերագույն Խորհուրդը լսի իրեն, և վերջինս հրաժարվում է դահլիճ:

Սինյոր Նիտտին Գերագույն Խորհրդի անունից հարցրեց Ա. Ահարոնյանին. ենթադրենք, թե դաշնակից տերությունները պատրաստ են սպաներ, զինամթերք և հանդերձանք մատակարարել հայկական բանակներին, այդ բանակները ի վիճակի կլինե՞ն թուրքերին երզրումից վտարել և իրենք հաստատվել այդ ամրոցում, ինչպես նաև ապահովել իրենց նոր սահմանները: Երկրորդ հարցն էր՝ Հայաստանի համար ո՞րն է ամենահարմար սահմանագիծը, որ կարելի է անցկացնել:

Ա. Ահարոնյանը իրադրությունը բաժանեց երկու մասի. առաջինը՝ թուրքերի դրությունը, նրանց ուժերի տեղակայումը և երկրորդ՝ հայկական բանակի չափը և պատրաստվածությունը: Նա ասաց, որ հայկական շտաբային սպաների զեկույցների համաձայն՝ Մ. Քեմալի հրամայատարության ներքո գտնվող զորքերը իրականում շատ ավելի վատորակ են, քան պատկերացվում էր: Դրանք, փոքր բացառությամբ, կանոնավոր զորքեր չեն: Թերևս նրանք կարող են կազմված լինել շուրջ 1000 կամ 2000 հեծելազորից, բայց մյուս դեպքերում կազմված են քրդերից և գյուղացիներից, որոնք վատ են զինված ու հանդերձավորված: Եթե երզրումի նահանգի բնակիչները լսեցին այն Հայաստանին հանձնելու հավանականության մասին, մեծ թվաքանակներով սկսեցին լքել ու հեռանալ այնտեղից:

Շարունակելով խոսքը՝ Ա. Ահարոնյանն ասաց, որ հայերը մինչև 25 հազարանոց բանակ ունեն, և իրենց գլխավոր դժվարությունը զինամթերքի և հանդերձանքի պակասն է: Սեփական ռազմական փորձագետների կարծիքով հնարավոր է հաջորդ երկու կամ երեք ամսվա ընթացքում ոտքի հանել 40 հազարից ոչ պակաս մի բանակ, որի համար էական է զինամթերք և հանդերձանք ստանալ դաշնակիցներից, ինչպես նաև կռվել նրանց դրոշի ներքո: Եթե դաշնակիցները տրամադրեն նաև սպաներ, ապա կարճ ժամանակամիջոցում հայկական բանակն ի վիճակի կլինի առաջ շարժվել և գրավել ոչ միայն երզրումը, այլև մյուս նահանգները: Ինքը կամենում է նշել, որ Երևանը Հայաստանի իսկական մայրաքաղաքը չէ, այլ միայն նահանգային քաղաք: Ով իր ձեռքին ունենա երզրումը, նա էլ ի վիճակի կլինի տիրապետել ողջ Հայաստանին: Առանց երզրումի անհնար է պատկերացնել ապահով հայկական պետություն:

Բնակչության վերաբերյալ Լլոյդ Ջորջի հարցին Ա. Ահարոնյանը պատասխանեց, որ Հայաստանի Հանրապետությունում կա 1.292.000 բնակչություն, իսկ երզրումի վիլայեթում բնակվում են 240 հազար թուրքեր և 230 հազար քրիստոնյաներ, իսկ 800 հազար թիվը չափազանցություն է:

Հավաստիացնելով, որ ՀՀ կառավարության մտադրությունն է շրջապատող պետությունների հետ լավ հարևան լինել՝ Ա. Ահարոնյանը հեռացավ դահլիճից (ԲՀԱ, էջ 53–56):

Լլոյդ Ջորջն առաջարկեց խնդրել ԱՄՆ–ին՝ ընդունել Հայաստանի մանդատը:

Ամփոփելով իրենց խոսքը՝ Ջ. Կիրակոսյանը և Ռ. Սահակյանը չեն տարակուսում, որ ՀՀ այն ժամանակվա կառավարության քիչ թե շատ բնական դիրքորոշումը, Անտանտի ձեռքի խաղալիք դերից ռեալիստական քաղաքականության անցնելու, Խորհրդային Ռուսաստանի վրա հենվելու դեպքում անհնար չէր թուրք նացիոնալիստների սանձարձակության չափավորումը (ԲՀԱ, 1972, թիվ 3, էջ 24):

1920 թ. ապրիլի 25–ին Սան Ռեմոյի կոնֆերանսը ԱՄՆ–ի պրեզիդենտ Վ. Վիլսոնին ուղարկեց մի հռչակագիր՝ խնդրելով վերցնել Հայաստանի մանդատը, իսկ վերջնական մերժման դեպքում լինել արբիտր Թուրքիայի և Հայաստանի սահմանների հաստատման հարցում՝ չորս վիլայեթներում: Խոսքը Վանի, երզրումի, Բիթլիսի ու Տրապիզոնի վիլայեթների մասին է, որոնք պետք է մտնեին Հայաստանի մեջ՝ ելք ունենալով դեպի Սև ծով (Մ. Արզումանյան, էջ 258):

1920 թ. մայիսի 17–ին ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը տվեց իր համաձայնությունը՝ ապագա Հայաստանի սահմանների որոշման արբիտր լինելու մասին, իսկ մայիսի 24–ին ուղերձով դիմեց ամերիկյան կոնգրեսին՝ Հայաստանի մանդատն ընդունելու համար: Սակայն 1920 թ. մայիսի 29–ին սենատի արտաքին գործերի հանձնաժողովը 11 ձայնով ընդդեմ 4–ի, իսկ հունիսի 1–ին սենատը 52 դեմով և 23 կողմով մերժեցին Վիլսոնի առաջարկը՝ Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ: Մերժումն ուներ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական պատճառներ. նախ Հայաստանի տնտեսական գայթակղությունը անբավարար էր թվում ամերիկացիներին և, երկրորդ, նրանց զսպում էր ամրապնդվող Խորհրդային Ռուսաստանի դեմ դուրս գալու հեռանկարը: Այդ պահին

արդեն Ադրբեջանում հաստատվել էր խորհրդային իշխանություն, և ամերիկացիները համոզված էին, որ առաջիկայում անխուսափելիորեն նույնն է տեղի ունենալու նաև Հայաստանում և Վրաստանում (Մ. Ա., էջ 261–262):

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սևրի պայմանագիրը վերսալյան համակարգի վերջին պայմանագիրն էր: Թուրքիայի հետ հաշվետվության պայմանագրի Սան Ռեմոյի կոնֆերանսում մշակված նախագիծը քննարկվեց և հաստատվեց Փարիզից ոչ հեռու Սևր փոքրիկ քաղաքում՝ հախճապակու գործարանի դահլիճում, 1920 թ. օգոստոսի 10–ին: Պայմանագիրը կնքվեց մի կողմից՝ Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիցներ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմած մի շարք երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Սերբա–խորվաթա–սլովենական պետության (Հարավսլավիայի), Չեխոսլովակիայի, Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչն էր Ավետիս Ահարոնյանը:

Սևրի պայմանագիրը բաղկացած էր 13 մասերից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդվածներ: Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի 3/4 մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ:

Սևրի պայմանագրի 3–րդ մասի 6–րդ բաժինը՝ 88–93–րդ հոդվածները, ամբողջովին վերաբերում էին Հայաստանին: Մասամբ կամ անուղղակիորեն Հայաստանին ու հայերին էին վերաբերում նաև 125–րդ, 142–րդ, 144–րդ, 277–րդ, 349–րդ, 351–րդ, 352–րդ հոդվածները (Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 672–633):

Հոդված 88–ով Թուրքիան հայտարարում էր, որ ճանաչում է Հայաստանը իբրև ազատ և անկախ պետություն:

Հոդված 89–ով Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում էին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը, ինչպես նաև Հայաստանին դեպի ծով ելք տալու մասին առաջարկը թողնել ԱՄՆ–ի որոշմանը:

Հոդված 92–ով Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները պիտի որոշվեին շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե նրանք չկարողանան, սահմանագիծը կորոշեն Գլխավոր դաշնակից պետությունները:

Հոդված 352–ով Հայաստանին Տրապիզոնի նավահանգստի վրայով տրվում էր ազատ մուտք դեպի Սև ծովը՝ այնտեղ Հայաստանին առհավետ վարձակալության հանձնելով մի տեղամաս:

Հետագայում ԱՄՆ–ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը նշեց հայ–թուրքական սահմանագիծը՝ Կիրասուն–Երզնկա–Մուշ–Բիթլիս–Վանա լիճ, որով Արևմտյան Հայաստանից շուրջ 90 հազար քառակուսի կիլոմետր տարածք միացվում էր Հայաստանի Հանրապետությանը, որի տարածքը տվյալ պահին կազմում էր մոտ 60 հազար քառակուսի կիլոմետր, և այդպիսով Միացյալ և անկախ Հայաստանն ունենում էր մոտ 150 հազար քառակուսի կիլոմետր տարածք (Հայոց պատմություն, Դասագիրք միջնակարգ դպրոցի 7–8 դասարանների համար, Երևան, 1994, էջ 276):

Վանա լիճ–Մալաթիա–Մարաշ գծից հարավ ստեղծվում էր Քրդական ինքնավարություն՝ Անգլիայի հովանավորությամբ:

144 հոդվածով չեղյալ էին հայտարարվում Օսմանյան կայսրության օրենքները՝ ոչ թուրք ժողովուրդների բռնագաղթի մասին, և նրանց իրավունք էր վերապահվում վերադառնալ իրենց բնակավայրերը, վերստանալ կորցրած կարողությունը: Հատկանշական է, որ այս հոդվածում հայկական տեղահանության և ջարդերի մասին կոնկրետ հիշատակություն չկա:

Պայմանագրի 7–րդ բաժինը կրում է «Սանկցիաներ» վերնագիրը և նվիրված է պատերազմի հանցագործների հարցին: Բաժնի 226–րդ հոդվածը նախատեսում է ռազմական դատարանին ենթարկելու այն անձանց, որոնք մեղավոր են պատերազմի օրենքներն ու սովորույթները խախտող գործողությունների մեջ և մեղավոր ճանաչվածների նկատմամբ կիրառվեն նախատեսվող պատիժներ: Եվ էլի ոչ մի կոնկրետ խոսք հայոց ցեղասպանության հանցագործների մասին:

Սևրի պայմանագիրը Օսմանյան կայսրության անդամահատման պայմանագիր էր, և այդ առթիվ Լլոյդ Ջորջն ասել է. «Թուրքիան վերջնականապես բաժանված է, և մենք ոչ մի հիմք չունենք ափսոսալու դրա համար. մեր առաջ հարց է ծագում, ումով փոխարինել Թուրքիան: Եվրո-

պական միակ պետությունները, որոնք ընդունակ են կատարելու այդ միսիան, մեր կարծիքով հանդիսանում են Մեծ Բրիտանիան, Իտալիան ու Ֆրանսիան»: Իսկ անգլիացի Ասկվիտը նույնիսկ էպիտաֆիա՝ տապանագիր էր կազմել, որ պետք է զարդարեր Թուրքիայի պատմական գերեզմանը (Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, էջ 265–266):

Նույն օրը չորս Գլխավոր դաշնակիցները Սևրում առանձին հատուկ պայմանագիր կնքեցին Հայաստանի հետ, որը ստորագրեցին Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը և որով կանոնարկվում էին իրենց պահանջները Հայաստանի նկատմամբ, ընդհուպ ընտրական համակարգի մշակումը: Չի կարելի համաձայնել, սակայն, Մ. Արզումանյանի հետ, որը դրանից բխեցնում էր, թե Սևրի պայմանագիրն ըստ էության Հայաստանի համար կռում էր գաղութային նոր լուծ (էջ 266): Կամ՝ «ընդհանրապես Սևրի պայմանագիրը հայկական հարցի «լուծման» մի դիվային ծրագիր էր, որի նպատակն էր մեծաղողոդ, բայց դատարկ խոստումների գնով դառնալ շանթարգել սոցիալիստական հեղափոխության հաղթարշավի դեմ... (էջ 267)»:

Ինչպես գրում է Մ. Արզումանյանը, Ա. Ահարոնյանը ոչ մի կասկած չուներ իմպերիալիստական դիվանագետների մութ գործերի նկատմամբ, ուստի իր օրագրում գրել է. «Կյանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ: Թուրքական դաշնագիրն ստորագրվեց և բոլոր դաշնակից պետությունների համաժողովն այդպիսով հռչակեց Միացյալ, անկախ, ազատ Հայաստանը Սևրի սրահում (Մ. Ա., էջ 267)»: Իսկ օգոստոսի 20–ին ՀՀ արտգործնախարարին նա գրել է. «Այն ոսկե գրիչը, որ նվեր ստացա Մանչեստրի գաղութի հայ ներկայացուցիչ պ. Հ. Դամբերյանից և որով ստորագրվեց Միացյալ Հայաստանի անկախությունը նվիրագործող դաշնագիրը և իմ անվանս սկզբնատառը կրող կնիքը, որը դրվեցավ դաշնագրի վրա իմ ստորագրության առջև — այդ գրիչն ու կնիքը իմ խորին համոզմունքով ինձ չեն պատկանում այլևս, այլ պատկանում է հայ ազգին: 1920 թվականին օգոստոսի 10–ի պատմական մեծ ակտի վերաբերյալ այդ հիշատակները ես որոշել եմ նվիրել մեր պետությանը՝ ապագայում հայոց ազգային թանգարանի մեջ պահելու համար (Մ. Ա., էջ 268)»:

Խոսելով այդ ժամանակաշրջանի մասին՝ վաստակաշատ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան) նկատել է, որ հայ ժողովրդի դժբախտություններից մեկն էլ այն էր, որ նա ուներ լավ խմբապետներ, բայց վատ քաղաքագետներ (Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 356):

Մ. Արզումանյանը գտնում է, որ Սևրի պայմանագիրը կատարյալ ֆիկցիա էր, որը չծնված մեռավ: Դեռևս պայմանագրի նախագիծը կտրականապես մերժեցին քեմալականները, այն հանդիպեց նաև դաշնակիցների խիստ առարկություններին: Սան Ռեմոյում Օլեյնդոյին փոխարինած Իտալիայի պրեմիեր–մինիստր Նիտտին հայտարարեց, որ այդպիսի պայմանագիրն իրագործելու համար Իտալիան չի տրամադրի և ոչ մի զինվոր: Ֆրանսիայի ղեկավարները գտնում էին, որ իրենց երկրի շահերը ամբողջովին զոհաբերվել են անգլիական շահերին: ԱՄՆ–ը դժգոհ էր, որ դաշնակիցները թուրքական հարցը լուծել են հակառակ վիլսոնյան 14 կետերի, իրենց թողել են առանց նավթի, ուստի հրաժարվեցին ստորագրել այն:

Պուանկարեն ասաց, որ այդ պայմանագիրը, որն ստորագրվել է ազգային մանուֆակտուրայի կենտրոնում, նա ինքը մի փխրուն առարկա է, գուցեն ջարդված ծաղկաման, որին չի կարելի դիպչել:

Անգլիացիներն էլ հետագայում պիտի խոստովանեին, որ Սևրի պայմանագիրը, որ նախապատրաստվում էր 13 ամիս շարունակ, հնացավ ավելի շուտ, քան պատրաստ էր (Մ. Արզումանյան, էջ 270):

Մ. Արզումանյանի կարծիքով՝ այդ ամենի գաղտնիքը նրանում էր, որ դաշնակիցների «հոգատարությունը» Հայաստանի նկատմամբ թելադրվում էր միայն և միայն գաղութատիրական և հակախորհրդային ինտերվենցիայի կազմակերպման նկատառումներով (էջ 271): «Սևրի պայմանագիրը հենց սկզբից դատապարտված էր ձախողման,— գրում է Մ. Արզումանյանը,— և դա ոչ միայն այն պատճառով, որ դաշնակիցները նահանջեցին իրենց դիրքերից, այլև այն, որ այդ պայմանագիրը կնքված էր սուլթանական կառավարության հետ, իսկ Թուրքիայում դրության փաստական տերը դարձան քեմալականները: Այդ յուրահատուկ երկիշխանության պայմաններում սուլթանական կառավարությունը ենթարկվում է Անտանտին, որը 1920 թ. մարտի 16–ին օկուպացրեց Ստամբուլը, իսկ Անկարայում ձևավորվեց ազգայնական քեմալական կառավարությունը, որը վարում էր անկախ քաղաքականություն և շուտով դարձավ Անատոլիայի և ողջ Թուրքիայի փաստական իշխանությունը... Սուլթանական կառավարությունը հարկադրված էր ստորագրել Սևրի պայմանագիրը, բայց դա կատարվեց Անտանտի պետությունների ճնշման տակ... Ստացվեց այնպես, որ անգամ սուլթանը չվավերացրեց

Սևրի պայմանագիրը: Ի դեպ, այն չվավերացրին ոչ պարտվողները և ոչ էլ հաղթողները (273)»:

Սևրի պայմանագիրը ավելի անկողմնակալ է գնահատել ակադեմիկոս Գալուստ Գալոյանը: Նա գտնում է, որ Սևրի պայմանագրի մշակման խնդրում վճռական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Թուրքիայում փաստական իշխանությունն իրենց ձեռքը վերցրած քեմալականները դաշինքի մեջ էին մտել Խորհրդային Ռուսաստանի հետ, ուստի Սևրի պայմանագրի հետապնդած նպատակներից մեկը քեմալականների վրա ճնշում գործադրելն ու նրան Խորհրդային Ռուսաստանին հակադրելն էր (Գալուստ Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 275–276): Նա նաև այն միտքն է հայտնում, որ դաշնակիցների հաշվարկներով՝ Անկախ Հայաստանի ստեղծումը մի կողմից՝ կթուլացներ քեմալական Թուրքիայի դիրքերը, իսկ մյուս կողմից՝ հուսալի պատնեշ կլիներ Խորհրդային Ռուսաստանի և նոր Թուրքիայի միջև:

Գ. Գալոյանը հանգում է այն հետևության, որ եվրոպական դիվանագիտությունը սկսեց մոռանալ Հայկական հարցը, երբ համոզվեց, որ անկախ խորհրդա–թուրքական մերձեցումից՝ ռուս–թուրքական ավանդական հակասությունները պահպանել էին իրենց ուժը: Նա գտնում է նաև, որ հաշտության պայմանագրի ստորագրման ձգձգումը բացասական հետևանքներ ունեցավ, քանի որ թուրքերին հնարավորություն տվեց ոտքի կանգնելու և դաշնակիցների հետ ուժի դիրքերից խոսելու: Եվ այն հանգամանքը, որ այդ ընթացքում Թուրքիայի իրական իշխանությունն իրենց ձեռքն էին վերցրել քեմալականները, Սևրի պայմանագիրը դարձնում էր մեռելածին (էջ 277–278):

Մեկնաբանելով Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները՝ Գ. Գալոյանը գրում է, որ կարծես թե իրականանում էր հայ ժողովրդի դարավոր երազանքը, Արևմտյան Հայաստանն ազատագրվում էր և Արևելյան Հայաստանի հետ միասին ստեղծվում էր Միացյալ և Անկախ Հայաստանը: «Սևրի պայմանագիրը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչում էր,— ընդգծում է Գ. Գալոյանը,— անկախ այն հանգամանքից, որ պայմանագիրը կյանքի չկոչվեց (Գ. Գ., էջ 279)»:

«Սևրի պայմանագրի ստորագրումը չէր վկայում, թե հարթվել էին դաշնակից տերությունների միջև Փոքր Ասիայում գոյություն ունեցող տարաձայնությունները,— գրում է նա: Ընդհակառակը, դրանք ավելի

հստակեցվել էին և դարձել անհաղթահարելի... Թերևս այդ փաստի գիտակցումն էր, որ պայմանագիրը ստորագրած Կ. Պոլիսի թուրքական կառավարությունը հանդիսավորությամբ նշեց հաշտության այդ պայմանագրի ստորագրումը, մահուդի տակ դնելով նրա վավերացումը... Կասկած չկար, որ տերությունների միջև հակասություններն այնքան ակնհայտ էին, որ անհնար էր այդ կոլեկտիվ պարահանդեսի կայացումը: Չէ՞ որ թուրքերն արդեն տեսել էին, թե ինչպես էին այդ նույն դաշնակից տերություններն իրականացնում իրենց կոլեկտիվ վերահսկողությունը 1878 թ. Բեռլինի դաշնագրի կիրարկման նկատմամբ» (Գ. Գ., էջ 279):

Գ. Գալոյանն այն համոզմունքն է հայտնում, որ Սևրի պայմանագիրը ստորագրած խոշոր տերություններից և ոչ մեկը չի հավատացել, որ նրա հոդվածները կարող էին իրագործվել, քանի որ նրանց բոլորին հայտնի էր, որ Մուստաֆա Քեմալն արդեն զենքի տակ ուներ 150 հազարանոց լավ զինված ու կարգապահ բանակ, որի դեմ եվրոպական դաշնակիցներից և ոչ մեկը զենք գործադրելու մտադրություն չուներ: «Ուրեմն, եզրակացնում է հեղինակը,— Սևրի պայմանագիրը մի մարտահրավեր էր քեմալական Թուրքիային և անխուսափելի էր դարձնում հայ–թուրքական պատերազմը (էջ 280)»:

Գ. Գալոյանը մեջբերում է կատարում թուրք պատմաբան Սալահիի մի աշխատությունից, ըստ որի՝ Սևրի պայմանագրի ստորագրման լուրը ամբողջ Թուրքիայում ընդունվեց դառնությամբ ու զայրույթով, և օգոստոսի 10–ը դարձավ ազգային սգի օր: Թուրքական բոլոր թերթերը սև շրջանակով էին, արգելվեցին զվարճությունները, փակվեցին խանութները, ամենուրեք հնչում էին պայքարի կոչեր:

Պատմաբանի կարծիքով, եթե իրագործվեր Սևրի պայմանագիրը, այն սրելու էր նաև հայ–ադրբեջանական և հայ–վրացական հարաբերությունները, քանի որ նրանց միջև տարածքային հարցերում գոյություն ունեին անհաղթահարելի վեճեր: «Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին,— շարունակում է նա,— որը դեռևս 1917 թ. դեկտեմբերին առաջինն էր ճանաչել արևմտահայերի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ անկախ պետություն ստեղծելը, չէր ցանկանում, որ հայերն իրենց անկախությունն ստանային Անտանտի տերությունների օգնությամբ և դրանով իսկ ընդմիշտ կախված լինեին նրանցից: Այդ Հայաստանը կխանգարեր «համաշխարհային հեղափոխության» ալիքների տարածմանը Արևելքում և Խորհրդային Ռուսաստանին ու «հեղափոխական» Թուրքիային կբաժաներ միմյանցից:

Գ. Գալոյանն իրավամբ պայթյունավտանգ է որակում նաև Սևրի պայմանագրով Քրդստանին շնորհված ինքնավարությունը, որովհետև անորոշ էր մնում Հայաստանի և Քրդստանի միջև անցնող սահմանը: Եվ եզրակացնում է. «Այսպիսով, դեռ չստեղծված «Մեծ Հայաստանը» ներքաշվում էր սուր հակասությունների մեջ ոչ միայն թուրքերի, այլև քրդերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների հետ» (էջ 283): Դաշնակիցներն իրենց վրա էին վերցնում նաև Հայաստանում բնակվող այլազգիների շահերի պաշտպանությունը, ասել է թե՝ նրանք կարող էին ցանկացած պահին միջամտել Հայաստանի ներքին գործերին:

Ցույց տալով, որ Խորհրդային Ռուսաստանը զրկվում էր Սևծովյան նեղուցների վրա վերահսկողությունից, Գ. Գալոյանը գտնում է, որ Սևրի պայմանագիրը տապալելու Ռուսաստանի ձգտումը նախ և առաջ պայմանավորված էր հենց այդ հանգամանքով: Այնուհետև նա գրում է. «Միայն այն փաստը, որ դաշնակից տերությունները չկարողացան ստիպել քեմալական Թուրքիային՝ ճանաչելու այդ պայմանագիրը, այն կորցնում էր իր արժեքը» (էջ 285):

Սակայն, ինչպես նկատում է վաստակաշատ պատմաբանը, Հայաստանի կառավարության ոգևորությունը դեռևս չէր մարել: «Սևրի պայմանագրի նկատմամբ ունեցած «խանդավառ ոգևորությունը» Հայաստանի կառավարողներին մղել էր Ռուսաստանի դերի թերագնահատմանը Հայ դատի լուծման խնդրում»,— գրում է նա (էջ 286): Վկայակոչելով Հ. Տերտերյանի հուշերը՝ Գ. Գալոյանը ցույց է տալիս, որ անգլիական զենքի, ռազմամթերքի ու հանդերձանքի ստացումից հետո ՀՀ պետական շրջանակներում այն սխալ մտայնությունն էր տիրում, թե հայկական զորամասերը հեշտությամբ կարող են գրավել Երզրումը և Երզրումի բարձրավանդակը (էջ 287): Ընդգծվում է նաև, որ Խորհրդային Ռուսաստանը վճռականորեն հանդես էր գալիս Սևրի պայմանագրի դեմ ոչ թե այն պատճառով, որ պայմանագիրն ուղղված էր Թուրքիայի շահերի դեմ, այլ այն, որ արմատապես հակասում էր իր սեփական շահերին: Չհամաձայնելով Խորհրդային պատմաբան Վ. Գուրկո–Կրյաժինի հետ՝ Գ. Գալոյանը մատնանշում է, որ դաշնակից տերությունները հրաժարվում էին ոչ թե Հայաստանի անպտուղ սարահարթերից, այլ իրենց որդեգրած հակաթուրքական քաղաքականությունից, որի պատճառով էլ Սևրի պայմանագիրն անիրագործելի էր (էջ 288):

Շեշտելով, որ Սևրի պայմանագիրն ստորագրվեց Փարիզի կոնֆերանսի հրավիրումից (1918 թ. հունվարի 18) ավելի քան մեկուկես տարի անց, Գ. Գալոյանը նկատում է, որ այդ ընթացքում քաղաքական ուժերի վերադասավորումն ընթացավ Թուրքիայի օգտին, և վերջինս սկսեց ուժի դիրքերից խոսել դաշնակիցների հետ: Այդ ընթացքում Անտանտի տերությունների հակաթուրքական դիրքորոշումը փոխարինվեց Մուստաֆա Քեմալի հետ լեզու գտնելու և նրան Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղելու քաղաքականությամբ: Դրանով Եվրոպան հրաժարվում էր Թուրքիան բաժանելու պլաններից և խաչ էր քաշում արդեն ստորագրված Սևրի պայմանագրի վրա:

Սևրի պայմանագրին հակիրճ անդրադարձել է Ս. Վրացյանը, որն իր գրքում ամբողջությամբ գետեղել է պայմանագրի ամբողջ 6–րդ բաժինը՝ Հայաստանին վերաբերող 88–93 հոդվածները: Նա վկայում է, որ օգոստոսի 15–ին, դաշնագիրն ստորագրելու առթիվ, Փարիզի եկեղեցում հանդիսավոր մաղթանք կատարվեց և ճաշից հետո ՀՀ պատվիրակության շենքում պաշտոնական ընդունելություն տեղի ունեցավ: Համազգային մեծ օրը տոնելու համար շատ մեծ բազմություն հավաքվեց, ճառեր ու բանաստեղծություններ արտասանվեցին, հայրենասիրական երգեր երգվեցին՝ ի պատիվ Ազատ ու Անկախ Միացյալ Հայաստանի:

Ժողովներ ու հանդեսներ տեղի ունեցան նաև Հայաստանում, ուր նույնպես ճառեր ու բանաստեղծություններ արտասանվեցին, հայրենասիրական երգեր երգվեցին... Բայց այնտեղ շուտով պիտի երգվեին ուրիշ տեսակ երգեր (Ս. Վ., 469–470):

ՀՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Հյուսիսային Կովկասի խորհրդայնացումից հետո Խորհրդային Ռուսաստանն առաջարկեց Հայաստանի Հանրապետությանը՝ պաշտոնական բանակցություններ սկսել բարեկամության պայմանագիր կնքելու նպատակով: Քանի որ Կարմիր բանակը մոտեցել էր Ադրբեջանի սահմաններին, ՀՀ կառավարությունն էլ զգում էր նման քայլի անհրաժեշտությունը:

1920 թ. ապրիլի վերջին Երևանում կազմվեց պատվիրակություն՝ Խորհրդարանի անդամ, դաշնակցական, բանաստեղծ Լևոն Շանթի (Սեղբոսյան, 1869–1951) նախագահությամբ, անդամներն էին Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյանը, որին հանձնարարվեց անմիջա-

պես մեկնել Մոսկվա՝ Հայաստանի անունից խորհրդային իշխանության հետ բանակցություններ վարելու և բարեկամական դաշինք կնքելու նպատակով: Պատվիրակությանը տրվեցին հետևյալ հրահանգները. 1. Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչի Հայաստանի անկախությունը՝ Ղարաբաղով և Գյուլիստանով, 2. Խորհրդային Ռուսաստանը, գոնե սկզբունքորեն, պետք է ընդունի արևմտահայ տարածքների կցումը Հայաստանին, 3. Խորհրդային Ռուսաստանը չպետք է միջամտի Հայաստանի ներքին գործերին և այնտեղ կոմունիստական գործունեություն չպիտի ծավալի, 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թույլ տա, որ Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում գտնվող հայ գաղթականները վերադառնան Հայաստան: Տրվեցին նաև մի շարք այլ հրահանգներ:

Ս. Վրացյանի վկայությամբ՝ պատվիրակությունն անհապաղ մեկնեց Մոսկվա և այդ կապակցությամբ 1920 թ. մայիսի 4–ին հեռագիր ուղարկեց Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Վ. Չիչերինին (1872–1936): Մայիսի 17–ին Չիչերինը հեռագրով պատասխանեց, որ խորհրդային կառավարությունը համաձայն է Հայաստանի հետ բարեկամական պայմանագիր կնքելուն և հայտնեց, որ իրենք սպասում են հայ պատվիրակներին: Նա տեղեկացրեց նաև, որ Երևանի հետ կապի դժվարություններից խուսափելու համար հայկական պատվիրակությանը տրամադրված է իրենց ուղիղ հեռագրաթելը՝ Ռոստովի և Թիֆլիսի վրայով:

Պատվիրակությունը Մոսկվա հասավ բավականին մեծ ուշացումով, հանդիպեց Գ. Չիչերինին և բանակցություններն անմիջապես սկսվեցին: Մայիսի 31–ին Շանթը ուղիղ հեռագրաթելով հաղորդեց Երևան, որ բանակցություններն արդեն սկսված են և ընթանում են հաջող: Խորհրդային կողմից բանակցությունները վարում էր Գ. Չիչերինի տեղակալ, ականավոր դիվանագետ Լևոն Կարախանը (Կարախանյան, 1889–1937):

Խորհրդային պատվիրակությունն ընդունեց Հայաստանի բոլոր պայմանները, և հունիսի 10–ին Շանթը հաղորդեց Երևան, որ ռուս–հայկական պայմանագիրն արդեն կազմված է և մի երկու օրից կստորագրվի: Սակայն 20 օր անց՝ հուլիսի 1–ին, Շանթն արդեն հեռագրում էր Երևան. «Հենց առաջին տեսակցությունից պարզվեց, որ միակ դժվարությունը Ադրբեջանի սահմանն է, որովհետև Բաքվից ամեն կերպ աշխատում են խանգարել դաշնագրի կնքումը... Խորհրդային կառավարությունն ընդունում է մեր պահանջների արդար լինելը... Դաշնագրի կնքումը դանդաղում է: Խորհրդային Ադրբեջանի կառավարիչները ցանկանում են օգտվել ռուսական հեղինակությունից և ռուս զորքերի ներկայությունից՝ գրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը... Ռուսաստանը ցանկանում է ստանձնել իրավարարի դեր հայ–թաթարական վեճը լուծելու համար: Մոսկվայի կառավարությունը պատրաստակամություն է հայտնում Թուրքահայաստանի խնդրում հանդես գալ միջնորդի դերում Հայաստանի և Մուստաֆա Քեմալի միջև (Ս. Վ., էջ 483)»:

Ս. Վրացյանը եզրակացնում է, որ Ադրբեջանի կոմունիստները Բաքվում գտնվող հայ կոմունիստների աջակցությամբ կարողացան ազդել Մոսկվայի վրա և հետաձգել Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը: Նրանք պատվիրակություն ուղարկեցին Մոսկվա՝ պահանջելու, որ խորհրդային իշխանությունը պայմանագիր չկնքի «դաշնակցական» Հայաստանի հետ:

1920 թ. հուլիսի 1–ին Չիչերինը հեռագրեց Հայաստանի կառավարությանը և առաջարկեց բանակցությունները տեղափոխել Երևան, որը կվարի լիազոր ներկայացուցիչ նշանակված Բորիս Լեգրանը: Վարչապետ Հ. Օհանջանյանը պատասխանեց, որ ինքը դրան դեմ չէ, պայմանով, որ բանակցությունները Երևանում սկսվեն Մոսկվայից Շանթի պատվիրակության վերադարձից հետո:

Հուլիսի 20–ին Լեգրանը հասավ Բաքու, որտեղից էլ անցավ Թիֆլիս:

Այսպես է ներկայացնում հայ–ռուսական բանակցությունները դաշնակցական հեղինակ Սիմոն Վրացյանը:

Խորհրդա–հայկական բանակցությունների առնչությամբ Մ. Արզումանյանը գրում է, որ Շանթի պատվիրակությունը Մոսկվա հասավ միայն մայիսի վերջին՝ մոտ մեկուկես ամիս դանդաղելով ճանապարհին ու շաբաթներով կանգ առնելով Վլադիկավկազում ու Նոր Նախիջևանում: Այդ ուշացումը նա բացատրում է ոչ թե այն ժամանակվա երկաթուղային հաղորդակցության բարդությամբ, որովհետև խորհրդային կառավարությունը հայերին տրամադրել էր ճեպընթաց գնացք, որով կարելի էր մի քանի օրում հասնել Մոսկվա, այլ հայկական կողմի չկամությամբ: «Նրանք իրենց հույսերը կապել էին արևմտյան տերությունների հետ,— գրում է Մ. Արզումանյանը,— և սովետական կառավարության առաջարկը ձևականորեն չմերժելով հանդերձ, չէին ուզում նրա հետ լուրջ բանակցությունների մեջ մտնել, ամեն կերպ ձգձգում էին դրանք և վերջում էլ ձախողեցին» (Մ. Ա., Արհավիրքից վերածնունդ, էջ 315): Այնուհետև խորհրդահայ պատմաբանը մեջ է բերում նախկին դաշնակցական

մինիստր Ա. Ղազարյանի խոսքերը, որը գրում է, թե Մոսկվա հայ պատվիրակներ ուղարկելն ավելի շատ ձևական ու նախազգուշական միջոց էր, քան թե բխում էր հայ կառավարության ոգուց: Մեջ են բերվում նաև Համբարձում Տերտերյանի վկայությամբ Չիչերինի հետևյալ խոսքերը. «Դուք ձեռ բոլոր հույսերը դրել եք եվրոպական դրամատիրական պետությունների վրա: Հիշեցեք ձեր դատի անցյալը: Քանի-քանի անգամ ձեզ խաբել են այսպես կոչված մեծ պետությունները: Վստահ ենք, որ այս անգամ ևս ձեր դատը պիտի զոհեն իրենց ազգային նեղ շահերի համար: Խորհրդային իշխանությունը, որպես բանվորագյուղացիական իշխանություն, միակ անկեղծ ուժն է, որ անշահախնդիր կերպով կարող է լուծել ձեր դատը: Հրաժարվեցեք դաշնակիցներից, ձեր հարցի քննությունը դուրս բերեք Սևրի խորհրդաժողովի օրակարգից և հանձնեցեք այն Խորհրդային կառավարության իրավարարության (Մ. Ա., էջ 316): Սակայն, ըստ Մ. Արզումանյանի, արևմտյան օրիենտացիային հավատարիմ դաշնակցական կառավարությունը չուզեց նոր ուղի բռնել և դրանով թույլ տվեց ճակատագրական սխալ, որը մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին:

Այնուհետև Մ. Արզումանյանը ցույց է տալիս, որ երբ Բ. Լեգրանի միսիան հասավ Թիֆլիս, որի կազմում էին, ի դեպ, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ, ՀՀ կառավարությունը միառժամանակ արգելակում է նրա մուտքը Երևան, պատճառաբանելով, թե իբր Շանթի պատվիրակությունը դեռ չի վերադարձել Մոսկվայից: Այդ առթիվ Բ. Լեգրանը Թիֆլիսից հեռագրում է վարչապետ Հ. Օհանջանյանին և շեշտում, որ խորհրդային Ռուսաստանի բարեկամական մտադրությունները չեն հանդիպում Հայաստանի կառավարության համարժեք արձագանքին (Մ. Ա., էջ 318):

Այս առթիվ հետաքրքիր է նաև Թիֆլիսում ՀՀ ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի վկայությունը, ըստ որի՝ Վրաստանում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովն իրեն ասել է, թե Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն ընդունում է Հայաստանի անկախությունը և այն տարածում նաև Տաճկահայաստանի վրա, ոչ միայն կարծում է, որ կարող է լուծել Հայկական հարցը, որը չի հաջողվել բոլոր եվրոպական պետություններին, այլև պատրաստ է նույնիսկ զինված ուժով պաշտպանել անկախ Հայաստանի սահմանները: Սակայն, ցավոք, այդ հավաստիացումներն էլ ոչ մի ազդեցություն չգործեցին և գործն առաջ չգնաց (Մ. Ա., էջ 319):

Այնուհետև Մ. Արզումանյանը եզրակացնում է, որ հայ-ռուսական բանակցությունների ձախողման հանգավորները դաշնակներն էին: Ավելին՝ Հայկական հարցի լուծման խորհրդային կողմի առաջարկության մերժումը նա համարում է հրեշավոր ոճրագործություն, որը նոր աղետներ բերեց հայ ժողովրդին (Մ. Ա., էջ 319): Կարծում ենք, սակայն, որ նման կտրուկ և չափազանց խիստ գնահատականը օբյեկտիվ և անկողմնակալ չէ, որովհետև անտեսված է բանակցությունների ձախողման խնդրում թուրք-ադրբեջանական գործոնի բասացական դերը:

Հայ-ռուսական բանակցությունների հարցին անդրադարձել է պրոֆեսոր Ս. Տ. Ալիխանյանը՝ «Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (Երևան, 1964)» մենագրության մեջ: Նա այն կարծիքն է հայտնում, որ խորհրդային կառավարությունն ամեն ինչ անում էր՝ դաշնակցականների հետ ազնիվ բանակցություններ սկսելու համար, սակայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ՀՀ կառավարությունը իր պատվիրակությանը ոչ մի հրահանգ չէր տվել, որովհետև այդ հարցի որոշումը թողել էր Վիլսոնի ողորմածությանը (էջ 107): «Տեսնելով, որ ՌՍՖՍՀ կառավարությունը հաստատակամորեն ձգտում է պայմանագիր կնքել դաշնակցական կառավարության հետ,— գրում է նա,— վերջինս որոշում է դադարեցնել բանակցությունները և Մոսկվայից հետ կանչել իր պատվիրակությանը (էջ 109): Այդ կապակցությամբ Տիգրան Բեկզադյանը խորհուրդ է տալիս իր կառավարությանը՝ չհամաձայնել Չիչերինի առաջարկներից և ոչ մեկին, այսպիսով ժամանակ շահել, մինչև կստացվի Անգլիայից եկած ռազմամթերքը և այն ժամանակ կարելի կլինի դիմադրել նույնիսկ ռուս զորքերին (նույն տեղում):

Վիճակն այլ կերպ է ներկայացնում ակադեմիկոս Ծ. Աղայանը՝ «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982» գրքում: Նա գրում է, որ երկար բանակցություններից հետո հունիսի կեսերին վերջապես դաշնակցական պատվիրակությունը համաձայնում է, որ խորհրդային կառավարությունը միջնորդի դեր կատարի Հայաստանի և Թուրքիայի միջև, իսկ Չիչերինը խոստացավ Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ միացնել Հայաստանին, ապահովել գաղթականների անարգել վերադարձը, Հայաստանին ձրիաբար տրամադրել մի քանի տասնյակ շոգեքարշեր ու վագոններ, նավթ, երկու մանածագործական գործարան, 2,5 միլիոն ոսկի ռուբլի, երկրագործական գործիքներ, հացահատիկ և այլն: Չիչերինը խոստացավ նաև ռուս-հայ-

կական դաշնագիրը մի երկու օրից ներկայացնել ստորագրման: Սակայն... «Պատվիրակությունը խորհրդակցելով իր կառավարության հետ, հրաժարվում է բանակցությունները շարունակելուց... Ադրբեջանի հետ ունեցած սահմանային վեճերի պատճառով հայկական պատվիրակությունը ձախողեց բանակցությունները: Նման պայմաններում էլ խորհրդային կառավարությունը 1920 թ. հուլիսի սկզբներին առաջարկեց Բ. Լեգրանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Հայաստան և տեղում քննարկել սահմանային վեճերի հարցը...

Անշուշտ, եթե սովետական կառավարության հետ Չիչերինի առաջարկությունների համաձայն պայմանագիր կնքվեր, ապա հայկական տերիտորիայի խնդրի լուծումը միանգամայն այլ ընթացք կունենար: Մինչդեռ դաշնակցական կառավարությունը, հրաժարվելով դրանից, հույսը կապում էր իմպերիալիստական տերությունների ստահոդ խոստումների, Սևրի պայմանագրի հետ» (նշվ. աշխ., էջ 287–288):

Հիմնահարցի առնչությամբ պրոֆեսոր Ա. Եսայանը «Հայաստանի միջազգային–իրավական դրությունը 1920–1922 թթ. Երևան, 1967» գրքում գրում է, թե դաշնակցական կառավարությունը պատվիրակություն ուղարկեց Մոսկվա հասարակական կարծիքի ճնշման տակ, ստիպված: Հայաստանի կառավարությունը ցուցում էր տվել պատվիրակությանը՝ չշտապել Մոսկվա հասնելու, դրա համար էլ հայկական պատվիրակությունը Երևանից մեկնելով ապրիլի 29–ին, տարբեր առիթներով ութ օր մնաց Վլադիկավկազում, յոթ օր՝ Նոր Նախիջևանում և միայն մայիսի երկրորդ կեսին հասավ Մոսկվա: Պատճառն այն էր, որ այդ ժամանակ Լոնդոնում գաղտնի բանակցություններ էին ընթանում Անգլիայի և Թուրքիայի միջև, և Հայաստանը հույս ուներ այդ բանակցություններից ավելի շատ բան ստանալ, քան Խորհրդային Ռուսաստանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու դեպքում (Ա. Եսայան, էջ 103):

Հետաքրքիր է, որ Ա. Եսայանը բանակցությունների ձախողումը միակողմանիորեն չի բարդում հայկական կողմի վրա, այլ գրում է, որ Հայաստանում ստեղծված անորոշ դրությունը և գոյություն ունեցող կառավարության իրական իշխանության մասին տեղեկությունների բացակայությունը անհնարին դարձրին հայ–ռուսական պայմանագրի ստորագրումը Մոսկվայում, և կողմերը նպատակահարմար գտան բանակցությունները փոխադրել Երևան (Ա. Եսայան, էջ 107):

Լևոն Շանթի պատվիրակության Մոսկվյան առաքելությանը ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է պրոֆեսոր Էդ. Զոհրաբյանը,

որն այդ կապակցությամբ շրջանառության մեջ է դրել նորահայտ արխիվային և այլ բնույթի նյութեր (Է. Ա. Զոհրաբյան, 1920 թ. թուրք–հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 47–77): Մերժելով խորհրդային պատմաբանների և ափյուռքահայ որոշ ուսումնասիրողների անվերապահ, չփաստարկված պնդումները, թե հայ–ռուսական բանակցությունների ձախողման ու պայմանագիրը չստորագրելու համար մեղավոր են միայն Հայաստանի կառավարությունը և Շանթի պատվիրակությունը, նա գտնում է, որ պատճառը պետք է փնտրել Հայաստանի հարցում Ռուսաստանի դաշնակիցների՝ Խորհրդային Ադրբեջանի և քեմալական Թուրքիայի դիրքորոշման մեջ: Այդ առնչությամբ ուսումնասիրողը վկայակոչում է Բաքվից Մոսկվա՝ Լենինին, Չիչերինին և Վլադիկավկազ՝ Օրջանիկիձեին հասցեագրած հեռագրերը, որ ստորագրել էին Նարիմանովը, Մդիվանին, Միկոյանը: Հեռագրի հեղինակները Հայաստանի դաշնակցական կառավարության հետ ամեն մի բանակցություն համարում էին ավելորդ և պահանջում էին նրա հետ ոչ մի պայմանագիր չկնքել (Է. Զոհրաբյան, նշվ. աշխ., էջ 62, 65):

Էդ. Զոհրաբյանը վկայակոչում է նաև հուլիսի 4–ին Մոսկվա հասած Անկարայի կառավարության արտգործկոմիսար Բեքիր Սամի Բեյի նամակը, որով տեղեկացվում էր, որ Հայաստանի հետ սահմանազատման հարցում իրենք կանգնած են Բրեստ–Լիտովսկի և Բաքուի պայմանագրերի սկզբունքի վրա (Է. Զ., էջ 74): Հեղինակի կարծիքով, թուրք–ադրբեջանական այդ ճնշումն էլ Մոսկվային հարկադրեց ձեռնպահ մնալ պայմանագրի կնքումից, Շանթի պատվիրակության առաքելությունը Մոսկվայում ավարտվեց անարդյունք և առաջարկվեց հայկական կողմին՝ բանակցությունները փոխադրել Երևան (Է. Զ., էջ 74–75):

Հիմնահարցին անդրադարձել է ակադեմիկոս Գալուստ Գալոյանը (Հայաստանը և Մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 238–243): Նա գտնում է, որ ՀՀ ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի ծանրացումը ստիպեցին կառավարությանը գործնական քայլերի դիմել՝ Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Վերջինս էլ ձգտում էր բանակցությունների միջոցով հասնել նրան, որպեսզի Հայաստանը «չխանգարեր» իր արևելյան քաղաքականության իրագործմանը և քեմալական Թուրքիայի հետ անմիջական կապ հաստատելուն: «Այդ բանակցություններում,— գրում է Գ. Գալոյանը,— Խորհրդային Ռուսաստանը խնդիր էր դրել ձեռք բերել Հայաստանի կառավարության համաձայնությունը, որպեսզի նա կտրեր

իր կապերը Ռուսաստանին թշնամի Անտանտի տերությունների հետ, հրաժարվեր Սևրի պայմանագիրը ստորագրելուց և ընդուներ Ռուսաստանի կառավարության միջնորդությունը հայ–թուրքական հարաբերություններում (Գ. Գ., էջ 240)»:

Գ. Գալոյանը նշում է, որ Հայաստանի պատվիրակության հետ բանակցությունները վարում էին Գ. Չիչերինը և Լ. Կարախանը, որոնք միաժամանակ շարունակում էին բանակցությունները թուրքերի հետ: Հ. Տերտերյանի վկայությամբ՝ հայ պատվիրակները փորձել են համոզել Չիչերինին, որ քեմալականները անկեղծ չեն Ռուսաստանի նկատմամբ, որին Չիչերինը պատասխանել է, թե իրենք այնքան էլ միամիտ չեն:

Գ. Գալոյանի մեկնաբանությամբ՝ Լ. Շանթը մերժեց Չիչերինի, ինչպես նաև Հ. Տերտերյանի և Լ. Զարաֆյանի առաջարկը՝ Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակության հետ հանդիպելու և երկուստեք հետաքրքրող հարցեր քննարկելու մասին, քանի որ չուներ կառավարության լիազորությունը:

Գ. Գալոյանը գալիս է այն հետևության, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ոչ պաշտոնական քայլերով փորձել է համոզել Հայաստանի պատվիրակությանը, որ եթե Հայաստանն ընդուներ Ռուսաստանի պահանջները, կստանար նրա աջակցությունը տարածքային հարցերի լուծման ժամանակ: Այդ միտքը հաստատելու համար նա վկայակոչում է Հ. Տերտերյանի հուշերում խոսվող Անդրկովկասի քարտեզի մասին, որը վերջինս տեսել էր Լ. Կարախանի գրասեղանի վրա: Այդ քարտեզի մասին հանգամանորեն գրել է նաև Է. Զոհրաբյանը: Խորամուխ լինելով փաստերի մեջ՝ Գ. Գալոյանը եզրակացնում է, որ Չիչերինն իրոք դեմ է եղել Խորհրդային Ադրբեջանի կողմից վիճելի համարվող տարածքները նրան տալուն (Գ. Գալոյան, էջ 293):

Հայ–խորհրդային բանակցությունների հարցը քննարկել է սփյուռքահայ հեղինակ Ռուբինա Փիրումյանը՝ «Հայաստանը Հ.Յ.Դ.–բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917–1921. Երևան, 1997» գրքում: Որպեսզի պարզ լինի հեղինակի մեկնակետը, բերենք համապատասխան 7–րդ բաժնի խորագիրը՝ «Բանակցություններ ռուս–թուրքական դավադրության ստվերի տակ»:

Ռ. Փիրումյանը գտնում է, որ Մոսկվայի հետ բանակցություններ սկսելու անմիջական ազդակ հանդիսացավ Ադրբեջանի խորհրդայնացումը, և 1920 թ. ապրիլի 30–ին ՀՀ կառավարությունը Մոսկվա ուղարկեց Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը: Նրա կարծիքով, ճամ-

փորդության ավելի քան երեք շաբաթ տևելը փոխադրական միջոցների չգոյության հետևանք էր (Ռ. Փ., էջ 212): Նրա կարծիքով, պատվիրակության առաջին հանդիպումը Չիչերինի և Կարախանի հետ տեղի է ունեցել մայիսի 28–ին: Ըստ Ռ. Փիրումյանի՝ Մոսկվայի մտահոգությունն այն էր, որ Հայաստանը, իբրև դաշնակիցների կողմնակից, կարող էր թուրքերին թիկունքից հարվածել: Բոլշևիկ ղեկավարներն առաջարկում էին նաև Հայկական հարցի լուծումը թողնել Ռուսաստանի հայեցողությանը:

Ռ. Փիրումյանը գտնում է, որ եթե Լ. Շանթը, արվեստագետի զգայուն հոգի ունենալու փոխարեն ունենար ճկուն դիվանագետի ձիրք և համաձայներ հանդիպել Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակության հետ, ապա Հայաստանը կշահեր: «Եթե հայ և թուրք պատվիրակությունները,— անթաքույց գրում է Ռ. Փիրումյանը,— առանց ռուսների միջնորդության, փորձեին իրենց հարցերը լուծել, մանավանդ՝ այն ժամանակ, երբ հայ–թուրքական հակադրությունները դեռ սաղմնային էին, գուցե կարելի կլիներ հետագա արյունահեղության առաջն առնել. գուցե հայերը կարողանային ի շահ Հայաստանի օգտագործել բոլշևիկների հանդեպ ունեցած քեմալական թուրքերի անվստահությունը (Ռ. Փ., էջ 215)»:

Հետագա էջերում Ռ. Փիրումյանը փորձում է բանակցությունների ձախողումը բացատրել միայն և միայն թուրք–ադրբեջանական գործոնով և հայ բոլշևիկների գործողություններով, որն, անշուշտ, միակողմանի մոտեցում է:

ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ, ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Դեռևս 1919 թ. նոյեմբերի վերջերին Զանգեզուրում Արսեն Շահմազյանին փոխարինել էին Սերգեյ Մելիք–Յոլչյանը՝ որպես քաղաքացիական մասի կոմիսար և մայոր Ն. Ղազարյանը՝ իբրև զինվորական հրամանատար:

Ամբողջ Զանգեզուրը բաժանվեց երկու գավառի՝ 1. Զանգեզուրի գավառ, որի մեջ մտնում էին բուն Զանգեզուրը՝ Գորիսը, Տաթևը և Սիսիանը, 2. Կապարգողթ, որի մեջ մտնում էին Ղափանը, Գեղվածորը, Մեղրին (Արևիք) և Գողթան:

Զինվորական առումով շրջանը բաժանվեց 3 մասի.

1. Սիսիան. հրամանատար՝ Պողոս Տեր–Դավթյան

2. Կապարգողթ. հրամանատար՝ Գարեգին Նժդեհ

3. Բուն Զանգեզուր (Գորիս). հրամանատար՝ գեներալ Ն. Ղազարյան: Առաջին երկուսի հրամանատարները ենթակա էին գեներալ Ն. Ղազարյանին:

Չնայած Գարեգին Նժդեհը ի պաշտոնե միայն Կապարգողթի հրամանատարն էր, սակայն իրադարձությունների բերումով 1919 թ. նոյեմբերից սկսած նա էր փաստորեն կանգնել Զանգեզուրի ինքնապաշտպանության գլուխ:

* * *

Գարեգին Նժդեհը (Գարեգին Եղիշեի Տեր–Հարությունյան, 1886–1955) ծնվել է 1886 թ. հունվարի 1–ին Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում՝ քահանայի ընտանիքում: Նժդեհ՝ նշանակում է պանդուխտ, օտարության մեջ ապրող:

Նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում, ապա ուսումը շարունակել Նախիջևանի ռուսական դպրոցում, այնուհետև՝ Թիֆլիսի ռուսական դպրոցներից մեկում: Դպրոցը չավարտած՝ մտել է ՀՅԴ շարքերը:

1902 թ. ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1904–ին, համալսարանը չավարտած, ՀՅԴ մարմնի հանձնարարությամբ մեկնում է Պարսկաստան՝ Սալմաստ, կուսակցական քարոզչության:

1906 թ. անցնում է Բուլղարիա և ընդունվում Սոֆիայի սպայական դպրոցը, որը գերազանցությամբ ավարտելուց հետո վերադառնում է Կովկաս, որտեղից Սեբաստացի Մուրադի հայդուկային խմբի հետ մտնում է Արևմտյան Հայաստան:

Այնուհետև Գ. Նժդեհը կրկին անցնում է Պարսկաստան, ակտիվորեն մասնակցում այստեղ ծավալված հեղափոխական պայքարին:

1909–ին վերադառնում է Կովկաս՝ զենք և զինամթերք Թավրիզ տեղափոխելու նպատակով, սակայն Արաքսն անցնելիս Ջուլֆայի մոտ ծերբակալվում է, երեք տարի անցկացնում Նախիջևանի և Երևանի բանտերում:

1911–ին ազատվում է, մեկնում Բուլղարիա և իբրև սպա ծառայության անցնում բուլղարական բանակում:

1912 թ. սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը: Բալկանյան քրիստոնյա չորս պետություններ՝ Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը և Չեռնոգորիան պատերազմ սկսեցին Թուրքիայի դեմ՝ նրան Բալկաններից դուրս մղելու համար: Այդ պատերազմին ակտիվորեն մասնակցեց նաև հայ կամավորներից կազմված վաշտը՝ Նժդեհի և Անդրանիկի հրամանատարությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո Նժդեհը վերադառնում է Կովկաս և ստանձնում Դրոյի գլխավորած հայկական կամավորական 2–րդ գնդի հրամանատարի տեղակալի պարտականությունը:

1918 թ. մայիսին Նժդեհն իր զորամասով ակտիվորեն մասնակցում է Ղարաքիլիսայի հերոսամարտին և վիրավորվում:

* * *

1919 թ. նոյեմբերին Նժդեհը նշանակվում է Կապարգողթի՝ Կապանի, Արևիքի (Մեղրի) և Նախիջևանի Գողթան գավառակի հայկական զինված ուժերի հրամանատար, որտեղ կար շուրջ 60 հազար հայություն: Նա կազմակերպեց Դավիթբեկյան վաշտեր, որոնք ամենաքաջ ու կարգապահ վաշտերն էին և գայլավաշտեր, որոնք բաղկացած էին 20–50 հոգուց, զինված էին ձեռնառումբերով և ուժանակներով:

1920 թ. սկզբի ամիսներին Ադրբեջանի դեմ զանգեզուրցիների մղած հաղթական կռիվները ստիպեցին մուսավաթականներին՝ հրաժարվել Զանգեզուրի դեմ ակտիվ գործողություններից և ուժեղացնել զավթողական կռիվը Ղարաբաղի դեմ:

1920 թ. մարտին Խոսրով բեկ Սուլթանովը վերջնագիր ներկայացրեց արցախահայերին՝ պահանջելով զինաթափվել: Մերժում ստանալով՝ ադրբեջանական զորքերը կրակի մատնեցին Արցախի շուրջ 20 հայկական գյուղեր: Հրդեհվեցին Շուշիի հայկական թաղերը, սրի մատնվեցին հազարավոր հայեր:

Այդ դեպքերը լցրեցին ՀՅ կառավարության համբերության բաժակը: Գորիս–Ավդալար–Շուշի գծով Ղարաբաղ մտավ Դրոյի գլխավորած Զանգեզուր–Ղարաբաղյան էքսպեդիցիոն ջոկատը, իսկ Ղափանի ուժերից կազմված մեկ այլ ջոկատով Նժդեհը մտավ Դիզակ:

Մտնելով Շուշի՝ Դրոն 1920 թ. ապրիլի 26–ին հայրենասիրական կոչով դիմեց արցախահայերին՝ կռվել մինչև հաղթանակ:

Սակայն այդ պահից սկսած իրադարձությունների ընթացքը կտրուկ փոխվեց: 1920 թ. սկզբներին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը եկավ այն համոզման, որ հասել է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների ազգային կառավարությունների տապալման և երկրամասում ռուսական նախկին կայսրության միջազգատերազմյան սահմանները վերականգնելու պահը (Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, էջ 44):

Աշխատանքները մոտիկից ղեկավարելու համար 1920 թ. ապրիլի 8–ին ստեղծվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Հյուսիս–Կովկասյան բյուրո, որի մեջ մտան Գ. Օրջոնիկիձեն ու Ս. Կիրովը, որոնք միաժամանակ կովկասյան ճակատի ռազմհեղափոխորհրդի անդամներ էին:

Անդրկովկասի շուրջ ստեղծված իրադրության մասին ահա թե ինչ է գրում նորագույն հետազոտող, պատմագիտության դոկտոր Արամ Սիմոնյանը, որի հիմնարար մենագրությունը բանալի նշանակություն ունի շատ ու շատ հիմնահարցերի նորովի պարզաբանման ու մեկնաբանման տեսակետից: «Դեռևս 1920 թ. ապրիլի 15–ին, այսինքն՝ Ադրբեջանի խորհրդայնացումից երկու շաբաթ առաջ, Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Օրջոնիկիձեի հետ ունեցած հեռախոսային զրույցի ժամանակ 11–րդ բանակի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկին նրան հաղորդել էր, որ քեմալական կառավարությունը Դաղստանում գտնվող երիտթուրք պարագլուխներ Նուրի և Խալիլ փաշաներին հրահանգել է՝ իրենց զինված ուժերի հետ միասին թողնել այդ մարզի սահմանները: Իր հերթին Խալիլ փաշան Անկարայի կառավարությունից թույլտվություն էր խնդրել՝ վերակազմել իրեն ենթակա զորամասերը, այդ զորամասերի հետ Դաղստանից անցնել Բաքու, ապա այնտեղից շարժվել դեպի Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան, տարածքներ, որոնք Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը մտադիր է «վիճելի» հայտարարել: Ընդ որում, թուրք փաշաներն ուզում էին ավելի շուտ մտնել Բաքու, քան այդ կհասցներ անել 11–րդ Կարմիր բանակը...

Սակայն քեմալականների՝ Ադրբեջանում հիմնավորվելու ծրագիրը ձախողվեց... Ռուսական բոլշևիկյան կառավարությունը արագացրեց Ադրբեջանի և Անդրկովկասի մյուս տարածքները խորհրդայնացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Նախատեսվեց Անդրկովկաս մտնել Ադրբեջանի սահմաններից (Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, էջ 45): Դժվար չէ կռահել, թե ինչ տեղի կունենար, եթե քեմալականների պլանը չձախողվեր:

Անդրկովկասի խորհրդայնացման նախօրյակին Կարմիր բանակի համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Մ. Տուխաչևսկին և ռազմխորհրդի անդամ Ս. Օրջոնիկիձեն 1920 թ. ապրիլի 21–ին Պետրովսկից հրաման արձակեցին Բաքվի վրա հարձակում սկսելու և Ադրբեջանը գրավելու մասին:

1920 թ. ապրիլի 27–ի վաղ առավոտյան 11–րդ Կարմիր բանակի զորամասերը բանակի հրամանատար Մ. Լևանդովսկու հրամանով անցան Ադրբեջանի մուսավաթական հանրապետության սահմանը և շարժվեցին դեպի Բաքու: Ապրիլի 28–ին մուսավաթական կառավարությանը վերջնագիր ներկայացվեց՝ իշխանությունը հանձնելու մասին: Բաքուն և Ադրբեջանի մնացած տարածքները գրավվեցին գրեթե առանց կրակոցի: Այդ առթիվ Արամ Սիմոնյանը գրում է. «Ադրբեջանի քաղաքագետները՝ մուսավաթական թե բոլշևիկ, լավ ըմբռնելով իրենց ազգային ընդհանուր շահերը, ներքին պայմանավորվածությամբ փոխեցին հանրապետության ցուցանակը» (Ա. Սիմոնյան, էջ 47):

Ադրբեջանի խորհրդայնացումը և 11–րդ բանակի զորամասերի՝ Վրաստանի և Հայաստանի սահմաններին մոտենալը կտրուկ փոխեցին իրադրությունն Անդրկովկասում:

1920 թ. ապրիլի 30–ին Ադրբեջանի հեղկոմը ՀՀ կառավարությանը ներկայացրեց հետևյալ վերջնագիրը. «Ադրբեջանի ՍԽՀ բանվորագյուղացիական կառավարությունը, ի դեմս հեղափոխական կոմիտեի, պահանջում է, նախ՝ ձեր զորքերից մաքրել Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքը, երկրորդ՝ ետ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան ջարդը: Հակառակ դեպքում ԱՍԽՀ հեղկոմը իրեն կհամարի ՀՀ հետ պատերազմական վիճակում: Նոտայի պատասխանը պետք է ստացվի եռօրյա ժամկետում»: Վերջնագիրը ստորագրել էր արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Հուսեյնովը:

Այդ լկտի վերջնագրին ՀՀ արտգործնախարար Հ. Օհանջանյանը մայիսի 1–ին պատասխանեց, որ Ադրբեջանի տարածքում ոչ մի տեղ հայկական զորամասեր չեն եղել ու չկան: Իր հերթին ՀՀ կառավարությունն Ադրբեջանի նոր կառավարությունից խնդրում էր զորքերը դուրս բերել հայկական Լեռնային Ղարաբաղի սահմաններից, որպեսզի այնտեղ անցկացվի հանրաքվե:

Նույն օրը՝ մայիսի 1–ին, ՀՀ կառավարությունը սպառնալից վերջնագիր ստացավ 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությունից, որով պահանջվում էր 24 ժամվա ընթացքում Ադրբեջանին հանձնել Ղարաբաղը և Զանգեզուրը: Վերջնագիրը ստորագրել էին Կովկասյան ռազմաճակատի ռազմհեղխորհրդի անդամ Օրջոնիկիձեն, 11–րդ բանակի ռազմհեղխորհրդի անդամներ Կիրովը, Մեխանոշինը, Լևանդովսկին (Ա. Սիմոնյան, էջ 50–53):

Հայաստանի պառլամենտը 1920 թ. մայիսի 3–ի արտակարգ նիստում քննարկեց ստացված վերջնագրերը: Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ ՀՀ կառավարությունը պետք է բանակցի Խորհրդային Ռուսաստանի հետ՝ պահպանելով Հայաստանի անկախությունը:

Վիճակն ավելի բարդացավ Հայաստանում Մայիսյան ապստամբության բռնկմամբ, որը, սակայն, արագորեն ճնշվեց:

ՀՀ կառավարությանը վերջնագիր ներկայացնելուց հետո Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Կովկասյան ճակատի հրամանատարությանը ցուցում տվեց անհապաղ զորքեր մտցնել Լեռնային Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան և հսկողության տակ առնել հիշյալ վիճելի տարածքները: 1920 թ. հուլիսի սկզբին ՌԿ(բ)Կ Կենտկոմի ընդունած հատուկ որոշման մեջ հանձնարարվում էր բնակչությանը բացատրել, որ այդ տարածքները գրավվում են ժամանակավորապես՝ ազգամիջյան կոտորածներ թույլ չտալու համար, իսկ դրանց պատկանելության հարցը կլուծվի խառը հանձնաժողովի միջոցով, Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ՝ ղեկավարվելով բնակչության կամքով:

Մուսավաթական բանակն արագորեն վերակազմվեց Խորհրդային Ադրբեջանի Կարմիր բանակի, իսկ մուսավաթական բանակի նախկին սպաները դարձան «կարմիր» հրամանատարներ:

1920 թ. մայիսի 5–ին 11–րդ Կարմիր բանակի 32–րդ դիվիզիայի զորամասերը գրավեցին Աղստաֆան և դուրս եկան Ղազախ: Մեկ այլ ուղղությամբ կարմիր զորքերը գրավեցին Եվլախը և մայիսի 9–ին մտան Աղդամ: Այդ ընթացքում մուսավաթական բանդաները վերակազմավորվում և իրենց հայտարարում են Կարմիր բանակի զորամասեր:

1920 թ. մայիսի երկրորդ կեսին ստեղծվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն հետևյալ կազմով. Բելոբորոդով, Օրջոնիկիձե, Մդիվանի, Ֆրունկին, Կիրով, Յան Պոլույան, Օրախելաշվիլի, Նազարեթյան: Նրա գլխավոր խնդիրն էր ողջ Կովկասում և Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատումը:

1920 թ. մայիսի կեսերին 11–րդ բանակը՝ Ադրբեջանի Կարմիր բանակի զորամասերի հետ միասին, մոտեցավ Լեռնային Ղարաբաղի սահմաններին: Մայիսի 19–ին Կարմիր բանակի պատվիրակությանը Շուշիում ընդունեց Դրոն (Դրաստամատ Կանայան), որը ՀՀ կառավարության կարգադրությամբ իր զորամասով Զանգեզուրից անցել էր Ղարաբաղ և Շուշիում ստեղծել իր ժամանակավոր կառավարչությունը:

Բանակցություններն արդյունք չտվեցին, և 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրամայեց 32–րդ դիվիզիայի հրամանատար Շտեյգերին՝ գրավել Լեռնային Ղարաբաղը և շարժվել դեպի Զանգեզուր:

Շուտով 32–րդ հրաձգային դիվիզիան մտավ Շուշի: 11–րդ բանակի հրամանատար Մ. Լևանդովսկու և ռազմհեղխորհրդի լիազոր Ս. Տեր–Գաբրիելյանի հետ այստեղ եկավ նաև Ս. Օրջոնիկիձեն: Շուշին հայտարարվեց խորհրդային, և Դրոյին առաջարկվեց հեռանալ Ղարաբաղից:

Մայիսի 24–ին Ավետարանոց գյուղում Դրոն խորհրդակցություն հրավիրեց և հայտնեց, որ ՀՀ կառավարությունը համաձայն է զորքերը հանել Ղարաբաղից: Դրան խստորեն հակառակվում է Նժդեհը, անգամ մենամարտի կանչում Դրոյին և արժանանում վերջինիս «Դերասան շան որդի» որակավորմանը: Հետագայում, ինչպես գրում է Ա. Սիմոնյանը, նրանց անձնական հարաբերություններն ավելի բարդացան (Ա. Ս., էջ 79):

Մայիսի 25–ին Դրոն իր զորամասով հեռացավ Ղարաբաղից, և ամբողջ երկրամասը դարձավ խորհրդային:

Ղարաբաղի գրավումը ազդակ դարձավ Զանգեզուրի բոլշևիկների համար, դիմելու ապստամբության: Դեռևս 1920 թ. մայիսի 5–ին Գորիսում կազմակերպվել էր ՌԿ(բ)Կ Զանգեզուրի ժամանակավոր Կենտրոնական կոմիտե, որի նախագահն էր Հակոբ Կամարին, անդամներն էին Երեմիա Բակունցը, Քրիստափոր Մկրտչյանը, Մակիչ Մաշուրյանը, Բագրատ Հարությունյանը և ուրիշներ:

Մայիսի 18–ին զինված ելույթներ եղան Սիսիանի շրջանի Բռնակոթ, Բնունիս, Ախլաթյան, Ղարաքիլիսա և այլ գյուղերում:

Սակայն ապստամբությունը լայն ծավալ ընդունեց հատկապես բուն Զանգեզուրի՝ Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում, որն ամենամեծ գյուղն էր և ուներ 8.000 բնակիչ, իսկ բոլշևիկյան կազմակերպությունն ուներ 75 անդամ: Նրանց հետևից գնում էր գյուղացիության մեծ մասը: Ընտրվեց Խնձորեսկի հեղկոմ՝ Հայկ Սիլանյանի նախագահությամբ:

Հեղկոմը զինեց գյուղի կոմունիստներին և մայիսի 27–ի առավոտյան ապստամբություն բարձրացրեց, որին մասնակցում էին հարյուրավոր գյուղացիներ: Ապստամբները գրավեցին զինապահեստը, ձերբակալեցին կառավարության պաշտոնյաներին: Գյուղում հայտարարվեց խորհրդային իշխանություն:

Դրոն Կոռնիձորից իր զորամասով շարժվեց Խնձորեսկի վրա և գրավեց գյուղը:

Հեղկոմներ ստեղծվեցին նաև Սիսիանի շրջանի Բռնակոթ, Անգեղակոթ և այլ գյուղերում:

Սակայն Մայիսյան ապստամբությունը զանգեզուրում ճնշվեց:

Վիճակը չափազանց բարդ էր Զանգեզուրին հարող Նախիջևանի գավառում: Դեռևս 1919 թ. ամռանը այստեղ մուսավաթականները թուրքական զորքերի օժանդակությամբ ապստամբություն էին բարձրացրել և գավառն անջատել Հայաստանի Հանրապետությունից: ՀՀ բանակը շարունակում էր կռիվը՝ Նախիջևանը վերագրավելու համար, մանվանդ որ դաշնակիցները և առաջին հերթին Անգլիան այն պաշտոնապես ճանաչել էին իբրև Հայաստանին պատկանող տարածք: Հայկական զորքերը ստիպված էին կռվել ոչ միայն Նախիջևանում բուն դրած մուսավաթական ուժերի, այլև քեմալական Թուրքիայի՝ այստեղ մտած զորքերի դեմ: Նախքան կարմիր զորքերի Նախիջևան մտնելը գավառ էր ներխուժել 15–րդ կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին ենթակա բայազետյան 9000–անոց դիվիզիան: Նախիջևանը կորցնելու վտանգը խորհրդային իշխանություններին ստիպում էր ժամ առաջ մուտք գործել այնտեղ, իսկ դա հնարավոր էր միայն Զանգեզուրը գրավելուց հետո:

1920 թ. մայիսի վերջերին Կարմիր բանակի ստորաբաժանումները երևացին Ղազախի և Քարվանսարայի շրջաններում: Սակայն 1920 թ. մայիսի 26–ին Գյանջայում (Ելիզավետպոլ) սկսվեց մուսավաթական հակախորհրդային ապստամբություն, որը գլխավորում էր թուրք գեներալ Նուրի փաշան: Խռովությունն ընդգրկեց նաև Լենքորանի շրջանը: 1920 թ. հունիսի 3–ին մուսավաթականները գրավեցին Շուշին, որտեղ խորհրդային իշխանությունը տապալվեց:

Թուրք–մուսավաթական հակախորհրդային խռովությունը ճնշելու համար Կարմիր բանակի զորամասերը դիմեցին վճռական գործողությունների: Ղարաբաղ ուղարկվեց Շտեյգերի 32–րդ հրաձգային դիվիզիան և Կուրիշկոյի 18–րդ հեծյալ դիվիզիան, Լունինիչի ավիացիոն ջոկատը: Հունիսի 15–ին կարմիր զորքերը վերագրավեցին Շուշին:

Շուրջ 20 օր տևած կռիվների ընթացքում Կարմիր բանակը դաժանորեն ճնշեց մուսավաթական խռովությունը նաև մյուս վայրերում: Խռովարարները հունիսի 13–ին Նուրի փաշայի գլխավորությամբ փախուստի դիմեցին:

Գյանջայում և հարակից շրջաններում մուսավաթական խռովությունը ճնշելուց և խորհրդային իշխանությունը Ղարաբաղում ամրապնդելուց հետո 11–րդ Կարմիր բանակի 20–րդ և 32–րդ դիվիզիաները շարժվեցին դեպի Զանգեզուր և Նախիջևան: Առաջինը Ղարաբաղից Զանգեզուր պիտի մտներ 32–րդ դիվիզիան: Զանգեզուրի սահմաններին կենտրոնացվեց 6–7 հազար սվին, շուրջ 1000 թուր, 12 թնդանոթ (Ա. Ս., էջ 100):

Սկսվեց 11–րդ Կարմիր բանակի հրամանատարության օպերատիվ պլանի՝ «վիճելի» Զանգեզուրի և Նախիջևանի գրավման իրականացումը: Կարմիր բանակի հրամանատարությունը փորձեց Զանգեզուրը գրավել առանց կռվի, ուստի Տեղ գյուղում բանակցություններ սկսեց Գորիսի պատվիրակության հետ: Սակայն վերջինս կտրականապես մերժեց խաղաղ ճանապարհով իշխանությունը խորհուրդներին հանձնելու առաջարկը, և բանակցություններն ավարտվեցին անարդյունք:

1920 թ. հունիսի 4–ին 11–րդ Կարմիր բանակի 32–րդ դիվիզիայի հեծյալ բրիգադը Ադրբեջանի Կարմիր բանակի զորամասերի հետ Զաբուղ գյուղի հովտից սկսեց հարձակումը և նույն օրը գրավեց Տեղ և Կոռնիձոր գյուղերը: Զանգեզուրյան զորամասերը կարճատև ընդհարումից հետո նահանջեցին դեպի Գորիս: Հուլիսի 4–ի երեկոյան Գորիսում տեղի ունեցավ Ազգային խորհրդի նիստ, որը որոշեց չդիմադրել խորհրդային զորքերին: Նիստին մասնակցում էր նաև Դրոն:

Հուլիսի 5–ի վաղ առավոտյան 32–րդ դիվիզիայի հեծյալ բրիգադի զորամասերը մտան Գորիս, և Զանգեզուրը հայտարարվեց խորհրդային: Հուլիսի 8–ին Բաքվից Գորիս եկավ Ղարաբաղ–Զանգեզուրի արտակարգ կոմիսար Արմենակ Ղարագյոզյանը, որի հորը գնդակահարել էր Դրոն՝ Մայիսյան ապստամբության ճնշման ժամանակ: Գորիս քաղաքի բնակչության մի մասը համակրանքով ընդունեց կարմիր զորքերի մուտքը Զանգեզուր, քաղաքի կենտրոնում տեղի ունեցավ միտինգ: Նույն օրը՝ հուլիսի 5–ին, Գորիսում ստեղծվեց Զանգեզուրի գավառի հեղկոմ՝ Հակոբ Կամարու նախագահությամբ: Գավհեղկոմն ստեղծեց իր բաժինները, միլպետ նշանակվեց Մակիչ Մաշուրյանը: Գավհեղկոմը

հաստատեց նաև Սիսիանի շրջանային հեղկոմի կազմը՝ Պատվական Ղազարյանի գլխավորությամբ:

Հուլիսի 5–ին Տեղ գյուղի տարածքով Զանգեզուր մտան նաև 11–րդ բանակի 28–րդ դիվիզիայի զորամասերը, որոնք Գորիս հասան մի քանի ժամ անց:

Թողնելով Գորիսը՝ հայկական ուժերը բաժանվեցին երկու խմբի. Դրոն նահանջեց Սիսիանի ուղղությամբ՝ Երևան անցնելու համար, իսկ մյուս մասը շարժվեց դեպի Ղափան:

Հուլիսի 6–ին Կարմիր բանակի 252–րդ գունդը սկսեց հետապնդել Դրոյին, որը շարժվում էր դեպի Սիսիանի շրջանի կենտրոն՝ Ղարաքիլիսա գյուղը: Դրոյի ճանապարհը փորձեցին փակել մի քանի ապստամբած գյուղերի ուժեր, ուստի Դրոն, առանց Ղարաքիլիսա մտնելու, հեռացավ դեպի Դարալագյազ: Դրոյի զինվորներից ոմանք նետում էին հրացանները, մի մասն էլ անցնում էր կարմիրների կողմը (Ա. Ս., էջ 118):

Դեպի Ղափան շարժվող ուժերը չհետապնդվեցին:

Տեղեկանալով Կարմիր բանակի կողմից Զանգեզուրի կենտրոն Գորիսը գրավելու մասին, Ղափանի հանքերում գտնվող Գարեգին Նժդեհը շտապ հրավիրեց շրջանի 37 գյուղերի ներկայացուցիչների ժողով: Նրա մասնակիցները միաձայն որոշեցին կարմիր զորքերին դիմադրել և կռվել մինչև վերջ:

Հուլիսի 10–ին Կարմիր բանակի մի հեծյալ գունդ գրավեց Ղափանի սահմանագլխին գտնվող Խոտանան գյուղը: Շուտով կարմիր հեծելազորը հայտնվեց Կավարտ և Առաջածոր գյուղերի միջև ընկած ձորում: Սակայն Նժդեհի վաշտերը բռնում են ճանապարհի երկու կողմերի բարձունքները:

Ռուսական զորամասի հրամանատարությունը (զորամասի պետ՝ Իվանով, կոմիսար՝ Ա. Կոչետկով) հուլիսի 10–ին նամակ ուղարկեց Նժդեհին, որով պահանջվում էր դադարեցնել ամեն տեսակ դիմադրություն և ներկայանալ իրենց՝ երաշխավորելով կյանքի անձեռնմխելիություն: Նժդեհը գրավոր մերժում ուղարկեց, որին հետևեց նրա բանագնացի ձերբակալումն ու նոր վերջնագիրը: Դրան Նժդեհը պատասխանեց, որ Ղափանի ճակատագիրը կարող է որոշել միայն նրա գյուղացիության խորհուրդը, որի որոշմանն սպասելուն կարմիր հրամանատարությունը համաձայնեց:

Հուլիսի 12–ին Ղափանի Ազգային խորհուրդը Առաջածոր գյուղում հրավիրեց երկրորդ արտակարգ ժողովը, որին մասնակցում էին

լուրաքանչյուր գյուղից երկուական ներկայացուցիչ: Երկար քննարկումներից ու Նժդեհի զգայացունց ելույթից հետո ժողովը միաձայնությամբ որոշեց կարմիրներին թույլ չտալ մտնել Ղափան: Դրանից հետո Նժդեհը կարմիր հրամանատարությանն ուղարկեց հակավերջնագիր՝ 24 ժամվա ընթացքում, մինչև հուլիսի 13–ի ժամը 7–ը, թողնելով Ղափանի սահմանները, հակառակ դեպքում դա կարվի զենքի ուժով (Ա. Ս., էջ 124): Ստանալով Նժդեհի վերջնագիրը՝ հուլիսի 13–ին առավոտյան կարմիր զորամասը թողեց Խոտանանը և նահանջեց դեպի Գորիս:

Նժդեհը կոնկրետ միջոցառումներ ձեռնարկեց՝ խորհրդային զորքերի առաջխաղացումը դեպի Հանքեր կասեցնելու համար:

Հուլիսի 20–ին ՌԽՖՍՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը Հայաստանի արտգործնախարարի հասցեով հայտագիր ուղարկեց, որով տեղեկացնում էր, որ խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների գրավումը նպատակ ունի դադարեցնելու արյունալի բախումները Հայաստանի և Ադրբեջանի միջև և տարածքային հարցերը խաղաղ կերպով լուծելու պայմաններ ստեղծել, որը և կհանգեցնի բարեկամության պայմանագրի կնքմանը, ինչի համար էլ Երևան է ուղարկվել խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը:

Հուլիսի 27–ին Հայաստանի արտգործնախարար Հ. Օհանջանյանը, պատասխանելով Չիչերինի հայտագրին, նշում էր, որ խորհրդային զորքերի ներկայությունը Ղազախի և Զանգեզուրի շրջաններում կարող է միայն բացասական ազդեցություն ունենալ և խանգարել գումարվելիք հայ–ադրբեջանական խաղաղության կոնֆերանսին, ուստի առաջարկում էր դուրս հանել զորքերը վերոհիշյալ վայրերից (Ա. Ս., էջ 130):

Զուգահեռաբար սրընթաց իրադարձություններ էին զարգանում նաև Նախիջևանի շրջանում: 1920 թ. հուլիսի սկզբներին Զնադ բեյի գլխավորած թուրքական 9000–անոց Բայազետյան դիվիզիան սկսել էր Նախիջևանի, Ջուլֆայի և Օրդուբադի շրջանների գրավումը: Արարատյան դաշտից դեպի Նախիջևան շարժվեց հայկական զորքը, որին համառ կռիվներից հետո հաջողվեց կոտրել թուրքերի դիմադրությունը և գրավել Շարուրի շրջանը: Հուլիսի 26–ին նրանք գրավեցին նաև Շահթախթի երկաթուղային կայարանը և զրահագնացքով մոտեցան Նախիջևան քաղաքին:

Օգտագործելով հարմար պահը՝ Կարմիր բանակի՝ Զանգեզուր մտնելուց երկու օր հետո՝ հուլիսի 7–ին, Նախիջևանից Գորիս եկան Զնադ բեյի պատվիրակները և խնդրեցին, որ ռուսական զորամասերը

Զանգեզուրից անցնեն Նախիջևանի գավառ և թուրքական զորամասերի հետ համատեղ գործողություններ սկսեն հայկական զորքերի դեմ:

Միաժամանակ 1920 թ. հուլիսին Մոսկվայում Բեքիր Սամի բեյի վարած բանակցություններից հետո Մոսկվայից Բաքու եկավ Խալիլ փաշան, որը ձեռնամուխ եղավ «իսլամական բանակի» ստեղծմանը, որի ողջ ծախսը հոգում էր խորհրդային կառավարությունը: Խալիլ փաշայի տրամադրության տակ դրվեցին նաև Սիբիրից վերադարձող թուրք գերիները: Այդ արագ կազմավորվող բանակով Խալիլ փաշան Ղարաբաղի և Զանգեզուրի վրայով պետք է անցներ Թուրքիա:

Նշված իրադարձությունների առնչությամբ Ա. Սիմոնյանը գրում է. «Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ խորհրդային կառավարության քաղաքականությանը, ապա դա գերազանցապես թելադրված էր հեղափոխության հեռահար շահերով: Քանի որ Հայաստանի կառավարությունն ամեն ինչ անում էր չկորցնելու համար հանրապետության անկախությունը և իր արտաքին քաղաքականության մեջ հենվում էր Արևմուտքի վրա, ուստի, բոլշևիկյան Ռուսաստանը, որը մահու և կենաց կռվի մեջ էր Անտանտի հետ, բնականաբար դառնում էր անկախ Հայաստանի հակառակորդ, Անտանտի և Հայաստանի դեմ պայքարող Թուրքիայի բարեկամ և դաշնակից (Ա. Սիմոնյան, էջ 133)»: Միաժամանակ էլ Ա. Սիմոնյանը նշում է, որ խորհրդային կառավարությունը փորձում էր համոզել Հայաստանի կառավարությանը, որ ինքն ամեն կերպ կնպաստի, որպեսզի Թուրքիայի նկատմամբ Հայաստանի տարածքային պահանջները լուծվեն Հայաստանի օգտին: Տեղեկանալով Գորիսից Նախիջևան մեկնող ռուսական զորաբաժնի մասին, որն իր հետ տանում էր նաև գույք ու ոսկի, Վայոց ձորում գտնվող Դրոյի ուժերը 400 հեծյալ, նույնքան հետևակ և 8 թնդանոթ, հուլիսի 31–ին հարձակվեցին Բազարչայ մոլոկանաբնակ գյուղի վրա: Բազարչայի և Բորիսովկայի մոլոկան ռուս բնակիչները միացան խորհրդային զորքերին, որոնք նահանջեցին Անգեղակոթ, այնտեղից էլ՝ Նախիջևան: Դրոյի ձեռքն անցավ 200,6 կգ ձուլածո ոսկի:

Հուլիսի 28–ին չորսօրյա երթից հետո Նախիջևան մտան 11–րդ Կարմիր բանակի 28–րդ դիվիզիայի 1–ին հեծյալ գունդը՝ Տերեխովի հրամանատարությամբ: Նրանք վերացրին թուրքերի ստեղծած կեղծ «հեղկոմը» և ստեղծեցին իսկական բոլշևիկյան հեղկոմ:

Այսպիսով՝ 1920 թ. հուլիսի վերջերին վիճելի համարված հայկական տարածքներում՝ Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Հատկանշական էր, որ հենց այդ օրերին՝ 1920 թ. հուլիսի 21–ին, Վրաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովը հանդիպում է Վրաստանում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին և պաշտոնապես հայտարարում. «Մենք ոչ միայն ճանաչում ենք Հայաստանի անկախությունը, ոչ միայն այդ տեսակետը տարածում ենք Թուրքահայաստանի վրա, այլև... մեր պարտքն ենք համարում օգնել հայերին, նույնիսկ զինված ուժերով պահպանել անկախ Հայաստանի սահմանները (Ա. Սիմոնյան, էջ 142)»:

Այնուհետև Ա. Սիմոնյանը մատնանշում է ՀՀ արտգործնախարարության մի տեղեկագիրը, որտեղ ընդգծված է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական դեկրետներով հայտարարել է, որ ճանաչում է Հայաստանի անկախությունը, որ Խորհրդային Ռուսաստանը եղել և մնում է հայ ժողովրդի բարեկամը, որ նրա բոլոր միջամտությունները միայն մի նպատակ ունեն՝ խաղաղորեն վերջացնել Հայաստանի և Ռուսաստանի դաշնակից Ադրբեջանի միջև եղած վեճերը, վերջ տալ ավելորդ արյունահեղությանը: Սակայն նշվում է նաև, որ խոսքով բարյացակամ Մոսկվայի կոմունիստները գործնականում ջլատում են Հայաստանը՝ խլելով Զանգեզուրն ու Ղարաբաղը և այնտեղ վարելով ահաբեկման քաղաքականություն (Ա. Ս., էջ 142–143):

Այդ օրերին Նժդեհը ՀՀ կառավարությունից օգնություն էր խնդրում: ՀՀ կառավարությունն իր հերթին չէր հաշտվում Զանգեզուրի կորստի հետ, ուստի Դրոյին հրամայվեց շարժվել բուն Զանգեզուրի վրա և հաջողության դեպքում վերագրավել նաև Ղարաբաղը:

1920 թ. օգոստոսի 1–ին Դրոն Վայոց ձորից Բազարչայի լեռնանցքով հանկարծակի հարձակվեց Սիսիանի վրա: Խորհրդային փոքրաթիվ ուժերը հարկադրված էին Բազարչայի շրջանից նահանջել դեպի Անգեղակոթ: Սակայն 11–րդ բանակի 32–րդ դիվիզիայի հրամանատարությունը նահանջողներին օգնության ուղարկեց մեկական հեծյալ և հետևակ գնդեր, մեկ հեծելավաշտ, որոնց հաջողվեց կասեցնել հայկական զորամասի առաջխաղացումը: Խորհրդային ուժերին միացան նաև 50 սիսիանցի երիտասարդներ:

Կարմիր բանակի հրամանատարությունը Գորիսից վերջնագիր հղեց Դրոյին՝ պահանջելով 24 ժամվա ընթացքում հետ վերադառնալ, սակայն պատասխան չստացավ:

Հենց այդ ժամանակ էլ Դրոյին հայտնեցին, որ բոլշևիկները Շինուհայր գյուղում մատնությամբ ձերբակալել են Հայաստանի խորհրդարանի անդամներ, դաշնակցության նշանավոր գործիչներ Արշակ Շիրինյանին ու Վահան Խորենուն ու նրանց տեղափոխել Գորիսի բանտը: Դրոն անմիջապես շարժվեց Գորիսի վրա: Օգոստոսի 1–ին նրա զորամասը մտավ Սիսիանի կենտրոն Ղարաքիլիսա գյուղը, իսկ օգոստոսի 2–ի գիշերը մոտեցավ Գորիսին: Այդ նույն գիշերն էլ Գորիսի բանտում Ա. Շիրինյանն ու Վ. Խորենին դաժանաբար սպանվեցին: Գնդակահարվեցին նաև Զանգեզուրի ինքնապաշտպանության մի շարք այլ ղեկավար գործիչներ: Գորիս–Շուշի ճանապարհի վրա, Զաբուղի ձորում գնդացրային կրակով ոչնչացվեցին 81 հոգի:

Օգոստոսի 3–ին Դրոն գրավեց Գորիսը: Կարմիր զորամասերը նահանջեցին և անցան Ադրբեջան:

Կատարված սպանությունների ու գնդակահարությունների մասին ստանալով ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի բողոքի հեռագիրը, Գ. Չիչերինը հեռագրով բացատրություն պահանջեց Կովկասի բոլշևիկյան ղեկավարությունից, գտնելով, որ նման փաստերը առաջացնում են ժողովրդի ատելությունը և կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելու առումով (Ա. Ս., էջ 152):

Դրոյի զորամասի կողմից Սիսիանի և Գորիսի վերագրավումը կարևոր նշանակություն ունեցավ Կապարգողթի պաշտպանների համար, ինչպես նաև բուռն ոգևորություն առաջացրեց Ղարաբաղում: Այստեղ խորհրդային իշխանության դեմ բռնկեց ապստամբություն, որի *գլուխ կանգնեց Թևան Ստեփանյանը: Նա ծննդյամբ Դիզակի Տումի* գյուղից էր, եղել էր ցարական բանակի հեծյալ ստորաբաժանման ավագ: Թևանի շարժումը սկիզբ առավ Դիզակում, այնուհետև տարածվեց Վարանդայում և Խաչենում: Բոլշևիկներին հաջողվեց ձերբակալել Թևանին, բայց նա փախավ և շարունակեց պայքարը:

Սիսիանում և Գորիսում Դրոյի հաղթանակը երկար չտևեց: Կարմիր բանակի 28–րդ, 32–րդ հրաձգային դիվիզիաներից և 18–րդ հեծյալ դիվիզիայի զորամասերից կազմվեց հատուկ հարվածող խմբավորում՝ բրիգադի հրամանատար Գ. Սեմյոնովի գլխավորությամբ:

1920 թ. օգոստոսի 7–ին Գորիսի շրջանի Տեղ գյուղի շրջակայքում Կարմիր բանակի զորամասերը կռվի բռնվեցին հայկական զորամասերի հետ, որոնք չդիմացան և նահանջեցին Գորիս, այնտեղից էլ՝ Սիսիան:

Նահանջի ապահովումն իր վրա վերցրեց Ղափանից օգնության եկած զորամասը՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ: Այստեղ Նժդեհը վիրավորվեց, սակայն մերժեց բուժվելու համար Երևան գնալու առաջարկն և կրկին վերադարձավ Ղափան: Հանքերից Ղափանի գյուղացիական *խորհրդի նախագահությունը բողոքի նամակ ուղարկեց ՀՀ զինվորական նախարարին՝* Դրոյի նահանջի և թնդանոթներն իրենց չտրամադրելու մասին:

Օգոստոսի 8–ին խորհրդային զորամասերը վերագրավեցին Գորիսը, իսկ 9–ին՝ Սիսիանը (Ղարաքիլիսա) գյուղը, և Դրոն նորից նահանջեց Ղարալագյազ: Այսպիսով՝ 3–4 օրվա ընթացքում Գորիսի և Սիսիանի շրջաններում խորհրդային իշխանությունը վերահաստատվեց:

1920 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10–Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Լևոն Շանթի պատվիրակության Մոսկովյան առաքելության ձախողումից հետո խորհրդային կառավարությունը որոշեց Հայաստանում ստեղծել ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչություն՝ Բորիս Լեգրանի գլխավորությամբ, որը և պետք է Երևանում շարունակեր Մոսկվայում ընդհատված հայ–ռուսական բանակցությունները:

1920 թ. հուլիսին Բ. Լեգրանի 14 հոգուց կազմված պատվիրակությունը մեկնեց Անդրկովկաս, որի առաջնահերթ խնդիրն էր Զանգեզուրում Կարմիր բանակի և հայկական բանակի միջև զինված ընդհարման դադարեցումը և ՀՀ կառավարության հետ հաշտության պայմանագրի կնքումը:

Հասնելով Աղստաֆա՝ Բ. Լեգրանն այնտեղից դիմեց ՀՀ կառավարությանը՝ Երևան գալու համաձայնություն ստանալու համար, սակայն մերժում ստացավ: Մերժման պատճառաբանությունն այն էր, որ Լևոն Շանթի պատվիրակությունը, որը պետք է շարունակի բանակցությունները, դեռ չի վերադարձել Մոսկվայից:

Աղստաֆայից հասնելով Թիֆլիս՝ Բ. Լեգրանը նոր հեռագիր ուղարկեց Հայաստանի արտգործնախարար և վարչապետ Համո Օհանջանյանին: Այս անգամ ՀՀ կառավարությունը տվեց իր համաձայնու-

թյունը՝ պայմանով, որ բանակցությունները պետք է վարվեն ոչ թե Երևանում, այլ Թիֆլիսում:

Երեք օր տևած լարված բանակցություններից հետո 1920 թ. օգոստոսի 10–ին՝ Թիֆլիսում ՌԽՖՍՀ–ի Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց առաջին միջպետական համաձայնագիրը, որը մի կողմից ստորագրել էին Արշավիր Բաբալյանը և Արշակ Ջամալյանը, մյուս կողմից՝ Բ. Լեգրանը (Համաձայնագրի լրիվ տեքստը տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 248–249): Համաձայնագիրը բաղկացած էր 6 կետից: Համաձայնագրի սկզբում, մինչև կետերի թվարկումը, նշվում էր, որ այն կնքվում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության անկախության և լիակատար ինքնուրույնության ճանաչումից: Առաջին կետի համաձայն՝ 1920 թ. օգոստոսի 10–ի ժամը 12–ից ՌԽՖՍՀ և ՀՀ զորքերի միջև ռազմական գործողությունները համարվում էին դադարեցված:

Երկրորդ կետով ՀՀ զորքերն զբաղեցնելու էին Շահթախթ–Խոկ–Ազնաբերդ–Սուլթանբեկ–Բազարչայ գիծը, իսկ Ղազախի գավառում՝ մինչև հուլիսի 30–ը նրանց զբաղեցրած գիծը:

ՌԽՖՍՀ զորքերն զբաղեցնում էին Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան վիճելի շրջանները, բացառությամբ այն գոտուց, որտեղ տեղակայվելու էին ՀՀ զորքերը:

Երրորդ կետում նշվում էր, որ խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների ռազմակալումը չի կանխորոշում այդ տարածքների նկատմամբ ՀՀ կամ ԱՍԽՀ իրավունքների հարցը: Այդ ժամանակավոր ռազմակալմամբ ՌԽՖՍՀ–ը նկատի ունի բարենպաստ պայմաններ ստեղծել այդ երկու հանրապետությունների միջև տարածքային վեճերի լուծման համար այն հիմունքներով, որոնք կսահմանվեն ՌԽՖՍՀ և ՀՀ միջև ամենամոտ ապագայում կնքվելիք հաշտության պայմանագրով:

Չորրորդ կետով՝ կողմերը պայմանավորվում էին ռազմական գործողությունները դադարեցնելուն զուգընթաց դադարեցնել նաև ռազմական ուժերի կենտրոնացումը ինչպես վիճելի, այնպես էլ սահմանային տարածքներում:

Հինգերորդ կետով՝ երկաթուղու Շահթախթ–Ջուլֆա ուղեմասի շահագործումը հանձնվում էր Հայաստանի երկաթուղիների վարչությանը՝ պայմանով, որ այն չպետք է օգտագործվի ռազմական նպատակով:

Վեցերորդ կետով՝ ՌԽՖՍՀ–ն երաշխավորում էր հայկական կառավարական այն բոլոր զորամասերի զենքով ու հանդերձանքով անցումը Հայաստան, որոնք հայտնվել են խորհրդային զորքերի զբաղեցրած գծից այն կողմ:

Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, այդ նույն օրը՝ 1920 թ. օգոստոսի 10–ին, Սևրում դաշնակից տերությունները պայմանագիր էին ստորագրում Թուրքիայի հետ: Պատահական զուգադիպություն չէր դա, այլ դրանով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ցույց էր տալիս, որ չի ցանկանում վերջնականապես կորցնել Հայաստանը (Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 256):

Համաձայնագրի կնքումից հետո հայկական զորքերը դուրս բերվեցին Զանգեզուրից, սակայն զանգեզուրցիների պայքարը Գ. Նժդեհի գլխավորությամբ շարունակվեց:

Այնուհետև Գ. Գալոյանը նշում է, որ դաշնակից պետությունների կառավարությունները մեծ դժգոհությամբ ընդունեցին օգոստոսի 10–ի համաձայնագրի կնքումը: Նա վկայակոչում է Թիֆլիսում բրիտանական ներկայացուցիչ Հարրի Լուկի՝ իր կառավարությանն ուղարկած հեռագրերը, որոնցում հայերի կողմից նման համաձայնագրի ստորագրումը դիտվում է իբրև դավաճանություն Մեծ Բրիտանիայի հանդեպ, որից հայերը հենց նոր են մեծ քանակությամբ ռազմամթերք ստացել: Հեռագրերում խոսվում է նաև Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հավաստիացումների մասին, թե համաձայնագրի կնքումը հետապնդում է սոսկ ժամանակ շահելու նպատակ, իսկ իրականում Հայաստանի կառավարությունը չի փոխել իր հակաբոլշևիկյան դիրքորոշումը (Գ. Գ., էջ 257):

Արխիվային մի փաստաթղթի հիման վրա Գ. Գալոյանը գրում է, որ օգոստոսի 24–ին Երևան ժամանած ֆրանսիական գնդապետ Կորբեյլը ՀՀ վարչապետին բառացիորեն հայտարարել է, որ նշված համաձայնագիրը չափազանց վատ տպավորություն է գործել դաշնակիցների ներկայացուցիչների վրա, կարծես թե Հայաստանի կառավարությունը փոխել է իր կողմնորոշումը և այլևս չի ցանկանում պայքարել բոլշևիկների դեմ: Այդ տպավորությունը ցրելու համար Ալ. Խատիսյանը Լուկի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարում է, որ իր կառավարությունը ոչինչ ընդհանուր չունի բոլշևիկների հետ, իսկ վերջերս կնքած համաձայնագիրը նպատակ ունի ժամանակ շահել, կազմակերպել ռազմական ուժերը և հետ խլել բոլշևիկների կողմից գրավված տարածքները (Գ. Գ., էջ 258):

1920 թ. օգոստոսի 10–ի համաձայնագրին հանգամանորեն անդրադարձել է պրոֆեսոր Արամ Սիմոնյանը: Նա գտնում է, որ համաձայնագիրը խորհրդային կողմի դիվանագիտության հաջողություններից էր, քանի որ դրանով «վիճելի» տարածքների հարցը վերցվեց արևմտյան տերությունների դիվանագիտության ոլորտից և մտցվեց բոլշևիկյան Ռուսաստանի դիվանագիտության ոլորտը (Ա. Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը, էջ 159):

Ա. Սիմոնյանը գրում է, որ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, նույն օրը՝ օգոստոսի 10–ին, Հայաստանի զինվորական նախարարը հեռագրեց Դարալագյազում գտնվող Դրոյին և հանձնարարեց նրան հայտնել Ղափանի զորքերի հրամանատար Նժդեհին՝ թողնել Զանգեզուրը և առանց դիմադրության անցնել հանրապետության տարածքը՝ իր հետ բերելով ամբողջ զորքը: Սակայն Նժդեհը կտրականապես հայտարարեց, թե չի ենթարկվելու կառավարության հրամանին, մնալու է Կապարգողթում և շարունակելու է կռիվը: Ա. Սիմոնյանը գտնում է, որ վճռելով շարունակել կռիվը Կարմիր բանակի և ադրբեջանական ուժերի դեմ, Նժդեհը ելնում էր միայն ու միայն Հայաստանի և հայ ժողովրդի շահերից և ուրիշ կերպ վարվել չէր կարող: Ճակատագրական այդ որոշումը բխում էր նրա իսկ էությունից, ըմբոստ ու անկոտրում ոգուց, ափեր չճանաչող հայրենապաշտությունից, մայր ժողովրդի նկատմամբ անհուն սիրուց:

Հետագայում Գ. Նժդեհն այդ մասին գրել է. «Իմացականությամբ ու սրտով փոքրիկ էակներին է միայն հատուկ՝ կուրորեն կատարել վերեն տրված ամեն հրաման... Մարդկային իմացականության դեմ խորապես մեղանչում է նա, ով իրեն տրված հրամանը չի գործադրում ստեղծագործաբար:

Վտանգի ժամանակ, մասնավորապես, երբ մի երկրի և ժողովրդի լինել–չլինելու խնդիր կա, դավաճանություն է զինվորական կանոնագրի այս կամ այն հոդվածի տակ վատորեն թաքնվելը կամ անձնական պատասխանատվությունից փախչելը:

Նման պատմական պայմաններում ղեկավարի չափանիշը, նրա հարցումը պետք է լինի — ինչ կթելադրե երկրիս ու ցեղիս հավիտենական շահը, և ոչ միայն՝ օրվա իշխանությունը (Ա. Ս., էջ 161–162)»:

Այդ ամենից զատ, կարծում ենք, որ կառավարության հրամանին չենթարկվելու պարագան հեշտացնում էր նաև այն, որ Նժդեհի գլխավորած ուժերը ոչ թե կանոնավոր, կառավարական զորքեր էին, այլ հիմնականում ժողովրդական վաշտեր, որոնք կարող էին և իրենց դուրս համարել համաձայնագրի շրջանակներից:

Ա. Սիմոնյանը օբյեկտիվորեն է գնահատում դաշնակից պետությունների վերաբերմունքը, որոնք օգոստոսի 10–ի համաձայնագրի ստորագրումը դիտեցին իբրև Անտանտի ուխտին «փոքր դաշնակցի» բացահայտ դավաճանություն: Նա գրում է, որ Անդրկովկասում անգլիական գերագույն կոմիսար Լուկկը և ֆրանսիական բարձրագույն կոմիսար Դը Մարտելը, որոնց նստավայրը Թիֆլիսն էր, համաձայնագրի կնքման հաջորդ օրն իսկ իրենց մոտ հրավիրեցին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին, իրենց զայրույթը հայտնեցին ու նրանից հանգամանալի բացատրություն պահանջեցին: Անգլիական և Ֆրանսիական կոմիսարներն ուղղակի հայտարարեցին, որ իրենք կասկածի տակ են դնում Անտանտի նկատմամբ բարեկամաբար տրամադրված լինելու Հայաստանի հավաստիացումները: Տ. Բեկզադյանը և նրա պաշտոնակիցները փորձեցին համոզել իրենցից պատասխան պահանջողներին, որ բոլշևիկների հետ կնքած համաձայնագիրը լոկ զինադադար է, որ Հայաստանի կառավարությունը հավատարիմ է Անտանտի տերություններին ու շարունակում է մնալ հակախորհրդային դիրքերում (Ա. Ս., 162–163):

Ա. Սիմոնյանը հանգում է այն կարևոր հետևությանը, որ Սևրի պայմանագրի շրջանակներում Հայաստանին ռեալ օգնության ձեռք չմեկնելով և քեմալական զավթիչներից նրան պաշտպանելու միջոցներ չձեռնարկելով, «դաշնակից» տերությունները միաժամանակ ամեն կերպ խոչընդոտում էին Ռուսաստանի հետ նրա մերձեցմանը և այդ ընդհանուր քաղաքականությունից ելնելով էլ կտրականապես հանդես եկան համաձայնագրի դեմ: «Ճնշում գործադրելով Հայաստանի Հանրապետության կառավարության վրա,— գրում է Ա. Սիմոնյանը,— «դաշնակիցները» դրանով իսկ խաղաքարտի վրա էին դնում Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությունը: Մի կողմից նրանք հրաժարվում էին թուրքական վտանգի դեմ ռազմական ռեալ օգնություն ցույց տալուց, մյուս կողմից՝ արգելում էին, որպեսզի Հայաստանը հաշտության եզրեր գտնի Ռուսաստանի հետ (Ա. Ս., էջ 164–165):

Այնուհետև Ա. Սիմոնյանը նշում է, որ Թիֆլիսում և Երևանում տեղի ունեցած հանգամանալի բացատրություններից հետո Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները համոզվեցին, որ, այնուամենայնիվ,

Հայաստանի կառավարությունը հավատարիմ է Անտանտի ուխտին և շարունակում է մնալ հակաբոլշևիկյան դիրքերում:

Իր հերթին խորհրդային կառավարությունը քեմալականների ճնշման տակ Հայաստանի իշխանություններից պահանջում էր հրաժարվել Սևրի դաշնագրից, որը Հայաստանի համար նշանակելու էր հարաբերությունների խզում արևմտյան տերությունների հետ: Եվ Հայաստանի կառավարությունը գերադասեց չհրաժարվել Սևրից ու հավատարիմ մնալ Անտանտի տերություններին (Ա. Ս., էջ 170):

Օգոստոսի 10–ի համաձայնագրին անդրադարձել է սփյուռքահայ հեղինակ Ռ. Փիրումյանը: «Ճակատագրի խաղով,— գրում է նա,— այս համաձայնագիրը առաջին պաշտոնական փաստաթուղթն էր երկու պետությունների միջև ստորագրված: Մի յուրահատուկ հակասություն: Մի կողմից՝ դա նշանակում էր պարտություն և հողերի կորուստ Հայաստանի համար, մյուս կողմից՝ փաստում էր Ռուսաստանի ճանաչումը Հայաստանի Հանրապետության:

Թիֆլիսում ստորագրված այս առժամյա համաձայնագիրը մեծ դժգոհություն առաջ բերեց դաշնակիցների մոտ: Թե՛ Անգլիո և թե՛ Ֆրանսիայի ներկայացուցիչները, որոնք զլացել էին Խ. Ռուսաստանի դեմ Հայաստանի կառավարության տարած պայքարի մեջ որևէ օգնություն ցույց տալ, այժմ մեղադրում էին նրան՝ Դաշնակիցների թշնամիների հետ համաձայնագիր ստորագրելու համար (Ռուբինա Փիրումյան. Հայաստանը ՀՀՌ–բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917–1921). Երևան, 1997, էջ 233–234):

1920 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 24–Ի ՌՈՒՍ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1920 թ. ամռանը՝ռուս–թուրքական մերձեցումն առավել ակնհայտ դարձավ, որը և ոգևորում էր թուրք–ադրբեջանական ազգայնամոլներին: Այդ ոգևորությունն աճեց հատկապես 1920 թ. հունիսի 1–ին ԱՄՆ–ի կոնգրեսում Հայաստանի մանդատը մերժվելուց հետո: Մուստաֆա Քեմալը ձգտում էր ռուս–թուրքական մերձեցումն օգտագործել Հայաստանի նկատմամբ իր նվաճողական պլաններն իրականացնելուն:

Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու և բարեկամության դաշնագիր կնքելու նպատակով 1920 թ. հուլիսի 19–ին

Մոսկվա հասավ Քեմալական Թուրքիայի պատվիրակությունը՝ արտգործմինիստր Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Յուսուֆ Քեմալ բեյը, Իբրահիմ Թալի բեյը, Օսման բեյը, գլխավոր շտաբի սպա Սեյֆին:

Ռուս–թուրքական բանակցություններն սկսվեցին 1920 թ. հուլիսի 24–ին և տևեցին շուրջ մեկ ամիս, երբ արդեն հայ–ռուսական բանակցությունները դադարեցվել էին:

Գ. Չիչերինի հետ հանդիպելուց հետո նախնական բանակցությունները թուրքական պատվիրակության հետ վարում էր արտգործժողկոմի տեղակալ, հայազգի Լևոն Կարախանը:

Ակադեմիկոս Գ. Գալոյանը, որը լավագույնս վերլուծել է ռուս–թուրքական բանակցությունների շուրջ եղած հավաստի փաստաթղթերը, հայտնաբերել նորերը և կատարել միանգամայն օբյեկտիվ գնահատումներ, նշում է, որ բանակցությունների առաջին փուլում թուրքական պատվիրակության նպատակն էր հասնել Անդրկովկասի վրայով դեպի Ռուսաստան ճանապարհ բացելուն: Իսկ դա հնարավոր էր նախ և առաջ Հայաստանի վրայով, որին կտրականապես դեմ էր ՀՀ կառավարությունը: Այդ առնչությամբ բանակցությունները մի քանի օր դադարեցվեցին, և դրանք վերսկսվելուց հետո Լ. Կարախանն առաջարկեց թուրքերին՝ դադարեցնել Հայաստանի վրա նախապատրաստվող հարձակումը և հնարավորություն տալ, որպեսզի իրենք հայկական կողմի հետ կարողանան լուծել Հայաստանի վրայով տարանցիկ ճանապարհի հարցը:

Այդ առաջարկը թուրքերը պայմանավորեցին Լ. Կարախանի՝ ազգությամբ հայ լինելու հանգամանքով և հարց բարձրացրին, որ բանակցությունները վարի ինքը՝ Չիչերինը: Թուրքերի այդ պահանջը բավարարվեց:

Ինչպես գրում է Գ. Գալոյանը, թուրքական պատվիրակությունը պնդում էր, որ Ռուսաստանն անհապաղ օգնություն հատկացներ Թուրքիային՝ իբր Անտանտի իմպերիալիստների դեմ պայքարելու, սակայն իրականում Հայաստանի վրա հարձակվելու նպատակով: Նման պնդումներին Չիչերինը պատասխանում է, որ Ռուսաստանն ինքը ծանր դրության մեջ է և չի կարող անհապաղ օգնել Թուրքիային:

Երբ փոքր ընդմիջումից հետո օգոստոսի 17–ին բանակցությունները վերսկսվեցին, թուրքերն առաջարկեցին կնքել պաշտպանողական և հարձակողական դաշինք, որը մերժվեց: Այնուհետև նրանք հանդես ե-

կան բարեկամության և եղբայրության պայմանագիր կնքելու առաջարկությամբ, որն արդեն ընդունելի էր ռուսական կողմի համար: Սակայն նման պայմանագիր կնքելու համար ռուսական կողմը թուրքերի համար անսպասելի պայմաններ առաջադրեց: Ինչպես նկատում է Գ. Գալոյանը, այդ պահանջներից մեկը վերաբերում էր Հայաստանին, որի հետ Ռուսաստանը օգոստոսի 10–ին համաձայնագիր էր կնքել ու Շահթախթ–Զուլֆա երկաթուղին թողել նրան: Տեղեկանալով այդ մասին՝ թուրքական պատվիրակությունը բողոք ներկայացրեց Չիչերինին և նույնիսկ սպառնաց հեռանալ Մոսկվայից:

Չիչերինը թուրքերին բացատրեց, որ Ռուսաստանը չի կարող թույլ տալ, որ թուրքերն իրենց ուժերով բացեն ճանապարհը, որը կնշանակի պատերազմ Հայաստանի և Թուրքիայի միջև: Թուրքերին նման պատասխանը չբավարարեց և նրանք պահանջեցին հանդիպել Վ. Ի. Լենինին: Վերջինս տատանվում էր և միայն Չիչերինի պնդմամբ հանդիպումը կայացավ: «Առ այսօր մեր ձեռքի տակ չկա հավաստի փաստաթուղթ,— այդ առթիվ գրում է Գ. Գալոյանը,— որը վկայեր, թե իրոք ինչ բնույթ է կրել թուրք պատվիրակների խոսակցությունը Լենինի հետ, և թե ինչ է «խոստացել» Լենինը նրանց (Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 264)»: Այդ տեսակցությունից հետո էլ թուրքերի հետ բանակցությունները շարունակել է Չիչերինը: Բանակցությունների ընթացքը լուսաբանելու նպատակով Գ. Գալոյանը վկայակոչում է թուրք պատմաբան Ռ. Սալահիի «Թուրքական դիվանագիտությունը 1918–1923 թթ.: Մուստաֆա Քեմալը և թուրքական ազգային շարժումը, Լոնդոն, 1975» գիրքը, որի համապատասխան հատվածը շարադրված է Բեքիր Սամի բեյի վկայությունների հիման վրա: Ըստ այդ շարադրանքի՝ բանակցությունների ժամանակ Չիչերինը պնդել է, թե Թուրքիան Հայաստանին պետք է տա Վանի և Բիթլիսի արևելյան մարզերից որոշ տարածքներ, որին ի պատասխան՝ Բեքիր Սամին հայտարարել է, որ Թուրքիայում հայկական վիլայեթներ չկան, և հայերը ոչ մի տեղ մեծամասնություն չեն կազմում: Չիչերինը զգուշացրել է, որ Ռուսաստանը կօգնի Թուրքիային, եթե նա Հայաստանին զիջի նշված տարածքները: Թուրքական պատվիրակության ղեկավարն այդ պահանջը համարել է Թուրքիան մասնատելու Անտանտի վարած քաղաքականությանը համազոր: Չիչերինն առարկել է, ասելով, որ Անտանտը ձգտում է ստեղծել Մեծ Հայաստան, իսկ Ռուսաստանն ընդամենը խնդրում է Արևմտյան Հայաստանից մի փոքր տարածք միացնել Հայաստանին: Մ. Քեմալը նման խնդրանքը համարել է «իմպերիալիստական պահանջ» (Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 264):

Ռուս–թուրքական բանակցություններն ավարտվեցին 1920 թ. օգոստոսի 24–ին: Կազմվեց «Ռուսաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի նախագիծ», որը նախաստորագրվեց կողմերի պատվիրակությունների ղեկավարների կողմից: Բեքիր Սամին հայտարարեց, որ ինքը չի կարող ստորագրել պայմանագիրը՝ առանց նրա նախագիծն իր կառավարության հետ համաձայնեցնելու: Բանակցություններն ընդհատվեցին, և թուրքական պատվիրակությունը վերադարձավ Անկարա՝ իր հետ տանելով թուրքերին չբավարարող պայմանագրի նախագիծը, ինչպես նաև մեկ և կես միլիոն ռուբլի ոսկով, որը Թուրքիային էր տրամադրել Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը:

Նկատի ունենալով, որ տարբեր աշխատություններում օգտագործված են այդ փաստաթղթի աղավաղված տեքստերը, ակադեմիկոս Գալուստ Գալոյանը հարկ է համարել ութ հոդվածներից բաղկացած պայմանագիրն ամբողջությամբ, առանց թարգմանելու՝ ռուսերեն զետեղել իր նշված մենագրությունում (էջ 267–268): Այն տեղ է գտել նաև «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. Քաղաքական պատմություն, Երևան, 2000, էջ 258–259) փաստաթղթերի և նյութերի ժողովածուում, որի պատասխանատու խմբագիրներն են ակադեմիկոս Գ. Գալոյանը և պրոֆեսոր Վ. Ղազախեցյանը:

Մինչ այդ, նախագծի տեքստը պաշտոնապես ոչ մի տեղ չի հրատարակվել: Այն շրջանառության մեջ է դրվել Մոսկվայում 1920 թ. Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադ Զեբեսոյի՝ տարիներ անց հրատարակած հուշերում, որից էլ օգտվել են տարբեր հեղինակներ: Ինքը՝ ակադեմիկոս Գ. Գալոյանը, օգտվել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահպանված պայմանագրի նախագծի տեքստից:

Պայմանագրի նախագծի առաջին հոդվածում կողմերը պայմանավորվում էին չճանաչել այս կամ այն կողմին ուժով պարտադրված որևէ պայմանագիր կամ միջազգային ակտ: ՌԽՖՍՀ–ը պարտավորվում էր ոչ մի դեպքում չճանաչել Թուրքիային վերաբերող և Թուրքիայի ազգային կառավարության կողմից չճանաչված միջազգային ակտերը:

Թուրքիա հասկացության տակ ենթադրվում էին այն տարածքները, որոնք մտցված էին Թուրքիայի Ազգային ուխտի մեջ:

Փաստորեն Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր չճանաչել Սևրի պայմանագիրը, որը օգոստոսի 14–ի հայտարարությամբ

չէր ճանաչել Մ. Քեմալը: Իսկ հոդվածի վերջին պարբերությամբ պաշտոնապես չեղյալ էր համարվում ՌԽՖՍՀ ժողկոմսովետի 1917 թ. դեկտեմբերի 31–ի դեկրետը «Թուրքահայաստանի մասին»:

Երկրորդ հոդվածով Թուրքիան ընդունում էր Բրեստ–Լիտովսկի պայմանագրի ուժը կորցրած լինելը, որը չեղյալ էր հայտարարել Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը՝ 1918 թ. նոյեմբերին:

Երրորդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը փաստորեն իր վրա էր վերցնում Հայաստանի վրայով դեպի Թուրքիայի տարանցիկ ճանապարհի բացումը:

Հաջորդ հոդվածները վերաբերում էին կողմերի քաղաքացիների իրավունքներին, Սև ծովի և նեղուցների միջազգային կարգավիճակի կարգավորմանը, տնտեսական, ֆինանսական, հյուպատոսական և այլ համաձայնագրեր կնքելուն:

Գ. Գալոյանն ընդգծում է, որ քեմալականները, վախենալով, որ Ռուսաստանը կարող է առաջիկայում պնդել Արևմտյան Հայաստանի վիլայեթներից որոշ տարածքներ Հայաստանին տալու իր պահանջի վրա, ձգտում էին օր առաջ իրենց հաշիվները մաքրել Հայաստանի Հանրապետության հետ՝ նրան ոչնչացնելու միջոցով: Նա կրկին վկայակոչում է Ռ. Սալահիի գիրքը, որտեղ թուրք պատմաբանը անսքող գրում է, թե Հայաստանը ոչ միայն պահանջներ ուներ Թուրքիայի արևելյան մարզերի նկատմամբ, այլևս ստեղծել էր մի գործուն արգելապատ Թուրքիայի և Ռուսաստանի միջև՝ խոչընդոտելով բոլշևիկներից արդյունավետ օգնություն ստանալուն: Թուրք պատմաբանը չի մոռանում նաև այն վախը, որ ունեին քեմալականները Սևրի պայմանագրով Մեծ Հայաստան ստեղծելու նկատմամբ: Ըստ Սալահիի՝ այդ ամենը դրդեցին քեմալականներին որոշում ընդունել Երևանի կառավարությանը ոչնչացնելու մասին և Հայաստանի տարածքը կրճատել այնպես, որպեսզի նա չեղյալ հայտարարեր Սևրի պայմանագիրը և բացեր ճանապարհը Ռուսաստանի և Թուրքիայի միջև: «Ահա այն իրական նպատակները,— այդ առթիվ ամենայն իրավամբ շեշտում է Գ. Գալոյանը,— որոնք, անկախ օգոստոսի 24–ի պայմանագրի չստորագրված և չվավերացված նախագծից, դրդելու էին Թուրքիային 1920 թ. աշնանը ծեռնամուխ լինելու իրենց նպատակների իրագործմանը (Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 269)»:

Գիտնականը ցավ ու զարմանք է հայտնում, որ թուրք պատմաբաններն այդքան հստակորեն ու անսքող նշում են Հայաստանի վրա քեմալականների ծեռնարկած ագրեսիայի իրական դրդապատճառները, սակայն դրանից հետո էլ որոշ հայ և, մասնավորապես, սփյուռքահայ պատմաբաններ շարունակում են այդ ագրեսիայի գլխավոր պատճառ համարել խնդրո առարկա պայմանագրի նախագիծը՝ համարելով այն Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի համագործակցության դաշինք: Ափսոսանք հայտնելով, որ ցավոք նման անհիմն պնդումներով աշխատություններ են հրատարակվում նաև Հայաստանում, մեծարգո գիտնականը նկատում է, որ մեղմ ասած, այդպիսիք չեն ծառայում հայ ժողովրդի շահերին: Մասնավորապես, նա նկատի ունի սփյուռքահայ հեղինակներ Ռուբինա Փիրումյանի «Հայաստանը Հ.Յ.Դ.–բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917–1921, Երևան, 1997» և Գաբրիել Լազյանի «Հայաստան և Հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1991» աշխատությունները:

1925 թ. հունիսի 18–ին Մարսելից Ս. Վրացյանին հասցեագրված Լևոն Շանթի նամակով Գ. Գալոյանը ժխտում է պատմագրության մեջ Լևոն Կարախանին ուղղված մեղադրանքը, թե իբր վերջինս մեղսակից է եղել Հայաստանի դեմ ուղղված թուրքական դավերին: Իսկ նամակում ասված է, որ Լենինը կողմնակից էր նույնիսկ ոչ բոլշևիկյան Հայաստանի մնալուն, և Լ. Կարախանը նույնպես այդ ուղղությամբ էր աշխատում: Նա դեմ էր նաև Չիչերինին միանշանակորեն հակահայկական տրամադրությունների մեջ մեղադրելուն, որովհետև վերջինս լավ էր հասկանում Հայաստանի ռազմավարական նշանակությունը Ռուսաստանի համար (Գ. Գ., էջ 271):

Վկայակոչելով «Հայորդի. Սովետական Հայաստան և պատմական ճշմարտություններ՝ փաստերու լույսին տակ. Բեյրութ, 1949, էջ 57» և Զավեն Մսրյանի «Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի) դաշնագիրերը. Բեյրութ, 1979, էջ 43» աշխատությունները, Գ. Գալոյանը ցույց է տալիս, որ ինչպես Մոսկվայում քեմալական Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադը, այնպես էլ թուրք պատմաբան Թևֆիկ Բյուիկօղլուն հավաստում են, որ 1920 թ. օգոստոսի 24–ի ռուս–թուրքական պայմանագրի նախագծի չհաստատման հիմնական պատճառն այն էր, որ ռուսները Կարինը, Վանը, և Բիթլիսը հայերին զիջելու հարց էին դնում (Գ. Գ., էջ 272):

Այնուամենայնիվ, Գ. Գալոյանը Խորհրդային Ռուսաստանի կառավարության վրայից չի վերցնում մեղքի այն բաժինը, որ նա ունեցել է Հայաստանի դեմ 1920 թ. սեպտեմբերին Թուրքիայի սանձազերծած ագրեսիայի հարցում: Այդ մեղքի բաժինն այն էր, որ՝ բանակցությունների

ժամանակ ռուսական կողմը վճռականորեն չպնդեց, որպեսզի թուրքերն ընդհանրապես հրաժարվեն Հայաստանի նկատմամբ իրենց ագրեսիվ նկրտումներից, ինչպես հունիսին, երբ թուրքերն ստիպված եղան հետ կանգնել Հայաստանի վրա արդեն իսկ նախապատրաստված հարձակումից: «Հայ–ռուսական բանակցությունների ժամանակ հայկական կողմի անզիջում դիրքը, քեմալականների դեմարշը, Անտանտի տերությունների փորձերը՝ օգտվելու Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև առաջացող ճեղքվածքից, փոխեցին ռուսական կառավարության դիրքորոշումը: Այդ անհեռատես շրջադարձը հետագայում ողբալի հետևանքներ ունեցավ և՛ Հայաստանի, և՛ Ռուսաստանի համար»,— ամփոփում է իր միտքը Գ. Գալոյանը (Գ. Գ., էջ 273):

1920 Թ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1920 թ. հայ–թուրքական պատերազմին իրենց աշխատություններում տարբեր ժամանակներում անդրադարձել են շատ հեղինակներ՝ Ծ. Աղայան, Ս. Ալիխանյան, Ա. Եսայան, Ս. Կարապետյան, Գ. Ղարիբջանյան, Բ. Լալաբեկյան, Գ. Գալոյան, Մ. Արզումանյան, Ռ. Ղազանչյան, սփյուռքի հեղինակներից՝ Ս. Վրացյան, Գ. Լազյան, Ռ. Փիրումյան և ուրիշներ: Սակայն հիմնահարցի ըստ ամենայնի հետազոտությանը հատուկ ծավալուն մենագրություն է նվիրել պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Զոհրաբյանը՝ «1920 թ. թուրք–հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997» խորագրով:

Իր մեծարժեք աշխատության առաջին մասի երկրորդ գլուխը է. Զոհրաբյանը նվիրել է պատերազմի դիվանագիտական նախապատրաստության լուսաբանմանը և այդ առնչությամբ անդրադարձել է Լևոն Շանթի մոսկովյան առաքելությանը, 1920 թ. օգոստոսի 10–ի հայ–ռուսական համաձայնագրին, իսկ առավել հանգամանորեն՝ 1920 թ. օգոստոսի 24–ի ռուս–թուրքական պայմանագրի նախագծին:

Նշելով, որ Թուրքիայի ազգային մեծ ժողովը հավանություն չտվեց պայմանագրի նախագծին, է. Զոհրաբյանը եզրակացնում է, որ պայմանագրի չստորագրման միակ պատճառը տարածքային հարցերում կողմերի մոտեցումների տարբերությունն էր: Այդ առթիվ նա վկայակոչում է թուրք պատմաբան Թևֆիկ Բյուիքօղլու և Մոսկվայում քեմալական դեսպան Ալի Ֆուադի խստովանությունները (է. Զոհրաբյան, նշվ. աշխ., էջ 144):

Ռուս–թուրքական պայմանագրի կապակցությամբ խիստ կարևորում ենք է. Զոհրաբյանի հետևյալ մտահոգությունը. «Մեր օրերում, երբ

հետաքրքրությունը Հայաստանի առաջին հանրապետության նկատմամբ անչափ մեծացել է, մամուլի էջերում հաճախ կարելի է հանդիպել հոդվածների (դրանց հեղինակները երբեմն նույնիսկ պատմաբան չեն, կամ էլ հարցի նեղ մասնագետներ չեն), որոնցում ոչ միայն մեծ տեղ են բռնում կոպիտ սխալներն ու իրականության խեղաթյուրումները, այլև չփաստարկված, անհիմն հայտարարությունները այս կամ այն հարցի կապակցությամբ: Դրանց շարքին է պատկանում և այն պնդումը, թե 1920 թ. ամռանը քեմալականների ու Խորհրդային Ռուսաստանի միջև գաղտնի պայմանագիր է կնքվել Հայաստանի բաժանման մասին, և որ այն պետք է գտնել ու հրապարակել: Մինչդեռ ոչ արխիվներում և ոչ էլ օտար կամ խորհրդային հեղինակների ու պետական գործիչների մոտ մենք նման բանի գոյության մասին ամենաանուղղակի ու հեռավոր ակնարկի անգամ չենք հանդիպել: Մեր կարծիքով նման պայմանագիր չի եղել և բացի այդ նրա կարիքը նույնիսկ չկար էլ, քանի որ, ինչպես տեսանք, օգոստոսի 24–ի պայմանագրի նախագծով Խորհրդային կառավարությունը ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը», հետևապես և Թուրքիայի իրավունքը Բաքուի և Կարսի մարզերի նկատմամբ... Ուրեմն պետք է խոսել ոչ թե ինչ որ գաղտնի պայմանագրի, այլ օգոստոսի 24–ի հայտնի պայմանագրի նախագծի մասին, որի պատճենը պահվում է մեր պետական արխիվում (է. Զ., էջ 145)»:

Խորամուխ լինելով փաստերի մեջ՝ է. Զոհրաբյանը եզրակացնում է, որ Խորհրդային կառավարությունը, ընդառաջելով Անտանտի դեմ պայքարողի քողի տակ հանդես եկող թուրք ազգայնականներին, այնուամենայնիվ, Հայաստանն ամբողջությամբ չէր հանձնում նրանց հոշոտմանը: Ասվածը համոզիչ դարձնելու համար նա վկայակոչում է Կարաբեքիրի դժգոհությունը Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունից, *ինչպես նաև թուրք գործիչ Հիքմեթ բեյի խոստովանությունը*, թե իրենք հանգամանքների բերումով ստիպված եղան հարձակվել Հայաստանի վրա՝ հնարավորություն չունենալով այդ հարցը քննարկել Խորհրդային Ռուսաստանի հետ, որի հետ պայմանավորվածություն կար հարձակման դեպքում Սարիղամիշից այն կողմ չանցնել (է. Զ., էջ 148):

է. Զոհրաբյանը վեր է հանում նաև թուրքերի ծավալած դիվանագիտական այն աշխատանքը, որի շնորհիվ ապահովվեց հայ–թուրքական պատերազմի դեպքում Վրաստանի բացարձակ չեզոքության պահպանումը, և որի դիմաց Վրաստանը պետք է ստանար Բորչալուի և Ախալքալաքի գավառները և Արդահանի շրջանը:

Հայաստանի վրա քեմալականների հարձակման նախապատրաստման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվեց նաև Կոմինտերնի գործկոմի նախաձեռնությամբ 1920 թ. սեպտեմբերի 1–7–ին Բաքվում անցկացված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի օրերին (համագումարի աշխատանքների մասին մանրամասն տես Ա. Բ. Հարությունյան (Հարենց). Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Երևան, 1960): Համագումարին մասնակցում էին 26 երկրների 1891 պատվիրակներ, որոնցից 150–ը հայ բոլշևիկներ էին: Համագումարի ամբիոնից կոչեր էին հնչում ոչնչացնել «իմպերիալիստական» Հայաստանը, որն իբր թե պատրաստվում է Վրաստանի և Պարսկաստանի հետ դաշնակցած հարձակվել «հեղափոխական» Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի վրա:

1920 թ. սեպտեմբերի 17–ին՝ համագումարի ավարտից 10 օր անց, Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի և գործողության Խորհրդի նախագահությունը, որի մեջ էին Ս. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը, Ե. Ստասովան և ուրիշներ, ընդունեցին որոշում, որտեղ ասված էր, որ, իրոք, Անգլիայի օգնությամբ Հայաստանը՝ Վրաստանի և Պարսկաստանի հետ դաշնակցած, պատրաստվում է շուտով հարձակվել Խորհրդային Ադրբեջանի վրա: Եվ եթե հենց սեպտեմբեր ամսվա ընթացքում չհաջողվի կապ հաստատել Թուրքիայի հետ և Ռուսաստանը նրան ռեալ օգնություն ցույց չտա, թուրքական ազգային շարժումը կճնշվի, որը կհանգեցնի ընդհանրապես Արևելքում հեղափոխական շարժումների ճնշմանը: Դա հնարավորություն կտա Անգլիային՝ իր դեմ ուղղված մուսուլմանական աշխարհի շարժումն ուղղել Խորհրդային Ռուսաստանի դեմ: Հետևությունը մեկն էր՝ Խորհրդային Ռուսաստանի և համաշխարհային հեղափոխության համար կործանարար այդ հետևանքներից խուսափել կարելի է միմիայն թուրքական հեղափոխական զորքերի հետ միասին Հայաստանի վրա հարձակվելու միջոցով՝ սեփական ժողովրդին շահագործող դաշնակների լուծը տապալելու դրոշի տակ:

Երեք կետերից բաղկացած այս ընդարձակ որոշումն անմիջապես ուղարկվեց Երկրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտե, ՌԿ(բ)Կ Կենտկոմ և ՌԽՖՍՀ արտգործժողկոմատ:

Մինչդեռ խորհրդային պատմագրությունը ժամանակին կամ լռության էր մատնում նշված փաստերը, կամ Հայաստանն էր ներկայացվում իբրև ագրեսոր:

Հարկ է նշել նաև, որ խորհրդահայ պատմագրության մեջ Հայաստանի նախահարձակ լինելու վարկածը 1960–ականների կեսերից սկսած մերժվեց (տե՛ս Սարիբեկ Կարապետյան, 1920 թ. հայ–թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965):

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ և ԸՆԹԱՑՔԸ

Հայաստանի և Թուրքիայի միջև փաստական պատերազմական դրություն գոյություն ուներ դեռևս 1920 թ. հունիսից, երբ սահմանային լուրջ ընդհարումներ սկսվեցին Օլթիի շրջանում: Բանն այն է, որ Մուդրոսի զինադադարի համաձայն՝ թուրքերը պետք է հետ քաշվեին ռուս–թուրքական 1914 թ. սահմանից այն կողմ, սակայն նրանք հրաժարվում էին մաքրել Օլթին՝ մեջտեղ բերելով Բրեստ–Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Այդ հողի վրա սահմանային ընդհարումները չդադարեցին ընդհուպ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը:

Սեպտեմբերի 9–ին թուրքերը թնդանոթային կրակ բացեցին Վասկուտ սարի ուղղությամբ և հարձակում սկսվեց, բայց հայկական ուժերը նրանց հետ մղեցին:

Սեպտեմբերի 10–ին թուրքական հարձակումը վերսկսվեց, սակայն հայկական զորքը պատասխան հարված տվեց և երկօրյա մարտերից հետո գրավեց Կողբ գյուղը և աղահանքերը:

Համադրելով հայ–թուրքական պատերազմի սկսման վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ գոյություն ունեցող ամենատարբեր ամսաթվերը, հարցի խորագիտակ հետազոտող Է. Զոհրաբյանը հանգում է այն հետևության, որ Հայաստանի վրա թուրքական ընդհանուր արշավանքի սկիզբ պետք է համարել 1920 թ. սեպտեմբերի 23–ի լույս 24–ի գիշերը:

Ի մի բերելով զանազան տեղեկություններ՝ Է. Զոհրաբյանը եզրակացնում է, որ Հայաստանի վրա արշավող թուրքական զորքերի ընդհանուր թիվն անցնում էր 50 հազարից, որը շատ լավ էր զինված և ուներ ինքնաթիռներ, մինչդեռ հայերն ունեին ընդամենը երեք ինքնաթիռ, որոնցից երկուսը չէին գործում: Մինչդեռ հայկական հրամանատարությունը, մինչև Կարսի անկումը, թուրքական ուժերի թիվը հաշվում էր 4–5 հազար սվին:

Ինչպես նշում է Է. Զոհրաբյանը, հայկական հրամանատարությունը ռեալ պատկերացում չուներ թուրքական ուժերի մասին և նույնիսկ տեղյակ չէր, թե ինչ է կատարվում սահմանից այն կողմ: ՀՀ արտգործնախարարության քարտուղար Հակոբ Տեր–Հակոբյանի վկայությամբ՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի տվյալներով՝ 1920 թ. Քեմալի տրամադրության տակ կար ընդամենը 7–8 հազար զորք, որոնց պարտականությունն էր պահպանել Թուրքիայի սահմանները և արևելյան նահանգները: Իսկ Համբարձում Տերտերյանը վկայում է, որ հայկական պետական շրջաններում այն կարծիքն էր տիրում, թե քեմալականների հետ բախման պարագայում հայկական զորամասերը հեշտությամբ կարող են գրավել Էրզրումը և Էրզրումի բարձրավանդակը:

Հավանաբար նման թյուր պատկերացման հետևանքով էր, որ Ս. Վրացյանի վկայությամբ, պատերազմն սկսելու պահին ամբողջ ճակատում՝ Սուրմալուից մինչև Օլթի, հայկական ուժերի թիվը 6000–ից չէր անցնում, որից շուրջ 2500–ը՝ Սուրմալուում, մնացածը՝ Կարսի ճակատում (Ս. Վ., էջ 427):

Է. Զոհրաբյանի հաշվարկներով՝ թուրքական հարձակման հիմնական ուղղությունների վրա՝ Սուրմալուի և Կարս–Ալեքսանդրապոլ ճակատներում, հայերն ունեցել են ընդամենը մոտ 12.000 սվին, որը չափազանց քիչ էր ամեն տեսակետից հայկական բանակին գերազանցող թուրքական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար (Է. Զ., էջ 173–174): Նշվում է նաև հայ նորակոչիկների անպատրաստ լինելը և աղետալի չափերի հասնող դասալքությունը:

Քեմալական բանակի անվիճելի գերազանցության հետևանքով սեպտեմբերի վերջին օրերին տեղի ունեցած մի շարք համառ կռիվներից հետո հայկական բանակն սկսեց նահանջել: Սեպտեմբերի 29–ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, իսկ 30–ին՝ Մերդենեկը: Դրանով պատերազմի առաջին շրջանն ավարտվեց: Այդ շրջանում հաջողությունն ամբողջովին թուրքերի կողմն էր, սակայն Իգդիրի և Շահթախթի շրջաններում նրանք առաջխաղացում գրեթե չունեցան:

Պատերազմի առաջին իսկ օրերից ՀՀ կառավարությունը կոնկրետ քայլերի դիմեց՝ ուժերը մոբիլիզացնելու ուղղությամբ: Այդ արթիվ Ս. Վրացյանը գրում է. «Հայաստանը լարեց իր բոլոր ուժերը: Սեպտեմբերի 30–ին կառավարությունը արտակարգ նիստում երկիրը հայտարարեց պատերազմական դրության մեջ: Մինչև 35 տարեկանները զենքի տակ առավ: Խիստ օրենքներ սահմանեց դասալիքների դեմ: Զինվո-

ական նախարարությանը տվեց արտակարգ լիազորություններ, նրան ենթարկեց երկաթուղիները, ռադիոկայանները և փոխադրության միջոցները: Որոշեց արագացնելու համար կառավարության գործունեությունը և շրջաններում հեղինակավոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով, նախարարների մի մասին և մի շարք գործիչներ ռազմաճակատ և գավառներ ուղարկել: Ալեքսանդրապոլ ուղարկվեցին Ա. Ջամալյանը և Գ. Ղազարյանը, Կարս՝ Ս. Վրացյանը և Ա. Բաբալյանը, Սուրմալու՝ Ս. Արարատյանը, Իջևան՝ Ա. Գյուլխանդանյանը, Նոր–Բայազետ՝ Ս. Մելիք–Յոլչյանը, Աշտարակ՝ Խորհրդարանի անդամներ Հ. Տեր–Հակոբյանը և Հ. Տերտերյանը: Կենտրոնում մնացին Հ. Օհանջանյանը և Ռ. Տեր–Մինասյանը: Կառավարությունը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: Զինվորական նախարարի հրամանով Երևանի և Կարսի հրապարակներում կանգնեցվեցին կախաղաններ: Կառավարության հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում էր իր ուժերը դիմադրելու համար իր թշնամուն (Ս. Վ., էջ 428)»: Ամենուրեք հայտարարվեց կամավորների ցուցակագրություն: «Հայաստանի քաղաքացիներին» կոչի մեջ ասվում էր, որ մի ելք կա միայն՝ հաղթել կամ մեռնել: Թիֆլիսից եկան շուրջ 800 հայ կամավորներ՝ մեծ մասամբ Ջավախքի հայերից: Ոչ մեծ թվով կամավորներ եկան նաև սփյուռքից:

Էսէռները, սոցիալ–դեմոկրատները, ռամկավարները ևս կոչ արեցին մի կողմ դնել կուսակցական տարաձայնությունները և ուժերը միավորել ընդհանուր թշնամուն հակահարված տալու, հայ ժողովրդի գլխին կախված վտանգը կանխելու համար: Կարծես թե վերադարձել էին Սարդարապատի ժամանակները: Ժողովուրդը չի սպասում միավորման կոչերի, նա ինքն է իր ներքին իմաստնությամբ որոշում միաբանվելու ճշգրիտ պահը. այդպես է եղել ողջ պատմության ընթացքում: Դրան հակառակ՝ հայ բոլշևիկները հայ բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչ ընդունեցին, որտեղ ասված էր. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորագյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կազմակերպվելու կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերին, որպեսզի ձեռք ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ, միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական–դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշը Հայաստանում (Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 394–395)»:

Պատերազմի հենց սկզբին ՀՀ կառավարությունը դիմեց եվրոպական երկրներին՝ օգնություն ստանալու խնդրանքով, սակայն ոչ մի տեղից այդպիսին չստացավ: Սեպտեմբերի 28–ին ՀՀ վարչապետ և արտգործնախարար Հ. Օհանջանյանը հեռագրով հանձնարարեց Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին՝ օգնության խնդրանքով դիմել Թիֆլիսում Ֆրանսիայի, Անգլիայի, ՌԽՖՍՀ–ի, Հունաստանի, Վրաստանի և Վրանգելի ներկայացուցիչներին: Սեպտեմբերի 30–ին Հ. Օհանջանյանը շտապ հեռագիր ուղարկեց Գ. Չիչերինին՝ խնդրելով բոլոր ջանքերը գործադրել թուրքերի հետագա հարձակումը Հայաստանի վրա դադարեցնելու համար:

Տ. Բեկզադյանը առաջինը հանդիպեց Բ. Լեգրանին: Վերջինս հայտնեց, որ օգոստոսի 10–ի Սևրի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետությունը պարզորոշ հայտնեց իր վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ և ցուցադրեց իր քաղաքական կողմնորոշումը դեպի Անտանտը: Հայաստանի կառավարությունը որոշեց, որ սեփական ուժերով պիտի գրավի Վիլսոնի գծած Հայաստանը և պատերազմ սկսեց այն Թուրքիայի դեմ, որը չի կարող համաձայնել Սևրի պայմանագրի այդ որոշմանը: Այնուհետև Լեգրանը եզրակացնում է, որ թուրքական հարձակումը հետևանք է քեմալականների նկատմամբ Հայաստանի Հանրապետության ագրեսիվ քաղաքականության: Եթե ՀՀ կառավարությունը տրամադրված լիներ որևէ համաձայնությամբ վերացնելու սահմանային վեճերը Թուրքիայի հետ, ապա նա կարձագանքեր այն կոչին, որով Չիչերինը միաժամանակ դիմեց Քեմալին և Հայաստանին՝ առաջարկելով իր խաղաղարար միջնորդությունը, որին Թուրքիան հայտնեց իր համաձայնությունը, մինչդեռ Հայաստանը ոչ մի պատասխան չտվեց: Լեգրանն ավելացրեց նաև, որ եթե Հայաստանը նման հայտարարություն անի թեկուզ հիմա, իրենք Հայաստանի կառավարության՝ խաղաղության ձգտման ապացույց կունենան և կկարողանան ազդել Քեմալի վրա՝ կանգնեցնելու իր սխալ հարձակումը (էդ. Զոհրաբյան, նշվ. աշխ., էջ 185):

Տ. Բեկզադյանը Լեգրանին պատասխանում է, թե իրեն թվում է, թե թուրքերի հետ վեճերը խաղաղորեն լուծելու վերաբերյալ դեկլարացիան բոլորովին անտեղի է այն բանից հետո, երբ թուրքերը այդ վեճը լուծելու համար դիմել են զենքի: Այդ առնչությամբ պրոֆեսոր էդ. Զոհ-

բաբյանն ընդգծում է Լեգրանի հետ զրույցի ժամանակ Տ. Բեկզադյանի արտահայտած հետևյալ միտքը. «Այդ դեկլարացիան կթուլացներ մեր ժողովրդի դիմադրական ուժը՝ չտալով ոչ մի իրական արդյունք, քանի որ, դժբախտաբար, ձեր միջնորդությանը դիմելու մեր փորձը չափազանց դառը եղավ մեր ժողովրդի համար և նա հայտնի չափով հիասթափված է ձեզնից, իսկ ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանց հավատալ մենք ընդհանրապես չենք կարող»: Միանգամայն անհասկանալի և անընդունելի համարելով Հայաստանի ներկայացուցչի՝ հարցի խաղաղ լուծման համար հայտարարությունից հրաժարվելը, ինչպես նաև Տ. Բեկզադյանի արած դատողությունները ժողովրդի դիմադրական ուժի թուլացման, դառը փորձի և այլնի մասին, էդ. Զոհրաբյանը միանգամայն ակնհայտ է համարում Տ. Բեկզադյանի հակառուսական, հակաբոլշևիկյան տրամադրվածությունը:

Մանրամասնորեն վերլուծելով Լեգրանի հետ զրույցի վերաբերյալ Տ. Բեկզադյանի՝ Հ. Օհանջանյանին հասցեագրված նամակը, պրոֆեսոր էդ. Զոհրաբյանը հանգում է այն հետևության, որ Տ. Բեկզադյանը անհրաժեշտ չի համարել հարցնել իր կառավարության կարծիքը և իրեն իրավունք վերապահելով գործել ու վճռել նրա փոխարեն, Ռուսաստանի միջնորդությանը դիմելը համարել է թակարդ ու մերժել Լեգրանի առաջարկությունը: Նա նույնիսկ չի հավատացել Լեգրանի այն հայտարարությանը, եթե ինքը կհեռագրի Մոսկվա՝ Քեմալի վրա ազդելու և թուրքական հարձակումը կանգնեցնելու մասին, որովհետև ենթադրել է, որ այդ խաղը սկսվել է ոչ առանց Խորհրդային Ռուսաստանի բարեմաղթության:

«Այդ շարժումը, ըստ երևույթին,— գրում է Տ. Բեկզադյանը,— լուրջ է ու բավականին ուժեղ կազմակերպված, և եթե մենք չկարողանանք հնարավորին չափ շուտ կանգնեցնել այն, մեր դրությունը՝ Խորհրդային իշխանության մեր երկիր գալու տեսանկյունից, պետք է համարել միանգամայն վտանգված»:

Ընդգծելով վերը բերված քաղվածքի վերջին նախադասությունը, պրոֆեսոր էդ. Զոհրաբյանը օրինական վրդովմունքով եզրակացնում է, որ Տ. Բեկզադյանի ամբողջ նամակում մի բառ անգամ չկա թուրքական հարձակման հետևանքով ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգի մասին, Բեկզադյանի համար միակ վտանգը Խորհրդային իշխանության գալն է:

Հոկտեմբերի 1–ին Հ. Օհանջանյանը նորից է հեռագրում Տ. Բեկզադյանին և պահանջում դաշնակիցներից խնդրել շտապ և իրական օգնություն, ահազանգում, որ Հայրենիքը վտանգի մեջ է:

Հոկտեմբերի 8–ին ՀՀ կառավարությունը հայ ժողովրդի անունից դիմեց ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը՝ «Բոլորին, բոլորին» կոչով, որտեղ վճռական բողոք էր հայտնվում թուրք ազգայնականների՝ Հայաստանի Հանրապետությանը վերջնականապես ոչնչացնելու մտադրությունների դեմ և խնդրվում էր օգնել Հայաստանին՝ իր հայրենիքի պատվի, ազատության ու անկախության համար հայ ժողովրդի մղած սրբազան կռվում:

Կառավարության այս դիմումն ստանալուն պես Փարիզում ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը տեսակցություն ունեցավ ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի ներկայացուցիչների հետ և նրանցից խնդրեց գործնական օգնություն: Սակայն, ինչպես գրում է էդ. Զոհրաբյանը, քաղաքակիրթ Եվրոպան այս անգամ էլ խուլ գտնվեց հայ ժողովրդի հառաչանքների հանդեպ: Ո՛չ Անգլիան, ո՛չ էլ Ֆրանսիան ոչ մի միջոց չձեռնարկեցին և բավարարվեցին միայն Ազգերի լիգայում անպտուղ ճառեր արտասանելով, հավաստիացնելով, որ քանի որ քեմալական Թուրքիան կազմակերպված պետություն չէ, նրա վրա տնտեսական կամ որևէ այլ միջոց գործադրել հնարավոր չէ, որ Ազգերի լիգան իր տրամադրության տակ զինված ուժեր չունի և այլն:

Ինչպես նշում է էդ. Զոհրաբյանը, փաստերը ցույց են տալիս, որ Անգլիան, Ֆրանսիան և մյուսները ոչ թե չէին կարող, այլ չէին ցանկանում օգնելու նավաբեկության ենթարկված Հայաստանին: Այսպես՝ բրիտանական ծովակալ Ռոբեկի առաջարկին՝ թե Անտանտի կողմից Հայաստանին օգնելու ամենաարդյունավետ միջոցը կլինի Տրապիզոնի գրավումը, Քերզոնը պատասխանում է, թե դաշնակիցների կողմից Տրապիզոնի օպերացիան անիրագործելի է, իսկ հունական օկուպացիան՝ անցանկալի:

ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնը հայտնեց, որ ինքը չի կարող ամերիկյան զորքեր հատկացնել Հայաստանին օգնելու նպատակով և չի կարող առանց կոնգրեսի, որն այդ ժամանակ նիստեր չէր գումարում, ֆինանսական օգնություն ցույց տալ:

Անդրկովկասում ֆրանսիական գերագույն կոմիսարի պաշտոնակատար Նեթեմանը հայտարարեց, ներկայումս ստեղծվել է այնպիսի

դրություն, որը թույլ չի տալիս դաշնակիցներին իրենց ուժերն ուղարկել Անատոլիա՝ հայերին ռազմական օգնություն ցույց տալու համար:

Իտալիայի ներկայացուցիչ Ֆրանգոնին հայտարարում էր, թե իրենք միջոցներ կգտնեն, որպեսզի հարկադրեն քեմալականներին՝ հարգելու Հայաստանի անկախությունը, բայց այդ նույն ժամանակ իտալական տրանսպորտային նավերը անխափան կերպով Սամսունի վրայով զենք ու զինամթերք էին մատակարարում թուրքերին:

Հունաստանը պատրաստ էր հայերին օգնելու նպատակով 25.000–անոց դեսանտ ափ հանել Տրապիզոնում, բայց դա չիրագործվեց, որովհետև, ինչպես նշվեց, Անգլիան դա չէր ցանկանում:

Վրանգելը, եթե ցանկանար էլ, չէր կարող օգնել, որովհետև այդ օրերին ինքը ծանր դրության մեջ էր:

Վրաստանը, չնայած Հայաստանին սպառնացող վտանգի մասին աղմկարարությանը, օգնելու փոխարեն գերադասեց օգտվել հարմար պահից և տարածքային զավթումներ կատարել ի հաշիվ Հայաստանի՝ փաստորեն դառնալով թուրք զավթիչների գործակիցներ:

Կատարված բազմաթիվ դիմումների միակ արձագանքը եղավ այն, որ անգլիական բարձրագույն կոմիսար, գնդապետ Ստոքսը հոկտեմբերի 5–ին Թիֆլիսից ժամանեց Երևան, մոտ երկու ժամ զրուցեց վարչապետ Հ. Օհանջանյանի հետ, որից հետո մեկնեց Կարս, որի կայարանում նրան ցույց տրվեց հանդիսավոր դիմավորում: Այնուհետև Ստոքսը շրջագայեց ռազմաճակատում, գտավ, որ այն բավականաչափ ամուր է ու... մեկնեց: Եվ էլ ուրիշ ոչինչ:

Չմոռանանք, իհարկե, որ դեռևս պատերազմից առաջ ՀՀ–ն Անգլիայից գնել էր մեկ միլիոն ոսկու արժողությամբ զենք, զինամթերք և ռազմական հանդերձանք, սակայն տվյալ աղետալի իրավիճակում նրա օգնության ակնկալիքը բոլորովին այլ բնույթի էր՝ տերությունների ռազմական և դիվանագիտական կտրուկ միջամտությունը, որը և նրան մերժվեց:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Պրոֆեսոր էդ. Զոհրաբյանը, ելնելով ռազմական գործողությունների բնույթից, պայմանականորեն պատերազմը բաժանում է երեք շրջանների: Առաջին շրջանն ավարտվում է սեպտեմբերի 30–ին, երկրորդը տևում է հոկտեմբերի 1–28–ը, երրորդը՝ հոկտեմբերի 28–ից մինչև նոյեմբերի 18–ը:

Սեպտեմբերի 30–ին թուրքերի կողմից Սարիղամիշի և Մերդենեկի գրավումից հետո թուրքական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց: Սկսվեց պատերազմի երկրորդ շրջանը, երբ մինչև հոկտեմբերի վերջը ռազմական գործողություններն ընթանում էին մոտավորապես նույն գծում:

Ինչպես ժամանակին ինքը՝ Մ. Քեմալը, այնպես էլ հետագայի թուրք պատմաբանները, հոկտեմբերին թուրքերի առաջխաղացման դադարեցումը պայմանավորել են բացառապես երզրումում Արիֆ բեյի բարձրացրած հակակառավարական ելույթի ճնշման անհրաժեշտությամբ՝ ոչ մի խոսք չասելով Սուրմալուի ճակատում հայկական բանակի դիմադրության, Կարսի ճակատում հոկտեմբերի 14–ի հակահարձակման մասին:

Ռազմական գործողություններն ընթանում էին երկու՝ Կարսի և Սուրմալուի ճակատներում, որոնցից առաջինի հրամանատարն էր գեներալ Մովսես Սիլիկյանը, երկրորդինը՝ Դրոն (Դրաստամատ Կանայանը):

Ըստ Ս. Վրացյանի տվյալների՝ Սուրմալուի ճակատի ընդհանուր հրամանատար Դրոյի հրամանատարության տակ էին 9–րդ գունդը (հրամանատար՝ գնդապետ Խուդաբաշյան), 8–րդ գունդը (հրամանատար՝ Տ. Բաղդասարյան), հինգ վաշտից բաղկացած էքսպեդիցիոն մի զորամաս, Կուռո Թարխանյանի 260 հեծյալները, բոլորը միասին՝ մոտ 2000 զինվոր, 36 գնդացիր (Ս. Վ., էջ 506):

Ս. Վրացյանի վկայությամբ՝ հոկտեմբերի 20–ին թուրքերը Սուրմալուի ճակատում հարձակման անցան Կարաբուլաղ և Սոգութլի գյուղերի վրա: Ամբողջ օրը տեղի ունեցան թեժ կռիվներ: Երկուստեք անընդհատ որոտում էին թնդանոթները: Թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ հայկական ուժերը նահանջեցին մինչև Արաքս, սակայն հաջորդ օրը դիմեցին հակահարձակման և հակառակորդին հետ շպրտեցին՝ տալով սպանված և վիրավոր երկու սպա և 60 զինվոր:

Դարձյալ ըստ նույն հեղինակի՝ հոկտեմբերի 24–ին կատաղի կռիվներ սկսվեցին Քուլլուկ, Կարակալա, Վերին Չարուխչի, Դաշբուռունի շրջանում: Վաղ առավոտյան Իգդիրի և Մարգարայի ուղղությամբ հարձակում սկսեցին թուրքական մեկ կանոնավոր դիվիզիա և բազմաթիվ քրդական խմբեր: Սկսվեցին արյունահեղ կռիվներ, սակայն թշնամին բազմաթիվ գրոհներից հետո հետ շպրտվեց: Թուրքերն ամեն գնով

ձգտում էին գրավել Սուրմալուն, իսկ հայերը վճռել էին մեռնել, բաց տեղի չտալ: Կռիվները շարունակվեցին երեք օր: Տեղ–տեղ սպանվեց կամ վիրավորվեց հայկական ուժերի մինչև կեսը: Հայ սպաները՝ գնդապետ Խուդաբաշյան, Մամաջանյան, Գալուստյան, Հովասափյան, Թարվերդյան, Թարխանյան, Մակ–Մալիցկի, Թոփչյան, Աբգարյան, Պետրոսյան, Ղամբարյան և ուրիշներ, ցույց տվեցին անձնական հերոսության փայլուն օրինակներ: Դրանցից բնորոշ է հետևյալ օրինակը. կռվի երկրորդ օրը Դրոյի հրամանով Քանաքեռից չորս բեռնատար ավտոմեքենաներով օգնության շտապեց Կուռո Թարխանյանի ջոկատը: Մարգարայում պարզվեց, որ խճուղին գրավված է թշնամու կողմից, և այլևս առաջ գնալու հնարավորություն չկա: Առանց երկար մտածելու Կուռոն ինքը նստեց առաջին ավտոմեքենայի վարորդի կողքին և չորս մեքենաները միմյանցից 50–ական մետր հեռավորությամբ սրընթաց շարժվեցին առաջ՝ միաժամանակ երկու կողմերից գնդացրային մրրկածուփ կրակ տեղալով ճանապարհը բռնած թշնամու վրա: Հանկարծակիի եկած թուրք զինվորները սարսափահար թաքնվեցին ճանփեզրյա առուներում: Նման անձնազոհ եղանակով Կուռոյին հաջողվեց ճեղքել թշնամու շղթան և օգնության հասնել օրհասական վիճակում հայտնված Դալիգդաղի ճակատամասի մարտիկներին: Այդ հիրավի հերոսական ճեղքման ընթացքում վիրավորվեցին Կուռոյի 8 մարտիկներ, իսկ գնդացրային դասակի հրամանատար Մակ–Մալիցկին զոհվեց (Սիմոն Վրացյան, նշվ. աշխ., էջ 506–507):

Այնուհետև Ս. Վրացյանը վկայում է, որ հոկտեմբերի 26–ին Սուրմալուի ճակատամարտում հայկական զորքերն անցան հակահարձակման, և թշնամին բոլոր կետերում, կատաղի դիմադրությունից հետո, բազմաթիվ դիակներ թողնելով, դիմեց խուճապային փախուստի՝ անցնելով Բարդոդյան լեռների մյուս կողմը: «Երևանը,— գրում է Ս. Վրացյանը,— որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող թնդանոթների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանգիստ շունչ քաշեց: Թշնամին այլևս Սուրմալուի ճակատում կենդանի գործունեություն ցույց չտվեց (Ս. Վ., էջ 508)»:

Ս. Վրացյանի նկարագրության համաձայն՝ բոլորովին այլ, անբարենպաստ ընթացք ստացան մարտական գործողությունները Կարսի ճակատում: Այստեղ գործում էր գեներալ Հովսեփյանի բրիգադը, որի մեջ մտնում էին գնդապետ Մազմանյանի առաջին, գնդապետ Միրիմանյանի 4–րդ, գնդապետ Շաղուբաղյանի 5–րդ գնդերը, Սեպուհի բրիգադը, որի մեջ էին գնդապետ Իշխանյանի 7–րդ և փոխգնդապետ Բաղդասարյանի 8–րդ գնդերը, գնդապետ Ղորղանյանի հեծյալ բրիգադը, Փիլոսի, Մուրադյանի, Սմբատի և մի քանի ուրիշ կամավորական խմբեր: Այստեղ էր նաև «Ազատամարտ» զրահագնացքը, մի քանի սավառնակներ: Կարսի բերդապետն էր գեներալ Դանիել Բեկ–Փիրումյանը: Կարսի ճակատի ընդհանուր հրամանատարն էր գեներալ Մ. Սիլիկյանը, շտաբի պետը՝ գնդապետ Վեքիլյանը:

Ս. Վրացյանը վկայում է, որ Կարսի ճակատում զորքերը թույլ էին կազմակերպված, վատ էին սպաների և զինվորների, ինչպես նաև առանձին հրամանատարների փոխհարաբերությունները: Զինվորների մեծ մասը նորակոչիկներ էին: Զինվորների մեծ մասը զինված էին Անգլիայից նոր ստացված «Ռոս» տիպի հրացաններով, որոնց դեռ չէին վարժվել: Վատ էր կազմակերպված թիկունքը:

Զորքերի ոգին բարձրացնելու նպատակով հայկական բարձրագույն հրամանատարությունը որոշեց անցնել ընդհանուր հարձակման, որը, ցավոք, հաջողություն չունեցավ: Թշնամու ուժեղ դիմադրության հետևանքով հայկական զորքերը նահանջեցին մինչև Կարս:

Այնուհետև նախաձեռնությունն անցավ Թուրքերի ձեռքը: Քայլ առ քայլ ճնշելով հայկական ուժերի դիմադրությունը՝ հոկտեմբերի 28–ին թուրքերը գրավեցին Վեզենքոյի բարձունքները: Ամբողջ օրը թեժ մարտեր ընթացան: Գնդապետ Մազմանյանի գունդը ձգտում էր հետ խլել Վեզենքոյը: Այդ կռիվներում երկու կողմերն էլ մեծ կորուստներ ունեցան:

Հոկտեմբերի 30–ի առավոտյան հրաման տրվեց հայկական զորքերին՝ անցնել հակահարձակման և գրավել Վեզենքոյը: Սակայն գնդապետ Մազմանյանի 1–ին գունդը չենթարկվեց հրամանին և տեղից չշարժվեց: Բոլորի աչքի առջև գնդապետ Մազմանյանը մաուզերով ինքնասպանություն գործեց: Սակայն դա էլ չազդեց զորքի վրա:

Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ նույն օրը՝ հոկտեմբերի 30–ին, մեծ ուժերով հարձակման անցան թուրքերը: Հայերը դիմեցին խուճապային փախուստի: Կարսն ընկավ թուրքերի ձեռքը: Գերության մեջ հայտնվեցին գեներալներ Փիրումյանը, Արարատյանը, գնդապետներ Շաղուբաղյանը, Վեքիլյանը, Բաբաջանովը, փոխգնդապետ Տեր–Առաքելյանը, մոտ 30 զանազան սպաներ, մոտ 3000 զինվորներ, նախարար Ա. Բաբալյանը, Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփյանցը, փոխնահանգապետ Չալխուշյանը, քաղաքագլուխ Նոհրատյանը և Կարսի ազգաբնակչության մեծ մասը: Երեք օր անընդհատ թուրքերը

թալանեցին, բռնաբարեցին, սպանեցին և ամեն տեսակ վայրագություններ կատարեցին գրավված քաղաքում:

Կարսում թուրքական գազանություններին զոհ գնացին շուրջ 6.000 հայեր: Փախած հայերի տներում տեղավորվում էին բազմահազար մահմեդականներ:

Կարսի անկումից հետո հայկական զորքերը համախմբվեցին Ղզլչախչախի տակ, որտեղ նոյեմբեր 4–ից վերսկսվեցին թեժ մարտերը վրա հասած թուրքերի դեմ: Թշնամին ձգտում էր կտրել կիրճի բերանը և գերել հայկական ուժերին: Սակայն «Ազատամարտ» զրահագնացքի սպանիչ կրակով թուրքերի պլանը ձախողվեց: Մեծ կորուստներ տալով՝ թշնամին կանգ առավ:

Միաժամանակ խուճապ առաջացավ Ալեքսանդրապոլում: Նահանգապետը հեռացավ քաղաքից՝ անպաշտպան թողնելով այն: Փախուստի դիմեց քաղաքային պաշտոնեության մեծ մասը: Բանտից ազատված բոլշևիկները ստեղծեցին Հեղկոմ: Սակայն Ա. Ջամալյանի, Սեպուհի և այլոց ջանքերով ստեղծվեց քաղաքային իշխանություն, Լ. Սարգսյանը նշանակվեց քաղաքագլուխ:

Կարսի անկումից հետո Անկարայի և ՀՀ կառավարությունները համարյա միաժամանակ հաշտության առաջարկ արեցին:

Նոյեմբերի 6–ին Քյազիմ Կարաբեքիրը առաջարկեց զինադադարի պայմաններ, որոնք ՀՀ կառավարությունն ընդունեց: Սակայն նոյեմբերի 8–ին թուրք հրամանատարը իր կառավարության անունից ներկայացրեց հետևյալ նոր պահանջները. 24 ժամվա ընթացքում Ալեքսանդրապոլում հանձնել բոլորովին նոր 2000 արագահարված հրացան, 20 ծանր և 40 արագահարված գնդացիր, երեք մարտկոց թնդանոթ, 4000 ջորի, 1000 սնդուկ հրացանի փամփուշտ, 6000 թնդանոթի արկ, 2 շոգեքարշ, 50 վագոն: Հայկական ուժերը պիտի քաշվեն Արփաչայ–Ալագյազ կայարան–Նալբանդ կայարան–Վորոնցովկա գծից արևելք՝ երկաթուղագիծը թողնելով անվնաս: Երեք օրվա ընթացքում հայկական զորքերը պիտի քաշվեին նաև Սուրմալու–Արաքս կայարան–Ալագյազ լեռ–Դանագիրմազ–Լոռի գծից արևելք: Սանահին–Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրա ռազմական փոխադրումները պիտի դադարեն: Տրվում էր յոթ օր պայմանաժամ:

ՀՀ կառավարությունը վճռականորեն բողոքեց այդ նոր պահանջի դեմ և մերժեց դրանք, ուստի ռազմական գործողությունները նոյեմբերի 11–ին վերսկսվեցին:

Նոյեմբերի 14–ին թուրքերը հարձակվեցին Ջաջուռի ուղղությամբ: Հայկական զորքերը նահանջեցին դեպի Համամլու: Թեժ կռիվներ տեղի ունեցան նաև Աղինի շրջանում, սակայն դրանք արդեն վերջին կռիվներն էին:

ՀՀ կառավարությունը համաձայնեց թուրքերի պահաջներին, կնքվեց զինադադար և նոյեմբերի 22–ից նրանց հանձնվեց պահանջվածը:

ՀՀ կառավարությունը դիմեց Մոսկվայի միջնորդությանը: Չիչերինը Բուդու Մդիվանիին նշանակեց հայ–թուրքական բանակցությունների մասնակից:

Միաժամանակ Թիֆլիս ուղարկվեց Ալ. Խատիսյանը՝ դիմելու դաշնակից տերությունների ներկայացուցիչներին: Սակայն գնդապետ Ստոքսը պատասխանեց, որ Անգլիան ոչնչով չի կարող օգնել, և հայերին ոչինչ չի մնում անել, քան իբրև չարյաց փոքրագույն՝ հաշտվել Խորհրդային Ռուսաստանի հետ (Ս. Վ., էջ 514–515):

Եվ էլի կարծատեսությունը սկսում է նեղել Ս. Վրացյանին, երբ խոսք է գնում Ռուսաստանի մասին: «Հաշտվել Խորհրդային Ռուսաստանի հետ,— գրում է նա,— բայց ո՞ւր էր նա՝ այդ Ռուսաստանը և ի՞նչ կարող էր անել տվյալ պայմաններում, երբ թուրք բանակը կեցած էր Ախուրյանի և Արաքսի եզերքներին՝ ամեն վայրկյան ներխուժելու պատրաստ (Ս. Վ., էջ 515):

ՀՀ կառավարությունը Ալեքսանդրապոլ ուղարկեց հաշտության պատվիրակություն հետևյալ կազմով. Ա. Խատիսյան (նախագահ), ներքին գործոց նախարար Ա. Գյուլխանդանյան, Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյան, Խորհրդարանի անդամներ Վ. Մինախորյան, Լ. Զարաֆյան:

Նոյեմբերի 23–ին Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Ալեքսանդրապոլ և նույն օրն էլ վարչապետ Հ. Օհանջանյանը խորհրդարանին ներկայացրեց իր գլխավորած կառավարության հրաժարականը:

Հայ–թուրքական պատերազմի շարժառիթների վերաբերյալ կարևորագույն հետևություններ է արել ակադեմիկոս Գալուստ Գալոյանը: Այսպես՝ հրապարակելով «Արևելքի ժողովուրդների գործունեության քարոզչության խորհրդի» նախագահության 1920 թ. սեպտեմբերի 17–ի որոշման գրգռիչ դերը թուրքերի կողմից Հայաստանի դեմ ձեռնարկված ագրեսիայի հարցում, համաձայն որի թուրքական զորքերը պետք է սկսեին հարձակումը Հայաստանի վրա, իսկ խորհրդային զորքերը հայ–թուրքական նոր կոտորածներին վերջ տալու նպատակով պետք է

մտնեին Հայաստան և այնտեղ հաստատեին խորհրդային իշխանություն, Գ. Գալոյանը միանգամայն իրավացիորեն գտնում է, որ այդ որոշումը չի կարելի համարել որոշիչ: Չլիներ այդ որոշումը, միևնույն է, թուրքերը հարձակվելու էին Հայաստանի վրա (Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 293):

Գ. Գալոյանը պատերազմի սկիզբը համարում է սեպտեմբերի 22–ը, երբ թուրքական զորքերը Օլթին գրավելուց 9 օր անց, առանց պատերազմ հայտարարելու, Կարսի և Սուրմալուի ուղղություններով անցան ընդհանուր հարձակման: Նրա շարադրանքի համաձայն՝ հոկտեմբերի 1–ին Լեգրանը տագնապով հաղորդում է Չիչերինին՝ Կարսը գրավելու թուրքերի մտադրության և դրա՝ Ռուսաստանի համար վտանգավորության մասին, սակայն Չիչերինը առանձին նշանակություն չի տալիս դրան: Այստեղից Գ. Գալոյանը եզրակացնում է, որ այն, ինչը 1878 թ. հասկացել էր Ռուսաստանի վարչապետ Ա. Գորչակովը, 1920 թ. չկարողացան հասկանալ խորհրդային ղեկավարները:

Գ. Գալոյանն այն կարծիքն է հայտնում, որ եթե Մոսկվային հայտնի Սարիղամիշ–Շահթախթ գծից թուրքերի անցնելուց հետո խորհրդային կառավարությունը վճռական պահանջ ներկայացներ թուրքերին՝ դադարեցնելու հետագա առաջխաղացումը, գուցե դրանով կավարտվեր հայ–թուրքական պատերազմը, սակայն խորհրդային կառավարությունը այդպիսի բան չպահանջեց (Գ. Գ., էջ 300): Նա գտնում է, որ Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի տերությունների միջև եղած անհաղթահարելի հակասությունները ճակատագրական եղան Հայ դատի համար (էջ 304):

Այնուհետև Գ. Գալոյանը ցույց է տալիս, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը պահանջում էր ՀՀ կառավարությունից՝ պաշտոնապես հրաժարվել Սևրի պայմանագրից և դրանով հավաստել, որ ինքը Անտանտի ձեռքին գործիք չի դառնում: Այդ նախապայմանով Ռուսաստանը խոստանում էր հանդես գալ իբրև տարածքային սահմանազատման միջնորդ և հարկադրել Թուրքիային՝ տարածքային որոշ զիջումներ անել Հայաստանին: Սակայն ՀՀ կառավարության խանդավառ ոգևորությունը դեռ չէր սառել և նա դեռևս պատրաստ չէր հրաժարվելու Սևրի պայմանագրից: «Հայաստանի կառավարությունը,— գրում է Գ. Գալոյանը,— զրկված լինելով ստույգ ինֆորմացիայից, չէր կարողանում ճիշտ կողմնորոշվել ստեղծված իրադրությունում: Ոչ առանց հիմքի կասկածամտորեն վերաբերվելով Ռուսաստանի կառավարության ա-

մեն մի առաջարկին և իրական դաշնակիցներ ձեռք չբերելով Արևմուտքում, նա ըստ էության, մնաց մեն–մենակ թուրքական մինչև ատամները զինված հրոսակների դեմ (Գ. Գ., էջ 305)»:

Գ. Գալոյանը նկատում է, որ երկրի պաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ կառավարության ջանքերն արդյունավետ չեն եղել և վկայակոչում է Թ. Նազարբեկյանի հեռագիրը վարչապետին, ըստ որի՝ նոյեմբերի 14–ին ռազմաճակատում կար 3000 զինվոր, իսկ հաջորդ օրը մնացել էին ընդամենը 600–ը: Այնուհետև Գ. Գալոյանը ներկայացնում է տերությունների բռնած աննպաստ դիրքը Հայաստանի նկատմամբ, պարզաբանում, որ Վրաստանի «չեզոք» դիրքը հօգուտ Թուրքիայի էր:

Ակադեմիկոսը նշում է, որ եթե պատերազմի առաջին երեք շաբաթներին քեմալականների առաջխաղացումը չէր անհանգստացնում Ռուսաստանի կառավարությանը, ապա հոկտեմբերի կեսերից այն խիստ անհանգստություն էր առաջացրել, որովհետև մտավախություն կար, որ Ռուսաստանը կարող է ներքաշվել ռազմական գործողությունների մեջ: Իսկ թուրքերի առաջխաղացումը կանխելու հնարավորություն, ինչպես գրում էր Չիչերինը, Ռուսաստանը չուներ: Քեմալին հայտնի էր այդ հանգամանքը, և այդ պատճառով էլ այդ օրերին նա կտրել էր տվել հեռագրական կապը Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ և ոչ մի բանի առաջ կանգ չառնելով՝ վերջին հարվածներն էր հասցնում պատերազմում փաստական պարտություն կրած Հայաստանին (Գ. Գ., էջ 317):

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ: ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28–Ի ՆԱԽԱԳԻԾԸ

Մոսկվայում ընդհատված հայ–ռուսական բանակցությունները վերսկսվեցին Երևանում, հոկտեմբերի 12–ին, երբ արդեն սկսվել ու խորացել էր քեմալական Թուրքիայի ագրեսիան Հայաստանի դեմ:

Երևանի բանակցությունները պետք է շարունակեր հուլիսի 19–ին Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը, որը մինչ այդ, չընդունվելով ՀՀ կառավարության կողմից, մեկնել էր Թիֆլիս, այնտեղից էլ Բաքու՝ մասնակցելու Արևելքի ժողովուրդների համագումարին:

ՀՀ կառավարության անունից բանակցությունները շարունակում էր վարել սեպտեմբերի 14–ին Մոսկվայից վերադարձած Լևոն Շանթի պատվիրակությունը:

Հայկական պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանի հուշերի համաձայն՝ Բ. Լեգրանը բանակցությունների հենց սկզբում վերջնագրի ձևով հայկական կողմին ներկայացրեց հետևյալ նախապայմանները. 1. Հրաժարվել Սևրի պայմանագրից, 2. Թույլ տալ խորհրդային զորքերին՝ Հայաստանի երկաթուղիներով ու խճուղիներով միանալու Մուստաֆա Քեմալի զորքերին՝ Անտանտի դեմ կռվելու նպատակով, 3. Հայաստանի և հարևանների միջև գոյություն ունեցող սահմանային վեճերի լուծումը հանձնել Խորհրդային Ռուսաստանի իրավասությանը («Հայրենիք» ամսագիր, Բոստոն. 1954, թիվ 5): Դրանք ընդունվեցին ՀՀ կառավարության կողմից:

Գ. Գալոյանը նշում է, որ բանակցությունների առաջին իսկ օրվանից ՀՀ պատվիրակությունը հաղթողի կեցվածքով պահանջում էր, որպեսզի ռուսները ստիպեն թուրքերին՝ զորքերը հետ քաշել մինչև Երզնկա, իսկ հայ–ադրբեջանական տարածքային վեճերը լուծեն հօգուտ Հայաստանի:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ հայ–ռուսական բանակցություններն սկսվելուց երկու օր անց՝ 1920 թ. հոկտեմբերի 14–ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն որոշում էր ընդունել համաձայնել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Կովբյուրոյի կարծիքի հետ՝ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու անհրաժեշտության մասին: Որոշվել էր նաև Խորհրդայնացած Հայաստանին քաղաքական օգնություն ցույց տալ՝ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար, ինչպես նաև պաշտպանել Հայաստանի խորհրդային կառավարությանը:

Նորահայտ փաստաթղթերի հիման վրա Գ. Գալոյանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության վրա ճնշում էին գործադրում նաև Անտանտի երկրները, որը և հարկադրում էր Խորհրդային Ռուսաստանին՝ չշտապել Հայաստանի խորհրդայնացման հարցում՝ Կովկասում Անտանտի հետ ռազմական բախման մեջ չմտնելու համար: Նա նշում է, որ հոկտեմբերի 24–ին հատուկ առաքելությամբ Երևան էր ժամանել Ստոքսը՝ թույլ չտալու, որ Հայաստանը պայմանագիր կնքի Ռուսաստանի հետ:

Նման պայմանագրի կնքման հեռանկարը անհանգստացրել էր նաև ԱՄՆ–ին: Ամերիկյան արխիվներից հայտնաբերած նոր փաստաթղթերի հիման վրա Գ. Գալոյանը ցույց է տալիս, որ Կ. Պոլսում ԱՄՆ–ի դեսպան Մարկ Բրիստոլը իր զեկուցագրերում կոչ էր անում ամերիկյան կառավարությանը՝ ձեռնպահ մնալ Հայաստանի Հանրապետությանը օգնելուց, որովհետև այն անորոշ երկիր է, այնտեղ բոլշևիկների նկատմամբ ուժեղ բարյացակամություն կա, և առաջին իսկ հարմար առիթի դեպքում Հայաստանը կդառնա բոլշևիկյան: «Նորահայտ այս փաստաթղթերը,— եզրակացնում է Գալոյանը,— բացատրելի են դարձնում հայ–թուրքական պատերազմի ժամանակ դաշնակից տերությունների գրաված դիրքը (Գ. Գ., էջ 323)»:

Երևանում ընթացող բանակցություններն ավարտվեցին 1920 թ. հոկտեմբերի 28–ին: Մշակվել էր Հայաստանի և Ռուսաստանի միջև հաշտության պայմանագրի նախագիծ, որը կողմերը պետք է համաձայնեցնեին իրենց կառավարությունների հետ:

Փաստերը վկայում են, որ պայմանագրի նախագիծը Լեգրանը չէր համաձայնեցրել Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ: Նախագծին չէր ծանոթացել նաև Ի. Ստալինը, որին հանձնարարված էր տնօրինել Կովկասին վերաբերող բոլոր հարցերը: Պայմանագրի նախագծի համաձայն՝ Խորհրդային Ռուսաստանը անվերապահորեն ճանաչում էր ՀՀ անկախությունը:

— ՌԽՖՍՀ–ը արդարացի էր համարում Թուրքահայաստանի միակցումը Հայաստանի Հանրապետությանը և պատրաստակամություն էր հայտնում բարեկամական աջակցություն ցուցաբերել նշված մարզերը կամ նրանց մի մասը Հայաստանին միացնելու հարցում:

— Հայաստանը համաձայն էր, որպեսզի Ռուսաստանը իր երկաթուղիներով ռազմական հանդերձանք ու զորամասեր տեղափոխեր, պայմանով, որ Թուրքիային տրվող զենքն ու ռազմական հանդերձանքը չէր օգտագործվելու ՀՀ դեմ:

— Հայաստանն ընդունում էր Ռուսաստանի միջնորդությունը Արևմտյան Հայաստանի տարածքային հարցերը լուծելիս: Փոխարենը Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում էին իբրև Հայաստանի անբաժանելի մասեր: Հայաստանը հրաժարվում էր Ղարաբաղի նկատմամբ իր պահանջներից:

— Հայաստանի տարածքով տեղափոխվող ռուսական զենքի և ռազմական հանդերձանքի 25 տոկոսը թողնվելու էր Հայաստանին:

— Ռուսաստանը Հայաստանին անվերադարձ հատկացնելու էր 2.5 միլիոն ռուբլի՝ ոսկով:

— Հայաստանի կառավարությունն ընդունելու էր Ռուսաստանի միջնորդությունը հայ–թուրքական կոնֆլիկտը կարգավորելու հարցում, պայմանով, որ Թուրքիան դադարեցնելու էր ռազմական գործողությունները և իր զորքերը հետ էր քաշելու մինչև 1914 թ. ռուս–թուրքական սահմանագիծը: Թուրքիան պաշտոնապես պիտի հրաժարվեր 1918 թ. Բրեստի պայմանագրից և վերը նշված սահմաններում պիտի ճանաչեր ՀՀ սուվերենությունը:

— Հայաստանի տարածքով փոխադրվող զենքն ու ռազմական հանդերձանքը պիտի ուղարկվեր Տրապիզոն–Էրզրում–Մուշ–Բիթլիս գծից այն կողմ, իսկ Հայաստանը Ռուսաստանի շահագործմանն էր հանձնելու Շահթախթ–Մակու նեղգիծ երկաթուղին:

Բանակցությունների եզրափակիչ նիստում ստորագրվեց նաև արձանագրություն, որով կողմերը պարտավորվում էին ստորագրել հաշտության պայմանագրի նախագիծը:

Արձանագրությունում նշվում է, որ Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ ՀՀ իրավունքը ՌԽՖՍՀ–ի հետ միասին ճանաչում է նաև Ադրբեջանը: Պայմանագրի նախագիծն ու բոլոր լրացումները կցվեցին արձանագրությանը:

Սակայն, ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, պայմանագրի նախագծի ստորագրման օրերին Ռուսաստանը շրջադարձ էր կատարում Անդրկովկասում վարվող քաղաքականության տակտիկայում, ըստ էության վերանայվում էր ՌԿ(բ)կ կենկտոմի քաղբյուրոյի որոշումը: Նախագիծն ստորագրելուց մեկ օր հետո՝ հոկտեմբերի 29–ին, Լեգրանին ուղարկած հրահանգում Չիչերինը գրում է, որ ներկա պահին չարժե խոսել վերջնագրերի լեզվով: Իսկ խորհրդային զորքերի կողմից զբաղեցված վիճելի տարածքները Հայաստանին, թե Ադրբեջանին տալու հարցը պետք է ձգձգել և սպասել ավելի նպաստավոր ժամանակների:

Պատասխան նամակում Լեգրանը պնդում էր, որ Ռուսաստանի համար խիստ շահավետ կլիներ Հայաստանի հետ պայմանագիր կնքելը: «Եթե այդ պայմանագիրն ուժի մեջ մտներ,— եզրակացնում է Գ. Գալոյանը,— կբացառվեր Կարսի և Ալեքսանդրապոլի անկումը, թուրքերը ստիպված կդադարեցնեին հետագա հարձակումը և զորքերը հետ կքաշեին մինչև 1914 թվականի ռուս–թուրքական սահմանը (Գ. Գ., էջ 327)»:

Մինչդեռ պայմանագրի նախագիծը դեռ Մոսկվա չէր հասել, իսկ Ստալինն արդեն իր բացասական կարծիքն էր ներկայացրել: Գ. Գալոյանը գտնում է, որ Ստալինի և Օրջոնիկիձեի, ինչպես նաև Ադրբեջանի ղեկավարության բռնած դիրքը բացասական հետևանքներ ունեցավ: Հայ–ռուսական պայմանագրի ստորագրման հարցը մնաց անորոշության մեջ, մինչդեռ Հայաստանի վիճակը վատանում էր ոչ թե օր օրի, այլ ժամ առ ժամ:

Բրիտանական արխիվներում հայտնաբերած նոր փաստաթղթերի հիման վրա Գ. Գալոյանը ցույց է տալիս, որ հոկտեմբերի 27–ին Հայաստանի կառավարությունը վերստին թախանձագին դիմել է Անգլիային՝ խնդրելով օգնել ռազմական հանդերձանքով, ինչպես նաև կազմակերպել դաշնակիցների հարձակումը Տրապիզոնի վրա: Հոկտեմբերի 29–ին Քերզոնը հեռագրով հայտնել է Թիֆլիսում գտնվող գնդապետ Ստոքսին, որ միակ օգնությունը Հայաստանին կարող է լինել զենք և ռազմական հանդերձանք տրամադրելը, սակայն ոչ մի խոսք չի կարող լինել Տրապիզոնում կամ մեկ այլ վայրում ռազմական օգնություն ցույց տալու մասին:

Հայ–ռուսական պայմանագրի նախագիծն ստորագրելուց մեկ օր առաջ օգնության խնդրանքով Անգլիայի կառավարությանը դիմելու փաստը թույլ է տալիս Գ. Գալոյանին եզրակացնելու, որ Հայաստանում վստահություն չկար հայ–ռուսական պայմանագրի ուժի մեջ մտնելու մասին (Գ. Գ., էջ 328):

Սակայն հատկապես Կարսի անկումից հետո (հոկտ. 30) Հայաստանում անհամբեր սպասում էին հայ–ռուսական պայմանագրի ստորագրմանը, մինչդեռ այն ուշանում էր և ժամ առ ժամ կորցնում էր իմաստը: Նախագծի ստորագրումից անցել էր արդեն մեկ շաբաթ, սակայն Լեգրանը այն դեռևս չէր ներկայացրել իր կառավարությանը, որովհետև նախ պարտավոր էր այն համաձայնեցնել Ստալինի հետ և այդ կապակցությամբ նոյեմբերի 4–ին մեկնել էր Բաքու:

Պայմանագրի նախագիծը Օրջոնիկիձեի և Լեգրանի հետ քննարկելուց հետո նոյեմբերի 5–ին Ստալինը հեռագրեց Մոսկվա և հայտնեց, որ այն չի կարող ստորագրվել անմիջապես և կարիք ունի էական փոփոխության, իսկ բացատրություններ տալու համար անհրաժեշտ է Լեգրանին կանչել Մոսկվա: Իսկ պայմանագրի ստորագրման ձգձգումը հավասարազոր էր այն չեղյալ հայտարարելուն: Գ. Գալոյանը գտնում է, որ Ստալինի թելադրանքով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը լուրջ սխալ էր թույլ տալիս՝ հնարավորություն ընձեռելով քեմալականներին ամրապնդելու իրենց դիրքերն Անդրկովկասում: «Լենինը չփորձեց հակառակվել Ստալին–Օրջոնիկիձե–Չիչերին եռյակի կարծիքին,—

գրում է Գ. Գալոյանը,— քանի որ խոսքը «Անտանտի դաշնակից» Հայաստանի մասին էր, որի հետ նման պայմանագրի կնքումը հակասում էր Ռուսաստանի «բարեկամ» քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի շահերին (Գ. Գ., էջ 332)»:

Հայ–ռուսական պայմանագրի վերաբերյալ խիստ բացասական կարծիք է հայտնում նաև Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը:

Նոյեմբերի 7–ին Չիչերինը հեռախոսով հայտնում է Բաքվում գտնվող Լեգրանին, որ պայմանագրի նախագիծն արդեն հնացել է, մնում է միայն միջնորդությունը, որպեսզի կանգնեցվի թուրքերի հարձակումը:

Երևանում կայացած հայ–ռուսական բանակցություններին լայնորեն անդրադարձել է պրոֆեսոր Էդ. Զոհրաբյանը՝ «1920 թ. թուրք–հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997» մենագրությունում: Նա նշում է, որ բանակցություններն ընթացան հոկտեմբերի 13–28–ին: Հայաստանը ներկայացնում էին Մոսկովյան նույն պատվիրակները՝ Լ. Շանթը, Լ. Զարաֆյանը, Հ. Տերտերյանը, քարտուղարն էր Յակուլովը, իսկ Ռուսաստանը՝ Բ. Լեգրանը, Ս. Տեր–Գաբրիելյանը, Օ. Սիլինը, Ա. Բոբրիչևը, քարտուղարն էր Լ. Շիֆֆերսը:

Ելնելով փաստից՝ Է. Զոհրաբյանը եզրակացնում է, որ Հայաստանի կառավարությունը ոչ միայն առանձնապես չի ձգտել Լեգրանի հետ համաձայնության գալ, այլև Երևանում գտնվող անգլիական կոմիսար Ստոքսի խորհրդով անընդունելի պայմաններ է առաջադրել ռուսական կողմին: Այդ փաստը հաստատելու համար Է. Զոհրաբյանը վկայակոչում է դաշնակցական գործիչ Մարտին Շաթրյանի դիմումը Աբրահամ Գյուլխանդանյանին, որտեղ նշված են Լեգրանին ներկայացված պայմանները՝ ճանաչել Հայաստանի անկախությունը, Նախիջևանը և Զանգեզուրը տալ Ռուսաստանին, թուրքական զորքերը հետ քաշել մինչև երգնկա, *Թուրքիա տարվող զենքի և զինամթերքի կեսը թողնել Հայաստանին*, տալ 5 միլիոն ռսկու օգնություն և այլն:

Շաթրյանը գրում է, որ նման պայմաններն առաջադրվել էին այն հույսով, որ Լեգրանը դրանց չի համաձայնի: Ծանոթանալով այդ պայմաններին՝ Ստոքսը գոհունակությամբ ասել է. «Եթե ինձ առաջարկեին այսպիսի պայմաններ, ես 24 ժամվա ընթացքում կհեռանայի ձեր սահմաններից և կկտրեի բանակցությունները: Լեգրանն էլ երևի այդպես կվարվի: Այս պայմանները շատ լավ են. սա ապացուցում է, որ դուք համաձայնություն չեք փնտրում սովետական իշխանության հետ, առաջարկեցեք այս պայմանները և վստահ եղեք, որ մենք ամեն աջակցություն ցույց կտանք ձեզ (Է. Զոհրաբյան, էջ 228)»:

Սակայն, հակառակ սպասածի, Լեգրանը չընդհատեց բանակցությունները և խիստ բարյացակամ վերաբերմունք ցույց տվեց, չնայած ոչ բոլոր պահանջներն ընդունեց:

Է. Զոհրաբյանը կետ առ կետ ներկայացնում է ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև հաշտության պայմանագրի նախագիծը՝ բաղկացած 17 հոդվածներից և պայմանագրին կից երկու լրացումներից (Է. Զ., էջ 232–234):

Օ. Սիլինին թողնելով Երևանում՝ նոյեմբերի 1–ին Լեգրանը մեկնում է Բաքու՝ ՌԽՖՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունների համաձայնությունն ստանալու նպատակով: Սակայն, ինչպես նշում է Է. Զոհրաբյանը, նոյեմբերի 4–ին Բաքվում գումարված ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի միացյալ նիստը, որին մասնակցում էր նաև Բաքու ժամանած Ի. Վ. Ստալինը, մերժեց պայմանագրի նախագիծը՝ հիմնական պատճառ վկայակոչելով Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին հանձնելու վերաբերյալ կետը:

Նոյեմբերի 6–ին պայմանագրի հատուկ քննարկման առարկա դարձավ նաև Ադրբեջանի հեղկոմի նիստում՝ Ն. Նարիմանովի նախագահությամբ, որտեղ որոշում ընդունվեց այն համարել միանգամայն անթույլատրելի և առաջարկել հրաժարվել պայմանագրի *ստորագրումից*: Փաստերի վերլուծությամբ Է. Զոհրաբյանը գտնում է, որ Գ. Չիչերինը շատ թե քիչ հայանպաստ դիրքորոշում ուներ, և գուցե այլ ելք չտեսնելով, փորձում էր իր երկակի դիրքորոշմամբ փրկել Հայաստանը վերջնական ջախջախումից: Նա վճռականորեն մերժում է նաև երբեմն–երբեմն հոլովվող այն թյուր կարծիքը, թե իբր Լեգրանը խաբում էր Հայաստանի *կառավարությանը և բանակցությունները ծառայեցնում ժամանակ* շահելուն, Հայաստանի վրա Թուրքիային նոր հարձակման հնարավորություն տալուն (Է. Զ., էջ 237–238):

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ–թուրքական պատերազմի երրորդ՝ վերջին շրջանն սկսվեց հոկտեմբերի 28–ին, երբ Կարաբեքիրի զորքերը Կարսի ճակատում եր-

կու թևերով անցան հարձակման և ամբողջ օրը տևած թեժ մարտերից հետո ձախ թևում կարողացան գրավել Վեզենքոյի բարձունքները:

Հայկական բանակի հրամանատարությունը աչքաթող էր արել Կարսը հարավ–արևելքից շրջանցելու և թիկունքից հարվածելու հնարավորությունը, որից էլ հմտորեն օգտվեց տեղանքին քաջ ծանոթ Կարաբեքիրը: Նա կենտրոնից՝ Բեգլի Ահմեդի ճակատից, երկու գումարտակ՝ շուրջ 2000 զինվոր, աննկատ փոխադրեց դեպի Սուբատան գյուղը և Մեծ Մազնի լեռը: Հայկական հետախուզությունը չկարողացավ պարզել, թե ինչ եղան կենտրոնից հանված թուրքական ուժերը:

Գեներալ Դ. Փիրումյանը Վեզենքոյի դեմ ուղարկեց գնդապետ Մազմանյանի գունդը և Սիլիկյանից օգնություն խնդրեց՝ Մեծ Մազնիին թիկունքից հարվածելու համար: Սակայն այդ նպատակով ուղարկված գնդապետ Հասան–Փաշայանի զորամասը ճանապարհին ուշացավ, իսկ Մազմանյանի գունդը հարձակվեց Վեզենքոյի վրա, սակայն պարտվեց և դիմեց նահանջի: Չկարողանալով կասեցնել գնդի զինվորների ամոթալի նահանջը՝ գնդ. Մազմանյանն ինքնասպան եղավ: Այսպիսով, էդ. Զոհրաբյանը ժխտում է Ս. Վրացյանի հաղորդածի իսկությունը, թե իբր հոկտեմբերի 30–ին հայկական զորքերը հակահարձակման չեն դիմել և գտնում է, որ ծրագրված հակահարձակումը տեղի է ունեցել, բայց ավարտվել է անհաջողությամբ (է. Զ., էջ 254):

Հայկական զորքերի անհաջողությունների պատճառներից մեկը էդ. Զոհրաբյանը համարում է այն, որ եթե Կարաբեքիրը անձամբ էր ղեկավարում ռազմական գործողությունները, ապա Թ. Նազարբեկյանը նստած մնաց Երևանում, իսկ ճակատի հրամանատար Մ. Սիլիկյանի շտաբը գտնվում էր Ալեքսանդրապոլում՝ Կարսից 70 կմ հեռավորության վրա: Հոկտեմբերի 30–ի առավոտյան թուրքերն ընդհանուր գրոհ ձեռնարկեցին բոլոր երեք՝ Հարամ–Վարդանի, Բեգլի–Ահմեդի և Վեզենքոյի ուղղություններով, և սկսվեցին համառ ու դաժան կռիվներ: Հարձակման առաջին ժամերին Կարսը պաշտպանող հայկական զորքերը հաջողությամբ հետ էին շպրտում իրար հաջորդող գրոհները:

Սակայն մի քանի ժամ տևած հերոսական դիմադրությունից հետո հայկական զորքը հանկարծ սկսեց նահանջել: Թուրքերին հաջողվել էր գրավել Կարսի բերդի Ռադինսկու ամրոցը և այնտեղից հրետանային ու գնդացրային կրակ էր տեղում նահանջող զորքերի վրա:

Բավարար չափով փաստական տեղեկությունների հիման վրա պրոֆ. էդ. Զոհրաբյանը ժխտում է ժամանակին պատմագրության մեջ

արմատացած այն տեսակետը, թե իբր Կարսը թուրքերին է հանձնվել առանց կռվի, և չկա որևէ արձանագրված փաստ, որ հայկական այս կամ այն զորամասը կամավոր հանձնված լինի թշնամուն: «Մինչդեռ ականատեսների վկայությունների, արխիվային փաստաթղթերի և այլ վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս,— գրում է էդ. Զոհրաբյանը,— որ այդ տեսակետը հակապատմական է, որ պետք է խոսել ոչ թե չկռվելու, այլ վատ, անկազմակերպ կռվելու մասին, որի մեղքը, հասկանալի է, ոչ թե զինվորներինն է, այլ հրամանատարությանը (է. Զ., էջ 266)»:

էդ. Զոհրաբյանը, անհամաձայնություն հայտնելով որոշ հեղինակների, գտնում է, որ բոլշևիկյան պրոպագանդան չէր կարող վճռական դեր խաղալ բանակի պարտության գործում և հիշեցնում է, որ Կարսի անկման ժամանակ որևէ գործիչ բոլշևիկներին չի մեղադրել: Այնուհետև հեղինակը թվարկում է Կարսի անկման հետևյալ իրական պատճառները. 1. Թուրքական զորքերը քանակով և մարտական ու բարոյահոգեբանական պատրաստվածությամբ ու կոփվածությամբ գերազանցում էին հայկական զորքերին, որի պատճառով վերջիններս չէին դիմանում լարվածությանը և բռնում էին նահանջի ճանապարհը: 2. Բարձրության վրա չէր Կարսի դաշտային և բերդապահ զորքի հրամանատարությունը, քաղաքի և բերդի պաշտպանությունը վատ էր կազմակերպված: 3. Հրամանատարությունը հակամիջոց չգտավ թուրքերի կիրառած թևային շրջանցումների դեմ: 4. Չապահովվեց հայկական զորքերի թիկունքը (է. Զ., էջ 271–272):

Ինչպես պարզաբանում է էդ. Զոհրաբյանը, Կարսից նահանջած հայկական զորքերը հոկտեմբերի 31–ի գիշերը կանգ առան Ալեքսանդրապոլից 18 կմ հեռավորության վրա գտնվող Կզլչախչախ գյուղի մոտ և դիրքավորվեցին: Գեներալ Հովսեփյանը գրեթե անկորուստ Կարս–Ալեքսանդրապոլ խճուղի էր դուրս բերել իր զորքերը, կանոնավոր և քիչ կորուստներով նահանջել էին նաև Սեպուհի բրիգադը և Սմբատի կամավորական հեծելազորը: Կարսից նահանջել էր շուրջ 10 հազար զինվոր, սակայն դասալքության հետևանքով Կզլչախչախի դիրքերում նրանց թիվը հասնում էր հազիվ 5 հազարի:

Նոյեմբերի 4–ին թուրքական զորքերը ընդհանուր գրոհ ձեռնարկեցին Կզլչախչախի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ճեղքել ճակատը, դուրս գալ Արփաչայ և վտանգել Ալեքսանդրապոլը: Սակայն ամբողջ օրվա ընթացքում ծավալված թեժ մարտերը թուրքերին հաջողություն չբերեցին: Մեծ դեր խաղաց «Ազատամարտ» զրահագնացքը, որը

հմուտ տեղաշարժերով և գնդացրային ու հրանոթային կրակով թույլ չտվեց թուրքական հեծելազորին անցնելու երկաթգիծը: Աջ թևում թշնամուն հետ շպրտեցին Սեպուհի զորամասերը, իսկ ձախ թևում՝ Հասան–Փաշայանի և Ղորղանյանի գնդերը: Միայն երեկոյան, երբ վրա հասավ մութը, թուրքական անընդհատ գնդացրային կրակի ճնշման տակ հայկական զորքերը թողեցին Կզլչախչախի դիրքերը և նոր դիրքեր գրավեցին Ալեքսանդրապոլից 10 կիլոմետրի վրա: «Կզլչախչախի մոտ տեղի ունեցած այդ համառ կռիվները,— գրում է Էդ. Զոհրաբյանը,— որտեղ թուրքերը բավականին կորուստներ կրեցին, և որի մասին Կարաբեքիրը իր հուշերում գերադասում էր լռել, մի անգամ ևս ցույց է տալիս, թե ինչքան սխալ են բոլոր նրանք, ովքեր գրում ու խոսում են, որ իբր հայկական բանակը թուրքերին դիմադրություն չի տվել, չի կռվել, կամավոր անձնատուր է եղել և այլն, և այլն (Է. Զ., էջ 274)»:

Նոյեմբերի 1–ին ռազմաճակատ այցելեցին Հ. Քաջազնունին, Լ. Շանթը, Ռ. Տեր–Մինասյանը, Թ. Նագարբեկյանը և ուրիշներ: Ռազմաճակատի հրամանատարներ Հովսեփյանը, Սեպուհը, Սմբատը Սիլիկյանի հարցմանը պատասխանեցին, որ բանակը քայքայվում է, և պատերազմը շարունակել հնարավոր չէ:

Կզլչախչախի նահանջից հետո անմիջականորեն վտանգվեց Ալեքսանդրապոլը: Սիլիկյանն իր շտաբը տեղափոխեց Ջաջուռ, իսկ քաղաքի պաշտպանությունը հանձնարարեց գնդապետ Արսեն Շահմազյանին: Ալեքսանդրապոլի անկման դեպքում Սիլիկյանը Սեպուհին հրահանգեց նահանջել դեպի Ջաջուռ, Հովսեփյանին՝ դեպի Արագածի փեշերը, ձախ թևին՝ երկաթգծի ուղղությամբ դեպի Աղին–Անի:

Ալեքսանդրապոլում խուճապ սկսվեց: Պետական պաշտոնյաները, հիմնարկությունների ղեկավարները դիմեցին փախուստի, ծայր առավ թալանն ու անտերությունը: Փախավ ճակատի պարենավորման կոմիսար Արեշյանը, իսկ քաղաքագլուխ Պ. Լևոնյանը և նրա տեղակալ Ա. Մակարյանը անհայտացան՝ գանձարկղից գողանալով մեծ քանակությամբ թանկարժեք իրեր և 22 միլիոն ռուբլի:

Բանակում ծայր առավ մասսայական, խմբային դասալքությունը: Նոյեմբերի 5–ին ռազմական նախարար Ռուբեն Տեր–Մինասյանը Ալեքսանդրապոլից հեռագրում է վարչապետ Հ. Օհանջանյանին, որ զորքը կռվել չի ցանկանում, հաշտություն է պահանջում, ուստի նման պայմաններում անհնար է պատերազմը շարունակել: Նա առաջարկում է անհապաղ բանակցություններ սկսել թուրքերի հետ և հաշտություն կնքել, այլապես ամեն ինչ կորած է:

Ուշագրավ է Հ. Օհանջանյանի՝ դեռևս հոկտեմբերի 31–ին Ստոքսին ուղարկած հեռագիրը, որտեղ ասված է, որ եթե Անգլիան անմիջապես օգնության չհասնի, ապա դաշնակիցների ճակատի այն մասը, որը պաշտպանվում է Հայաստանի կողմից, անխուսափելիորեն կճեղքվի: Ստոքսը պատասխանում է, որ ինքը շատ է հեռագրել իր կառավարությանը, բայց ոչ մի պատասխան չի ստացել, ուրեմն Անտանտը կամ չի կարող, կամ էլ չի ցանկանում օգնել Հայաստանին: Միաժամանակ Ստոքսը խորհուրդ է տալիս համաձայնության գալ թշնամիների հետ:

Տիգրան Բեկզադյանը անհետաձգելի օգնության խնդրանքով դիմում է նաև Ֆրանսիայի ներկայացուցիչ Կորբեյլին, որը նույնպես խուսափողական պատասխան է տալիս: Իսկ ամերիկյան հյուպատոս Մոզերը նոյեմբերի 6–ին հայտարարեց, որ ԱՄՆ–ը չի մասնակցել Սևրի պայմանագրին, ուստի երբեք իր վրա պարտավորություն չի վերցրել ռազմական օգնություն ցույց տալու հայերին:

Այսպիսով, Հայաստանը թուրքական վտանգի առջև մնաց բոլորովին միայնակ, իր բոլոր դաշնակիցներից խաբված:

Թողնելով Ալեքսանդրապոլը և նահանջելով դեպի արևելք՝ հայկական ուժերը այնուհետև բաժանվեցին երեք մասին. աջ թևը Սեպուհի հրամանատարությամբ բռնեց Ջաջուռի բարձունքները՝ դեպի Ղարաքիլիսա տանող ճանապարհը փակելու նպատակով, ձախ թևը գնդապետ Ղորղանյանի հրամանատարությամբ դիրքեր գրավեց Աղին կայարանի շրջանում՝ Արարատյան դաշտ տանող երկաթուղու ուղղությամբ, կենտրոնի զորքերը գեներալ Հովսեփյանի հրամանատարությամբ բռնեցին Արագածի փեշերը: Այստեղ էր նաև 700 ձիավորներից բաղկացած Սմբատի խումբը:

Իգդիրի ճակատի հայկական զորքերը նույնպես թողեցին Արաքսի աջ ափը և, այրելով Մարգարայի կամուրջը, հաստատվեցին գետի ձախ ափին: Դրոյի շտաբը հաստատվեց հենց Մարգարայում:

Նոյեմբերի 16–ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել զինադադարի թուրքական պայմանները: Նույն օրը ռազմաճակատ է մեկնում ներքին գործոց նախարար Սարգիս Արարատյանը: Նոյեմբերի 18–ին Ալեքսանդրապոլում Ս. Արարատյանը ստորագրեց զինադադարի համաձայնագիրը՝ 7 օր ժամանակով:

ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Պրոֆեսոր է. Զոհրաբյանը մանրամասնորեն ներկայացնում է հայ–թուրքական պատերազմում Հայաստանի պարտության պատճառները, որոնցից մենք նպատակահարմար ենք համարում համառոտակի թվարկել հետևյալները.

1. Թուրքական բանակը իր կազմով, սպառազինությամբ ու մարտական պատրաստվածությամբ զգալիորեն գերազանցում էր հայկական բանակին: Թուրքական հեծելազորի յուրաքանչյուր հեծյալ զինված էր ձեռքի գնդացրով:

2. Հայկական բանակի վատ կազմակերպվածությունը և նրա հրամկազմի թուլությունն ու անկարողությունը: Բավական է ասել, որ բանակ զորակոչված հայ զինվորին գյուղատնտեսական աշխատանքների եռուն պահերին թույլատրում էին տուն գնալ: Ցածր էր մարտիկների հայրենասիրական դաստիարակությունը, մեծ չափեր ընդունեց դասալքությունը:

Վատ էր կազմակերպված բանակային հետախուզական ծառայությունը: Հրամանատարությունը տեղյակ չէր, թե ինչ է կատարվում սահմանի այն կողմում:

Թույլ էր կապը հրամանատարության և ռազմաճակատի միջև:

3. Կառավարության թույլ տված սխալները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում:

Կառավարությունը հանցագործ անտարբերություն ու անգործություն ցուցաբերեց բանակում տեղ գտած թերությունները վերացնելու գործում: Ռազմական նախարար Ռուբեն Տեր–Մինասյանի խմբապետական մեթոդներով կառավարելը զգալիորեն նպաստում էր բանակում անկարգապահության արմատավորմանը:

Սխալ էր Զանգիբասարի, Վեդրբասարի և մուսուլմանական մյուս շրջանների հնազանդեցման գործում բանակի օգտագործումը, քանի որ այդ ընթացքում կատարվող թալանը նպաստեց կարգապահության թուլացմանն ու բանակի կազմալուծմանը:

Աչքի է ընկնում կառավարության ոչ ճկուն արտաքին քաղաքականությունը: Ամբողջովին կողմնորոշվելով դեպի արևմուտք, հույսը դնելով բացառապես այսպես կոչված «դաշնակիցների» վրա, երբ վերջիններս բացահայտորեն դավաճանում էին, կառավարությունը չտեսավ ու չգնահատեց տարածաշրջանում Ռուսաստանի օրեցօր աճող դերը և քեմալականների պատերազմական նախապատրաստությունները, չկարողացավ սթափ գնահատել ստեղծված իրադրությունն ու ուժերի հարաբերակցությունը, քեմալականների հետ կոնֆլիկտի մեջ ներքաշվեց Օլթիի շրջանում: Նման ռոմանտիկ քաղաքականությամբ հնարավոր չէր երկրի ղեկավարման նավը խաղաղ նավահանգիստ հասցնել (է. Զ., էջ 347–355):

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1920 թ. նոյեմբերի 23–ին ՀՀ խորհրդարանը արտակարգ նիստ գումարեց՝ քննարկելու համար կառավարության հրաժարականի հարցը:

Խորհրդարանն ընդունեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը և ընտրեց նոր կառավարություն՝ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ:

Նոյեմբերի 24–ին խորհրդարանը շարունակեց իր արտակարգ նիստը, որին Ս. Վրացյանը ներկայացրեց նոր կառավարության կազմ. Ս. Վրացյան (վարչապետ և արտգործնախարար), Դրաստամատ Կանայան (Դրո, զինվորական նախարար), Համբարձում Տերտերյան (ֆինանսների նախարար), Արշամ Խոնդկարյան (արդարադատության նախարար), Վահան Մինախորյան (հանրային կրթության և արվեստի):

Ինչպես նշում է Ս. Վրացյանը, Հայաստանի խորհրդարանի վերջին, ողբերգական նիստն էր դա, որից հետո խորհրդարանը այլևս նիստ չունեցավ (Ս. Վ., էջ 525):

Նորընտիր վարչապետ Ս. Վրացյանը խորհրդարանի վերջին նիստում հույս հայտնեց, որ «պատերազմը կվերջանա հաշտությամբ և մեր հարևան տաճիկ ժողովրդի արդարացի իրավունքների նույնքան արդարացի բաշխումով: Մեր գործունեության նշանաբանն է լինելու անկեղծ հաշտություն Տաճկաստանի հետ և համերաշխություն ու խաղաղ համակեցություն բոլոր հարևանների հետ (Ս. Վ., էջ 522):

Գ. Գալոյանը նկատում է, որ Ս. Վրացյանի այս արտառոց քաղաքական ճամարտակությունը ոչ ընդունվեց և ոչ էլ լուրջ քննարկման առարկա դարձավ պառլամենտում:

Մինչդեռ Հ. Տերտերյանի վկայությամբ Ս. Վրացյանի կառավարության գերագույն խնդիրն էր օր առաջ թուրքերի հետ հաշտություն կնքել՝ Հայաստանը խորհրդայնացումից փրկելու համար (Գ. Գ., էջ 358):

Նոյեմբերի 24–ին Ս. Վրացյանի կառավարությունը դիմեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ հաշտության բանակցություններ սկսելու համար: Դեռևս նոյեմբերի 23–ին Ալեքսանդրապոլ էր ժամանել Հայաստանի պատվիրակությունը, և նոյեմբերի 24–ին բանակցությունները սկսվեցին:

Ս. Վրացյանը հանդիպում ունեցավ նաև Բ. Լեգրանի հետ, որովհետև, ինչպես ինքն է գրել հետագայում, այդ օրերին բոլորի համար պարզ էր, որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պետք է լիներ, կամ պետք է դառնար թուրքերի ձեռքին խաղալիք, եթե, իհարկե, չբնաջնջվեր իսպառ: Սակայն, ինչպես նկատել է Գ. Գալոյանը, Վրացյանն այդ բառերը գրել է հետին ամսաթվով, տարիներ անց, իսկ երբ իշխանության գլուխ էր կանգնած, վարում էր հենց Հայաստանը թուրքերի ձեռքին խաղալիք դարձնելու քաղաքականություն (Գ. Գ., էջ 359):

Որպես Հայաստանին օգնելու պայման Լեգրանն առաջարկում է Վրացյանին՝ Ալեքսանդրապոլից հետ կանչել Ա. Խատիսյանի պատվիրակությանը, մերժել թուրքերի պահանջները և խորհրդային զորքեր մտցնել Հայաստան:

Պատմական տվյալ պահի իրադարձությունները ճիշտ ընկալելու առումով բանալի նշանակություն ունի ակադեմիկոս Գ. Գալոյանի հետևյալ եզրահանգումը. «Այս պայմաններում,— գրում է նա,— Հայաստանի միակ փրկությունը կարող էր լինել Ռուսաստանի հետ ամուր դաշինքը, անկախ նրանից, թե ինչ քաղաքական ռեժիմ էր տիրում այնտեղ: Դրանով է բացատրվում այն փաստը, որ Հայաստանի խորհրդայնացման գաղափարն արդեն ընդունում էին ոչ միայն կոմունիստներն ու նրանց հարողները, այլև բնակչության լայն խավերը, ինչպես նաև Դաշնակցություն կուսակցության ձախ թևը: Պատմական այս պայմանները անխուսափելի դարձրին կոմունիստների իշխանության գլուխ գալը (Գ. Գ., էջ 365)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ: 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱՐԱՅՆԱԳԻՐԸ: ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Հայ–թուրքական պատերազմում քեմալականների տարած հաղթանակը կտրուկ կերպով փոխեց դաշնակից տերությունների վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ:

Իսկ Հայաստանը ճգնաժամային վիճակում էր: Վարչապետի պարտականությունը ստանձնելուց հետո Ս. Վրացյանը անմիջապես հանդիպում ունեցավ Բ. Լեգրանի հետ, ինչպես ինքն է գրում՝ Խորհրդային Ռուսաստանի հետ սերտ բարեկամություն հաստատելու և նրա աջակցությունն ապահովելու նպատակով: «Ամենքի համար պարզ էր այն օրերին,— գրում է Ս. Վրացյանը,— որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պետք է լիներ, կամ էլ պետք է դառնար թուրքերի ձեռքին խաղալիք, եթե չբնաջնջվեր իսպառ (Ս. Վ., էջ 529)»: Այո, այդ ճգնաժամային օրերին էր միայն ՀՀ ղեկավարների համար պարզ դարձել, որ քեմալականների առաջխաղացումը Անդրկովկաս կատարվել է Բրիտանիայի հետ կնքած պայմանագրի համաձայն, որի նպատակն է Անդրկովկասից կոմունիստներին դուրս մղելը (տե՛ս Գ. Գալոյան, էջ 361):

ՀՀ վարչապետ Ս. Վրացյանը Լեգրանի առջև հարցը դնում է հստակ՝ կարո՞ղ է Ռուսաստանը օգնել Հայաստանին այդ ճգնաժամային պահին, և եթե այո՝ ապա ինչպես:

Ի պատասխան նման հարցադրմանը, Լեգրանն առաջարկում է հետ կանչել Ա. Խատիսյանի պատվիրակությանը Ալեքսանդրապոլից, մերժել թուրքերի պահանջները և խորհրդային զորք մտցնել Հայաստան: Վրացյանի անհանգստությունը, թե ինչ երաշխիք, որ մինչ այդ թուրքերը Մարգարայից չեն շարժվի Երևանի վրա, Լեգրանը վստահեցնում է, որ նրանք նման քայլի չեն դիմի: Ինչպես գրում է Ս. Վրացյանը,

Լեգրանի հետ բանակցությունները դրական արդյունք չտվեցին, որովհետև կառավարությունը վախենում էր, որ եթե Կարմիր բանակը Հայաստան մտներ հյուսիսից, ապա թուրքերը առաջ կշարժվեին հարավից և ռուսների հասնելուց շատ առաջ կգրավեին Երևանը:

1920 թ. նոյեմբերի 29–ին Լեգրանը վերջնագրի ձևով ՀՀ կառավարությանը հայտարարեց, որ ՌԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն որոշում է կայացրել Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Այդ նույն օրը Բաքվում ստեղծված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որի կազմում էին Սարգիս Կասյանը (նախագահ), Սահակ Տեր–Գաբրիելյանը, Ասքանազ Մռավյանը, Ալեքսանդր Բեկզադյանը, Իսահակ Դովլաթյանը և Ավիս Նուրիջանյանը, Խորհրդային Ռուսաստանի 11–րդ բանակի զորամասերի հետ Ղազախի կողմից մտան Քարվանսարայ (այժմ՝ Իջևան): Հեղկոմը հրապարակեց դեկլարացիա, որտեղ ասված էր. «Հայաստանի ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունն այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Այսօրվանից Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից» (Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 403):

Ճիշտ է, աշխատավոր ժողովրդի ապստամբություն, ինչպես ասված է դեկլարացիայում, որպես այդպիսին տեղի չէր ունեցել, դա պարզապես տարբեր վայրերում խորհրդային իշխանություն հաստատելու ժամանակի գործելակերպն էր, բայց որ ստեղծված ճգնաժամային իրադրության մեջ Հայաստանը և հայ ժողովուրդը այլընտրանք չունեին, դա անտարակույս է: «Այսպես, ուրեմն,— այդ առթիվ գրում է Ս. Վրացյանը,— մի կողմից թուրքերն էին սպառնալիքով և վերջնագրերով խոսում, մյուս կողմից՝ հայ և ռուս բոլշևիկները: Հայաստանն ընկել էր երկու կրակի միջև: Կառավարությանը ուրիշ ելք չէր մնում, բայց եթե ընտրելով փոքրագույն չարիքը, տեղի տալ և հասկացողության գալ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի հետ: Հայաստանի խորհրդայնացումը այլևս դառնում էր անխուսափելի (Ս. Վ., էջ 531)»:

Մի կողմ թողնելով Խորհրդային Ռուսաստանը «երկու կրակներից» մեկը կամ «փոքրագույն չարիքը» որակելու վրացյանական մերժելի մտածելակերպը՝ սույն քաղվածքով կամենում ենք ընդգծել նրա կողմից Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիության ընդունումը:

Հայաստանի խորհրդայնացման համապարփակ ձևակերպում է տվել ակադեմիկոս Գ. Գալոյանը: «Այս պայմաններում,— գրում է նա,— Հայաստանի միակ փրկությունը կարող էր լինել Ռուսաստանի հետ ամուր դաշինքը, անկախ նրանից, թե ինչ քաղաքական ռեժիմ էր տիրում այնտեղ:

Դրանով է բացատրվում այն փաստը, որ Հայաստանի խորհրդայնացման գաղափարն արդեն ընդունում էին ոչ միայն կոմունիստներն ու նրանց հարողները, այլև բնակչության լայն խավերը, ինչպես նաև Դաշնակցությունն կուսակցության ձախ թևը: Պատմական այս պայմանները անխուսափելի դարձրեցին կոմունիստների իշխանության գալը (Գ. Գ., էջ 365)»: Սույնով ժխտվում է Ս. Վրացյանի այն պնդումը, թե հայ ժողովուրդը համակիր չէր Հայաստանի խորհրդայնացման (Ս. Վ., էջ 530):

Նոյեմբերի 29–ի դեկլարացիայում այնուհետև ասվում էր, որ Խորհրդային Ռուսաստանը շատ անգամ փորձեց դաշնակցական կառավարությանը պոկել իմպերիալիստական պետություններից, բայց այդ փորձերը ապարդյուն անցան: Հեղկոմը համոզմունք է հայտնում, որ Խորհրդային Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ կվերականգնի երկրի ավերված տնտեսությունը և կկառուցի նոր կյանք:

Նոյեմբերի 30–ին Հայաստանի հեղկոմը և խորհրդային ուժերը, որոնց հետ էր նաև Մայիսյան ապստամբության մասնակիցներից կազմված հայկական գունդը, մտան Դիլիջան, որտեղից Հեղկոմը հեռագրով Լ. Ի. Լենինին հայտնեց Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հռչակելու մասին և Խորհրդային Ռուսաստանից օգնություն խնդրեց (Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 408):

Դեկտեմբերի 2–ին Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանի անունով ստացվեց Վ. Լենինի հեռագիրը, որով խորհրդային կառավարության ղեկավարը ողջունում էր իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Խորհրդային Հայաստանին: Գ. Գալոյանը նշում է, որ դրանով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Խորհրդային Հայաստանը:

Այնուհետև Հայաստանի հեղկոմը և խորհրդային ուժերը Դիլիջանից շարժվեցին դեպի Երևան: Ինչպես նշում է Գ. Գալոյանը, կարմիր

զորքերի և բնակչության միջև ռազմական որևէ ընդհարում տեղի չունեցավ: Դիմադրություն ցույց չտվեց նաև ՀՀ բանակը: Հայաստանը դարձավ խորհրդային հանրապետություն:

1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2–Ի ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1920 թ. նոյեմբերի 29–ին Հայաստանում հռչակվել էր խորհրդային իշխանություն, սակայն ՀՀ կառավարությունը դեռևս հրաժարական չէր տվել: Ստեղծվել էր բարդ իրավիճակ: Նոյեմբերի 30–ին Լեգրանը բանակցություններ էր սկսել Դրոյի և Համբարձում Տերտերյանի հետ, որոնք կողմնակից էին իշխանությունը բոլշևիկներին հանձնելուն: Սակայն կառավարության աջ թևը շարունակում էր ապավինել դաշնակից տերություններին և դեմ էր առանց կռվի իշխանությունը բոլշևիկներին հանձնելուն:

1920 թ. դեկտեմբերի 2–ին Հայաստանում ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև մի կողմից և ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև՝ մյուս կողմից, Երևանում ստորագրվեց համաձայնագիր:

Ինչպես նշում է Գ. Գալոյանը, Լեգրանի կողմից թելադրված այդ համաձայնագրի հոդվածները վերջնագրի բնույթ ունեին, սակայն արյունահեղությունից խուսափելու այլ տարբերակ չկար (Գ. Գ., էջ 371–372):

Համաձայնագիրը բաղկացած էր ութ հոդվածներից, որի լրիվ տեքստը բերված է Ս. Վրացյանի գրքում (Ս. Վ., էջ 534–535): Այն զետեղված է նաև «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում. Երևան, 1957» փաստաթղթերի ռուսերեն ժողովածուում, սակայն սխալմամբ վերնագրված է «Համաձայնագիր ՌԽՖՍՀ և Հայաստանի Սոց. Սով. Հանրապետության միջև» (էջ 441–442): Ցավոք, այդ փաստաթուղթը տեղ չի գտել հիշատակված ժողովածուի հայերեն տարբերակում՝ հրատարակված 1960–ին, Երևանում: Մեր կարծիքով, կարևոր այդ փաստաթուղթը, որով ամբողջանում է Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, և որի հետ սերտորեն առնչվում են 1921 թ. փետրվարյան իրադարձությունները, անհրաժեշտաբար պետք է տեղ գրավեր նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. Երևան, 1972» մեծարժեք ժողովածուում, սակայն, ցավոք, դա չի արվել: Համաձայնագրի տեքստն առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում, 1928–ին (Պրոֆեսոր Յու. Կլյուչնիկով, պրոֆեսոր Ա. Սաբանին. Նորագույն ժամանակաշրջանի միջազգային քաղաքականությունը պայմանագրերում. նոտաներում և դեկլարացիաներում, Մոսկվա, 1928, հատոր 1, մաս 3–րդ, էջ 75–76, ռուսերեն): Տեքստում արված են որոշ կրճատումներ՝ Ս. Վրացյանի հրատարակած տեքստի համեմատությամբ:

Համաձայնագրի առաջին հոդվածով Հայաստանը հայտարարվում էր անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն:

Երկրորդ հոդվածով ամբողջ իշխանությունը Հայաստանում անցնում էր ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտեին:

Երրորդ հոդվածով ՌԽՖՍՀ կառավարությունն ընդունում էր, որ ՀԽՍՀ կազմի մեջ անվիճելիորեն մտնում են Երևանի նահանգը..., Կարսի մարզի մի մասը..., Զանգեզուրի գավառը..., Ղազախի գավառի մի մասը... և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանին էին պատկանում մինչև 1920 թ. հոկտեմբերի 23–ը (ըստ Ս. Վրացյանի՝ մինչև սեպտեմբերի 28–ը):

Չորրորդ հոդվածը հայկական բանակի հրամանատարական կազմին ազատում էր պատասխանատվությունից՝ մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը կատարած գործողությունների համար:

Հինգերորդ հոդվածով դաշնակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները որևէ բռնաճնշման չպիտի ենթարկվեին՝ այդ կուսակցություններին պատկանելու համար:

Վեցերորդ հոդվածով Ռազմահեղափոխական կոմիտեի կազմի մեջ էին մտնելու հինգ անդամներ՝ նշանակված կոմունիստական կուսակցության կողմից և երկու անդամներ ձախ դաշնակցականների խմբից՝ կոմունիստական կուսակցության համաձայնությամբ:

Յոթերորդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը միջոցներ պիտի ձեռնարկեր՝ ՀՍԽՀ անկախությունը պաշտպանելու նպատակով անհապաղ զինվորական ուժեր կենտրոնացնելու ուղղությամբ:

Ութերորդ հոդվածով համաձայնագիրն ստորագրելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը հեռանում էր իշխանությունից, այն ժամանակավորապես, մինչև հեղկոմի ժամանումը, անց-

նում էր զինվորական հրամանատարությանը, որը հանձնվում է Դրոյին, իսկ Հայաստանի զորահրամանատարությանը կից ՈՒՍՖՍՀ–ի կողմից կոմիսար է նշանակվում Օ. Սիլինը:

Միաժամանակ համաձայնություն կայացավ, որ իշխանությունը Դրոյին և Սիլինին հանձնվի 1920 թ. դեկտեմբերի 2–ի գիշերվա ժամը 12–ին: Համաձայնագիրն ստորագրելուց հետո ՀՀ կառավարության վարչապետ Ս. Վրացյանը, նախարարներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Խոնդկարյանը, Հ. Տերտերյանը, Դ. Կանայանը (Դրո), դիվանապետ Հ. Թումանյանի վավերացմամբ, ստորագրեցին ակտ իշխանությունից հրաժարվելու և այն զորաբանակի ընդհանուր հրամանատար Դրոյին հանձնելու մասին՝ նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը: Ակտը հեռագրվեց գավառական իշխանություններին ու զորամասերի պետերին՝ ի գործադրություն, ինչպես նաև փակցվեց Երևանի փողոցներում:

Ինչպես նկատել է ակադեմիկոս Գ. Գալոյանը, Երևանի դեկտեմբերի 2–ի համաձայնագիրը և վերոհիշյալ ակտը հետփաստային իրավական ձևակերպումներ էին, որոնք պայմանավորված էին 1920 թ. նոյեմբերի 29–ին Հայհեղկոմի կողմից Հայաստանում խորհրդային կարգերի հռչակումով (Գ. Գ., էջ 373):

Իսկ Ս. Վրացյանի արտահայտությամբ այդ փաստաթղթի շնորհիվ Հայաստանը խորհրդայնանում էր բոլորովին խաղաղ կերպով, առանց որևէ հեղափոխության, առանց մեկի քիթը արյունոտելու (Ս. Վ., էջ 535):

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումը մի կարճատև գործընթաց էր, որն սկսվեց 1920 թ. նոյեմբերի 29–ին Քարվանսարայում (Իջևան) Հայհեղկոմի հրատարակած Դեկլարացիայով և ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2–ի Երևանի համաձայնագրի ստորագրմամբ, որով այդ ակտն ստացավ իրավական ձևակերպում:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայաստանի խորհրդայնացումից հետո ծառացած գլխավոր հարցը Հայաստանի և Թուրքիայի միջև հաշտության պայմանագրի կնքումն էր:

Ս. Վրացյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ դեռևս նոյեմբերի 30–ին Քյազիմ Կարաբեքիրը, որն ուշի–ուշով հետևում էր Հայաստանում ծավալվող իրադարձություններին, Հայաստանի պատվիրակությանը ներկայացրեց թուրքական պայմանները և հաջորդ առավոտյան վերջնագրի ձևով, ռազմական գործողությունները վերսկսելու սպառնալիքով պահանջեց դրանց ընդունումը:

Թուրքական պահանջները քննարկելու կապակցությամբ նոյեմբերի 30–ի գիշերը հրավիրվեց հատուկ ժողով, որին մասնակցում էին խորհրդարանի և կառավարության անդամներ, ՀՅԴ բյուրոն լրիվ կազմով, անհատ գործիչներ և զինվորականներ: Լսվեց զինվորական նախարարի և զինվորական մասնագետների, ժողովականներից շատերի կարծիքը: Ձևավորված ընդհանուր տեսակետն այն էր, որ եթե մերժեին Կարաբեքիրի պահանջը, թուրքական բանակը ամենայն հավանականությամբ առաջ կշարժվեր և միչև ռուսների հասնելը կգրավեր Էջմիածինն ու Երևանը: «Հանուն հայ ժողովրդի փրկության,— գրում է Ս. Վրացյանը,— պետք էր ստանձնել պատասխանատվությունը պատմության առջև և ստորագրել դաշնագիր: Եթե բոլշևիկները, իրոք, այնքան ազդեցիկ էին թուրքերի առջև, նրանց համար դժվար չէր լինի մերժել «Դաշնակների» ստորագրությունը և Հայաստանի համար ավելի նպաստավոր դաշնագիր կնքել:

Եթե բոլշևիկները այդ կարողությունը պիտի չունենան վաղը, նշանակում է նրանց խոստումները անարժեք էին:

Այս նկատառումներով և այս գիտակցությամբ ժողովը որոշեց լիազորել Ալեքսանդրապոլի պատվիրակության՝ ընդունելու թուրքական պայմանները և ստորագրելու հաշտության դաշնագիրը:

Կասկած չկա, որ բոլշևիկներն էլ, Մոսկվայի ճնշումով, ստիպված պիտի լինեին ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպես մոտ մի տարի վերջը ստորագրեցին Կարսի ավելի խայտառակ դաշնագիրը: Ազգային տեսակետով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտություն էր, դժբախտ, բայց անխուսափելի (Ս. Վ., էջ 535–536)»:

1920 թ. դեկտեմբերի 2–ի լույս 3–ի գիշերը ստորագրվեց Ալեքսանդրապոլի բազմաթիվ առումներով խայտառակ, ստրկացուցիչ ու թալանչիական պայմանագիրը, որի տակ, առանց այդ իրավունքն ունենալու, Հայաստանի Հանրապետության անունից իրենց ստորագրությունները դրեցին Ալեքսանդր Խատիսյանը, Ա. Գյուլխանդանյանը և Ս. Ղորղանյանը, Թուրքիայից՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան, Համիդ բեյը և Սուլեյման Բեջարի բեյը:

Պայմանագիրը բաղկացած էր 14 կետերից: Առաջին կետով պատերազմը Հայաստանի և Թուրքիայի միջև համարվում էր ավարտված:

Երկրորդ կետով որոշվում էին Հայաստանի և Թուրքիայի սահմանները: Թուրքիային էր անցնում Արևելյան Հայաստանի 1914 թ. սահմաններից ավելի քան 20 հազար քառակուսի կիլոմետր տարածք, այդ թվում՝ Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Օլթին, Սուրմալուի գավառը, Կաղզվանը, Ալեքսանդրապոլը (Գ. Գ., էջ 376): Նախիջևանի, Շարուրի և Շահթախթի շրջանները ժամանակավորապես դրվում էին Թուրքիայի պաշտպանության տակ, մինչև այնտեղ հանրաքվեի անցկացումը, որին Հայաստանը չպիտի միջամտի: Դա փաստորեն նշանակում է, որ այդ շրջանները տրվում էին Թուրքիային (Գ. Գ., էջ 377):

Առավել քննելի էր երրորդ կետը, որտեղ նշվում էր, որ ներկա պայմանագրով Թուրքիային զիջված շրջանները անվիճելի, պատմական, էթնիկական և իրավական կապ ունեն Թուրքիայի հետ:

Չորրորդ կետով Հայաստանին թույլատրվում էր ունենալ 1500 զինվորից բաղկացած ջոկատ՝ 8 լեռնային կամ դաշտային հրանոթով և 20 գնդացրով, իսկ զինապարտությունը Հայաստանում պարտադիր չպիտի լիներ:

Հինգերորդ կետով Թուրքիայի կառավարությունը պարտավորվում էր զինված օգնություն տրամադրել Հայաստանին, երբ այդ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը, և երբ Հայաստանի Հանրապետությունը դիմի իրեն մատնանշված խնդրով:

Վեցերորդ կետով արգելվում էր իրենց բնակավայրերը վերադառնալ այն գաղթականներին, ովքեր արտաքսվել էին համաշխարհային պատերազմի ընթացքում և թշնամու բանակի շարքերում կռվել իրենց կառավարության դեմ: Դա նշանակում է, որ Արևմտյան Հայաստանից ցեղասպանության հետևանքով *իրենց օջախներից զրկված հայերին* արգելվում էր վերադառնալ հայրենիք:

Յոթերորդ կետով Թուրքիայի կառավարությունը հրաժարվում էր պատերազմի հետ կապված ծախսերի հատուցումից, «պատերազմ, որ նա ստիպված էր ձեռնարկել» Հայաստանի դեմ: Դրանով փաստորեն արդարացվում էր թուրքական ագրեսիան Հայաստանի դեմ:

Կողմերը հրաժարվում էին նաև համաշխարհային պատերազմի ժամանակ կրած վնասները հատուցելու ամեն տեսակ պահանջներից: «Մինչդեռ հայտնի է,— գրում է Գ. Գալոյանը,— որ հայերի ցեղասպանության ընթացքում թուրքերը թալանի են ենթարկել հայերի ողջ ունեցվածքը, որը կազմում էր Թուրքիայի ազգային հարստության մոտ կեսը... Թուրքիան հրաժարվում էր նաև փոխհատուցել նյութական այն հսկայական վնասները, որ կրել էր հայ ժողովուրդը քեմալականների՝ Արևելյան Հայաստան կատարած ագրեսիայի հետևանքով (Գ. Գ., էջ 377)»:

Իններորդ կետով ՀՀ կառավարությունը համաձայնում էր Սևրի պայմանագիրը, որը կտրականապես մերժել էր Թուրքիայի կառավարությունը, համարել և հայտարարել անվավեր, պարտավորվում էր Եվրոպայից և Ամերիկայից ետ կանչել իր պատվիրակություններին, որոնց Անտանտի իմպերիալիստները դարձրել էին իրենց մեքենայությունների գործիք, «պետական կառավարումից հեռացնել այն բոլոր անձանց, ովքեր հրահրում և հետապնդում են իմպերիալիստական խնդիրներ», այսինքն՝ նրանց, ովքեր ձգտում էին հայկական տարածքները վերադարձնել Հայաստանին:

Տասնմեկերորդ կետով Թուրքիան իրեն իրավունք էր վերապահում վերահսկել Հայաստանի երկաթուղիներն ու հաղորդակցության մյուս ճանապարհները՝ 4–րդ հոդվածում մատնանշված նորման գերազանցող զենքի ներմուծումն արգելելու համար:

Կողմերը պարտավորվում էին նաև արգելակել Անտանտի իմպերիալիստական կառավարությունների պաշտոնական և ոչ պաշտոնական ներկայացուցիչների մուտքը: Տասներկուերորդ կետով Թուրքիան իրեն իրավունք էր վերապահում ռազմական միջոցներ ձեռք առնել Հայաստանի տարածքում:

Տասներեքերորդ կետով ՀՀ կառավարությունն անվավեր էր ճանաչում այն բոլոր պայմանագրերը, որ կարող են կնքվել և առնչություն ունենալ Թուրքիայի հետ, կամ կկնքվեն ի վնաս Թուրքիայի շահերի: «Դրանով,— ինչպես գրում է Գ. Գալոյանը,— Հայաստանը զրկվում էր *նախ և առաջ Ռուսաստանի հետ որևէ պայմանագիր* կնքելու իրավունքից: Հայաստանը մեկուսացվում էր Ռուսաստանից (Գ. Գ., էջ 377)»:

Վերջին՝ 14–րդ կետը, վերաբերում էր կողմերի միջև առևտրական և դիվանագիտական կապերը վերականգնելուն (Ալեքսանդրապոլի պայմանագրի լրիվ տեքստը տես «Հայաստանը միջազգային...» ժողովածու, էջ 683–687):

Ս. Վրացյանը ճակատագրի հեգնանք է համարում այն հանգամանքը, որ 1918 թ. հունիսի 4–ին, Բաթումի դաշնագրով Թուրքիան եղավ առաջին պետությունը, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը: Այժմ Հայաստանը առաջին պետությունն էր, որ ճանաչում էր քեմալա-

կան Թուրքիայի անկախությունը: Նա պնդում է նաև, թե «Միջազգային օրենքի և փաստական կացության տեսակետով՝ Հայաստանի կառավարության ընթացքը հակաօրինական հանգամանք չուներ (Ս. Վ., էջ 538)»:

Ավարտելով Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին իր խոսքը՝ Ս. Վրացյանը գրում է, որ դաշնագրի պայմաններից մեկն էլ այն էր, որ ստորագրումից հետո, մեկ ամսվա ընթացքում, դաշնագիրը պետք է վավերացվեր Հայաստանի խորհրդարանի և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից, որը տեղի չունեցավ, և դաշնագիրը ինքնըստինքյան կորցրեց իր օրինականությունը: Նրա կարծիքով միայն այդ փաստը բավական էր, որպեսզի Հայաստանի հեղկոմը չճանաչեր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, սակայն բոլշևիկները չուզեցին կամ չկարողացան օգտվել այդ փաստից (Ս. Վ., էջ 539):

Ալեքսանդրապոլի ամոթալի պայմանագրի կապակցությամբ շատ որոշակի է ակադեմիկոս Գ. Գալոյանի դիրքորոշումը: «Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո,— գրում է նա,— Հայաստանի Հանրապետության կառավարությունն այլևս լիազորություններ չուներ որևէ պայմանագիր ստորագրելու Թուրքիայի հետ: Սակայն Ալ. Խատիսյանը, չունենալով Խորհրդային Հայաստանի կառավարության լիազորությունները, իր ստորագրությունը դրեց թուրքերի կողմից պարտադրված արխիռեակցիոն և թալանչիական պայմանագրի տակ: Եթե թուրքերի համար խիստ ձեռնտու չլիներ այդ պայմանագրի տակ Հայաստանի՝ իշխանությունից հեռացած կառավարության ներկայացուցչի ստորագրությունը, նրանք առանց վարանելու կհենվեին միջազգային ընդունված նորմերի վրա և կմերժեին այն, ինչպես վարվեցին սուլթանի կառավարության կողմից Սևրի պայմանագրի ստորագրման դեպքում (Գ. Գ., էջ 378)»:

Ի դեպ, սփյուռքահայ հեղինակ Ռուբինա Փիրումյանի մոտ հետաքրքիր տեղեկություն կա այն մասին, որ Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրումից առաջ Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանը Դիլիջանից հեռագրել է Կարաբեքիրին և նրան հաղորդել Հայաստանի խորհրդայնացման լուրը: Կարաբեքիրը պատասխան շնորհավորական հեռագիր է ուղարկել Կասյանին և իր ուրախությունը հայտնել այդ առթիվ: Սակայն դա չէր խանգարել Կարաբեքիրին՝ հարկադրել Խատիսյանին՝ ստորագրելու պայմանագիրը (Ռուբինա Փիրումյան, Հայաստանը Հ.Յ.Դ.–բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917–1921), Երևան, էջ 295):

Գ. Գալոյանը մերժում է նաև Ալ. Խատիսյանի արդարացումները, թե իբր դեկտեմբերի 2–ին, երեկոյան ժամը 6–ին ուղիղ հեռագրաթելով Դրոն իրեն ասել է. «Հեղափոխական կառավարության անունից հայտնում եմ Ձեզ, որ դուք ազատ եք ստորագրել դաշնագիրը կամ ոչ... Գործեցեք համաձայն ձեր հասկացության»: Նա վկայակոչում է արխիվներում պահպանված Դրոյի դեկտեմբերի 1–ի հեռագիրը:

«Ըստ այդ փաստաթղթի,— գրում է Գ. Գալոյանը,— Դրոն դեկտեմբերի 1–ին հաղորդել է Ալեքսանդրապոլում գտնվող ՀՀ պատվիրակությանը, որ Հայաստանի Հեղկոմի կողմից Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելուց հետո, դեկտեմբերի 1–ից սկսած հին կառավարության կողմից նշանակված պատվիրակությունը ոչ մի իրավունք և իրավասություն չունի բանակցությունները թուրքերի հետ շարունակելու համար (Գ. Գ., էջ 379)»:

Նշելով, որ ռազմավարական առումով Ալեքսանդրապոլի պայմանագիրն ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ, Գ. Գալոյանն ավելացնում է, որ Ալեքսանդրապոլի իրավական ուժ չունեցող պայմանագիրը չճանաչվեց ոչ Խորհրդային Հայաստանի և ոչ էլ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունների կողմից, և դրա չեղյալ հայտարարելը դարձավ նրանց անհետաձգելի խնդիրներից մեկը (Գ. Գ., էջ 381):

Մեր կարծիքով, եթե անգամ ինչ-որ տեղ ընդունելի համարենք Ս. Վրացյանի և Ա. Խատիսյանի փաստարկները՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի ճակատագրորեն անխուսափելի անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ, չպետք է մոռանանք, որ հետագայում թուրքերը Լոնդոնի, Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներում անընդհատ վկայակոչում էին այն, հանգամանք, որը որոշակի խոչընդոտներ էր հարուցում հայանպաստ վճիռներ կայացնելուն:

Ինչևիցե, բացվում էր հայոց խորհրդային ժամանակաշրջանի պատմության առաջին էջը:

Եվ, այնուամենայնիվ, կամենում ենք Հայաստանի առաջին հանրապետության ժամանակաշրջանի պատմության շարադրանքն ավարտել այդ հանրապետության առաջին մեծության պատմագրի՝ ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի հուզիչ խոսքերով. «Այսպիսով,— դեռևս 1958–ին գրել է նա,— պատմական իրողություն է, որ ներկա Խորհրդային Հայաստանը շարունակությունն է Հայաստանի Հանրապետության: Եթե տեղի չունենային այն մաքառումները, որոնք հանգեցին հայկական անկախ պետության ստեղծման 1918 թ. մայիսի 28–ին, եթե գոյություն

չունենար Հայաստանի Հանրապետությունը իր ազգային կազմով ու նկարագրով, այսօր գոյություն չէր ունենա և խորհրդային Հայաստանը ազգային կազմով ու դիմագծով...

Վարչածները ժամանակավոր երևույթ են: Ժամանակավոր են և վարիչները: Հավերժական են ազգերն ու հայրենիքները՝ հայրենի հողի վրա նստած ժողովուրդները: Հավերժական է ազատատենչ հայ ժողովուրդը, որ մահվամբ մահը կոխելով՝ կերտեց հայրենիքի անկախությունը:

Ժամանակները հոգի են դեպքերով: Պատմությունը վերջացած չէ: Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կլինի ազատ և անկախ, ավելի լայն ազգային սահմաններով...

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է ապրել հայ ժողովրդի սրտում, որպես մշտական հուշ անցյալի և իբրև կենդանի հույս ապագայի (Ս. Վ., էջ 608–609)»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1. Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972:
2. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբ., Երևան, 1991:
3. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, ԳԱ հրատ., Երևան, 1988:
4. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000:
5. Великая Октябрская социалистическая революция и победа советской власти в Армении, Сб. документов и материалов, Ер., 1957.
6. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960:

2. Գրականություն

1. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 6, Երևան, հ. 7, 1967:
2. Հայ ժողովրդի պատմություն, Բուհական դասագիրք, Երևան, 1979:
3. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Երևան, 1990:
4. Արզումանյան Մ., Հայաստան 1914–1917, Երևան, 1969:
5. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973:
6. Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Բ., Գահիրե, 1937:
7. Աստվածատրյան Ա., Սարդարապատի պատմաշինությունը, Բեյրութ, 1966:
8. Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982:
9. Աֆանասյան Ա., Սարդարապատի հաղթանակը. Հայաստան, Մայիս 1918, Երևան, 1991:
10. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
11. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, 1991:
12. Բաղրամյան Հ., Իմ հիշողությունները, Երևան, 1979:

13. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999:
14. Գևորգյան Հ., Դրո, Երևան, 2000:
15. Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920–1922 թթ., Երևան, 1967:
16. Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:
17. Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969:
18. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
19. Լազյան Գ., Հայաստան և Հայ դատը հայ և ռուս հարաբերությունների լույսին տակ, Երևան, 1991:
20. Լեփսիուս Յո., Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919:
21. Կարապետյան Մ., Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1998:
22. Կարապետյան Մուրադ, Հայաստանի Հանրապետության բանակը 1918–1920 թթ., Երևան, 1991:
23. Կարապետյան Մուրադ, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–14 թթ.), Երևան, 1999:
24. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2, Երևան, 1983:
25. Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թվականին և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
26. Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 1995:
27. Հարությունյան Ա. (Հարենց), Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Երևան, 1960:
28. Հուշամատյան Մեծ եղեռնի, Բեյրութ, 1965:
29. Հերոսապատում Մեծ եղեռնի, Բեյրութ, 1978:
30. Հայկազ Ա., Շապին-Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957:
31. Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, Երևան, 2002:
32. Ղազարյան Հ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968:
33. Մորգենթաու Հ., Հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990'
34. Մսրլյան Զ., Երեք դաշնագիրներ (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագիրները), Բեյրութ, 1979:
35. Նանսեն Ֆ., Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Երևան, 1993:
36. Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914–1918 թթ.), Երևան, 1999:
37. Պալաքյան Գ., Հայ գողգոթան, Երևան, 1991:
38. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա., Բ, Երևան, 1996:
39. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000:
40. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964:

41. Սասունի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1956:
42. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
43. Վան-Վասպուրականի հերոսամարտը, Երևան, 1990:
44. Տեր-Պետրոսյան Եղիշե քաղ., Տարոնի ինքնապաշտպանությունն ու ջարդը 1914–1915 թթ., Ֆրեզնո, 1920:
45. Փիրումյան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917–1921, Երևան, 1997:
46. Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 1, Երևան, 1954:
47. Армянский вопрос. Энциклопедия. Ереван, 1991.

3. Պարբերական մամուլ

1. Ավետիսյան Հ., Գեներալ Հակոբ Բագրատունի, ՊՀԲ, 1997, թիվ 1:
2. Կիրակոսյան Զ., Սահակյան Հ., Սան Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը, ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 3:
3. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1954, թիվ 5:
4. «Հայորդի. Սովետական Հայաստան և պատմական ճշմարտություններ՝ փաստերու լույսին տակ», Բեյրութ, 1949:
5. Սողոմոնյան Ա., Զ. Հարբորդի զինվորական առաքելությունը և Հայաստանի մանդատը, ԳԱ Լրաբեր հաս. գիտ., Երևան, 1985, թիվ 9:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Գ. Լ. — Գաբրիել Լազյան
2. Հ. Ս. — Հրաչիկ Սիմոնյան
3. Ա. Հ. — Աշոտ Հարությունյան
4. Ս. Վ. — Սիմոն Վրացյան
5. Հ. Գ. — Համլետ Գևորգյան
6. Հ. Ղ. — Հայկազ Ղազարյան
7. Ա. Ա. — Արամ Անտոնյան
8. Մ. Ա. — Մակիչ Արզումանյան
9. Գ. Պ. — Գրիգորիս Պալաքյան
10. Զ. Կ. — Զոն Կիրակոսյան
11. Հ. Ա. — Հրանտ Ավետիսյան
12. Ա. Ն. — Արամ Նազարյան
13. Գ. Գ. — Գալուստ Գալոյան
14. Հ. Թ. — Հարություն Թուրշյան
15. Ե. Ս. — Երվանդ Սարգսյան
16. Ծ. Ա. — Ծատուր Աղայան
17. Մ. Կ. — Մուրադ Կարապետյան
18. Ս. Ա. — Սերժ Աֆանասյան
19. Հ. Ա. — Հրանտ Աբրահամյան
20. Ա. Ե. — Աղասի Եսայան
21. Է. Զ. — Էդիկ Զոհրաբյան
22. Ռ. Փ. — Ռուբինա Փիրումյան
23. Ա. Ս. — Արամ Սիմոնյան
24. Հ. Մ. — Հենրի Մորգենթաու
25. Լ. Հ. — Լիլիթ Հովհաննիսյան

Մեր Ստեփանի Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1912–1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ուսումնական ձեռնարկ բուհերի համար

Мгер Степанович Карапетян

АРМЕНИЯ В 1912–1920 ГОДАХ

Учебное пособие для вузов

(на армянском языке)

Издательство «Зангак–97», Ереван, 2003

«ՏԱԹԵՎ ԳԿՀ»–ի գլխ. տնօրեն՝ Ս.Շ. Մկրտչյան
Հրատարակչութ. տնօրեն՝ Մ.Վ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Սրբագրիչ՝ Ն.Մ. Մելքումյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն.Ն. Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Գ.Ա. Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսետ: Չափը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսետ:
Ծավալը՝ 25 տպ. մամուլ, 18.64 հրատ. մամուլ, 23.25 պայմ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ.՝ 54–89–32, 54–05–17
Ֆաքս՝ 54–06–07, էլ. փոստ՝ zangak@arminco.com

Տպագրվել է «Զանգակ–97» հրատարակչության տպարանում